

Ա. Պ. ԱՐՇԱԿՅԱՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ
ԵՐԿՐՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՅԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐԲ

ԵՐԵՎԱՆ 2003

ԱՐՇԱՎԻՐ ՊԱՐԳԵՎԻ
ԱՐՇԱԿՅԱՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ
ԵՐԿՐՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Հնագույն ժամանակաշրջանից մինչև մեր օրերը)

Երաշխավորված է ՀՀ կրթության ու գիտության
նախարարության կողմից որպես դասագիրք
իրավաբանական բուհերի համար
Հրաման N. 504-Մ, 11. X. 2002թ.

«ՆԱԻՐԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 342 (07)
ԳՄԴ 67.8 y-73
Ա – 921

Ա 921 Արշակյան Ա. Պ.
Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն (Հնագույն ժամանակաշրջանից մինչև մեր օրերը), բուհական դասագիրք, Երևան, «Նաիրի» 2003, 542էջ:

Դասագրքում շարադրված է հին աշխարհի, միջին դարերի, նոր և նորագույն ժամանակաշրջանների պետության ու իրավունքի առաջացման և զարգացման պատմությունը: Այն նախատեսված է իրավաբանական և այլ բուհերի ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, ինչպես նաև պետության և իրավունքի պատմության պրոբլեմներով հետաքրքրվող լայն հասարակության համար:

Ա 1206000000 2003
705 (01)2003

ISBN 5-550-01285-5

ԳՄԴ 67.8 y- 73

© Արշակյան Ա.Պ., 2003

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն դասագիրքը լուսաբանում է պետության ու իրավունքի պատմությունը՝ հնագույն ժամանակաշրջանից մինչև XX դարի վերջը: Պետությունն ու իրավունքը որպես հասարակական կարևորագույն երևույթներ անցել են բազմադարյան ճանապարհ: Հեղինակը, մանրակրկիտ հետազոտելով արտասահմանյան պետությունների բազմատեսակ ու բազմաբնույթ նորմատիվ իրավական ակտերը, դրանց վերաբերյալ հրապարակված բազմաթեք աշխատություններն ու մենագրությունները՝ բուհական ուսումնական ծրագրի շրջանակ-ներում ուսանողների՝ ու մասնագետ գիտնականների դատին է հանձնում «Արտասահմանյան երկրների պետության ու իրավունքի պատմություն» աշխատությունը:

Ընդհանրապես յուրաքանչյուր գիրք և հատկապես՝ դասագիրք գրելիս հեղինակներն առաջնորդվում են **առաջակի նպատակներով ու խնդիրներով**: Այս առումով Արտասահմանյան երկրների պետության ու իրավունքի պատմության դասագրքի հիմնական խնդիրներն են.

1. Յույց տալ պետության և իրավունքի ծագմանը, զարգացմանը և փոփոխմանը վերաբերող փաստերը, ուսումնասիրել պետության և իրավունքի զարգացման ընդհանուր օրինաչափությունները,

2. Լուսաբանել ուսումնական ծրագրով նախատեսված պետությունների հասարակական, պետական և իրավական կարգերը,

3. Նպաստել ուսանողների, ասպիրանտների, ինչպես նաև պետության ու իրավունքի հարցերով հետաքրքրվող անձանց տեսական մտքի և պատմական գիտակցության ձևավորմանը:

Դասընթացը կազմելիս հենվել ենք ինչպես իրավունքի շատ ճյուղերի, այնպես էլ հասարակական այլ գիտությունների վրա, որոնք սերտորեն կապված են պետության և իրավունքի պատմության հետ:

Դասագրքի շարադրանքը սկսվում է պետությամբ ու իրավունքի պատմության առարկայի բովանդակության և ուսումնասիրման մեթոդի

բացահայտումով: Հանգամանորեն լուսաբանված են այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք վերաբերում են պետության ինքնիշխանությանը, իրավունքին ու արդարացիությանը, արդարադատության ու դատական համակարգին, մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին և կարգավորում են հասարակական կյանքի որոշակի բնագավառ:

Գրքում լուսաբանված են պետության և իրավունքի այն կողմերը, որոնք բացահայտվում են հասարակական, պետական և իրավական կարգերի միջոցով: Այս պատճառով էլ այս կամ այն երկրի պատմությունն ուսումնասիրելիս պետությունը և իրավունքն ընթերցողին ենք ներկայացնում ոչ թե առանձին-առանձին, այլ միասին՝ ըստ ուսումնասիրվող երկրների, բացառությամբ գրքի չորրորդ մասի, որտեղ լուսաբանված է նորագույն ժամանակաշրջանի պետության և իրավունքի պատմությունը: Նորագույն դարաշրջանի իրավունքի բնագավառում կատարվում են նշանակալի փոփոխություններ, որոնց հետևանքով նկատվում է իրավական համակարգերի մերձեցում, որն էլ մեզ իրավունք է վերապահում այդ ժամանակաշրջանի իրավունքի պատմությունը լուսաբանել ոչ թե ըստ երկրների, այլ ըստ ժամանակաշրջանի:

Դասագիրքը բաժանված է չորս մասերի, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է մի ժամանակահատված՝ հին, միջին, նոր և նորագույն դարաշրջանները: Ամեն մի մաս իր հերթին կազմված է առանձին գլուխներ ներկայացնող բաժիններից:

Պետության և իրավունքի պատմության ուսումնասիրումն ունի արդիական նշանակություն: Առանց դրա հնարավոր չէ պետաիրավական ինստիտուտների վերաբերյալ ամել հիմնովին եզրահանգումներ, կատարել համապատասխան ամփոփումներ, ձևավորել և ամրապնդել պետաիրավական դաշտը: Ներկա օրերում, երբ մեր հանրապետությունում հաճախ փոփոխության են ենթարկվում պետական ապարատը, նրա առանձին մարմինների լիազորությունները, կարծես էլ ավելի այժմեական է դառնում արտասահմանյան երկրների պետության և իրավունքի ծագման ու զարգացման ընդհանուր օրինաչափությունների պատմության ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Պատմական գիտությունը, ծագելով քաղաքակրթության արշալույսին, եղել և մնում է մարդու անփոփոխելի ուսուցիչը, ուղեկիցը և դաստիարակիչը:

Հեղինակ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԷՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՄԵԹՈԴԷ ԵՎ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ

1 «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմությունը» հասարակական գիտություն է: Ի տարբերություն մյուս հասարակական գիտությունների, որոնցից յուրաքանչյուրն ուսումնասիրում է հասարակական կյանքի կողմերից մեկը, պետության և իրավունքի պատմությունը հետազոտում է հասարակական այնպիսի երևույթների ծագումն ու զարգացումը, ինչպիսիք են պետությունը և իրավունքը: Պետության և իրավունքի պատմությունը միաժամանակ և իրավաբանական և պատմական գիտություն է:

Բայց եթե պատմությունը, որպես գիտություն, ուսումնասիրում է հասարակության զարգացման և փոփոխման պրոցեսն իր ամբողջության մեջ, ապա պետության և իրավունքի պատմությունը զբաղվում է միայն պետության և իրավունքի հարցերով: Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմությունը սերտորեն կապված է քաղաքական ուսմունքների պատմության, պետության և իրավունքի տեսության և մյուս դասընթացների հետ: Այն ընդհանուր գծերով ծանոթացնում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի հետ, ցույց տալիս, թե ինչպես են ձևավորվել և զարգացել իրավունքի քրեական, քաղաքացիական, դատավարական, ընտանեկան և այլ ճյուղեր:

Իրավունքի ճյուղերից պետության և իրավունքի պատմությունը տարբերվում է նրանով, որ վերջինս պետությունը և իրավունքն ուսումնասիրում է ամբողջությամբ, նրանց միասնության մեջ, իսկ իրավաբանական ճյուղային գիտությունները կարգավորում են հասարակական հարաբերությունների որոշակի բնագավառ: Օրինակ, պետական իրավունքն իրավական նորմերի ամբողջություն է, որը կարգավորում է այս կամ այն երկրի հասարակական և պետական կարգը, անհատի իրավական վիճակը և այլն: Պետության և իրավունքի պատմությունը նկարագրում է ոչ միայն պետության և իրավունքի ծագմանը, զարգացմանը և փոփոխմանը վերա-

բերող փաստերը, այլև ուսումնասիրում է այն օրինաչափությունները, որոնցով պայմանավորված է պետության և իրավունքի զարգացումը: Այդ օրինաչափություններն ուսումնասիրում է ոչ միայն պետության և իրավունքի պատմությունը, այլ նաև՝ պետության և իրավունքի տեսությունը: Սակայն վերջինս ուսումնասիրում է պետության և իրավունքի ծագման, զարգացման և փոփոխման ընդհանուր օրինաչափությունները, որոնք յուրահատուկ են պետության և իրավունքին՝ պատմական բոլոր տիպերում, իսկ պետության և իրավունքի պատմության առարկան ուսումնասիրում է կոնկրետ պատմական պայմաններում առանձին երկրների պետության և իրավունքի ծագման, զարգացման և գործունեության ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնահատուկ օրինաչափությունները, քաջահայտում դրանց առաջացման և զարգացման յուրահատկությունները, որն էլ համարվում է պետության և իրավունքի պատմության գլխավոր խնդիրը: Պետության և իրավունքի տեսությունը վերացապես և՛ տեսական ձևերով տրամաբանական վերլուծության է ենթարկում պետության և իրավունքի ծագումը, զարգացումը և փոփոխումը: Պետության և իրավունքի պատմությունն ուսումնասիրում է պետությունն ու իրավունքը կոնկրետ պատմական ձևի մեջ՝ հաշվի առնելով պատմական պրոցեսի գիզգագությունը և թռիչքը:

Չնայած կան ընդհանուր տարբերություններ պետության և իրավունքի պատմության ու պետության և իրավունքի տեսության միջև, այնուամենայնիվ այս գիտությունները սերտորեն կապված են միմյանց հետ: Պետության և ~~իրավունքի տեսությունն իր ամփոփումներն ու՝~~ եզրահանգումները կատարելիս հենվում է պետության և իրավունքի պատմության տվյալների վրա: Իսկ պետության և իրավունքի պատմությունն էլ իր հերթին կոնկրետ պետաիրավական երևույթներն ուսումնասիրելու ժամանակ հենվում է պետության և իրավունքի տեսության եզրահանգումների ու ամփոփումների վրա:

Որպես ուսումնական դասընթաց՝ պետության և իրավունքի պատմությունն ուսումնասիրում է պետության և իրավունքի այն կողմերը, որոնք բացահայտվում են «Հասարակական կարգ», «Պետական կարգ» և «Իրավունք» հասկացությունների միջոցով:

Ինչպես հասարակական մյուս գիտությունների, այնպես էլ սույն գիտության ուսումնասիրման մեթոդը գիտականիական է: Բոլոր դեպքերում պետությունն ու իրավունքը, նրանց բովանդակությունը պայմանավորված են տնտեսական հարաբերություններով: Պետության ու իրավունքի պատմությունն անխախտելիորեն կապված է հասարակության, նրա ֆորմացիաների պատմության հետ: Պետության և իրավունքի համար միշտ էլ հիմք է հանդիսացել բազիսը, որի փոխվելու դեպքում փոխվում է նաև վեր

նաշենքը:

Դիմելետիկական մեթոդի դրույթներից մեկի համաձայն բոլոր երևույթները փոխադարձ կապի մեջ են, որոնք առաջանում, զարգանում և փոփոխվում են: Դա վերաբերում է նաև պետությանն ու իրավունքին: Այս մեթոդի համաձայն՝ զարգացման հիմնական պատճառը հակադրությունների պայթյալն է: Այն հանդիսանում է զարգացման պրոցեսի բովանդակությունը և շարժիչ ուժը: Դիմելետիկական մեթոդը համարվում է հասարակական երևույթների ընդհանուր մեթոդների իմացությունը: Պետությունը և իրավունքն ուսումնասիրվում են նաև պատմական, տրամաբանական և համեմատական մեթոդների օգնությամբ: Պատմական մեթոդը պահանջում է հասարակական բոլոր երևույթները, այդ թվում և պետությունն ու իրավունքը, ուսումնասիրել նրանց ծագման պահից:

Պետության և իրավունքի պատմության ուսումնասիրման տրամաբանական մեթոդը, ըստ էության, նույնացվում է պատմական մեթոդի հետ: Այն վերջինից տարբերվում է նրանով, որ զուրկ է պատահականություններից և պատմական ձևից:

Պատմական և տրամաբանական մեթոդներն արտացոլում են օբյեկտիվ պատմական պրոցեսը. ընդ որում պատմական մեթոդի դեպքում պատմական պրոցեսն արտացոլվում է այնպես, ինչպես իրականությունն է իր կոնկրետ անկրկնելիությամբ: Այլ կերպ ասած, պատմական պրոցեսն իրականության արտացոլումն է, իսկ տրամաբանական մեթոդի դեպքում այդ պրոցեսն արտացոլվում է ընդհանուր ամբողջության մեջ՝ զուրկ լինելով պատահական, ոչ էական և ոչ օրինաչափ երևույթներից:

Ուսումնասիրման համեմատական մեթոդը երկու կամ ավելի օբյեկտների համեմատումն է, որը նպատակ ունի բացահայտելու նոր օրինաչափություններ և ժամանակի, և՛ որակի առումով: Չարգացման նույն փուլում գտնվող պետության և իրավունքի համեմատման դեպքում մինևույն տիպի պետության շրջանակներում երևան են գալիս նրանց զարգացման ընդհանուր օրինաչափությունները և առանձին երկրների պետության ու իրավունքի զարգացման առանձնահատկությունները: Իսկ զարգացման տարբեր աստիճաններում գտնվող և տարբեր տիպի պետության ու իրավունքի համեմատումը հնարավորություն է տալիս բացահայտելու նրանց միջև եղած տարբերություններն ու հակասությունները: Համեմատական մեթոդը հնարավորություն է տալիս բացահայտելու պետության և իրավունքի զարգացման օրինաչափությունները:

3 Պետության և իրավունքի ընդհանուր պատմությունն ուսումնասիրում է առանձին երկրների պետաիրավական ինստիտուտները չորս հիմ-

նական էտապների շրջանակներում. 1) հին աշխարհի պետության և իրավունքի պատմության, 2) միջին դարերի պետության և իրավունքի պատմության, 3) նոր ժամանակաշրջանի պետության և իրավունքի պատմության, 4) նորագույն ժամանակաշրջանի պետության և իրավունքի պատմության: Այս պարբերացումը համապատասխանում է համաշխարհային քաղաքակրթության զարգացման չորս հիմնական դարաշրջաններին: Այդ դարաշրջաններից յուրաքանչյուրը բնութագրվում է բարդ և ոչ միանշանակ սոցիալ-տնտեսական և պետաիրավական պրոցեսներով: Բայց դրանցից յուրաքանչյուրի մագիստրալ զարգացումը վերջին հաշվով ձևավորվել է որոշակի առաջատար տենդենցների ներգործությամբ: Օրինակ, Հին աշխարհը (մ.թ.ա. IV հազ. մինչև մ.թ. V դարը), որն աչքի է ընկնում մարդկային քաղաքակրթության, այդ թվում նաև պետության և իրավունքի սկզբնավորմամբ, ստրկատիրական հասարակության, Միջին դարերը (մ.թ. V դ. XVII-XVIII դդ.) ֆեոդալական (ավատատիրական) հասարակության, Նոր ժամանակաշրջանը (XVII-XVIII դդ.) բուրժուական հասարակության հաստատումն էր, իսկ Նորագույն ժամանակաշրջանը (XX դ.) արդի դարաշրջանի սկզբնական աստիճանն է, որը բնութագրվում է գաղութային կայսրությունների փլուզմամբ և բուրժուական հասարակության կառուցվածքային վերափոխմամբ:

2. ՏՈՀՄԱՏԻՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԶԱՅԲԱՅՈՒՄԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ

Հնագիտական տվյալները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ մարդանման էակներն առաջացել են մոտ 1750 հազար տարի առաջ: Էվոլյուցիայի ընթացքում աստիճանաբար ազատվելով հնադարյան հատկանիշներից մարդն ընտելանում է արտադրության կոլեկտիվ ձևերին, սպառմանը և ինքնավարությանը: Մոտավորապես 100 հազար տարի առաջ, այսպես կոչված մուստիերյան դարաշրջանում, մարդն արդեն ընդունակ է եղել իր պահանջմունքները բավարարելու համար կրակ հայթայթել, կացարան ստեղծել, ոսկոր ու քար մշակել: Այս դարաշրջանում նախատոհմային խումբը քանակապես մեծ չէր (չուրջ 30-40 մարդ)¹: Նախնադարյան հուտի ներքին կյանքը կարգավորվել է ճշգրիտ կատարվող մի քանի կանոններով:

Չի բացառվում, որ հենց Մուստիերյան փուլում են հաստատվել առաջին արյունակցական ասոցիացիաները և սահմանվել որոշ արգելքներ մինչ այդ սեռերի միջև գոյություն ունեցող տարերային

¹ Черниловский З.М., Всеобщая история государства и права, М., 1995., էջ 9:

հարաբերություններում: Հնադարյան մարդկանց առավելապես բնակեցված վայր են համարվել (Աֆրիկայի, Առաջավոր Ասիայի և Հարավային Եվրոպայի լայնարձակ տարածությունները: Մարդու կյանքի համար լավագույն պայմանները Միջերկրական ծովի շրջաններն էին: Այստեղ նա իր ֆիզիկական կերպարանքով զգալիորեն տարբերվում է հարավային եվրոպացուց, որը պայմանավորված էր մերձսառցային շրջանի ծանր պայմաններով: Իզուր չէ, որ Միջերկրական ծովին հարող շրջանները համարվում են հին աշխարհի ամենավաղ քաղաքակրթության օրրանը:

Մ.թ.ա. VIII հազարամյակից հնադարյան մարդու պատմության մեջ սկսվում է նոր փուլ: Այն ընդունված է անվանել նոր քարի դարաշրջան: Վերամշակվում են աշխատանքային գործիքները, ընտելացվում է առաջին տնային կենդանին՝ շունը: Այս նոր հարստությամբ զինված մարդը կատարում է իրական երկրագործական և ինդուստրիալ հեղաշրջում: Նա սկսում է տիրապետել հողագործության տեխնիկային, սովորում է մետաղներ հայթայթել և մշակել, պահել ու բազմացնել աշխատող ու կաթնասուն կենդանիներ: Ինդուստրիալ հեղաշրջումը զուգակցվում է արհեստների արագ զարգացմամբ, որը կոչված է բավարարելու անընդհատ աճող պահանջմունքները: Նոր քարի դարի կուլտուրայի օրինակ են հանդիսանում իբերները (մ.թ.ա. III հազ.): Նրանցից մնացել են կատույցներ և ճանապարհներ, գյուղեր, աշխատանքային գործիքներ: Իբերների գերեզմանոցները հնարավորություն են տալիս խոսելու սոցիալական շերտավորման փուլի մասին:

Մուստիերյան շրջանն իր հերթին բաժանվում է մայրիշխանության և հայրիշխանության ժամանակաշրջանների: Մայրիշխանության ժամանակ արգելվում էր անուսնական հարաբերության մեջ մտնել սեփական տոհմում և գոյություն ունեւ փոխադարձ պարտավորություն՝ ամուսնանալ այլ տոհմի կանանց հետ: Դրա հետ առաջացող խմբային ամուսնությունը միավորում էր մի քանի (կամ բազմաթիվ) միևնույն տարիքի տղամարդկանց մի քանի (կամ բազմաթիվ) կանանց հետ: Ոչ ոք չգիտեր, թե ով է իր հայրը. ազգակցությունը հաշվվում էր մոր գծով:

Մայրական կողմի տոհմը, որի տասնյակ և անգամ հարյուր անդամներ կարող էին ապրել միևնույն հարկի տակ, խմբավորվում էր տոհմի ավագի շուրջը: Դա ոչ միայն տոհմի անդամների միությունն էր, այլև կոմունահամայնքն էր, որը միասնաբար տիրում էր ունեցվածքին, միասնաբար աշխատում ու սպառում էր: Մայրիշխանության ժամանակ կինը ղեկավարում էր տոհմի քայր գործերը: Նրա դերը մեծ էր ոչ միայն ընտանիքում, այլև հասարակության մեջ: Բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ կինը մայրիշխանության շր-

ջանում ունեցել է հսկայական արտոնություններ: Հին Եգիպտոսում տղամարդու սեփականությունը, որպես կանոն, անցնում էր նրա ավագ դստերը, որի ամուսինն ուներ ոչ թե սեփականության, այլ օգտագործման իրավունք: Այստեղից էլ այնքան տարածված ամուսնությունը հարազատ եղբայրների ու քույրերի միջև:

Մայրիշխանության շրջան ապրել են աշխարհի բոլոր ժողովուրդները: Տոհմի անդամները պարտավոր էին պաշտպանել այդ մույն տոհմի բոլոր անդամներին: Նրանցից որևէ մեկին հասցված վնասը դիտվում է ամբողջ տոհմին հասցված վնաս:

Մայրիշխանության ժամանակաշրջանը բավական տևական է եղել և թողել է խոր հետքեր:

Բնական էվոլյուցիան աստիճանաբար հանգեցնում է տիրապետող մայրիշխանական հարաբերությունների վերացմանը: Նրան փոխարինելու եկավ հայրիշխանական տոհմը և հայրիշխանական ընտանիքը: Ընտանիքի ղեկավարությունն անցավ հորը, որն ընտանիքի անդամների նկատմամբ սկսեց օգտվել անսահմանափակ իրավունքից, տնօրինել ընտանիքի ամբողջ գործունեությունը:

Այս շրջամտում ընտանիքի առաջացման հետ առաջացավ մասնավոր սեփականությունը: Տեղի է ունենում աշխատանքի առաջին խոշոր բաժանումը՝ հողագործությունն անջատվում է անասնապահությունից: Հիմնական զբաղմունք դարձած հողագործությունը և անասնապահությունը մեծ փոփոխությունների հիմք հանդիսացան: Տնտեսության յուրացնող ձևն իր տեղը զիջում է արտադրականին, և դրա հետ մեկտեղ առաջանում են առաջին հակասությունները սեփականության և բաշխման ոլորտներում: Աշխատանքի առաջին հասարակական բաժանումն իր հերթին պայմաններ ստեղծեց դասակարգերի՝ շահագործողների և շահագործվողների առաջացման համար: Անհավասարություն առաջացավ նաև տոհմերի և ընտանիքների միջև: Հայրիշխանության շրջանում հողը բաժանված էր ըստ ընտանիքների և փոխանցվում էր ժառանգաբար: Տղամարդիկ չնայած օգտվում էին բազմակնության իրավունքից, այնուամենայնիվ արմատանում էր միակնությունը: Տոհմի գերագույն իշխանությունը նրա ընդհանուր ժողովն էր, որը լուծում էր տոհմին վերաբերող բոլոր հարցերը: Այն համարվում էր նաև դատական գլխավոր հիմնարկը: Տոհմի ժողովին էր պատկանում բոլոր պաշտոնների, այդ թվում նաև ռազմական առաջնորդների, ընտրման իրավունքը: Տոհմերը միավորվում էին ավելի մեծ խմբերի մեջ (ֆրատրիներ), որոնց միավորումից էլ ստեղծվում էին ցեղային միություններ: Նրանցում երկար ժամանակ պահպանվեցին դեմոկրատական սկզբունքները, սակայն կանանց իրավունքները սահմանափակվում էին: Ցեղերի ղեկավարության

գլուխ արդեն կանգնած էին ընտրովի մարմինները՝ խորհուրդները (սկզբում ֆրատրիների ավագների խորհուրդ, հետագայում՝ ցեղային ավագների խորհուրդ): Առաջացան զինվորական առաջնորդների և մի շարք այլ պաշտոններ: Նշանավոր և ազդեցիկ պաշտոնները ժառանգական էին:

Տոհմային մարմիններն աստիճանաբար վերացվում են:

Կարող ենք ասել, որ նախնադարյան հասարակության վերջին շրջանում գոյություն ունեին կառավարման մարմիններ, որոնք հասարակ ու պարզ բնույթ էին կրում: Այդ կառավարումը պատմությանը հայտնի է «ռազմական դեմոկրատիա» անունով, որովհետև գոյություն ունեցող զինվորական առաջնորդների հետ մեկտեղ կային նաև տոհմապետերի և ավագների խորհուրդներ, ժողովրդական ժողով և այլն:

Նախնադարյան համակարգի վերջին փուլում փոխվում են տնտեսական հարաբերությունները: Արտադրական ուժերը մտնում են զարգացման նոր փուլ: Արագ թափով են զարգանում նաև արհեստները: Չարգացման արդյունքը լինում է աշխատանքի երկրորդ խոշոր բաժանումը՝ արհեստներն անջատվում են հողագործությունից: Իսկ դա նպաստում է տոհմերի ներսում հասարակական որոշակի շերտավորմանը: Դրվում է տոհմերի քայքայման սկիզբը, տրոհվում են նաև մեծ ընտանիքները: Տոհմի աստիճանական քայքայումով սկիզբ է դրվում գյուղական համայնքի ստեղծմանը, որը հիմք է տալիս ասելու, որ նախնադարյան կարգը վերջնականապես դադարեց գոյություն ունենալուց:

Գյուղական համայնքի անդամները ստանում էին իրենց բաժին հողակտորները և այն մշակում իրենց ընտանիքների անդամների ուժերով: Կային նաև ընդհանուր օգտագործման պատկանող հողատարածքներ:

Հողի մասնավոր սեփականության իրավունքը հաստատվեց հասարակությունը դասակարգերի բաժանվելուց հետո: Տոհմերի քայքայմանը նպաստեց նաև աշխատանքի երրորդ մեծ բաժանումը՝ առևտրական դասի առաջացումը: Առևտրի զարգացմանը նպաստեցին մետաղադրամի հատումը, հողի ստուծախը, ապրանքների գրավադրումը: Հարստության մի մասը սկսում է կենտրոնանալ մի խոտբ-ֆերդկանց ձեռքում: Հասարակության բաժանումը հարուստների և աղքատների դառնում է ակնհայտ: Դա նպաստեց դասակարգային հասարակության առաջացմանը:

Նախնադարյան հասարակարգը քայքայվեց: Ստեղծվեց նոր հասարակարգ, որը հայտնի է ստրկատիրական հասարակարգ անունով: Ընտանիքի և մասնավոր սեփականության առաջացումը, հասարակության բաժանումը հակադիր դասակարգերի հրամայաբար պահանջում էին ստեղծել այնպիսի մի մարմին, կազմակերպություն, որը կարողանար ապահովել հարստությունն իրենց ձեռքում կենտրոնացրած մարդկանց

անվտանգությունը: Այդպես առաջացավ պետությունը, որը շահագործող դասակարգն օգտագործեց ոչ միայն իր տնտեսական նպատակներն իրականացնելու, այլև քաղաքական իշխանությունը նվաճելու համար:

Պետություններն առաջին դասակարգային հասարակությունում՝ ստրկատիրական ֆորմացիայում, պաշտպանում էին շահագործող դասակարգի շահերը:

Պետության հետ միաժամանակ առաջ է գալիս նաև իրավունքը: Իրավական նորմերը սահմանվում են պետության կողմից, հետևաբար այն մոլորակն ծառայում էր հասարակության այն խավին, որին ծառայում էր պետությունը: Ստրկատիրական պետությունների համար որպես իրավունքի աղբյուր հանդիսացել են սովորույթը, ինչպես նաև թագավորների հրովարտակներն ու նրանց ընդունած օրենքները:

Օրենքների մասին առավել մանրամասը նկարագրվում է սույն դասագրքի համապատասխան գլուխներում:

Ընդհանուր առմամբ պետության և իրավունքի առաջացման վերաբերյալ կան և հետագայում էլ կլինեն բազմաթիվ տեսություններ: Դ-ա, ամենից առաջ, պայմանավորված է պետության և իրավունքի բարդ սոցիալական երևույթ լինելու հետ: Վերը նշված տեսակետը մարքսիստական է, որը խորհրդային տարիներին համարվում էր «ամենաճիշտը»: Այսօր իրավաբանական գիտությանը ~~հայտնի են պետության և իրավունքի առաջացման վերաբերյալ այնպիսի տեսություններ, ինչպիսիք են Լահասպետականը, Աստվածաբանականը, Պայմանագրայինը, Բռնությանը, Հոգեբանականը և այլն: Մեր խնդիրը չէ ուսումնասիրել ու վերլուծել նշված տեսությունները և դրանց վերաբերյալ կատարել համապատասխան եզրահանգումներ: Դրանով զբաղվում է «Պետության և իրավունքի տեսության» առարկան: Ավելացնենք միայն, որ նշված տեսություններից և ոչ մեկը պետության ու իրավունքի առաջացման հետ կապված չի կարող համարվել առաջնայինը: Դրանք լրացնում են միմյանց և մեզ պատկերացում տալիս հասարակական այդ կարևորագույն երևույթների մասին:~~

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀԻՆ ԱՐԵՎԵԼԸԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԸԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԱ-ՀՌՈՍԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԸԻ ՍԿՋԲՆԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՋԱՐԳԱՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԳԾԵՐԸ

Ընդհանուր բնութագիրը

6

Ստրկատիրական հասարակարգը պատմությանը հայտնի է որպես մարդու կողմից մարդու շահագործման վրա հիմնված առաջին դասակարգային հասարակություն: Այդ հասարակարգի հիմնական դասակարգերն էին ստրկատերերը և ստրուկները: Հնագույն ստրկատիրական պետություններն առաջացել են մ.թ.ա. IV-III հազարամյակների սահմանագծին: Ստրկատիրական հասարակարգ գոյություն է ունեցել Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի մի շարք երկրներում ընդհուպ մինչև մ.թ. III-V դարերը:

Սույն ձեռնարկում առավել հանգամանորեն տրվում է Հին Արևելքի և անտիկ աշխարհի ստրկատիրական հասարակարգի պետության ու իրավունքի պատմությունը:

Հին Արևելքը Մերձավոր ու Միջին Արևելքի, Հարավային և Արևելյան Ասիայի, Հյուսիսային և Հյուսիս-Արևելյան Աֆրիկայի երկրների ընդհանուր անվանումն է: Այն վերաբերում է ստրկատիրության ծագման ու զարգացման ժամանակաշրջանին: Հին Արևելքի հնագույն հասարակությունները սկզբնավորվել են մ.թ.ա. IV-III հազարամյակներում Նեղոսի հովտում (Եգիպտոս) և Եփրատի ու Տիգրիսի միջագետքում (Շումեր և Աքքադ), ուր առաջացել են մարդկության պատմության մեջ առաջին պետություններն ու

ստեղծվել հնագույն գրերը:

Ստրկատիրական հասարակարգն իր զարգացմանն է հասել անտիկ աշխարհի երկրներում՝ Հին Հունաստանում (մ.թ.ա. V-IV դդ.) և Հին Հռոմում (մ.թ.ա. II- մ.թ. IV դդ.):

Ստրկությունը, ինչպես նշել ենք վերևում, առաջացել է նախնադարյան համայնական հասարակարգի ընդերքում, երբ արտադրողական ուժերի զարգացման հետևանքով աշխատանքային գործիքների կատարելագործումը հնարավորություն է տվել ստանալու արտադրանքի ավելցուկ, որը կենտրոնացել է առանձին ընտանիքների ձեռքում: Այն աշխատանքի հասարակական բաժանման հետ մեկտեղ նպաստեց ապրանքափոխանակության զարգացմանը: Անհրաժեշտություն է զգացվել օգտագործել մարդու աշխատանքը՝ առավել շատ մթերք արտադրելու և հասարակության աճող պահանջարկը բավարարելու համար: Տնտեսության մեջ սկսել են օգտագործել ռազմագերիների և պարտքը չվճարած ազատների աշխատանքը: Առաջացել է արտադրության միջոցների մասնավոր սեփականություն՝ սկզբում աշխատանքի գործիքների, ապա նաև ստրուկների և մասամբ հողի նկատմամբ: Գույքային անհավասարությունը և մասնավոր սեփականատիրական հարաբերությունները դարձան դասակարգերի առաջացման կարևոր գործոն, որն էլ իր հերթին անհրաժեշտ դարձրեց պետության հանդես գալը: Պետության հետ մեկտեղ ծագում է նաև իրավունքը:

Հին Արևելքի ստրկատիրական պետությունների՝ Եգիպտոսի, Բաբելոնի, Հնդկաստանի և Չինաստանի հասարակական, պետական և իրավական կարգն էլ ամփոփված է սույն դասագրքի համապատասխան գլուխներում՝ Այս երկրների հասարակական կարգը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով.

ա) դեռ պահպանվում էին նախնադարյան համայնական կարգերի մնացուկները,

բ) հասարակությունը բաժանվել էր երկու հիմնական դասակարգերի՝ ստրուկների և ստրկատերերի: Ստրկությունը հիմնականում կրում էր տնային բնույթ: Ստրուկները մտնում էին հայրիշխանական ընտանիքի մեջ: Նրանք երբեմն կարող էին ունենալ իրենց գույքը և ընտանիքը,

գ) երկար ժամանակ պահպանվեց գյուղական համայնքը, որը կրում էր տարածքային բնույթ: Գյուղական համայնքը Հին արևելյան հասարակության արտադրության միջուկն էր: Նրանում աստիճանաբար նկատելի դարձավ գույքային շերտավորումը: Այն բաժանվեց հարուստների և աղ-

քատների: Ազատ գյուղական համայնականները ստրուկների հետ մեկ-տեղ ենթարկվում էին շահագործման:

Հին արևելյան պետությունների պետական կարգը նույնպես բնորոշ է որոշակի առանձնահատկություններով: Այդ ամենից առաջ արտահայտվում է նրանում, որ այդ բոլոր պետություններն էլ իրենց կառավարման ձևով եղել են բռնապետություն (դեսպոտիա), որը բնութագրվում էր՝ ա) միապետի (թագավորի) անսահմանափակ ժառանգական իշխանությամբ, բ) միապետի աստվածացմամբ և նրա ձեռքում կրոնական իշխանության կենտրոնացմամբ, գ) կենտրոնական բյուրոկրատական ապարատի առկայությամբ, դ) միապետի՝ երկրի բոլոր հողերի նկատմամբ սեփականատիրոջ ճանաչմամբ: //

2 Անտիկ աշխարհի երկրներում ստրկատիրական պետությունների հասարակական և պետական կարգը նույնպես բնորոշվում է որոշակի առանձնահատկություններով: Այստեղ ստրկատիրական հարաբերությունների մեծ զարգացում ապրեցին: Ստրկությունը ձեռք բերեց դասական բնույթ և կազմում էր արտադրության հիմքը: Ստրուկներն էին տիրապետող դասակարգի համար հիմնական նյութական բարիք արտադրողը:

3 Անտիկ ստրկատիրական պետությունների ձևերը տարբեր ժամանակներում տարբեր են եղել: Դա կախված է եղել նրանց առաջացման պայմաններից, տնտեսական բազիսի զարգացումից, դասակարգային ուժերի փոխհարաբերակցությունից և նույնիսկ աշխարհագրական պայմաններից: Այսպես, Հունաստանում ստրկատիրական պետություններն առաջացան քաղաք-պետությունների՝ «պոլիսների» ձևով՝ հետագայում իրենց շուրջը միավորելով մի քանի գյուղական համայնքների: Հռոմեական պետությունը նույնպես սկզբնական շրջանում առաջացավ որպես քաղաք-պետություն, որից հետո, բարեհաջող նվաճողական քաղաքականության շնորհիվ, դարձավ հզոր պետություն:

Ստրկատիրական հասարակարգում պետության հետ առաջացած իրավունքը կոչված էր պաշտպանելու տիրապետող դասակարգի շահերը: Իրավունքի գլխավոր խնդիրն էր ամրապնդել տիրապետող դասակարգի նյութական պայմանները: Այն ամրապնդում էր ոչ միայն ազատների և ստրուկների միջև եղած անհավասարությունը, այլև ազատ մարդկանց առանձին խմբերի իրավական անհավասարությունը: Օրինակ, Աթենքում Մոլոնի, իսկ Հռոմում Սերվիոս Տուլիոսի ռեֆորմները սահմանում էին ազատ մարդկանց տարբեր կատեգորիաների իրավական վիճակը՝ հաշվի առնե-

լով նրանց սեփականության չափերը: Իսկ Հնդկաստանում Մանուի օրենքներն ամրապնդում էին ազատ բնակչության բաշխումը չորս անհավասար վառնանների և այլն:

Իրավունքն ամուր կերպով կապված է եղել կրոնի հետ, որը ծագել է դեռևս համայնական հասարակարգում: Կրոնական հայացքներն իրավական նորմերի ձևավորման ժամանակ խաղացել են իրավաստեղծ դեր, իսկ մի շարք դեպքերում այդ հայացքները, ինչպես նաև կրոնական վարքի կանոնները ձեռք են բերել իրավական բնույթ, ինչպես, օրինակ, Մանուի օրենքները Հին Հնդկաստանում:

Ստրկատիրական պետություններում իրավունքը դեռևս չէր ճյուղավորվել: Չնայած դրան՝ հռոմեականը բաժանվում էր հանրային և մասնավոր իրավունքների:

Սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների հետ կապված՝ հին արևելյան հասարակության իրավունքն ունեցել է մի շարք յուրահատուկ գծեր՝ ա) մախնադարյան համայնական մնացուկների երկարատև պահպանումն իր արտացոլումը գտավ հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքի թույլ զարգացման մեջ: Դեռևս պահպանվում էր հայրիշխանական ընտանիքը, ընտանիքի համայնքի անդամների կողմից կատարված հանցագործությունների համար կալեկտիվ պատասխանատվությունը, «տալիոնի» սկզբունքը (ակն ընդ ական, ատամն ընդ ատամն և այլն) և այլն. բ) օրենսդրությունը, որպես կանոն, իրենից ներկայացնում է դատական պրակտիկայից վերցված կոնկրետ դեպքերի գրառումներ և իր մեջ չի պարունակում ընդհանուր կանոններ, այլ, ընդհակառակը, ամրապնդում է առանձին, կոնկրետ դեպքերի՝ կազուսների վերաբերյալ նորմեր: Այս պատճառով էլ իրավունքի նորմերը կրում են կազուալ բնույթ.

գ) ստրկատիրական հասարակարգի իրավունքը ներծծված էր պահպանողականությամբ և ձևականությամբ, որից իր զարգացման ընթացքում գերծ է մնացել սնտիկ պետությունների իրավունքը: Իրավունքի նորմերը կրում են ամուր բնույթ և փոփոխության են ենթարկվում շատ դանդաղ:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ իրավունքի պատմության մեջ առանձնահատուկ հետք է թողել Հռոմի իրավունքը: Ապրանքադրամական և մասնավոր սեփականատիրական հարաբերությունների զարգացումը Հռոմում նպաստեց իրավունքի յուրահատուկ լինելուն: Այստեղ տնտեսական հարաբերությունների զարգացման պրոցեսում ձևավորվում է մասնավոր սեփականության վրա հիմնված դասական մասնավոր իրավունքը, որը հսկայական ազդեցություն թողեց հետագայում իրավունքի զարգացման վրա:

ԲԱԺԻՆ 1

ՀԻՆ ԱՐԵՎԵԼԸԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԸԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1

ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԸ

1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

8. Հին Եգիպտոսն Աֆրիկայի հյուսիսարևելյան մասում, Նեղոս գետի ստորին հոսանքում, գտնվող հնագույն պետությունն է:

Այստեղ ավելի վաղ, քան մյուս երկրներում, ձևավորվեց դասակարգային հասարակությունը և աշխարհում առաջինն այստեղ առաջացավ պետությունը: Եգիպտոսում պետության առաջացման վերաբերյալ տարբեր ժամկետներ են հիշատակվում տարբեր հեղինակների կողմից: Տարածված է այն կարծիքը, որ մ.թ.ա. III հազարամյակում պետությունն արդեն գոյություն ուներ: Հին Եգիպտոսում տոհմատիրական կարգերի քայքայումն ընթանում էր շատ դանդաղ և արգելակում էր մասնավոր սեփականատիրական հարաբերությունների ու ստրկատիրական կարգերի զարգացմանը:

Հին Եգիպտոսը բաժանված էր մի քանի տասնյակ մարզերի (նոմերի), որոնք հաճախ էին ձգտում միավորման:

Հին եգիպտական պետության պատմությունը բաժանվում է վաղ, հին, միջին, նոր և ուշ ժամանակաշրջանների:

Վաղ թագավորություն: Այս ժամանակաշրջանում պետությունը հիշեցնում էր հին և բավականին պարզունակ/զեղային միություն: Պետության մեջ մեծ դեր էր շարունակում խաղալ համայնքը, որը փաստորեն տիրում էր հողերին: Դրա հետ մեկտեղ եգիպտական հողերի գերագույն սեփականատերը թագավորն էր: Բնակչության հիմնական զանգվածը կազմում էին ա-

գատ գյուղացի-համայնականները: Ստրուկը չէր հանդիսանում հիմնական արտադրողը: Մեծ թիվ էին կազմում մաև գերի-ստրուկները, որոնց աշխատեցնում էին խոշոր տնտեսություններում: Վաղ թագավորության շրջանում Եգիպտոսը բաժանվեց Վերին և Ստորին մասերի: Ավելի ուժեղ էր համարվում Վերին Եգիպտոսը: Ստեղծվել էր կարծես երկու թագավորություն:

9. Պետության գլուխ կանգնած էր թագավորը (փարավոնը), որը շրջապատված էր պալատական աստիճանավորներով և տարբեր ծառայողներով: Ստրկատիրական վերնախավը թագավորական տնտեսությունում զբաղեցնում էր կարևորագույն պաշտոնները: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է պետական ապարատի ձևավորմամբ: Սկսում է կազմավորվել մշտական բանակը:

Պետության կարևորագույն խնդիրներից էր ոռոգման համակարգի կազմակերպումը Նեղոսի հովտում: Վաղ թագավորության շրջանում Եգիպտոսը բաժանված էր առանձին մարզերի՝ նոմերի, որոնց կառավարումն իրականացվում էր կառավարիչների՝ նոմարքոսների կողմից: Վաղ թագավորությունը գոյատևեց մ.թ.ա. III հազ. սկզբներից մինչև 2800 թ.

Հին թագավորություն: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է կենտրոնացված ուժեղ ստրկատիրական պետության առեղծմով: Գյուղական համայնքը դեռ շարունակում էր պահպանվել, իսկ երկրի հիմնական արտադրողները հողագործներն էին: Այնուամենայնիվ, հասարակության մեջ խորանում էր սոցիալական շերտավորումը: Համայնքի գյուղացիներն աշխատում էին թագավորական և տաճարային տնտեսություններում: Ստրկատիրական ավագանին այս շրջանում ևս զբաղեցնում էր կարևորագույն պաշտոնները: Պետության կարևորագույն խնդիրն էր ստրկատիրական շուկան:

9. Պետական իշխանությունը ձևավորվում է արևելյան բռնակալության (դեսպոտայի) ձևով: Նրա բնութագրիչ հատկանիշներից էին կանաչավարման կենտրոնացումը, փարավոնի հեղինակության ամրապնդումը կրոնական գաղափարախոսության օգնությամբ և արիստոկրատ աստիճանավորների աշխատանքի օգտագործումը:

Թագավորի ձեռքում կենտրոնացված էր անսահմանափակ իշխանությունը: Նա իրականացնում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները: Թագավորությունում կարևորագույն պաշտոնները՝ վեզիրը, զինվորական պետերը, զանձապահները, գերագույն քրմերը, սպորաբար զբաղեցնում էին թագավորի տան անդամները: Թագավորից հետո առաջին դեմքը համարվում էր վեզիրը (քարձրաստիճան պաշտոնյա), որը ղեկավարում էր գերագույն դատական մարմինների գործունեությունը, իրականացնում էր տեղական կառավարումը և այլն: Վեզիրն իրավունք ուներ զբաղվելու ցանկացած հարցով:

Հին թագավորության շրջանում բավական զարգացում ապրեց զինվորական օտրոճը: Հայտնի են մի շարք զինվորական կոչումներ: Չևավորվում էր ռազմական գերատեսչությունը: Այս շրջանում ստեղծվեցին նաև այլ գերատեսչություններ՝ հասարակական աշխատանքների, ֆինանսական և դատական:)

Երկրի բարձրագույն դատական ատյանը գտնվում էր մայրաքաղաքում: Գլխավոր դատավոր էր համարվում փարավոնը, որը հաճախ իրեն վստահելի անձանցից նշանակում էր դատավորներ՝ զմոտնի գործերը քննելու համար: Չնայած հին թագավորության ժամանակաշրջանի թագավորները ձգտում էին հաստատել ուժեղ իշխանություն և ստեղծել ամուր պետություն, այնուամենայնիվ ներքին հակասության հետևանքով հին թագավորությունը մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսերին անկում ապրեց:

Միջին թագավորություն: Մ.թ.ա. III հազ. վերջերից սկսվում է Եգիպտոսի միջին թագավորության ժամանակաշրջանը: Այս ժամանակաշրջանում երկրում թուլանում է կենտրոնական և ուժեղանում տեղական իշխանությունը: Տեղերում առանձին առաջնորդներ վայելում էին բնակչության լայն շրջանների համակրանքը և գրեթե չէին ենթարկվում կենտրոնական իշխանությանը: Փարավոնների համագիպտական իշխանությունն անկում էր ապրում: Հասարակական հարաբերությունները Միջին թագավորության ծաղկման շրջանում (մ.թ.ա. XVIII դ.) աչքի էին ընկնում երկու կարևոր առանձնահատկություններով: Մի կողմից մասնավոր տնտեսություններում տեղի էր ունենում ստրկատիրության նշանակալի աճ և հողագործների իրավիճակի փոփոխությունը, մյուս կողմից՝ գյուղական համայնքի շերտավորումն առաջ էր բերում մանր սեփականատերերի ձևավորումը: Միջին թագավորության շրջանում բավականին մեծացավ նոմարքոսների իշխանությունը: Թագավորության ծաղկման շրջանում փարավոնները ձգտում էին համենի պետության միավորմանն ու կենտրոնական իշխանության ամրապնդմանը: Այս նպատակով նրանք փորձում էին սահմանափակել նոմարքոսների իշխանությունը, կտրել հենքին: Ամենեմխետոս 3-րդի կառավարման տարիներին որոշակի չափով ուժեղացավ պետական իշխանությունը: Երան հաջողվեց թուլացնել նոմարքոսների իշխանությունը, սակայն բարդ հասարակական հակասությունների արդյունքը եղավ Եգիպտոսի թուլացումը, որը հնարավորություն տվեց հիքսոսներին նվաճել Եգիպտոսը միջին թագավորության վերջին շրջանում: Հիքսոսների տիրապետությունը տևեց 500 տարի (մ.թ.ա. XVI-XII դդ.):

Նոր թագավորություն: Հիքսոսների տիրապետությունից հետո սկսվում է նոր թագավորության ժամանակաշրջանը: Այս շրջանում մեծանում է Եգիպտոսի տերիտորիան, և այն դառնում է իսկայական տերություն:

Բազմաթիվ պատերազմներ նպաստեցին ստրկության զարգացմանը: Այս ժամանակաշրջանում ստրկատիրական հարաբերությունները հասան իրենց զարգացման գագաթնակետին: Ստրուկներ ունեին նաև հասարակության մեջ համեատ դիրք գրավող այնպիսի մարդիկ, ինչպիսիք էին արհեստավորները, ալգեգործները, հովիվները և այլն:

Բնակչության զգալի մասն էին կազմում հողագործները: Նրանց մի մասը հարուստ էր, իսկ առավել մեծ մասը կանգնած էր աղքատության եզրին: Թագավորական և տաճարային հողերի վրա աշխատում էին հողագործները: Նրանց մի մասին թույլատրվում էր ունենալ անասուններ, բանվորական գործիքներ, իսկ տաճարային հողագործներին՝ նաև ստրուկներ:

Նոր թագավորության շրջանում հասարակական հարաբերությունների առանձնահատկություններից է քրմական դասի հեղինակության բարձրագույնը: Բրնությունը վերածվեց ժառանգական փակ կաստայի: Պետական կարգը բնութագրվում էր կենտրոնացված բյուրոկրատական կառավարման համակարգի ամրապնդմամբ: Երկիրը բաժանված էր երկու վարչական տարածքների. Վերին և Ստորին Եգիպտոսի, որոնք իրենց հերթին բաժանված էին մարզերի (նոմերի): Յուրաքանչյուր տարածքի գլուխ կանգնած էր փարավոնի կողմից նշանակված հատուկ կառավարիչը (փոխարքա): Մարզերում (նոմերում) ամբողջ իշխանությունը կենտրոնացված էր թագավորական աստիճանավորների ձեռքում: Քաղաքները և ամրոցները նույնպես գլխավորում էին թագավորի կողմից նշանակված պետերը:

Թագավորից հետո առաջին և բարձրագույն դեմք էր համարվում վեզիրը: Նրան տրված էին մեծ իրավասություններ (մայրաքաղաքի կառավարումը, երկրի ամբողջ հողային ֆոնդի և ջրամատակարարման համակարգի կարգավորումը, բարձրագույն զինվորական իշխանության ղեկավարումը և այլն):

Թագավորների նվաճողական քաղաքականությունն առանձնահատուկ հետք թողեց Եգիպտոսի պետական կառավարման համակարգի վրա, նրան տվեց ռազմական բնույթ, աճեց զինվորական պետերի դերը տնտեսական կառավարման ոլորտում: Նոր թագավորության շրջանում արևելյան բռնապետությունը հասավ իր ծաղկման գագաթնակետին: Պետական կառավարման մեջ մեծ դեր էին խաղում քրմերը: Չնայած այս ամենին՝ Եգիպտոսի բաժանումը Վերին և Ստորին մասերի մեզ իրավունք է տալիս ասելու, որ միասնական պետական իշխանությունն այդ երկրում կրում էր ձևական բնույթ: Մ.թ.ա. XI-VIII դդ. Եգիպտոսի նոր թագավորությունը թուլացավ և անկում ապրեց: 1

Ուշ թագավորություն: Այս ժամանակաշրջանի պատմությունը սկսվում է մ.թ.ա. VII դ. և շարունակվում մինչև մ.թ.ա. VI դարը: Ուշ թագավորու-

թյան շրջանի հասարակական ու պետական կարգն ընդհանուր հատկանիշներով նմանվում է նոր թագավորության շրջանի հասարակական և պետական կարգին: Ավելացնենք, որ այս ժամանակ հասարակության բաժանումը ազատների և ստրուկների ավելի ակնհայտ է դառնում: Լայն տարածում են գտնում այն գործարքները, որոնք վերաբերում են ինքնավաճառքին, երբ առանձին մարդիկ իրենց վաճառում էին ստրկության: Վատթարանում է արհեստավորների վիճակը: Քրմական դասի հետ մեկտեղ ձևավորվում է նաև գինավորական դասը:

11.

2. Հին Եգիպտոսի Իրավունքի Հիմնական Գծերը

Հին Եգիպտոսում սկզբնական շրջանում որպես իրավունքի աղբյուր համարվել է սովորույթը: Պետության զարգացման հետ ակտիվանում է նաև փարավոնների օրենսդրական գործունեությունը: Կան մի շարք տեղեկություններ այն մասին, որ Հին Եգիպտոսում կատարվել են կողիֆիկացիաներ (համակարգում): Սակայն դրանցից ոչ մեկը չի հասել մեզ:

13. Սեփականության իրավունք: Եգիպտոսում գոյություն են ունեցել հողատիրության մի քանի ձևեր: Եղել են պետական, մասնավոր, համայնքային և տաճարային հողեր: Ավելի վաղ առաջացել են խոշոր հողատիրությունները՝ տաճարային տնտեսության և թագավորական տիրույթների տեսքով: ~~Նրանք հողի նկատմամբ իրավունք ունեին կատարելու տարբեր տեսակի գործարքներ (նվիրել, վաճառել, ժառանգություն թողնել):~~ Գյուղերում մասնավոր սեփականության զարգացումն ընթանում էր բավականին զանգաղ: Այստեղ տիրապետող էր հանդիսանում համայնքը: Չնայած դրան՝ աղբյուրները վկայում են, որ արդեն Հին թագավորությունում համայնքային հողերն անցնում էին ձեռքից ձեռք: Եգիպտոսում շարժական գույք էին համարում ոչ միայն բանող անասուններին, այլ նաև ստրուկներին:

Պարտավորություններ: Հին եգիպտական իրավունքին հայտնի են մի շարք պայմանագրեր, այդ թվում՝ վարձակալության, առք ու վաճառքի, փոխառության, կապալի և այլն:

Հաշվի առնելով հողի արժեքը՝ Եգիպտոսում ստեղծվել էր այն ձեռքից ձեռք փոխանցելու հատուկ կարգ, որը սահմանվում էր երեք կարևորագույն ակտերով: Առաջինը պայմանագրի առարկայի և վաճառման կարգի մասին համաձայնագրի կնքումն էր գնորդի և վաճառողի միջև: Երկրորդ ակտը վաճառողի երդումն էր: Այն կրում էր կրճատական բնույթ և հաստատում պայմանագիրը: Երրորդ ակտն աստիճանաբար դադարեց գործելուց:

12. Անուսնաընտանեկան հարաբերություններ: Եգիպտոսում անուսնու-

քյունը կնոջ և ամուսնու անունից կնքվում էր պայմանագրերի հիման վրա: Այդ պայմանագրով որոշվում էր, որ կնոջ բերած օժիտը մինչև վերջ էլ մնում է նրա սեփականություն: Եզիպտոսում երկար ժամանակ պահպանվեց մայրիշխանությունը: Այդ պատճառով էլ կնոջ դերը ընտանիքում մեծ էր: Սակայն աստիճանաբար ուժեղանում է տղամարդու իշխանությունը, և նա էլ դառնում է ընտանիքի գլուխը: Չնայած կինն ու տղամարդն այլևս հավասար իրավունքներ չունեին, բայց ամուսնալուծությանը վերաբերող հարցերում նրանք հավասար իրավունքներից էին օգտվում:

Եզիպտական իրավունքում իր ուրույն տեղն ունեւր նաև ժառանգական իրավունքը: Ժառանգումը կատարվում էր ըստ օրենքի և ըստ կտակի: Ժառանգելու իրավունքն ունեին և՛ տղաները, և՛ աղջիկները: Կտակ կազմել կարող էին և՛ տղամարդը, և՛ կինը:

Քրեական իրավունք և դատավարություն: Եզիպտոսում առավել զարգացած էր քրեական իրավունքը: Վտանգավոր հանցագործություններ էին համարվում պետական և հասարակական կարգի դեմ ուղղված ոտնձգությունները (դավաճանությունը, պետական գաղտնիքի հրատարակումը, խռովությունները և այլն): Այս դեպքում պատասխանատվության էին ենթարկվում ոչ միայն հանցագործը, այլև նրա ընտանիքի բոլոր անդամները: Խիստ պատիժներ էին նախատեսված կրոնի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում (օրինակ՝ սուրբ կենդանիներին՝ կատու, բու և այլն սպանելու համար):

Անձի դեմ ուղղված հանցագործություններից եզիպտական աղբյուրներն առավել վտանգավոր էին համարում սպանությունը, հատկապես հայրասպանությունը: Գույքային հանցագործություններից ծանր էին համարվում գողությունը և կողոպուտը: Պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններից էին բռնաբարությունը, ամուսնական անհավատարմությունը:

Հանցագործությունների համար նախատեսված էին տարբեր տեսակի մահապատիժներ: Հին Եզիպտոսում, որպես պատժատեսակ, շատ տարածված էին մահապատիժը և մարմնական պատիժները (քթի և ականջների կտրում, մտրակահարում և այլն): Կիրառվում էին նաև բանտարկությունը, ստրկության վաճառելը և դրամական տուգանքը: Դաժան պատիժները հետապնդում էին հանցագործին վախեցնելու նպատակ:

Քրեական և քաղաքացիական դատավարությունն իրականացվում էր միատեսակ և սկսվում էր տուժողի զանգատի հիման վրա:

Ապացույց էին հանդիսանում վկաների ցուցմունքները, ինչպես նաև երդումը: Ապացույցներ կորզելու համար կիրառվում էին տանջանքներ: Դատավարությունն իրականացվում էր գրավոր ձևով:

ԳԼՈՒԽ 2

ՀԻՆ ԲԱԲԵԼՈՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Առաջին պետությունը Միջագետքի տարածքի վրա առաջացել է մ.թ.ա. III հազարամյակի սկզբում:

Դա եղել է փոքրիկ քաղաք-պետություն, որտեղ երկար ժամանակ պահպանվել են տոհմացեղային կազմակերպության մնացուկները: Երկրի հիմնական բնակիչները եղել են շումերները: Շումերի պատմության մեջ աչքի ընկնող դեր խաղացին Էրիդ, Ուր, Լագաշ քաղաքները:

Աղբյուրները վկայում են այն մասին, որ շումերները բավականին վաղ ժամանակներից ծուլվել են քոչվոր/սեմիտական գեղերին, որոնք հետագայում հայտնվեցին շումերներով բնակեցված տերիտորիայում: Իսկ մ.թ.ա. III հազարամյակից սկսած Միջագետքի հյուսիսում սեմիտները սկսեցին հանդես գալ որպես շումերների կուլտուրայի ժառանգորդներ և շարունակողներ: Սեմիտների հիմնադրած ամենահին քաղաքներից էր պետության մայրաքաղաքը՝ Աքքադը: Աքքադական թագավորության անկումից հետո հյուսիսային մասը շարունակվեց կոչվել Աքքադ, իսկ հարավային մասը պահպանեց Շումեր անվանումը:

Սեմիտների ստեղծած քաղաքներից էր Բաբելոնը, որի քաղաքական և կուլտուրական նշանակությունը ծաղկեց սկսած մ.թ.ա. II հազարամյակից: Բաբելոնն աստիճանաբար գերազանցեց երկրի մնացած բոլոր քաղաքները, և նրա անունով սկսեց կոչվել ամբողջ Միջագետքը:

Հին Բաբելոնի պատմության մեջ հատուկ տեղ է զբաղում Համուրապիի թագավորության շրջանը (մ.թ.ա. 1792-1750թթ.): Գահ բարձրանալով՝ Համուրապին վարեց նվաճողական քաղաքականություն, որի արդյունքը եղավ բաբելոնական միասնական կայսրության ստեղծումը: Շուտով՝ Համուրապիի մահից հետո (մ.թ.ա. 1750թ.), Բաբելոնը և նրանովեց քասիտա-

կան ցեղերի նվաճմանը, որոնց տիրապետությունը տևեց ավելի քան 500 տարի: Բաբելոնյան պետության վերածնունդը տեղի ունեցավ մ.թ.ա. VII դ., երբ Բաբելոնի կուսակալ Նաբոպալասարն անկախացավ Ասորեստանից և իրեն հռչակեց թագավոր (մ.թ.ա. 626-604թթ.): Ասորեստանի անկումից հետո Բաբելոնի թագավորությունը (Նոր Բաբելոնյան թագավորություն) եղել է Առաջավոր Ասիայի հզոր տերությունը: Նաբուգոդոնոսը 2-րդը (մ.թ.ա. 604-562թթ.) մ.թ.ա. 597թ. հաղթել է Հուդայի թագավոր Հովակիմին, մ.թ.ա. 586թ. գրավել Երուսաղեմը և հրեաների զգալի մասին բռնությամբ գաղթեցրել Բաբելոն: Այս գաղթը հայտնի է «Բաբելոնյան գերություն» անունով: Մ.թ.ա. 539թ. Աքեմենյան թագավոր Կյուրոս 2-րդ Մեծը նվաճել է Բաբելոնը: Բաբելոնի նվաճմանը, ըստ Քսենոփոնի, մասնակցել են նաև արմենների (հայերի) 8-հազարանոց այրուձին և 40-հազարանոց հետևակը՝ Տիգրանի և Եմնասի առաջնորդությամբ: Հրեաների համակրանքը շահելու համար Կյուրոսը նրանց վերադարձրել է Պաղեստին և ետ տվել խլված հարստությունը: Բաբելոնը վերածվել է Աքեմենյան Իրանի փոխարքայության՝ Կյուրոս 2-րդ Մեծի որդի Կամբյուսեսի գլխավորությամբ: Դարեհ 1-ինի օրոք Բաբելոնն ապստամբել է և անկախացել: Ըստ վկայությունների, այդ ապստամբությունը գլխավորել է հայազն Արախանը, որը հռչակվում է որպես Բաբելոնի թագավոր և պատմությանը հայտնի է Նաբուգոդոնոսը 4-րդ անունով: Դարեհ 1-ինը հաղթել է նրան և կողմնակիցների հետ մահապատժի ենթարկել: Ալ.Մակեդոնացու նվաճումներից հետո Բաբելոնը կառավարել են մակեդոնական, այնուհետև՝ սելևկյան կուսակալները: Մթա. 140 թ. Բաբելոնը մտել է Պարթևական, այնուհետև (մ.թ. 224թ.) Սասանյան պետության կազմի մեջ:

16. Հասարակական կարգը: Հին Բաբելոնում հասարակությունը բաժանված էր ազատների և ստրուկների: Ստրուկները («վարդում») կազմում էին հասարակության ստորին խավը: Ստրուկների բանակը համալրվում էր գերիներից, ստրկության վաճառվածներից և շահագործվողներից: Նրանք դիտվում էին որպես իր և համարվում էին տիրոջ լիակատար սեփականությունը: Ստրուկների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում էր սերնդեսերունդ: Եթե վնաս էին հասցնում ստրուկին կամ զրկում կյանքից, ապա դա դիտվում էր որպես տիրոջ գույքին հասցրած վնաս կամ գույքի ոչնչացում, և մեղավորը պարտավոր էր հատուցել սեփականատիրոջը: Օրինակ, ստրուկի անզգույշ սպանության դեպքում մեղավոր անձը ստրկատիրոջը հատուցում էր մեկ այլ ստրուկով: Եթե ստրուկներն առուժախ էին կատարում, ապա զնորդին սպասվում էր մահապատժի: Ստրուկի փախչելուն նպաստողը կամ փախստական ստրուկին թաքցնողը ենթարկվում էր մահապատժի: Եվ հակառակը՝ ստրուկին գտնողը, բացահայտողը տիրոջ կողմից ստանում էր պարգև: Ստրուկները տարբերվում էին

իրենց մարմնին դրոշմված խարանով: Ստրուկները լինում էին քաղա-
վորական, տաճարային և մասնավոր: Նրանք չէին կարող լինել սեփա-
կանատեր: Տիրոջ իշխանությունը ստրուկի նկատմամբ անսահմանա-
փակ էր: Կային ստրուկներ, սակայն, որոնք օգտվում էին օրենքի
պաշտպանությունից: Իրանք հիմնականում այն ստրուկներն էին, ո-
րոնք իրենց տերերից երեխաներ էին ունեցել: Այդպիսի երեխաները
համարվում էին ազատ: Աղքատության պատճառով ստրկության վա-
ճառվածները 3 տարուց ավելի չէին կարող մնալ ստրկության մեջ:
Նրանց թույլատրվում էր ամուսնանալ ազատների հետ և նրանցից ծն-
ված երեխաները նույնպես համարվում էին ազատներ:

Բաբելոնի ազատ բնակչությունը բաժանված էր լիիրավ և ոչ լիի-
րավ ազատների: Լիիրավ ազատ քաղաքացիները («ավիլում») կազ-
մում էին բնակչության հիմնական մասը: Նրանք հանդիսանում էին հո-
դի սեփականատերերը և պետությամբ նկատմամբ ունեին որոշակի
գույքային ու անձնական պարտավորություններ: Ոչ լիիրավ քաղաքա-
ցիները «մուշկեններ» էին: Մուշկենների վերաբերյալ հարցը բաբելոն-
յան հասարակությունում միանշանակ չէր լուծվում: Գրականության
մեջ չկա որոշակի կարծիք այդ սոցիալական խմբի վերաբերյալ: Մուշ-
կենները զրկված էին շատ իրավունքներից և հասարակության մեջ
դիտվում էին որպես «ավիլումների» հակառակորդներ: Նույն տիպի և
բնույթի հանցագործությունների դեպքում օրենքը լիիրավ և ոչ լիիրավ
քաղաքացիների համար սահմանում էր տարբեր տեսակի պատիժներ:
Օրինակ, եթե ոչ լիիրավ քաղաքացին մարմնական վնաս էր հասցրել
լիիրավ ազատ քաղաքացուն, ապա նրա նկատմամբ, որպես պատիժ,
կիրառվում էր նույնանման արարք: Իսկ եթե լիիրավ քաղաքացին
նույնպիսի վնաս էր հասցրել «մուշկեններին», ապա նա պարտավոր էր
վճարել միայն տուգանք: Գողությունների դեպքում նախատեսված էին
տուգանքի չափեր՝ լիիրավ ազատ և ոչ լիիրավ ազատ քաղաքացիների
նկատմամբ:

Հասարակության մեջ ուրույն տեղ ունեին պալատական ծառայող-
ները, որոնցից հիշատակվում են քիկնապահները և բարձրագույն քրմերը:
Կային նաև այլ պետական ծառայողներ, որոնց ֆունկցիաները մեզ այն-
քան էլ հայտնի չեն: Բավականին բարձր դիրք էին զբաղում նաև աստիճա-
նավորները:

Հասարակության սանդղակի ներքևի աստիճանում կանգնած էին
վաճառականները, արհեստավորները և ձեռնարկատերերը: Ցածր էր
գնահատվում բժշկի և անասնաբույժի աշխատանքը: Ճարտարապետնե-
րը կատարած աշխատանքի դիմաց ստանում էին հոնորար (նվեր), իսկ

բժիշկները՝ աշխատավարձ:

Պետական կարգը: Հին Բաբելոնում պետական կարգը շատ նման էր Հին Եգիպտոսի պետական կարգին: Այստեղ նույնպես կառավարման ձևն արևելյան բռնապետությունն էր: Թագավորի ձեռքում էին կենտրոնացված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները: Նա էր իրականացնում բարձրագույն կրոնական իշխանությունը, համարվելով երկրի գլխավոր քուրմը:

Պետության կառավարումն իրականացվում էր բարդ, բյուրոկրատական ապարատի միջոցով: Աղբյուրները հիշատակում են երեք հիմնական գերատեսչություններ՝ ֆինանսական, ռազմական և հասարակական աշխատանքների: **Պետության բարձր պաշտոնատար անձանց մեջ առանձնանում էին վեզիրը, պալատի կառավարիչը, գանձապետը, ֆինանսների պետը, զինվորական ղեկավարը:**

Պետական մարմինների համակարգում առանձնանում էին կառավարման կենտրոնական և տեղական մարմինները: Մեծ քաղաքները կառավարում էին թագավորի աստիճանավորները՝ կառավարիչները:

Դատական իշխանությունն իրականացնում էին թագավորի կողմից նշանակված աստիճանավորները՝ տեղական կառավարիչները և փոխարքաները: **Գերագույն դատավորը համարվում էր թագավորը:**

18

2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Համուրապի թագավորի կառավարման տարիները նշանավորվում էին օրենքների ժողովածուների ստեղծմամբ: Նա մեծ տեղ էր տալիս օրենսդրական գործունեությանը: Օրենսդրական առաջին համակարգումը (կողիֆիկացիան) նա ստեղծել է իր կառավարման երկրորդ տարում: Դժբախտաբար այն չի պահպանվել: Համուրապիի հայտնի օրենքը, որը պահպանվել և հասել է մեզ, վերաբերում է նրա թագավորության վերջին շրջանին: Այս օրենքները գրված են մեծ, սև քաղալտե սյան վրա, որի ճակատային մասում պատկերված է թագավորը: Նա կանգնած է արևի աստված Շամաշի մոտ: Սյան երկու կողմերն էլ լրացված են օրենքի տեքստով: Այն բաժանվում է երեք մասերի: Առաջին մասը հանդիսանում է ներածությունը, որում Համուրապին հայտարարում է, որ աստվածն իրեն թագավորություն է տվել, որպեսզի ուժեղը թույլին չնեղացնի:

Ներածությանը հաջորդում են օրենքների հոդվածները, որոնք իրենց հերթին ավարտվում են հանգամանալից եզրակացությամբ: Օրենքները բաղկացած էին 282 հոդվածներից, որոնցից լիարժեքորեն պահպանվել են 247-ը: Այս օրենսգրքի հիմքում ընկած են եղել հին սովորության իրավուն-

քը, շուներական դատաստանագիրքը և նոր օրենսդրությունը: Օրենսգիրքը չունի որոշակի համակարգ և չի պարունակում ընդհանուր սկզբունքներ: Ի տարբերություն արևելյան մյուս կողիֆիկացիաների, Համուրապիի օրենքները չունենին կրոնական բնույթ: Համուրապին իր օրենքներով փորձեց ամբաստանել պետական և համարակալական կարգերը: Այն առաջին օրենսգիրքն էր, որտեղ ներկայացված է ստրկատիրական համակարգը և մասնավոր սեփականությունը: Օրենքները պարունակում էին տոհմատիրական կարգերի մնացուկներ: Այն արտահայտվում էր պատիժների խառնությամբ, տալիոնի սկզբունքի պահպանմամբ և օրդալի կիրառմամբ:

Սեփականության իրավունք: Համուրապիի թագավորության շրջանում Բաբելոնում մասնավոր սեփականությունը հասավ լիակատար զարգացման: Գոյություն ունեին հողի սեփականության տարբեր ձևեր՝ թագավորական, տաճարային, համայնական և մասնավոր: Եկամտի հիմնական աղբյուրը գոյանում էր թագավորական և տաճարային տնտեսություններից, որոնց կառավարում էր թագավորը: Համուրապիի թագավորությունն առանձնանում էր հողի նկատմամբ մասնավոր սեփականության արդյունավետ զարգացմամբ: Մասնավոր հողատիրություններում խոշոր հողատերերն օգտագործում էին ստրուկների և վարձու աշխատողների աշխատանքը, իսկ մանր հողատերերն իրենք էին մշակում իրենց պատկանող հողը: Հողի նկատմամբ մասնավոր սեփականության զարգացումը տանում էր համայնական հողերի և համայնքի քայքայմանը: Հողն ազատորեն կարող էր վաճառվել, տրվել վարձակալության, կտակվել, ժառանգվել և այլն:

Պարտավորություններ: Համուրապիի օրենքների մի շարք հողվածներ հողային հարաբերությունների կարգավորման հարցում ակնհայտորեն մեծ դեր են խաղացել:

Օրենսդրությունը կարգավորում էր հարաբերությունները տիրոջ և վարձակալի միջև: Եթե վարձակալը չէր մշակում վարձատուի հողը, ապա նա պարտավոր էր վճարել տիրոջը՝ երեք անգամ քանակից¹: Օրենքները սահմանում են նաև գույքային վարձակալության այլ ձևեր՝ տնային կենդանիների, կառույցների, ստրուկների և այլնի վերաբերյալ: Նախատեսվում էր վճարել ոչ միայն գույքի վարձակալման դեպքում, այլև այն դեպքում, երբ փչացնում կամ ոչնչացնում են գույքը:

Վարձակալության պայմանագիրը կրում էր նաև անձնական բնույթ: Բացի գյուղատնտեսական աշխատողներից, վարձում էին նաև բժիշկներին, անասնաբույժներին, շինարարներին: Համուրապիի օրենքներով բա-

¹ Из Законов Хаммурапи, царя Вавилона, изд. 42-45, в кн. Хрестоматия по Всеобщей истории государства и права, М., 1996, т. 13:

վականին մանրամասնորեն էին կարգավորվում փոխառության և առու-
ծախի պայմանագրերը: Առուծախի պայմանագիրը լայն տարածում էր
ստանում մասնավոր սեփականության գործազմում պայմաններում:
Թանկարժեք առարկաների, գույքի առուծախն իրականացվում էր միայն
գրավոր ձևով, վերաբերի մասնակցությանը: Հակառակ դեպքում պայմա-
նագիրը համարվում էր անվավեր, իսկ գնորդը դիտվում կողմ և ենթարկ-
վում մահապատժի¹: Վաճառողը պետք է լիներ գույքի սեփականատերը:
Շրջանառությունից դուրս գտնվող գույքի վաճառքի վերաբերյալ պայմա-
նագիրը համարվում էր անվավեր:

Բացի վերը նշածից, օրենքները սահմանում են նաև պարտավորու-
թյունների այնպիսի տեսակներ, ինչպիսիք են փոխանակության, պահա-
ռության և հանձնարարության պայմանագրերը: Օրենքները կարգավոր-
ում են նաև այն հարաբերությունները, որոնք առաջանում են վնաս
պատճառելու հետևանքով ծագող պարտավորություններից: Պատասխա-
նատվություն էր կրում այն անձը, որը ստրուկին պատճառած վնասով
հասցրել է մահվան: Այս դեպքում սպանողը սեփականատիրոջը պետք է
հանձներ մեկ ուրիշ ստրուկ:

Ամուսնաընտանեկան հարաբերություններ: Ամուսնությունը հա-
մարվում էր վավերացված միայն ապագա փեսացուի և հարսնացուի հոր
միջև գրավոր պայմանագրի կնքման դեպքում: Ըստ Համնուրապիի օ-
րենքներիով, եթե տղամարդն ամուսնանում է առանց պայմանագրի, ապա
կինը չի կարող համարվել նրա գուզընկերը²: Ընտանիքի գլուխ կանգնած
էր տղամարդը: Կինն անհավատարմության դեպքում ենթարկվում էր
խիստ պատիժների: Այսպես, օրինակ, եթե կինն անկողին էր մտնում ու-
րիշ տղամարդու հետ, ապա նրան կապկպում էին և նետում ջուրը³: Եթե
կինը երեխա չէր ունենում, ապա ամուսինը կարող էր միաժամանակ երկ-
րորդ կինն ունենալ: Սակայն կինը լրիվ իրավագուրկ չէր: Նա ուներ իր
գույքը, պահպանում էր սեփականության իրավունքն օժիտի նկատմամբ,
ունեւր ամուսնալուծվելու սահմանափակ իրավունք, ամուսնու մահից հետո
կարող էր երեխաների հետ միասին ժառանգել գույքը և այլն: Ընտանիքի
հայրը կարող էր պարտքերի դիմաց երեխաներին վաճառել ստրկության:
Եթե երեխաներն անհնազանդություն էին ցուցաբերում, հայրը կարող էր
կտրել նրանց լեզուն⁴:

¹ Из Законов Хаммурапи, царя Вавилона, стр. 7, in: u Хрестоматия по Всеобщей истории государства и права, М., 1996, էջ 10.

² Նույնը, հոդ. 128:

³ Նույնը, հոդ. 129:

⁴ Из Законов Хаммурапи, царя Вавилона, стр. 192, in: u Хрестоматия по Всеобщей истории государства и права, М., 1996, էջ 20.

Սակայն հոր իշխանությունն անսահմանափակ չէր. եթե որդին որևէ իրավախախտում չէր կատարել, ապա նա չէր կարող որդուն զրկել ժառանգությունից: Համուրապին սահմանել է նաև որդեգրման ինստիտուտը¹: Բաբելոնում ժառանգումը կատարվում էր ըստ օրենքի և ըստ կտակի: Ըստ օրենքի ժառանգներ էին հանդիսանում երեխաները, որդեգրված երեխաները, քոռները, ստրկուհուց ծնված երեխաները, եթե հայրը ճանաչում էր նրանց:

Քրեական իրավունք և դատավարություն: Համուրապի օրենքներում չի տրվում հանցագործություն հասկացության էությունը, ոչինչ չի ասվում պետական և կրոնական հանցագործությունների մասին: Օրենքների բովանդակությունից ելնելով՝ հանցագործությունները կարելի է բաժանել երեք տեսակի՝ 1) անձի դեմ ուղղված հանցագործություններ, 2) գույքային հանցագործություններ, 3) ընտանիքի դեմ ուղղված հանցագործություններ:

Անձի դեմ ուղղված հանցագործություններից նշվում է անգզույշ սպանությունը (դիտավորյալ սպանության մասին ոչինչ չի ասվում): Բավականին մանրամասն խոսվում է մարմնական վնասվածքների (աչքի, ատամի, ոսկորի և այլնի) մասին: Այս դեպքերում պատիժը որոշելիս կիրառվում էր տալիոնի սկզբունքը (ինչ վնաս հասցվել էր տուժողին, նույնն էլ պետք է կիրառվեր իրավախախտողի նկատմամբ՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, օրինակ, եթե մեկը վնաս է հասցրել մեկ ուրիշի աչքին, ապա վերջինս պետք է վնասեր նրա աչքը)²:

Գույքային հանցագործություններից նշվում են գողությունը, կողպուտը, տարածված էր ստրուկներին քաջցնելը: Այս տիպի հանցագործությունների համար սահմանված էին մարմնական պատիժներ, տուգանքներ, ինչպես նաև մահապատիժ:

Ընտանիքի դեմ ուղղված հանցագործություններից էին անհավատարմությունը, կնոջ կողմից ամուսնուն ըսվածանելը, ազգակիցների և արյունակից հարազատների ինտիմ հարաբերությունները (օրինակ, մոր կապը որդու հետ, հոր կապը աղջկա հետ և այլն): Ծանր հանցագործություն էր համարվում հոր նկատմամբ որդու կողմից ցուցաբերած անհնազանդությունը, որի համար կիրառվում էր մարմնական պատիժ կամ մահապատիժ: Մահապատիժն իրականացվում էր տարբեր եղանակներով (այրման, խեղդման և քառատման): Պատիժը Բաբելոնում կիրառվում էր ոչ միայն հանցագործին և նրա շրջապատին սարսափեցնելու համար, այլև հետապնդում էր փոխհատուցման նպատակ: Այդ պատճառով էլ պատիժը

¹ Из Законов Хаммурапи, царя Вавилона, հոդ. 185, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, М., 1996, էջ 18:

² Նույնը, հոդ. 196:

սահմանելիս ղեկավարվում էին տալիոնի սկզբունքով:

Քրեական և քաղաքացիական դատավարություններն իրականացվում էին միատեսակ ձևով: Գործը սկսվում էր տուժող կողմի դիմումի հիման վրա: Որպես ապացույց ընդունվում էին վկայի ցուցմունքները, երդումը, օրդալին (փորձություն հրով և ջրով): Եթե դատավարության ընթացքում վկան չէր կարող ապացուցելու, տված ցուցմունքների իսկությունը, ապա ենթարկվում էր մահապատժի¹: Դատավարական իրավունքի նորմները պահանջում էին դատավորից անձամբ «քննել գործը»: Դատավորն իրավունք չուներ փոխելու իր որոշումը: Եթե նա այդ անում էր, ապա պետք է վճարեր տուգանք՝ հետագանի 12-ապատիկի չափով և զրկվում էր իր պաշտոնից՝ հետագայում նաև դատելու իրավու՞թքից²:

Քրմերը մասնակցում էին դատավարությանն այն ժամանակ, երբ վկաները երդում էին տալիս:

¹ Из Законов Хаммурапи, царя Вавилона, изд. в Хрестоматия по Всеобщей истории государства и права, М., 1996, т. 9.

² Նույնը, հոդ. 5:

ՀԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԸ

1. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Առաջին պետությունը Հնդկաստանի տարածքում առաջացել է մ.թ.ա. II հազարամյակում, Քանգեսի հովտում: Սկզբնական շրջանում պետության կյանքում շարունակվում էին մեծ դեր խաղալ ժողովրդական ժողովները: Աստիճանաբար ցեղակիցների ժողովներից դրանք վերածվեցին թագավորին մոտ կանգնած մեծատոհմիկների ժողովների: Ցեղային վարչական մարմիններն աստիճանաբար վերափոխվում են պետական մարմինների, որոնցում բարձրագույն պաշտոնները զբաղեցնում էր ստրկատիրական վերնախավը: Մեծ հռչակ են ձեռք բերում աստղագուշակները և թագավորական քրմերը, որոնք միաժամանակ հանդիսանում էին թագավորի խորհրդականները: Հնդկաստանի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում մագադիան-մաուրյան շրջանը (IV-III դդ. մ.թ.ա.), որն առանձնանում է պետության միավորման ստեղծումով:

Տոհմատիրական կարգերի քայքայման և հասարակության ու գույքային անհավասարության զարգացման հետ է կապված դասային շերտավորումների երևան գալը: Դասերը Հնդկաստանում կոչվում էին վառնաներ: Աստիճանաբար իրավահավասար ազատներն իրենց հասարակական դիրքով, իրավունքներով ու պարտավորություններով բաժանվեցին անհավասար խմբերի: Ժամանակի ընթացքում բոլոր վառնաները վերածվեցին փակ կաստայի: Հաստատվեց խիստ էնդոգամիա (ներամուսնություն՝ մեկ վառնայի ներկայացուցիչների միջև ամուսնության կնքում): Այսպիսով, ժամանակի ընթացքում վառնաները կրեցին մի շարք որակական փոփոխություններ՝ վերածվելով լրիվ փակ կաստայի: Սոցիալ-տնտեսական և գաղափարական բնույթի տարբեր գործոնները նպաստեցին Հնդկաստանում այդպիսի սոցիալական կազմավորման պահպանմանն ու ամրապնդմանը:

1) Հնդկական աղբյուրները, մասնավորապես Մանուի օրենքները, մեզ տեղեկություն են տալիս վառնաների մասին¹: Առաջին վառնային են սքստկանում Բրահմանները: Այս դասի մեջ մտնում էին հիմնականում հոգևորականները: Երկրորդ վառնան համարվել են կշատրիները, որոնց մեջ մտնում էին գինվորականները: Այս երկու վառնաների հակառակ կողմում կանգնած էին հողագործները, արհեստավորները և առևտրականները, որոնք էլ կազմում էին երրորդ վառնան՝ վայշիները²: Հասարակության և գույքային անհավասարության ուժեղացման պայմաններում երևան եկան մարդկանց մեծ խմբեր, որոնք չէին համարվում համայնքի անդամներ: Գրանք կազմեցին չորրորդ վառնան և կոչվեցին շուդրաներ: Նրանք պատկանում էին ամենաստորին դասին և շատ քիչ էին տարբերվում ստրուկներից: Այս վառնայի մեջ էին մտնում նաև կախյալ գյուղացիները: Բոլոր դեպքերում բարձրագույն խավը համարվում էին Բրահմանները: Ըստ Մանուի օրենքների, «Կենդանի էակների մեջ լավագույնն են համարվում շնչավորները, շնչավորների մեջ՝ բանականները, բանականների մեջ՝ մարդիկ, մարդկանց մեջ՝ Բրահմանները»³:

Յուրաքանչյուր վառնայի համար գոյություն ունեին որոշակի օրենքներ (դհարմա), որոնցով էլ նրանք առաջնորդվում էին:

Մատույան շրջանում սոցիալական կարևորագույն բաղադրամասերից մեկը հանդիսանում էր համայնքը: Համայնքում միավորվել էին բնակչության զգալի մասը կազմող ազատ հողագործները: Համայնքի ամենատարածված ձևը եղել է գյուղականը, յնչպիսիք է հետամնաց շրջաններում դեռևս պահպանվում էին տղիմային համայնքները:

Գույքային անհավասարության պրոցեսը թափանցել էր նաև գյուղական համայնք: Համայնքի անդամներից մի մասն ինքն էր աշխատում հողի վրա, մյուս մասն օգտագործում էր ստրուկների աշխատանքը, երրորդը հողը տալիս էր վարձով և այլն:

Տարբեր էր նաև գյուղական արհեստավորների վիճակը: Նրանց մի մասն ինքնուրույն աշխատում էր սեփական արհեստանոցում, մյուս մասը գնում էր վարձու աշխատանքի:

Համայնքը դեռևս շարունակում էր պահպանել հին համայնական ավանդույթները: Գյուղական համայնքները երկար ժամանակ մեկուսացված էին մեկը մյուսից: Հետագայում այդ սահմանափակվածությունը վերացվեց:

¹ Из книги законов Ману, гл. 10, հոդ.4, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 54:

² Նույնը, գլուխ 1, հոդ. 90:

³ Նույնը, գլուխ 1, հոդ. 86:

Հին հնդկական պետությունն առաջ եկավ որպես ստրկատիրական պետություն: Հասարակությունը բաժանված էր ազատների և ստրուկների: Կաստաներն իրենցից ներկայացնում էին փակ դասեր: Դա արտահայտվում է հատկապես Մանուի օրենքներում, որտեղ կաստաների միջև հարաբերությունները նշվում են այնպես, ինչպես դասակարգերի միջև եղած հարաբերությունները:

Ստրուկների աշխատանքը վճռորոշ չէր տնտեսության այս կամ այն ճյուղում: Ի տարբերություն Հունաստանի և Հռոմի, Հնդկաստանում ստրուկները կարող էին ունենալ ընտանիք, սեփականություն, ժառանգության և նվիրատվության իրավունք: Այն ազատները, որոնք դառնում էին ստրուկներ, չէին կորցնում իրենց ընտանեկան, կաստայական և տոհմային կապերը: Այս առանձնահատկություններով հանդերձ Հին Հնդկաստանում ստրուկները շատ բանով նման էին նաև Հռոմի և Հունաստանի ստրուկներին: Առավել բնորոշ ընդհանուր գիծն այն էր, որ ստրուկն իր անձի նկատմամբ իրավագուրկ էր: Նա համարվում էր գույք՝ մարդու կերպարանքով, և գտնվում էր ուրիշի իշխանության տակ: Հին Հնդկաստանում, ինչպես մյուս ստրկատիրական պետություններում, բնական էր համարվում ստրուկի կյանքը տնօրինելու տիրոջ իրավունքը:

Պետական կարգը: Մաուրյան դարաշրջանում արդեն ձևավորվել էր միանձնյա իշխանությունը, որը տարածվում էր հսկայական տերիտորիայի վրա: Մաուրյան թագավորը կանգնեց պետության գլուխ և իրականացրեց օրենսդրական իշխանություն: Էդիկտները (հրովարտակները) հրապարակվում էին թագավորի ամունից: Թագավորն ինքն էր նշանակում պետական բարձրագույն աստիճանավորներին: Հատուկ ուշադրություն էր դարձնում թագավորական պահակախմբին, որը պաշտպանում էր նրան ոտնձգություններից: Մեծ նշանակություն էր տրվում հսկողությունն իրականացնող ծառայությանը, որի հսկողության տակ էին գտնվում ոչ միայն պետական պաշտոնական անձինք, այլև ողջ բնակչությունը:

Պալատին կից մեծ դեր էին խաղում թագավորական ջրները, որոնք պատկանում էին Բրահմանների տոհմին: Պետության կառավարման մեջ մեծ էր նաև թագավորական խորհրդի դերը, որը կոչվում էր փարիշադ: Այն գոյություն ուներ և ավելի վաղ ժամանակներից: Բայց Մաուրյան շրջանում ձեռք բերեց քաղաքական խորհրդի ֆունկցիա: Փարիշադը զբաղվում էր ամբողջ վարչական համակարգի ստուգմամբ և կատարում էր թագավորի հրամանները: Բացի փարիշադից, գոյություն ուներ նաև նեղ գաղտնի խորհուրդ, որը բաղկացած էր մի քանի հատուկ վատահեղի անձանցից: Անցյալում մեծ կազմ ունեցող ժողովրդի ներկայացուցիչների և ազնվականության ժողովը՝ նմանատիպ էվոլյուցիա ապրած սաբխան, նույնպես կատարում

էր շատ կարևոր քաղաքական ֆունկցիա: Մատույան շրջանում սաբխայի կազմը դարձավ նշանակալից, այն նույնպես կրում էր թագավորական խորհրդի բնույթ և կոչվեց ռաջա-սաբխա, որը ներկայացուցչական մարմին էր: Նրա կազմի մեջ բացի ազնվականներից մտնում էին նաև քաղաքային և գյուղական բնակչության ներկայացուցիչները:

Հնդկաստանում բարձր տեղ էին զբաղեցնում սահմանը պահպանող հատուկ աստիճանավորները:

Պետության տերիտորիան բաժանված էր պրովինցիաների, որոնցից չորսն ունեին հատուկ կարգավիճակ: Դրանք բավականին մեծ ինքնավարություններ էին և կառավարվում էին թագաժառանգների կողմից: Գլխավոր պրովինցիաների հետ մեկտեղ տերիտորիան բաժանված էր նաև սովորական պրովինցիաների (ջանապաղներ), մարզերի (պաղեշներ), շրջանների (ախալներ): Ջանապաղների գլուխ կանգնած էին պետական խոշոր չինովնիկները՝ ռաջաները:

2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Հին Հնդկաստանում հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը մեզ հայտնի չեն: Բնակիչներն ավելի շատ ենթարկվում էին էթնիկական ու բարոյական բնույթ կրող կանոններին, քան իրավական: Այդ կանոնների վրա մեծ էր կրոնի ազդեցությունը:

Իրավունքի առավել հայտնի ճավաքածու է Մանուի օրենքների ժողովածուն, որը կրում էր առասպելական աստված Մանուի անունը և ուներ կրոնական բնույթ: Մանուի օրենքները բաղկացած են 12 գլուխներից, որոնցից 8-րդ և 9-րդ գլուխները պարունակում են իրավական բովանդակություն:

Օրենքների գլխավոր նպատակն էր ամրացնել գոյություն ունեցող վառնային կարգերը:

Սեփականության իրավունք: Մանուի օրենքների ստեղծման շրջանում Հնդկաստանում արդեն լավ էին հասկանում սեփականության և տիրապետման իրավունքի տարբերությունը: Իսկ մասնավոր սեփականության պաշտպանությունն արժանանում էր հատուկ ուշադրության:

Օրենքները նշում են սեփականության իրավունքի առաջացման յոթ հնարավոր միջոցներ՝ ժառանգումը, հանձնումը, նվիրատվության կամ գտանքի ձևով, գնումը, նվաճումը, վաշխառությունը, աշխատանքի կատարումը, ինչպես նաև ողորմության հանձնումը¹: Հնդկաստանում հայտնի է ե-

¹ Из книги законов Ману, гл. 10, стр. 115, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 54:

ղել նաև սեփականության իրավունքի ձեռքբերման այնպիսի միջոց, ինչպիսին է տիրապետման վաղեմությունը (10 տարի):

Որպես անշարժ գույք՝ սեփականություն էր համարվում հողը: Հողային ֆոնդը բաժանված էր թագավորականի, համայնքայինի և մասնավորի:

Սեփականությունը պահպանվում էր օրենքներով, և այն խախտողը վճարում էր մեծ չափերի հասնող տուգանք: Մանուի օրենքներում նշվում է, որ եթե, օրինակ, մեկը իր սերմնացուն ցանել է ուրիշին պատկանող դաշտում, ապա նա իրավունք չունի օգտվելու դրա արդյունքից՝ բերքից: Սեփականատերն ինքն էր որոշում հողի ճակատագիրը: Նա կարող էր այն վաճառել, նվիրել, հանձնել վարձակալության և այլն: Օրենքները սեփականություն էին համարում նաև շարժական գույքը՝ ստրուկներին, անասուններին և այլն:

Պարտավորություններ: Մանուի օրենքներում պարտավորական հարաբերությունները մշակված են բավականին հանգամանորեն: Հիմնականում նշվում են պայմանագրերից առաջացող պարտավորությունների մասին: Առավել մանրամասն է հիշատակվում փոխառության պայմանագրի մասին: Օրենքը սահմանում էր, որ եթե փոխառուն չի կարող նախատեսված ժամկետում վճարել պարտքը, ապա նա այն պետք է հատուցի աշխատանքով: Այս դեպքում եթե փոխառուն պատկանում էր ցածր կաստայի, չէր կարող հարկադրել իրենից բարձր կաստայի պատկանող փոխառուին՝ պարտքը վճարել աշխատանքով: Իսկ եթե փոխառուն ավելի ցածր կաստայի էր պատկանում, քան փոխառուն, ապա նա պարտավոր է պարտքը մարել: Փոխառուն ազատ էր դառնում միայն պարտքը տոկոսների հետ վճարելուց հետո: Փոխառուի մահվան դեպքում պարտքի մարումը կարող էր անցնել որդուն կամ նախացոյի այլ հարազատների:

Մանուի օրենքներում հատուկ ուշադրություն է դարձվում վարձակալության պայմանագրին: Լայնորեն տարածված էր վարձու աշխատողների (որոնք կոչվում էին կարմակարներ) աշխատանքի օգտագործումը: Կարմակարները հողագործությամբ զբաղվելու դեպքում ստանում էին բերքի 1/10-րդ մասը, իսկ անասնապահության դեպքում՝ կովի կաթից ստացված յուղի 1/10-րդը:

Հայտնի են նաև հողի վարձակալության, նվիրատվության, ինչպես նաև առուծախի պայմանագրերը: Առուծախը թույլատրվում էր այն դեպքում, երբ գույքը վաճառում էր անմիջապես սեփականատերը: Մանուի օրենքները սահմանում էին նաև այն կանոնները, որոնց պահպանության դեպքում միայն պայմանագրի կնքումը կհամարվեր օրինական: Օրինակ, եթե պայմանագիրը կնքում էր հարբեցողը, անգործուհակը, երեխան, ստրուկը, ապա այն համարվում էր անվավեր: Անվավեր էին նաև այն

գործարքները, որոնք կնքվել էին խաբեության, մոլորության կամ հարկադրանքի ազդեցության տակ:

Օրենքներում հայտնի են նաև վնաս պատճառելու հետևանքով առաջացող պարտավորությունները: Այս դեպքում մեղավորը պետք է հատուցեր վնասը և թագավորին վճարեր տուգանք:

Ամուսնաընտանեկան հարաբերություններ: Հին Հնդկաստանում ընտանիքը հայրիշխանական բնույթ էր կրում: Ընտանիքի գլուխ կանգնած էր հայրը: Կինը կախվածության մեջ էր ամուսնուց և տղաներից: Ամուսնությունն իրենից ներկայացնում էր գույքային գործարք, որի կնքման դեպքում տղամարդը կին էր զնում և դարձնում իր սեփականությունը:

Մանուկ հասակում աղջիկը ենթարկվում էր հորը, երիտասարդ հասակում՝ ամուսնուն, իսկ վերջինիս մահից հետո ընկնում էր տղաների իշխանության տակ: Այնպես որ, կինը լիովին իրավագուրկ էր: Տղամարդը հարող էր ունենալ մի քանի կին, իրավունք ուներ բաժանվել կնոջից: Կինն իրավունք չուներ ամուսնալուծվել և նոր ընտանիք կազմել՝ անգամ ամուսնու կողմից վաճառվելու կամ բաժանվելու դեպքում: Նման դեպքերում նա շարունակում էր համարվել այդ տղամարդու կինը: Եթե կինը դավաճանում էր ամուսնուն, նրան սպասվում էր ահավոր պատիժ, ընդհուպ մինչև մահապատիժ: Տարածված էր այն միտումը, ըստ որի ամուսինները պետք է լինեին նույն վառնային (կաստային) պատկանող: Բացառություն էր կազմում տղամարդը, որին թույլատրվում էր ամուսնանալ նաև այն կնոջ հետ, որն ավելի ցածր վառնայի էր պատկանում, քան կինը: Հակառակը խստիվ արգելվում էր: «Շուրթայի կինը պետք է լիներ շուրթուտի, վայշիի կինը՝ շուրթուտի և իր վառնայից, քշատրիի կինը՝ այս երկուսը և իր վառնայից, բրահմանի կինը՝ այդ երեքը և իր վառնայից»¹:

Խիստ էր նաև հոր իշխանությունը որդիների նկատմամբ:

Ընտանիքին պատկանող գույքը ծնողների մահից հետո մեկ հավասարապես բաժանվում էր տղաների միջև, մեկ անցնում էր միայն ավագ որդուն, որը պետք է հոգ տաներ մյուսների նկատմամբ: Աղջիկները ժառանգությունից զրկվում էին, սակայն եղբայրները պետք է իրենց բաժնից 1/4-ը հանձնեին նրանց՝ օժիտի համար:

Հին հնդկական իրավունքին ժառանգումն ըստ կտակի հայտնի չի եղել:

27. Զրեական իրավունք և դատավարություն: Հին Հնդկաստանում զրեական իրավունքը և դատավարությունը բավականին զարգացած են եղել: Մանուի օրենքները տարբերում են մեղքի ձևերը (դիտավարություն և

¹ Из книги законов Ману, гл. 3, стр. 135 изъв Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 27:

անգառնություն): Օրենքներում նշվում են նաև հանցակցության, հանցագործությունը ծանրացնող հանգամանքների և այլնի մասին: Եթե հանցագործը հայտնի չէր, այս դեպքում պատասխանատվության էր ենթարկվում ողջ համայնքը: Կիրառվում էր օրդալին և տալիոնի սկզբունքը:

Հանցագործություններից առավել վտանգավոր էին համարվում պետության դեմ ուղղված լուսնձգությունները, ինչպես նաև անձի և սեփականության դեմ ուղղված հանցագործությունները: Մանուի օրենքները տարբերում էին գողությունը, կողոպուտը և ավազակային հարձակումը: Կիրառվող պատժի չափը նշանակելիս հաշվի էին առնում այն հանգամանքը, թե հանցագործությունը երբ է կատարվել՝ գիշերը, թե՞ ցերեկը: Ընդ որում ցերեկը կատարված հանցագործության համար նախատեսվում էր ավելի խիստ պատիժ: Խիստ պատիժ էր նախատեսվում նաև այն դեպքում, երբ հանցագործը բռնվում էր հանցանքի պահին: Այն անձինք, որոնք տեսել էին գողություն կատարողին, բայց այդ մասին չէին հայտնել, կրում էին նույնպիսի պատիժ, որպիսին նախատեսված էր այդ հանցագործի համար:

Անձի դեմ ուղղված հանցագործությունների համար նախատեսված էին ծանր պատիժներ: Սակայն եթե այդպիսի հանցագործությունը կատարվել էր անհրաժեշտ պաշտպանության ժամանակ, այդ դեպքում պատիժ չէր սահմանվում: Անհրաժեշտ պաշտպանություն էր համարվում նաև կնոջն ու բրահմանին պաշտպանելը:

Մանուի օրենքները խիստ պատիժներ էին սահմանում ընտանիքի անրապնդման դեմ ուղղված հանցագործությունների դեպքում (օրինակ, դավաճանության, կնոջ պատվին և արժանապատվությանն ուղղված ոտնձգության դեպքում և այլն): Հին Հնդկաստանում պատիժը կրել է դասակարգային բնույթ: Նույն հանցագործության կատարման համար ավելի ցածր դասին պատկանող անձը կրում էր ավելի ծանր պատիժ, քան բարձր դասին պատկանող անձը՝ Պատժի առավել հայտնի տեսակներից էին 1) մահապատիժը (բրահմանների համար այն փոխարինվում էր գլուխը սափրելով), որն իրականացվում էր տարբեր եղանակներով. ցից էին հանում, այրում էին մահճակալի կամ խարույկի վրա, խեղդում էին և այլն, 2) մարմնական պատիժները (կտրում էին մատները, ձեռքերը, ոտքերը), 3) տուգանքը, 4) վտարումը, 5) արտաքսումը:

Մանուի օրենքներում չի հիշատակվում արյան վրեժը: Կարելի է ենթադրել, որ այն նշված ժամանակաշրջանում չի կիրառվել:

Օրենքներն անդրադարձել են նաև դատավարական պրոցեսին: Հին Հնդկաստանում վարչական ապարատից առանձին դատարաններ գոյու-

[†] Из книги законов Ману, гл. 3, инд. 14, инд. Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 28:

թյուն չեն ունեցել: Գերագույն դատավորը համարվում էր թագավորը՝ բրահմանների հետ: Զրեական և քաղաքացիական դատավարությունների միջև առանձնապես տարբերություն չի եղել: Դատավարությունը կրել է մրցակցային բնույթ: Օրենքները նշում են այն առիթները, որոնք հիմք են համարվում հարցի քննարկման համար: Դրանք շուրջ տասնութն են (օրինակ, վեճ սահմանի վերաբերյալ, կողոպուտ, բռնաբարություն, դավաճանություն, ժառանգության բաժանում և այլն):

Ապացույցների հիմնական աղբյուր են հանդիսացել վկաների ցուցմունքները, որոնց արժեքը կախված էր նրանից, թե վկան որ կաստային է պատկանում: Մուտ վկայություն տալը, տեղեկություններ իմանալը և չհայտնելը ծանր մեղք էին համարվում: Շահագրգռված անձը չէր կարող վկա լինել: Կանայք չէին կարող հանդիսանալ վկա, քանի որ նրանց բնավորությունը համարվում էր փոփոխելի:

ԳԼՈՒԽ 4

ՀԻՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԸ

1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Հին Չինաստանի պատմությունը բաժանվում է չորս ժամանակաշրջանների, որոնցից յուրաքանչյուրը կապված է առանձին դինաստիաների կառավարման հետ:

Շան (Ու) դինաստիան: Առաջին ժամանակաշրջանը կապված է Շան դինաստիայի հետ, որը սկսվում է մ.թ.ա. XVIII դարից և տևում մինչև մ.թ.ա. XII դարը: Համաձայն չինական աղբյուրների՝ պետությունն այստեղ առաջացել է մ.թ.ա. XVIII դարում, երբ Սյա ցեղը նվաճվեց Շան ցեղերի կողմից: Կանգնելով Շան ցեղերի գլուխ՝ Չեն Տանը հիմնադրեց դինաստիան և դարձավ Չինաստանի առաջին թագավորը (Վանը): Դինաստիայի անվանումը կապված է Շան ցեղերի անվան հետ: Սկզբնական շրջանում այդ անվանումը նշանակում էր ցեղ, իսկ հետագայում կիրառվում էր որպես կառավարող դինաստիայի և պետության անվանում: Ավելի ուշ ժամանակաշրջանում՝ ՇԱՆ դինաստիայի անկումից հետո, դինաստիան, ինչպես նաև պետությունն ամբողջությամբ, անվանվեց Ին: Դրա համար էլ չինական պետության պատմության առաջին ժամանակաշրջանն ունի երկու անվանում՝ Շան և Ին:

Այսպիսով, Հին Չինաստանում պետության կազմավորման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նախնադարյան համայնական կարգերից անցումը դասակարգային հասարակության արագացվել է մեկ ցեղի կողմից մեկ ուրիշին նվաճելու միջոցով: Նախնադարյան համայնական կարգերի ժամանակ գործող մարմինները չէին կարող իրականացնել նվաճված ցեղերի կառավարումը: Այս նպատակով էլ ստեղծվեց հատուկ պետական ապարատ:

Հասարակական կարգը: Ինյան հասարակությունը և պետությունն իր բնույթով ստրկատիրական էր: Տիրապետող դասակարգը ձևավորվում էր աշխարհիկ ստրկատերերից, քրմական դասի և նվաճված ցեղերի ստր-

կատիրական վերնախավից: Ստրուկներ կարող էին ունենալ ինչպես մասնավոր անձինք, այնպես էլ պետությունը: Ստրկության աղբյուր էին հանդիսանում գերեվարությունը, պարտքի դիմաց ստրկության վաճառելը, մի քանի հանցագործությունների դեպքում ստրկության հանձնելը և այլն: Ստրուկներն իրավագուրկ էին: Նրանք չէին կարող ունենալ ոչ գույք և ոչ էլ ընտանիք:

Երկրում բնակչության զգալի մասը կազմում էին ազատ համայնականները: Համայնքը մեծ դեր էր խաղում հասարակական հարաբերություններում: Բոլոր հողերը բաժանված էին երկու կատեգորիայի՝ հասարակական և մասնավոր հողերի: Հասարակական հողերը մշակվում էին համայնքի կողմից համատեղ կարգով, իսկ ստացված արդյունքը հանձնվում էր թագավորին: Մասնավոր հողերը մշակվում էին անհատական կարգով և յուրացնում էին այդ նույն մշակողները: Նշենք, որ մասնավոր հողերը չէին կարող համարվել նրանց տերերի սեփականությունը: Հին Չինաստանում հողի մասնավոր սեփականություն գոյություն չուներ: Հողը դիտվում էր որպես պետական սեփականություն և գտնվում էր թագավորի տրամադրության տակ: Տվյալ ժամանակաշրջանում մասնավոր սեփականություն էին համարվում միայն տունը, աշխատանքային գործիքները, ստրուկը:

Պետական կարգը: Շան դինաստիայի վաղ շրջանում պետական կարգը պահպանում էր ռազմական դեմոկրատիայի տոհմացեղային մնացուկները: Հետագայում պահպանվեց թագավորների մոնոպոլիան ամբողջ իշխանության վրա և իր գոյության վերջում Ինյան պետությունն ըստ կառավարման ձևի դարձավ արևելյան բռնապետություն (դեսպոտիա): Թագավորը համարվում էր գլխավոր և ամենախոշոր ստրկատերը, գերագույն զինվորական առաջնորդը, գլխավոր հրամանատարը, գերագույն դատավորը, գլխավոր քուրմը: Թագավորի անձն աստվածացվում էր: Թագավորը ղեկավարում էր պետական ապարատը, նշանակում էր պաշտոնատար անձանց, որոնք հիմնականում նրա ազգակիցներն էին:

Պետության անբաժանելի տարրերն էին բանակը և բանտերը: Մ.թ.ա. XII դարում ներքին հակասությունների հետևանքով թուլացավ Շան (Ին) դինաստիան: Մյուս կողմից էլ ուժեղանում էին Ինյան թագավորների իշխանության տակ գտնվող Չժոու ցեղերը: Չժոուի գլխավորությամբ մի շարք ցեղեր միավորվեցին Ինյան պետության դեմ պատերազմելու համար: Մ.թ.ա. 1076թ. Չժոուի ցեղերը պարտության մատնեցին Ինյան բանակին: Շան թագավորությունն անկում ապրեց:

Չժոուի դինաստիան: Այս դինաստիայի անվանումը կապված է Չժոուի ցեղերի անվան հետ: Դինաստիան սկզբնավորվեց մ.թ.ա. XII դ. և

գոյատևեց մինչև մ.թ.ա. 221թ.: Չժոռուի կառավարման ժամանակաշրջանն ընդունված էր բաժանել երեք շրջանների՝ 1) Արևմտյան Չժոռուի (մ.թ.ա. 1122-741թթ.), 2) Արևելյան Չժոռուի (մ.թ.ա. 740-403թթ.) և 3) Պայքարող քազավորությունների (Չժանգո) ժամանակաշրջան (մ.թ.ա. 403-221թթ.):

Արևմտյան Չժոռուի ժամանակաշրջանում վերելք է ապրում արտադրությունը և ստրկատիրությունը, զարգանում է խոշոր հողատիրությունը: Ամրապնդվում է պետությունը, բարդանում է նրա կառուցվածքը:

Հասարակական կարգը: Հասարակության մեջ տիրապետող դիրք է զբաղում ստրկատիրական վերնախավը: Հողի սեփականատեր էր համարվում քազավորը (վանը), սակայն դա կրում էր ձևական բնույթ, քանի որ ստրկատերերը կարող էին հողը վաճառել, նվիրել: Մեծ դեր էր շարունակում խաղալ համայնական հողօգտագործումը: Հասարակության մեջ ամենստորին խավը ստրուկներն էին:

Պետական կարգը: Չժոռուի պետական կարգը բնութագրվում է արևելյան բռնապետության հետագա զարգացմամբ: Գերագույն իշխանությունը գտնվում էր ժառանգական միապետի՝ վանի ձեռքում: Թագավորության ամբողջ տարածքը բաժանված էր մարզերի, որոնց զուխ կանգնած էին քազավորի կողմից նշանակված կառավարիչները: Ըստ էության, մարզն իրենից ներկայացնում էր առանձին քազավորություն: Չժոռուի ամբողջ ժամանակաշրջանում կենտրոնացված ուժեղ ապարատ չստեղծվեց: Պետական ապարատը ձևավորվում էր քազավորի մերձավորներից, իսկ հետո էլ նաև վստահելի ստրուկներից: Նրանք համարվում էին պետական աստիճանավորներ: Գերագույն աստիճանավորը գլխավորում էր ողջ պետական ապարատը: Կառավարման պալատական համակարգն իր մեջ ընդգրկում էր մեծ թվով աստիճանավորներ, որոնք ունեին տարբեր իրավասություններ: Աստիճանավորներ էին համարվում ախտոապետը, գրագիրը, քազավորական արխիվի վարիչը, գանձապետը և այլն:

Ըստ աղբյուրների, Չեն քազավոր (մ.թ.ա. 1115-1079թթ.) իրականացրեց պետական ապարատի վերակազմավորումը և ամրապնդումը:

Թագավորի գլխավոր խորհրդականներ էին համարվում երեք գունաները՝ «մեծ հովանավորը», «մեծ ուսուցիչը» և «մեծ դատավորը»: Բացի այդ, պետության մեջ մեծ դեր էին խաղում երեք կառավարիչները: Մեկը զբաղվում էր պաշտամունքով, մյուսը ղեկավարում էր հասարակական աշխատանքների գերատեսչությունը, երրորդը՝ «ձիերի մեծ առաջնորդը», ղեկավարում էր զինվորական գերատեսչությունը: Կարևոր էին համարվում գլխավոր քուրմի և գլխավոր գուշակի պաշտոնները:

Մ.թ.ա. IX դ. թուլանում է կենտրոնական և ուժեղանում է տեղական իշխանությունը: Ստրկատիրական շահագործման ուժեղացումն առաջաց-

նում է ժողովրդական զանգվածների դժգոհությունը, որը վերածվում է ապստամբության: Մի կողմից ներքին երկպառակտչական կռիվները, մյուս կողմից քոչվորների հետ անհաջող պատերազմները հասցրին Արևմտյան Չժոուի քայքայմանը: Երկիրը բաժանվեց մի շարք ինքնուրույն պետությունների: Չժոույան թագավորությունը վերածվեց կառավարիչներին ոչ մեծ՝ Արևելյան Չժոուի տերության:

Արևելյան Չժոուի ժամանակաշրջանում տեղի ունեցան խոշոր փոփոխություններ երկրի տնտեսական և քաղաքական կյանքում: Չարգանում էին արհեստներն ու առևտուրը: Չևավորվում էր առևտրականների դասը: Ժառանգական ստրկատիրական վերնախավի տոհմային հողային տիրույթներն անցնում են զինվորական առաջնորդներին, առևտրականներին, ծառայող մարդկանց, որը նպաստում է տոհմային ազնվականության ժառանգական հողատիրության անկմանը և հողի նկատմամբ մասնավոր սեփականության ամրապնդմանը: Ծառայող վերնախավի ձեռքում կենտրոնանում է հողերի մեծ մասը: Խոշոր հողատիրությունը ձևավորվում է ոչ միայն մշտական և հատուկ ծառայության դիմաց հողերի շնորհման, այլև բռնի նվաճումների հաշվին:

Խոշոր հողատիրության զարգացմամբ է բնորոշվում նաև Չժանգոյի «Պայքարող թագավորությունների» ժամանակաշրջանը: Այս շրջանում միաժամանակ վերացվում է համայնական հողատիրության հիմ տիպը: Համայնական հողատիրությանը հիմնական հարված հասցրեց հողային հարկը:

Հին Չինաստանում Արևմտյան Չժոուի միապետության վերացումից հետո, ըստ էության, միասնական պետություն գոյություն չունեք: Երկիրը բաժանված էր բազմաթիվ ինքնուրույն պետությունների, որոնք միմյանց միջև մղում էին անողոք պայքար: Աստիճանաբար մանր պետությունները նվաճվում են խոշոր պետությունների կողմից, և մ.թ.ա. III դ. ստեղծվում է մեկ ամբողջական պետություն՝ Յին դինաստիայի զլխավորությամբ:

~~Յին դինաստիան մ.թ.ա. 221-207 թթ.:~~ Յին կայսրության հիմնադիրն է Յին Շի Հուանդին: Ուժեղ կենտրոնացված պետության ստեղծմանը նպաստեցին Շան Յանի՝ ցինական պետության բարձրագույն պաշտոնյայի ռեֆորմները: Այդ ռեֆորմների բովանդակությունը հետևյալն էր. օրինականացվեց հողի ազատ առևտուրը, որը վճռական հարված հասցրեց համայնական հողատիրությանը: Համայնքի քայքայումն արագացվեց նաև մեծ ընտանիքների հարկադիր մասնատման մասին օրենքով: Կատարվեց նաև վարչական նոր բաժանում՝ տերիտորիալ սկզբունքով: Ռեֆորմները վերաբերում էին նաև բանակին ու հարկային համակարգին: Այս ռեֆորմները նշանավորեցին ~~ամցումը դեպի~~ վարզացած ստրկա-

տիրական պետության: Ուժեղ կենտրոնացված Ցին պետությունը կարողացավ իրեն ենթարկել չինական մանր պետությունները և ստեղծել հսկայական կայսրություն:

Թագավորության նախկին սահմանները վերացվեցին: Հսկայական տերիտորիան բաժանվեց 36 մարզի: Յուրաքանչյուր մարզ ուներ երկու կառավարիչ, մեկը զբաղվում էր քաղաքացիական, մյուսը՝ զինվորական գործերով: Արիստոկրատական վերնախավի մեջ կատարվեց գտում: Ազնվագարն էր համարվում նա, ով պետության նկատմամբ ավելի մեծ ծառայություն էր մատուցել, և ով ավելի հարուստ էր: Պաշտոնատար անձանց համար սահմանվեց խիստ կարգապահություն, որի խախտման դեպքում ծանր պատիժներ էին նախատեսվում: Պետական ապարատն այս շրջանում աչքի էր ընկնում իր բարդությամբ: Չնայած դրան՝ երկրում սոցիալական ներքին հակասությունները գնալով սրվում էին և հաճախակի վերածվում էին ապստամբությունների: Դրանցից առավել հայտնի է մ.թ.ա. 209թ. տեղի ունեցած ապստամբությունը, որը վերացրեց Ցինական միապետությունը: Իշխանության գլուխ եկավ նոր դինաստիա, որը հայտնի է Հան անունով:

Հան դինաստիան (մ.թ.ա. 206թ. - մ.թ. 220թ.): Ապստամբության դեկավարներից մեկը՝ Լյու Բանը, դարձավ նոր դինաստիայի հիմնադիրը: Նա իր գործունեությունն սկսեց մի քանի ռեֆորմներ անցկացնելով: Ռեֆորմները նպատակ ունեին մեղմացնելու ստրուկների և գյուղացիների վիճակը: Մակայն այդ ռեֆորմները չվերացրին սոցիալական հակասություններ ծնող պատճառները, այն է՝ ստրկատիրության և մասնավոր խոշոր հողատիրության աճը: Որոշ ժամանակ անց ժողովրդի վիճակն ավելի ծանրացավ:

Մ.թ. 8 թվականին Վան Մանը կատարեց պալատական հեղաշրջում և նվաճեց իշխանությունը: Մ.թ. 9թ. նա իրեն հայտարարեց «Նոր» դինաստիայի կայսր և խոստացավ անցկացնել վճռական ռեֆորմներ: Ռեֆորմներով արգելվեց հողի առուծախը, բոլոր հողերը համարվեցին թագավորական: Միաժամանակ հայտարարվեց հին համայնական հողատիրության համակարգի վերականգնման մասին: Արգելվեց կալ ստրուկների առուծախը: Պայքար մղելով մասնավոր ստրկատիրության դեմ՝ Վան Մանն օրինականացրեց, սակայն, պետական ստրկատիրությունը: Կարճ ժամանակում ավելացավ պետությանը պատկանող ստրուկների թիվը: Ավելին, նրանցից կազմվում էր բանակը:

Մի քանի անգամ նա անցկացրեց դրամական ռեֆորմներ, մտցրեց նոր կարգեր: Վան Մանը ձգտում էր հասնել նրան, որ պետության ձեռքում կենտրոնացվեն եկամուտների բոլոր աղբյուրները, և ստեղծվի ուժեղ բյու-

րոկրատական կայսրություն: Ռեֆորմները չբուլացրին, այլ ընդհակառակը՝ խորացրին և սրեցին դասակարգային հակասությունները և նպաստեցին ստրկատիրական պետության ճգնաժամին:

Համ կայսրությունը տրոհվում է երեք թագավորությունների, որոնց գոյության ժամանակաշրջանը (220-280թթ.) կոչվել է Մանգո («Նոաթագավորություն»): Համ կայսրության տապալմամբ վերջնականապես անցում կատարվեց ստրկատիրական հասարակարգից ֆեոդալականի:

2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Ին Շան դինաստիայի օրոք Չինաստանում մշակվել է պատիժների մասին մի օրենսգիրք, որը պարունակում է ավելի քան երեք հազար հոդված: Նրանում նշվում է ծանրացուցիչ և մեղմացուցիչ հանգամանքների, դիտավորությամբ և անզգուշությամբ կատարված հանցագործությունների և այլնի մասին: Օրենսգիրքն ամրապնդում էր ամենից առաջ սովորությանին իրավունքի նորմերը:

Չժանգոյի ժամանակաշրջանն աչքի է ընկնում օրենսդրական գործունեության բուն զարգացմամբ: Այս ժամանակաշրջանի գաղափարախոսության մեջ տիրապետող էին համարվում երկու ուղղություններ, որոնք մեծ ազդեցություն թողեցին իրավունքի զարգացման վրա: Կարելի է ասել, որ իրավագիտության մտքի ծագումն ու զարգացումը Չինաստանում շուրջ երկու հազար տարի կապված են եղել այդ երկու ուղղությունների հետ: Դրանցից մեկը լեգիստյան (ֆացյան դպրոց) ուղղությունն էր, մյուսը՝ կոնֆուցիականությունն էր (փիլիսոփա Կոնֆուցիոսի անունով): Լեգիստների ըմբռումները շարադրվել են «Շան Յզյուն շու» տրակտատում («Շան մարզի կառավարչի գիրքը»): Լեգիստները գտնում էին, որ կարևորն իրավական նորմերն են, և աշխատում են այդ նորմերի ազդեցությունը տարածել կյանքի բոլոր ոլորտների վրա: Նրանց կարծիքով, հաջող կառավարել հնարավոր է միայն այն դեպքում, երբ պետության գլուխը հենվում է միասնական, բոլորի համար պարտադիր օրենքների վրա: Գտնում էին, որ միայն օրենքի օգնությամբ է հնարավոր իրականացնել տնտեսական և քաղաքական խոշոր միջոցառումներ: Ըստ լեգիստների, «օրենքի առաջ բոլորը հավասար են, և բոլոր մեղավորները պետք է պատիժ կրեն»: Լեգիստների սկզբունքային հակնառակորդները՝ կոնֆուցիականները, մերժում էին ամեն մի օրենսդրական ակտ, գտնում, որ օրենքը խախտում է ժառանգակաճ արիստոկրատիայի դիրքերը: Կոնֆուցիականները դեմ էին օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքին. ժառանգական արիստոկրատիան ու աղմինիստրացիան վեր էին դասում օրենքից:

Նրանք ավելի մեծ տեղ տալիս էին բարոյական նորմերին:

Ստրկատիրության վերջին շրջանում Չինաստանում երևան եկան իրավունքի բազմաթիվ ժողովածուներ:

Սեփականության իրավունք: Ինյան, Արևմտյան Չժոուի ժամանակաշրջանում հողը համարվում էր բազավորի սեփականությունը: Որպես նվեր հողը կարող էր տրվել նրա մերձավորներին միայն օգտագործման իրավունքով: Հետագայում նկատվում է տիրույթները մասնավոր սեփականության վերածման տենդենց: Ցինի ժամանակաշրջանը բնութագրվում է հողատիրության մասնավոր սեփականության արդյունավետ զարգացմամբ:

Հողի հետ միասին սեփականության իրավունքի օբյեկտ էին նաև ստրուկները: Ինի ժամանակաշրջանում ստրուկներն իրավագուրկ էին: Նրանք համարվում էին պետության սեփականությունը: Չժոուի ժամանակաշրջանում արդեն թույլատրվեց գնել ստրուկ, կատարել ստրուկի փոխանակում և այլն: Մ.թ.ա. V-III դդ. գոյություն ունեին պետական և մասնավոր ստրուկներ, ընդ որում ստրկատիրությունը մեծ դեր էր խաղում: Ցինի ժամանակաշրջանը բնութագրվում էր ստրուկների լայն և ազատ առևտրով:

Պարտավորություններ: Հին չինական իրավունքին հայտնի են պայմանագրերի տարբեր տեսակներ: Առաջիններից մեկը հանդիսանում էր փոխանակության պայմանագիրը, որն աստիճանաբար իր տեղը զիջեց առուծախի պայմանագրին, որը պարտադիր կնքվում էր գրավոր, և որի համար գանձվում էր պետական տուրք: Հայտնի են նաև նվիրատվության, փոխառության և փարձակալության պայմանագրերը:

Ամուսնաընտանեկան հարաբերություններ: Ամուսնաընտանեկան հարաբերությունները կրել են մահապետական բնույթ: Ընտանիքում իշխում էր տղամարդը: Տարածված էր բազմակնությունը: Կինը լիովին կախված էր տղամարդուց, չուներ անձնական գույք, իսկ ժառանգման հարցում ուներ միայն սահմանափակ իրավունքներ: Ամուսնության մասին պայմանագիրը կնքում էին ծնողները:

Քրեական իրավունք և դատավարություն: Աղբյուրները վկայում են, որ Հին Չինաստանում մեծ թվով հանցագործություններ են տեղի ունեցել: Հայտնի են հանցագործությունների տարբեր տեսակներ, այդ թվում պետության, կրոնի, անձի և սեփականության դեմ ուղղված հանցագործություններ: Հաճախակի էին դարձել զինվորական հանցագործությունները:

Իրավական նորմերը հանցագործություն էին համարում նաև հարկերի վճարումից խուսափելը և հարբեցողությունը, որոնց համար նախատեսվել է մահապատիժ: Երկար ժամանակ կիրառվել է արյան վրեժը:

Հին Չինաստանում պատժի տեսակները տարբեր ժամանակներում տարբեր են եղել: Ընդհանուր առմամբ տարածված են եղել մարմնական պատիժները (կտրում էին ձեռքերը, ոտքը, քիթը, մարմնի այլ մասեր, ճիպոտահարում էին և այլն), մահապատիժը, որն իրականացվում էր տարբեր մեթոդներով ու ձևերով (այրում էին կրակի վրա, քառատում էին, մարմինը բաժանում առանձին մասերի, կենդանի թաղում էին և այլն):

Դատարանն առանձնացված չէր վարչական ապարատից: Դատական ֆունկցիան իրականացնում էին պետական ապարատի ներկայացուցիչները: Գերագույն դատավոր համարվում էր միապետը: Տեղերում դատում էին տեղական իշխանությունների ներկայացուցիչները: Դատավարությունը կրում էր մեղադրական-մրցակցային բնույթ:

ԲԱԺԻՆ 2

ԱՆՏԻԿ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 5

ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հին Հունաստանի պետության և իրավունքի պատմությունը սկզբնավորվել է հնագույն ժամակաշրջանից: Բալկանյան թերակղզու հարավում գտնվող այդ երկիրը բնակեցված է եղել դեռևս հին քարի դարի ժամանակաշրջանից: Այստեղ ապրող բնակիչները զբաղվել են հողագործությամբ ու անասնապահությամբ, հետագայում մասնաճյուղավորվել են քայքայված և առևտրով:

Հին Հունաստանի պետության ու իրավունքի պատմությունը կարելի է բաժանել չորս ժամանակաշրջանի.

1. Մթա. XIX-IXդդ., երբ անհրաժեշտ պայմաններ են ստեղծվում պետության ու իրավունքի կազմավորման համար:

2. Մթա. IX-VIդդ., երբ արտադրողական ուժերի զարգացման, սոցիալ-տնտեսական հարաբերությունների փոփոխման և հասարակությունը դասակարգերի տրոհման հետևանքով ձևավորվեցին հնագույն քաղաք-պետությունները:

3. Մթա. V-IVդդ., որը բնութագրվում է որպես Հունաստանի պատմության դասական ժամանակաշրջան, երբ ծաղկում է ապրում մասնաճյուղավորված, քաղաքական ու իրավական միտքը:

4. Մթա. IVդ. 2-րդ կեսից մինչև մթա II դարի վերջը, երբ պետությունը ճգնաժամ է ապրում: Այս ժամանակաշրջանը պատմությանը հայտնի է հելլենիստական դարաշրջան անունով:

Հին Հունաստանի պետության և իրավունքի պատմության մեջ յուրահատուկ դեր են խաղացել Աթենքի և Սպարտայի քաղաք-պետությունները:

Աթենքի պետությունը հանդիսացել է դեմոկրատական հանրապետու-
թյան, իսկ Սպարտայի պետությունը՝ արիստոկրատիայի վառ օրինակ¹:

1. ԱԹԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ

Մթա. XI-IXդդ. Աթենքում ապրող ցեղերի մոտ նկատվում է նախնա-
դարյան համայնական կարգերի քայքայում: Այդ ժամանակաշրջանում
հողը դեռևս համարվում էր տոհմի սեփականությունը, չնայած այն
հանգամանքին, որ ցեղապետերը՝ բազիլևսները, ունեին առանձին
հողատարածքներ, որոնք աչքի էին ընկնում իրենց չափերով ու որակով:

Հոմերոսյան ժամանակաշրջանում Աթենքում պետությունը դեռ չէր
ձե-վավորվել: Սոցիալական խմբերի միջև հակասությունները դեռևս
սրված չէին այնչափ, որպեսզի զգացվեր բանակ, դատարան և պետական
ապարատի բաղկացուցիչ մաս կազմող մյուս տարրերը ստեղծելու
անհրաժեշտությունը: Հասարակության կառավարումն իրականացվում
էր Ավագների խորհրդի և Ժողովրդական ժողովների միջոցով, որոնք
գլխավոր-րում էին բազիլևսները: Վերջիններս ղեկավարում էին զորքը,
համարվում գերագույն դատավորն ու քուրմը: Այդ պաշտոնն ընտրովի էր:
Հետագայում փոխանցվեց մահացող բազիլևսի ավագ որդուն և կրեց
ժառանգական բնույթ:

Մթա. VIIIդ. Աթենքը թևակոխում է պատմական նոր ժամանակաշր-
ջան. հասարակական կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում
արմատական փոփոխություններ, որոնց հետևանքով գլուխ է
բարձրանում մասնավոր սեփականությունը: Շատ հողատերեր զրկվում
են իրենց հողե-րից, որոնք կենտրոնացվում են խոշոր հողատերերի
ձեռքերում: Դրա հետ մեկտեղ, արհեստների ու առևտրի զարգացումն էլ
ավելի է խորացնում հա-սարակության սոցիալ-գույքային շերտավորումը:
Նշված ժամանակաշր-ջանի հասարակական կարգը բնորոշվում է
նրանով, որ հասարակությունը բաժանված էր արտոնյալ և ա-րտոնյալ
խավերի: Արտոնյալ խումբը /Էվ-պատրիդները/ մեծ դեր էին խաղում
երկրի տնտեսական և քաղաքական կյանքում: Հենվելով իրենց
տնտեսական հզորության և քաղաքական իրա-վունքի վրա՝ նա
իրականացնում էր ղեկավար գործունեություն՝ աստիճանաբար
սահմանափակելով ցեղապետերի իրավունքները: Նրանք էին
նախապատրաստում պետության ղեկավարներին, այսպես կոչված,

¹ Ը.Պետրոսյան, Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմու-
թյուն, Երևան, 1986, էջ 93:

արքունտներին: Ոչ արտոնյալ դասի մեջ էին մտնում հողագործները (գեւ-
մերները) և արհեստավորները (դեմիուրգները):

Բնակչության մեջ նշանակալի մաս էին կազմում մետեկները, որոնք
Աթենք էին եկել ուրիշ համայնքներից: Նրանք անձնապես ազատ էին,
ունեին սահմանափակ տնտեսական իրավունքներ /օրինակ, չէին կարող
ունենալ սեփական տառե/, սակայն զրկված էին քաղաքական
իրավունքներից:

Հասարակության մեջ լիովին իրավագուրկ խավ էին ստրուկները:

Արքունտները: Նախնադարյան կարգերից եկած ցեղային կազմակեր-
պությունների և նրանց առաջնորդների՝ բազիլանների իշխանությանը փո-
խարհներու եկավ ավելի դեմոկրատական կոլեգիալ մարմին, որը կոչվեց
արքունտների կոլեգիա: Արքունտները, որոնց թիվն ինն էր, սկզբում ընտր-
վում էր ցմահ, այնուհետև՝ տասը տարին մեկ, իսկ 683 թվականից սկսած՝
ընտրվում էին տարեկան մեկ անգամ: Անդամներից մեկը կանգնած էր կո-
լեգիայի ղեկավարության գլուխ: Նա կոչվում էր առաջին արքունտ կամ
Նայրնիմոս: Նա էր նախապատրաստում և հրավիրում կոլեգիայի նիստե-
րը, հետևում որոշումների կատարմանը, ուներ նաև ընտանեկան գործե-
րով դատական ֆունկցիա: Երկրորդ արքունտը կատարում էր հոգևոր ա-
ռաջնորդի քրմի, ինչպես նաև կղերական գործերով քառական ֆունկցիա:
Երրորդ արքունտը զբաղվում էր գինվորական գործերով: Մյուս վեց ար-
քունտները, որոնք կոչվում էին թեսմոքետներ, կատարում էին գերազան-
ցապես դատական ֆունկցիա և հետևում էին կոլեգիայի կայացրած որո-
շումների կատարմանը: Արքունտների կոլեգիան իրավունքներով օժտված
պետության բարձրագույն կոլեգիալ մարմին էր: Արքունտներն իրավունք
ունեին ցան-կացած հարցի տալ վերջնական լուծում¹:

Արեոպագոս: Ցեղային ավագների խորհուրդը վերացվեց, և նրա փո-
խարեն ստեղծվեց մի նոր մարմին՝ արեոպագոս, ուր հիմնականում տեղեր
էին զբաղվում նախկին արքունտները և այլ նշանավոր հարուստ անձինք:
Այն օժտված էր մեծ իրավունքով, ընտրում էր արքունտների կոլեգիայի
անդամներին, ղեկավարում և ուղղություն տալիս երկրի ներքին և արտա-
քին քաղաքականությանը: Առևտրի հետագա զարգացումը, նավատորմի
ստեղծումը երկիրը վարչապատարածքային օկրուգների՝ նաուկրարների բա-
ժանելու հրամայական անհրաժեշտություն առաջացրեցին: Նաուկրար-
ների գլուխ կանգնած էր արեոպագոսի անդամ օկրուգի կառավարիչը: Այս
միջոցառումը ևս նպաստեց ցեղային մարմինների աստիճանական վե-
րացմանը:

¹ Аристотель, Афинская полиция, in: u Хрестоматия по Всеобщей истории государ-
ства и права, т. 1, М., 1996, էջ 60:

Այսպիսով, քայլ առ քայլ միջոցառումներ անցկացվեցին, որոնց հիմնական նպատակն էր վերացնել ցեղերի և տոհմերի մնացուկները, ամբողջ իշխանությունը կենտրոնացնել պետության ղեկավարության ներքո: Տոհմատիրական կարգերը և նրանց կառուցվածքը խորտակելու ճանապարհին խոշոր միջոցառումներ էին արքունտ Սոլոնի բարեփոխությունները:

Մ.թ.ա. 594թ. Սոլոնն անցկացրեց մի շարք բարեփոխություններ:

Սոլոնը հասարակությունը բաժանեց չորս դասի՝ ըստ նրանց գույքային դրության: Առաջին դասի մեջ նա հաշվում էր բոլոր նրանց, ովքեր ունեին 500, 300 և 150 մեդիան հացահատիկ (մեկ մեդիան հավասար էր 41 լիտրի): Դա նվազագույն եկամուտն էր առաջին երեք դասերի համար: Ով դրանից պակաս կամ բոլորովին ոչինչ չուներ, հաշվվում էր չորրորդ դասի կազմում: Պետական պաշտոններ կարող էին զբաղեցնել առաջին երեք դասերի ներկայացուցիչները, իսկ ավելի բարձր և պատասխանատու պաշտոնները՝ միայն առաջին դասին պատկանողները: Առաջին երկու դասերի ներկայացուցիչները ծառայում էին հեծելազորում, երրորդ դասը ծառայում էր որպես ծանրագեն հետևակ, իսկ չորրորդը՝ իբրև թեթևագեն անզրահ ռետեազոր: Այս բարեփոխումով Սոլոնն օրենսդրորեն ամրապնդեց հասարակության արդեն վաղուց ձևավորված բաժանումը: Նա ստեղծեց պետական իշխանության բարձրագույն մարմին՝ 400-ի խորհուրդը, որն ընդգրկում էր առաջին երեք դասերը:

Չորս հարյուրի խորհուրդն էին ընտրվում բոլոր պաշտոնական անձինք: Այստեղ նրանք հաշվետու էին իրենց գործունեության համար, այստեղ էին մշակվում բոլոր օրենքները: Այս բարեփոխություններից տոհմատիրական հասարակարգը մի նոր պարտություն կրեց: Բարեփոխումից հետո քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում էին ըստ նրանց գույքային դրության: Նա արգելեց պարտքի դիմաց գրավ դնել մարմինը¹:

Սոլոնը նաև չեղյալ հայտարարեց գյուղացիների բոլոր պարտքերը: Իրենց պարտքի դիմաց պարտատերերի մոտ հարկադրաբար աշխատողներն ազատվեցին, պարտքի դիմաց պետության սահմաններից դուրս ստրկության վաճառվածները վերադարձան հայրենիք, փոխանակվեցին պատերազմական գերիները:

Սոլոնը հրատարակեց օրենք, որով սահմանափակվեց հողատիրությունը /սահմանվեց հողի առավելագույն չափը/: Նա, միաժամանակ, հնարավորություն տվեց հողն օտաբեկ կտակի միջոցով: Դա նպաստեց հողի նկատմամբ մասնավոր սեփականության զարգացմանը: Ի հակադրություն պետական մյուս մարմինների, Սոլոնը

¹ Плутарх, Сравнительные жизнеописания, т. 1, М., 1961, էջ 112:

ստեղծեց երդվյալների դատարանը՝ հելիայա, որը հետագայում ձեռք բերեց քաղաքական մեծ նշանակություն:

Սուլոնի բարեփոխությունները գործեցին ավելի քան 30 տարի: Էվպատրիդները դժգոհ էին Սուլոնի բարեփոխություններից: Օգտվելով դրանից Աթենքի նշանավոր և հարուստ տոհմերից մեկին պատկանող Պիսիատրատեսը հեղաշրջում է կատարում (560-527թթ. մ.թ.ա.) և հաստատում իր միանձնյա տիրապետությունը: Նրա մահից հետո միապետությունը շարունակում են նրա որդիները՝ որոշ փոփոխություններ մտցնելով պետական կառուցվածքում: Հետագայում արքունտ ընտրված Կլիսթենեսի ղեկավարությամբ և Սպարտայի օգնությամբ աթենացիները տապալում են միապետությունը և նորից վերականգնում դեմոկրատական հանրապետական կարգերը: 509 թվականին Կլիսթենեսն ընտրվում է արքունտ և մի շարք բարեփոխումներ է անցկացնում: Նա սկսեց նրանից, որ հասարակությունը բաժանեց 10 ֆիլերի՝ 4-ի փոխարեն: Վերացնում է 400-ի խորհուրդը և ստեղծում 500-ի խորհուրդ, յուրաքանչյուր ֆիլից՝ 50 մարդ: Վերացվում են տոհմային կարգերից եկող բոլոր մարմինները և, փաստորեն, նրա օրոք ավարտվում է Աթենական պետության վերջնական կազմավորումը:

Արքունտների կոլեգիան և արեոպագոսը մնում են անփոփոխ: Կլիսթենեսը ստեղծում է 10 մարդուց բաղկացած ստրատեգների խորհուրդ, յուրաքանչյուր ֆիլից՝ մեկ մարդ: Սկզբում խորհրդի անդամների ֆունկցիան միայն բանակի ղեկավարումն էր, բայց շուտով այն ընդլայնվում է, իսկ արքունտների կոլեգիան մղվում է ետին պլան: Փաստորեն խորհուրդն էր ղեկավարում երկիրը:

Կլիսթենեսը մտցնում է այսպես կոչված օստրակիզն: Ժողովրդական ժողովը կարող էր 10 տարի ժամանակով հասարակությունից վտարել այն պաշտոնյաներին, որոնք դառնում էին վտանգավոր աթենական դեմոկրատիայի համար: Կլիսթենեսի բարեփոխումներն ավելի հետևողական էին և նպաստեցին դեմոսի հաղթանակին:

Հույն-պարսկական պատերազմից հետո (մ.թ.ա. V դարի առաջին կեսին), որն ավարտվեց հույների փայլուն հաղթանակով, Աթենքում պետական կառուցվածքն ավելի դեմոկրատացվեց:

30

2. ԱԹԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԹԱ. V-IV ԴԴ.

Հասարակական կարգը: Աթենքի ազատ բնակչությունն ուներ խայ-

¹ Аристотель, Афинская полиция, in: в Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 63:

տաբղետ կազմ: Աթենական լիիրավ քաղաքացիներ էին համարվում աթենացիներից ծնված երեխաները: Քաղաքացիական պատկանելիությունը ստուգվում էր հատուկ կարգով: 18 տարին լրանալուն պես նրանք համարվում էին ծխի անդամ և օգտվում էին քաղաքական ու քաղաքացիա-կան իրավունքներից: 18-60տ. քաղաքացիները համարվում էին զինապարտ: Ամենաբարձր դասին էին պատկանում խոշոր հողատերերն ու ստրկատերերը, որոնք էլ, ըստ էության, կառավարում էին երկիրը:

Հասարակական կյանքում իրենց տեղն ունեին մակ արհեստավորներն ու առևտրականները և նվաճված ժողովուրդները՝ մետեկները: Վերջիններս չէին կարող ունենալ անշարժ գույք, ամուսնանալ Աթենքի քաղաքացիների հետ:

Ստրուկները կազմում էին հասարակության իրավագուրկ զանգվածը: Տարբերակվում էին մասնավոր և պետական ստրուկները: Վերջիններիս աշխատանքը լայնորեն օգտագործվում էր տնային տնտեսություններում, գյուղատնտեսության և արդյունաբերության բնագավառներում: Ստրուկները համարվում էին գույք և չէին կարող ունենալ սեփականություն: Միայն պետական ստրուկներն ունեին սեփականություն ձեռք բերելու և տնօրինելու իրավունք: Նրանցից նշանակվում էին մակ հասարակական կարգի հսկիչներ:

Մասնավոր սեփականությունը պահպանվում էր օրենքով:

Պետական կարգը: Աթենքի պետական իշխանության մարմիններն էին՝ ժողովրդական ժողովը, 500-ի խորհուրդը /Բուլեների խորհուրդը/, Ստրատեգների կոլեգիան, Արքունտների կոլեգիան և Հելիայան:

Ժողովրդական ժողովն աթենական հանրապետության օրենսդիր մարմինն էր: Նրա անդամները կարող էին լինել միայն Աթենքի 20 տարին լրացած քաղաքացիները: Ընդ որում կանայք զրկված էին ընտրական իրավունքից: Նրա աշխատանքները սկզբում գումարվում էին ամիսը մեկ անգամ, այնուհետև՝ ամիսը 4 անգամ: Ամսվա առաջին ժողովը քննության էր առնում պետաիրավական կարևոր նշանակության հարցեր, ֆինանսական և այլ բնույթի գործեր:

Ժողովրդական ժողովը մակ գործադիր մարմին էր: Նա էր լուծում ներքին ու արտաքին քաղաքականության, պատերազմի ու խաղաղության վերաբերյալ հարցերը: Ժողովն ընտրում էր պետական բարձր պաշտոնատար անձանց և ստուգում նրանց գործունեությունը: Պաշտոնատար բոլոր անձինք հաշվետու էին իրենց ընտրողների առջև: Առանձին դեպքերում այն կատարում էր բարձրագույն դատական ֆունկցիա՝ քննելով պետական հանցագործների գործերը: Նրա բացառիկ իրավասության էր վերաբերում մակ օստրակիզմը:

Բուլեների խորհուրդը գործադիր իշխանությունն իրականացնող մշտապես գործող մարմին էր: Նրա անդամներն ընտրվում էին վիճակահանությամբ: Խորհրդի անդամ կարող էր դառնալ 30 տարեկանից բարձր լիիրավ քաղաքացին: Յուրաքանչյուր ֆիլից ընտրվում էր 50 մարդ: 500 հոգուց բաղկացած խորհուրդն ուներ բավականին մեծ լիազորություններ: Այն ղեկավարում էր պետական ընթացիկ աշխատանքները, նախապատրաստում դիվանագիտական և ֆինանսական հարցերի կարգավորումը կազմակերպում նավատորմի շինարարական աշխատանքները և այլն: Նա պետական առանձին պաշտոնատար անձանցից տարին մեկ անգամ պահանջում էր հաշվետվություն, ստուգում 9 արքունտների և Խորհրդի ապագա անդամների վերաբերյալ տվյալները:

Խորհրդի լիազորությունները սահմանվում էին մեկ տարի ժամանակով: Այն լրանալուց հետո բուլեի անդամները հաշվետվություն էին տալիս կատարված աշխատանքի մասին:

Աթենքում գործադիր իշխանության մյուս կարևոր մարմինը տաս ստրատեգների կոլեգիան էր: Ստրատեգներն ընտրվում էին առավել հարուստ և ազդեցիկ քաղաքացիներից՝ բաց քվեարկությամբ: Նրանց հիմնական լիազորությունը զինված ուժերի ղեկավարումն ու կազմակերպումն էր: Նրանք ունեին միատեսակ իրավունքներ ու պարտականություններ: Չնայած դրան, չգրված սովորույթի համաձայն, ստրատեգներից մեկը միշտ զրավում էր առաջին տեղը և կազմակերպում կոլեգիայի աշխատանքները: Աթենքն իր ծաղկմանը հասավ 443թ. Ժողովրդական ժողովի կողմից առաջին ստրատեգ ընտրված Պերիկլիսի ժամանակ:

Աթենքում գործադիր իշխանության երրորդ մարմինն արքունտների կոլեգիան էր: Պրակտիկայում արքունտները զբաղվում էին կրոնական, ընտանեկան և այն գործերով, որոնք վերաբերում էին բարոյականությանը: Արքունտները և նրանց քարտուղարներն ընտրվում էին վիճակահանությամբ՝ յուրաքանչյուր ֆիլից՝ մեկ մարդ: Դրանից հետո նրանք նախ Բուլեների խորհրդում, ապա՝ Հելիայում ենթարկվում էին ստուգման:

Պետական ապարատում ուրույն տեղ էին զբաղում բանակը և դատարանը: Բանակը համարվում էր 20-50 տարեկան քաղաքացիներից՝ պարտադիր զինծառայության միջոցով: 431թ. սկսած ձևավորվեց մշտական բանակ, որը մեծ դեր խաղաց օտարերկրյա զավթիչներից պաշտպանվելու, ինչպես նաև ներքին խռովությունները ճնշելու գործում:

Դատարանն ուներ բավականին բարդ կառուցվածք: Բարձրագույն դատական ատյանն Արեոպագոսն էր: Նրա իրավասությանն էին ենթարկվում դիտավորյալ սպանության, ծանր վնասվածքների /եթե դրանք

հասցվել էին սպանելու նպատակով/, հրկիզման, թունավորման գործերը:

Արքունաների կոլեգիայի ղեկավարությամբ գործում էր Հելիայան՝ քաղկացած 6000 մարդուց: Նրա անդամներ կարող էին ընտրվել 30տ. բարձր լիիրավ քաղաքացիները: Ընտրությունները տեղի էին ունենում վիճակահանությամբ: Յուրաքանչյուր ֆիլից ընտրվում էր 600 մարդ: Հելիայան, ըստ էության, երդվյալների դատարան էր: Այն քննում էր աթենական քաղաքացիների առավել կարևոր մասնավոր բնույթի գործերը, պետությանն առնչվող ցանկացած գործ, ինչպես նաև այն վեճերը, որոնք առաջանում էին դաշնակից պետությունների քաղաքացիների միջև՝ Աթենքի տարածքում:

Բացի հիշյալ մարմիններից, Աթենքում գործում էին նաև այլ դատարաններ, որոնցից յուրաքանչյուրը քննում և լուծում էր որոշակի բնագավառի կոնկրետ հարցեր: Օրինակ, տասնմեկի դատարանը քննում էր գողության, ավագակության վերաբերյալ գործերը, իսկ էֆորների դատարանը՝ ավելի մեղմ կամ մվազ կարևորություն ունեցող հանցագործությունների վերաբերյալ գործերը:

Դատավորներ կարող էին լինել 30տ. բարձր մարդիկ, եթե զրկված չէին քաղաքացիությունից և պարտք չէին պետությանը¹:

Այսպիսով, Աթենքի պետական ապարատը ձևավորվեց ընտրովիության և կոլեգիալության սկզբունքներով, որոնք էլ նպաստեցին Աթենքի դեմոկրատական հանրապետության ծաղկմանը:

Մթա. Vդ. երկրորդ կեսում Աթենքի դեմոկրատիան նկատելիորեն անկում ապրեց: Պելոպոնեսյան պատերազմը լիովին թուլացրեց աթենական պետությանը: 431թ. Սպարտայի հետ պատերազմը պարտություն բերեց Աթենքին, որն ապրեց խոր ճգնաժամ ու կորցրեց իր երբեմնի նշանակությունը: Մթա. 338թ. հունական գորքը ջախջախվեց Մա-կեդոնիայի բանակի կողմից, ինչն էլ սկիզբ դրեց Մակեդոնիայի տիրապետությանը ողջ Հելլադայում: Դրանով աթենական պետությունը դադարեց ինքնուրույն լինելուց:

3. ԻՐԱՎՈՒՆԸԸ ԵՎ ՆՐԱ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐՆ

ԱԹԵՆՔՈՒՄ

Հին Հունաստանի իրավական կարգն առավել զարգացած էր Աթենքում: Այստեղ իրավունքի հիմնական աղբյուր էր սովորույթը: 621թ. սովորությանին իրավունքի նորմերը գրի է առնում արքունտ Դրակոնը: Այդ օ-

¹ Аристотель, Афинская полиция, in: в Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 70:

րենքները հայտնի են դրականյան անունով և աչքի են ընկնում իրենց խստությամբ ու դաժանությամբ: Այն ամբողջապես մեզ չի հասել: Տարբեր աղբյուրներից հայտնի են առանձին հոդվածներ: Այդ օրենքը խիստ տարբերություն չէր տեսնում կանխամտածված և ոչ կանխամտածված հանցագործությունների, ինչպես նաև դիտավորյալ և անզգույշ սպանությունների միջև: Նշված օրենքները որոշ փոփոխություններով գործել են մինչև մթա V դարը:

Իրավունքի աղբյուր է Սուլոնի ընդունած 16 աղյուսակների օրենքը: Նրա հիմքում ընկած էր մասնավոր սեփականության աստիճանությունը, որը նպաստում էր արհեստի և առևտրի արագ զարգացմանը: V-IV դարերում այն համարվում էր իրավունքի հիմնական աղբյուր, որը լրացվում էր ժողովրդական ժողովի ընդունած օրենքներով:

4/3 Գույքային հարաբերություններ: Աթենական իրավունքին հայտնի չի եղել գույքի բաժանումը շարժականի և անշարժի: Չնայած դրան, անշարժ գույքն իր իրավակամ կարգավորմանով առանձնանում էր և յուրահատուկ տեղ գրավում սեփականության օբյեկտների շարքում: Մասնավոր սեփականության ինստիտուտն Աթենքում այնպիսի զարգացում չստացավ, ինչպես Հին Հռոմում: (Գույք էին համարվում հողը, ստրուկը, անասունը, փողը, թանկարժեք իրերը և այլն:

Պարտավորական իրավունք: Արիստոտելը տարբերակել է երկու պարտավորություն՝ պայմանագրային ու դեյիկտային: Այստեղ ավելի զարգացած էր գրավ դնելու պայմանագիրը: Գույքը գրավ էր դրվում այնքան ժամանակ, քանի դեռ պարտքը չէին վճարել: Կային նաև փոխառության, փոխատվության, առք ու վաճառքի, պահառության, հանձնարարության և այլ պայմանագրեր:

Դեյիկտային պարտավորություններն առաջանում էին ուրիշի գույքին վնաս պատճառելու հետևանքով:

4/1/1 Անուսնարձատանեկան իրավունք: Անուսնությունը պայմանագրային դաշինք էր, որը կնքում էին անուսնացողների ծնողները: Հարսնացուն բերում էր օժիտ: Անուսնալուծվելիս այն տանում էր իր հետ: Անուսնալուծությունը թույլատրվում էր, եթե անուսիններից մեկի մեղքով երեխա չէին ունենում: Անուսնալուծության հարցերում տղամարդն ավելի ազատ էր, քան կինը: Վերջինս իրավագուրկ էր:

Ժառանգական իրավունք: Ժառանգելու իրավունքը պատկանում էր մահացածի տղաներին, այդպիսիք չլինելու դեպքում՝ եղբայրներին, քույրերին: Աղջիկները միայն անուսնաձախ օժիտ էին ստանում: Կտակի գաղափարն առաջացել է Աթենքում դեռևս Սուլոնի արքունության ժամանակներից: Սուլոնի օրենքներով կտակել կարող էր այն անձը, որը չուներ արական

սեռի օրինական ժառանգներ: Ինչպես երևում է, բավական դժվարություններ կային նաև կտակելիս: Որդեգրվածները ևս իրավունք չունեին կտակելու, եթե նրանք չունեին օրինական և արու ժառանգներ: Եթե ժառանգորդն ուներ միայն մեկ աղջիկ, իր ունեցվածքը կարող էր ժառանգել միայն նրան, ով նրա հետ կամուսնանար: Իսկ եթե ուներ մի քանի աղջիկ, նա կարող էր մեկին նշանակել ժառանգորդ պայմանով, որ ամուսնանար աղջիկներից մեկի հետ և հետագայում ամուսնացներ նրանց քույրերին՝ յուրաքանչյուրին տալով օժիտ: Ժառանգական իրավունքին առանձին ուշադրություն էր դարձվում, նույնիսկ արքունտներն իրավունք ունեին այդ հարցերին միջամտելու:

Քրեական իրավունք: Այստեղ զգացվում է նախնադարյան կարգերից եկած վովորության իրավունքի ազդեցությունը: Պատիժը սպանության համար դեռևս համարվում էր մասնավոր գործ, սպանվածի հարազատները կարող էին վրեժ լուծել կամ ինչ-որ պայմանով հաշտվել: Ստրուկների օրինախախտումների դեպքում կիրառվում էր մարմնական պատիժը:

Աթենքի քաղաքացիների կատարած հանցագործությունների համար կիրառվում էին պատժի մի շարք միջոցներ՝ մահապատիժ, քաղաքացիությունից զրկել և այլն:

Խիստ պատիժներ էին սահմանվում հատկապես պետական հանցագործությունների համար: Այսպես, բոլոր նրանք, ովքեր փորձել էին հարված հասցնել աթենական դեմոկրատիային, հայտարարվում էին Աթենքի թշնամիներ, ցանկացած մարդ կարող էր անպատիժ սպանել նրան և նրա ունեցվածքը բռնագրավել հօգուտ պետության: Դավաճանի դիակը լուրս էր տարվում պետության սահմանից և թողնվում առանց թաղելու: Նա արժանի չէր սրբազան հողում թաղվելու:

Աստվածներին անպատվելը համարվում էր պետական հանցագործություն, որովհետև աստվածների գաղափարը սերտորեն կապված էր Աթենական պետության հետ:

Անձի, արժանապատվության դեմ ուղղված հանցագործության դեպքում, եթե այն չէր ավարտվել մահվամբ, կիրառվում էին մարմնական պատիժներ: Խիստ պատիժներ էին նախատեսված գողությունների և այլ կարգի հանցագործությունների համար:

Դատավարություն: Դատական գործ կարող էին հարուցել տուժողը կամ պաշտոնական անձինք: Երկու դեպքում էլ այժմ պետք է հիմնավորված լիներ և ներկայացվեր գրավոր: Հայցվորը պարտավոր է պատասխանողին դատարան ներկայացնել: Չներկայացնելու դեպքում եթե ապացուցվում էր, որ պատասխանողին հայտնի էր եղել, և նա չէր ներկայացել, գործը քննում էին նրա բացակայությամբ: Հայցվորը կամ տուժողը պար-

տավոր էին ներկայացնել բոլոր ապացույցները, վկաներին: Այստեղ, որպես վկա, հարցաքննվում էին նաև ստրուկները, քացի կանանցից և երեխաներից: Դատական ապացույց էր նաև երդումը: Նախնական քննությունն ավարտելուց հետո դատարանը հայտարարում էր դատական միստի օրը: Նիստին մասնակցող երդվյալ ատենակալները կայացնում էին իրենց որոշումը, որից հետո դատարանը հրապարակում էր վճիռը կամ որոշումը:

4. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՋԱՑՈՒՄԸ ՍՊԱՐՏԱՅՈՒՄ

Հին Հունաստանի պատմության մեջ մեծ դեր է խաղացել Սպարտայի պետությունը, որն առաջացել է մթա IX դարում: Սպարտայի ստրկատիրական պետության կազմավորումը սերտորեն կապված է նշանավոր օրենսդիր Լիկուրգոսի անվան հետ: Նրան է վերագրվում ռետրերի հրատարակումը (բառացի նշանակում է պայմանագրի կնքում), որոնք կնքվել են Սպարտայի հասարակարգում տեղի ունեցած ուժեղ պայքարի պրոցեսում: Սպարտան ռազմական հզորության շնորհիվ կարողացավ միավորել Հունաստանի հարավում գտնվող մի շարք քաղաք-պետություններ և ստեղծել Պելոպոնեսյան միությունը: Վերջինիս միացվեցին նաև տնտեսապես զարգացած այնպիսի քաղաք-պետություններ, ինչպիսիք էին Կորինթը և Սիզարը, որոնք առևտրական մեծ գործունեություն էին ծավալել Միջերկրածովյան քաղաք-պետություններում:

Պելոպոնեսյան միությունն իր ժամանակի ամենաուժեղ պետություններից էր:

Հասարակական կարգը: Սպարտացիները հասարակական շերտավորման չէին ենթարկվել: Նրանք բոլորն էլ արտոնյալ էին: Հավասար չափով նրանց էր պատկանում ամբողջ հողը, որը մշակում էին ստրուկները:

Սպարտացին, որպես զինվոր, ենթակա էր խիստ կարգապահության: Դաստիարակությունը Սպարտայում համարվում էր պետության գործը: Սպարտացին փոքր հասակից նախապատրաստվում էր զինվորական ծառայության: Այն համարվում էր նրա հիմնական զբաղմունքը: Չինվորական վարժարաններում անցկացնում էին իրենց կյանքը մինչև 20 տարեկան դառնալը: Սպարտայում գոյություն ուներ պարտադիր զինծառայություն, որը կատարում էին մինչև 60 տարեկան դառնալը, որից հետո նրանք ազատվում էին զինծառայությունից:

Սպարտացուն թույլատրվում էր ամուսնանալ 30 տարին լրանալուց հետո միայն:

Հողը Սպարտայում բաժանված էր 10 հազար հավասար մասերի, որը համապատասխանում էր լիակատար իրավունք ունեցող քաղաքացիների թվին: Հողը մշակում էին ստրուկները (հյուտները):

Սպարտայում բնակվում էին նաև ոչ սպարտացիներ, որոնք կոչվում էին պերիեկներ: Նրանց հիմնական զբաղմունքն առևտուրը և արհեստն էր: Նրանք քաղաքական իրավունքից չէին օգտվում, երկրի կառավարմանը չէին մասնակցում: Պատերազմների ժամանակ հիմնականում թիկունքային ծանր աշխատանք էին կատարում և միշտ ենթակա էին սպարտացիներին, որոնց ղեկավարներն առանց դատի և դատաստանի պատժում էին նրանց:

Ստրուկներ (հյուտներ): Նվաճված ժողովրդի մեծ մասին սպարտացիները դարձրին ստրուկներ: Նրանք հիմնականում պետության սեփականությունն էին: Յուրաքանչյուր սպարտացի ստանում էր հողաբաժին և ստրուկների մի քանի ընտանիք, որոնք մշակում էին այն: Սպարտացիները դաժան էին վարվում ստրուկների նկատմամբ, նույնիսկ առանց մեղքի նրանց ծեծում և տանջում էին: Ստրուկները միշտ էլ ատելությանը էին լցված իրենց տերերի դեմ, ձգտում էին ազատվել անխնա շահագործումից, և այդ հողի վրա հաճախ տեղի էին ունենում ապստամբություններ: Մ.թ.ա. 464թ. տեղի ունեցած ստրուկների ապստամբությունը տևեց 10 տարի:

Չ **Պետական կարգը:** Պետության ղեկավարության գլուխ կանգնած էին երկու թագավորները, այնուհետև, ավագների խորհուրդը՝ Գերուսիան, ժողովրդական ժողովը, էֆորները: Պետության ղեկավարության գլուխ կանգնած էին ժառանգական իրավունքից օգտվող երկու թագավորները: Այսինքն՝ միավորված երկու ցեղերի ղեկավարները՝ ցեղապետերը, պահպանում էին իրենց իշխանությունը: Համաձայն մեկ այլ տեսակետի, թագավորներից մեկն առաջնորդել է բանակը, մյուսը ղեկավարել է թիկունքը: Այստեղ թագավորներն այնպիսի իրավունքներից չեն օգտվել, ինչպես մեզ հայտնի մյուս ստրկատիրական պետություններում: Միայն պատերազմի ժամանակ բանակը ղեկավարող թագավոր-առաջնորդին մեծ իրավունքներ են տրվել: Պատերազմների ժամանակ թագավորին ուղեկցել է երկու էֆոր:

Սպարտայի պետության մեջ մեծ տեղ էր պատկանում ավագների խորհրդին՝ Գերուսիային, որը բաղկացած էր 30 մարդուց, սրա մեջ մտնում էին նաև երկու թագավորները: Ավագների խորհրդում ընտրվում էին 60 տարին լրացած, իրենց զինվորական պարտքը կատարած նշանավոր անձինք: Ընտրությունը կատարվում էր ժողովրդական ժողովում: Ընտրված էր համարվում այն թեկնածուն, որի օգտին ավելի բարձր էին քղավում: Նրանք ընտրվում էին ցմահ:

Ավագների խորհրդի անդամները կատարում էին նաև դատական

Ֆունկցիա, հատկապես, երբ մեղադրվում էին թագավորները կամ նշանավոր մարդիկ: Լուծում էին ավագների խորհրդի անդամների միջև ծագած վեճերը: Սկզբնական շրջանում ավագների խորհրդի նիստերը գումարվում էին թագավորների կողմից, իսկ հետագայում (մ.թ.ա. V-IV դդ.) այդ իրավունքն անցավ էֆորներին:

Պետական կառուցվածքում մեծ էր նաև ժողովրդական ժողովի դերը, որին մասնակցում էին 30 տարին լրացած գույքատեր սպարտացիները: Նրանց նիստերը գումարում էին թագավորները, ավելի ուշ՝ էֆորները՝ ամիսը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում կարող էին գումարվել արտակարգ ժողովներ: Ժողովրդական ժողովն ուներ մեծ իրավունքներ, այնտեղ էին ընտրվում էֆորները, Գերուսիայի անդամները: Նա էր որոշում, թե պատերազմների ժամանակ որ թագավորին հանձնարարեր առաջնորդելու բանակը, ընդունում էր օրենքներ, որոշում էր պատերազմի և հաշտության հարցերը, ինչպես նաև Սպարտայի քաղաքացիությունից զրկելը:

Էֆորները, որոնք արտակարգ և մեծ իրավունքներ ունեին, համարվում էին թագավորների տեղակալներ: Էֆորներն էին գումարում ավագների խորհրդի և ժողովրդական ժողովի նիստերը, ղեկավարում դրանք, ինչպես նաև արտաքին քաղաքականությունն ամբողջությամբ, նշանակում էին դեսպաններին և ընդունում օտար պետությունների ներկայացուցիչներին: Նրանք հետևում էին պետության ներքին կարգապահությանը, առևտրին, պետական պաշտոնյաների գործերին, տարեկան մեկ անգամ լսում էին նրանց հաշվետվությունը: Պետական պաշտոնյային և նույնիսկ թագավորին կարող էին պաշտոնից ետ կանչել և հանձնել ժողովրդական ժողովին կամ ավագների խորհրդի դատին: Իրենց գործունեությանը հաշվետու էին իրենց փոխարինողներին, նորընտիր էֆորների առջև, որոնք ընտրվում էին տարեկան մեկ անգամ:

Բանակը: 20-60 տարեկան սպարտացի տղամարդիկ, ինչպես նաև նվաճված ժողովուրդը՝ պերիկները, պարտավոր էին ծառայել բանակում: Վերջինները կատարում էին միայն թիկունքային օժանդակ աշախատանք: Բանակի կազմում կային նաև հեծյալներ, որոնք հիմնականում պաշտպանում էին թագավորին և կատարում նրա հանձնարարությունները: Հեծյալները սովորաբար ավելի հարուստ սպարտացիներ էին:

Սպարտայի և Աթենքի միջև տեղի ուեցած պատերազմից հետո (431-404 թթ.) մեծ փոփոխություններ կատարվեցին նրա հասարակական և պետական կառուցվածքում: Վերացվեցին ավագների խորհուրդը՝ էֆորները, Գերուսիան և այլն: Մ.թ. 146թ. ամբողջ Հունաստանը, այդ թվում նաև Սպարտան, ընկան Հին Հռոմի տիրապետության տակ:

Իրավունքը: Սպարտայի ստրկատիրական պետությունում երկար ժա

մանակ գործում էր սովորութային իրավունքը: Նոր ընդունված օրենքներն ու իրավական ակտերն ամրագրում էին սպարտացիների արտոնյալ իրավունքը, որը հիմնականում ուղղված էր ստրուկների դեմ: Ինչպես մյուս ստրկատիրական պետություններում, այնպես էլ այստեղ նրանք իրավագրվել էին:

Համայնքին պատկանող հողը բաժանվում էր հողակտորների, որոնցից օգտվում էին առանձին տնտեսություններ: Հողն օտարել չէին կարող: Միայն մթա. IV դարում օրենք ընդունվեց, որով թույլատրվում էր բնակելի շենքն իր հողամասով նվիրել կամ կտակել: Շենքերի և հողամասի վաճառքը խստորեն արգելված էր:

Ընտանեկան հարաբերությունները դեռևս լրիվ կարգավորված չէին: Գոյություն ուներ խմբային ամուսնությունը. նույնիսկ մի քանի եղբայրներ կարող էին ունենալ մեկ կին: Կանայք օգտվում էին արտոնյալ իրավունքներից, որը հիմնականում բացատրվում էր մայրիշխանության ժամանակաշրջանից եկած սովորույթներով: Կանայք մնասնակցում էին ժողովրդավան ժողովի աշխատանքներին, պետության կառավարմանը: Մեզ հասած աղբյուրները հաղորդում են բազմաթիվ անվանի և հարուստ կանանց մասին:

Դատական ֆունկցիան կատարում էր ավագների խորհուրդը՝ Գերուսիան, էֆորները, առանձին դեպքերում նաև թագավորները: Գերուսիան քննում էր գլխավորապես քրեական գործեր, որոնք վերաբերում էին պետական հանցագործություններին, էֆորները՝ քաղաքացիական, իսկ թագավորները՝ ժառանգության վերաբերյալ գործեր: Պատժի հիմնական միջոցը տուգանքն էր, քաղաքացիությունից զրկելը և մահապատիժը: Մահապատժի էին ենթարկվում պատերազմի ժամանակ դասալքության և պետական այլ հանցագործությունների համար:

ԳԼՈՒԽ 6

ՀԻՆ ՀՌՈՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հոռմեական պետությունը ստրկատիրական հասարակարգի վերջին պետությունն է: Ստրկատիրական հասարակական-տնտեսական ֆորմացիան հոռմեական պետությունում հասավ իր զարգացման գագաթնակետին: Այդ պետությունն ավելի, քան հազարամյա պատմության ընթացքում ունեցել է կառավարման տարբեր ձևեր՝ հանրապետություն և միապետություն: Հոռմը երեք անգամ իր կամքը թելադրեց աշխարհին, երեք անգամ ստեղծեց ժողովուրդների միասնություն: Առաջին անգամ այդ միասնությունն արտահայտվեց հոռմեական պետությունում, երկրորդ անգամ՝ հոռմեա-կաթոլիկ եկեղեցում, երրորդ անգամ՝ իրավունքում՝ ռեցեպցիայի (ընդօրինակման) հետևանքով:

Հոռմը որպես ստրկատիրական պետություն, պատմական ասպարեզ իջավ ավելի ուշ և ստեղծեց ձևով առավել կատարելագործված ստրկատիրական հարաբերություններ:

Հոռմի կաթոլիկ եկեղեցու տիրապետությունը բացատրվում էր նրա բազմակողմանի բնույթով և այն դերով, որի ազդեցությունը հետագայում զգացվեց Արևմտյան Եվրոպայի երկրների ֆեոդալական հասարակության վրա: Այն հանդիսացավ գլխավոր գաղափարական ուժը: Հոռմեական իրավունքի ռեցեպցիան պայմանավորված էր Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական պետություններում բուրժուական արտադրական հարաբերությունների առաջացմամբ և զարգացմամբ:

Հին Հոռմը, նվաճելով Միջերկրական ծովի ավազանում գտնվող բոլոր երկրները, ինչպես նաև Մերձավոր Արևելքը, դարձավ ժամանակի ամենահզոր պետությունը: Արևմտյամ Հոռմը կործանվեց մեր թվականության 476թ., բայց հոռմեական իրավունքը ֆեոդալական հասարակական հարաբերությունների ժամանակ գործեց Իտալիայում, Իսպանիայում, Հարավային Ֆրանսիայում, Բյուզանդիայում: Իսկ Գերմանիայում Հուստինիանոսի օրենքների ժողովածուն միայն 1900թ. դադարեց գործել, երբ գործողության մեջ դրվեց գերմանական քաղաքացիական օրենսգիրքը:

1. ԱՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ՀՈՈՄՈՒՄ
(ՄԹԱ. 754-510 քք.)

Հաստատված ավանդության համաձայն, Հին Հռոմի պատմությունը սկիզբ է առնում մթա. 8-րդ դ. (754-753 քք.): Սկզբնական շրջանում Հռոմը եղել է երկրագործական ավան Տիրբր գետի ափին: Փողոցները վեր էին բարձրանում դեպի հայտնի հռոմեական բլրակները, որտեղ տեղավորված էին տաք կլիմային հատուկ տները, որոնց անկյունները կազմող 4 կաղնի սյուներն իրար հետ միացնում էին ձողովները, գետի եղեգները՝ կողքերից կավով ծեփված:

Արդեն կայսրության դարաշրջանում և ամենից առաջ Օգոստոս կայսեր ժամանակ Հռոմը դառնում է քարե և մարմարե (մթա. I դար- մթ. I դար): Մ.թ.ա. VIII դարում հռոմեական ժողովուրդը բաժանված էր 300 տոհմի (գենսի), 30 տոհմային միությունների (կուրիա) և երեք ցեղերի: Բաղաժի գլուխ կանգնած է ռեքսը (թագավորը): Նշված շրջանում Հռոմում եղել է 7 թագավոր: Այն սկսվում է Հռոմուլոսից և վերջանում Տարքվինիոս Գոռոզով: Այս առաջին և սկզբնական շրջանն ընդունված է համարել «Թագավորական»: Մթա. 509թ. Տարքվինիոս Գոռոզը տապալվեց, և քաղաքագլուխ ընտրվեց իրոպատոս (կոնսուլ) Յուլիուստոսը: Դրանով ավարտվում է թագավորական շրջանը, և սկսվում հանրապետության ժամանակավոր շրջանը: Այն տևեց շուրջ 500 տարի (509-27 քք. մթա.): Մթա. 27թ. մինչև մթ. 476թ. Հռոմն ապրեց կայսրության շրջան, որն էլ իր հերթին բաժանվում է պրինցիպատ (մթա. 27թ. մինչև մթ. 193թ.) և դոմինատ (193-476թթ.) ժամանակաշրջանների:

Հասարակական կարգը: Ըստ ամերիկյան պատմաբան Լ.Մորգանի, Հին Հռոմի հասարակությունն անվանվում է ռազմական դեմոկրատիա: Այդ ժամանակ համապատասխան ցեղերը տիրապետում էին հողագործությանը, անասնապահությանը, մետաղե գործիքներին և զենքին: Զույգը և անասնապահական անյրեղակերպն ավարտվում է, բայց ռազմական կազմակերպությունը մնում է նույնը: Դա պարզ երևում է նաև Հին Հռոմի պատմությունից:

Ռազմական դեմոկրատիայի շրջանում հռոմեական համայնքն իր սոցիալական դրությամբ միասեռ չէր: Նրանց միջավայրից են առաջ գալիս զինվորական առաջնորդները, քաղաքական մագիստրատները: Իրենց ծագումը նրանք կապում էին աստվածի, թագավորի և հերոսների հետ: Սահմանված որոշակի օրերին տոհմերը, ցեղերը և հետո նաև ամբողջ ցե-

ղային միությունը հավաքվում էին ժողովների՝ իրենց իրավասությանը վերաբերող գործերը քննելու: (Օրինակ՝ ժառանգությանը վերաբերող վիճելի հարցերը և այլն): Որպես տոհմի և ցեղի անդամ՝ հռոմեական քաղաքացին՝

1) հանդես էր գալիս որպես ընդհանուր հողային սեփականության մասնակից՝ իրեն և իր ընտանիքին հատկացված հողաբաժնով,

2) ստանում էր ժառանգելու և տոհմային գույքին տիրելու իրավունք,

3) կարող էր տոհմից պահանջել և՛ օգնություն, և՛ անհրաժեշտ պաշտպանություն,

4) մասնակցում էր ընդհանուր կրոնական ծիսակատարություններին և այլն:

— Իր հերթին տոհմերը, կուրիաները և ցեղերը յուրաքանչյուր քաղաքացուց կարող էին պահանջել ռազմական և այլ հասարակական պարտականությունների կատարում: Տոհմերի առաջնորդները կազմում էին ավագների խորհուրդ կամ սենատ, որը ժամանակի ընթացքում ձեռք բերեց գլխավոր կառավարական իշխանության նշանակությունը: Սենատն ուներ այն գործերի նախնական քննարկման իրավունքը, որոնք դրվում էին ժողովրդական ժողովի քննարկմանը: Նա ղեկավարում էր նաև Հռոմի կառավարման հետ կապված բազմաթիվ ընթացիկ գործերը: Սկզբում կային 100 սենատորներ, իսկ հետո՝ 300: Սենատը գոյություն ուներ նաև թագավորների օրոք: Հռոմեական համայնքի առաջնորդը, քաղաքացիական կառավարիչը և գլխավոր զինվորական առաջնորդը ռեքսն էր՝ թագավորը: Այն ընտրովի պաշտոն էր, որը հաշվետու էր ժողովրդի առջև: Անհրաժեշտ է ավելացնել, որ հռոմեական ժողովրդի ընդհանուր ժողովը նաև գորային ժողով էր՝ Հռոմի զինվորական ուժի գորատեսամբ:

Հնագույն ժամանակներից Հռոմի տարածքում բնակվում էին նաև ոչ քաղաքացիների՝ կլիենտներ և պլեբեյներ: Ամենայն հավանականությամբ վերջիններս կազմավորվել են իրենց աղքատացած ցեղակիցներից: Նրանք անցնում էին ծառայության հռոմեական ազնվականության մոտ որոշակի պայմաններով՝ ստանալով հողաբաժին: Պլեբեյներից շատերը զբաղվում էին արհեստներով ու առևտրով: Ժամանակի ընթացքում պլեբեյները դառնում են պատրիկլությանը դիմադրող քաղաքական ուժ: Պլեբեյների հետ հռոմեական քաղաքացիական հասարակությունից դուրս գտնվում էին նաև կլիենտները, որոնք ծագում էին օտարականներից և, ինչպես պլեբեյները, հովանավորներ էին գտնում պատրիկլության միջավայրում: Պլեբեյների թվի աճման և նրանց տնտեսական նշանակության հետ մեկտեղ Հռոմի քաղաքական պատմությունը մի քանի դարով աչքի է ընկնում իրենց իրավունքների հավասարության համար պատրիկների դեմ պլեբեյների պայքարով: Լինելով ազատ՝ պլեբեյները զինվորական ծառայություն էին կրում

պատրիկների հետ, բայց պետք է բավարարվեին ոչ արդարացի փայաբա-
ժիններով:

Սերվիոս Տուլիոսի ռեֆորմները: Հռոմեական պետականության մեջ
մեծ նշանակություն ունեցավ այն ռեֆորմը, որը հռոմեական ավանդույթը
կապում է վեցերորդ ռեքս Սերվիոս Տուլիոսի անվան հետ (մթա. 578-
534թթ): Նրա օրոք պլեբեյները մտցվեցին հռոմեական համայնքի կազ-
մի մեջ: ~~Դա կատարվեց հետևյալ կերպ: հռոմեական բոլոր քաղաքացիները~~
(ինչպես պատրիկները, այնպես էլ պլեբեյները) «զնահատվեցին» ըստ
իրենց գույքի (հող, անասուն, ինվենտար և այլն) և բաժանվեցին 193 ցեմ-
տուրիակաների¹: Դրանով հիմք դրվեց հարուստների և ազնվականների տի-
րապետությանը՝ անկախ նրանից՝ պլեբեյներ էին, թե պատրիկներ: Բացի
դրանից, քաղաքը բաժանվեց տարածքային օկրուգների: Սերվիոս Տուլի-
ոսի ռեֆորմը ոչնչացրեց հին հասարակությունը և նրա տեղը ստեղծեց նոր
պետական կառուցվածք, որը հիմնված էր գույքային տարբերության և
տարածքային բաժանման վրա:

Սերվիոս Տուլիոսի ռեֆորմը կարևոր զիջում էր պլեբեյների համար,
բայց նրանց չհավասարեցրեց պատրիկների հետ: Մանավանդ, որ խոսքը
վերաբերում էր հողաբաժին տալուն: Մյուս կողմից զգացվում էր պարտքի
դիմաց ստրկության վերացման ռեֆորմի կարիք: Այդ երևույթն անխուսա-
փելի էր պարտքը ոչ ժամանակին վճարելու դեպքում: Եվ դա ամենից շատ
վիրավորում էր պլեբեյներին: Բայց, որպեսզի հասնեին և՛ առաջինին, և՛
երկրորդին, պլեբեյները քաղաքական իրավունքի կարիք էին զգում: Բանը
հասնում էր սուր բախումների: Այնուամենայնիվ, հաջորդ երկու հարյու-
րամյակների ընթացքում պլեբեյները հասան իրենց բոլոր պահանջների
բավարարմանը: Այդ թվում նաև՝ 1) հատուկ պլեբեյական մագիստրատու-
րայի՝ ժողովրդական տրիբունատի հաստատմանը, որը կոչված էր պաշտ-
պանելու պլեբեյներին պատրիկների կամայականությունից, 2) պատրիկ-
ներին համահավասար հանրային հողի նվաճմանը, 3) պատրիկական
դատարանների կամայականություններից պաշտպանությանը, 4) պատ-
րիկների և պլեբեյների միջև ամուսնությունների հնարավորությանը, 5)
սկզբից որոշ, իսկ այնուհետև բոլոր պետական պաշտոնները (այդ թվում և
զինվորական) գրավելու իրավունքի ձեռքբերմանը:

Վերջապես մթա. 287թ. վճռված էր, որ պլեբեյական ժողովների որո-
շումները պարտադիր են բոլոր քաղաքացիների և անխտիր բոլոր պետա-
կան ձեռնարկությունների համար: Այդ որոշումները ենթակա չեն սեմառի
կարգի ոչ հաստատմանը, ոչ էլ ստուգմանը: Ազնվականության ծագման

¹Дионисий Галикарнаский о реформе Сервия Туллия, in:u Хрестоматия по
сеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 72-74:

նկատմամբ եղած հարգանքն իսկույն չվերացավ, և պատրիկական ընտանիքները, անկասկած, պահպանեցին առավելությունը: Ըստ ավանդության, Ս.Տուլիոսի ռեֆորմի հետևանքով պլեբեյները մտան «հռոմեական ժողովրդի» կազմի մեջ: Այսպիսով, ստրկատիրական պետականության կազմավորման պրոցեսն ավարտվեց: Տոհմացեղային հարաբերությունների մնացուկները վերացվեցին:

2. ՀՌՈՍԵԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակական կարգը: Մասնավոր սեփականատիրական իրավունքը նշված ժամանակաշրջանում արդեն ձևավորվել էր, չնայած հողը դեռևս պատկանում էր համայնքին: Արհեստներն ու առևտուրը դանդաղ էին զարգանում: Մտրուկի աշխատանքն այնպես չէր շահագործվում, ինչպես հետագայում: Մտրուկը համարվում էր ընտանիքի անդամ: Դասակարգային պայքարը ստրուկների և ստրկատերերի միջև կազմակերպված բնույթ չուներ: Պայքարը սուր էր պատրիկների և պլեբեյների միջև:

Մթա. III դարում ազատ բնակչության կազմում էական փոփոխություններ էին տեղի ունենում: Պատրիկներից շատերը դառնում էին ազնվականներ՝ նոբիլներ: Այդ նույն շրջանում ինքնուրույն խմբի էին դասվում հեծյալները: Չկապորվում էր նաև ֆինանսա-առևտրական դասը:

Պետական կարգը: Տիրերի աջ ափը գրավելով, հռոմեացիները, չնայած անհաջողություններին, համառ պայքար էին մղում ուղջ Իտալիայի նկատմամբ տիրապետություն հաստատելու համար: Եվ դա նրանց հաջողվեց: Երկրորդ լատինական և սամնիտական կռիվների արդյունքում Հռոմն արդեն մթա. IV դ. նվաճեց ողջ Միջին Իտալիան, իսկ հետո՝ մթա. III դ. կեսերին՝ Հարավային Իտալիան:

Այնուամենայնիվ, Հռոմը մնում էր որպես արիստոկրատական հանրապետություն: Հռոմի գլուխ կանգնած էին ցեներալիական կոմիցիաները և պլեբեյական ժողովները, այնուհետև՝ սենատը: Մագիստրատուրաներից, ինչպես և մախիկնում, մնում էին կոնսուլները, պրետորները և ժողովրդական տրիբունները: Դրանք բուլքն էլ ընտրվում էին ժողովրդական ժողովների կողմից մեկ տարի ժամկետով և պատասխանատու էին իրենց գործողությունների համար՝ լիազորությունների ավարտից հետո: Պահպանելով մագիստրատների կոլեգիալության սկզբունքը՝ հռոմեացիներն ամեն տարի ընտրում էին 2 կոնսուլ (հետագայում դրանց թիվն ավելացավ): Պլեբեյներն էլ ընտրում էին ժողովրդական տրիբուններ: Մագիստրատները Վիմյանց գործերին չէին խառնվում, բայց նախապես գործելուց առաջ խորհրդակցում էին միմյանց հետ:

Ի \

Կոնսուլները գրադվում էին քաղաքացիական և ռազմական բնագավառների գլխավոր հարցերով: Պատերազմի ժամանակ նրանցից մեկը մնում էր Հռոմում, իսկ մյուսը գլխավորում էր գոյքը: Ինքնուրույն մագիստրատուրայի նշանակություն ձեռք բերած պրետորները մ.թ.ա. IV դ. գրադվում էին դատական վեճերով: Բայց այդեն մթա. III-II դդ. պրետորները դառնում են իրավունքի մեկնաբաններ և նրա ստեղծողները: Ամեն անգամ պաշտոնին անցնելիս պրետորն էղիկտ էր հրապարակում, սրը ներկայացվում էր ֆորումում՝ ափիճակեցված տախտակի վրա: Պրետորներն էղիկտներով հայտնում էին, թե քաղաքացիական հայցերից որոնք են արժանանում պաշտպանության: Պրետորների շնորհիվ և ժամանակի պատմագրերին համաձայն հռոմեական դատական պրոցեսը դարձավ ֆորմուլյարային (բանաձևային), այսինքն՝ պրետորի ֆորմուլյարով (բանաձևով), կամքով որոշվող:

Ինչ վերաբերում է ժողովրդական (պլեբեյական) տրիբուններին, ապա նրանց խնդիրը սկզբից կայանում էր պլեբեյներին պատրիկական կամայականություններից պաշտպանելու մեջ, բայց ժամանակի ընթացքում, երբ այդ պարտականությունը փաստորեն վերացավ, նրանք իրենց վրա վերցրեցին օրինականության պաշտպանների ֆունկցիան, յուրաքանչյուր վիրավորված քաղաքացու պաշտպանության ֆունկցիան: Այդ ֆունկցիայի իրականացման ժամանակ ժողովրդական տրիբունն իրավունք ուներ արգելք դնել մագիստրատների այն գործողությունների վրա, որոնք նա հակաօրինական էր համարում: Աստիճանաբար ժողովրդական տրիբունների պաշտպաններին սկսեցին հավակնել և պատրիկական քաղաքագետները (ինչպիսիք էին Էրակլոս եղբայրները), քանի որ տրիբուններն օրենսդիր առաջարկներով կարող էին մտնել ժողովրդական ժողովների բոլոր ձևերի մեջ: Հռոմի քաղաքական կյանքում մեծ դեր էր խաղում նաև զինվորների կոլեգիան: Այն ընտրվում էր 5 տարի ժամկետով:

Հետագայում նրանց վստահեցին նաև սենատորների նշանակումը, ինչը պետության քաղաքական համակարգում բարձրացրեց կոլեգիայի դերը: Վերջապես չի կարելի չնշել ցեկզորների այն ֆունկցիան, որը վերաբերում էր բարքերին հետևելուն: Դա արվեց նրա համար, որպեսզի հռոմեական զինվորներին զգուշացնեն չափազանց շքեղությունից և, իհարկե, անբարոյական արարքներից: Հռոմեական երիտասարդության մեջ դաստիարակվող ազնիվ և պայռ պարելու ոճի գաղափարախոսությունն օժանդակեց Հռոմը հզոր կայսրության կենտրոն վերածվելուն:

Մագիստրատները սովորյալում էին, հասարակ: Ոչ սովորական էր համարվում միայն զինվորների (բռնակալի) պաշտոնը, որին, սենատի համաձայնությամբ, նշանակվում էր կոնսուլներից մեկը: Դիկտատորին (բռնա-

կալին) նշանակելու պատճառները կարող էին լինել արտակարգ իրավիճակները, որոնք պահանջում էին արագ, անհետաձգելի, անառարկելի գործողություններ: Դիկտատորի (բռնակալի) կողմից նշանակված անձն ուներ միաժամանակ քաղաքացիական, ռազմական և դատական իշխանություն: Դիկտատորն ուներ օրենսդիր իշխանություն, նրա համար սարսափելի չէին հակազդեցության ոչ մի օրինական մեթոդներ, նույնիսկ ժողովրդական տրիբունների վետոն (արգելքը): Մնացած բոլոր մագիստրատները շարունակում էին գործել, բայց դիկտատորի իշխանության տակ:

Ինչ վերաբերում է «կոլեկտիվ» իշխանության մարմիններին, այս պահի վրանք մի քանիսն էին: Առաջին տեղում էին ցենտուրիական ժողովները: Նրանք իրավունք ունեին ընդունելու կամ չընդունելու օրենսգծերը, որոնք առաջադրված էին մագիստրատներից որևէ մեկի կողմից: Բացի օրենսդրական ֆունկցիաներից, ցենտուրիական ժողովներն ընտրում էին կամ բացառում պաշտոնատար անձանց քեևնաժուներին, որոշում էին պատերազմի և խաղաղության հարցերը, քննում էին խիստ ծանր հանցագործությունները, որոնց համար նախատեսված էր մահապատիժ:

Տրիբունական կոմիցիաները (ժողովները) ունեին նույն իրավասությունը, ինչ և ցենտուրիականները, բայց միայն ցածր դասի մասշտաբով (ընտրում էին ցածր մագիստրատներին, որոշում տուգանքի վերաբերյալ հարցերը և այլն): Ինչքան էլ նշանավոր լինեին այս ժողովները, նրանք կանոնավորված չէին և հավաքվում էին մագիստրատներից մեկի կամքով (կոնսուլի, պրետորի, ժողովրդական տրիբունի, գլխավոր քրմի): Նրանց որոշումները հաճախ կանխորոշված էին մագիստրատների կողմից:

Սենատ: Առաջացել էր դեռևս հռոմեական թագավորների օրոք՝ իբրև պատրիկական խորհրդատվական մարմին, և ուներ մեծ իշխանություն: Անցումը հանրապետության ուժեղացրեց սենատի ազդեցությունը՝ որպես մշակ մշտական սահմանադրական իշխանության մարմնի, որն արտահայտում էր պատրիկական վերնախավի կամքը: Սենատը իրավիքներ էր մագիստրատներից մեկի կողմից, որն էլ հայտնում էր ներկաներին գումարման պատճառը, քննարկման առարկան: Սենատորների ճառերն ու որոշումները գրանցվում էին հատուկ գրքի մեջ: Եկզբից սենատն ուներ կոմիցիաների որոշումներն ընդունելու կամ մերժելու իրավունքը: Բայց արդեն մթա. IV դարից սենատը սկսեց նախապես իր համաձայնությունը կամ անհամաձայնությունն արտահայտել օրինագծերի նկատմամբ: Առանց սենատի համաձայնության չէին կարող ծախսեր նախատեսվել պետական գանձարանից, բացառությամբ այն ծախսերի, որոնք պահանջում էին կոնսուլները: Սենատի կարծիքն այս դեպքում էլ ձևականություն չէր, քանի որ

¹ Полибий о Римской Республике, в кн. Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 75-76:

նրա հետևում կանգնած էին մագիստրատները և համապատասխան կոմի-
ցիաները:

Բայց սենատի գործադիր իշխանություն չունեի և այդ առումով պետք
է դիմել մագիստրատների ժողովրդին: Սենատի հատուկ իրավասությա-
նը վերաբերում էին առաջին հերթին միազգային հարցերը, պաշտամունքի
և ֆինանսական հարցերը, պատերազմի հայտարարումը և վարումը, ար-
տաքին քաղաքականությունը և այլն:

Սենատի իշխանության գագաթնակետը համապատասխանում է մթա.
300-135 թթ.: Նրա դերի անկումը սկսվեց քաղաքացիական պատերազմնե-
լի շրջանում (մթա. II-III), երբ պետական գործերը վճռված էին առանձին
անձանց կողմից (ինչպիսիք էին Կեսարը, Սուլլան, Մարիոսը): Կայսրու-
թյան շրջանում, արտաքին վեհությունը պահպանելով, սենատը կորցրեց
իր իշխանությունը հոգուտ կայսեր: Երբ Հռոմի լայն զավթողական քաղա-
քականության շնորհիվ բանակը դարձավ քաղաքականության մշտական
գործիչը, վարձու ուժը, որը պահպանվում էր զավթված ժողովրդների հաշ-
վին, ստեղծվեցին լավագույն պայմանները՝ միապետական կառավարման
անցնելու համար:

3. ՀՌՈՍԵԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԱՆՑՈՒՄԸ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Մթա. II դ. Կարթագենում տարած հաղթանակից հետո Հռոմն իշխում
էր բոլոր այն հողերի վրա, որոնք ողողված էին Միջերկրական ծովի ջրե-
րով: Այդ հողերը դարձան ստրուկների ձեռք բերման մոր աղբյուրը, որոնք
լայն կիրառություն էին գտնում լատիֆունդիաներում (խոշոր կալվածք)
և որ Ե հիմնականության մոտ: Լատիֆունդիաների աճին համընկնում
էր հռոմեական գյուղացիության հողազրկումը և սնանկացումը:
Խոշոր և մանր հողատիրության պայքարի վերջնակետը եղան Գյուկքոս
եղբայրների ռեֆորմները:

Մթա. 133թ. տրիբուն Տիբերիոս Գյուկքոսը՝ ծագումով արևատկրատ,
ժողովրդական ժողովին օրենք առաջարկեց, որը սահմանում էր մասնավոր
անձանց ձեռքում գտնվող հողատիրության առավելագույն չափը ընտա-
նիքին՝ 1000 յուգեր (250հա): Այսպես ստեղծեց հողային ֆոնդը: Բայց հաղը
դեռևս ըսվարար չէր: Գյուկքոսիները անասուն, սերմեր գնելու համար փո-
ղի կարիք էին զգում:

Խոշոր հողատերերը (նշանակում է և սենատորները) խիստ գայրացած

և դժգոհ էին այդ նախագծից: Տիրերիտսը երեք անգամ խախտեց հռոմեական սահմանադրությունը՝ 1) պահանջեց իր կոլեգայի՝ Օկտավիանոսի պաշտոնազրկումը, որը դիմադրում էր ռեֆորմին (տրիբունին քվեարկեցին Տիրերիտսի առաջարկի օգտին), 2) առաջարկեց ոչ թե սենատը, այլ ժողովրդական ժողովը որոշի սուբսիդիաների վերաբերյալ հարցը, 3) ձգտում էր հասնել նոր ժամկետով ընտրմանը, որը մինչ այդ երբեք չէր արվել: Հռոմեական ռեակցիոն օլիգարխիան դիմեց ծայրահեղ միջոցին՝ ընտրությունները կանխելու համար մթա. 133թ. տրիբուն Տիրերիտս Գրակոսը սպանվեց՝ Ռեֆորմի իրագործումը փաստորեն կանգնեցվեց: Բայց մթա. 121թ. Տիրերիտսի եղբայր Գայոսը (նույնպես ժողովրդական տրիբունի դեբուտ) շարունակեց եղբոր գործը: Երա դեմ կրկին հանդես եկան նույն ուժերը, առաջին հերթին՝ սենատը: Արդեն հանրապետության վերջում սենատն իրեն իրավունք վերապահեց ծայրահեղ իրադրություններում հրատարակել սենատուսկոսուլտում ուլտիմում, որը լիազորում էր բարձրագույն մագիստրատներին դիմելու ցանկացած միջոցների, այդ թվում մակ ոչ սահմանադրական, որպեսզի կանխեն վտանգը և տիրեն դրությամբ: Այդ միջոցի կիրառումը հանգեցրեց Գայոս Գրակոսի սպանությանը և հռոմեական գյուղացիության օգտին ազրարային ռեֆորմների վճռական մերժմանը: Որպեսզի ընդմիջտ կանխվեն հողային ռեֆորմները, մթա. III դ. հրատարակվում է Տրիբի օրենքը, ըստ որի ցանկացած անձ, ով ունի ոչ ավելի, քան 30 յուգեր վարելահող (8,5 հա) կարող է այդ հողը համարել մասնավոր սեփականություն: Այդպես վերջ դրվեց հնամյա «ազեր պուբլիկուսին»՝ հասարակական հողին:

Սուլլայի դիկտատուրան: Մթա. I դ. Հռոմը ներքաշվեց ծանր դաշնակցային պատերազմի մեջ, որի արդյունքը եղավ ողջ Իտալիայի բնակչությանը հռոմեական քաղաքացիություն շնորհելը: Դաշնակցային պատերազմն իրական խաղաղություն չբերեց: Հասել էր անձնական իշխանության, դիկտատուրաների շրջանը: Դիկտատուրաների մեջ առաջինը Սուլլան էր, որն իրեն նվիրված բանակի վրա հենվելով՝ Հռոմում հաստատեց միանձնյա իշխանության և դիկտատուրայի ռեժիմը: Դա անժամկետ դիկտատուրա էր և դրանով իսկ արդեն տարբերվում էր վերը նշված հանրապետության դիկտատուրաներից: Բացի դրանից, Սուլլան իրեն վերապահեց գործադիր ֆունկցիաներ իրականացնելու իրավունք: Նա նոր իրավունքներ վերապահեց սենատին և խիստ սահմանափակեց ժողովրդական ժողովների լիազորությունները: Սուլլայի դիկտատուրան նշանակում էր հռոմեական պատմության նոր դարաշրջանի սկիզբը և ամենից առաջ հանրապետության ավարտը:

Հուլիոս Կեսարի դիկտատուրան: Մթա. 59թ. Հռոմի կոնսուլ ընտրված

Հուլիոս Կեսարը, գլխավորելով հսկայականատորական խմբավորումը, հուլի վերաբերյալ երկու օրենք անցկացրեց կոմիցիաներով ուղիղ բռնություն իրականացնելով սենատի նկատմամբ: Նա մերժեց իբրև ոչ էական նշանակություն ունեցող ժողովրդական տրիբունների վետոն՝ արգելքը: Դրա հետ մեկտեղ Կեսարն իր կողմը գրավեց ոչ միայն հռոմեական ժողովրդի լայն խավերին, այլև պրովինցիաների բնակիչներին:

Մթա. 46թ. Հուլիոս Կեսարը, իր վերջին հսկառակություններին ոչնչացնելով, հռչակվեց դիկտատոր 10-ամյա ժամկետով, իսկ մթա. 44թ. ալլոեն ցմահ:

Կեսարական դիկտատուրայի առանձնահատկությունն այն է, որ նա իր ձեռքում միավորեց ոչ միայն կոնսուլական և տրիբունական իշխանությունները, այլև ցենզորական և բարձրագույն քրմական իշխանությունները: Իբրև բանակի հրամանատար՝ նա ստացավ կայսեր տիտղոսը: Կեսարից կախվածության մեջ ընկած կոմիցիաները, չնայած շարունակում էին գոյություն ունենալ, բայց կայսեր հրամանով էին առաջնորդվում: Կեսարը լիազորություն ստացավ իր հայեցողությամբ տնօրինելու բանակը և պրովինցիաները: Նա էր մագիստրատների թեկնածուների կեսից ավելին երաշխավորում և առաջինը սենատում քվեարկում: Կեսարը փառքի գազաթնակետին հռչակվեց «հայրենիքի հայր»: Կեսարի ժամանակ ստեղծված պրինցիպատ կառավարման ձևն իր հետագա զարգացումը ստացավ նրա հետնորդի՝ Օկտավիանոս Օգոստոսի օրոք (մթա.27-12թթ.):

4. ՀՌՈՍԸ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (Մթա. 27թ. - մթ. 476թ.)

Ա) Պրինցիպատ (մթա. 27թ. - մթ. 284թթ.: Առաջացել է «պրինցեպս սենատուս»՝ «առաջին սենատոր», բառերից): Այս ժամանակաշրջանում հասարակության հիմնական դասակարգերն էին ստրկատերերը և ստրուկները: Ստրկատերերի ճեջ ուլույն տեղ ուներ նոբիլները՝ դասը, որը կազմավորվել էր դեռևս մթա. IV-III դդ. պատրիկական-պլեբեյական ազնվականությունից: Կայսրության օրոք նոբիլները դառնում են տիրապետող դաս: Նրանց տնտեսական հիմքը խաշոր հողային սեփականությունն էր: Նրանք էին զբաղեցնում բարձր պաշտոնները:

Քաղաքների կառավարումը գտնվում էր դեկուրիոնների ձեռքում: Որպես կանոն, նրանք համարվում էին միջին հողատերեր:

Սոցիալական դիրքով ամենաթափաքածի աստիճանը զբաղեցնում էին ստ-

ուկները:

Կայտարարության շրջանում ազատ գյուղացին վերածվեց վարձակալի, որը կոչվեց կոլոն: Կոլոնները անբացումը հողին ցմահ էր և ժառանգական: Կարող ենք նշել, որ դեռևս ստրկատիրական շրջանում Հռոմում ֆեոդալական կարգերի ձևավորման համար ստեղծվեցին որոշակի պայմաններ:

Պետական կարգը: Նշված ժամանակաշրջանում երկրի պետական կյանքում դեռևս շարունակում էին որոշակի դեր խաղալ հանրապետության շրջանում ստեղծված մարմինները՝ սենատը, ժողովրդական ժողովները, մագիստրատուրան: Առաջվա մնան ընտրվում էին կոնսուլներն ու պրետորները: Սակայն, աստիճանաբար նրանց լիազորությունները սահմանափակվեցին, հետագայում նրանց գործունեությունն ընդհանրապես դադարեց:

Պրինցիպատի շրջանում իշխանության բարձրագույն մարմիններն էին Սենատը և Պրինցեպսը: Երկրի կառավարումն իրականացվում էր նրանց գործունեությամբ: Պրինցեպսն ուներ օրենսդրական նախաձեռնության իրավունք, ընդունում էր նորմատիվ իրավական ակտեր: Նա իրականացնում էր երկրի արտաքին ու ներքին քաղաքականությունը, լուծում պատերազմի և խաղաղության վերաբերյալ հարցերը և այլն: Նա բանակի՝ զինավոր հրամանատարն էր:

Պրինցեպսը մագիստրատների ընդունած որոշումների նկատմամբ ուներ ~~վետոյի~~ իրավունք:

Նրան կից ստեղծվել էր խորհուրդ, որը ղեկավարում էր բանակը:

Սենատը դարձավ համակայսերական ինստիտուտ: Բայց դրան զուգահեռ, նրա դերը նվազեց, իսկ լիազորությունները սահմանափակվեցին: Նրա գործունեությանը հետևում էր Պրինցեպսը: Հասարակության մեջ ձևավորվում է կարծիք, ըստ որի Պրինցեպսի ընտրությունը պատկանում էր սենատին, բայց դա ձևական բնույթ էր կրում: Շատ դեպքերում հարցը լուծում էր բանակը, որը դարձավ մշտական: Զինվորները 30 տարի ծառայում էին՝ ստանալով բարձր ռոճիկ, իսկ ծառայության ավարտից հետո ստանում էին ~~խորհուրդ~~: Բանակի հրամանատարական կազմը համալրվում էր նոբիլների դասից և սենատորներից:

Պրինցիպատի շրջանում կառավարող մարմինների գործունեությունն ավելի է խստացվում:

(Բ) ~~Դոմինատ~~ (մթ. 284-476թթ.): Մթ. 284 թ. Հռոմում հաստատվում է անսահմանափակ միապետության ռեժիմը՝ դոմինատը («դոմինուս - տեր» բառից): Հանրապետական մարմինները լիովին վերանում են: Կայսրն իշխանությունն իրականացնում էր գերատեսչությունների միջոցով, որոնցից կարևորագույնն էր կայսերը կից ստեղծված պետական խորհուրդը: Այն

զբաղված էր քաղաքական հիմնական հարցերի քննարկմամբ, օրինագծերի մշակմամբ, ֆինանսական գործունեությամբ: Համարվում էր դատական բարձրագույն մարմինը:

Առանձնահատուկ տեղ ուներ գինվորական գերատեսչությունը, որի ղեկավարները նշանակվում էին կայսեր կողմից:

Պետական պաշտոնյաներից լայն լիազորություններ ուներ կայսերական գրասենյակի պետը:

Դոմինատի շրջանում քաղաքական ռեժիմն ավելի է խստանում:

Հռոմի աշխարհակալ պետությունը 395թ. բաժանվում է երկու մասի՝ Արևմտյան և Արևելյան կայսրությունների: Յուրաքանչյուր մասում ձևավորվեց ինքնուրույն բյուրոկրատական պետական ապարատ: Արևմտյան Հռոմեական կայսրությունը գոյատևեց մինչև 476թ., իսկ Արևելյան Հռոմեական կայսրության տարածքում ձևավորվեց նոր պետություն՝ Բյուզանդիան, որը 1453թ. նվաճվեց Օսմանյան Թուրքիայի կողմից:

5. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

57
Աղբյուրները: Հռոմի ստրկատիրական պետության առաջին շրջանի իրավունքի հիմնական աղբյուրը սովորաբային իրավունքն էր: Այնուհետև հայտնի դարձավ 12 սոլոսակների օրենքը, որը մշակել է 12 հոգուց բաղկացած հանձնաժողովը մթա. 451-450թթ.: Այդ անվանումն օրենքը ստացավ այն բանից, որ գրված էր 12 տախտակ սոլոսակների վրա, որոնք Հռոմի գլխավոր հրամայարակում, նրա քաղաքական կենտրոնում՝ ֆորումում, դրվել էին համընդհանուր դիտման: Օրենքի բնորոշ գիծն եղել է խիստ ֆորմալիզմը: 12 աղյուսակների օրենքը կարգավորում էր ամուսնաընտանեկան և ժառանգական հարաբերությունների ոլորտը, պայուսակում էր քրեա-իրավական, ինչպես նաև ժողովրդության մյուսամասնագրերին վերաբերող մոլորը: Այն պետական իրավունքին վերաբերող նյութեր չէր պայուսակում:

Իրավունքի կարևոր աղբյուր էին էյլիկոները, որոնք արտացալում էին նոր տնտեսական հարաբերությունները:

Ժողովրդական ժողովն ընդունում էր պետա-իրավական նշանակություն ունեցող ակտեր, որոնք, ըստ էության, համալրեցին իրավունքի աղբյուրների շարքը:

Կայսրության շրջանում պրինցեպսը հրատարակում էր ակտեր, որոնք

օրենքի ուժ ունեին: Դրանք բաժանվում էին չորս տեսակի՝ 1) էղիկոներ՝ կայսեր որոշումներ, որոնք համընդհանուր բնույթ էին կրում, 2) մանդատներ՝ աստիճանավորներին և մագնատներին տրված հրահանգներ, 3) դեկրետներ՝ դատավճիռներ, 4) կայսեր կողմից տրված պարզաբանումներ:

Հռոմի իրավունքին հայտնի է մահ Հուստինիանոս Կեսարի կանձնաբարությանը կազմված օրենքների ժողովածուն:

Հռոմեական իրավաբաններն իրավունքը բաժանում էին երկու մասի՝ մասնավորի և հանրայինի:

Սեփականության իրավունք: Հռոմեական իրավունքում սեփականատիրական իրավունքը պետության տարբեր շրջաններում արտահայտվել է տարբեր ձևով: Հայտնի է, որ Հռոմի Հանրապետության առաջին դարերում հողը՝ քաղաքացիների գլխավոր սեփականությունը, գտնվում էր ընդհանուր սեփականության ներքո և բնականաբար կոչվում էր հասարակական հող՝ ազեր պուբլիկուս: Ոռոգելի հողը քիչ էր, և գլխավոր հարստությունը համարվում էր անասունը: Այստեղից էլ բխում է հարևան ցեղերի նկատմամբ եղած անգրեսիայի գլխավոր պատճառը, որը կապված է նվաճողների միջև հողի բաժանման սկզբունքի հետ: Հրապարակային սկզբունքը հաճախ իրավական հիմք է հանդիսանում հողի արդարացի վերաբաժանման համար: Հռոմեական տիրապետության վերաբերյալ վաղեմությունը ապահովել էր երկու տարի, իսկ այլ իրերի վերաբերյալ՝ մեկ տարի¹:

Մթա. 367թ. Օրենքն առանձին անձանց արգելում էր ձեռք բերել 125 հա-ից ավելի պետական հող և հասարակական արտառավայրերում արածեցնել 100 գլխից ավել խոշոր եղջերավոր և 500 գլխից ավել մանր եղջերավոր անասուններ:

Հռոմեական սեփականության իրավունքի գլխավոր հատկանիշն իրերի ստորաբաժանումն է երկու տիպի՝ ռես մանցիպի (res mancipi) և ռես նեկ մանցիպի (res neq mancipi): Առաջին տիպին էին պատկանում ստրուկները, եզները, ձիերը, ջորիները, էշերը և հողերը, հետագայում մահ՛ իտալական հողի վրա եղած կառույցները²: Երկրորդ տիպին էին պատկանում մնացած բոլոր իրերը:

Պարտավորական իրավունք: Հռոմեական իրավունքին հայտնի են գույք ձեռք բերելու մի քանի ձևեր: Մովորաբար գործարքները կատարվում էին հրապարակայնորեն, բանավոր: Որոշ պայմանների խախտման դեպքում այդ գործարքները դաճում էին անվավեր և առաջացնում իրավական հետևանքներ: Գործարքների հայտնի ձևերից էին մանցիպացիան, նեքսու-

¹ Из законов XII Таблиц, таб. 6, стр. 3, в кн. Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 82:

² Из институции Гая, книга 2, стр. 14а-14в, в кн. Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 99:

մը և դելիկտը:

Մանցիպացիան («մանուս-ձեռք» բառից) վառ պատկերացում է տալիս սեփականության մասնավոր ձևի մասին: Գույք ձեռք բերողը ձեռքը դնելով նրա վրա՝ առում էր. «Ես հաստատում եմ, որ այս իրն ինձ պատկանում է կվիրիտների իրավունքով» (այսինքն՝ աստվածացված Հռոմուլոս Կվիրինի ժառանգորդների իրավունքով): Մանցիպացիան ձեռք բերողին տալիս էր անվիճելի իրավունք իրի սեփականության վերաբերյալ: Փողի վճարումն առանց մանցիպացիայի բավարար չէր սեփականության իրավունքի առաջացման համար: Անհրաժեշտ է նշել, որ մանցիպացված իրի փոխանցումը տեղի էր ունենում հանդիսավոր ձևով՝ 5 վկաների ներկայությամբ, կշեքով ու պղնձով և այլն: Վերջինը վկայում է, որ մանցիպացիայի ծիսակատարությունն առաջացել է մինչև դրոշմային մետաղադրամը՝ ասսը: Չնականությունները ծառայում էին գործարքի հիշմանը, եթե սեփականության իրավունքի հետ կապված ապագայում վեճ էր առաջանում: Մնացած բոլոր իրերը, նույնիսկ քանկարժեք, սեփականություն էին դառնում սովորական տրադիցիաների միջոցով, այսինքն՝ առանց ձևական հստորդման, համաձայնագրում (առուծախի, փոխանակման, նվիրատվության և այլն) եղած պայմաններով: Մանցիպացիան պահանջվում էր նաև հին ստրուկը, հին ձին ձեռքիցձեռք անցնելու ժամանակ:

12 աղյուսակների օրենքը, բացի սովորական փոխառության, գրավադրման տոկոսների հետ կապված օպերացիաներից, գործողություններից, նշում է «նեկտում» -ը, այսինքն՝ պարտապանի ինքնագրավադրումը: Վճարման օրինական ժամկետի ավարտվելուց հետո վարկատուն կարող էր ձերբակալել պարտապանին և բանտարկել: Ամսվա ընթացքում երեք անգամ, շուկայական օրերին, վարկատուն պարտապանին շուկան էր տանում՝ հույսալից, որ կգտնվեն հարազատներ, մոտիկներ, կարեկից մարտիկ, որոնք համաձայն կլինեն վճարել պարտքը և ազատել պարտապանին գեյությունից: Եթե ոչ ոք չէր գնում, պարտատերը կարող էր նրան սպանել: Փոխառության այս ձևն էլ 12 աղյուսակների օրենքում կոչվում է «նեկտում» պարտքի հանձնառություն անձնական ազատության երաշխիքով:

Միայն մրա.326թ. Պետիլիտսի օրենքով փոխառության պայմանագիրը վերափոխվեց, և պարտքի ստրկությունը վերացվեց: Այդ ժամանակվանից հետո պարտապանը պատասխանատու էր վարկատուի առջև իր գույքի ասիստաներում:

Բացի պայմանագրային պարտավորություններից, 12 աղյուսակների օրենքը հիշատակում է և այնպիսի պարտավորություններ, որոնք առաջա-

1. Из законов XII Таблиц, таб. 3, Сб№. 3, п»А Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, із 79-80:

նում են վնասի պատճառման հետևանքով էրթիանքի ակտիվացումը (դեղիկտ): Օրենքում մանրամասն նշված են նաև այլ խախտումների համար նախատեսված պատիժները:

Ամուսնա-ընտանեկան և ժառանգական իրավունք: Ամուսնա-ընտանեկան հարաբերությունները կարգավորող նորմերը վկայում են, որ հռոմեական ընտանիքը խիստ նահապետական էր, այսինքն՝ այն գտնվում էր տանտիրոջ անսահմանափակ իշխանության ներքո: Տանտեր կարող էր լինել նահապետը: Նահապետական ընտանիքի անդամներն իրար նկատմամբ ազնատներ էին:

Կոզնատական ազգակցությունն առաջացել է մեկ այլ ընտանիք ազնատի անցումով: Այսպես, տանտիրոջ ամուսնացած դուստրն ընկնում էր ամուսնու կամ սկեսրոջ (եթե այդպիսին կար) իշխանության տակ և դառնում էր կոզնատուհի իր արյունակից ընտանիքի հանդեպ: Կոզնատ էր դառնում նաև ընտանիքից բաժանված որդին: Եվ, ընդհակառակը, որդեգրված ու ընտանիք ընդունված երեխան ընտանիքի նկատմամբ դառնում էր ազնատ՝ դրա հետ կապված բոլոր իրավունքներով, այդ թվում՝ նաև ժառանգման: Ազնատական ազգակցությունն ուներ իր գերազանցությունը կոզնատական արյունակից ազգակցության նկատմամբ, որում չի կարելի չտեսնել արյունակցական հարաբերությունների վերապրուկը:

Վաղուց ի վեր Հռոմում գոյություն ուներ ամուսնության 3 ձև: Դրանցից երկուսը հնագույն են, իսկ մյուսը՝ համեմատաբար նոր: Հնագույնները կատարվում էին հանդիսավոր պայմաններում, և հարսնացուին հանձնում էին ամուսնու անսահմանափակ իշխանությանը: Առաջին դեպքում ամուսնությունը կատարվում էր կրոնական ձևով, քրմերի ներկայությամբ՝ **հյատուկ** պատրաստված բիթներ ուտելով և կնոջ հանդիսավոր երդումով (ամեն ինչն է հետևելով ամուսնուն)՝ «Որտեղ որ էս Գայոս, այնտեղ ինձ կգտնես»: Ամուսնության II ձևը **հարսնացուի գնումն էր**:

Բայց 12 աղյուսակների օրենքին ռայտնի է նաև ամուսնության ոչ ֆորմալ ձևը՝ «սինե մանու», այսինքն՝ ամուսնություն «առանց ամուսնու իշխանության»: Հենց այդ ամուսնության ձևում կինը գտավ բավականաչափ ազատություն, այդ թվում նաև ամուսնալուծության իրավունքը, որը նա չուներ: Այդ դեպքում կինը ետ էր վերցնում իր օժիտը: Ժամանակի ընթացքում «Սինե մանու» դարձավ ամուսնության ամենատարածված ձևը: «Սինե մանուի» առանձնահատկությունն այն է, որ այն պետք է վերականգնվեր յուրաքանչյուր տարի: Դրա համար կինն ամուսնու տնից գնում էր ծնողների կամ ընկերների մոտ: Ընտանիքի ծախսերը դրվում էին ամուսնու վրա: Ամուսնալուծությունը տղամարդու համար ամուսնության բոլոր ձևերում էլ մատչելի էր, իսկ կնոջ համար՝ միայն «սինե մանուի» դեպքում: Տանտիրոջ

մահից հետո ընտանիքի գույքը անցնում էր ազնատներին, իսկ եթե հանգուցյալը կտակ էր թողնում, անհրաժեշտ էր կույտրեն հետևել կտակի բովանդակությանը: Հանգուցյալի այրին ստանում էր գույքի որոշ մասը իր և մանկահասակ երեխաների ապրուստի համար: Ժամանցորդները կախող էին չքաժանել գույքը և տնտեսությունը վարել միասին, ինչպես հոր կենդանության օրոք:

Կայսրության շրջանում ընդունվում են մի շարք օրենքներ, որանք նպատակ ունեին կայունացնել ընտանիքը: Բրեւական պատասխանատվության են ենթարկվում սմբանուն դավաճանող կամայք: Ամուսնության մեջ չգտնվող անձանց արգելվեց կտակով ժառանգություն ստանալ, իսկ երեխաներ չունեցող ամուսիններին թույլատրվեց այն ստանալ կիսով չափ: Ամուրիների վրա դրվեցին մեծ չափերի հասնող հարկեր:

Սահմանված ամուսնական տարիքն էր տղամարդկանց համար՝ 26-60 տարեկանը, կանանց համար՝ 20-50 տարեկանը:

Համատեղ կյանքի ծախսերն ընկնում էին ամուսնու վրա, բայց նա իրավունք ուներ տնօրինելու կնոջ գույքից ստացվող եկամուտը:

Կայսրության շրջանում փոխվեց ման երեխաների վիճակը: Հոր իշխանությունը նրանց նկատմամբ թուլացավ: Երեխաների սպանությունը դիտվում էր որպես հանցագործություն: Ամօրրնի երեխաների ոլորեզրման իրավունքը սահմանափակվեց:

Հռոմեական իրավունքին հայտնի է ժառանգումն ըստ օրենքի և ըստ կտակի: Ըստ կտակի ժառանգման դեպքում պահպանվում էր պարտադիր փայաքայմնի սկզբունքը, ըստ որի հանգուցյալի ամենամոտիկ հարազատը (եթե նրա անունը նշված չէր կտակում) ստանալու էր գույքի 1/4 մասը (այն մասը, որը նրան կհասներ կտակի բացակայության դեպքում):

Քրեական իրավունք և դատավարություն: Հռոմեական իրավունքում մեծ տեղ է հատկացված քրեական իրավունքին: Քրեա- իրավական նորմերը հանցագործությունը դիտել են վտանգավոր երևույթ և նախատեսել են խիստ պատիժներ այն կատարելու դեպքում: Հանցագործություններն ուղղված էին նկետության, նրա կարգի ու իշխող դասակարգի դեմ: Քրեական պատասխանատվության էին ենթարկում ոչ միայն դատարանները, այլև մագիստրատները և բարձրագույն պաշտոնյաները: Մտրուկին սպանելը դիտվում էր որպես նրա տիրաջր վերաբերող հարց:

Հռոմեական իրավաբանները տարբերակում էին անգգուշությամբ և դիտավորությամբ կատարված հանցագործությունները և պատիժը նշանակելիս հաշվի էին առնում այդ հանգամանքը: Տարածված էին պետություն, ամճի և գույքի լին ոլորված հանցագործությունները:

Տարբեր հանցագործությունների դեպքում նախատեսված էին տարբեր պատիժներ: Ընդհանրապես, պատիժը նշանակելիս հաշվի էր առնվում դա

սակայրգային պատկանելությունը: Պատժի տեսակներն էին. 1) մահապատիժը, որն իրականացվում էր տարբեր եղանակներով (կրակի վրա այրելու, շնրչարելու և այլն): Հայրասպանության դեպքում հանցագործին և նրան օժանդակողներին շան, աքաղաղի օձի հետ մտցնում էին պարկի մեջ և գցում ծովը: Օրենքը մահապատիժ էր նախատեսում հատկապես հայրենիքի դավաճանների և նրանց նկատմամբ, ովքեր «բշնամուն կմատնեն հոռմեական քաղաքացուն», 2) մարմնական պատիժները, որոնք իրականացվում էին ստրուկների և ցածր դասին պատկանողների նկատմամբ, 3) տուգանքները: Կայսրության շրջանում լայն տարածում գտավ նաև բռնագրավումը՝ հօգուտ պետական գանձարանի, 4) Արտաքսումը և արքորը: Եթե անձը դատապարտվում էր ցմահ արքորի, նա դառնում էր պետական ստրուկ:

Դատական պրոցեսը: Հռոմի պետության և իրավունքի պատմության հետագա ուսումնասիրության համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նշված ժամանակաշրջանի հռոմեական դատական պրոցեսին (լեգիսակցիոն): Այդ պրոցեսը բաղկացած է 2 փուլից: Առաջինը կոչվում էր ինյուրե, երկրորդը՝ ինյուդիցի: Առաջինը խիստ ձևական էր, իսկ երկրորդը բնութագրվում էր ազատ ընթացակարգով: Առաջին փուլում հայցվորը և պատասխանողը ներկայանում էին մագիստրատին նշանակված օրը: Տվյալ դեպքերի համար մագիստրատը պրետորն էր, որը երդումների արտասանումից հետո նշանակում էր դատի օրը և գրավի գումարը: Պրոցեսի երկրորդ փուլի համար պրետորը նշանակում էր դատավորին (սենատով հաստատված թեկնածուներից մեկին), դատի օրը և ստիպում հնազանդվել դատարանի որոշմանը: Այստեղ լեգիսակցիոն պրոցեսի առաջին փուլն ավարտվում է: Երկրորդ փուլում դատավորը պետք է լսեր 2 կոդեքսին, վկաներին, հետազոտեր ներկայացված ապացույցները, կայացներ որոշում: Այն վերջնական էր և ենթակա չէր բեկանման: Ժամանակի ընթացքում լեգիսակցիոն պրոցեսը փոխարինվում է պարզ, ոչ ձևական պրոցեսով, որտեղ որոշիչ դերը պատկանում էր պրետորին:

Կայսրության շրջանում արմատական փոփոխություններ են տեղի ունենում դատական համակարգի կառուցվածքում և դատավարության մեջ: Զրեական և քաղաքացիական գործերը քննվում էին առանձին:

Ժողովրդական ժողովները, որպես դատական ատյան, կորցնում էին իրենց նշանակությունը: Կոլեգիալ դատարաններին փոխարինում են միանձնյա դատարանները:

Դատարանը և վարչական ապարատը դարձան անբաժանելի:

Չկար նախաքննության և դատաքննության բաժանում: Դատավորն ինքն էր կանադորում քննությունը, հանդես գալիս որպես մեղադրող, կայաց-

¹ Из законов XII Таблиц, таб. 9, հոդ. 5, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 87:

նում դատավճիռներ:

Ապագույցներ կորզելու համար կիրառվում էր ծեծը: Բաց հրապարակային դատավարությանը փոխարինեց խիստ գաղտնի, փակ դատավարությունը: Դրա հետևանքով լայնորեն տարածվեցին մատնությունները: Մանկիչները դարձան անվտանգ և խրախուսվող:

Դատական համակարգում բարձրագույն ատյանը կայսերական դատարանն էր:



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 3

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

/Ընդհանուր բնութագիրը/

61 63

Ստրկատիրական տիպի պետությանը և իրավունքին որպես ֆեոդալական (ավատատիրական) հասարակական-տնտեսական ֆորմացիայի բաղադրիչ մաս, հաջորդեց ֆեոդալական տիպի պետությունը և իրավունքը:

Ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիան պատմականորեն հանդես է գալիս որպես երկրորդ դասակարգային ֆորմացիա: Դրա առաջացումը մարդկային հասարակության զարգացման օրինաչափ արդյունքն էր, քանի որ այն ծագել և ձևավորվել է արտադրողական ուժերի ավելի զարգացած մակարդակի վրա:

Ֆեոդալական կարգի (ինչպես նաև ստրկատիրական կարգի) արտադրության հիմնական միջոցը հողն է:

Ի տարբերություն ստրկատիրական կարգի, երբ նյութական բարիքների ստեղծողը ստրուկներն էին, որոնք ստրկատերերի սեփականությունն էին և շահագրգռված չէին իրենց աշխատանքի արդյունքներով, ֆեոդալիզմի հիմնական արտադրողական ուժը ֆեոդալական (ավատատիրական) կախման մեջ գտնվող գյուղացիներն էին: Չունենալով սեփական հող՝ նրանք ունեին տուն, գյուղատնտեսական շինություններ, աշխատանքի գործիքներ: Դրանք նպաստում էին գյուղացիների իրենց աշխատանքի արդյունքներով շահագրգռվածությանը:

Հողի ֆեոդալական (ավատատիրական) սեփականությունը կազմում էր ֆեոդալներից գյուղացիների կախման տնտեսական հիմքը: Բայց որպեսզի ինքնուրույն տնտեսություն վայող գյուղացիներին հարկադրեին ֆեոդալներին տալ հավելյալ արդյունքի մի մասը, անհրաժեշտություն ա-

ուաջացավ տնտեսական հարկադրանքի լրացնել «արտատնտեսական» հարկադրանքով:

Ֆեոդալական սեփականության յուրացման տնտեսական ձևը ֆեոդալական (ավատատիրական) ռենտան էր, որն ուներ երեք հիմնական ձև՝

1. աշխատավճար ռենտա (պարտադիր աշխատանք ֆեոդալի համար, կոռ ու բեգար), 2. քնառենտա (ֆեոդալին գյուղատնտեսական արտադրանքի որոշակի տեսակների վճարման տեսքով), 3. յղամական ռենտա՝ յղամական վճարման տեսքով (յղամական հողատուրք):

Ֆեոդալական շահագործմանը ենթարկվում էին ոչ միայն գյուղացիները, այլև այն արևեստավորները, որոնք ապրում էին ֆեոդալներին պատկանող հողերի վրա գտնվող քաղաքներում:

Պատմականորեն ֆեոդալիզմն առաջացել է երկու հիմնական ճանապարհներով՝ 1) ստրկատիրական կարգի քայքայման հետևանքով և նրա ընդերքում ֆեոդալական արտադրական հարաբերությունների առաջացման ճանապարհով, որոնք աստիճանաբար վերածվում են տիրոջ արտադրական հարաբերությունները (ինչպես տեղի ունեցավ ստրկատիրական կարգերի ժամանակ) և 2) նախնադարյան համայնակարգի քայքայման, նրա ընդերքում ստրկատիրական և ֆեոդալական կացութաձևերի առաջացման ու ֆեոդալական հարաբերությունների հանրանակի հետևանքով, որոնք վերածվում են տիրոջ արտադրական հարաբերությունների (օր. արևելյան և արևմտյան երկրներում): Եվրոպայի ժողովուրդներն անցան ֆեոդալիզմի՝ ետևում թողնելով ստրկատիրական կարգը:

Ֆեոդալիզմի առաջացման ճանապարհները թեև բազմազան էին, սակայն այդ գործընթացի բովանդակությունն ամենուրեք նույնն էր հանդիսանում:

Նախ տեղի է ունենում գյուղական համայնքի քայքայում և համայնական սեփականությունը, ինչպես նաև նրանցից առանձնացած անհատական մասնավոր հողի սեփականությունը, անցնում են ֆեոդալական աշխարհիկ և հոգևոր ազնվականության վերնախավին: Առաջանում է խոշոր հողատիրություն, և ձևավորվում է ֆեոդալների դասակարգը:

Երկրորդ՝ համայնքի անդամ ազատ գյուղացիները և կախյալ հողատերերը, սրունք պահպանվել են նախորդ ֆորմացիայից, վերածվում են ֆեոդալական կախման մեջ գտնվող գյուղացիների դասակարգի, որը զրկված էր հողի նկատմամբ սեփականության իրավունքից, բայց մշակում էր ֆեոդալներին պատկանող հողը: Այս պրոցեսի հետ է կապված խոշոր հողատերերից կամ պետությունից ազատ գյուղական համայնքի վերածումը կախյալ վիճակի:

Հողի ֆեոդալական սեփականատիրությունն Արևմտյան Եվրոպայում

տարբերվում է ստրկատիրական սեփականատիրությունից հետևյալով.

1. Նախ և առաջ այդ սեփականատիրությունը կրում էր անտիրանակարգային բնույթ, որի ժամանակ հողի գլխավոր սեփականատերը միմյանց էր: Նրանից հետո հողատերեր էին խաշոյ ֆեոդալները (որոնք կոմսեր, բարոններ): Սրանց հաջորդում էին ավելի ցածր աստիճանի ֆեոդալները: Այս կարգի համաձայն հաստատվում էին սյուզերեն-վասալական հարաբերությունները՝ վերադաս ֆեոդալը սյուզերեն (իշխան) էր համարվում նրանից ավելի ցածր կարգում գտնվողների համար, որոնք սյուզերենի նկատմամբ վասալներ էին: Այս հարաբերությունները ձևակերպվում էին հատուկ պայմանագրով, որի համաձայն վասալները (ավատառուները) պետք է որաշակի պարտավորություններ ու ծառայություններ կատարեին հոգուտ թագավորող իշխանի:

2. Ֆեոդալական սեփականատիրությունը կրում է դասային բնույթ, այսինքն՝ միայն ֆեոդալական դասի ներկայացուցիչները ֆեոդալական կալվածքների սեփականության իրավունք ունեին: Կախյալ գյուղացիները, որոնք նյութական բարիքների ստեղծողներն էին, օգտվում էին հողից ֆեոդալների աուջարկած պայմաններով:

3. Հողի տնօրինությունը կրում էր շատ սպիմանափակ բնայթ:

Ֆեոդալական հասարակության հիմնական դասակարգերն էին ֆեոդալները և ֆեոդալական կախման մեջ գտնվող գյուղացիությունը, որոնց հարաբերությունները կրում էին խախտարտ բնույթ: Տիրող ֆեոդալների և շահագործվող կախյալ գյուղացիության պայքարը կազմում էր ֆեոդալական հասարակության հիմնական գիծը:

Ֆեոդալական (ինչպես նաև ստրկատիրական) հասարակարգի անհանձնահատկությունը կայանում էր նրա դասակարգային բնույթի մեջ:

Ֆեոդալական հասարակությունը հանդես էր գալիս որպես ֆեոդալների դասի քաղաքական կազմակերպություն: Պետության միջոցով ֆեոդալներն իրականացնում էին իրենց դիկտատուրան՝ ապահովելով ֆեոդալական հասարակության գոյության արտաքին և ներքին պայմանները:

Ֆեոդալական պետության բնույթը ձևավորվում էր, թեև ֆեոդալիզմին իրարանջվում է նաև հանրապետական տիպի կառավարություն, որը ստեղծվել էր որոշ քաղաք-պետություններում: Ամենախաշոյ հողատերերը թագավորներն էին, որոնք հողերը բաժանում էին իրենց մերձավոր անձանց, իսկ գահագացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում նրանք ճանաչվեցին ամբողջ հողի գերագույն սեփականատեր և սյուզերեն իրենց վասալների նկատմամբ:

Ֆեոդալական պետության բնույթը գիծ է համարվում հողային սեփականության և քաղաքական իշխանության միավորումը միևնույն ձեռքում:

Ֆեոդալները, հանդես գալով հողատերերի դերում, ունեին քաղաքական իշխանություն (վարչական, վերահսկողական, ոստիկանական և դատական) իրենց հողային կալվածքների բնակչության վրա:

Այդ իշխանության իրականացման համար յուրաքանչյուր խոշոր ֆեոդալ պետք է իր տրամադրության տակ ունենար որոշակի ուժ, որն ի վիճակի կլիներ ապահովել նրա իշխանությունը կախյալ բնակչության վրա: Այդ պատճառով իր մերձավոր անձանցից, երբեմն էլ ծառաներից նա ստեղծում էր ռազմավարչական և դատական ապարատ: Այդ ապարատները կազմվում էին հետևյալ կերպ: Խոշոր հողատերերը տալիս էին համապատասխան իրավունքներ իրենց վասալներին, և այդ վասալների հաշվին ստեղծվում էին գորագույն, որոնք օգտագործվում էին ինչպես գյուղացիներին ճնշելու, այնպես էլ մարտեր վարելու համար: Այդ պատճառով ֆեոդալական պետության բնորոշ գիծը զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում հանդիսացավ նաև գորագույնի համակարգը, որը ստեղծվել է հողատիրության աստիճանակարգային կառուցվածքի հիման վրա:

Չարգացած ֆեոդալիզմին բնորոշ է նաև պետական իշխանության ապակենտրոնացումը, որն արտահայտվում էր կենտրոնական իշխանության թուլացման և խոշոր ֆեոդալների իշխանության ուժեղացման մեջ: Այս երևույթի տնտեսական հիմքը հանդիսանում է բնատնտեսությունը, իսկ քաղաքական հիմքը կազմում էր ֆեոդալների ձեռքերում տնտեսական իշխանության միավորումը քաղաքական իշխանության հետ:

Ֆեոդալական իրավունքը իրենից ներկայացնում է օրենքի վերածված իշխող դասի կամքը: Այն պայմանավորված է այդ դասի կյանքի նյութական պայմաններով:

Պատմա-իրավական գիտությունը ներկայացնում է ֆեոդալական իրավունքի մի շարք բնորոշ գծեր, որոնցով այն տարբերվում է մյուս տիպի իրավունքներից.

1. Ֆեոդալական իրավունքում հիմնական տեղ են զբաղեցնում կանոնները, որոնք կարգավորում են հողային հարաբերությունները և որոնք ապահովում են անմիջապես արտադրողական հարկադրանքը,

2. այդ իրավունքը հանդես է գալիս որպես իրավունք-արտոնություն, ուրն ամրապնդում է տարբեր դասերի անհավասարությունը: Այն հասարակության անդամներին տալիս էր իրավունքներ՝ ֆեոդալական աստիճանակարգում նրանց գրաված տեղին համապատասխան: Գյուղացիները չէին գտնվում ֆեոդալական աստիճանակարգից դուրս: Յուրաքանչյուր դասի համար գոյություն ուներ իր դասը՝ «կալվասարների դատի» սկզբունքով: Գյուղացիները պատկանում էին տիրոջ դատին,

3. Ֆեոդալական իրավունքին բնորոշ չէր իրավունքի ճյուղերի բաժա-

նունը. այլ գոյություն ունեւ ավատական, եկեղեցական, դոմենային, քաղաքային իրավունքների բաժանումը, որով և բացատրվում է նրա դասային սկզբունքը,

4. այն բնութագրվում է որպէս ուժեղի, «բռունցքի» իրավունք: Այդ սկզբունքի էութունը պատկերավոր կերպով է արտահայտել Ռիչարդ III քագավորը. «Բռունցքը մեր խիղճն է, իսկ օրենքը՝ մեր սուրը»:

5. հոգևոր կարգադրությունների մեծ ազդեցությունն իրավական կանոնների վրա հանգեցնում էր այն բանին, որ եկեղեցական կարգադրությունները վերածվում էին իրավունքի կանոնների: Արևմտյան Եվրոպայում եկեղեցական կարգադրությունների հիման վրա առաջացավ կանոնական իրավունքը, որը կարգավորում էր հարաբերությունները ոչ միայն եկեղեցական կազմակերպության ներսում, այլև աշխարհիկ մարդկանց միջև.

6. անջատուսկանություն, այսինքն՝ միասնական իրավունքի բացակայություն (բացառություն է կազմում Անգլիան) պետության ամբողջ տարածքում: Դա բացատրվում է բնատնտեսությամբ և քաղաքական մասնատվածությամբ,

7. Արևմտյան Եվրոպայում իր «երկրորդ կյանքը» սկսեց հռոմեական իրավունքը: Հռոմեական իրավունքի ընկալումը սկսվում է ֆեոդալական հասարակությունում ապրանքա-դրամական հարաբերությունների ծագումից և զարգացումից, որը պայմանավորված էր արտադրողական ուժերի և քաղաքների հետագա զարգացմամբ: Հռոմեական իրավունքն ուներ պատրաստի իրավաբանական դեղատոմսեր՝ ապրանքաշրջանառությունը կարգավորելու համար:

Պետք է նշել, որ ընկալման ենթարկվեց ոչ միայն մասնավոր իրավունքը, այլև որոշ չափով հանրային իրավունքը, քանի որ այն նպաստում էր քագավորական իշխանության ամրապնդմանը:

Հռոմեական իրավունքի յուրացումը լայն տարածում գտավ Իտալիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում և որոշ չափով՝ Անգլիայում:

2 Ֆեոդալական հասարակությունն անցավ զարգացման երեք հիմնական ժամանակաշրջաններ՝ վաղ, զարգացած և ուշ ֆեոդալիզմ: Առաջին ժամանակաշրջանը բնութագրվում է նոր արտադրական հարաբերությունների ծագումը և հաստատումը: Երկրորդ ժամանակաշրջանում այս հարաբերություններն պլեյի լիովին են զարգանում: Երրորդ ժամանակաշրջանը ֆեոդալիզմի անկման և քայքայման ու նրա ընդերքում նոր կապիտալիստական հարաբերությունների ծագման ժամանակաշրջանն էր:

Արևմտյան Եվրոպայի համար այդ ժամանակաշրջանների ժամանակագրական աղյուսակներն են հանդիսանում V-XI դդ. վաղ ֆեոդալիզմ, XI-XV դդ. զարգացած ֆեոդալիզմ և XV-XVIII դդ. ուշ ֆեոդալիզմ:

Քանի որ պետության և իրավունքի զարգացումը ետ է մնում տնտեսական զարգացումից (ընդ որում իրավունքը, որպես կանոն, ետ է մնում տնտեսությունից ավելի, քան պետությունը), ֆեոդալական հասարակության և ֆեոդալական պետության ու իրավունքի զարգացման ժամանակաշրջանները չեն համընկնում: Հաշվի առնելով պետության վճռական դերն իրավունքի հետ հարաբերությունների մեջ՝ պարբերացման հիմք կարող է ծառայել պետության դատմության պարբերացումը:

Պատմա-իրավական գրականության մեջ տարածված է Արևմտյան Եվրոպայում ֆեոդալական պետության ու իրավունքի պատմության հետևյալ պարբերացումը.

1. Վաղ ֆեոդալական պետություն և իրավունք (V-IX դդ.),

2. Ֆեոդալական մասնատված պետություն և իրավունք (X-XII դդ.),

3. Դասային-ներկայացուցչական միապետություն և իրավունք (XIII-XV դդ.),

4. Բացարձակ միապետություն և իրավունք (XVI-XVIII դդ.):

Ֆեոդալական հասարակության և նրա քաղաքական կազմակերպության մեջ բացառիկ տեղ է գրավում եկեղեցին:

Եկեղեցին գլխավոր գաղափարախոսական և մշակութային ուժն էր: Այն որոշում էր միջնադարյան հասարակության աշխարհայացքը, որը գլխավորապես աստվածաբանական էր: Քրիստոնեությունը, որը միակ կրոնն էր Եվրոպայում, իրեն էր ենթարկում բոլոր մարդկանց կյանքը, քանի որ յուրաքանչյուր մարդ ծնունդից մինչև մահ գտնվում էր եկեղեցու կողմնակցության տակ և նրա յուրաքանչյուր քայլը պետք է համապատասխաներ եկեղեցու կողմից հաստատված կանոններին: Հեռանալով եկեղեցուց՝ յուրաքանչյուր մարդ համարվում էր օրենքից դուրս:

Արգելելով ժամերգություններն առանձին շրջաններում և նույնիսկ պետություններում՝ եկեղեցին կարող էր քաղաքական և այլ ճնշում գործադրել այդպիսի շրջանների և պետությունների ղեկավարների վրա:

Եվրոպայի բազմաթիվ պետությունների մասնատվածության պայմաններում եկեղեցին ստեղծեց հզոր կազմակերպություն, որը համախմբեց հասարակությունը:

Հռոմեական ստրկատիրական կայսրության անկումից հետո հռոմեական քրիստոնեական ռամայնքի գլուխը, որն անվանվեց պապ, ամբողջ քրիստոնեական աշխարհում սկսեց հավակնել ամենաբարձր եկեղեցական իշխանությանը: Սակայն դա նրան չհաջողվեց: XI դ. տեղի ունեցավ եկեղեցու մասնատումն արևելյանի (ուղղափառ) և արևմտյանի (հռոմեակաթոլիկական):

Պապերն անդադար պայքարում էին աշխարհիկ կյանքի վրա եկեղե-

ցական իշխանության տիրապետության համար: Մինչև XI դարը եկեղեցական իշխանությունը ենթարկվում էր աշխարհականին: Մկեղացական բարձրագույն պաշտոններ նշանակում էին թագավորները և «գերմանական ազգի Հռոմեական Արքայան կայսրության» կայսրերը: XI դարում անցկացվել էին բարենորոգություններ՝ հոգևոր իշխանության անրապնդման համար: Պապերն ընտրվում էին եկեղեցական բարձրաստիճան պաշտոնյաների կոլեգիայի կողմից (կարդինալներ):

Հատկապես մեծ հզորության հասավ եռոմեա-կաթոլիկական եկեղեցին պապ Ինոկենտիոս III-ի (1198-1216թթ.) ժամանակ: Պապը եռանդուն կերպով խառնվում էր գերմանական կայսրերի և եվրոպական թագավորների գործերին: Նրանցից ոմանք, այդ թվում նաև անգլիական թագավորը, նրան ճանաչեցին որպես իրենց պարոն:

XIII դարի շեմին Արևմտյան Եվրոպայում ստեղծվեց եկեղեցական կենտրոնացված հզոր կազմակերպություն:

Հռոմեա-կաթոլիկական եկեղեցին գլխավորում էր պապը: Նա վարում էր եկեղեցական գործերը կաթոլիկների և սլավական գրասենյակի միջոցով: Նա ղեկավարում էր նաև դատական հիմնարկները: Այդ ապարատը կոչվում էր սլավական կուրիա: Պապը համարվում էր ոչ միայն եկեղեցու առաջնորդը, այլ նաև աշխարհիկ թագավոր, որն իրականացնում էր պետական իշխանությունը Իտալիայի «պապական շրջանի» բնակչության վրա:

Կրոնի և եկեղեցական գործերի կարևորագույն հարցերի լուծման համար պապերը կազմակերպում էին ժողովներ՝ հոգևորականության բարձրագույն ներկայացուցիչներից: Այդ ժողովների որոշումները պարտադիր էին հռոմեա-կաթոլիկական աշխարհի համար:

Քրիստոնեական աշխարհի բոլոր երկրները բաժանված էին եպիսկոպոսությունների և արքեպիսկոպոսությունների՝ համապատասխանաբար եպիսկոպոսների և արքեպիսկոպոսների գլխավորությամբ: որոնց լնտրում էին կնամիտուլները (այսինքն՝ եպիսկոպոսական շրջանի գլխավոր քաղաքների մայր տաճարի անդամների ժողովը) և հաստատում էին պապերը՝ շնորհելով նրանց հոգևոր իշխանություն: Հողային շնորհումները, որոնք կապված էին համապատասխան պաշտոնի կատարման հետ և աշխարհիկ իշխանությունը՝ այդ հողերի բնակչության վրա, տալիս էր թագավորը: Ամենացածր եկեղեցական միավոր էին համարվում ծխական համայնքները՝ քահանայների գլխավորությամբ: Չնականորեն նրանց նշանակում էին եպիսկոպոսները, բայց նրանց նշանակման ժամանակ էական դեր էին խաղում աշխարհիկ ազնվականները:

Բացի սպիտակ հուգարականությունից, գոյություն ուներ նաև մենա

կյաց հոգևորականություն, որը բնակվում էր մեծ և փոքր վանքերում: Մյանալով և կազմելով ուխտ վանքերը գտնվում էին հռոմեական պապի ղեկավարության տակ:

Հերետիկոսության դեմ պայքարելու համար ստեղծվել էին այսպես կոչված մուրացկանական ուխտեր, որոնք պետք է բացահայտեին հերետիկոսությունը և պայքարեին նրա դեմ:

Գոյություն ունեին նաև ռազմա-ասպետական ուխտեր, որոնք իբր ստեղծված էին այլ հավատքի մարդկանց դեմ պայքարելու և նրանց բնակության տարածքները նվաճելու համար: 1540թ. կաթոլիկության հակառակորդների դեմ պայքարելու և երիտասարդությանը կաթոլիկության ոգով դաստիարակելու համար ստեղծվեց ճիզվիտների ուխտը:

Հռոմեական կաթոլիկ եկեղեցին Եվրոպայի ամենամեծ ֆեոդալն էր, քանի որ նրա ձեռքում էր գտնվում այն ժամանակ մշակվող հողի մեկ երրորդը: Կաթոլիկ երկրների ժողովուրդը մտածում էր բազմազան հարկեր՝ հոգուտ եկեղեցու: Մեծ եկամուտ էին բերում եկեղեցուն ինդուլգենցիաների (թողության գրեթե)՝ Հռոմի պապի կողմից տրվող անցած և նոր մեղքերի թողության գրեթե, վաճառքը: Պապի արքունիքը վերածվել էր Եվրոպայի խոշորագույն ֆինանսական կենտրոնի:

Հոգևորականությունն իրենից ներկայացնում էր արտոնյալ դաս ֆեոդալական հասարակության մեջ: Այն ենթարկվում էր միայն եկեղեցական դատարանի իրավասությանը: Եկեղեցական դատարանների բարձրագույն ատյամ էր համարվում Հռոմի պապը: Մի շարք գործերի դեպքում (հերետիկոսություն, կախարդանք, սիրապղծություն, հավատուրացություն, արյունապղծություն, ամուսնական հավատարմության խախտում, սուտ վկայություն, զրպարտություն, փաստաթղթերի կեղծում, կշեռքի կեղծում, վաշխառություն և այլն) եկեղեցական դատարանների իրավասությունը տարածվում էր նաև աշխարհիկ անձանց վրա, որովհետև համարվում էր, որ այդպիսի գործերը կապված են «մեղսագործության» հետ: Եկեղեցական դատարանները քննում էին նաև գործեր, որոնք կապված էին ընտանեկան հարաբերությունները կարգավորող պայմանագրերը խախտելու հետ: Իրավական և կրոնական կանոնների ամբողջությունը, որը ստեղծված էր եկեղեցու կողմից՝ եկեղեցական կազմակերպության ներսում, կոչվեց կանոնական իրավունք: Այն կարգավորում էր եկեղեցու և աշխարհիկ անձանց միջև հարաբերությունները:

Կանոնական իրավունքի աղբյուրներ էին Հռոմեա-կաթոլիկական եկեղեցու ժողովների որոշումները, Հռոմի պապի արձանագրությունները, ինչպես նաև սուրբ գրքերը: XI-XII դդ. կանոնական իրավունքը դասավանդվում էր համալսարաններում: Կանոնական իրավունքի ամենահայտնի ժո-

դրվածությունից է «Գրացիանի օրենսգիրքը», որ կազմվել է XII դարի առաջին կեսում: Այդ ժողովածուի մեջ, հենվելով ասոր գրքերի վրա, ներկայացված էին Հռոմի պապերի եկեղեցական ժողովների որոշումները, նորմատիվ արձանագրությունները (կոնդակներ, էնցիկլիկաներ): 1234թ., պապ Գեորգի IX օրոք, լույս է տեսել կանոնական իրավունքի նորմերի պաշտոնական ժողովածուն: XVI դ. կանոնական իրավունքի բոլոր նորմերը համակարգեցին «Կանոնական իրավունքի ժողովածուի» մեջ:

Վաղ միջնադարի աշխատավոր զանգվածների՝ ֆեոդալական շահագործման դեմ պայքարի ձևերն էին հերետիկոսական ելույթները: Հերետիկոսություն էին համարում կաթոլիկ ռավանաբանության դիտավորյալ մերժումը հավատացյալների կողմից: Եկեղեցին հատկապես էր գալիս որպես ֆեոդալական դասակարգի գոյության ընդհանուր համապայտություն:

Հերետիկոսների դեմ պայքարելու համար XIII դ. ստեղծվեց հատուկ եկեղեցական հիմնարկություն՝ հավատաքննություն (ինկվիզիցիա):

Հռոմեական կաթոլիկ եկեղեցին ավելի վաղ էր սկսել պայքարն այլախոհների և հավատորագների դեմ, սակայն միայն XIII դ. այդ պայքարը ստացավ նպատակաուղղված, կազմակերպված և ահաբեկչական բնույթ: 1215թ. Չորրորդ Լատերենական ժողովն ընդունեց հերետիկոսության դեմ պայքարելու մասին հատուկ որոշում, իստ որի եկեղեցին պետք է բացահայտեր հերետիկոսներին, դատապարտեր նրանց և հանձներ աշխարհիկ իշխանությանը՝ պատժելու համար: Դատապարտվածների սեփականությունը բռնագրավվում էր եզոտ եկեղեցու: Հերետիկոսության մեջ կասկածվողները բանադրանքի էին ենթարկվում, եթե նրանք չէին կարողանում ապացուցել իրենց անմեղությունը կամ հերքել իրենց դեմ ներկայացրած մեղադրանքները: Եթե բանադրանքի ենթարկվելուց մեկ տարի անց նրանք չէին կարողանում ապացուցել իրենց բարեհուսությունը, նրանց դատում էին որպես հերետիկոսների: Բոլոր նրանք, ովքեր համամիտ էին հերետիկոսների հետ կամ նրանց որևէ օգնություն էին ցուցաբերում, ենթարկվում էին եկեղեցական բանադրանքի և մեկ տարի անց, եթե չէին հրաժարվում իրենց հայացքներից կամ չէին փոխում իրենց վերաբերմունքը հերետիկոսների նկատմամբ, մեխանիկորեն համարվում էին անագնիվ, կոյցնում էին համրային և ընտրովի պաշտոնները գրավելու իրավունքը, ինչպես նաև չէին կարող հանդես գալ որպես վկա, կտակել և ժառանգել ունեցվածքը: Բոլոր հավատացյալները պետք է տարին առնվազը մեկ անգամ խոստովանեին իրենց քահանային և հաղորդություն անեին, այլ կերպ նրանք հերետիկոսներ էին հայտարարվում և զրկվում եկեղեցական թաղումից:

Աշխարհիկ ղեկավարները պետք է ոչ միայն իրականացնեին հերետիկոսների վերաբերյալ եկեղեցական դատարանի դատավճիռները, այլև ա

կոսմերի վերաբերյալ եկեղեցական դատարանի դատավճիռները, այլև ազատեին նրանցից իրենց հողերը՝ եկեղեցում հեռացման վախի ազդեցության տակ: Եթե բանադրանքից հետո մեկ տարվա ընթացքում աշխարհիկ ղեկավարը չէր ուղղվում, պապը կարող էր վասալներին ազատել նրան ենթարկվելուց և այդպիսի ղեկավարի հողերը հայտարարել ազատ՝ «իսկական կաթոլիկների» կողմից գրավելու համար:

1229թ. Տուլուզայի ժողովի ժամանակ այդ որոշումներին ավելացվել էր նաև այն, որ եպիսկոպոսները պարտավոր էին յուրաքանչյուր ծիսական համայնքում նշանակել ուսումնական քահանա՝ հերետիկոսներին բացահայտելու համար: Իսկ բոլոր ծխականները յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ պետք է երդում տալին կաթոլիկ եկեղեցուն հավատարմության մեջ և երդվեին հետապնդել հերետիկոսներին: 1252թ. պապ Ինոկենտիոս IV-ը հրատարակեց կոնդակ, որը նախատեսում էր հավատաքննական դատարանների ստեղծումը, որոնց թույլ էր տրվում օգտագործել տանջանքներ՝ հերետիկոսների բացահայտման նպատակով:

Յուրաքանչյուր թեմում հերետիկոսության դեմ պայքարելու համար ստեղծվում էր հատուկ հանձնաժողով: Հանձնաժողովներն իրավունք ունեին ձերբակալել հերետիկոսներին, նրանց հարցաքննել, դատապարտել և բռնագրավել ունեցվածքը: Դատավճիռն իրականացնում էր աշխարհիկ իշխանությունը: Իսկզբից հողերը նշանակվում էին Հռոմի պապի կողմից և ենթարկվում էին միայն նրան: Նրանք անսահմանափակ լիազորություններ ունեին, և ոչ ոք, բացի պապից, չէր կարող նրանց հեռացնել եկեղեցուց՝ ծառայության ժամանակ կատարած հանցանքների դեպքում: Պապը նրանց մույնիսկ իրավունք տվեց ներել միմյանց մեղքերը, որոնք կասկած էին ինկվիզիտորական գործունեության հետ:

1542թ. հերետիկոսության դեմ պայքարի ղեկավարման համար հռոմեական կուրիայի կազմում ստեղծվեց հռոմեական և տիեզերական ինկվիզիցիայի սրբազան միաբանությունը:

Հերետիկոսության վերաբերյալ գործ հարուցելու համար օգտագործվում էին ասեկոսները և մատնությունները: Ինկվիզիտներով քննվող մատնիչների և վկաների անունները գաղտնի էին պահվում: Դա թույլ էր տալիս ինկվիզիցիային օգտվել լրտուների և սուտ վկաների ծառայություններից:

Որպեսզի մեղադրյալից ստանային հերետիկոսության մեջ մեղադրվելու խոստովանությունը, հրաժարումը դրանից և եկեղեցու հետ հաշտությունը, օգտագործվում էին ճնշման տարբեր միջոցներ՝ ահաբեկում, խաբեություն, երկարատև բանտարկություն և այլն: Եթե դա արդյունք չէր նախ, նրանք անցնում էին տանջանքների: Մեղադրյալը կալուղ էր դատապաշտպանների դիմել, բայց սովորաբար դա անօգուտ էր:

Նախնական հետաքննությունը ավարտվում էր դատավճռով, որը կսայացնում էր բարձր ատյանը: Դատավճիռը սովորաբար մեղադրական էր: Կարող էին լինել այնպիսի դատավճիռներ, որոնցում նշվել, որ «մեղքն ապացուցված չէ», ըստ որի անձը մնում էր կասկածանքի տակ, և միշտ երբ դեմ կարող էր գործ հարուցվել:

Դատավճիռը վերջնական էր և բողոքարկման ենթակա չէր: Ամբողջ գործունեությունը գաղտնի էր:

Եթե մեղադրյալը հրաժարվում էր մեղքի ընդունելուց և եկեղեցու հետ հաշտվելուց, ապա նրան այրում էին խարույկի վրա: Խարույկի վրա այրվելու համար մեղադրյալը հանձնվում էր աշխարհիկ իշխանությանը: Մյուս դեպքերում օգտագործվում էին տարբեր պատժամիջոցներ՝ սկսած ապաշխարանքից մինչև ցմահ բանտարկություն:

Ըստ Կոլտերի հաշվարկների, Արևմտյան Եվրոպայում այրվել են մոտ 100 հազար «վիուկներ» և «կախարդներ»: Ինկվիզիցիան այրել է Ֆրանսիայի ազգային հերոսուհի Ժաննա ԴԱրկին և վերածննդի լավագույն մտածողներից մեկին՝ Ջորդանո Բրիլյապո Բրունոյին:

Ֆեոդալական Եվրոպայի տնտեսական և քաղաքական կարգի վրա մեծ ազդեցություն թողեց քաղաքների ծաղուկումը և զարգացումը:

Արհեստի անջատումը հողագործությունից, որը պայմանավորված էր արտադրական ուժերի հետագա զարգացմամբ, նպաստեց ապրանքա-փոխանակության զարգացմանը: Այդ կապակցությամբ Եվրոպայում X-XI դ.դ. առաջանում են քաղաքներ՝ որպես արհեստի և առևտրի կենտրոններ: Ճորտ գյուղացիները, որոնք փախել էին իրենց տերերից, կամ ազատ, բայց ֆեոդալներից կախման մեջ գտնվող գյուղացիները բնակվում էին այն տեղերում, որոնք ավելի նպաստավոր էին իրենց տնտեսական գործունեության համար (ճանապարհների խաչմերուկներում, ֆեոդալական ամրուցների և վանքերի պատերի տակ, վարչական և եկեղեցական կենտրոնների տարածքներում, գետանցների մոտ):

Այդ երևույթը բացառիկ դեր էր խաղում հասարակության տնտեսական և քաղաքական զարգացման համար՝ նախ, քաղաքների առաջացումը նպաստեց ապրանքա-դրամական հարաբերությունների, ինչպես նաև քաղաքի և գյուղի միջև տնտեսական կապերի զարգացմանը, երկրորդ՝ հենց քաղաքներում հետագա զարգացում ստացան արտադրողական ուժերը, և երրորդ՝ քաղաքներում ձևավորվում է նոր հասարակական խավ՝ քաղաքային բնակչությունը, որը դառնում էր նոր բուրժուական հարաբերությունների կրողը:

Քաղաքների և քաղաքային բնակչության առաջացումը նպաստեց ֆեոդալական վերնախավի և ֆեոդալական մասնատվածության լիկվիդացմանը և կենտրոնացած պետության որպես դասային ներկայացուցչա-

կան միապետության, առաջացմանը: Կառավարման այս ձևն առաջացավ քաղաքավորի և քաղաքների միության հետևանքով, որպեսզի պայքար մղվեր ֆեոդալական անարխիայի դեմ: Բացարձակ միապետության առաջացումը տեղի ունեցավ ազնվականության և բուրժուազիայի ուժերի հավասարության շնորհիվ, որի ժամանակ միապետությունը հնարավորություն է ստանում միջնորդի դեր խաղալ նրանց միջև և համեմատաբար ինքնուրույնություն ձեռք բերել երկու դասերի նկատմամբ:

Սկզբնական շրջանում քաղաքները, որոնք առաջացել են աշխարհիկ և եկեղեցական ֆեոդալների հողերի վրա, գտնվում էին վերջիններից կախման մեջ, կատարում էին նրանց օգտին ֆեոդալական պարտականություններ և ենթարկվում էին նրանց վարչական, ռազմական ու դատական իշխանությանը: Բայց շատ շուտով քաղաքները սկսում են պայքարել ֆեոդալական սենյորների դեմ՝ անկախության համար: Ամենամեծ հաջողության հասան Իտալիայի քաղաքները, որոնք ոչ միայն նվաճեցին իրենց անկախությունը, այլև վերածվեցին քաղաք-պետությունների՝ կառավարման հանրապետական ձևով (Պիզա, Վենեցիա, Ֆլորենցիա): Եվրոպական այլ երկրներում այդ պայքարը հանգեցրեց տարբեր արդյունքների:

Որոշ քաղաքներ լիովին ազատվում էին սենյորի իշխանությունից և վերածվում էին «քաղաք-կոմունաների», այսինքն՝ ստանում, ձեռք էին բերում լիակատար ինքնակառավարման իրավունք՝ կառավարման ընտրովի մարմիններով, դատարաններով, ոստիկանությունով, բանակով, ֆինանսներով և այլն: Երբեմն այդպիսի քաղաքները դառնում էին ֆեոդալական սենյոր տեղական բնակչության նկատմամբ:

Քաղաքների և սենյորների պայքարի ժամանակ քաղաքային բնակչությունը պայքարում էր անձնական ազատության համար: Հենց այս ժամանակաշրջանում է առաջանում հետևյալ կանոնը. Եթե ճորտը փախչում էր քաղաք և, ըստ ընդհանուր կանոնի, ապրում էր մեկ տարի և մեկ օր, ապա նա ազատ էր համարվում: Քաղաքներում արտադրության հիմքը կազմում էր արհեստավորական տնտեսությունը: Միևնույն մասնագիտության տեր արհեստավորները միավորվում և ստեղծում են համքարություններ:

Յուրաքանչյուր արհեստավոր աշխատում էր իր արհեստանոցում՝ իր ընտանիքի անդամների, աշակերտների և ենթավարպետների հետ: Ամբողջ արտադրությունը (այդ թվում՝ ենթավարպետների և աշակերտների քանակը, աշխատանքային օրվա տևողությունը, աշխատավարձի չափը, հումք ձեռք բերելու հաջորդականությունը և պատրաստի արտադրանքի յուրացումը) կարգավորում էին համքարային կանոնադրությունները: Բայց համքարությունը միայն արտադրական միավորում չէր: Այն միաժամանակ միևնույն մասնագիտության միություն էր: Այն հոգևոր միություն էր, որն ու-

ների իր սրբերը և կրոնական տոները: Նա հանդես էր գալիս որպես ռազմական կազմակերպություն և առանձին միավոր էր քաղաքի գորքի կազմում:

Համքարությունն ինքնակառավարող միավոր էր: Այն ղեկավարում էր ընտրովի ավագը (մագիստրոսը): Համքարությունն ընտրում էր իր դատարանը, որը լուծում էր համքարության կանոնադրության խախտման հետ կապված վեճերը: Սֆեռդալական քաղաքների բնակչությունը միասեռ չէր: Ինքնակառավարումը կամ ինքնուրույնությունը ձեռք բերելուց հետո քաղաքներում իշխանությունը կենտրոնացավ քաղաքային վերնախավի ձեռքում (վաճառականներ, վաշխառուներ, քաղաքային հողատերեր), որոնք կազմեցին ժառանգական արտունյալ խումբը: Այն կոչվեց պատրիկություն: XIII-XV դդ. բոլոր քաղաքներում իշխանության համար դաժան պայքար էր մղվում պատրիկության և համքարությունների միջև:

XIV-XV դդ. եվրոպական քաղաքների մեծամասնությունում համքարությունները վերածվեցին ինքնամփոփ համքարային կորպորացիաների, ուր նոր մարդկանց ժողովը գրեթե հնարավոր չէր: Դա բերեց այն բանի, որ ենթավարպետները դարձան վարձու բանվորներ, որոնք սակայն չէին կարող դառնալ ժարպետներ: Իրենց մասնագիտական շահերը պաշտպանելու համար սրանք սկսեցին ստեղծել միություն՝ միաբանություններ, որոնք պայքարում էին վարպետների դեմ աշխատավարձը բարձրացնելու և աշխատանքային օրվա տևողության կրճատման համար: Մանր արհեստավորների հետ նրանք կազմում էին քաղաքային բնակչության ցածր խավը՝ քաղաքային պեբեությունը: Պեբեության պայքարը ֆեոդալական վերնախավի շահագործման դեմ համարվում էր ֆեոդալական քաղաքի սոցիալական կյանքի հիմնական գիծը:

Այսպիսով, քաղաքների զարգացման պատմության մեջ կարելի է նշել դասակարգային պայքարի երեք փուլ՝ 1) քաղաքների պայքարը ֆեոդալների դեմ՝ քաղաքների անկախության համար (XI-XII դդ.), 2) պատրիկության և համքարությունների միջև պայքարն իշխանության համար (XII-XIV դդ.), 3) քաղաքային պեբեության պայքարը քաղաքային վերնախավի դեմ (XIV դարի վերջ - XV դարի սկիզբ):

Քաղաքների առաջացումը և ինքնուրույնության նվաճումը հանգեցրեց քաղաքային իրավունքի ստեղծմանը, որը կարգավորում էր մի կողմից՝ քաղաքացիների, մյուս կողմից՝ քաղաքների և ֆեոդալների միջև եղած իրավական հարաբերությունները: Քաղաքային իրավունքի առջյուրներն էին հանդիսանում քաղաքների պայմանագրերը սենյորների հետ, ավոբույթները, համքարությունների և գլիլիանելի կանոնադրությունները: Ինչպես նաև քաղաքային ինքնակառավարման մարմինների դրույումները: Քաղաքային իրավունքի վրա մեծ ազդեցություն գործեց ևսումեական իրավունքը:

ՖՐԱՆԿՆԵՐԻ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԸ

67

1. ՖՐԱՆԿՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

ճ-թ-ճ

Մեր թվարկության հինգերորդ հարյուրամյակը Գալիայի համար հանդիսացավ սոցիալ-տնտեսական բարեփոխությունների ժամանակաշրջան: Հռոմի այդ հարուստ գավառում բազմակողմանիորեն դրսևորվեց խոր ճգնաժամը, որը բռնկեց ամբողջ կայսրությունը: Երկիրը սասանվում էր առարուկների, կոլոնների, գյուղացիների, քաղաքային մտրացկանության ելույթներից: Ժողովրդական զանգվածների ելույթները միաձուլվում էին օտարերկրյա ցեղերի, և ամենից առաջ գերմանացիների՝ Գալիայի արևելյան հարևանների անդադար հարձակումների հետ: Այս ամենի արդյունքը եղավ այն, որ երկրի մեծ մասը բաժանվեց վեստգոթերի, ֆրանկների, բուրգունդացիների միջև: Այդ գերմանական ցեղերից ուժեղագույներն էին սակայն ֆրանկները:

Նրանց պահանջվեց 20 տարի, որպեսզի V դարի վերջում և VI դարի սկզբում գրավեին երկրի մեծ մասը:

Ֆրանկների դասակարգային հասարակության առաջացումը, որը սկզբնավորվել էր մինչև նրանց տեղափոխվելը նոր հայրենիք, ավելի արագացավ Գալիայի նվաճման գործընթացի ժամանակ:

Ֆրանկների ռազմական առաջնորդները, նրանց դրուժինաները, ցեղային ավագներն արագ կերպով վերածվում էին խոշոր հողատեր շահագործողների: Ազնվականությունը բարձր է շարքային ֆրանկներից, չնայած որ վերջիններս մնում էին ազատ և սկզբնական շրջանում չէին զգում տնտեսական ճնշման ուժեղացումը:

Ֆրանկ գյուղացիները բնակվում էին գյուղական համայնքներով (մարգերով): Մարզն ընդգրկում էր անտառներ, դաշտեր, մշակվող հողեր: Վերջինները բաժանվեցին հողակտորների և անցան առանձին ընտանիքների՝ ժառանգական օգտագործման իրավունքով:

Շահագործվողների հիմնական խումբն այն ժամանակ կազմում էր նվաճված բնակչությունը: Միաժամանակ գայլո-հողմեակյան ազնվականությունը մասամբ պահպանեց իր հարստությունը:

Դասակարգային շահերի միասնությունը սկիզբ դրեց ֆրանկյան և գալ-

յո-հռոմեական ազնվականության մտերմացմանը: Այստոյալ դասակարգերը շահագրգռված էին հատուկ կազմակերպության ստեղծումով, որի օգնությամբ հնարավոր կլինէր ճնշել աշխատավորությանը, իրենց ձեռքբերում պահպանել նվաճված երկիրը: Նախկին տոհմացեղային կազմակերպությունը ի վիճակի չէր այդ անելու: Կարելի է ասել, որ եկավ այն ժամանակը, երբ զորապետի իշխանությունը պետք է յառնար թագավորական իշխանություն, և դա կատարվեց:

Տոհմացեղային հասարակարգի հիմնարկներն իրենց տեղն են զիջում նոր կազմակերպությանը՝ թագավորի գլխավորությամբ: Դա հատուկ «հանրային իշխանություն» էր, որը կազմված էր ոչ միայն զինված մարտկանցից, այլ նաև բանտերից և տարբեր տիպի հարկադրական հիմնարկներից, որոնք հայտնի չէին տոհմական հասարակությանը:

Նոր հանրային իշխանության հաստատումը կապված էր բնակչության տերիտորիալ բաժանման հետ: Ֆրանկների բնակեցված հողերը բաժանվում էին շրջանների («պագեր» - «համարակալություն»): որոնք կազմված էին ավելի փոքր միավորներից, հարյուրավորներից: Հարյուրավորներում և պագերում ապրող բնակչության կառավարումը հանձնվում էր հատուկ պաշտոնական անձի:

Ֆրանկների պետության առաջացումը կապված է նրանց ռազմական առաջնորդներից մեկի՝ Մելոլինգների տոհմից սերված Խլոդվիգի (486 - 511թ.թ.) անվան հետ: Նրա գլխավորությամբ նվաճվել է Գալիան:

2. ՖՐԱՆԿՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ VI - IX ԴԱՐԵՐՈՒՄ

Ա) Հասարակական կարգը: Ֆրանկների հասարակության զարգացման գլխավոր գիծը նրա ընդերքում ֆեոդալիզմի ծագումն ու զարգացումն է: Նոր հարաբերությունները ձևավորվում էին սոցիալական միջավայրում, որը կազմված էր սոցիալ - էթնիկական երկու խմբերից՝ ֆրանկական (տիրող) և գալլո-հռոմեական: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր հիմնական բնակավայրը (ֆրանկական «հյուսիսը» և գալլո-հռոմեական «հարավը»): Նրանց միջև սահման էր համարվում Լուարա գետը): Ֆեոդալական հարաբերությունների ձևավորումը ֆրանկների և գալլո-հռոմեացիների մոտ ինչպես նման չեն՝ թեկուզ և այն տեսանկյունից, որ այն նրանց մոտ սկսվում էր տարբեր ելակետային սահմաններից: Ֆրանկներն անցյալ ֆեոդալիզմի ետևում թողնելով նախնադարյան համայնակարգը, իսկ գալլո-հռոմեացիները՝ ստրկատիրական հասարակությունը: Ֆեոդալիզմի զարգացումը

Ֆրանկների երկրում անցել է երկու աստիճան (առաջինը՝ VI-VII դդ. , երկրորդը՝ VIII-IX դարերի առաջին կեսը): VI-VIIդդ. ֆեոդալական հասարակության դասակարգերի՝ շահագործողների (ֆեոդալների) և շահագործվողների (ճորտ գյուղացիների) ինտենսիվ ձևավորման ժամանակաշրջանն էր: 579թ. Ֆրանկների պատմության մեջ առաջին անգամ Լիմոժում բռնկվեց զանգվածային ժողովրդական ապստամբություն: Այն դաժանորեն ճնշվեց միապետության կողմից: Արդեն այդ ժամանակ Ֆրանկների պետությունն իրեն ներկայացրեց որպես ֆեոդալների դիկտատուրա:

Խլոդվիգի մահից հետո. նրա որդիները սկսեցին երկարատև և արյունահեղ երկպառակտական կռիվները: Ֆեոդալական երկպառակտությունները տևեցին 100 տարուց ավել: Թագավորությունը շատ անգամ տարրալուծվում էր առանձին անկախ պետությունների: Միայն VII դարում տիրեց որոշ հանգստություն: Սակայն անցած դարաշրջանի իրադարձությունները կարևոր ազդեցություն բողեցին երկրի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման վրա: Ազնվականությունն առատորեն պարզատրվեց հողով: Թագավորների համար դա միակ միջոցն էր նրանց իրենց կողմը ներգրավելու համար: Նվիրված հողերը դառնում էին ժառանգական, ազատ սեփականություն, այսպես կոչված՝ այլոջ:

Արագ կերպով հարստանում էր եկեղեցին, որի հողային կալվածքներն անընդհատ աճում էին:

Կարևոր սոցիալ-տնտեսական փոփոխություններ էին նշմարվում Ֆրանկական գյուղացիների բնակավայրերում:

Հողի մասնավոր սեփականություն էին համարվում սկզբում մարզերում տնամերձ, իսկ հետագայում մաս վարելահող տարածքները: Այդ պահից համայնքի դասակարգային սահմանազատումն ավելի արագացավ: Հողագուրկ գյուղացիների թիվն աճում էր: Կորցնելով սեփական հողը՝ վտանգի էր ենթարկվում գյուղացիների անձնական ազատությունը: Գյուղացին, չտեսնելով տնտեսական անկախությունը պահպանելու հնարավորություն, իր փոքր հողակտորը տալիս էր տիրոջը (համարվում էր, որ «նվիրում էր»), որն այն ետ էր վերադարձնում, երբեմն ավել մատուց, բայց արդեն իր օգտին որոշ պարիակներ կատարելու պայմանով: Չնականորեն այդ պայմանագիրն անձնական կախման հարաբերություններ չէր հաստատում, բայց դրա համար ստեղծում էր բարենպաստ պայմաններ:

Այդ ժամանակաշրջանում ավելի մեծ տարածում գտավ պատրոնատի («հովանավորության») համակարգը: Խոշոր հողատերերի կողմից ճնշման ուժեղացման պայմաններում գյուղացիները ստիպված էին դիմել հզոր և ազդեցիկ մարդկանց օգնությանը: Շատ հաճախ ազնվականությունն ինքն էր հովանավորում գյուղացիներին, քանի որ շահագրգռված էին դրանում:

Հովանավորվում էին ոչ միայն թույլ և հողագործ, այլև ուժեղ, և շատ հողեր ունեցողները, որոնք հովանավորվում էին ավելի ուժեղների կողմից: Հովանավորությունը նախատեսում էր՝ 1) հողի փոխանցումը տիրոջը՝ հետագայում վերադարձնելու պայմանով, 2) «թույլի» կախումն իր պատրոնատից, 3) պատրոնատի օգտին մի շարք պարեհակների կատարում:

Այսպիսով, վճռական քայլ էր արված ֆրանկյան գյուղացիներին ճորտագնելու համար: Մյուսնգամ ընկնելով նման կախման մեջ նրանք կորցնում էին իրենց անձնական ազատությունը, իսկ մի քանի սերունդ անց նրանցից շատերը դառնում էին ճորտեր:

Ճորտերի թվում ավելի շատ հայտնվում էին «հարավի» ստրուկները և կոլոնների մեծ մասը:

Ֆեոդալական պետականության ուժեղացումը, սակայն, չէր ուղեկցվում քաղաքացիների իշխանության ուժեղացմամբ: VI դարի արյունահեղ երկպառակտությունը ճակատագրական էր Մերովինգների համար, նրանք ստիպված էին բաժանել իրենց բոլոր հողերը: Որքան փոքրանում էր միապետության հողային ֆունդը (ոազմաքաղաքական ուժի հիմքերը՝ ֆեոդալական հասարակության մեջ), այնքան հզորանում էին առանձին ընտանիքները: Ամբողջ VII դարն աննշան բացառություններով անցավ քաղաքացիների իշխանության թուլացման նշանի տակ: Շուտով նրանք ամբողջովին հեռացվեցին գործերից:

Պետության մեջ իշխանությունը կենտրոնանում էր ազնվականության ձեռքերում, որը բռնազրավեց պետության կարևոր պաշտոնները, և հատկապես Մարդպետի կաշտոնը: Սկզբնական շրջանում մարդպետը ղեկավարում էր քաղաքական պալատը, սակայն աստիճանաբար նրա իրավագործություններն այնքան են ընդլայնվում, որ նա դառնում է, փաստորեն, պետության գլուխը: VII-VIII դ.դ. շեմին այդ պաշտոնը դառնում է ազնվական և հարուստ տոհմի ժառանգական սեփականությունը, որը սկիզբ դրեց կարոլինգների հարստությանը:

58 Կարոլինգների միապետությունը: Այս տոհմի ներկայացուցիչներից մեկի՝ մարդպետ Կարլ Մարտելի (VIII դար) անվան հետ է կապված ֆրանկների հասարակության սոցիալ-քաղաքական համակարգում տեղի ունեցած շատ կարևոր բարեփոխությունը: Մարդպետը ձգտում էր ամրապնդել կենտրոնական իշխանությունը: Այդ նպատակին պետք է ծառայեր լավ զինված հեծյալ բանակը, որը պետք է կախման մեջ գտնվեր պետության ղեկավարից:

Բարենորոգության բնույթը հետևյալն էր: Վերջ էր դրվում հողերի որպես սեփականության, նվիրատվությանը: Դրա փոխարեն հողերը և դրանց վրա բնակվող գյուղացիները պայմանավորվածորեն ցմահ տրվում էին բենե-

Ֆիզի ձևով: Կարլ Մարտելը բռնագրավեց այդ հողերն անհնազանդ նագ-
նատներից և վանքերից: Բենեֆիցի կրողն իրեն հող տվողի օգտին պետք է ծառայություն կատարեր: Ծառայության ծավալը որոշվում էր բենեֆի-
ցիի չափերով: Բայց բոլոր դեպքերում բենեֆիցի կրողը մինչև որոշ խասա-
կի հասնելը որպես ասպետ պետք է մասնակցեր ռազմական արշավներին
և հանդերձավորվեր իր հաշվին: Հրաժարվելով ծառայությունից՝ նա գրկ-
վում էր բենեֆիցիից:

Սակայն բարենորոգության նշանակությունը վերաբերում էր ոչ միայն
ռազմական ոլորտին: Ծատ կարևոր փոփոխություններ տեղի ունեցան սո-
ցիալ-տնտեսական հարաբերությունների ոլորտում: Բարենորոգությունը
նպաստեց ոչ միայն ֆեոդալական հողատիրության և դրանով պայմանա-
վորված՝ գյուղացիների ճորտացման զարգացմանը, այլև որոշ ֆեոդալնե-
րի՝ մյուսներին համաստորադասության համակարգի առաջացմանը:

Բենեֆիցի կրողի և հողը հանձնողի (նրանց համապատասխանաբար
կոչում էին վասալ և սենյոր) միջև հաստատվեցին պայմանագրային հա-
րաբերություններ, որի կարևոր միավորն էր ռազմական ծառայության
պարտականությունը՝ հողը ստանալու նպատակով: Բացի պետության դե-
կավարից, բենեֆիցիներ սկսեցին բաժանել նաև խաշոր ֆեոդալները՝ ձեռք
բերելով վասալներ:

Այսպիսով, աստիճանաբար սկսեցին ձևավորվել վասալային հարա-
բերությունները, որոնք ընդգրկեցին ամբողջ ֆեոդալների դասը:

Ֆեոդալական հողային սեփականության աճն ուղեկցվում էր գյուղա-
ցիների վրա առանձին սենյորների ռազմական, ոստիկանական, դատա-
կան և ֆինանսական իշխանության ուժեղացումով: Այդ պատճառով պա-
տահական չէր սենյորների այսպես կոչված անձեռնմխելի իրավունքների
ընդլայնումը, որը սկսվել էր դեռ Մերովինգների օրոք:

Դատական, ոստիկանական, ֆինանսական ոլորտներում համարյա
բոլոր իրավագործությունները տրվում էին կալվաժատերերին: Անձեռնմ-
խելիության առաջացումն ուներ հեռու գնազող հետևանքներ:

Այս ամենը վկայում էին հողային հարաբերություններում իսկական
հեղաշրջման մասին:

Սակայն սկզբնական շրջանում Կարլ Մարտելի բարենորոգությունը
նպաստում էր կենտրոնական իշխանության ժամանակավոր ուժեղացմա-
նը: Վերակառուցված զորքի օգնությամբ ետ մղվեցին արտաքին թշնամի-
ների հարձակումները, ճնշվեց անհնազանդ ազնվականությունը, ստեղծ-
վել էր մի զորք, որն ամբողջովին կազմված էր տիրող դասակարգի ներկա-
յացուցիչներից: Այն պետական աշխարհագորը դարձնում է գյուղացիու-
թյան ճնշման միակ միջոցը:

Բ) Պետական կարգը: Ֆրանկյան պետության զարգացումը տեղի էր ունենում վաղ ֆեոդալական միապետության բնորոշ գծերի վերացման և այն սկզբունքների հաստատման ճանապարհով, որոնք բնորոշ էին ֆեոդալական պետությանը՝ ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանում: Այդ գործընթացը երկարատև, բարդ և բավականին հակասական էր:

Տիրող դասակարգերի հիմնական խմբերը շահագրգռված էին դրանով, քանի որ միայն հզոր պետական մեքենայի միջոցով նրանք կարող էին հաստատվել Գալիայում, ստրկացնել ազատ ֆրանկյան գյուղացիներին, որոնց շնորհիվ էր նվաճվել այդ երկիրը:

Հզոր պետությունն անհրաժեշտ էր նաև այլ նպատակի հասնելու համար, այն է՝ ստրկացնել և թալանել հարևան երկրները, ինչպես նաև իր տարածքը պաշտպանել արտաքին հարձակումներից:

Կարլ Մարտեի բարենորոգության անցկացումից հետո նկատվում է կենտրոնական իշխանության ժամանակավոր ուժեղացումը: /751թ. գահի վրա հաստատվում է նոր հարստություն: Աշխարհիկ և հոգևոր ազնվականության ժողովի ժամանակ Կարլ Մարտեի որդին՝ Պիպինը, որն ուներ իրական իշխանություն, քազավոր հռչակվեց:

Միապետությունը հասավ բարձրագույն ծաղկմանը նրա որդի Կարլի օրոք, որն անվանվեց Մեծ (VIII դարի երկրորդ կեսից IX դարի սկիզբը):

Նվաճողական արշավների հետևանքով միապետության սահմաններն ընդլայնվեցին:

Պետության հզորացման արդյունքը հանդիսացավ Կարլ Մեծի կայսր հռչակվելը: Միապետությունն ուժեղացնում էր եկեղեցու հսկողությունը:

Թագավորական (կայսերական) արքունիքը վեր է ածվում պետական կառավարման կենտրոնի: Բայց այս ամենը չէր նշանակում, որ կայսրը դառնում է միապետ: Պետության ղեկավարը, փաստորեն, պետք է կիսեր իշխանությունն ազնվականության հետ, ստանց որի համաձայնության չէր ընդունվում որևէ կարևոր որոշում: Ամենախոշոր աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները մտնում էին թագավորական (կայսերական) խորհրդի մեջ: Համարյա ամեն տարի տեղի էր ունենում արքունական և զավառական ազնվականության համագումար, որը կոչվում էր «Մեծ դաշտ»:

Խորհուրդը և համագումարներն այն հիմնարկներն էին, որոնք անմիջականորեն մասնակցում էին քաղաքականության ձևավորմանը:

Երկրում պետական կառավարման մարմինները բնութագրվում էին հետևյալ կերպ.

1) Հողերի վրա տնտեսապես իշխող պաշտոնյաները միաժամանակ կատարում էին վարչա-հատական ֆունկցիաներ՝ այդ հողերի վրա բնակվող բնակչության նկատմամբ:

Տնտեսական և պետական ֆունկցիաների ադապտի միասնության պայմաններում իր արտահայտությունն էր գտնում ուսումնասիրվող ժամանակաշրջանի ֆեոդալական պետականության կարևորագույն սկզբունքը՝ քաղաքական իշխանությունը հանդիսանում էր «հողային սեփականության բնորոշ հատկանիշը»:

2) Ռազակայում էր պետական կառավարման առանձին ոլորտների հաջորդական սահմանազատումը: Պաշտոնյաները, որպես կանոն, համատեղում էին ռազմական, ֆինանսական և դատական ֆունկցիաները:

Միայն կենտրոնական կառավարման համակարգում նշմարվեց որոշ սահմանազատում: Բայց այստեղ դեռ չկար հատուկ գերատեսչական ապարատ:

3) Այս կամ այն ծառայության դիմաց ստանում էին որոշակի քանակությամբ հողեր:

Քանի որ ազնվականները դառնում էին խոշոր հողատերեր և չէին ապրում անընդհատ արքունիքում, ավելի մեծացավ պաշտոնյա անձանց՝ նախարարների նշանակությունը:

Սկզբնական շրջանում նախարարներն իբեցից ներկայացնում էին թագավորական տնտեսության կառավարիչներ: Նրանք գտնվում էին արքունիքում և ղեկավարում էին թագավորական կալվածքների կառավարիչների գործունեությունը, որոնք ցրված էին ամբողջ երկրով: Ըուտով նրանք զխավորեցին պետական կառավարությունը և դատարանը: Այն ժամանակ դեռևս գոյություն չունեին պետական և թագավորական անձնական սեփականության բաժանումը, համապետական խնդիրները դիտում էին որպես արքունիքի անձնական գործեր:

Աստիճանաբար միապետները դառնում են խոշոր լատիֆունդիաների սեփականատերեր:

Թագավորական կարևորագույն պաշտոնյաներից էին՝ 1) մարդպետը (այս պաշտոնի ժառանգորդներն այն լուծարեցին այն ժամանակ, երբ իրենք գրավեցին թագավորական գահը), 2) պֆալցգրաֆը (սկզբում հետևում էր թագավորական ծառաներին, ապա զխավորեց պալատական դատարանը), 3) թեզաուրարին՝ «գանձերի պահապանը», որը վարում էր թագավորի տնօրինության տակ գտնվող նյութական արժեքների հաշվառումը: Փաստորեն, նա պետական գանձապետն էր, քանի որ պետական գանձարանը նույնացվում էր միապետի անձնական ունեցվածքի հետ, 4) մարշալը՝ սկզբում թագավորական ախոռապետ, ապա՝ հեծյալ բանակի պետ: Հաճախ նա ղեկավարում էր ռազմական գործողությունները, 5) արքիպիսկոպոսան՝ թագավորի խոստովանահայրը, պալատական հոգևորականության ավագը, որը թագավորական խորհրդի պարտադիր անդամ էր:

Ամբողջ երկիրը բաժանված էր շրջանների՝ պագերի (հարավում սահմանները համընկնում էին Հռոմի նախկին վարչատարածական բաժանման հետ): Այդ տարածաշրջանի կառավարումը հանձնվում էր կոմսի պաշտոնյա անձի, որին նշանակում էր թագավորը: Իր տրամադրության տակ նա ուներ ռազմական ջոկատ:

Տարածաշրջանները բաժանվում էին հարյուրյակների: Սկզբում նրանց գլխավորում էր ընտրովի անձը: Բայց արդեն Մերովինգներին հաջողվեց նրան փոխարինել պետական պաշտոնյայով: Նա ենթարկվում էր կոմսին:

Համայնքները (մարզերը), որոնք մտնում էին հարյուրյակի կազմի մեջ, պահպանում էին ինքնակառավարումը:

Երկրի սահմաններում ստեղծվել էին ավելի մեծ տարածքային միություններ՝ դքսություններ, որոնք կազմված էին մի քանի տարածաշրջաններից: Դրանք կառավարում էին դքսերը, որոնք համարվում էին որպես աշխարհագրի հրամանատարներ: Երանք պետք է ապահովեին սահմանների պաշտպանությունը: Մնացած հարցերում նրանք ունեին կոմսերին հավասար իրավունքներ:

Վաղ գերմանական հողերում (պետության արևելյան շրջանները) դուքսի իշխանությունն ուներ այլ բնույթ: Այն իր արմատներով գնում էր դեպի անցյալը, դեպի ցեղական առաջնորդների ժամանակները, որոնց հետևորդները դարձան ֆրանկյան թագավորների դքսեր:

VII դարի սկզբում պաշտոնյաները (դքսեր, կոմսեր) աստիճանաբար դառնում են խոշոր հողատերեր: Նրանց կալվածքները մեծանում են թագավորի «նվերների» և գյուղացիների հողերի բռնագրավման շնորհիվ: Պաշտոններն ավելի հաճախ փոխանցվում էին ժառանգությամբ՝ դառնալով առանձին ընտանիքների արտոնությունը: Պաշտոնի անվանումը (դուքս, կոմս) դիտվում էր որպես ժառանգական պատվավոր տիտղոս:

Միաժամանակ աճում են առանձին սենյորների անձեռնմխելի իրավունքները:

Բատարան: Բարձրագույն դատական իշխանությունը պատկանում էր միապետին: Նա այն իրականացնում էր ազնվականության ներկայացուցիչների հետ միասին: Թագավորական խորհուրդը զբաղվում էր ամենավտանգավոր իրավախախտումներով:

Երկրի հիմնական դատական ատյանը, որտեղ քննվում էր գործերի մեծամասնությունը, «հարյուրյակների դատարաններն էին»: Մի քանի դալաշրջանի ընթացքում նրանք փոփոխության չեն ենթարկվել: Եվ դա պատահական չէ: Դատարանները, որոնք ամենից շատ էին առնչվում ժողովրդի հետ, խառնվում նրա կյանքին, պետք է ունենային ոչ միայն հարկադրողական ուժ, այլ նաև համապատասխան հեղինակություն: Սակայն այդ եր

կուսը միասին պետական իշխանությունը չէր կարող ապահովել: Պահպանելով դատարանի հին ձևը՝ կառավարող շերտերը իրենց շահերից ելնելով ձգտում էին օգտագործել այն հարգանքը, որն ունեին ժողովրդի մեջ: Աստիճանաբար, բայց հաստատորեն դատական իշխանությունը կենտրոնանում էր այն անձանց ձեռքերում, ում նշանակում էր թագավորը:

Սկզբնական շրջանում կոմսը կամ փոխերեցը հրավիրում էին ազատ մարդկանց ժողով՝ մալբերգ (հարյուրյակներ), որն իր շրջապատից ընտրում էր դատավոր ռախինբուրգեր: Դատն անցկացնում էր ընտրովի նախագահը՝ տունգինը: Դատարանը կազմված էր, որպես կանոն, իրավունքն ինացող ունևոր մարդկանցից: Բայց դատական նիստին մասնակցում էին հարյուրակի բոլոր ազատ և հավասարազոր բնակիչները, իսկ թագավորի պաշտոնյաները հսկում էին դատավարության ընթացքի վրա:

Աստիճանաբար ուժեղանում է ռախինբուրգերի դատական գործունեության հսկողությունը՝ թագավորի պաշտոնյաների կողմից, որոնք դառնում են դատարանների նախագահներ՝ փոխարինելով տունգիններին:

Կայսրիզմներն ավարտեցին այդ պրոցեսը: Թագավորի պատվիրակներն իրավունք ստացան ռախինբուրգերի փոխարեն նշանակել դատարանի հատուկ անդամներին՝ սկաբիններին: Ազատ մարդկանց ներկայությունը դատի ժամանակ չեղյալ հայտարարվեց:

Երկրի հետագա զարգացումը նպաստեց դատական մարմինների վերափոխմանը: Անձեռնմխելի սենյորները դատական բնագավառում ընդլայնում են իրենց իրավունքները գյուղացիների նկատմամբ: Անձեռնմխելիության իրավունք և դատական իրավասություններ են ձեռք բերում պաշտոնատար անձինք (ղքսեր, կոմսեր), ինչպես նաև բարձրագույն հոգևոր առաջնորդները և աճեմից առաջ նախկուսուները:

Երկրում Մերովինգների դինաստիայի առաջին թագավորների օրոք գորքի միջուկը կազմում էր թագավորական գորագունդը: Նրա մեծ մասը գտնվում էր թագավորի կողքին և «սնվում էր» նրա ձեռքերից: Առատորեն շնորհված, լավ զինված գորքը գահի գլխավոր հենարանն էր: Չորագունդը համարվում էր գյուղացիության ճնշման գլխավոր միջոցը՝ զինված ճակատարհով:

Այդ ժամանակ դեռևս ժողովրդական աշխարհագորը պահպանում էր իր նշանակությունը: Այն հարկավոր էր միապետությանն արտաքին պատերազմներ վարելու համար, քանի որ գորագունդի քանակությունը համեմատաբար մեծ չէր (օր. Խլոդվիգն ուներ 3000 դրուժինա): Ամեն տարի կազմակերպվում էին գորատեսներ՝ «մարտյան դաշտեր»:

Աստիճանաբար կառավարող շրջանների վերաբերմունքն աշխարհագորի նկատմամբ փոխվում է: Այն վերջնականորեն վերածվում է օգնական

ուծի:

IX դարի սկզբում ֆրանկյան պետությունը գտնվում էր իր հզորության գագաթնակետում: Ընդգրկելով Արևմտյան Եվրոպայի համարյա ամբողջ տարածությունը և իր սահմանների վրա շունենալով ուժով իրեն հավասար հակառակորդ՝ այն անխորտակելի և անսասան էր: Սակայն այդ ժամանակ արդեն իր մեջ կրում էր թուլացման և քայքայման տարրերը: Նվաճումների հետևանքով ստեղծված այդ պետությունն իրենից ներկայացնում էր ժողովուրդների խառնակալույտ, որոնք միմյանց հետ կապված էին ռազմական ուժով: Ժամանակավոր ճնշելով ճորտացվող գյուղացիության զանգվածային դիմադրությունը՝ ֆրանկյան ֆեոդալները կորցրեցին միասնական պետության ստեղծման շահագրգռվածությունը: Պետության քայքայումը դառնում է անխուսափելի:

843թ. պետության քայքայումն իրավաբանորեն հաստատվեց պայմանագրով, որը Վերդենում կնքեցին Կարլ Մեծի թոռները: Կայսրության իրավահաջորդները դարձան երեք թագավորությունները՝ արևմտաֆրանկյան, արևելաֆրանկյան և միջին ֆրանկյան (ապագա Ֆրանսիան, Գերմանիան և Իտալիայի մի մասը):

69

3. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Իրավունքի աղբյուրները: Իրավունքի հիմնական աղբյուրն է սովորույթը: Սովորույթները կրում էին ցեղային բնույթ, և յուրաքանչյուր մարդ կրում էր ցեղի սովորույթների ազդեցությունը՝ անկախ իր բնակավայրից:

V-IX դդ. ֆրանկյան պետության տարածքում տեղի է ունենում ցեղերի սովորույթների զրանցում՝ այսպես կոչված «բարբարոսական պրավյանների» տեսքով: Ստեղծվում են Սալիկյան, Բուրգունդյան, Ալյեմանյան և այլ պրավյաններ: 802թ. Կարլ Մեծը հրամայեց կազմել իր կայսրության մեջ մտնող բոլոր ցեղերի պրավյանները: Սովորութական իրավունքի նորմերի հետ մեկտեղ, որոնք կազմվել էին ստրկատիրական համայնակարգից ֆեոդալական հասարակությանն անցման ժամանակաշրջանում, այդ պրավյանները սահմանում էին իրավունքի նոր նորմեր, որոնք ծագեցին գույքային շերտավորման, դասակարգերի կազմավորման և ֆեոդալական հարաբերությունների ձևավորման գործընթացի աճի հետ:

✗ Թագավորական իշխանության դերի աճի հետ թագավորները սկսում են հրապարակել օրենսդրական որոշումներ, որոնք անվանվեցին կապիտուլյարիներ և ունեին համապարտադիր նշանակություն: Իր կապիտուլյարիներով թագավորական իշխանությունն ակտիվորեն նպաստում էր ֆեոդալական հարաբերությունների ձևավորմանը և ամրապնդմանը:

Վաղ ֆեոդալական իրավունքի աղբյուր են համարվում նաև անձեռն-
խելի պատվոգրերը և, այսպես կոչված, բանաձևերը: Անձեռնմխելի պատ-
վոգրերը տրվում էին թագավորական իշխանության կողմից հողային մագ-
նատներին, վանքերին և եկեղեցիներին: Բանաձևերն իրենցից ներկայաց-
նում էին պատվոգրերի, պայմանագրերի և այլ պաշտոնական փաստաթղ-
թերի օրինակներ: Դրանք մշակում էին հիմնականում հոգևորականները:
Բանաձևերի բազմաթիվ ժողովածուների թվում ամենահայտնին վանա-
կան Մարկուֆի բանաձևերի ժողովածուն է, որը լույս է տեսել VII դարի
վերջում:

Սալիկյան պրավոյաի (օրենքի) հիմնական գծերը: Սալիկյան պրավ-
ոյան իրավունքի հենագույժ ժողովածուներից է: Այն սալիկյան ֆրանկների
սովորույթների գրառում է: Այդ սովորույթների գրառումը գիտնականները
վերաբերում են Խլոդվիգի կառավարման ժամանակներին: Հետագայում
«Պրավոյան» լրացվել է թագավորական կապիտուլյարիներով:

Սալիկյան պրավոյան հիմնականում իրենից ներկայացնում է սովո-
րույթների անջատ և անհամակարգ գրառում, որը հիմնականում կազմվել
է մինչև ֆրանկյան պետության ձևավորումը: Այդ պատճառով նրա բո-
վանդակությունն արտացոլում է այն սոցիալական և իրավական կարգը,
որը բնութագրում է նախնադարյան համակարգի անցումը դասակարգա-
յին հասարակությանը: Սալիկյան պրավոյան բացառապես է նախնա-
դարյան համայնական կարգերի քայքայման, մասնավոր սեփականու-
թյան և գույքային անհավասարության ձևավորման պրոցեսը: Նրա հիմ-
նական խնդիրներից մեկը մասնավոր սեփականության պաշտպանու-
թյունն է, որը պետք է փոխարիներ կոլեկտիվ սեփականությանը:

Ինչպես «Բարբարոսական», այնպես էլ «Սալիկյան» պրավոյաները
բնութագրվում էին իրավախախտումների և նրանց համապատասխան
պատժամիջոցների ընդհանուր, վերացական հասկացությունների բացա-
կայությանը: Այն ունի կազուալ բնույթ, այսինքն՝ նախատեսում է իրավա-
խախտումների և նրանց համապատասխանող պատիժների կոնկրետ
դեպքեր: Օրինակ, Սալիկյան պրավոյային հայտնի չէ մարմնական վնաս-
վածքների ընդհանուր հասկացությունը: Այստեղ թվարկվում են նրա ա-
ռանձին տեսակները. (օր. «Եթե մեկը վնասի մյուսի ձեռքը կամ ոտքը, գր-
կի նրան ականջից կամ քթից», «Եթե մեկը հանի մյուսի աչքը», «Եթե մեկը
պոկի մյուսի բութ մատը (ձեռքի կամ ոտքի)» և այլն):

Սալիկյան պրավոյաի բնորոշ գիծ է համարվում ձևականությունը, այ-
սինքն՝ բոլոր իրավական գործողությունները և ակտերը կատարվում էին
խիստ սահմանված ձևով, որի խախտումն այդ գործողություններին գր-
կում էր օրինական ուժից:

Տարածքային գյուղական համայնքը՝ ֆրանկյան հասարակության սո-

ցիալ-ունտեսական միավորը, պահպանում էր նախնադարյան համայնակարգի նշանակալից մնացուկները: Դա իր արտահայտությունը գտավ Սալիկյան պրավդայի մեջ: Այսպես, տոհմի բոլոր անդամները կապված են միմյանց հետ բազմազան արյունակցական-բարեկամական կապերով, համատոհմացիները մասնակցում էին ժառանգությանը, սպանության համար տուգանքի մուծմանը և այլն:

Միաժամանակ Սալիկյան պրավդայում իր արտահայտությունն է գտել նախնադարյան համայնակարգի քայքայումը:

Այն վկայում է մասնավոր սեփականության և միևնույն համայնքում տարբեր անդամների միջև գույքային անհավասարության առաջացման մասին: Այդ սեփականությունը կոչվում էր ալլոդ և փոխանցվում էր ժառանգաբար՝ տղամարդու և կնոջ գծերով: Ընտանիք՝ Սալիկյան պրավդան լույս տեսնելուց հետո, վարելահողը դարձավ մասնավոր սեփականություն (ալլոդ):

Մասնավոր սեփականության առաջացման հետ առաջացավ նաև գույքային անհավասարությունը, որի մասին էին վկայում փոխառությունների և պարտքի հանձնարարությունների վերաբերյալ հոդվածները:

«Պրավդան» վկայում էր արյունակցական բարեկամական կապերի քայքայման մասին, քանի որ այն նախատեսում է բարեկամական կապերից հրաժարման հնարավորությունը՝ հատուկ խորհրդանշական ծիսակատարության միջոցով, որը կատարվում էր դատական ժողովի ժամանակ: Բարեկամությունից հրաժարումը նշանակում էր հրաժարում ժառանգությունից: Այդ նորմն արտահայտում էր հարստացած համայնականների շահերը, որոնք չէին ցանկանում կրել իրենց աղքատացած բարեկամների՝ վճարման ծախսերի և տուգանքների հետ կապված դժվարությունները:

Մասնավոր սեփականության առաջացումը նպաստեց սեփականատերերի մահից հետո ունեցվածքը ժառանգելու հնարավորության ստեղծմանը: Ըարժական գույքը ժառանգության էր անցնում առաջին հերթին երեխաներին: Երեխաներ չունենալու դեպքում ժառանգորդներ էին համարվում՝

1) մայրը, 2) եղբայրներն ու քույրերը, 3) մոտիկ բարեկամները: Հուղ ժառանգում էին առաջին հերթին արական սեռի ներկայացուցիչները: Հետագայում հողի ժառանգման հրավումը վերապահվեց նաև աղջիկներին՝ հանգուզլաի որդիների բացակայության դեպքում: Սկզբնական շրջանում ժառանգությունն ըստ կտակի հայտնի չէր: Սակայն մասնավոր սեփականության զարգացումը հանգեցրեց այն բանին, որ սեփականատերն իրավունք ունեցավ ունեցվածքը մահից հետո նվիրատվության ճանապարհով փոխանցել որևէ անձի: Այն կոչվեց «աֆֆատումիա»: «Աֆֆատումիան» տեղի էր ունենում ժողովրդական ժողովի ժամանակ ըստ հատուկ կարգ ու կա

նոնի, որոշ արարողությունների պահպանմամբ և որոշ խորհրդանիշների օգնությամբ: «Աֆֆատոմիայի» բնույթը կայանում էր նրանում, որ նվիրատունը վաստորեն ունեցվածքը կամ նրա մի մասը հանձնում էր որևէ վստահված անձի, որը պարտավորվում էր նվիրատուի մահից հետո մեկ տարուց ոչ ուշ ժամանակահատվածում հանձնել այդ ունեցվածքը նշած անձին:

Պարտավորական հարաբերությունների ոլորտում Սալիկյան պրավդայում նշվում են միայն գործարքների պարզ ձևերը՝ առքուվաճառքը, դրամական վարկը, փոխառությունը, փոխանակումը և նվիրատվությունը: Սեփականության իրավունքի փոխանցումն այդ գործարքների ժամանակ կատարվում է հրապարակորեն՝ հասարակ փոխանցման ճանապարհով:

Պարտավորություններ չկատարելը, ըստ Սալիկյան պրավդայի, հանգեցնում է գույքային պատասխանատվության: Եթե պարտապանը հրաժարվում էր վճարել պարտքը կամ վերադարձնել իրը, ապա պարտատերը կարող էր դատարանի միջոցով ստանալ ոչ միայն իր հասանելիքը, այլ նաև լրացուցիչ տուգանք՝ ժամկետը անցնելու պատճառով: Պարտքը պահանջվում էր հմտուկ սահմանված ձևով:

Ամուսնությունը իրականացվում էր հարսի՝ փեսայի կողմից գնման միջոցով: Առևանգումը Սալիկյան պրավդան պատժում էր: Արգելում էին ամուսնություններ ազատների և ստրուկների միջև: Այդպիսի ամուսնության ժամանակ ազատ մարդը դառնում էր ճորտ: Օրինական չէին համարվում ամուսնություններն արյունակից բարեկամների միջև:

Ամուսնության ժամանակ փեսան հարսնացուին որպես փրկագին վճարում էր օժիտ, որը մտնում էր ամբողջ գույքի մեջ: Կնոջ մահից հետո այն ժառանգում էին երեխաները:

Սալիկյան պրավդայի մեջ ոչինչ չի ասվում ամուսնալուծության մասին: Սակայն Մարկուլֆի բանաձևն այդ մասին սահմանում է ընդհանուր կանոն, այն է՝ ամուսնալուծություն երկկողմանի համաձայնության դեպքում: Հետագայում եկեղեցու ազդեցության տակ ամուսնալուծություններն արգելվել են:

Սալիկյան պրավդայում մեծ տեղ է հատկացվում հանցագործություններին և պատիժներին: Հանցագործություն էր համարվում անձին կամ գույքին վնաս հասցնելը և թագավորական «խաղաղության» խախտումը: Պատիժը տուժողին կամ նրա տոհմապիղծներին վնասի փոխհատուցումն էր, իսկ թագավորական խաղաղության խախտման դեպքում թագավորին տուգանքի վճարումն էր:

† Из Салической правды (Lex Salica), гл. L, in:u Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 253:

Ըստ Սալիկյան պրավոյայի, հանցագործությունների և պատիժների համար բնորոշ էին հետևյալ գծերը.

1. Որպես կանոն, արյան վրեժը և համայնքից արտաքսումը (որպես պատժի հիմնական միջոց նախնադարյան հասարակարգում) փոխարինվում են տուգանքների համակարգով: Այստեղ նույնպես պահպանվում են նախնադարյան որոշ մնացուկներ.

ա) եթե մարդասպանն ի վիճակի չէր լինում տուգանք մուծել սպանության համար (վերգելդ), ապա նա վճարում էր իր կյանքով,

բ) մերձավոր բարեկամներն իրավունք ունեն մուծել և ստանալ տուգանքը,

գ) եթե անձը հայտարարվում է օրենքից դուրս, ապա նա արտաքսվում էր համայնքից, և որևիցե մեկին արգելվում էր նրան ընդունել:

2. Տուգանքի չափը որոշվում էր՝ հաշվի առնելով հանցագործի և տուժողի սոցիալական և իրավական դրությունը, ինչպես նաև տուժողի սեռը և տարիքը: Այնտեղ, որտեղ ստրուկի համար նախատեսված էր մահապատիժը, ազատ մարդը վճարում էր տուգանք: Եթե ֆրանկական համայնքի ազատ անդամի սպանության համար նախատեսված էր 200 սոլիդ տուգանք, իսկ հռոմեական հողատիրոջ սպանության համար 100 սոլիդ, ապա թագավորի ներկայացուցիչների սպանության համար նախատեսվում էր տուգանք՝ եռակի չափով¹:

3. Սալիկյան պրավոյան չի ամրագրում այն ընդհանուր սկզբունքները, որոնցով առաջնորդվում են հանցագործությունները և պատիժները սահմանելիս: Սակայն նրա հռչվածների վերլուծումը թույլ է տալիս ընդգծել այդպիսի ընդհանուր սկզբունքներ, որոնցով՝

ա) հանցագործությունների սուբյեկտներ էին հանդիսանում ոչ միայն ազատ, այլ նաև կախյալ մարդիկ և ստրուկները,

բ) թագավորապաշտ «խնամախոսության» խախտման դեպքում պատասխանատվություն էին կրում 12 տարեկան հասակից,

գ) պատիժը, որպես կանոն, կախված չէր մեղքի ձևից և սահմանվում էր միայն կատարված արարքի վերջնական արդյունքի դեպքում, որը վնաս էր հասցրել անձին կամ գույքին: Բայց մի շարք դեպքերում պատիժ սահմանելիս հաշվի էին առնվում հանցագործության դիտավորությունը և պատճառած վնասի ծանրության աստիճանը: Հանցագործության փորձ կատարողը, ինչպես նաև հանցագործությանը նպաստողը և դրողը նույնպես ենթարկվում էին ծանր պատիժների:

4. «Պրավոյան» ավելի ծանր է համարում նյութական պատիժները: Սալիկյան պրավոյայի վերլուծությունը թույլ էր տալիս ընդգծել հանցա-

¹ Из Салической правды (Lex Salica), гл. XLI, утѣу Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 249:

գործությունների և պատիժների հետևյալ տեսակները.

1. Անձի դեմ ուղղված հանցագործություններ (սպանությունը, բռնաբարությունը, վնաս հասցնելը, զրպարտությունը, վիրավորանքը, ազատ մարդկանց առևանգումը, պատվի, արժանապատվության, ազատության ոտնձգությունները):

2. Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ (գողությունը, թալանը, գույքին վնաս պատճառելը և այլն):

3. Արդարադատության կարգի դեմ ուղղված հանցագործություններ (դատարան չներկայանալը, սուտ վկայությունը և այլն):

4. Թագավորի կարգադրությունների խախտումը: Այսպես օրինակ, եթե թագավորը որևէ մեկին կարգադրում էր բնակվել որևիցե գյուղում, իսկ նա հրաժարվում էր, ապա վերջինս պատժվում էր տուգանքով՝ 200 սոլիդ, այսինքն՝ այնքան, որքան նախատեսված էր սպանության դեպքում:

Ազատ մարդկանց համար նախատեսված հիմնական պատժամիջոցը տուգանքն էր: Այն բաժանվում էր երկու մասի մի մասը բաժին էր հասնում տուժողին կամ նրա մերձավորներին, իսկ մյուսը՝ 1/3-ի չափով, մուծվում էր թագավորական գանձարանը:

Օրենքից դուրս հայտարարման դեպքում նախատեսվում էր գույքի բռնագրավում:

Սալիկյան պրավդան ազատների համար չի նախատեսում այնպիսի պատժամիջոց, ինչպիսին է մարմնական վնասվածքը: Մահապատիժը, անդամախեղությունը (ամորձատում), մարմնական վնասվածքը (ճիպտի հարվածներ) կիրառելի էին միայն ստրուկների նկատմամբ: Սակայն Խլոդվիգի որդիների օրոք մահապատիժը կիրառվում է նաև ազատ մարդկանց նկատմամբ: Մահապատիժն ամենատանջալից եղանակներով կիրառվում էր գյուղացիական ապստամբությունների ճնշման ժամանակ:

Ըստ Սալիկյան պրավդայի, դատավարությունը կրում էր մեղադրական բնույթ, որի հիմնական գծերն են հանդիսանում՝

ա) քաղաքացիական և քրեական դատավարությունների իրականացումը միևնույն ձևով,

բ) գործի հարուցում հայցվորի և տուժողի նախաձեռնությամբ,

գ) կողմերի հավասար իրավունքներ և դատավարության իրականացումը կողմերի միջև վեճի ձևով (մրցակցություն),

դ) հաստատված կանոնների խիստ պահպանում (ձևականություն):

Դատավարությունը սկսվում էր սահմանված ձևով՝ վկաների ներկայությամբ: Եթե կողմերը չէին ներկայանում, պատժվում էին տուգանքով: Տուգանքից ազատվում էր նա, ով չէր ներկայացել հարգելի պատճառով (թագավորական ծառայություն կատարելը, հիվանդությունը, մեծավորներից մեկի մահը և այլն): Դատարանն անմիջապես կայացնում էր որոշում՝ մեղադրյալի ինքնախոստովանանքից հետո:

Ազատ մարդու կողմից կատարած հանցագործության ապացույց էին հանդիսանում հանցանքի վայրում բռնվելը, անձնական խոստովանությունը և վկաների ցուցմունքները: Սալիկյան պրավդան նախատեսում էր երեք տիպի ապացույցներ՝ մեղադրյալին արդարացնելու համար: 1) համաատենակալների ցուցմունքներ, 2) վկաների ցուցմունքներ և 3) օրդալներ:

Ապացուցման ամենատարածված ձևն էր համաատենակալությունը, որն օգտագործվում էր՝ հաստատելու մեղադրյալի այն երդումը, ըստ որի նա չի կատարել հանցագործությունը: Համաատենակալներ էին մեղադրյալի բարեկամները, ընկերները կամ հարևանները, որոնք, ի տարբերություն վկաների, հանդես չէին գալիս որպես փաստի ականատեսներ, այլ մեղադրյալի այսպես կոչված «բարի փառքի» վկաներն էին: Ըստ Սալիկյան պրավդայի, պետք է լինեին 12 համաատենակալներ:

Պրավդան տարբերում էր երկու տիպի վկաներ՝ ա) կատարված հանցագործության վկաներ, այսինքն՝ այն անձինք, որոնք գտնվում էին հանցագործության վայրում, (ականատեսներ), բ) հատուկ հրավիրված վկաներ, այսինքն՝ անձինք, որոնք հրավիրվում էին այս կամ այն դատավարական գործողությունների հաստատման համար: Սուտ վկայությունը, ինչպես նաև դատարան գալուց հրաժարվելը, պատժվում էր տուգանքով՝ 15 սոլիդ:

Ապացուցման տարածված ձև էր օրդալին («Աստծո դատը»), որի ժամանակ հանցագործը բացահայտվում էր Աստվածային ուժի՝ Աստծո օգնությամբ: Դրա համար հաճախակի օգտագործվում էին կրակը, եռացրած ջուրը, երկաթը: Տարածված էր օրդալի միայն մեկ տեսակ՝ «կաթսայով փորձարկում»՝ եռման ջրի օգնությամբ: Փորձությունը կայանում էր նրանում, որ մեղադրյալի ձեռքը մտցնում էին եռման ջրով կաթսայի մեջ, ապա այն կապում էին: Երեք օր անց այն արձակում էին, և եթե ձեռքի վրա չէին լինում այրվածքների հետքեր, մեղադրյալն արդարացվում էր: Այդպիսի փորձությանը դիմում էին նրանք, ովքեր չէին կարող ներկայացնել համաատենակալների: Մեղադրյալին թույլ էր տրվում որոշ գումարով ազատվել «կաթսայով» փորձությունից: Կեղծ ցուցմունք տալու դեպքում վկան պատժվում էր տուգանքով 15 սոլիդի չափով՝:

Ստրուկներից խոստովանություն ստանալու համար կիրառելի միջոց էր տանցանքը: Եթե մեղադրյալը համաձայնվում էր դատարանի որոշման հետ, նրան տրվում էր արտոնյալ ժամանակ՝ տուգանքը մուծելու համար: Թագավորական դատավարությունը անցկացվում էր խիստ սահմանված ձևով: Թագավորի դատին չներկայանալու կամ որոշումը չկատարելու դեպքում թագավորը մեղադրյալին հայտարարում էր օրենքից դուրս և հետո «ինքը՝ մեղադրյալը, նրա ամբողջ գույքը դառնում էին հայցվորի սեփականությունը»:

¹ Из Салической правды (Lex Salica), гл. XLVIII, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 252:

ԳԼՈՒԽ 8

ՖԻՆԱՆՍԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ֆրանսիական քաղաքությունն առաջացավ Կարոլինգյան կայսրության անկումից հետո: Ֆեոդալական պետության և իրավունքի պատմությունը Ֆրանսիայում բաժանվում է հետևյալ ժամանակաշրջանների: 1) Ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջան (IX-XIII դդ.), 2) դասային-ներկայացուցչական միապետության ժամանակաշրջան (XIV-XV դդ.) և 3) բացարձակ միապետության ժամանակաշրջան (XVI-XVIII դդ.):

1. ՖԵՈՂԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԱՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

12
Ա) Հասարակական կարգը, IX - XIII դարում ավարտվեց գյուղացիների հողերի զավթումը սենյորների կողմից: Գյուղացու մշտական օգտագործման տակ էր գտնվում տիրոջը պատկանող հողակտորի փոքր մասը: Այդ պատկանելության ձևերը և աստիճանները տարբեր էին: Գյուղացիների մեծ մասը սերվեր էին և վիլաներ:

Վիլան կարող էր փոխանցել կամ վաճառել իր հողակտորը: Դա ազատում էր նրան սենյորական պարտականից, որը փոխանցվում էր նոր տիրոջը: Երբ կատարվում էին ֆեոդալական բոլոր պարտականքները, սենյորն իրավունք չուներ վերցնել վիլանից նրա հողաբաժինը, որն այդ դեպքում պետք է փոխանցվեր ժառանգաբար:

Ավելի ծանր էր սերվերի դրությունը, որոնք գտնվում էին անմիջապես տիրոջ ժառանգական կախվածության տակ: Տիրոջ օգտին նրանք կատարում էին մի շարք պարտականքներ, վճարում էին բազմատեսակ հարկեր և տուրքեր:

Գյուղացիների մի մասը, այսինքն՝ բնակչության մեծամասնությունը, անհրաժեշտ ամեն բան արտադրում էր իր տնտեսության կամ էլ գյուղական համայնքի սահմաններում: Գյուղացիների դաժան շահագործումը նրանց ստիպում էր ապստամբություն բարձրացնել իրենց ճնշողների դեմ: Գյուղացիների մասսայական զինված ապստամբություններ են տեղի ունե-

ցել Նորմանդիայում (X դ.), Բրիտանիայում (X դ.), Ֆլանդրիայում (XI դ.):

Այս շրջանում զգալիորեն մեծացավ մաև քաղաքային բնակչության թիվը: Զաղաքներում սկսեց զարգացում ապրել արհեստագործությունը: Այն համայնքներն էլ քաղաքային արդյունաբերության առաջին հաջողությունը:

(Բ) Պետական կարգ: Թագավորությունը կազմված էր բազմաթիվ ֆեոդալական տիրույթներից, որոնք ձևականորեն հաշվում էին նրա մի մասնիկը, բայց փաստորեն իրենցից ներկայացնում էին ամբողջովին անկախ քաղաքական կազմավորում: Տեղերում թագավորի իշխանությունը թույլ էր կամ էլ ընդհանրապես բացակայում էր: Որոշ չափով թագավորն իրեն միապետ էր զգում իր տիրություն: Երկրի վերնախավը բազմիցս ընդգծում էր, որ Ֆրանսիային ուժեղ թագավոր է պետք:

Երկրում համախմբվածության բացակայությունը պայմանավորված էր նրա սոցիալ-տնտեսական հարաբերություններով և ոչ լրիվ հաղթահարված էթնիկական մեկուսացմամբ: Բնակչությունն իրեն չէր համարում որևէ ազգության պատկանող ժողովուրդ: Պետության կառուցվածքը վերջին հաշվով որոշվում էր ֆեոդալական հողային հարաբերություններով, որոնք հաստատվել էին Ֆրանսիայում այդ ժամանակաշրջանում: Հողի գերագույն տիրակալը թագավորն էր, չնայած հողի մեծ մասը գտնվում էր ֆեոդալների տիրապետության տակ: Նրանք համարվում էին թագավորի կամակատարները, իսկ թագավորը՝ նրանց սենյորը: Վասալի և սենյորի միջև կնքվում էր պայմանագիր: Վասալը ճանաչում էր իրեն իր սենյորի ենթակա և երդում էր տալիս հավատարմի մնալ նրան: Իր հերթին վասալին սենյորը տալիս էր սուր, ձեռնոցներ՝ որպես իշխանության խորհրդանիշ: XII դարի վերջում վասալի զինվորական ծառայությունը սահմանափակվում էր տարեկան 40 օր ժամանակով: Վասալը մասնակցում էր սենյորի դատին, եթե այդպիսին տեղի էր ունենում: Նա մասնակցում էր մաև սենյորի խորհրդակցական խորհրդին:

Ֆեոդալական պայմանագիրը փաստորեն չէր սահմանափակում վասալի լիազորությունն իր կառավարման տարածքներում: Թագավորի վասալները դառնում էին սենյորներ՝ իրենց վասալի հարաբերությամբ: Սովորական պայմաններում ֆեոդալական պայմանագիրը պահպանվում էր այն համակարգում, որտեղ սենյորն ուներ ռեալ ուժ:

Առաջին ֆրանսիական թագավորներն այդ հնարավորությունը չունեին: Այդ պատճառով հզոր վասալներն իրենց զգում էին ինքնուրույն: Նրանք կնքում էին պայմանագրեր արտասահմանյան երկրների հետ, վայրում էին պատերազմներ: Նույն դրությունը դիտվում էր մաև ֆեոդալական աստիճանակարգի ցածր խավի համակարգում: Դրան նպաստում էր մաև «իմ վասալի վասալն իմ վասալը չէ» սկզբունքը: Այդ ամենը որոշում էր գլ-

խավորապես պետական առանձին մարմինների կառուցվածքը և լիազորությունները: Այս շրջանում թագավորն ընտրովի էր: Նրա մահից հետո վասալներն ընտրում էին նոր թագավոր: Թագավորական կուրիան կամ գերագույն խորհուրդը համապետական միակ օրգանն էր, որն ուներ մեծ ազդեցություն ողջ երկրի վրա: Մեծ խորհուրդը ներկայացնում էր երկրի խոշոր ֆեոդալների համագումար: Այստեղ քննարկվում և որոշվում էին արտաքին և ներքին քաղաքականությանը վերաբերող կարևորագույն հարցեր:

Կառավարումը տեղերում շատ բանով կրկնում էր ֆրանկների միապետության ժամանակների կառավարմանը: Թագավորի դոմենը (հայրենական կալվածքը) մեծ չէր և համընկնում էր տարածքով իր անձնական տնտեսության տիրույթի հետ: Այն բաժանված էր առանձին շրջանների, որոնց գլուխ կանգնած էին թագավորի կողմից նշանակված կառավարիչները:

Դատարանին հատուկ էին միջնադարի արդարադատության բոլոր բնորոշ գծերը: Յուրաքանչյուր ազատ պետք է դատվեր միայն իրեն հավասարի՝ թագավորի վասալի հետ: Այդպես էր կազմվում թագավորական կուրիան:

Նմանատիպ կարգ էր հաստատվել ցածր աստիճանի ֆեոդալական հիերարխիայում (աստիճանակարգում): Ոչ ազատ բնակչությունը, ամենից առաջ սերվերը դատվում էին իրենց սենյորների կողմից: Այստեղ իշխում էր սենյորական արդարադատությունը: Սենյորները բաժանում էին իրենց միջև դատական իշխանությունը ըստ ֆեոդալական պայմանագրի պայմանների: Առանձին սենյորների դատական իրավագործությունը չպետք է գերազանցեր հաստատված անձեռնմխելիության իրավունքների ծավալը: Դատական իշխանությունն առանձնացված չէր վարչական իշխանությունից:

Դատական բնագավառում մեծ իրավագործություններով էր օժտված եկեղեցին: Եկեղեցական արդարադատությանը պատկանում էին հոգևորականության քրեական և քաղաքացիական գործերը, ինչպես նաև ոչ հոգևորական աստիճան ունեցող, բայց ինչ-որ բանով եկեղեցական ծառայությունների հետ կապված գործերը:

Երկրի զինված ուժերի հիմքն էին կազմում ասպետ վասալները: Չինված ուժերի կառուցվածքում պահպանվել էին վասալային հարաբերությունները: Սենյորն ասպետ վասալների խմբի գլխավորն էր: Այդ գործերում կարգապահությունը շատ թույլ էր: Չնայած որ այն թվով փոքր էր, սակայն շատ վստահելի էր դասակարգային հարաբերություններում: Թագավորը և ավելի գորեղ ֆեոդալներն իրենց իշխանության տակ ունեին վարձկան զինվորներ, որոնք ավելի վստահելի էին:

Երկրի միավորման սկիզբը. Ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանը վերջում ձևավորվեցին քաղաքական իշխանության ուժեղացման միտումներ: Քաղաքային բնակչությունն աջակցում էր դրան: Այդ ժամանակ քաղաքները դարձան արհեստների և առևտրի կենտրոններ: Քաղաքային բնակչությունը միասնե չէր: Կային հարուստ վաճառական-վաշխառուներ, անձնական արհեստանոցներ ունեցող ունևորներ, շարքային մանր արհեստավորներ և չքավորներ:

Քաղաքային բնակչության հակասությունը սենյորների հետ գնալով սրվում էր: Դա բացատրվում է նրանով, որ սենյորների տիրույթների սահմաններն անցնելու համար անհրաժեշտ էր մուծել մաքս (տուրք): Իսկ դա խանգարում էր արհեստների և առևտրի զարգացմանը: Մյուս կողմից քաղաքային բնակչությունը հարկադրված էր մուծել ծանր հարկեր: Այս պայմաններում է, որ նրանք վճռականորեն որոշում են պայքարել սենյորների դեմ՝ քաղաքների ինքնակառավարման՝ կոմունայի համար:

Այդ պայքարն արագորեն միավորվեց ֆեոդալական մասնատվածության դեմ ուղղված շարժմանը: Պայքարի ընթացքում, որը հաճախ էր վերածվում զինված ելույթների, մի շարք քաղաքներ հասան հաջողության: Այստեղ իշխանությունն անցավ քաղաքային վերնախավի ձեռքը:

Քաղաքային ինքնակառավարման իրավունքը կարգավորվում էր հատուկ փաստաթղթերով՝ խարտիաներով: Այն արտահայտում էր քաղաքային բնակչության կամքը, կարգավորում էր ֆինանսա-տնտեսական հարաբերությունները: Սենյորների կողմից չարաշահումները սկսեցին պակասել:

Կոմունան իրավունք ունեցավ ունենալու իր բանակը, որի միջոցով պաշտպանվում էր ինչպես դրսի, այնպես էլ ներսի թշնամիներից:

Քաղաքի բնակիչները քաղաքական իշխանության ուժեղացման գլխավոր գործոնը համարում էին ֆեոդալական մասնատվածության հաղթահարումը: Այս նպատակով առաջին քայլը համարվեց երկրի թագավորի ընտրության սկզբունքի վերացումը: XVIII դ. սկզբից գահը փոխանցվում էր ժառանգաբար՝ հորից ավագ որդուն:

Շուտով վերացվեց նաև «իմ վասալի վասալը իմ վասալը չէ» սկզբունքը: Բոլոր վասալները ենթարկվում էին թագավորին: Վերջինս աջակցում էր քաղաքային բնակչությանը, մանր և միջին ազնվականությանը: Թագավորներն ընդարձակում էին իրենց տիրույթները և աստիճանաբար դարձան ամենախաշոր կալվածատերերը Ֆրանսիայում: Նրանց ձեռքում կենտրոնացվեց բավականին հզոր ուժ, որը բավական էր թագավորի իշխանության դեմ դուրս եկած սենյորներին ճնշելու համար:

Ֆեոդալական մասնատվածությունը վերացնելու նպատակով անցկացվեցին նաև մի շարք միջոցառումներ, որոնցից հատկանշական էր Լյու-

դովիկոս IX-ի (XIII դ. կեսեր) ռեֆորմները: Դրանք ընդգրկում էին հատկապես դատական և ֆինանսական բնագավառները:

Դատական ռեֆորմով արգելվեցին քազավորական տիրույթում (դոմենում) մասնավոր պատերազմները, զինված պայքարի միջոցով ֆեոդալների միջև վեճերի լուծումը և այլն: Հակառակորդները պարտավոր էին դիմելու քազավորական դատարան: Եթե դատարանը 40 օրում չէր լուծում ֆեոդալների միջև ծագած վեճը, ապա նրանց իրավունք էր վերապահվում այն լուծել զենքի, պատերազմի միջոցով:

Երկրի գրեթե բոլոր մարզերում ստեղծվեցին քազավորական դատարաններ:

Թագավորական կուրիայից անջատվեց հատուկ դատական պալատը՝ փարիզյան պալատնետը: Այն իրենից ներկայացնում էր բարձրագույն բողոքարկման ատյան, որը բաղկացած էր պրոֆեսիոնալ իրավաբաններից: Փարիզյան պալատնետն ուներ նաև մի քանի վարչական ֆունկցիաներ:

Ֆինանսական ռեֆորմով քազավորական տիրույթում գլխավոր հաշվարկման միավոր է համարվում քազավորական ոսկե դրամը: Շուտով, շնորհիվ նրա բարձր որակի, այն դառնում է երկրի ամենահեղինակավոր դրամը: Տեղական փողերը դուրս են գալիս շրջանառությունից: Թագավորական կուրիայից անջատվում է ևս մեկ հիմնարկ՝ հաշվադրական պալատը:

73

2. ԴԱՍԱՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա) Հասարակական կարգը: XIV -XV դդ. փոխվեց երկրի տնտեսական կյանքը: Աճեց քաղաքի արդյունաբերությունը: Բարձրացավ շուկայի նշանակությունը: Չարգացան Ֆրանսիայի հարավում գտնվող քաղաքները (Մարսել, Տուլուզ, Բորդո և այլն):

Արդյունաբերության կարևորագույն կենտրոն են դառնում Փարիզը և Օռլեանը (քազավորական տիրույթի ամենամեծ քաղաքները): Քաղաքի և գյուղի միջև տնտեսական կապերը կայունանում են: Սկսվում է տնտեսական մասնագիտացումը գյուղատնտեսության և արհեստագործության մեջ: Այդ պայմաններում աճում է նաև քաղաքի բնակչության թիվը: Այս ամենն իր ազդեցությունն է ունենում պետական կառավարման վրա: Աճում է փողի և ապրանքի նշանակությունը: Ապրանքափոխանակությունն իր տեղը զիջում է առևտրին: Մեծանում է դիմալի հեղինակությունը:

Մենյորների համար ձեռնտու էր ունենալ ազատ գյուղացիներ, ունենալ ժառանգական հողային կտորներ: Հողատեր գյուղացին պարտավորվում էր վճարել տարեկան վարձ, տուրք: Պաշտպանելով այս պայմանները՝

գյուղացին իրավունք ուներ իր հողը տալ ժառանգորդին կամ վաճառել միայն սենյորի թույլտվությամբ: Լինելով ազատ՝ գյուղացին կարող էր փոխել իր բնակատեղը, մասնագիտությունը (տեղափոխվել քաղաք և այլն): Բայց նոր հողատիրոջ վրա դրվում էին բոլոր պարտականությունները: Ֆեոդալական շահագործումը թեպետ փոխեց իր ձևը, բայց և այնպես մնաց դաժան: Գյուղացին ծանր վիճակից ազատագրվելու համար հաճախ էր դիմում պայքարի: XIV դ. կեսին պետության ներսում գյուղացիական պատերազմ բռնկվեց:

Երկրի ամբողջ բնակչությունը բաժանված էր երեք դասի՝ 1) հոգևորականություն, 2) ազնվականություն և 3) մնացած ազատ բնակչություն: Առաջին երկուսը համարվում էին հատուկ իրավունքներ ունեցող և ազատվում էին բոլոր տեսակի հարկերից ու տուրքերից: Հարկերի ու տուրքերի ծանրությունն ընկած էր երրորդ դասի վրա:

Բ) Պետական կարգը. Մոցիալ-տնտեսական փոփոխություններն իրենց ազդեցությունը թողեցին պետական կյանքի վրա: Այդ ժամանակահատվածում ֆեոդալական մասնատվածության փյուզումն ավարտվում է:

Պետությունն ընդունում է դասա-ներկայացուցչական միապետության ձև:

Համազգային միասնական շուկայի ձևավորման և երկրի սոցիալ-տնտեսական հետագա զարգացման համար ստեղծվել էին առավել բարեկեցիկ պայմաններ: Դասա-ներկայացուցչական միապետության ձևավորման պրոցեսը բարդ և հակասական էր: Այն սկսվեց թագավորական իշխանության ուժեղացմամբ, որն անխախտելիորեն կապված էր ֆեոդալական մասնատվածության հետ: Այն հնարավոր դարձավ մի շարք պատճառների հետևանքով.

1) Նշված ժամանակաշրջանում էլ ավելի ամրապնդվեց թագավորական իշխանության և քաղաքների դաշինքը: Արդյունաբերության և առևտրի աճը քաղաքներում նպաստեց նրան, որ թագավորական իշխանությունն ավելի մեծ օգնություն սկսեց ցույց տալ քաղաքներին, քան առաջ:

— 2) Թագավորական իշխանությունը շրջապատված էր միջին և մանր ազնվականությամբ: Հակաֆեոդալական շարժման վերելքի պայմաններում ազնվականները միայն ասպետների միջոցով չէին կարող պաշտպանվել գյուղացիական շարժումներից: Իրենց և իրենց կալվածքները պաշտպանող միակ ուժը նրանք տեսնում էին թագավորական բանակում: Թագավորը կարող էր նրանց տալ արտոնություններ և հարստություն, եթե նրանք ծառայում էին բանակում կամ պետական մարմիններում:

3) Հզոր թագավորական իշխանությանն անհրաժեշտ էր պաշտպան

նաև արտաքին թշնամուց: Նշված ժամանակաշրջանում Ֆրանսիային սպառնում էր արտաքին վտանգը: Նրա վրա եղան նաև հարձակումներ, որոնք երկիրը հասցրին անօրինակ վիճակի:

Ֆեոդալական մասնատվածության վերացումը և թագավորական իշխանության ուժեղացումը շնայած ունեցան նշանակալի հաջողություններ, բայց և այնպես լիովին չավարտվեցին: Դեռևս պահպանվում էին մեծ, անկախ ֆեոդալական տիրույթները (օրինակ, Բուրգունդյան դքսությունը):

Պետության միացումը կլիներ միայն այն ժամանակ, երբ տեղի կունենային պետափրավական փոփոխություններ: Ժողովի էին հրավիրվում բոլոր դասի ներկայացուցիչները: Թագավորներն իրավունք էին ստանում օգնության դիմել բոլոր դասերին՝ առանց խոշոր սենյորների հաշվի առնելու: Ժողովներում քննարկվում էին արտաքին և ներքին քաղաքականության վերաբերյալ կարևորագույն հարցերը: Առաջին անգամ թագավորը մտցրեց հիմնական հարկերի հավաքման կարգավիճակ: Անընդմեջ դրամ ստանալու շնորհիվ հնարավորություն տրվեց ստեղծելու մի նոր վարձկան բանակ, որն ապահովեց թագավորական իշխանության անվտանգությունը: Դասային ներկայացուցչության առաջին ժողովը՝ շտատները, առաջ եկան XIII դարում առանձին պրովինցիաներում: Նմանատիպ ժողովներ կազմակերպում էին հոգևորականները, սենյորները, քաղաքագլուխները: Ժողովը քննարկում էր տարբեր հարցեր՝ հիմնականում դրամահավաքության վերաբերյալ: Սկզբնական շրջանում շտատները հրավիրվում էին տեղի ղեկավարների կողմից: Բայց շուտով դրանք հայտնվեցին թագավորական իշխանության հսկողության տակ: 1302 թ. առաջին անգամ հրավիրվեց հանընդհանուր ֆրանսիական ժողով, որն անվանեցի՝ գլխավոր շտատներ: Այն տարբերվում էր առանձին պրովինցիաների շտատներից:

Վերջին տասնամյակում տեղի ունեցած իրադարձությունները շտատները դարձրեցին պետության կարևորագույն մարմինը: Այդ ժամանակ էլ հենց ձևավորվեց նրա կառուցվածքը: Յուրաքանչյուր դաս ներկայացնում էր առանձին պալատ: Առաջին պալատը կազմված էր բարձրագույն հոգևորականներից, երկրորդում ընդգրկված էին շագնավականության միջից ընտրվածները: Ավելի ճանաչվածները (կոմսերը, իշխանները) ոչ մի պալատի մեջ չէին մտնում: Նրանք, ինչպես թագավորի անմիջական վասալները, մասնակցում էին որոշումների քննարկմանը՝ թագավորական կուրիայի կազմում: Երրորդ դասն ընտրում էր իր շպատգամավորներին: Որպես կանոն, ընտրությանը մասնակցում էին քաղաքի ղեկավարները: Պատգամավորները քաղաքագլուխներ և քաղաքային խորհրդի անդամներ էին: Բոլոր հարցերը քննարկվում էին առանձին պալատներում, որտեղ էլ որոշում էր կայացվում ձայների պարզ մեծամասնությամբ: Գլխավոր շտատները գու-

մարվում էին թագավորի ցանկությանը, բայց հաճախ պահանջվում էր գլխավոր շտատոների և մասնավորապես երրորդ դասի համաձայնությունը: 1357թ., երբ պետությունը գտնվում էր քաղաքական ճգնաժամի պայմաններում, հրապարակվեց օրդոնանս (հրամանագիր), որը և հետագայում գրի առնվեց ու կոչվեց 1357 թ. «Մեծ մարտովյան օրդոնանս», համաձայն որի յուրաքանչյուր տարի 2 անգամ պետք է հրավիրվեր գլխավոր շտատոների նստաշրջան: Դրա համար թագավորի թույլտվությունը նախապես անհրաժեշտ էր: Գլխավոր շտատոներն իրավունք ունեին սահմանելու նոր հարկեր, իրականացնելու հսկողություն ծախսերի վրա: Նրանց համաձայնությամբ էին կնքվում պայմանագրեր, հայտարարվում պատերազմ: Նրանք էին նշանակում թագավորի հատուկ խորհրդականներին: «Մեծ մարտովյան օրդոնանսը» եղավ գլխավոր շտատոների իրավագոր փաստաթուղթը: Հետագայում հարյուրամյա պատերազմի բերած հաղթանակի շնորհիվ ամրապնդվեց թագավորական իշխանությունը: Նրա տրամադրության տակ էին վարձու հզոր բանակը, բյուրոկրատական ապարատը, որոնք ապրում էին ժողովրդից զանձվող հարկերի հաշվին: Թագավորական իշխանությունը տարածվում էր ամբողջ տարածքի վրա, այն համարյա հավասար է ժամանակակից Ֆրանսիայի տարածքին: Գլխավոր շտատոները կատարում էին իշխանության կամքը: Սկսած XV դ. շտատոները դադարում են գոյություն ունենալուց (XVII XVIII դդ. գլխավոր շտատոներ գումարվել է մեկ անգամ): Դրանց փոխարեն կառավարությունը հրավիրում էր ժողովներ, որոնք ունեին միայն խորհրդակցական ֆունկցիա:

Երկրի պետական կառավարման կենտրոնական մարմիններ էին համարվում՝

1) Պետական խորհուրդը, որը ղեկավարվում էր թագավորի ցուցումով և իրականացնում էր հսկողություն կառավարության առանձին օղակների վրա,

2) Հաշվարկային պալատը, որը համարվում էր ֆինանսական կառավարման բարձրագույն մարմինը:

Պաշտոնատար անձանց մեջ մեծ դիրք ուներ կանցլերը, որի հսկողության տակ էր գտնվում պաշտոնատար անձանց գործունեությունը: Նա թագավորի բացակայության ժամանակ նախագահում էր պետական խորհրդում: Նրա ղեկավարությամբ էին կազմվում օրդոնանսների նախագծերը:

Մեծ իրավունքներ ունեին նաև թագավորական բանակի հրամանատարները, զանձապահը, թագավորի խորհրդականները և այլք:

Ֆրանսիայում վասալային հարաբերություններն աստիճանաբար վերափոխվում էին կենտրոնական բազմաստիճան բյուրոկրատական ապար-

*Թեոֆիլ Գալիպի*¹¹⁵ *Կ. Ա. Ա. Ա.*

րատով: Հողատեր-սենյորներն աստիճանաբար կորցնում էին իշխանությունն իրենց տարածքներում: Նրանց իրավունքների շրջանակը նեղանում էր: Նախկինի նման նրանց չէր հաջողվում իշխել թագավորական կալվածքներում, որտեղ տարածված էր միայն թագավորի իշխանությունը:

Միևնույն ժամանակ պետական կառավարումն իրենից չէր ներկայացնում միացյալ համակարգ: Այն շրջանները, որոնք պայմանագրով միացել էին թագավորությանը, որպես կանոն, մնացին նույնությամբ, որովհետև կառավարությունը պարտավորվեց պահպանել նրանց սովորույթները (կուտյումները): Շատ սենյորներ կարողացան ձեռք բերել նոր շահութաբեթեր ուղիներ: Թագավորները ոչ միշտ էին կարողանում տեղերում իրենց մարդկանցից նշանակել կարևոր պաշտոնյաներ: Անջատողական միտումները դեռ պահպանվում էին: Այս ամենը բարդացնում էր նոր կենտրոնացված պետական ապարատի ստեղծման պրոցեսը: Չնայած դրան թագավորության տարածքում աստիճանաբար ստեղծվում է կենտրոնացված կառավարման բյուրոկրատական ապարատը: Թագավորական կալվածքը հասարկա թե բաժանված էր հավասար վարչական միավորների՝ բալյաժների, որոնց ղեկավար էր նշանակում թագավորը: Նրանք պարտավոր էին հավաքել հարկերը, հսկողություն իրականացնել դատա-վարչական մարմինների գործունեության վրա և այլն:

Բալյաժները թագավորության մի մասն էին, որոնք բաժանվում էին շրջանների: Շրջանները ղեկավարում էին կառավարիչները: Նրանց վրա էր կենտրոնացված բանակի, դատարանի ֆինանսական գործունեության հսկողության ֆունկցիան:

Երկրի հարավային մասերում կառավարումն ավելի թույլ բնույթ էր կրում: Այստեղ պաշտոնատար անձինք հիմնականում տեղացիներ էին, որոնք ունեին անջատողական միտումներ:

Կառավարությունը տեղական արիստոկրատիայի անջատողական միտումների դեմ պայքարում աջակցության կարիք էր զգում: Ստեղծվեցին պրովինցիային շտատներ, որոնք գործում էին Նորմանդիայում, Պրովանսիայում և այլուր: Այս շտատները տարբերվում էին գլխավոր շտատներից և նպատակ ունեին կարգավորելու հարկերին ու տուրքերին վերաբերող խնդիրները, իրականացնելու հսկողություն հասարակական աշխատանքների վրա և այլն: Շտատները երկար գոյատևել չկարողացան: Սկսած XV դ. այն դադարեց գործելուց:

Նշված ժամանակահատվածում կառավարությունն ուժեղացրեց հսկողությունը նաև քաղաքային ինքնակառավարման վրա: Այդ ժամանակ նրանց քանակը նշանակալիորեն աճել էր: Կոմունաների դատարանները և վարչական ապարատն իլրավունք ունեին իրատարակելու որոշումներ, ո

րոնք պարտադիր էին քաղաքային բնակչության համար: Քաղաքային ինքնակառավարման ընտրովի մարմինները՝ քաղաքային խորհուրդը, գլխավորում էր ցմահ ընտրված քաղաքագլուխը: Դրանք սովորաբար քաղաքի հարուստ բնակիչներն էին:

Գյուղացիությունը շարունակում էր գտնվել իր սենյորների իշխանության տակ՝ պահպանելով մի քանի սահմանափակ իրավունքներ: Սենյորները հսկում էին համայնքի ինքնակառավարման մարմինների՝ Սխոդայի և նրա գործադիր մարմնի՝ Սինդիկայի գործունեությունը: Սինդիկան զբաղված էր համայնքի ներքին գործերով: Այն բաղկացած էր հարուստ գյուղացիներից:

Դատարաններ Դատական հիմնարկներում նկատվում են զարգացման հետևյալ տեղեկանքները.

ա) եկեղեցու և առանձին ֆեոդալների դատական իրավասությունները սահմանափակվեցին, և այն անցավ թագավորական իրավասությանը: Դրան համապատասխան՝ թագավորական դատարանները նշանակալիորեն ընդլայնվեցին: Նրանք կարող էին վերանայել սենյորական դատարանի ցանկացած որոշումը,

բ) նկատվում է վարչական մարմիններից դատարանների անջատումը: Սկսվում է ձևավորվել կենտրոնացված միապետության դատական համակարգը: Դեռևս Լյուդովիկոս X-ի օրոք թագավորական կուրիայի հիման վրա ստեղծվում է թագավորության բարձրագույն դատաօրհանը՝ պառլամենտը: Սկզբում նրանում ունօրինում էին ֆեոդալական առաջնորդները, բայց շուտով նրանք իրենց տեղը զիջեցին թագավորական իրավագետներին: Պառլամենտը դարձավ բարձրագույն բողոքարկման առյուծակ: Այն բաժանված էր մի քանի պալատների՝ ա) դատական, բ) մի քանի քննչական և գ) որոշ ժամանակ անց՝ ներման:

Պառլամենտը քննում էր առավել կարևոր քրեական և քաղաքացիական գործերը, կարող էր վերանայել մնացած դատարանների որոշումները և դատավճիռները, նոր ուղղումներ անել նախկինում վերանայված բոլոր գործերի կամ նոր ներկայացրած ապացույցների մեջ:

Սահմանվեց դատական գործերն ըստ էության վերանայելու կարգ: Նախատեսվեց տեղական դատարանների նկատմամբ կենտրոնական դատարանի կողմից հսկողություն: Պառլամենտը կարևոր դեր կատարեց թագավորական իշխանության ամրապնդման գործում: Միևնույն ժամանակ պառլամենտը աշխատեց ազատվել թագավորական իշխանությունից: Նա մման փորձեր էր անում այն ժամանակ, երբ թուլանում էր թագավորական իշխանությունը: Այդ ժամանակ պառլամենտը օգտագործում էր առիթն օրենսդրության բնագավառում կիրառելու իրեն վերապահված իրավունքն

օրենսգրքի նկատմամբ: Եվ դա ամենից առաջ թագավորական հրամանների գրանցման արդյունքն էր, որոնք միայն դրանից հետո կարող էին ուժ ունենալ: Այս կարգավիճակը մանրուք էր թվում, իսկ իրականում արգելք էր հանդիսանում նոր հրամանները կյանքի կոչելուն և դրանով ազդում թագավորական օրենսդրության վրա:

Պառլամենտն աստիճանաբար իրավունք ստացավ վերանայել թագավորական հրամանագրերն ամբողջությամբ: Եթե պառլամենտը գտնում էր, որ այդ հրամանագիրը չի համապատասխանում ընդհանուր պետական օրենսդրության ոգուն, մա կարող էր մերժել այդ հրամանագրի գրանցումը: Միայն թագավորի ներկայությունն էր ստիպում պառլամենտին զրկվել այդ իրավունքից, և հրամանագիրը գրանցվում էր: Նոր միացած պրովինցիաներում ստեղծվում էին պառլամենտներ, որոնց թիվը հասավ 131-ի:

Ֆրանսիայում գործում էին մաև եկեղեցական դատարաններ: Չևավորվել էր եկեղեցական դատարանների եռաստիճան համակարգը: Առաջին աստիճանը զբաղեցնում էր եպիսկոպոսների դատարանը, երկրորդը՝ արքեպիսկոպոսների, երրորդը՝ կարդինալների դատարանն էր: Առավել կարևորագույն գործերը քննող բարձրագույն ատյանը հռոմեական կուրիան էր: Այն կրում էր կանոնական բնույթ:

XIV դ. ստեղծվում է քրեական հետապնդման և մեղադրող հատուկ մարմին՝ դատախազություն: Սկզբնական շրջանում նրա անդամները նշանակվում էին թագավորի վստահված մարդկանցից: Դատախազության ֆունկցիաները աստիճանաբար ընդլայնվում են: Դատարանում այն հանդես է գալիս որպես մեղադրող:

XIV-XV դդ. կազմավորվում է թագավորական մշտական գործող բանակը, որն էլ ավելի ամրապնդվեց XIV դ. երկրորդ կեսին և XV դ. I կեսին անցկացված զինվորական ռեֆորմների շնորհիվ: Այս ժամանակներից սկսած՝ կառավարությունը մշտական հարկեր մտցնելուց հետո իր տրամադրության տակ ուներ որոշակի միջոցներ, որոնք օգտագործվում էին վարձու զինվորներից կազմված բանակի ձևավորման համար: Բանակում սպայական կազմը հիմնականում ձևավորվում էր ազնվականությունից: Բանակը զինված էր ժամանակի տեխնիկայով և ամենից առաջ հրանոթներով:

74

3. ԲԱՅԱՐՉԱԿ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՐՁԱՆ

Հասարակական կարգը: XVդ. Ֆրանսիայում երևան եկավ կապիտալիստական արդյունաբերական արտադրության առաջին փուլը՝ մանու

Ֆակտորան, որը լայն թափով զարգացավ Փարիզում, Մարսելում, Լիոնում, Բորդոյում և այլուր: Ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացումը հանգեցրեց համազգային միասնական շուկայի ձևավորմանը:

Երկրի առանձին շրջանների տնտեսական և քաղաքական կապի ամրապնդումը նպաստեց ազգային դրամական միավորի վերջնական ձևավորմանը:

Կապիտալիզմի զարգացումը փոխեց հասարակության սոցիալական կառուցվածքը: Հիմնական շահագործող դասակարգի՝ Ֆեոդալների կողքին երևան եկավ խոշոր սեփականատերերի նոր դասակարգ՝ բուրժուազիան: Սկզբնական շրջանում նրա միջուկը կազմում էին քաղաքի բանկիրները և հարուստ վաճառականները, որոնք շատ հաճախ դառնում էին մանուֆակտուրաների սեփականատերեր: Ֆրանսիական բուրժուազիան ուներ մի շարք առանձնահատկություններ: Նա դատական կամ վարչական ապարատում պաշտոններ գնելու իրավունք ուներ: Կառավարությունը վաճառում էր պաշտոնները և գնուղյին հնարավորություն տալիս աշխատավարձի ու օգուտների միջոցով վերականգնել այդ վճարը: 1604թ. Էդիկտով թուլլատրմեց գնված պաշտոնը ժառանգաբար փոխանցել: Որոշ պաշտոնյաների իրավունք էր վերապահված ստանալու ազնվականության տիտղոսը: Այդ տիտղոս կրողները կարող էին հող գնել և դրանով չտարբերվել մյուս ազնվականներից:

Երկրի սոցիալ-տնտեսական կյանքում աչքի ընկնող փոփոխություններ տեղի չունեցան: Ֆրանսիական հասարակությունը շարունակում էր կրել ֆեոդալիզմի ազդեցությունը: Ֆեոդալիզմը տնօրինում էր գյուղում, որտեղ բնակվում էր երկրի բնակչության մեծ մասը: Հողի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում էր գլխավորապես ազնվականությանը: Դրա հետ մեկտեղ հողի մի մասը գտնվում էր հարուստ գյուղացիների ձեռքում: Մնացած պետական հողերը տրվում էին վարձակալությամբ:

Ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացումը նպաստեց նրան, որ գյուղացիները տուրքեր սկսեցին վճարել դրամով: Ազնվականությունը չբավարարվեց դրանով և կառավարությունից պահանջեց ավելացնել գյուղացիների վրա դրված հարկերը: Կառավարությունը գնաց այդ քայլին՝ դրանով ուժեղացնելով գյուղացիների շահագործումը:

Ինչպես և առաջ, բացարձակ միապետության ժամանակաշրջանում էլ երկրի բնակչությունը բաժանված էր երեք դասերի: Հոգևորականությունը և ազնվականությունը շարունակեցին պահպանել իրենց արտոնությունները, իսկ գյուղացիությունը գտնվում էր ծանր վիճակում:

Պետական կարգը: Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական կառուցվածքում

տեղի ունեցած այս կամ այն փոփոխությունները պայմաններ ստեղծեցին պետական ապարատի վերափոխման համար: XVI դ. հիմնովին ձևավորվեց բացարձակ միապետությունը: Այսինքն՝ երկրի օրենսդիր, գործադիր, դատական և զինվորական իշխանությունները կենտրոնացան պետության ղեկավարի թագավորի ձեռքում: Այն դարձավ ժառանգական: Թագավորին էր ենթարկվում ամբողջ կենտրոնացված պետական մեխանիզմը՝ բանակը, ոստիկանությունը, վարչա-ֆինանսական ապարատը, դատարանը:

Ազնվականության հիմնական մասը, որը շարունակում էր մնալ տիրապետող դաս, ոչ միայն համաձայնվեց այդ իրավիճակի հետ, այլև դարձավ գահի պահպանման հիմնական կորիզը: Դա բացատրվում էր նրանով, որ բացարձակ միապետությունն անշեղորեն և հետևողականորեն պաշտպանում էր ազնվականության արմատական շահերը:

Երկրում հաստատվեցին երկու հավասարակշիռ դասեր՝ ազնվականությունը, որն ուներ հսկայական արտոնություններ և գրադեցնում էր բարձր պաշտոններ, և ձևավորվող բուրժուազիան, որը երկրի քաղաքական կյանքում մեծ դեր չէր խաղում: Բուրժուազիան հաջողության հասավ տնտեսական բնագավառում և աստիճանաբար պետական ապարատում: Օգտագործելով ազնվականության և բուրժուազիայի միջև եղած հակասությունը՝ թագավորական իշխանությունն ամրապնդեց իր ինքնուրույնությունը:

Միապետության մեջ մեծ դեր խաղաց կարդինալ Ռիշելյեն (XVII դար), որը երկար ժամանակ կառավարեց երկիրը: Նրա քաղաքականությունն օբյեկտիվորեն ուղղված էր ազնվականության շահերի պաշտպանությանը: Այն իրականացնելու համար կարդինալն ամրապնդեց միապետությունը: Նրա ղեկավարությամբ ուժեղացավ կենտրոնական վարչական ապարատը և դատարանը:

Լյուդովիկոս XIV օրոք ֆրանսիական միապետությունը հասավ իր գարգացման բարձրագույն աստիճանին:

Բացարձակ միապետության շրջանում իշխանության կենտրոնացումը միապետի ձեռքում հանգեցրեց գլխավոր շտատների գործունեության դադարեցմանը: Կտրուկ սահմանափակվեցին պառլամենտների իրավունքները: 1641թ. Էդիկտով պառլամենտին արգելվեց վերանայել այն գործերը, որոնք վերաբերում էին կառավարությանը կամ նրա վարչական ապարատին:

Իշխանությունները ուժեղացրին իրենց հսկողությունը նաև եկեղեցու վրա: 1516 թվականից Ֆրանսիայում կաթոլիկ եկեղեցու բարձրագույն պաշտոնյաների նշանակման իրավունքը վերապահվեց թագավորին:

Թագավորական իշխանության ամրապնդումն ուղեկցվում էր բյուրոկրատական ապարատի կտրուկ աճով և ուժեղացմամբ: Պաշտոնների վա

ճառքը, որը ոչ քիչ եկամուտ էր բերում միապետությանը, ունեցավ իր բացասական հետևանքները: Երկիրը հեղեղված էր պաշտոնատար անձանցով, որոնց թագավորը չէր կարող ազատել պետական ծառայությունից (հետևանք կարող էր լինել միայն այն դեպքում, եթե նրանք կատարել էին հանցագործություն, և դա հաստատվել էր դատական կարգով):

Պետական ապարատի մի մասը, որը ստեղծվել էր դասա-ներկայացուցչական միապետության ժամանակներից, կորցրեց իր սկզբնական նշանակությունը: Այն ընկավ այն մարդկանց ձեռքը, որոնք ձգտում էին ինքնավարության: Այս պայմաններում թագավորին անհրաժեշտ էր վարել ճիշտ կադրային քաղաքականություն: Սկզբունքորեն նա դա կարող էր անել և փոխել պետական ապարատի աստիճանավորներին: Բայց դա կառաջացներ նոր անվստահություն, որից խուսափում էր թագավորը: Մյուս կողմից միապետը չէր կարող վաճառված պաշտոնները ետ գնել՝ միջոցներ չունենալու պատճառով:

Ստեղծված պրոբլեմը լուծվեց այլ ճանապարհով: Հին պետական ապարատը պահպանվեց, բայց դրա հետ մեկտեղ ստեղծվեց պետական մարմինների նոր համակարգ:

Նոր ապարատում պաշտոնատար անձանց նշանակում էր կառավարությունը, որն էլ ցանկացած պահին կարող էր մրանց ազատել:

Որպես կանոն, նոր պաշտոնները ~~նշանակվում էին~~ ոչ ազնվականները: Նոր պաշտոններ զբաղեցնողներն ունեին բավականաչափ հարուստ գիտելիքներ և նվիրված էին միապետին:

Ստացվել էր այնպես, որ երկրում գործող պետական մարմինները պայմանականորեն բաժանվել էին երկու կատեգորիաների: Առաջինում ընդգրկված էին նախկինում ստեղծված հիմնարկները: Այն ձևավորվել էր վաճառված պաշտոնների հիման վրա և հսկվում էր վերմախավի կողմից: Երկրորդ կատեգորիային էին պատկանում պետական այն մարմինները, որոնք ստեղծվեցին բացարձակ միապետության շրջանում: Այս կատեգորիային պատկանող հիմնարկները, որոնք համարվում էին կառավարության հիմքը, բաղկացած էին կառավարության կողմից նշանակված չինովիկներից:

Ընդհանուր առմամբ բացարձակ միապետության շրջանում ձևավորվել էր բարդ, փոճացված բյուրոկրատական մեխանիզմ: Պետական շատ մարմիններ չունեին պարզեցված իրավասություններ և շատ հաճախ կրկնում էին միմյանց: Այս ամենը նպաստում էին քաշքշուկների, կաշառակերության և այլ չարաշահումների աճին, որը միահեծանության վերջին դարաշրջանում ընդունեց անկանխատեսելի չափեր:

Երկրում գործող պետական խորհուրդը վերածվեց թագավորին կից

խորհրդակցական մարմնի, ստեղծվեցին մասնագիտական խորհուրդներ (ֆինանսների խորհուրդ, հաղորդակցության խորհուրդ և այլն): Գործում էին նաև այլ մարմիններ (գաղտնի խորհուրդը, թագավորական ապարատը և այլն):

Պետական իշխանության և կառավարման նշված մարմինների մի մասը գործում էր մշտապես (օր. ֆինանսների խորհուրդը), մյուս մասը՝ առօրյա առիթ կամ ընդհանրապես չէր գումարվում: Թագավորը ներքին և արտաքին քաղաքականության կարևորագույն հարցերը լուծում էր իր վստահելի անձանցից բաղկացած խորհրդում, որը կոչվեց թագավորական փոքրիկ խորհուրդ: Այդ վստահելի անձանց մեջ առաջին տեղը պատկանում էր գլխավոր հսկիչին և պետական քարտուղարներին:

Բացարձակ միապետության շրջանում թագավորության տարածքը բաժանված էր առանձին շրջանների և գավառների, որոնք համընկնում էին ֆինանսական, զինվորական, եկեղեցական, դատական և վարչական գերատեսչությունների տարածքային բաժանման հետ: Այս տարածքների սահմանները հաճախ չէին համընկնում:

Պետական կառավարման տեղական մարմինները նույնպես բաժանված էին երկու կատեգորիայի: Դրանցից մեկը դասա-ներկայացուցչական միապետության շրջանում ստեղծված մարմիններն էին, որոնք արդեն հնացել էին, իսկ մյուսը բացարձակ միապետության շրջանում ստեղծված մարմիններն էին, որոնք ունեին հատուկ կարգավիճակ: Նոր մարմիններում պաշտոնատար անձանց նշանակումը և ազատումը կատարվում էր կառավարության կողմից:

Ֆրանսիայի բյուրոկրատական ապարատում կարևոր տեղ էր գրավում դատիկանությունը: Ունենալով մեծ իրավունքներ ոստիկանությունը գործում էր ամենուրեք: Անտարբերությունը և կաշառակերությունը դարձել էին նրա աստիճանավորների անբաժանելի վարքագիծը: Սահմանվում է գրաքննություն, վերանայվում մասնավոր թղթակցությունը:

Ֆրանսիայի պետական գանձարանի հիմնական եկամուտը գոյանում էր օր օրի աճող հարկերից: Հին հարկերի կողքին ավելացան նաև նորերը: Հարկեր էին հավաքում նաև ազնվականներից, որոնք, իհարկե, ունեին որոշակի արտոնություններ և ավելի նվազ չափով էին դրանք մուծում, քան երրորդ դասը: Հարկեր դրվեցին տարբեր տեսակի ապրանքների, հատկապես աղի վրա: Աղի հանքերը պահպանվում էին զինվորականների կողմից:

Հարկերը հավաքելու համար նշանակվեցին առանձին մարդիկ, որոնք առավել հարուստ բուրժուաներ էին:

Նրանք նախապես, հարկերը հավաքելուց առաջ, կառավարությանը մուծում էին որոշակի գումար (որը պետք է հավասար լիներ հարկերը հա-

վաքելուց հետո գոյացած գումարի չափին) և ձեռք էին բերում հարկահավաքի իրավունք: Դրանից հետո սկսում էին հավաքել հարկերն ավելի մեծ չափով, քան նախատեսված էր կառավարության կողմից: Նրանց օգնում էր գործը:

Երկրի ներսում պահպանվեցին մաքսային կետերը: Ներքին մաքսերը նպաստում էին գների բարձրացմանը և առաջացնում ժողովրդի դժգոհությունը: Իզուր չէ, որ այդ ժամանակ ասում էին, թե Չինաստանից ներմուծված աղն ավելի էժան է, քան Ֆրանսիայի հարավից հյուսիս տեղափոխված աղը:

Թագավորական զանձարանը հարստանում էր նաև դատական տուրքերի և տուգանքների վճարման շնորհիվ:

Բացարձակ միապետության շրջանում Ֆրանսիայում միաժամանակ գործում էր դատական մի քանի համակարգ: Կային թագավորական, սենյորական, քաղաքային և եկեղեցական դատարաններ, որոնք հաճախ կրկնում էին մեկը մյուսին: Անսահմանափակ էին դատարանի իրավասության ենթակայությանը վերաբերող վեճերը:

Նշված ժամանակաշրջանում շարունակում է ուժեղանալ թագավորական դատարանի դերը: Օռլեանի (1560թ.) և Մուլինյան (1566թ.) օրդոնանսներով թագավորական դատարանների իրավասության ենթակա էին քրեական և քաղաքացիական գործերի մեծ մասը: 1788թ. Էդիկտով սենյորական դատարաններին քրեական դատավարության բնագավառում թողնվեց միայն նախնական քննության մարմնի ֆունկցիա: Նրանց իրավասությանը շարունակեցին մնալ քաղաքացիական այն գործերը, որոնց հայցագիրը մեծ չէր:

Թագավորական դատարաններն իրավունք ստացան ցանկացած գործ՝ ոչ թագավորական դատարաններից (բացառությամբ եկեղեցական մի քանի գործերի), վերցնել իրենց քննության տակ:

Չեռնարկված միջոցառումները, այնուամենայնիվ, չբարելավեցին դատարանների գործունեությունը:

Թագավորական արդարադատության կառուցվածքը մնում էր բարդ և հակասական:

Հատուկ նշանակություն ձեռք բերեց նաև կլետսկան խորհուրդը, որը համարվում էր բարձրագույն կառավարող մարմին: Այն իրավունք ուներ պառլամենտից վերցնել ցանկացած գործ և ստուգել նրա օրինականությունը: Նա էր լուծում դատարանների իրավասության ենթակայությանը վերաբերող հարցերը:

Գրեթե յուրաքանչյուր գերատեսչություն ուներ իր դատարանը: Առանձնահատուկ էին զինվորական դատարանները: Կային նաև ծովային և

մաքսային դատարաններ:

Երկրի դատական համալիրը գլխավորում էր թագավորը:

Միահեծանության շրջանում ավարտվեց կարգավորված բանակի ստեղծումը: Երկրի տնտեսական ռեսուրսների աճը նպաստեց բանակի թվակազմի ավելացմանը և կարգապահության բարձրացմանը: Սպայական կոչում շնորհվում էր բոլոր նրանց, ովքեր աչքի էին ընկնում մարտերում՝ անկախ դասային պատկանելությունից: 1781թ. օրենքով վերացվեց այդ սկզբունքը, և սպայական կոչում շնորհվում էր նրանց, ովքեր ունեին ազնվական ծագում: Օգտագործվում էր նաև օտարերկրյա վարձկանների ուժը: Բանակը աստիճանաբար մեկուսացվում էր ժողովրդից:

XVIIIդ. երկրորդ կեսին բանակի մարտունակությունը կտրուկ ընկավ:

Ֆրանսիայի ֆեոդալական պետության պատմության մեջ միահեծանությունը եղել է վերջին էտապը: XVIII դարի վերջի հեղափոխության ընթացքում ֆեոդալիզմը և նրա պետա-իրավական ինստիտուտի հիմքերը լիովին վեացվեցին:

75

4. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Իրավունքի աղբյուրները: IX -XI դդ. գործում էր իրավունքի տարած-
քային ազդեցության սկզբունքը, այսինքն՝ բնակչությունը ենթարկվում էր
այն իրավական նորմերին, որոնք ձևավորվել էին իրենց բնակելի տա-
րածքներում: Այդ սկզբունքի առաջացումը բացատրվում էր՝ 1) նրանով, որ
տիրապետող էր բնատնտեսությունը, որը մեկուսացնում էր առանձին ֆեո-
դալական ավատատիրությունները և 2) սենյորների ձեռքում քաղաքական,
մասնավորապես դատական իշխանության, կենտրոնացումով: Այդպիսի
դրությունը նպաստեց գեղային սովորույթների լիտխարինումը տեղական
նովորույթներով՝ կուտյումներով:

Ֆեոդալական մասնատված պետության ժամանակաշրջանում սովորույթները
հանդիսանում էին իրավունքի հիմնական աղբյուրները:

Մինչև ֆեոդալիզմի լիակատար վերացումը Ֆրանսիայում չի եղել
միասնական իրավական համակարգ:

Հենվելով իրավունքի աղբյուրների վրա՝ Ֆրանսիան կարեցի է քաժանել
2 մասի. նրանց մտտավոր սահմանն էր հանդիսանում Լուարա գետը: Այդ
սահմանից հարավ ընկած տարածքը կոչվում էր «գրավոր իրավունքի եր-
կիր», քանի որ այնտեղ գործում էր հռոմեական իրավունքը, որը սովորույթ-
ների ազդեցության տակ հարմարեցված էր նոր պայմաններին: Ֆրանսիա-
յի հյուսիսային տարածքը համարվում էր «սովորության իրավունքի եր-
կիր», քանի որ տերիտորիալ սովորույթները՝ կուտյումները, հանդիսանում

էին իրավունքի հիմնական աղբյուրները:

Կենտրոնացված պետության ձևավորման ընթացքում կուտյումների համակարգման և զրառման փորձեր են կատարվում: Լյուդովիկոս IX-ը հրաման տվեց հավաքել շրջանների սովորույթները և խմբագրել: Այդ սովորույթների ժողովածուն, որը կազմվեց XIII դ. 70-ական թթ., կոչվեց «Սուրբ Լյուդովիկոսի հիմնարկությունները» և իր մեջ ընդգրկեց Փարիզի, Օռլեանի, Տուրի, Անժուի և Մենի կուտյումները: Այն արքունի կալվածքներում, ինչպես նաև շատ թագավորական վասալների տիրույթներում դարձավ պարտադիր:

XIV-XV դդ. ստեղծվում են առանձին շեների, քաղաքների և ֆեոդալական ավատատիրությունների կուտյումների ժողովածուները:

1453 թ. Կարլոս VII-ը պատվիրեց հավաքել դատարաններում օգտագործվող կուտյումները, սովորույթները, զանազան բանաձևերը, ինչպես նաև իրազեկ մարդկանց օգնությամբ գրանդել սովորույթները և ամբողջ նյութը ներկայացնել պառլամենտ, որը պետք է այն ուսումնասիրեր, խմբագրեր և ներկայացներ թագավորին՝ հաստատման համար: Այս աշխատանքը շարունակվեց նաև Կարլոս 7-րդի հետևորդների օրոք: Այսպիսով, գրառվել և իրավունքի ուժ էին ստացել մոտ 300 տեղական և 60 մեծ կուտյումներ (այսինքն՝ այնպիսի սովորույթներ, որոնք ազդեցիկ էին մեծ տարածությունների վրա):

Հայտնի են մի շարք սովորույթների ժողովածուներ, որոնք կազմված են ոչ պաշտոնական կարգով: Այսպես, Ֆիլիպ Բոմանուարը կազմեց «Բովեզիի կուտյումները» (մոտ. XIII դ. 80-ական թվականները), որն ընդգրկում էր հյուսիսսահելյան Ֆրանսիայի սովորույթները: 1389 թ. Ժակ դե Աբլեյզը կազմեց «Ֆրանսիայի սովորույթների մեծ հավաքածուն» և այլն:

Այնուամենայնիվ, կուտյումների ժողովածուները՝ կազմված և՛ թագավորական հրահանգով, և՛ մասնավոր եղանակով, չստեղծեցին ընդհանուր իրավունք ամբողջ պետության համար: Իրավունքը շարունակում էր կրել մասնակի բնույթ:

Իրավունքի գրված աղբյուրներ էին հանդիսանում թագավորական իշխանության ակտերը՝ հրովարտակները, էդիկտները և օրդոնանսները: Սկզբում թագավորական իշխանության ակտերը ռեալ ուժ ունեին միայն թագավորական կալվածքների տարածքում: Բայց թագավորական իշխանության հզորացման հետ զուգընթաց նրանց համապարտադիր բնույթը տարածվում է ամբողջ երկրի տարածքով:

Թագավորական ակտերի դերն առանձնապես աճեց բազարձակ միապետության ժամանակաշրջանում: XVII- XVIII դդ. հրապարակվեցին մի շարք օրդոնանսներ՝ քրեական իրավունքի և դատավարության վերաբեր

10

118²⁵

118

յալ (1670թ.), ինչպես նաև քաղաքացիական իրավունքի վերաբերյալ (1731 թ. նվիրատվությունների, 1735թ. ժառանգությունների, 1747 թ. ենթանշանակումների մասին), առևտրի և ծովագնացության վերաբերյալ (1681թ. ծովային, 1673թ. կանոնադրություն առևտրի մասին), 1785 թ. հրատարակվեց այսպես կոչված սև օրենսգիրքը՝ գաղութներում ստրուկների դրությամբ մասին:

Ֆրանսիական իրավունքի այն աղբյուրը, որն ընդհանուր սկզբունքներ և միօրինակություն էր մտցնում իրավունքի խայտաբղետ համակարգի մեջ, հռոմեական իրավունքն էր: Եթե «հարավում» այն հանդիսանում էր իրավունքի հիմնական աղբյուր, ապա «հյուսիսում» լրացնում էր սովորութական իրավունքի բացերը:

XV-XVIII դդ. հռոմեական իրավունքը դարձավ մի գործոն, որը նպաստեց ընդհանուր իրավական սկզբունքների առաջացմանը՝ միասնական-իրավական համակարգի բացակայության պայմաններում: Հռոմեական իրավունքը «Հյուսիսում» օգտագործվում էր այն դեպքերում, երբ կուտյունները չէին համապատասխանում հասարակական կյանքից բխող հարցերին:

Իրավունքի ձևավորման և զարգացման վրա մեծ ազդեցություն գործեցին կանթոնական և քաղաքային իրավունքները:

75 Սեփականության իրավունքի հիմնական գծերը: Հողի սեփականության իրավունքը հանդիսանում էր ֆեոդալական իրավունքի հիմնական ինստիտուտը, քանի որ իրավաբանորեն ամրապնդում էր իշխող դասի սեփականությունն արտադրության հիմնական միջոցի նկատմամբ: Ֆրանսիայում այն ընդունեց առավել դասական ձև, որը բնորոշ էր արևմտաեվրոպական ֆեոդալիզմին: Սեփականության իրավունքը վաղ և զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում բնորոշվում էր աստիճանային կառուցվածքով, պայմանականությամբ և իր սահմանափակ բնույթով: Այն կենտրոնացված էր ֆեոդալական դասի ձեռքում:

Խոշոր հողատիրությունը հանդես էր գալիս ալյոդի, ինչպես նաև քենեֆիցի ձևով: IX դ. քենեֆիցները դառնում են ժառանգման օբյեկտ և X դ. կոչվում են ֆեոդ, լեն և ֆյեֆ:

Ֆեոդի ծագումը կախված էր զինվորական ծառայության հետ, այն ամբաժանելի էր և ժառանգվում էր միայն արական գծով՝ ավագության սկզբունքին համաձայն (մալորատ): Մինչև XII դ. կանայք չէին կարող մասնակցել ֆեոդի ժառանգմանը: XII-XIV դդ. վավերացվում են սովորույթներ, որոնց համաձայն ֆեոդների ժառանգում անկախ սեռից թույլատրվում էր բոլորին: Ֆեոդները դառնում են տոհմական կալվածքներ: Մինչև XIII դ. սովորութային իրավունքում գործում էր ընդհանուր պայմանը, այն է՝ առանց

սենյորի համաձայնության ֆեռդի օտարման անթույլատրելիությունը:

XIII դարից վասալներին իրավունք էր տրվում օտարել ֆեռդներն առանց սենյորների համաձայնության՝ մուծելով հատուկ վարձ՝ ռելեֆ (հողային տուրք): Սենյորի համաձայնությունը պահանջվում էր միայն երկու դեպքում՝ 1) ֆեռդի մի մասը վաճառելու և 2) եկեղեցու ֆեռդի օտարման դեպքում:

Հարկավոր է նշել, որ վասալի կամ հենց անմիջապես սենյորի կողմից ֆեռդի օտարման դեպքում սենյորն իրավունք ուներ որոշակի ժամանակահատվածում վերադարձնել օտարված հողերը՝ փրկագնի միջոցով:

Եկեղեցու խաչակրաց արշավանքների ժամանակ մենաստանները (վանքերը, եկեղեցիները) և ստացան մեծ քանակությամբ հողեր: Հողերը, որոնք դառնում էին եկեղեցիների և մենաստանների սեփականությունը դուրս էին գալիս քաղաքացիական շրջանառությունից: Այդ հողերի նախկին սենյորները դրանցից չէին ստանում ոչ մի տուրք: Այդ պատճառով էլ թագավորը և նրան աջակցող սենյորները սկսեցին արգելել եկեղեցական հողերի օտարումն առանց նրանց համաձայնության:

Ֆեռդայիզմի վաղ ժամանակաշրջանում Ֆրանսիայում առաջացան երկու տիպի գյուղացիական հողատիրություններ՝ անձնապես կախված գյուղացիների (սերվերի) հողատիրություններ և անձնապես ազատ գյուղացիների (վիլաների) հողատիրություններ:

Գյուղացիական հողաբաժինը, որը հատկացվում էր սերվին, գտնվում էր նրա տիրապետման և օգտագործման ներքո: Սովորության իրավունքով, մինչև XIII դարը, սերվի ամբողջ ունեցվածքը նրա մահից հետո անցնում էր տիրոջը: Այնուհետև հողաբաժինը սկսեց ժառանգվել, եթե տիրոջը վճարվում էր:

Հողաբաժնի տիրապետման և օգտագործման իրավունքի համար սերվերը տիրոջը պետք է ամենամյա վճարեին ընդհանուր կամ դրամով: Վճարման չափը սահմանվում էր տիրոջ հայեցողությամբ:

Հողաբաժինները, որոնք հատկացվում էին անձնական կախում չունեցող գյուղացիներին (վիլաներին), կոչվում էին ցենզիվաներ: Գյուղացիների անձնական կախումից աստիճանաբար ազատվելու հետևանքով ցենզիվան դառնում էր գյուղացիական հողաբաժինների ամենատարածված ձևը: Ցենզիվան ժառանգական հողային տարածքի տիրություն է սովորության իրավունքով խիստ ամրագրված պարհակներով, որոնք պետք է կատարվեն տիրոջ օգտին: Այն տրվում էր և՛ առանձին անձանց, և՛ գյուղացիական համայնքներին:

Ցենզիվան ուներ մի շարք ընդհանուր գծեր ֆեռդի հետ: Դրա օտարման համար պահանջվում էր սենյորի համաձայնությունը, իսկ ժառանգման

դեպքում վճարվում էր որոշակի տուրք: Նրա տարբերությունը ֆեոդից կա-
յանում էր նրանում, որ գյուղացին չէր ընդգրկվում ֆեոդալական աստիճա-
նակարգի մեջ: Եթե ֆեոդի տիրումն ազնվականության նշան էր, ապա ցեմ-
զիվայի տիրումը՝ վիլանականության: Բայց գլխավոր տարբերությունն
այն էր, երբ ֆեոդի տիրակալը ստանում էր ռենտա, այսինքն՝ շահագործող
էր, իսկ ցեմզիվայի տիրակալը՝ ռենտայի վճարողն էր, շահագործվողը:

Սենյորի և ցեմզիվայի տիրոջ միջև եղած իրավական հարաբերություն-
ներն ըստ ֆրանսիական սովորութային իրավունքի բնորոշվում էին
հետևյալ գծերով.

- 1) ցեմզիվատերը, համաձայն սենյորի պահանջի, պարտական էր
պարբերաբար ճանաչել իր տարածքի կախումը սենյորից,
- 2) սենյորը ցեմզիվայի տիրոջից որոշակի պարհակներ ստանալու ի-
րավունք ուներ, կարող էր որոշակի տուգանք պահանջել,
- 3) սենյորն ուներ տասնորդի իրավունք,
- 4) նա ուներ նաև կոռի իրավունք (3-12 օր՝ կախված տեղական սովո-
րությներից),
- 5) սենյորն ուներ ռենտայի իրավունք, այսինքն՝ որոշակի հարկ ցեմզի-
վայի տարեկան եկամտից, որը նա ստանում էր անկախ ցեմզից,
- 6) սենյորը գյուղացիական հողերում ուներ որսորդության իրավունք և
այլն:

XVI-XVIII դդ. ֆրանսիական կուտյումների մեծամասնությունը ցեմ-
զատերերին ~~չհարկում էր այն իրավունքներ և հնարավորություններ ցեմզի-
վաների ղեկավարման համար (դրանք ժառանգորեն փոխանցելու իրա-
վունք, նվիրելու, զրավ դնելու, առանց սենյորի հարցման օտարելու և այլն):~~

Սեզինա ասելով հասկացվում էր այնպիսի տիրապետումը որևէ իրի
նկատմամբ, որը խախտման դեպքում պետք է պաշտպանվի դատարանի
կողմից:

Այն դեպքերում, երբ իրավունքի օբյեկտ էր ֆեոդը, սեզինայի անցումը
ձեռքից ձեռք կատարվում էր պաշտոնակարգման ձևով, և գնողը համար-
վում էր նրա տերը 1 տարվա և 1 օրվա ընթացքում: Ֆեոդի վաճառման ժա-
մանակ դրա հանձնումը վաճառողից գնորդին կատարվում էր սենյորի մի-
ջոցով: Սեզինայի փոխանցման ժամանակ սկզբնական շրջանում վաճա-
ռողը հրաժարվում էր նրանից, իսկ հետո սենյորը փոխանցում էր այն գնոր-
դին:

Սեզինան կարող էր գնվել նաև տիրապետման վաղեմության հետևան-
քով: Վաղ կուտյումներում այդպիսի վաղեմության ժամկետը հաշվվում էր
1 տարով և 1 օրով:

Պարտավորական իրավունք: Բնատնտեսության տիրապետության

76

պայմաններում պարտավորական հարաբերությունների զարգացման համար ոչ մի հիմք չկար: Առավել հայտնի պայմանագիրը, որը ծնուն էր պարտավորություններ վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, հանդիսանում էր վասալային հարաբերությունների սահմանող պայմանագիրը, որը կնքվում էր սենյորի և վասալի միջև:

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացման ընթացքում սկսվում է պարտավորական հարաբերությունների առաջացնող պայմանագրերի զարգացումը: Այդ պայմանագրերից հայտնի է առ ու վաճառքի պայմանագիրը, որը համարվում էր կնքված, երբ վճարվել էր ապրանքի գինը: Ավելի ուշ առաջանում են սովորույթներ, որոնց համաձայն առ ու ծախի պայմանագիրն անշարժ գույքի վերաբերյալ ուժ էր ստանում պայմանագրի կնքման պահից՝ անկախ նրանից իրը հանձնված էր, թե ոչ:

1566թ. օրոյունանով անշարժ գույքի առ ու ծախի պայմանագիրը պետք է կնքվեր նոտարական եղանակով: Շարժական գույքի առ ու ծախի պայմանագիրն ուժի մեջ էր մտնում իրի հանձնման պահից:

Տարածված պայմանագրերից էր փոխառության պայմանագիրը: Կանոնական իրավունքն արգելում էր տոկոսների գանձումը փոխառության դիմաց: Այդ արգելքը շրջանցելու համար կային մի շարք ուղիներ: Դրանցից մեկն էր ռենտայի վերաբերյալ պայմանագիրը: Դա այնպիսի պայմանագիր էր, որի դեպքում անձը, որպես պարտք ընդունելով որոշակի գումար, պարտավորվում էր պարտատերին վճարել տարեկան որոշակի ռենտա: Այդ արգելքի շրջանցման ուղի էր հանդիսանում նաև գրավը, որը հանդիսանում էր պարտավորության կատարման երաշխավորման միջոց:

XVII - XVIII դ.դ. գյուղվլ շատ տեղերում վերափոխվեց հիփոթեքի, որը սահմանվում էր սենյորի հետ համաձայնությամբ:

Ֆրանսիայում լայնորեն տարածված էր նաև նվիրատվության և խողի վարձակալության պայմանագրերը: Սովորության իրավունքի համաձայն, բացառությամբ մի քանի առարկաների, թույլատրվում էր նվիրել ամեն ինչ:

Հողի վարձակալության պայմանագրով սեփականատերը հողը տիրապետման և օգտագործման իրավունքով հանձնում էր վարձակալին, որը պարտավորվում էր յուրաքանչյուր տարի սեփականատիրոջը վճարել ռենտա: Այս պայմանագիրը կրում էր ժամկետային բնույթ: Ռենտայի չափը սահմանվում էր պայմանագրով:

Ամուսնաընտանեկան և ժառանգական իրավունք: Ամուսնա-ընտանեկան հարաբերությունները կարգավորվում էին հիմնականում կանոնական իրավունքով, ինչպես նաև կուտյումներով և թագավորական օրդոնանսներով:

Ամուսնության համար սահմանված էր որոշակի տարիք (տղամարդու համար 13-15 տ., իսկ կնոջ համար 12տ.) Ամուսնությունից առաջ անհրաժեշտ էր կողմերի ծնողների համաձայնությունը, որը, սակայն, պարտադիր չէր այն դեպքում, երբ ամուսնացողները հասել էին 30տ. (տղամերը) և 25տ. (աղջիկները): Մահացած վասալի աղջկա ամուսնության դեպքում պարտադիր էր սենյորի համաձայնությունը:

Սերվերը չէին կարող ամուսնանալ ազատների հետ՝ առանց տիրոջ համաձայնության: Հետագայում այս համաձայնությունը փոխվեց հատուկ ամուսնական տուրքով՝ ֆարմարյաժա:

Սերվերի տերերն ունեին «ամուսնության առաջին գիշերվա» իրավունքը:

Ֆրանսիայում ավելի ուշ ժամանակաշրջանում ամուսնությունը վավերացվում էր եկեղեցու միջոցով: Առանց եկեղեցու իմացության կնքված ամուսնական դաշինքը համարվում էր անվավեր: Ենթադրել էրմ մասն անջափահասների, հարազատների միջև եղած ամուսնությունները, ինչպես նաև բռնության կամ խաբեության ուժով ստեղծված դաշինքները:

Կունոնական իրավունքը սկզբունքորեն մերժում էր ամուսնալուծությունները, դեմ էր նաև երկրորդ ամուսնությանը: Հետագայում հռոմեական իրավունքի ազդեցությամբ թույլատրվեց երկրորդ անգամ ամուսնանալ:

Գույքային հարաբերություններում կինը և տղամարդը չունեին հավասար իրավունքներ: Կինը, առանց ամուսնու համաձայնության, իրավունք չունեի գույքն օտարել, կնքել պայմանագրեր, հանդես գալ դատարանում և այլն: Շատ շրջաններում էլ նա իրավունք չունեի կտակ կազմելու: Նշված սահմանափակումներին զուգահեռ կնոջ համար բացառություն էր արվում երկու հսնգամանք: Թույլատրվում էր՝ 1) կնքել պայմանագիր՝ ամուսնուն գերությունից ազատելու համար, 2) ամուսնու բացակայության ժամանակ իր աղջկան օժտիտ տալ:

Ֆրանսիայում ժառանգությունը կարգավորվում էր ըստ օրենքի և ըստ կտակի: Ընդ որում երկրի հարավում կտակն ավելի տարածված բնույթ էր կրում, քան հյուսիսում, որտեղ այն դժվարությամբ էր կիրառվում:

76 - Զրեական իրավունքը և դատավարությունը: Զրեա-իրավական նորմերը կոչված էին պաշտպանելու ֆեոդալական կարգերը և ուղղված էին ամենից առաջ գյուղացիության ու քաղաքային բնակչության ստադին խափի դեմ:

Հոգևորականների նկատմամբ զրեա-իրավական նորմեր ընդունում էին եկեղեցական դատարանները, քաղաքային բնակչության նկատմամբ՝ քաղաքային դատարանները: Գյուղացիները ենթարկվում էին իրենց տերերին, որոնք անձամբ իրականացնում էին դատական և արտադատարանա-

կան հաշվեհարուարներ:

Քրեալրավական նորմերի վրա մեծ ներգործություն ունեցան եկեղեցին և կրոնը:

Քրեական իրավունքին հայտնի էին հանցագործությունների մի շարք տեսակներ և որանց համար նախատեսված բազմաթիվ պատժատեսակներ: «Բուվեզի կուտյունը» հանցագործությունները զանազանում էր պատժատեսակներին զուգահեռ: Այն տարբերակում էր. 1) հանցագործություններ, որոնց դեպքում նախատեսված էր մահապատիժ, 2) հանցագործություններ, որոնց դեպքում նախատեսված էր ազատազրկում՝ գույքի բռնագրավմամբ, և 3) հանցագործություններ, որոնց դեպքում նախատեսվում էր միայն գույքի բռնագրավում:

Պատիժ նշանակելիս հաշվի էր առնվում հանցագործության սուբյեկտը, արարքի վտանգավորության աստիճանը, սուբյեկտիվ կողմը և այն հանգամանքը, թե ում է վնաս հասցվել¹:

Նշենք, որ հանցագործությունների և պատժի համակարգի ստեղծումն ավարտվեց միախեժանության շրջանում: Դրան նպաստեցին թագավորական օրյունանսները, որոնք կրում էին հռոմեական քրեական իրավունքի ազդեցությունը: Այս շրջանում հանցագործությունները խմբավորվեցին երեք կատեգորիաների՝

1) կրոնի դեմ ուղղված հանցագործություններ (աստվածահայտությունը, աթեիզմը, հերետիկոսությունը և այլն),

2) պետության դեմ ուղղված հանցագործություններ (թագավորի կամ նրա ընտանիքի անդամների դեմ կատարված ոտնձգությունը, թագավորին դավաճանելը, պետության անվտանգության դեմ ուղղված ոտնձգությունը և այլն),

3) մասնավոր անձանց դեմ ուղղված հանցագործություններ (անձին մարմնական վնասվածք հասցնելը, սպանելը, անձին պատկանող գույքի հափշտակումը և այլն):

Միախեժանության շրջանում պատիժները հետապնդում էին սարսափեցման նպատակ և կրում էին արտակարգ դաժան բնույթ:

Պատժի առավել տարածված տեսակներն էին մահապատիժը, ազատազրկումը, տուգանքը, պարսավանքը և այլն:

Ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանում դատավարությունը շարունակում էր մեղադրական բնույթ կրել: Գործը հարուցվում էր հայցվորի (տուժողի) նախաձեռնությամբ, դատավիճաբանությունն ընթանում էր կողմերի միջև վեճի ձևով: Դատավարությունը հրապարակային

¹ Из Кутюмов Бовези, гл. 30, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 270:

էր և բանավոր: Պաշտպաններ չկային, սակայն կողմերին հավասար իրավունքներ էին վերապահված՝ օգտվելու իրավունքի մասնագետների ծառայությունից: XIII դարում արդեն ի հայտ եկան փաստաբանները:

Ապացույցներ էին համարվում խոստովանումը, գրավոր նյութերը, օրդալին, վկաների ցուցմունքը: Ինքնախոստովանումը համարվում էր ապացույցների ամենաարժեքավոր տեսակը¹: Նշենք, որ վկա չէին կայող լինել կողմերի հարազատները, ծառաները և նրանցից կախված անձինք: Սերվերը չէին կարող վկա լինել այն գործերով, որոնք վերաբերում էին ազատ մարդկանց:

Սկզբնական շրջանում քրեական և քաղաքացիական դատավարության միջև տարբերություն չկար: Հետագայում, դասակարգային պայքարի սրման և թագավորական իշխանության ուժեղացման հետևանքով քաղաքացիականն անջատվեց քրեականից: 1667թ. օրդոնանսով ամրապնդվեց քաղաքացիական դատավարությունը: Այն դարձավ մրցակցային: Քննվող գործերին մասնակից դարձավ դատախազը՝ որպես պետության ներկայացուցիչ:

Քրեական գործի հարուցման իրավունքն անցավ պետական մարմնին, որն արդեն սեփական նախաձեռնությամբ հետախուզում էր հանցագործին և վարում քննություն:

Քրեական գործերով դատավարությունն ընթանում էր երկու փուլով:

¹ Из Кутюмов Бовези, гл. 39, in: Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 271:

ԳԼՈՒԽ 9

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԸ

1. ՎԱՂ ՖԵՈՂԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (IX-XII ԴԴ.)

27

Հասարակական կարգը: Վերդենյան պայմանագրով (843թ.) ֆրանկյան կայսրության կազմից անջատվեց, ինչպես նշել ենք վերևում, նաև Գերմանիան: Այն իրենից ներկայացնում էր քիչ քան շատ ինքնուրույն դքսությունների (Շվաբիա, Թյուրինգիա և այլն) միավորում:

Գերմանիայի տնտեսությունը քայքայ էր զարգացած: Այս բնագավառում նա Եվրոպայի հետամնաց երկրներից էր: Ֆեոդալական հարաբերություններն ավելի ուշ զարգացան, քան Ֆրանսիայում: IX -XI դդ. լնթացքում գերմանական գյուղացիության մեծ մասը դեռ ազատ էր, իսկ սահմանված կոռն ու պարիակը մեծ չափեր չէին ընդունում: Բավական երկար ժամանակ պահպանվեց գյուղական համայնքը՝ մարկան:

Գերմանական հասարակությունը բաժանված էր երկու հիմնական դասերի՝ զինվորականության (հարկատու և ասպետական) և գյուղացիության: Այդ դասերի ձևավորմանը նպաստեց թագավոր Հենրիխ I-ի ռեֆորմը, որն անհրաժեշտություն էր համարում հեծյալների ստեղծումը:

Զինվորական դասը միասեռ չէր: Նրա կազմի մեջ մտնում էին խոշոր հողատերերը, հոգևորականությունը, մանր և միջին ասպետները:

Հարկատու դասը բաժանված էր ազատների և անազատների: Գյուղացիության շրջանում երկար ժամանակ պահպանվեցին ազատ հողի սեփականատերերը: Ազատությունից զրկված էին ճորտերն ու խոլոպները:

Քաղաքային բնակչությունը զբաղված էր հիմնականում արհեստագործությամբ և առևտրով: Նրա մի մասը նաև հողի սեփականատեր էր:

XII դ. Գերմանիայում ձևավորվում է ֆեոդալական դասը: Ֆեոդալական դասի կառուցվածքը որոշվում էր հողային սեփականատիրական հարաբերությամբ:

Ամենախոշոր հողատերը թագավորն էր: Սակայն նրա տիրույթն ան-

ընդհատ ենթարկվում էր փոփոխության: Թագավորները մի կողմից հողերը բաժանում էին եկեղեցիներին, մյուս կողմից՝ նվաճում է իրենց տիրույթներն ընդարձակում էին օտար հողերի հաշվին:

IX-XII դդ. Գերմանիայում հողի մեծ մասը պատկանում էր հոգևոր ֆեոդալներին: Թագավորից հետո խոշոր հողատերեր էին դքսերը, կոմսերը, իշխանները: Նրանցից ետ չէին մնում «ազատ-պարոնները»:

Ֆեոդալական ազնվականության կողքին կանգնած էին այքեպիսկոպոսները, եպիսկոպոսները և քահանաները:

Ֆեոդալների միջև փոխհարաբերությունները կառուցվում էին բազմաստիճանության սկզբունքով: Մի շարք դեպքերում ֆեոդալներն ուղակիորեն ենթարկվում էին թագավորին: Դա վաղ ֆեոդալական պետության բնորոշ գծերից է:

Գերմանիայում ֆեոդալական աստիճանակարգը կրում էր զինվորական բնույթ: Կախյալ գյուղացիության հիմնական մասը կազմում էին կոլոնները և լյուտերը: Բնակչության առավել ճնշված մասը ներկերն էին:

Բ) Պետական կարգը: IX-X դդ. Գերմանիայում նկատվում է թագավորական իշխանության ուժեղացման միտում: Դա պայմանավորված էր նրանով, որ՝ ա) բազմաթիվ խոշոր և միջին ալլոդիստներ (ազնվականների մի տեսակ) զգում էին ուժեղ թագավորական իշխանության կարիք, որպեսզի նրա շնորհիվ նվաճեին համայնական հողերը և համայնականներին գրկեին ազատությունից, բ) ուժեղ թագավորական իշխանությունն անհրաժեշտ էր նաև եկեղեցուն, որը ձգտում էր ընդլայնել իր հողատիրությունը, գ) երկրին անընդհատ սպառնում էր արտաքին թշնամիներից հայրձակման վտանգը (հատկապես նորմաններից և հունգարներից), որը նույնպես պահանջում էր Գերմանիայի քաղաքական միավորում:

Թագավորական իշխանության ուժեղացման համար ստեղծված օբյեկտիվ նախադրյալներն օգտագործեցին Մաքսոնական դինաստիայի թագավորները, որոնցից առաջինների (Հենրիխ I-ի և Օտտոն I-ի) օրոք էլ փաստորեն ձևավորվեց Գերմանիայի վաղ ֆեոդալական պետությունը:

Դքսերի դեմ պայքարում թագավորական իշխանությունը հենվում էր եկեղեցու աջակցության վրա: Օտտոն I-ը, ձգտելով սահմանափակել դքսերի ինքնուրույնությունը, հրատարակեց այսպես կոչված «Օտտոնովյան արտոնությունները», որով մեծանում էր եկեղեցու դերը ոչ միայն նրան պատկանող տիրույթների, այլև այդ տիրույթներին հարող շրջակայքի վրա: Այդպիսի «խմուխտետ» ձեռք բերած եկեղեցիներն իրավունք ստացան իրենց տարածքում (չրջանում) իրականացնելու քրեական գործերով բարձրագույն արդարադատություն: Այս ճանապարհով դքսերի տարածքներում ստեղծվեցին եկեղեցուն պատկանող ինքնուրույն շրջաններ, որոնք

անմիջականորեն կապված էին թագավորական իշխանության հետ: Եկեղեցական հողերից թագավորը հարկ էր հավաքում:

Այս շրջաններում դատական ֆունկցիան իրականացնում էին թագավորական աստիճանավորները, որոնք ուղղակիորեն կախված էին կենտրոնական կառավարությունից:

Օտտոն I-ը, ամրապնդելով իր դիրքերը, X դ. կեսերին փորձեր արեց գրավել Իտալիան: Դրանով նա ձգտում էր տիրել մեծ հարստության և մեծացնել իր իշխանությունը եկեղեցու վրա: Նա 962 թ. Պապի օգնությամբ գահակալեց Հռոմում: Վերածնված կայսրությունը ստացավ «Գերմանական ազգի հումեական սրբազան կայսրություն» անվանումը: «Սյրբազան» էր կոչվում այն պատճառով, քանի որ պետության գլուխ էին համարվում միաժամանակ պապը և կայսրը: Իսկ փաստորեն պետությունը ղեկավարում էր կայսրը:

Երկրի բարձրագույն պետական իշխանությունը կենտրոնացավ թագավորական արքունիքի ձեռքում: քաղաքական կյանքում հսկայական դեր խաղացին ֆեոդալների ժողովները: Որպես ինքնուրույն մարմիններ՝ դրանք ակտիվ էին գործում հատկապես թագավորներին իշխանությունից զրկելու ժամանակ: Այդ ժողովները սահմանում էին թագավորի իրավասության սահմանները, հրատարակում էին օրենսդրական ակտեր, բանակցություններ էին վարում պապի հետ, նշանակում էին պետական բարձրագույն պաշտոնյաներին և այլն:

XI դ. սկզբում թագավորին կից ստեղծվեց խորհուրդ, որը բաղկացած էր ազնվականության ներկայացուցիչներից: Խորհրդի հետ մեկտեղ թագավորը լուծում էր առավել կարևորագույն հարցերը:

Գերմանիայում երկար ժամանակ պահպանվեցին տոհմային դքսությունները, որոնք աստիճանաբար վերափոխվեցին տարածքային իշխանությունների: Իշխանությունները ձևավորվեցին խոշոր կալվածքների բազայի վրա:

2. ԳԵՐՄԱՆԻԱՆ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՍԱՄՆԱՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՐՁԱՆՈՒՄ (XIII- XIX ԴԴ.)

Գերմանիայի քաղաքական զարգացման կարևոր առանձնահատկությունը նրա բաժանումն էր առանձին իշխանությունների, որոնք պահպանեցին իրենց ինքնուրույնությունը մինչև XIX դ.: Տնտեսական և քաղաքական կյանքի զարգացմանը նպաստող պայմանները նպաստեցին երկրի մասնատվածությանը: Գերմանիայում երկար ժամանակ ձևավորվեց միասնական տնտեսական կենտրոն:

Ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս տեղական ուժերի օգտին ստեղծվեցին նպաստավոր պայմաններ: Թագավորական իշխանությունը, ելնելով իր քաղաքական շահերից, աջակցում է մագնատների առանձին խմբերին: Նշված ժամանակաշրջանում նկատվում է քաղաքական իշխանության թուլացում, որը, ըստ էության, չուժեղացավ նաև Իտալիան կատարած արշավանքից հետո: Գնալով ամրապնդվում են ֆեոդալների դիրքերը: Ուժեղանում է նրանց թշնամությունը քաղաքների նկատմամբ: Թագավորական իշխանությունն այնքան թույլ գտնվեց, որ չկարողացավ կապ հաստատել անգամ քաղաքների հետ և նրանց ենթարկել իր կամքին:

Այսպիսով, Գերմանիայում քաղաքական իշխանությունը գտնվում էր ծայրահեղ թույլ վիճակում, և եթե Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում այդ նույն ժամանակաշրջանում սկսվել էր քաղաքական համախմբման պրոցեսը, ապա այստեղ ձևավորվեցին տարածքային իշխանություններ և խորացավ քաղաքական անկումը:

Ֆեոդալական մասնատվածությունն ամրապնդվեց կայսր Կարլ IV-ի ժամանակ՝ 1356թ., հրապարակված «Ոսկե բուլլայով»: Համաձայն այս փաստաթղթի, կայսրն ընտրվում էր կուրֆյուրիստների կալեզիայի կողմից: Ընտրությունը կատարվում էր ձայների մեծամասնությամբ: Ընտրված կայսրը ճանաչում էր կուրֆյուրիստների ինքնուրույնությունը նրանց տիրույթներում և ընդհանրապես պարտավորվում էր չխառնվել իշխանների ներքին գործերին: «Ոսկե բուլլան» արգելեց ստեղծել քաղաքների միություն: Կայսրության բոլոր կարեւորագույն հարցերի լուծումը հանձնվեց կուրֆյուրիստների կալեզիային, որը պետք է գումարվեր ամեն տարի: Կուլեզիան հանդիսացավ նաև արդարադատություն իրականացնող բարձրագույն մարմին՝:

Այլ կերպ ասած, կայսրությունը կրում էր ձևական բնույթ: Երկրում իրավաբանորեն ձևավորվեց մի քանի խոշոր ֆեոդալների օլիգարխիա, որը ստեղծվել էր մինչև «Ոսկե բուլլան»:

Հասարակական կարգը: Ֆեոդալիզմի զարգացման հետ մեկտեղ փոփոխություններ են նկատվում նաև հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքում: Կտրուկ փոխվում է տարբերությունն արիստոկրատիայի և ազնվականության միջև: Արիստոկրատիայից առանձնանում է աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների՝ կուրֆյուրիստների ոչ մեծ խումբը: Ազնվականության հիմնական մասը XIV դարից սկսած զբաղեցնում է բարձրագույն պաշտոններ:

¹ Из Золотой буллы 1356г., in: «Хрестоматия по Всеобщей истории государства и права», т. 1, М., 1996, էջ 282-284:

Գերմանական քաղաքները բաժանվում էին երեք խմբի՝ 1) կայսերական քաղաքներ, 2) ազատ քաղաքներ, որոնք հարկեր չէին վճարում և օգտվում էին ինքնակառավարումից, և 3) իշխանական քաղաքներ, որոնց կայրգավիճակը որոշում էին իշխանները: Քաղաքային բնակչությունը միասեռ չէր: Այստեղ մեծ դիրք էին գրավում վաճառականները և արհեստավորները: Ամենաստորին աստիճանին կանգնած էր պլեբեյական գանգվածը:

Հողային հարաբերություններում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ, որոնք նպաստեցին ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացմանը գյուղատնտեսության մեջ: Այլ փոփոխությունները արտահայտվեցին գյուղացիների ճորտատիրական կախվածության թուլացմամբ: Առավել ազատ և ինքնուրույն գյուղացիներին իրավունք տրվեց վարձակալել հող և վճարել ֆեոդալներին:

Պետական կարգը: Գերմանիայում բարձրագույն կառավարումը կենտրոնացված էր կուրֆյուրիստների կալեզիայի ձեռքում:

Ժամանակ առ ժամանակ զումարվում էր ռայխստագը, որը բաղկացած էր երեք կուրիաներից՝ 1) կուրֆյուրիստների, 2) իշխանների, 3) կայսերական քաղաքների: Մանր ազնվականությունը և գյուղացիությունը ռայխստագում չունեին ներկայացուցիչներ:

Ռայխստագը զումարվում էր տարին երկու անգամ, երբեմն՝ մալ մեկ անգամ: Նրա իրավասության մեջ մտնում էր պատերազմի և խաղաղության հարցերի լուծումը, ուրիշ պետությունների հետ հարաբերությունների կարգավորումը, կայսերական իրավունքում փոփոխություն մտցնելը և այլն: Ռայխստագի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում կայսրն իրավունք ուներ իր խորհրդի անդամների մասնակցությամբ հրապարակել հրամանագրեր, որոնք, սակայն, ուժի մեջ էին մտնում ռայխստագի համաձայնումից հետո:

Գերմանիայում կայսերական իշխանությունը թույլ էր: 1495 թ. Իշխանության ամրապնդման նպատակով ռայխստագն ընդունեց կարևոր ակտեր, որոնք կարգավորում էին հողային հարաբերությունները, արգելում մասնավոր պատերազմները, ստեղծում էին կայսերական դատարան և այլն: Սակայն դրանք սկզբում չհասան իրենց նպատակին:

Նշենք, որ իշխանները տեղեյում չունեին անսահմանափակ իշխանություն: Այստեղ գոյություն ունեին տեղական աստիճանավորների ժողովներ՝ լանդտագեր, որոնք բաղկացած էին տարբեր դասերի ներկայացուցիչներից՝ հոգևորականներից, ազնվականությունից և քաղաքավաճ բնակչությունից: Քանի դեռ չէր ստեղծվել հատուկ դատարանը, լանդտագը տարածքային իշխանությունների գլխավոր դատարանն էր:

Լանդտագերը սահմանափակում էին իշխանների իրավասությունները

Ժայ Խաչ 137

և, ըստ էության, ավելի դասա-ներկայացուցչական մարմին էին, քան ռայխստագրը: Այս պատճառով էլ կարող ենք նշել, որ Գերմանիայի առանձին տարածքներում և ոչ թե ամբողջ երկրում զարգացած էր դասա-ներկայացուցչական միապետությունը:

Երկրի կյանքում մեծ դեր էին խաղում նաև քաղաքները, որոնց կառավարումը կախված էր նրանց իրավական վիճակից: Քաղաքներում օրենսդրական իշխանությունն իրականացնում էին խորհուրդները, որոնք կազմված էին քաղաքային տնտեսության տարբեր ծյուղերի վերաբերյալ ստեղծված հանձնաժողովներից: Գործադիր իշխանությունը պատկանում էր մագիստրատին:

XIV դ. երկրորդ կեսին ստեղծվեցին քաղաքների առաջին մյուսյունները:

Գերմանիայում ֆեոդալական դատարանները, արտահայտելով խոշոր հողատերերի շահերը, սկզբնական շրջանում դատում էին միայն իրենց տարածքում ապրող ճորտերին: Հետագայում այն տարածվեց այդ շրջանում բնակվող ամբողջ բնակչության վրա:

Բացի ֆեոդալական դատարաններից գոյություն ունեին նաև եկեղեցական դատարաններ: Առանձնահատուկ տեղ էին գրավում քաղաքային դատարանները:

Առանձին իշխանություններում ստեղծվեցին բարձրագույն դատարաններ, որոնց նպատակն էր ամրապնդել տեղական իշխանների դիրքերը: Շրջաններում դատական իշխանությունն իրականացնում էին նաև կառավարիչները:

Ստեղծվել էին նաև իրենց իրավասություններով ավելի սահմանափակ, տարբեր տեսակի հարցեր լուծող այլ դատարաններ:

Միահեծանության շրջան: XV դ. վերջերին, XVI դ. I կեսին Գերմանիայի տնտեսությունը կտրուկ ծաղկում ապրեց: Այստեղ տնտեսության զարգացումն ընթանում էր այլ ուղիով և խիստ տարբերվում էր Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներից: Երկրի տարբեր շրջաններում այն զարգանում էր անհավասարաչափ:

XVI դ. I կեսին Գերմանիայում տեղի ունեցավ ռեֆորմացիա: Երկիրը բաժանվեց բողոքականների (լյութերականները) և կաթոլիկների (ռոմալային մաս): Ռեֆորմացիան ընթանում էր սոցիալական շարժումներով, որոնցից առավել խոշոր մասշտաբի էր գյուղացիական ապստամբությունը 1525 թվականին, որի արդյունքը եղավ պատերազմին մասնակցած բնակիչներին արտոնություններից զրկելը և իշխաններից լիակատար կախվածության մեջ դնելը:

Երեսուներեսյա պատերազմը (1618-1648թթ.), որը տեղի էր ունենում կրո-

նական լուծուցի ներքո՝ կաթոլիկների և բողոքականների միջև, նպատակ ունենալով լուծելու նաև շատ կարևոր քաղաքական խնդիր, որին ձգտում էին հատկապես հյուսիս-գերմանական իշխանները, այն է՝ կայսերական իշխանության ուժեղացումը և միասնական ազգային պետության ստեղծումը:

Պայքարն ավարտվեց իշխանների հաղթանակով, որոնք դարձան գրեթե անկախ կայսերական իշխանությունից:

XVII դ. տարածքային իշխանություններում հաստատվեց միահեծանություն: Այն Արևմտյան Եվրոպայի երկրներում հաստատված կենտրոնացված բացարձակ միապետությունից տարբերվում էր հետևյալ գծերով. 1) ինչպես և դասա-ներկայացուցչական միապետությունը, միահեծանությունը նույնպես Գերմանիայում ձևավորվեց միայն առանձին շրջաններում: Այն համակայսերական բնույթ չկրեց, 2) միահեծանությունը հանդիսացավ ֆեոդալական ռեակցիայի լիակատար հանդիսության արտահայտությունը, նրա հաղթանակը բուրժուազիայի նկատմամբ: Մինչդեռ այդ նույն ժամանակ Եվրոպայի երկրներում միահեծանությունը հաստատվեց ազնվականության և բուրժուազիայի շնորհիվ:

Գերմանիայում առաջացած միահեծան պետություններից առավել խոշոր էին Պրուսիան և Ավստրիան:

79

3. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Իրավունքի աղբյուրները: X -XIII դդ. Գերմանիայում իրավական միասնական համակարգը դեռևս ձևավորված չէր: Յուրաքանչյուր տարածք ուներ իր իրավունքները և իրեն բնորոշ իրավական նորմերով կարգավորում էր ներքին հարաբերությունները:

Նշված ժամանակաշրջանում իրավունքի հիմնական աղբյուր էին սովորույթները: XIII դարում այդեն փորձեր արվեցին Գերմանիայի մի քանի շրջաններում գործող սովորույթները հավաքել մեկ ընդհանուր ժողովածուի մեջ: Դրանք կրում էին ոչ պաշտոնական բնույթ: Այդպիսի ժողովածուներից առավել հայտնի են «Մաքսոնական հայելին» և «Շվաբյան հայելին»:

«Մաքսոնական հայելին» կազմվել է XIII դ. 20- ական թվականներին: Այն արտացոլում էր հյուսիս-արևելյան Գերմանիայի սովորույթները: Կարճ ժամանակում «Հայելին» կիրառելի դարձավ ոչ միայն Գերմանիայի մյուս շրջանների համար, այլև դուրս եկավ երկրի սահմաններից: «Մաքսոնական հայելին» բաղկացած է երկու մասից՝ 1) գեմստվոյական (տեղական) իրավունք, որը կարգավորում էր շեֆական դասի ազատ մարդկանց միջև առաջացած քաղաքացիական, քրեական, դատավարական և պետա-

իրավական հարաբերությունները, 2) ավատական (ֆեոդալական) իրավունք, որը կարգավորում էր «քարեկեցիկ ազատների» Շքեղայների միջև առաջացած վասալային հարաբերությունները:

XIII դ. երկրորդ կեսին Գերմանիայի հարավային մասերում լայնորեն տարածվեց «Շվաբյան հայելին», որը նույնպես պարունակում է գեմստվոյական և ավատական իրավունքի նորմեր:

Երկրում քաղաքների զարգացման հետ մեկտեղ առաջանում է նաև քաղաքային իրավունքը, որը բնակչությանը չէր բաժանում ազատների և անազատների: Այն համակողմանիորեն կարգավորում էր քաղաքային բնակչության գույքային, ներարտադրամասային, շուկայական և այլ հարաբերությունները: Քաղաքներում ձևավորվեցին նաև սեփական դատաւաններ, որոնք կոչված էին լուծելու հատկապես շուկայական վեճերը: Հետագայում դրանք, որպես առաջին ատյանի դատարաններ լուծում էին քաղաքին վերաբերող բոլոր տեսակի վեճերը: Առավել տարածված էին Լյուբեկի, Մագդեբուրգի և մի շարք քաղաքների իրավունքները, որոնք ըստ էության, կրում էին այլ երկրների իրավական ազդեցությունը: (Օրինակ, «Մագդեբուրգի» իրավունքը կրում էր Լեհաստանի և Լիտվիայի իրավունքի ազդեցությունը):

XIII - XIV դդ. քաղաքային իրավունքը հաճախ էր հրապարակվում գրավոր և տարածվում քաղաքից քաղաք: Փաստորեն քաղաքային իրավունքը հանդիսացավ առավել վավերագրական և վերլուծող ճյուղ միջնադարյան իրավունքում:

Իրավունքի համակարգում մեծ էր նաև կանոնական իրավունքի դերը, որն առաջին հերթին կարգավորում էր կաթոլիկ եկեղեցու գործունեության և կազմակերպական հարցերը: Դրա հետ մեկտեղ, այն պարունակում է մի շարք դրույթներ, որոնց դերը քաղաքացիական իրավունքի զարգացման բնագավառում ակնհայտ էր (հատկապես ամուսնարնտանեկան իրավունքում):

Սկսած XIII դարից Գերմանիայում լայն տարածում է գտնում հռոմեական իրավունքը: Հին ազդեցության իրավունքն այլևս չէր համապատասխանում երկրի զարգացմանը: Գերմանիայի իրավաբաններին հայտնի միակ, ամբողջովին ձևավորված իրավական համակարգը հռոմեական իրավունքն էր: Երկրի համալսարաններում ստեղծվեցին հռոմեական իրավունքի ամբիոններ, հրատարակվեցին դասագրքեր, տեղեկատուներ, իրավաբանական քառաբաններ, որոնք նպաստում էին հռոմեական իրավունքի տարածմանը: XVI դ. այն դարձավ Գերմանիայի իրավունքի հիմնական աղբյուրներից մեկը՝ հատկապես քաղաքացիական իրավունքի բնագավառում:

Հումեական իրավունքի տարածմամբ շահագրգռված էին ոչ միայն նոր ձևավորվող բուրժուազիան, այլև կայսրը և ֆեոդալները:

XV դ. երկրորդ և XVI դ. առաջին կեսերին գերմանական տարբեր իշխանություններում (հողերում) հրատարակվեցին քրեական և քրեա-դատավարական օրենսգրքեր: Դրանցից առավել հայտնի էին Բամբերգյան (1507թ.) և Բրանդենբուրգյան (1516թ.) օրենսգրքերը, որոնք համակարգում էին ոչ միայն տեղական սովորույթները, այլև հումեական քրեա-դատավարական իրավունքի նորմերը: 1532թ. ռայխստագն ընդունեց քրեական և քրեա-դատավարական համագերմանական օրենսգիրքը, որը Կարլոս V-ի անունով կոչվեց «Կարոլինա»:

XVIII դարում մշակվեցին և ստեղծվեցին նոր օրենսգրքեր (օրինակ՝ Բավարիայում ստեղծվեցին 1751թ. քրեական, իսկ 1756թ.՝ քաղաքացիական օրենսգրքերը):

Սեփականության իրավունք: Ինչպես Ֆրանսիայում և Անգլիայում, Գերմանիայում մուլենպես գյուղություն ուներ ֆեոդալական հողային սեփականության աստիճանակարգային կառուցվածք: Հողային հարաբերությունները սենյորների և վասալների միջև կարգավորվում էին ավատական իրավունքով: Սենյորն իրավունք ուներ հողի մի մասը գիջելու իր վասալին և նրանից ըստ պայմանագրի պահանջելու որոշակի պարտականությունների կատարում: Վասալը չէր դառնում հողի սեփականատեր, իսկ սենյորը չէր կորցնում նրա նկատմամբ ունեցած իր սեփականության իրավունքը: Եթե վասալը մահանում էր և չուներ ժառանգորդ, ապա հողը վերադարձվում էր սեփականատիրոջը՝ սենյորին: Հոր մահից հետո որդին մեկ տարվա և վեց շաբաթվա ընթացքում պարտավոր էր տիրոջ առաջ ընդունել իր կախվածությունը հոր գծով: Վասալները ֆեոդլի նկատմամբ ունեին տիրապետման և օգտագործման իրավունք: Ֆեոդը կարող էր փոխանցվել վասալի ժառանգորդին, եթե վերջինս սենյորին մուծելու էր հողային տուրք՝ ռեյնֆ:

Ֆեոդի տնօրինման նկատմամբ վասալի լիազորությունները համեմատաբար սահմանափակ էին: Ֆեոդալիզմի վաղ շրջանում նա չէր կարող այն վաճառել, օտարել՝ առանց սենյորի համաձայնության: Հակառակ դեպքում սենյորն այն կարող էր վերցնել առանց գնորդին հատուցում տալու: Սակայն XIII դարից սկսած թույլատրվեց ֆեոդլի լիարժեք օտարում՝ առանց սենյորի թույլտվության:

Գերմանիայում հողատիրության ձևերը տարբեր էին: Գոյություն ուներ անձնապես ազատ գյուղացիության հողատիրություն և անազատ գյուղացիության հողատիրություն: Ազատ գյուղացիները (չինչևիկները) ֆեոդալին

¹ Из Саксонского Зерцала, гл. ленное право, илл. 45, и в Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 294:

հողի դիմաց վճարում էին չինշա (բնեղենով կամ դրամով): Ընդ որում, հողի տիրապետման այս ձևը կարող էր լինել ժառանգական կամ ցմահ: Ծորտ գյուղացիները տիրապետում և օգտագործում էին իրենց տերերի կողմից տրված հողը և գտնվում էին նրանց իշխանության ներքո: Ծորտե-րին հողի հետ միասին կարելի էր օտարել: Նրանք տեղափոխման իրավունք չունեին: Չէին կարող ամուսնանալ առանց տիրոջ համաձայնության և այլն:

Հետագայում, ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացման և հռոմեական իրավունքի ընկալման հետ կապված, սկսվում է չինշայական հողատիրության դուրս մղման և չինշակիների՝ ճուտերի վերածման պրոցեսը:

Պարտավորական իրավունք: Պարտավորական հարաբերությունները, որոնք առաջանում են պայմանագրերից և իրավախախտումներից, կարգավորվել են հիմնականում հռոմեական իրավունքով:

Բանավոր պայմանագրերը բնորոշելի չէին և համարվել են անվավեր: Բոլոր պայմանագրերը պետք է կնքվեին գրավոր: Տարածված էին առուծախի, վարձակալության (հատկապես հողի), նվիրատվության և մի շարք այլ պայմանագրերի տեսակները: Ոլորտ պայմանագրերի կնքման ժամանակ պահպանվել են գերմանական սովորույթային իրավունքի սկզբունքները (օր. առուծախի պայմանագրի կնքման ժամանակ):

Ամուսնաընտանեկան և ժառանգական իրավունք: Ամուսնա-ընտանեկան հարաբերությունները կարգավորվել են կանոնական իրավունքով: Ամուսնության միակ ձևը եկեղեցական արարողությունն էր: Եկեղեցին ստեղծել էր պատկառողության բարդ համակարգ: Ամուսնության ժամանակ բացի որոշակի տարիքից հաշվի էին առնվում նաև ապագա ամուսինների հատկանիշները և ազգակցական կապը:

Ամուսնության համար ամուսինը կնոջ հարը վճարում էր որոշակի գումար (վիստում), որը հայրը հանձնում էր առջվան ամուսնությունից ընտու: Գույքային ընդհանրությանը զուգահեռ ամուսնուն էր վերապահված գույքային հարաբերությունները կառավարելու իրավունքը: Կինն իր գույքից ինչ-որ բան նվիրելու իրավունք չուներ: Նա չէր կարող օտարել՝ առանց ամուսնու համաձայնության:

Երեխաները մինչև տնտեսական ինքնուրույնություն ձեռք բերելը գտնվում էին հոր իշխանության տակ: Ամուսնու մահից հետո կլնը ստանում էր իր բաժին ունեցվածքը:

Գերմանիայում ժառանգումը կատարվում էր հիմնականում ըստ օրենքի: Ըստ ավատական (ֆեոդալական) իրավունքի, ֆեոդը փոխանցվում էր միայն մեկ որդուն (ապագ որդուն), իսկ ըստ գերմանական իրավունքի, ինքը փոխանցվում էր բոլոր որդիներին: Ժառանգության բացման դեպքում ժա-

ռանգությունից առաջին հերթին օգտվում էին տղաները, այնուհետև՝ աղջիկները: Մի շարք խղերում աղջիկներն ընդհանրապես ժառանգորդ լինել չէին կարող: Նրանք օգտվում էին միայն հոր տանը ամբարտույտի և օժիտ ստանալու իրավունքից:

Եթե ժառանգատուն չունեի երեխաներ, ժառանգությունն անցնում էր նրա հորը, մորը, եղբայրներին, քույրերին կամ այլ մերձավորներին:

Ժառանգումն ըստ կտավի հայտնի չէր: Դրան ինչ-որ չափով փոխարինում էր նվիրատվության պայմանագիրը:

Քրեական իրավունք և դատավարություն: Գերմանիայում սկզբնական շրջանում իշխում էր «բռնուցքի իրավունքը», ըստ որի ցանկացած տուժող իրավունք ունեի պաշտպանելու իրեն այն դեպքում, երբ դատարանը չէր պաշտպանում նրան:

XI դարից եկեղեցու նախաձեռնությամբ, որը ձգտում էր կարգ ու կանոն հաստատել երկրում, կայսրերը սկսում են հրատարակել որոշումներ, որոնք հայտնի են այսպես կոչված «համաերկրային խաղաղություն» անունով: Այդ որոշումները պատկերացում են տալիս XI-XV դդ. գործող հանցագործությունների և պատժի համակարգի մասին:

«Խաղաղության» դեմ ուղղված խախտում էին համարվում եկեղեցու իշխանության չենթարկվելը, հերետիկոսությունը, անօրինական կարգով տուրքեր հավաքելը, կեղծ դրամահատությունը և այլն:

«Մաքսոնական հայելին» բոլոր վտանգավոր արարքները, որոնք վնաս էին հասցնում կրոնին, պետությանն ու մասնավոր անձանց, համարեց հանցագործություն և այդպիսիք լինելու դեպքում սահմանեց պատժի տարբեր տեսակներ:

Գերմանիայում հայտնի էր իրավախախտման երկու տեսակ՝ 1) հանցագործություն և 2) զանցանք:

Ըստ ոտնձգությունների օբյեկտի, դատական պրակտիկան հանցագործությունները բաժանում էր երեք կարգի՝ 1) հանցագործություններ՝ ուղղված կրոնի դեմ 2) հանցագործություններ՝ ուղղված պետության դեմ, 3) մասնավոր անձանց դեմ ուղղված հանցագործություններ:

Քրեական իրավունքը և դատավարությունն իրենց արտացոլումը գտան «Կարոլինա» օրենսգրքում, որի ավելի քան 100 հոդվածներ վերաբերում են իրավունքի նշված ճյուղին: Դրանք բավականին չափով պարզ են ու հասկանալի: Ի տարբերություն ավելի ուշ ընդունված օրենսգրքերի, «Կարոլինան» սիստեմատիկորեն բաժանված չէ առանձին մասերի և գլուխների: «Կարոլինան» սահմանում է հանցագործության սուբյեկտին բնորոշ հատկանիշները, սուբյեկտիվ կողմը, անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը և այլն: Ըստ «Կարոլինայի», 14 տարեկանից փոքր տա-

րիք ունեցող հանցագործներին չպետք է ենթարկել մահապատժի: Նրանց նկատմամբ պետք է կիրառել մարմնական պատիժները: Օրենսգիրքը հատուկ ուշադրություն է դարձնում անզգույշ և դիտավորյալ հանցագործություններին և ավելի մեղմ պատիժ է սահմանում անզգույշորեն կատարված հանցագործությունների դեպքում:

«Կարողինան» պատիժ էր նախատեսում ոչ միայն ավարտված հանցագործության, այլև հանցափորձի և հանցակցության դեպքում: Վերջինս արտահայտվում էր՝ 1) մինչև հանցագործության կատարումը, 2) հանցագործության կատարման պահին և 3) հանցագործություն կատարելուց հետո հանցագործին օգնություն ցույց տալով:

«Կարողինան» հանցագործությունները բաժանում էր հետևյալ խմբերի.

1) Կրոնի դեմ ուղղված հանցագործություններ (օր. Աստծուն հայելոյելը, անարգելը).

2) Պետության դեմ ուղղված հանցագործություններ (օր. դավաճանությունը, իշխանության դեմ բարձրացրած խռովությունը և այլն).

3) Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ (օր. գողությունը, կողոպուտը և այլն).

4) Անձի դեմ ուղղված հանցագործություններ (սպանությունը, բռնաբարությունը և այլն).

5) Բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ (օր. երկկնությունը, անուսնական անհավատարմությունը և այլն).

6) Արդարադատության կարգի դեմ ուղղված հանցագործություններ (օր. դատարանում սուտ վկայություն տալը և այլն).

7) Առևտրի կարգի դեմ ուղղված հանցագործություններ (օր. թերաչափումը, թերակշռումը և այլն):

Կատարված հանցագործությունների դեպքում նախատեսված էին դաժան պատիժներ, որոնք ունեին սարսափեցման նպատակ: «Կարողինան» նախատեսում էր պատժի հետևյալ տեսակները՝ մահապատիժը, մարմնական վնասվածքը, երկրի սահմաններից արտաքսելը, տուգանքը և հասարակական պարսավանքը:

Պատիժը նշանակելիս հաշվի էր առնվում այն հանգամանքը, թե ում դեմ էր ուղղված ոտնձգությունը, ով էր կատարել այն, և ինչպիսի վտանգավորություն էր ներկայացնում կատարված հակաօրինական արարքը հասարակության համար:

Գերմանիայում դատավարությունը մեղալրական բնույթ էր կրում: Տուժողը կարող էր հայց ներկայացնել, իսկ մեղալրյալն իրավունք ուներ վիճարկել այն: Կողմերը հավասար իրավունքներ ունեին փաստաթղթեր և վկաների ցուցմունքներ ներկայացնելու ժամանակ: Նրանք կարող էին

օգտվել իրավաբանների ծառայությունից: Եթե դատաքննության ժամանակ չէր ապացուցվում մեղադրանքը, հայցվորը պետք է հատուցեր բոլոր տեսակի վնասները և վճարեր դատական ծախսերը:

Ընդհանուր առմամբ քրեական գործերի քննության հիմնական ձևը հանդիսանում էր ինկվիզիցիոն պրոցեսը: Մեղադրանքներն առաջադրվում էին պետության անունից: Քննությունը կատարվում էր դատարանի նախաձեռնությամբ, որը չէր սահմանափակվում որևէ ժամկետով:

Կասկածյալների նկատմամբ լայնորեն կիրառվում էին ֆիզիկական ներգործության միջոցները: Ապացուցման միջոց էր համարվում ծեծը, վկաների ցուցմունքը (ընդ որում, նրանց թիվը երկուսից պակաս լինել չէր կարող) և այլն¹:

Վերջնական դատավճիռը պետք է կայացվեր այն դեպքում, երբ մեղադրյալը խոստովանում էր իր մեղքը: Հակառակ դեպքում նա ենթարկվելու էր դաժան ծեծի: Ավելացնենք, որ ծեծը երկար ժամանակ է կիրառվել Գերմանիայում: Միայն Պրուսիայում և Ավստրիայում XVIII դ. երկրորդ կեսին արգելվեց դրա կիրառումը:

Դատավարությունը բաժանվում էր երեք փուլի՝

1) հետաքննություն, 2) ընդհանուր քննություն և 3) իստույկ քննություն:

Հետաքննությունը հանցագործության կատարման փաստի և կասկածյալի հաստատումն էր: Ընդհանուր քննությունը կասկածյալի հարցաքննությունն էր գործի մի քանի հանգամանքների վերաբերյալ, իսկ իստույկ քննությունը մեղադրյալի և վկաների մանրամասն հարցաքննություն էր, ապացույցների հավաքումը և հանցագործին պատժելը:

Դատավարությունը բոլոր փուլերում կրում էր գրավոր բնույթ:

¹ Каролина. Уголовно-судебное уложение "Священной Римской империи германской нации" ил'и Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 302-310:

ԳԼՈՒԽ 10

ԱՆԳԼԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

89

1. ՎԱՂ ՖԵՈՂԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ (V -XI դդ.)

Մ.թ. V դարից սկսած ժամանակակից Անգլիայի տարածքում բնակչության հաստատեցին գերմանական ցեղերը՝ անգլերն ու սաքսերը, որոնք գտնվում էին նախնադարյան համայնական կարգերի քայքայման փուլում: Անգլիայի նվաճումը նրանց կողմից արագացրեց այդ պրոցեսը:

Անգլիայի պետության և իրավունքի պատմությունը բաժանվում է հետևյալ ժամանակաշրջանների. 1) վաղ ֆեոդալական միապետության (V-XIդդ.), 2) ֆեոդալական պետության զարգացման (XI-XIII դդ.), 3) Դասակարգային փոփոխության (XIII-XVդդ.), 4) Բացարձակ միապետության (XV-XVIIդդ.):

V-XI դդ. Անգլիայի բնակչությունը բաժանված էր երեք մասի՝ ազատների, կիսաազատների և ստրուկների: Ազատ բնակչության թվում էին երկրն ու կերպերը: Առաջինները նախկին ցեղային առաջնորդներն էին և համարվում էին ամենաարտոնյալ դասը: Նրանք տիրում էին մեծ քանակությամբ հողերի: Կերպերն ազատ գյուղական համայնքի անդամներ էին, որոնք տիրում էին հերկովի հողերի մի մասին, մասնակցում ժողովրդական ժողովներին, ինչպես նաև կատարում պետական պարհակներ: Կերպերի սպանության դեպքում նախատեսված տուգանքն ավելի քիչ էր, քան էրկերի սպանության դեպքում:

Կիսաազատ բնակչությունը կոչվում էր լետեր: Նրանք գտնվում էին իրենց տերերի՝ էրկերի իշխանության ներքո, ունեին փոքր քանակությամբ հողեր և կատարում էին տարբեր տեսակի պարտավորություններ:

Բնակչության ամենաստորին խավը ստրուկներն էին, որոնք օգտագործվում էին էրկերի տնային տնտեսություններում:

IX-XIդդ. ընթացքում Անգլիայում վերջնականապես հաղթանակում են

Ֆեոդալական հարաբերությունները: Ամբողջ գյուղացիությունը ենթարկվում է ֆեոդալական շահագործման: Հողի սեփականատերերի օգտին կախյալ և ճորտ գյուղացիները կատարում էին պարիակներ:

Ֆեոդալիզմի հաղթանակն Անգլիայում վերացրեց նախնադարյան համայնական կազմակերպությունների մնացուկները: Ամբողջ իշխանությունը պետությունում կենտրոնացվեց թագավորի և ազնվականության ձեռքում: Կազմակերպվեց խորհուրդ («իմաստունների ժողով» վիտանագեմոտ), որը պետական իշխանության բարձրագույն մարմինն էր: Առանց նրա համաձայնության թագավորն իրավունք չուներ հրատարակելու օրենքներ, անցկացնելու պետական կարևորագույն միջոցառումներ:

81

2. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՖԵՈՂԱԼԻԶՄԻ ԾԱՂԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (XI-XIIIդդ.)

1066թ. Անգլիան ենթարկվեց նորմանդական նվաճմանը: Նվաճողները հողերը բաժանեցին միմյանց միջև: Բոլոր հող ստացողները դարձան թագավորի վասալները: Անգլիայում գործում էր «իմ վասալի վասալն իմ վասալը չէ» սկզբունքը:

Նշված ժամակաշրջանում բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն էր: Նորմանդական նվաճումից հետո աշխուժանում է առևտուրը, զարկ է տրվում արհեստագործության զարգացմանը:

XI դարում գյուղացիների մեծ մասն արդեն ճորտացվել էր: Հասարակությունը բաժանվել էր շահագործող և շահագործվող դասերի: Տիրող դասակարգի ներսում միասնություն չկար: Հակասությունները սրվել էին շախարհիկ և հոգևոր ֆեոդալների միջև: Անընդիսատ կռիվներ էին մղվում բոյարների և ազնվականության միջև:

Այնուամենայնիվ, նվաճումը նպաստում էր կենտրոնական իշխանության նշանակալի ուժեղացմանը: Թագավորական իշխանության ուժեղացումը պայմանավորված էր նաև նրանով, որ ինքը՝ թագավորը, իր ձեռքում կենտրոնացրել էր հսկայական քանակությամբ հողային ֆոնդ, որը կազմում էր երկրի հերկովի հողերի գրեթե 1/7 մասը:

Նորմանդական նվաճումն Անգլիայի պատմության համար ունեցավ մեծ նշանակություն: Այն նպաստեց ֆեոդալական պրոցեսի վերջնական ավարտմանը, թագավորական իշխանության ուժեղացմանը, ամրապնդեց երկրի քաղաքական միասնությունը:

Պետական կարգը: XII դարում շարունակվում էր թագավորական իշխանության ուժեղացումը: Թագավորին աջակցում էին բնակչության բոլոր խավերը, որոնցից յուրաքանչյուրն այդ ուժեղացման մեջ փնտրում էր իր շահը:

Մակայն այդպես երկար շարունակվել չէր կարող: Նոր բարոնները, որպես հողի սեփականատերեր, ամրապնդելով իրենց դիրքերը, մգսեցին համդես գալ թագավորական իշխանության դեմ: Այդ բնույթի առաջին ելույթը տեղի ունեցավ Հենրիխ I-ի կառավարման տարիներին (1100-1135 թթ.), որը հարկադրված կատարեց որոշակի զիջումներ:

Հենրիխ I-ի կառավարման տարիներին նշանակալիորեն կատարելագործվեց պետական կենտրոնական ապարատը:

Թագավորական կուրիան բաժանվեց մեծ խորհրդի և փոքր կուրիայի: Մեծ խորհուրդը գումարվում էր տարին երեք անգամ: Նրա կազմի մեջ մտնում էին թագավորի կողմնակիցները: Խորհուրդը կոչված էր բոլոր հարցերի վերաբերյալ անել առաջարկություններ և դիտողություններ, թագավորին տալ խորհուրդներ, լսել և քննարկել թագավորի որոշումներն ու օրենսդրական ակտերը: Չնայած դրան՝ խորհրդի երաշխավորումը պարտադիր ուժ չուներ:

Փոքր կուրիան իրականացնում էր բարձրագույն դատա-վարչական, ինչպես նաև ֆինանսական իշխանություն: Նրա կազմի մեջ մտնում էին թագավորի կողմնակիցները: Կուրիայի նիստերը ղեկավարում էր թագավորը, իսկ նրա բացակայության ժամանակ՝ նրա կողմից լիազորված անձը:

Հենրիխ I-ի օրոք կենտրոնական ապարատի ուժեղացման հետ մեկտեղ իշխանությունն ուժեղացավ նաև տեղերում, որտեղ այն իրականացնում էին շերիֆները:

Հենրիխ II-ի օրոք (1154-1189թթ.) անցկացվեցին մի շարք ռեֆորմներ, որոնք նպատակ ունեին էլ ավելի ամրապնդել դատավարական իշխանությունը: Դատական ռեֆորմով թագավորական կուրիան դարձավ մշտական գործող գերագույն դատական մարմինը: Նրա նիստերը վարում էին հինգ իրավաբաններ: Կուրիան բոլոր տեսակի հարցերը լուծում էր հիմնականում վճռաբեկության կարգով: Նրան իրավունք էր վերապահված լուծելու նաև սեփականությանը վերաբերող մի քանի կատեգորիայի հարցեր: XIIդ. երկրորդ կեսին ձևավորվեց արտագնա դատարանների ինստիտուտը:

Չինվարական ռեֆորմով այն ֆեոդալները, որոնք զինվարական ծառայության չէին անցնում, պարտավոր էին հարկ վճարել նրանց փոխարինած ասպետներին: Դա կազմում էր վարձու ասպետական բանակի բովանդակությունը: Թագավորի մեկ ուրիշ հրամանով երկրի բոլոր ազատ բնակիչները

որ պարտավոր էին սովորել և տիրապետել զինվորական գործը:

Հենվելով հզոր բանակի վրա՝ թագավորական իշխանությունն ուժեղացրեց իր զինքերը ֆեոդալների նկատմամբ:

Ազատությունների մեծ խարտիան. XIII դարում Անգլիայում ծավալվեց սուր քաղաքական պայքար, որը կանխորոշեց նրա հետագա զարգացումը: Դա ֆեոդալական կարգերի ծաղկման ժամանակաշրջանն էր: Բնակչության նկատմամբ թագավորական իշխանության քաղաքական տիրապետումն ուժեղանում էր: Ուժեղ թագավորական իշխանության հակառակորդներ էին ֆեոդալական մագնատները, որոնք չնայած հզոր իշխանությանը օժտված չէին, բայց և այնպես հանդիսանում էին թագավորական իշխանության հակառակորդներ: Հովհաննես Անհուլ թագավորի օրոք (1199-1216թթ.) բարոնների պայքարը համազգային բնույթ կրեց և ստացավ աջակցություն երկրի այլ ակտիվ քաղաքական ուժերի՝ ազնվականության և քաղաքային վերնախավի կողմից: Երկրում ձևավորվեց հակաթագավորական միասնական ճակատ, որը ղեկավարում էին բարոններն ու բարձրագույն հոգևորականությունը: Իրադրության սրմանը նպաստեց նաև երկրի ներքին ու արտաքին անհաջող քաղաքականությունը:

Թագավորն անհեռանկար պատերազմ էր սղում Ֆլանսիայի դեմ և հակադրության մեջ էր Հռոմի պապի հետ: Դժգոխություն էին առաջացնում նաև բազմաթիվ հարկերը, որոնք զանձվում էին ֆեոդալական սովորույթներից հակառակ:

Այս պայմաններում էլ բարոնները՝ ասպետների և քաղաքային վերնախավի հետ միասին թագավորին հարկադրեցին ստորագրելու «Ազատությունների Մեծ Խարտիան» (1215թ.): Այլ կերպ ասած, միջնադարյան Անգլիայի սոցիալ-տնտեսական պայմանները, միահույսվելով տվյալ ժամանակաշրջանի իրավական-քաղաքական իրադարձությունների հետ՝ հիմք հանդիսացան 1215թ. Անգլիայի Ազատությունների մեծ խարտիայի ընդունման համար¹: «Խարտիան» իր բովանդակությամբ ավելի հարուստ էր ու ընդարձակ, քան Հենրիխ I-ի «Ազատությունների խարտիան»: Այն արտահայտում էր շարժումը ղեկավարող բարոնների շահերը: Բարոնական ավատները հայտարարվում էին ազատ ժառանգվող տիրույթներ: Թագավորն իրավունք չուներ ժառանգություն ստացած երիտասարդ բարոնից պահանջելու սահմանվածից ավելին: Թագավորը խոստացավ անչափահաս վասալների նկատմամբ ունեցած խնամակալության իրավունքի չարաշահում թույլ չտալ: Խարտիան վերականգնում էր բարոնների որոշ սենյորական իրավունքներ, որոնք խախտվել էին թագավորական իրավա-

¹ Եսայան Է., Ազատությունների մեծ խարտիայի ընդունման սոցիալ-տնտեսական նախադրյալները, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», N 3, Երևան, 1975, էջ 212:

սուրբյան ընդլայնման հետևանքով: Թագավորը խոստացավ վերացնել ցանկացած կամայականություն՝ բարոններից դրամական տուրքերի հարկման դեպքում: Միայն 3 դեպքերում էր, որ բարոնները պարտավոր էին թագավորին չափավոր դրամական օգնություն ցույց տալ՝

1) թագավորին փրկագնով գերությունից ազատելու,

2) թագավորի ավագ որդուն ասպետի կոչում շնորհելու,

3) թագավորի առաջին ամուսնությունից ծնված ավագ դստերն ամուսնացնելու դեպքերում:

Դրա հետ մեկտեղ խարտիայի մի շարք որոշումներ պաշտպանում են շարժման այլ մասնակիցների շահերը: Հաստատվում են նախկինում գոյություն ունեցող եկեղեցու և հուգևորականության արտոնություններն ու ազատությունները, մասնավորապես եկեղեցական լուստությունների ազատությունը:

Խարտիան պաշտպանում էր վաճառականների (այդ թվում նաև օտարերկրյա) իրավունքները: Նրանց թույլատրվում էր ազատորեն դուրս գալ Անգլիայից ու վերադառնալ, ամենուրեք կատարել առևտուր առանց որևէ դիմադրության հանդիպելու¹: Այն նախատեսում էր առևտրի համար միասնական չափ ու կշռի միավոր սահմանելու անհրաժեշտությունը: Հարգելով մարդու ազատ լինելու բնական իրավունքը, խարտիան ամրագրեց այն կարևորագույն դրույթը, ըստ որի ոչ ոք իրավունք չունի ազատ մարդուն ձերբակալել, կալանավորել կամ զրկել տիրությաներից ոչ այլ կերպ, քան օրենքով նախատեսված կարգով²:

Ընդհանուր առմամբ Խարտիայով ամրագրված դրույթները դուրս չեկան ֆեոդալական կարգերի շրջանակներից, և կարող ենք նշել, որ այն իր բնույթով ֆեոդալական էր: «Խարտիան» նշանակություն ունեցավ միայն տվյալ ժամանակաշրջանի համար:

**3. ԳԱՍԱՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ
ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ
(XIII-XVդդ.)**

ԳԶ

XIII դարի երկրորդ կեսին Անգլիայում ձևավորվում է դասաներկայացուցչական միապետություն: Անգլիայում, որտեղ թագավորական իշխանությունն ավելի վաղ էր ամրապնդվել, դասաներկայացուցչական համա-

¹ Великой хартии вольностей, 1215г., հոդ. 41, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 373:

² Великой хартии вольностей, 1215г., հոդ. 39, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 1, М., 1996, էջ 373:

կայրգը ստեղծվեց թագավորի հետ ֆեոդալների մղած սուր պայքարի արդյունքում:

Դասաներկայացուցչական միապետության ստեղծման հետևանքով զգալի փոփոխություններ տեղի ունեցան երկրի հասարակական կյանքում: Լայն թափով զարգացավ առևտուրը, որի հետևանքով աճեց քաղաքների թիվը:

Հասարակության հիմնական դասերն էին հոգևորականությունը, ազնվականությունը և գյուղացիությունը: Տիրապետող դասակարգի կազմում ուժեղացավ շերտավորումը խոշոր ֆեոդալական ազնվականության (յուրդերի) և միջին ու մանր հողատերերի (ասպետների) միջև:

Հողագործության զարգացման հետևանքով արագանում է գյուղացիների ճորտացման պրոցեսը: Չարքաչ գյուղացիության վիճակն ավելի է ծանրանում հարյուրամյա պատերազմից հետո: Ստեղծված իրավիճակում գյուղացիները հաճախ էին դիմում ապստամբությունների:

Դասաներկայացուցչական միապետության առաջացման նախարյալներից մեկը ֆեոդալական դասի ձևավորումն էր: Անգլիայում ֆեոդալների համախմբումը տեղի ունեցավ առանձնահատուկ պայմաններում:

Դրանք էին՝

- 1) Ավատական աստիճանակարգն այստեղ չստացավ լայն ճյուղավորում,
- 2) Դասա-քաղաքական հարաբերությունները սկզբնական շրջանում բարդացել էին էթնիկական տարբերության պատճառով,
- 3) Ֆեոդալական ավագանին նորմանդների նվաճման ժամանակներից սկսած թագավորական իշխանությունից գտնվում էր խիստ կախվածության մեջ և չկարողացավ ստեղծել փակ տարածքային տիրույթներ,
- 4) Ուժեղացած թագավորական իշխանությունը մագնատներին զրկեց իմունիտետային արտոնություններից:

Չնայած այս ամենին՝ բարձրագույն ֆեոդալական ավագանին հասավ դասային միապետության ստեղծմանը: Պերի (բարձր ազնվականությունն Անգլիայում) կազմի մեջ մտան մասնաճյուղական եկեղեցու խոշոր պրելատները (բարձրաստիճան կաթոլիկ և անգլիական հոգևորական):

Անգլիական ազնվականությունը XIII դ. արդեն մեծ դեր խաղաց երկրի տնտեսական և քաղաքական կյանքում: Նրանք զրկված էին զինվորական կյանքից: 1258թ. հունիսի 11-ին զինված բարոնները մեկնեցին Օքսֆորդ, որտեղ թագավորին ներկայացրին 29 կետից բաղկացած խնդրագիր: Այս բոլորն իրադարձությունը ստացավ «Կատաղած պառլամենտ» անվանումը: Ներկայացված նախագծով ամբողջ իշխանությունն անցնում էր 15 բարոնների ձեռքը, որոնք պետք է հսկեին թագավորի գործունեությունը, նշանակեն և ազատեն բոլոր բարձրագույն պաշտոնատար անձանց, բացի 15-ի

խորհրդից, որն ընտրվում էր համայնքից (համայնք ասելով հասկացվում էին բարոնները):

Կնատարվեցին որոշակի զիջումներ: Ամբողջ երկրով անցկացվեց հետաքննություն թագավորական աստիճանավորների չարաշահումների կապակցությամբ: Դատավորներին արգելվեց կաշառք վերցնել: Այսպիսով, բարոնները հաստատեցին իրենց տիրապետությունը: Այսինքն՝ այն, ինչին ձգտում էին 1215թ., հասան 1258 թվականին:

Նշենք, որ բարոնական օլիգարխիայի ռեժիմը երկրում բերեց ֆեոդալական անարխիա: Դա հանգեցրեց քաղաքացիական պատերազմի՝ թագավորի և բարոնների միջև (1258-1267թթ.): Չնայած թագավորը ռազմական հաջողությունների հասավ, այնուամենայնիվ հարկադրված էր բարոնների, ասպետների և քաղաքային բնակչության հետ զնալ փոխզիջումների:

1295թ. Էդուարդ I թագավորը գումարում է պառլամենտ, որն ստանում է «Օրինակելի» անվանումը: Բացի բարոններից և պրելատներից, պառլամենտի անդամ էին ընտրվում նաև այն ասպետները (յուրաքանչյուր կոմսությունից 2 ասպետ) և քաղաքային բնակիչները (յուրաքանչյուր իրավունք ստացած քաղաքից 2 անդամ): Այս պառլամենտը ներկայացուցչական էր և հոգևորական:

XIV դարի I կեսին պառլամենտը բաժանվեց երկու պալատի՝ վերին (լորդերի պալատ) և ստորին (համայնքների պալատ): Վերին պալատում գործում էին պրելատները և բարոնները, իսկ ստորին պալատում՝ ասպետները և քաղաքային բնակչության ներկայացուցիչները: XV դարից սկսած՝ լորդերի պալատը համարվեց պերերից, իսկ ստորին պալատը՝ ազնվականության և քաղաքային վերնախավի ներկայացուցիչներից: Հոգևորականությունը պառլամենտում դասային ներկայացուցիչների մեծ առանձնահատուկ չէր:

Պառլամենտի առաջին և կարևորագույն գործունեությունն ընդգրկում է ֆինանսական բնագավառը: Աստիճանաբար պառլամենտի գործունեությունն ընդլայնվեց: XIV-XV դդ. այն ձեռք բերեց օրենսդրական նախաձեռնության իրավունք: Հետագայում սահմանվեց կարգ, ըստ որի պառլամենտի երկու պալատի և թագավորի կողմից ընդունված որոշումները (ստատուտները) չեն կարող փախոխվել կամ վերացվել առանց երկու պալատի համաձայնության: Ստատուտները դարձան պետական իշխանության բարձրագույն ակտերը (օրենքները):

Պառլամենտն իրականացրեց նաև հսկողություն պետական կառավարման նկատմամբ: Դա իրականացվում էր «ինպիչմենթի» օգնությամբ, որի էությունը հետևյալն էր. համայնքների պալատը, որպես երկրի բարձրա-

գույն դատարան, լորյեթի պալատի առջև մեղադրանք էր հարուցում թագավորի այս կամ այն խորհրդականի նկատմամբ, որը չարաշահել էր իր պաշտոնական պարտականությունը:

Պառլամենտը մասնակցում էր նաև արտաքին քաղաքականության հարցերի լուծմանը, հատկապես պատերազմի և հաշտության պայմանագրեր կնքելիս, երբ անհրաժեշտ էր նրա համաձայնությունը:

Այսպիսով, անգլիական պառլամենտն իր զարգացմամբ հասնում է նշանակալի հաջողության և համարվում եվրոպական պետությունների համեմատ առավել ակտիվ դասամերկայացուցչական մարմինը:

83

4. ԲԱՅԱՐՉԱԿ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ (XV-XVII ԴԴ.)

XV դարից Անգլիայում թուլանում է պառլամենտի դերը: Դրան նպաստում է հատկապես կարմիր և սպիտակ վարյեթի երկպառակտական պատերազմը:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումն առաջ բերեց ուժեղ պետական իշխանության ստեղծման անհրաժեշտությունը: Դրան աջակցում էր նորածին բուրժուազիան, ինչպես նաև կապիտալիստական զարգացման ուղին բռնած ազնվականության մի մասը («նոր ազնվականությունը»):

XVI դ. Անգլիայում իրականացվեց եկեղեցական ռեֆորմ, ըստ որի Հռոմի ենթակայությունից ազատվում է Անգլիայի եկեղեցին: Եկեղեցական գույքը բռնագրավվեց հոգուտ թագավորական իշխանության:

Հասարակական աստիճանակարգում ուրույն տեղ ունեւ քաղաքային բնակչությունը: Զաղաքներում նկատվում է կապիտալիստական տարրերի ծնունդը: Ուժեղանում է քաղաքային բնակչության շերտավորումը: Զաղաքային վերնախավը բաղկացած էր վաճառականներից և վարպետներից, որոնց ենթարկվում էին մանր արհեստավորները և գյուղական արհեստավորները:

XV դ. վերջում անգլիական գյուղացիությունը բաժանվեց երկու հիմնական խմբերի. ֆրիգոլդների և կոպիգոլդների: Կոպիգոլդները ֆեոդալների օգտին որոշակի պարտականություններ կատարող գյուղացիներ էին, որանք համարվում էին լիակատար ճորտացված: Ֆրիգոլդները հողի ազատ սեփականատեր գյուղացիներ էին, որոնք ֆեոդալների օգտին որևէ պարտականություն չէին կատարում:

Երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցած

փոփոխությունները հանգեցրին թագավորական իշխանության ուժեղացմանը: Սակայն այդ իշխանությունը չտարածվեց ոչ կենտրոնական բյուրոկրատական ապարատի և ոչ էլ մշտական գործող բանակի վրա: Միահեծանությունն Անգլիայում չհասավ լիակատար զարգացման և կրեց անավարտ բնույթ:

Իսկ ինչպիսի՞ն էր երկրի պետական կարգը միահեծանության շրջանում: Կառավարման բարձրագույն մարմինն էր թագավորին կից ստեղծված գաղտնի խորհուրդը, որի կազմի մեջ մտնում էին ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչները, նոր ազնվականությունը և բուրժուազիան: Գաղտնի խորհուրդն ուներ բավականին լայն իրավասություններ: Այն կառավարում էր ծովային գաղութները, կարգավորում արտաքին առևտուրը, հրատարակում օրոշրանսներ և այլն: Խորհուրդը քննում էր նաև դատական գործեր: առաջին առյանի դատարանի իրավասությամբ և բողոքարկման կարգով: Խորհրդի աշխատանքներին թագավորը միշտ չէ, որ մասնակցում էր:

Գաղտնի խորհրդին կից ստեղծվեց այսպես կոչված Աստղային պալատը. որի նպատակն էր պայքար մղել թագավորի հակառակոյւյնների դեմ: Այն քննում էր և՛ քաղաքացիական, և՛ քրեական գործեր: Աստղային պալատն իրականացնում էր գրաքննության պյոցեսը: Գրաքննության գործունեությունը դրված էր նաև Բարձրագույն հանձնաժողովի վրա, որին միաժամանակ հանձնարարված էր եկեղեցու կառավարումը:

Վերջապես կառավարման մարմին էր նաև վերը նշված պառլամենտը, որի դերը նշված ժամանակահատվածում արդեն անկում էր ապրել:

XIV դարի վերջում ստեղծվել էր թագավորի քարտուղարի պաշտոնը, որը հետագայում ձեռք բերեց մեծ հեղինակություն: Քարտուղարների թիվը երկուսն էր, որոնց ձեռքով էլ անցնում էին առավել կարևոր պետական գործերը:

Դատական համակարգում, նշված ժամանակաշրջանում, մեծ նշանակություն ունեին լայն լիազորություններով օժտված դատարանները:

Տեղական ինքնակառավարումը պահպանվեց այնպես, ինչպես կար նախկինում: Կառավարությունը փորձելով այն ենթարկել իրեն՝ կոմսություններում ստեղծեց լորդ-լեյտենանտի պաշտոնը, որը գլխավորեց հաշտարար դատարանները և առտիկանությունը:

84

5. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Իրավունքի աղբյուրները: Վաղ ֆեոդալական պետությունում իրավունքի հիմնական աղբյուր էին սովորույթները: Առանձին թագավորություններ

հրատարակում էին սովորույթների իրենց ժողովածուները, որոնք պարունակում էին իրավունքի նոր նույններ: Օրինակ, 1017թ. դանիական թագավոր Կնուտը, որը նվաճել էր Բրիտանիան, հրատարակեց օրենքներ, որոնք համընդհանուր էին ամբողջ երկրի համար:

Նորմանդական նվաճումից հետո անգլո-սաքսոնական սովորույթները շարունակում էին գործել: Իրանք հիմնականում կրում էին տեղական, տարածքային բնույթ: Այս շրջանում թագավորական իշխանության ուժեղացման ուղղություններից էր թագավորական դատարանների իրավասության ընդլայնումը:

XII դարի երկրորդ կեսին Անգլիայում առաջացավ արտազան դատարանների ինստիտուտը: Տեղերում վեճերի քննման ժամանակ թագավորական արտազան դատարանները ղեկավարվում էին ոչ միայն թագավորների օրենսդրական ակտերով, այլև տեղական դատարանների պրակտիկայով և սովորույթներով: Վերադառնալով իրենց նստավայրը՝ արտազան դատարանները դատական պրակտիկայի ամփոփման ընթացքում մշակում էին իրավունքի ընդհանուր նորմեր, որոնցով ղեկավարվում էին թագավորական դատարանները՝ ինչպես կենտրոնում. այնպես էլ տեղերում գործեր քննելիս: Այսպես, թագավորական դատարանների պրակտիկայից ձևավորվեցին իրավունքի նորմեր, որոնք կիրառվում էին ամբողջ երկրում: Այն կոչվեց «ընդհանուր իրավունք» և համարվեց ժամանակի իրավունքի աղբյուրներից մեկը:

XIII դարի կեսից սկսած՝ իրավունքի աղբյուր էր նաև դատական նախադեպեր (քարձր ատյանի դատարանների որոշումները, որոնք պարտադիր էին այդպիսի դատարանների կամ ավելի ցածր ատյանի դատարանների համար՝ համանման գործ քննելու ժամանակ):

Սկսած XIV դարից՝ Անգլիայում ձևավորվում է այսպես կոչված «արդարության իրավունքը»: Այն դեպքերում, երբ այս կամ այն անձը «ընդհանուր իրավունքի» դատարաններում չէր գտնում իր խախտված իրավունքի պաշտպանությունը, դիմում էր թագավորին՝ «ըստ խղճի» պաշտպանելու իրեն: Նման բնույթի գործերը շատ-շատ էին, և թագավորը հարկադրված հիմնեց նոր մարմին, որը կոչվեց «արդարության դատարան»: Վերջինիս կայացրած որոշումները դարձան իրավունքի նոր աղբյուր:

Ֆեոդալական իրավունքի աղբյուր էին նաև ստատուտները՝ կենտրոնական իշխանության օրենսդրական ակտերը: Սկզբնական շրջանում դրանց վերաբերվում էին որպես թագավորական իշխանության ակտեր, որոնք կրում էին տարբեր անուններ՝ ասսիզներ, խարտիաներ և այլն: Իսկ հետագայում, երբ պառլամենտը ձեռք բերեց օրենսդրական լիազորություն, ստատուտներ համարվեցին այն օրենսդրական ակտերը, որոնք ընդունում

էր պառլամենտը, և հաստատում բազմաթիւ: Այս ակտերը համարվեցին երկրի բարձրագոյն ծրագրերը: Դրանք կարող էին մեկնաբանվել դատաբաններու կողմից:

Սեփականության իրավունք: Հողի նկատմամբ սեփականության իրավունքը սկզբունքորէն չէր տարբերվում Ֆրանսիայում գործող իրավունքից: Այն նույնպէս կրում էր պայմանական, սահմանափակ և աստիճանակարգային բնույթ:

Հողի ազատ տնօրինման համար պայքարն իր արտահայտությունն էր գտնում օրենսդրական ակտերում:

«Ընդհանուր իրավունքի» համաձայն Անգլիայում հողատիրութենէրը բաժանվում էին երեք տեսակներու՝

1) Տիրութենէր, որոնց կարելի էր ազատ տիրապետել և տնօրինել: Եթէ տիրապետողը կամ տնօրինողը մահանում է և չունի ժառանգորդներ, ապա այդ տիրութենէրը վերադարձվում են սեմյորին՝ որպէս անժառանգ գույք:

2) Պայմանական հողային տիրութենէր, որոնք տրվում էին որոշակի ժառայութիւններու դիմաց: Հող ստացուողի մահից հետո նրա սերունդներն այն վերադարձնում էին նվիրատին կամ վերջինիս ժառանգներին:

3) Տիրութենէր, որոնց չէր թույլատրվում տնօրինել, և որոնք ժառանգաբար փոխանցվում էին մայրատի սկզբունքով:

Հողային տիրութենէրը մշակելու նպատակով դրանց տերերը այն հանձնում էին ճարտագլխած գյուղացիներին, որոնք XIII դ. կոչվում էին վիլաններ: Նրանց հողը հանձնվում էր օգտագործման իրավունքով, որի համար էլ պարտավոր էին հօգուտ տերերի կատարել բազմաթիւ պարհակներ և իրավունք չունեին առանց տերերի համաձայնության հեռանալու այդ տիրութենէրից:

XIV դարում տեղի էր ունենում գյուղացիների անձնական կախվածութեան ազատագրման պրոցեսը, որին գուագհեռ բներէն պարհակների կատարումը փոխարինվեց դրամական ռենտայով: Այս ամենը նպաստեց գյուղացիական հողատիրութեան նոր ձևի՝ կոպիզողի առաջացմանը: Կոպիզողը գյուղացիական հողատիրութեան էր՝ հիմնված ֆեոդալական կալվածքների վրա: Այդպիսի հողերի վրա գտնվող գյուղացիները (կոպիզողները) անձնապէս ազատ էին, բայց կատարում էին պարհակներ՝ հողի սեփականատիրոջ օգտին: Սրանք վիլաներից տարբերվում էին նրանով, որ նախատեսված պարհակների կատարման չափը խիստ սահմանված էր և կալվածքի սեփականատերը չէր կարող իր հայեցողութեամբ բարձրացնել այն:

Ֆեոդալական Անգլիայում պահպանվեցին նաև ազատ գյուղացիական հողատիրութենէրը: Դրանք կոչվեցին ֆրիզողներ, որոնք ազատ էին ֆեո-

դալի օգտին պարիակներ կատարելուց: Նրանց քաղաքիա-իրավական գործերը բնմվում էին «ընդհանուր իրավունքի» դատարաններում:

Պարտավորական իրավունք: Բննարկվող ժամանակաշրջանում պարտավորության հիմնական աղբյուր էր հանդիսանում պայմանագիրը: «Ընդհանուր իրավունքին» հայտնի է պայմանագրերից բխող խիստ սահմանափակ պարտավորական հարաբերությունների շրջանակը: Պայմանագրերը բնութագրվում են խիստ ձևականությամբ: Դրանք կնքվում են որոշակի ձևով և գրանցվում դատարաններում:

Պայմանագիրը չկատարելու դեպքում խախտող կողմը ենթարկվում է պատասխանատվության և հատուցում պայմանագիրը չկատարելուց առաջացած վնասը:

Առավել տարածված էին առ ու ծախի, ~~նկարատվության, վարձակալության~~ (հասկապես հողի վարձակալության) պայմանագրերը, որոնց անընդհատ աճը պայմանավորված էր երկրի տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով:

~~Մնուսնաընտանեկան և ժառանգական իրավունք:~~ **Մնուսնա-ընտանեկան** հարաբերությունները կարգավորվում էին կանոնական իրավունքով, իսկ ամուսինների գույքային հարաբերությունները՝ «ընդհանուր իրավունքի» նորմերով:

Կնոջ բերած օժիտն անցնում էր ամուսնու տնօրինմանը: Ամուսինը կնոջ շարժական գույքի նկատմամբ ուներ տնօրինման, իսկ անշարժ գույքի նկատմամբ՝ օգտագործման իրավունք: Ամուսինը կարող էր տիրել և օգտագործել կնոջ անշարժ գույքը նաև նրա մահից հետո, եթե նրանք, լիարկե, ունեին ժառանգներ: Ժառանգներ չունենալու դեպքում նշված գույքը վերադարձվում էր կնոջ հորը կամ նրա ժառանգորդներին: Կինը ոչ մի գործարք անելու իրավունք չուներ: Նա առանց ամուսնու համաձայնության չէր կարող կնքել պայմանագրեր և քաղաքացիական գործով հանդես գալ դատարանում: Հետագայում որոշ վերապահումներով ընդլայնվեցին կնոջ իրավունքները:

Անգլիայում ժառանգումն իրականացվում էր ըստ օրենքի: Սկզբնական շրջանում վասալի մահից հետո հողային տիրույթները վերադարձվում էին սենյորին: Հետագայում՝ **XII դարից, սահմանվեց կարգ, ըստ որի վասալի մահից հետո տիրույթն անցնում էր ժառանգորդին, որը պալատադիր կարգով սենյորին մուծելու էր ժառանգական տուրք՝** ուելֆ: XII դարի վերջից գործեց մայորատի սկզբունքը, ըստ որի ֆեոդալական տիրույթը որպես ժառանգություն անցնում է ավագ որդուն: Ժառանգական շարժական գույքը բաժանվում է երեք մասի. գույքի 1/3-ը անցնում էր կնոջը, 1/3-ը բաժին էր հասնում երեխաներին, իսկ 1/3-ն էլ՝ եկեղեցուն: Բացի դրանից, կնոջը բու-

ժին էր հասնում նաև իր բերած օժիտը:

Շարժական գույքի հարաբերություններում թույլատրվում էր նաև կտակի կիրառումը:

Հողն ըստ կտակի ժառանգելու իրավունքի բացակայությունը սեփականատերերին հարկադրում է հողը նվիրատվությամբ փոխանցել ցանկացած անձի:

Քրեական իրավունք և դատավարություն. Վաղ միջնադարում քրեական հանցագործությունները և պատիժները որոշվում էին սովորույթային իրավունքի կիրառմամբ: Նորմանդական նվաճումից հետո քրեաիրավական նորմերի զարգացումը պայմանավորված էր ստատուտների ներգործությամբ և թագավորական դատարանների դատական պրակտիկայի կիրառմամբ:

XIII դարում Անգլիայում հանցագործությունները բաժանվում էին երեք խմբի՝ 1) թագավորի դեմ ուղղված հանցագործություններ, 2) մասնավոր անձանց դեմ ուղղված հանցագործություններ և 3) հանցագործություններ՝ ուղղված և՛ թագավորի, և՛ մասնավոր անձանց դեմ:

Թագավորի դեմ ուղղված հանցագործությունները համարվում էին ամենավտանգավորը և դաժան: Նման արարքի համար նախատեսված էր մահապատիժ՝ տղամարդկանց քառատման, իսկ կանանց այրման միջոցով:

Քրեական իրավունքում XIII դարում ձևավորվեց նոր հասկացություն՝ «ֆելոնիի» (սենյորի նկատմամբ վասալի պարտականությունների խախտումը և հակառակը):

XIV դարում ստեղծվեց հանցագործությունների եռաստիճան համակարգը՝ 1) տրիզն (դավաճանություն), 2) ֆելոնիա (ծանր քրեաիրավախախտաբ), 3) միադիմինոր (զանցանք):

Պատիժը նշանակելիս հնաշվի էր առնվում այն հանցամանքը, թե ո՞վ է հանցագործը և ու՞մ դեմ է ուղղված եղել ստնձգությունը:

Ընդհանրապես պատիժներն Անգլիայում աչքի են ընկել արտակարգ դաժանությամբ: Դրանք ուղղված են եղել հիմնականում աշխատավոր զանգվածի դեմ: Դա վառ արտահայտվեց հատկապես այսպես կոչված «Արյունոտ օրենսդրության» մեջ: Այն օրենսդրական ակտերի հավաքածու էր, որն ընդունվեց XV դարի վերջերին և ուղղված էր իրենց բնակավայրերից վտարված, թափառաշրջիկ ու մուրացկան ճորտ գյուղացիների դեմ: Առաջին ակտն ընդունվել է 1495 թվականին, ըստ որի տեղական իշխանությունները պարտավոր էին գտնել և դատական պատասխանատվության ենթարկել թափառաշրջիկներին ու մուրացկաններին: «Արյունոտ օրենսդրության» առավել դաժան ակտեր ընդունվել են Հենրիխ VIII-ի և Էլիզաբեթ

Թյուրորի օրոք: Այս ակտերով նախատեսվում էր ձերբակալվածներին մտպահարել այնքան, մինչև մարմնից արյուն հոսելը, իսկ երկուրդ անգամ ձերբակալելիս ենթարկել մահապատժի:

Նորմանդական նվաճումից հետո հարյուրավոր դատարաններում գոյծում էր մեղադրական պլոցեդը: Աստիճանաբար մշակվում էր խառը բնույթի դատավարության նոր ձև: Գործի քննության համար անհրաժեշտ էր վկաների հարցաքննությունը, տեղագնությունը և այլն: Դատավարության մեջ կիրառվում էր ապացույցների տեսությունը: 1346թ. ընդունվեց «Դատավորների մասին օրդոնանսը», որը դատավորին պարտավորեցնում էր ապահովել օրենքի կիրառումը: Օրդոնանսն առաջինը սահմանեց օրենքի և դատարանի առաջ բոլորի հավասարության սկզբունքը¹:

Շուտով անգլիական դատավարությունում առաջ եկավ մինչ այդ ֆեոդալական իրավունքին անժամոթ՝ նոր ինստիտուտ՝ երդվյալների դատարանը:

XIII-XIV դարերում աստիճանաբար ձևավորվում են երկու տեսակի երդվյալների դատարաններ (ժյուրի)²՝ մեծ ժյուրի, փոքր ժյուրի: Առաջինը բաղկացած էր կոմսության ժողովի կողմից ընտրված 24 երդվյալներից և համարվում էր դատի տվող մարմին: Այսինքն՝ հաստատում կամ մերժում էր որոշակի արձին առաջադրված մեղադրանքը: Երդվյալները դադարել էին վկաներ լինելուց: Դրա հետ կապված նախաքննությունն աստիճանաբար առանձնացավ դատաքննությունից:

Եթե մեծ ժյուրին հաստատում էր մեղադրանքը, ապա գործն ույարկվում էր դատաքննության 12 երդվյալների (փոքր ժյուրի) մասնակցությամբ: Փոքր ժյուրիի որոշումը պետք է ընդունվեր միաձայն: Երդվյալների մասնակցությամբ գործի քննությունը հիմնված էր կողմերի մրցակցության սկզբունքի վրա: Մեղադրյալը ներկայացնում էր մեղադրյալի մեղքը հաստատող ապացույցները, իսկ մեղադրյալը ներկայացնում էր իր առարկությունները և դրանք հիմնավորող ապացույցները: Երկու կողմերն էլ կախող էին վկաներ ներկայացնել: Երդվյալները մասնակցում էին նաև քաղաքացիական գործերի քննությանը: Երդվյալների կողմից կայացված ընդհանուր որոշումից հետո դատավորը իրապարակում էր վճիռը կամ դատավճիռը: Անգլիայում երդվյալներ ընտրվելու համար սահմանված էր որոշակի գույքային ցեմզ (ազատ հողատերերի տարեկան եկամուտը չպետք է պակաս լիներ սկզբում 20, իսկ հետագայում 40 շիլլինգից): Արյուակապ դատարաններում (Բարձրագույն դատարանը, Աստղային դատարանը) դատավարությունը կրում էր ինկվիզիցիոն բնույթ՝ տանջանքի կիրառմամբ:

1. Խաչատրյան Մ.Գ., Խաչատրյան Դ.Մ., Դատավորի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2002, էջ 9:

ԺԳԼՈՒԽ 11

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԲՅՈՒՉԱՆԴԻԱՅՈՒՄ

զԵ

1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀՈՈՍԵԱԿԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ

Ինչպես նշել ենք 395 թ. Հռոմեական կայսրությունը վերջնականապես բաժանվում է Արևմտյան և Արևելյան մասերի: Արևելյան Հռոմեական կայսրությունը կոչվեց Բյուզանդիա (իին հունական Բյուզանդիա քաղաքի անունով, որի գրադեցրած տարածքում է գտնվել կայսրության մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիսը):

Բյուզանդիայի կազմի մեջ մտնում էին Հունաստանը, Փոքր Ասիան, Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը, Բալկանյան թերակղզին, Մետապոտանիայի և Հայաստանի մի մասը, Կովկասի և Ղրիմի հարավային մասերը:

Բյուզանդիայի պետության և իրավունքի պատմությունը բաժանվում է չորս ժամանակաշրջանի՝ 1) ստրկատիրական պետության ու իրավունքի քայքայման և ֆեոդալական պետության ու իրավունքի ձևավորման շրջան (IV դարից մինչև VI դարի կեսը), 2) ֆեոդալական պետության և իրավունքի զարգացման շրջան (VII դարի երկրորդ կեսից մինչև IX դարի առաջին կեսը), 3) կենտրոնացված ֆեոդալական միապետության առեղծման շրջան (IX դարի երկրորդ կեսից մինչև XIII դարի սկիզբը), 4) ֆեոդալական մասնատվածության պրոցեսի ուժեղացման և կենտրոնական իշխանության թուլացման ժամանակաշրջան (1204-1453թթ.):

Մեր խնդիրը չէ այստեղ որոշակի ձևով ներկայացնել Բյուզանդիայի նշված ժամանակաշրջանի պատմությունը: Ավելացնենք միայն, որ այդ ընթացքում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կրելով զգույի փոփոխություններ Բյուզանդիան դառնում է ժամանակի հզոր պետություններից մեկը, որի հետ հաշվի չէին կարող չմատել մայրցամաքի մյուս պետությունները: Չնայած դրան՝ այն ներքին հակասությունների և արտաքին մի շարք գոյծոնների հետևանքով թուլանում է և քայքայվում:

1453թ. թուրքական զորքերը նվաճում են Կոստանդնուպոլիսը: Դրանով վերջ է դրվում Բյուզանդական եզոթ կայսրության գոյությունը:

Բյուզանդական կայսրությունը մեծ դեր խաղաց Եվրոպայի և Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում:

Ա) Հասարակական կարգը: Բյուզանդիայի բնակչությունը բաժանված էր արտոնյալ և ոչ արտոնյալ դասերի, այդնք ունեին որոշակի իրավունքներ և պարտականություններ: Ամենաբարձր աստիճանում կանգնած էր Ֆեոդալներից կազմված ծառայողների դասը, որը գտնվում էր պետական ծառայության մեջ:

Ծառայողների դասի վերնախավը կազմեցին սենատորները: Սրանք խոշոր հողատերեր էին, որոնք զբաղեցնում էին պետական բարձրագույն այնչտոններ: Սենատորի կոչումը ժառանգաբար անցնում էր հորից որդուն կամ կարող էր շնորհվել կայսրի կողմից՝ պետությանը կատարած ուշադիր ծառայության դիմաց: Նրանց իրավունք էր տրված ունենալ սեփական զինվորական ջոկատներ, ինչպես նաև քանտեր: Սենատորներն անձեռնմխելի էին: Նրանց ձեռքակալել և բանտարկել կարելի էր միայն կայսրի կամ սենատի համաձայնությամբ:

Եկեղեցական առաջնորդները ևս ծառայողներ էին համարվում: Նրանք կոչվում էին դիմատամներ (նշանակում է «ուժեղ», «հզոր») և ունեին որոշակի արտոնություններ:

Արտոնյալ վիճակում էր նաև հոգևորականությունը: Եկեղեցին տիրում էր մեծ քանակությամբ հողերի, անընդհատ ստանում էր զումարներ և մթերքներ, ուներ բազմաթիվ առավելություններ: Նա ազատված էր հարկերից, զինվորական ծառայությունից, պարիակների կատարումից և այլն:

Հոգևորականությունն ուներ արտոնություններ նաև դատական բնագավառում:

Արտոնյալ դասի մեջ մտնում էին նաև մանր ու միջին հողատերերը, որոնք կազմում էին քաղաքային կուրիան: Իշխանությունը նրանց պարտավորեցնում էր բնակչությունից հավաքել հարկեր:

Ոչ արտոնյալ դասը գյուղացիությունն էր: IV-VI դդ. գյուղական բնակչության հիմնական զանգվածը կազմում էին կոլոնները:

V-VI դդ. դեռևս պահպանվում էր ազատ գյուղացիությունը, որը միավորվում էր համայնքի մեջ:

VII-X դդ. ազատ գյուղացիական համայնքը գտնվում էր քայքայման փուլում: Գյուղացիության կախվածությունը ֆեոդալներից էլ ավելի ուժեղացավ: Այն բաժանվեց մի քանի կատեգորիաների:

Բնակչության մեջ իրավագուրկ էին ստրուկները: Ստրկական աշխատանքը Բյուզանդիայում կիրառվել է նույնիսկ X-XI դդ. հասարակության վերնախավի կողմից՝ արհեստագործության, գյուղատնտեսության և տնային տնտեսության մեջ: Ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետ մեկտեղ նվազում է տնտեսության մեջ ստրուկների աշխատանքի օգ-

տագործունը, սահմանվում է պատասխանատվություն ստրուկին սպանելու համար:

Ստրուկներն աստիճանաբար վերածվում են կախյալ գյուղացիության (պարիկների), և XIII դարից ստրկությունը Բյուզանդիայից իսպառ վերացվում է:

Բ) Պետական կարգը: Բյուզանդական կայսրությունը կենտրոնացված պետություն էր: Նրա գլուխ կանգնած էր կայսրը, որի ձեռքում էին կենտրոնացված երկրի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները: Նա տնօրինում էր ոչ միայն աշխարհիկ, այլև եկեղեցական գործերը, գումարում էր եկեղեցական ժողովներ, նշանակում եկեղեցու բարձր պաշտոնատար անձանց և այլն: Եկեղեցին մեծ դեր է խաղացել Բյուզանդիայի կյանքում: Կոստանդնուպոլսի պատրիարքը կայսրից հետո երկրի երկրորդ դեմքն էր:

Կայսրը համարվում էր Աստծու կամակատարը երկրի վրա: Նրա անձն աստվածացվում էր:

Գահաժառանգության վերաբերյալ որևէ կարգ սահմանված չէր: Ձևականորեն նշվում էր, որ կայսրին ընտրում է սենատը, բանակը և ժողովուրդը:

Սենատը կայսրին կից խորհրդակցական մարմին էր: Այն քննարկում էր երկրի ներքին ու արտաքին քաղաքականությանը վերաբերող կարևորագույն հարցերը, օրենքի նախագծերը, որոնք ուժի մեջ էին մտնում կայսեր հաստատումից հետո:

Սենատը նշանակում էր բարձրագույն պաշտոնատար անձանց (հետագայում այդ իրավունքից զրկվեց): Նա իրականացնում էր դատական գործունեություն՝ կարևոր քրեական գործերով:

Երկրի քաղաքական կյանքում Սենատը մեծ դեր չի խաղացել, մանավանդ, ելք հետագայում նրան զրկեցին մի շարք իրավունքներից, այդ թվում նաև օրենքների նախագծերի քննարկումից:

Կայսրին կից մի այլ խորհրդակցական մարմին էր պետական խորհուրդը, որը կանգնած էր կենտրոնական կառավարման գլուխ: Նա էր քննարկում պետական կառավարման բոլոր ընթացիկ հարցերը, ինչպես նաև իրականացնում դատական գործունեություն:

Բյուզանդիայում բարձրագույն պաշտոնատար անձինք էին պրեֆեկտը, պալատի պետը, քվեստորը, որը պետական խորհրդի նախագահն էր, բանակի ղեկավարը և այլք:

VII դ. պետական կառավարման կենտրոնական համակարգը ենթարկվեց փոփոխությունների: Բյուզանդական ամբողջ շինովնիկությունը՝ բաժանվեց 60 աստիճանների: Պետական բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք կոչվեցին լոգոֆետամներ:

Բյուզանդիան բաժանված էր մի քանի վարչական միավորների, որոնցից ամենամեծը պրեֆեկտուրաներն էին:

Տեղերում իշխանությունն իրականացնում էին կառավարիչները:

Հզոր Բյուզանդիան իր ներքին և հատկապես արտաքին քաղաքականությունը հաջողությամբ իրականացնելու համար ստեղծել էր ուժեղ բանակ, որի շնորհիվ հաճախ էլ նվաճում հարևան ժողովուրդների տարածքները:

Երկրի Բարձրագույն դատական մարմինը կայսերական դատարանն էր: Որպես առաջին ատյանի դատարան՝ այն քննում էր բոլոր կարևորագույն գործերը՝ պետական հանցագործությունների վերաբերյալ: Կայսերական դատարանը միաժամանակ հանդիսանում էր բողոքարկման ատյան:

Դատական գործունեություն էր իրականացնում Պետական խորհուրդը:

Ֆինանսական գերատեսչության աստիճանավորները դատավարություն էին իրականացնում վաճառականների և ծովային առևտրով զբաղվողների նկատմամբ:

Զվեստորը քննության էր վերցնում այն գործերը, որոնք վերաբերում էին հողային վեճերին և կտակներին:

Դատական համակարգում իր ուրույն տեղն ունեյ եկեղեցին: Այն քննում էր եկեղեցու, հոգևորականության, ամուսնության, բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերը:

Բոլոր դեպքերում բյուզանդական դատարաններն արտահայտում էին տիրապետող դասակարգի շահերը:

Մ

2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Իրավունքի աղբյուրները: Բյուզանդիան ունեցել է բավականին զարգացած օրենսդրության համակարգ՝ իր մեջ ընդգրկելով կայսերական հրամանագրեր, շնորհված արտոնագրեր, օրենքների ժողովածուներ, օրենքների մեկնաբանություններ, դատական պրակտիկայի ժողովածուներ: IV-VIII դդ. Բյուզանդիայում գործել են Թեոդոսիայի օրենսգիրքը և Հուստինիանոսի ժողովածուն:

Օրենքներում խաշոր ֆեոդալների արտոնություններն արտահայտելու ձգտումն անհրաժեշտություն առաջացրեց վերանայել Հուստինիանոսի ժողովածուն: 726թ. հրատարակվեց քաղաքացիական, քրեական և դատավարական օրենքների ժողովածուն, որի հիմքում ընկած էին Հուստինիանոսի օրենքները՝ միայն այն տարբերությամբ, որ այս ժողովածուի մեջ չէին ընդգրկվել հնացած և նոր օրենքներին հակասող նորմերը:

VIII դ. 20-ական թվականներին հրատարակվեց հողային օրենսգիրքը: Օրենսգրքում ամրագրված նորմերը նմանեցվում են սլավոնական համայնքների սովորական իրավունքի նորմերին, և այդ հիմքով ենթադրվում է, որ հողային օրենսգրքի հիմքում ընկած է սլավոնական սովորական իրավունքը՝ բյուզանդական իրավունքի հետ համակցված: Սլավոնական ժողովուրդների մոտ այն մեծ հեղինակություն ձեռք բերեց:

Հողային օրենսգիրքը կարգավորում էր գյուղատնտեսության ոլորտի իրավական հարաբերությունները: Օրենքը պատասխանատվություն էր սահմանում ցարենի, պտուղների, անտառների գողության, ցանքերի վնասման և այլնի համար: Հողային օրենսգրքի հետ միասին հրատարակվեցին նաև ռազմական և ծովային օրենսգրքերը:

Ռազմական օրենսգիրքը պատասխանատվություն էր սահմանում զինվորականների կողմից զինվորական հանցագործությունների կատարման համար: Այն զինվորական կարգնպահության կանոնադրության տեսակ էր:

Ծովային օրենսգրքով սահմանվում էր նավի անձնակազմի վճարի չափը, նավելում կարգի պահպանման կանոնները, նավատիրոջ պատասխանատվությունը և այլն:

Բյուզանդական եկեղեցական իրավունքի կարևորագույն աղբյուրներն են հանդիսանում տիեզերական եկեղեցական ժողովների և պատրիարքների որոշումները: Բյուզանդական աշխարհիկ և եկեղեցական իրավունքի աղբյուրներից են հանդիսանում նաև եկեղեցական և աշխարհիկ իրավունքի ժողովածուները, որոնք կոչվեցին նոմոկանոններ:

Առավել մեծ նշանակություն են ունեցել Միսիլաստիկի նոմոկանոնը և VII դ. նոմոկանոնը:

Մակեդոնական դինաստիայի առաջին կայսրը՝ Վասիլի I-ը (867-886 թթ.), 879 թ. հրատարակեց պրոխիդոնը՝ դատավորների համար օրենքների համառոտ ժողովածուն, որն իր մեջ ընդգրկում է քաղաքացիական, քրեական, դատական և եկեղեցական իրավունքի նորմերը: Պրոխիդոնը օրենսդրական ուժ ունեւ: Այն իր մեջ ներառում էր ոչ միայն Հուստինիանոսի օրենսդրությունը, այլև պարունակում էր իրավունքի նոր նորմեր:

884-886 թթ. Վասիլի I-ը և նրա որդիները հրատարակեցին դատավորների համար նոր ուղեցույց՝ Էպանագոզ, որն ըստ էության պրոխիդոնի հիմնական դրույթների կրկնությունն էր: Այդ էր պատճառը, որ շատ գիտնականներ Էպանագոզը համարեցին պրոխիդոնի երկրորդ հրատարակություն: Սակայն Էպանագոզը նորմերի համակարգման առումով ավելի կատարյալ էր, քան պրոխիդոնը:

Բազիլիկներ: 888-889թթ. Վասիլի I-ի որդին՝ Լև Իմաստունը, հրատարակեց օրենսդրական նոր ժողովածու, որը ստացավ Բազիլիկներ (վասի-

լիկներ)՝ «Քազավորական օրենքներ» անվանումը: Ըստ ԼԼ Իմաստունի, դատական պրակտիկայում Հուստինիանոսի ժողովածուից օգտվելը դժվար էր, քանի որ նրանում իրավունքի նորմերը բաժանված էին 4 մասի՝ ինստիտուցիաներ, դիգեստներ, օրենսգիրք և նովելներ:

ԼԼ Կայսրն իր առջև խնդիր էր դրել ամբողջացնել Հուստինիանոսի Օրենսդրությունը որպես մեկ ժողովածու՝ օրենսդրական նյութը շարադրելով այնպես, որ նույն հարցին վերաբերող իրավունքի բոլոր նորմերը կենտրոնանան նույն տեղում:

Հուստինիանոսի ժողովածուի հնացած նորմերը չընդգրկվեցին բազիլիկում: Նրանում տեղ գտան ինչպես աշխարհիկ, այնպես էլ եկեղեցական իրավունքի նորմերը:

Բազիլիկները նպաստեցին համայնականների կախվածությանը և նրանց ճորտացմանը: Բազիլիկները հանդիսացան բյուզանդական կայսրերի կողմից համակարգված իրավունքի վերջին ժողովածուները: ԼԼ Իմաստունի մահից հետո հրատարակվեցին միայն նովելներ:

X դ. սկսած, ֆեոդալական հարաբերությունների զարգացմանը համընթաց առաջ է գալիս կայսերական նովելների նոր տեսակ՝ խրիսավուներ, այսինքն՝ ոսկետառ շնորհագրեր: Մեծ մասամբ այդ շնորհագրերում նշվում էին հոգևորականությանը, տաճարներին և առանձին մարդկանց տրված արտոնությունները:

X դ. իրավունքի կարևոր աղբյուր է հանդիսացել «Էպարխի (պրեֆեկտի) գիրքը», որում շարադրված նորմերը սահմանում էին բյուզանդական արհեստավորների և առևտրականների կորպորացիաների կյանքը և կենցաղը: Այդ կորպորացիաների գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում էր Կոստանդնուպոլսի պրեֆեկտը:

Բյուզանդական իրավունքի մասնավոր համակարգման փորձերից է հանդիսանում մոտավորապես 1345թ. հայտնի իրավաբան և դատավոր Արմենապոլի կողմից կազմված իրավաբանական ժողովածուն: Նրանում ներկայացված է Բյուզանդիայի քաղաքացիական և քրեական իրավունքը: Այդ ժողովածուի հեղինակի խնդիրն է եղել լրացնել պրոխիրոնը: Ժողովածուն լայն տարածում է գտել Բյուզանդիայում, իսկ վերջինիս անկումից հետո որպես գործող իրավունք կիրառվել է Հունաստանում, Վալախիայում և Մոլդավիայում:

88

Սեփականության իրավունք, Հուստինիանոսի ժողովածուի մեջ ընդգրկված իրավունքի հիմնական ինստիտուտներն իրենց ամրապնդումը գտան նաև բյուզանդական օրենսգրքերում: Իրավունքի այդ ինստիտուտներից է եղել սեփականության ինստիտուտը:

IX-X դդ. ուժեղանում է մանր սեփականատերերի և ազատ համայնականների կախվածության պրոցեսը:

Աստիճանաբար մանր ազատ գյուղացիները կորցնում են իրենց տնտեսական ինքնուրույնությունը և կախվածության մեջ ընկնում ֆեոդալներից: Բյուզանդական կառավարությունը նպաստում է այդ պրոցեսի արագացմանը՝ ծառայող մարդկանց որոշակի պայմանով հաղ տրամադրելու միջոցով: Հողատիրության այս ձևը՝ սլոնին, նման էր Արևմտյան Եվրոպայում գոյություն ունեցող ըննեֆլոցի:

Սկզբնական շրջանում պրոնին տրվում էր միայն որոշակի ժառնկետում, իսկ հետագայում դարձավ ժառանգական սեփականություն: Նրա տերն իր տիրություն իրականացնում էր դատական և վարչական գործունեություն: Այդ հողերի վրա ապրող գյուղացիները պետք է վճարեին բահրա և կատարեին կոռ:

Պարտավորական իրավունք: Հուստինիանոսի ժողովածուի մեջ ընդգրկված պարտավորական իրավունքի նորմերը բյուզանդական վերջին օրենսդրության մեջ շատ քիչ փոփոխության են ենթարկվել: Սակայն Բյուզանդական օրենսգրքերում քաղաքացիական շրջանառության կրճատման հետևանքով հռոմեական պարտավորական իրավունքի առավել բարդ ինստիտուտներ իրենց զարգացումը չգտան: Բյուզանդական իրավունքում պահպանվել է պարտավորությունների 2 տեսակ՝ պայմանագրերից և իրավախախտումներից բխող պարտավորություններ: Պահպանվել է նաև պայմանագրերի համակարգը: Բյուզանդական օրենսգրքերը մասնաճանաչ կարգավորում են առուծախի, փոխանակման, փոխառության, վարձակալության, պահառության պայմանագրերը: Գործարքները մեծ մասամբ կնքվում էին գրավոր ձևով: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել փոխառության պայմանագրին և, մասնավորապես, փոխառության դիմաց տրվող տոկոսներին: Օրենսդրությամբ սահմանված էր տոկոսների առավելագույն չափ՝ տարեկան 12%: Արգելվում էր տոկոսի դիմաց տոկոսի գանձումը:

Ամուսնաընտանեկան իրավունք: Բյուզանդիայում ամուսնությունը կարգավորվում էր ուղղափառ եկեղեցական իրավունքի նորմերով: Այդ պատճառով էլ հռոմեական ամուսնաընտանեկան իրավունքի հետ համեմատած՝ Բյուզանդիայի ամուսնաընտանեկան իրավունքում առաջ եկան նոր գծեր: Բյուզանդիայում ամուսնությանը նախորդում էր նշանադրությունը, որն ուղեկցվում էր եկեղեցական արարողությամբ: Ամուսնությունը վավեր ճանաչվելու համար պահանջվում էր՝ 1) ամուսնական տարիքի հասած լինելը (տղամարդկանց համար 14 տարեկան, կանանց համար 12 տարեկան), 2) փեսացուի և հարսնացուի, նրանց ծնողների կամ էլ հոգաբարձուների համաձայնությունը, 3) միաժամանակ այլ անձի հետ ամուսնության մեջ չգտնվելը և 4) հարսնացուի ու փեսացուի միջև ազգակցական և արյունակցական կապի բացակայությունը: Թույլատրվում էր ամուսնանալ երեք անգամ:

Ամուսնալուծության համար հիմք կարող էին հանդիսանալ պետական հանցագործությունը, ամուսիններից մեկի ոտնձգությունը մյուսի կյանքի նկատմամբ, ամուսնական անհավատարմությունը և այլն:

Բացի դրանից, ամուսնալուծության հիմք կարող էր հանդիսանալ կնոջ թեթևաբարո վարքագիծը՝ այլ տղամարդկանց հետ խորախճանքների մասնակցելը, նրանց հետ չափազանց անկաշկանդ վարվելը, տանը չզիշե-րելը: Կինն իրավունք չուներ առանց ամուսնուն տեղյակ պահելու հաճախել քատրոն, ձիառշավ և այլ հասարակական վայրեր: Այդ կանոնների խախտումն ամուսնալուծության հիմք կարող էր հանդիսանալ:

Ամուսինների գույքային հարաբերությունների հիմնական գծերը պահպանվեցին նաև հետագայում:

Ժառանգական իրավունք. Բյուզանդական իրավունքը հռոմեականի մասն տարբերում էր ժառանգումն ըստ օրենքի և ըստ կտակի:

Կտակի ճանաչման համար, եթե այն ձևակերպվել էր գրավոր ձևով՝ ընդհանուր կանոնի համաձայն, անհրաժեշտ էր, որ կտակարարը լիներ գիտակից և ընդունակ իր կամքն ազատորեն արտահայտելու:

Կտակը հաստատվում էր վկաներով, որոնք ստորագրում և կնքում էին այն: Կտակը համարվում էր անվավեր, եթե այն կնքվել էր 14 տարեկանը չլրացած անձի, տկարամտի, հարբեցողի, հանցագործություն կատարածի, քրիստոնեությունից հրաժարված անձի կողմից:

Կտակի կազմման ժամանակ հայրն իր գույքից առանձնացնելով կնոջ օժիտը և նրա մինչամուսնական նվերները՝ պետք է գույքի որոշակի մաս թողներ իր երեխաներին: Գույքի մնացած մասը կտակարարը կարող էր տնօրինել իր հայեցողությամբ:

Ավելի տարածված էր ժառանգումն ըստ օրենքի: Օրինական ժառանգորդներ էին համարվում երեխաները: Եթե երեխաներ չկային, ժառանգությունն անցնում էր ժառանգատուի ծնողներին, իսկ եթե ծնողները մահացել էին՝ այլ մերձավորների: Եթե չկային նաև այդպիսիներ, ժառանգման երթուղի գույքի մի մասը անցնում էր պետական գանձարանին, մյուս մասը՝ այրի կնոջը կամ նրա հարազատներին:

Քրեական իրավունք և դատավարություն. Քրեական իրավունքը կրում էր դասակարգային բնույթ: Դա արտահայտվում էր նրանով, որ նույն բնույթի և տիպի հանցագործությունների դեպքում տարբեր սուբյեկտների համար նախատեսված էին պատժի տարբեր տեսակներ (հաշվի էին առնում սուբյեկտի գույքային և սոցիալական պատկանելությունը):

Քրեաիրավական նորմերով մինչև 7 տարեկան երեխան չէր կարող լինել հանցագործության սուբյեկտ: Ամենդասունակ վիճակում կատարված հանցագործությունների դեպքում պատիժ չէր նախատեսվում: Պատժից ազատվում էին նաև անգույշ սպանությունների դեպքում: Որոշ դեպքերում

օրենքը պատժից ազատում էր նաև այն անձանց, ովքեր կանխամտածված սպանություն էին կատարել (օրինակ, գիշերվա ժամին գողություն կատարելիս գողին սպանելու դեպքում կամ կնոջ հետ սիրախաղի մեջ գտնվելու պահին հանցագործին սպանելու և այլն):

Քրեա-իրավական նորմերով պատժվում էին ոչ միայն կատարված հանցագործության, այլև հանցագործության նախապատրաստման համար:

Հանցագործություն կատարողի հետ պատժի էին ենթարկվում նաև հանցագործության մասնակիցները: Երկրորդ անգամ կատարված հանցագործության դեպքում նախատեսվում էին ավելի խիստ պատիժներ:

Բյուզանդական օրենսդրությանը հայտնի էին հանցագործության հետևյալ տեսակները. 1) պետական, 2) կրոնական, 3) գույքային, 4) ընտանիքի և բարոյականության դեմ ուղղված, և 5) անձի դեմ ուղղված հանցագործություններ:

Հաշվի առնելով հանցագործության բնույթը, տիպը, սուբյեկտը և մի շարք կարևոր հանգամանքներ՝ օրենքը նախատեսում էր տարբեր տեսակի պատիժներ՝ մահապատիժ (գլուխը կտրելով կամ այրելով), մարմնական պատիժներ (կտրում էին քիթը, լեզուն, ականջը, ոտքը, ձեռքը և այլն), գույքի բռնագրավում, դրամական տուգանք, արտաքսում և այլն:

Բյուզանդիայում դատական քննության հիմնական ձևը հանդիսանում էր ինկվիզիցիոն պրոցեսը: Կիրառվում էր ծեծը:

Քրեական գործերի քննության ժամանակ դատավորները պարտավոր էին մեղադրյալին և վկաներին քննել առանձին-առանձին և նրանց ցուցմունքները ֆիքսել գրավոր տեսքով: Քրեական գործերին վկաների մասնակցությունը պարտադիր էր: Նշենք, որ վկա չէին կարող լինել մի շարք անձինք (օր.՝ անչպիսիսները, կանայք, վարձկանները, քեթևամիտները, հալածատները, ծառաները, խուլ ու համրերը, հեյնետիկոսները, քրիստոնեության դեմ հրեաները և այլք): Յուցմունքից առաջ վկան երդվում էր կեղծ ցուցմունք չտալու համար:

Կողմերը, դժգոհ լինելով դատարանի որոշումից, կարող էին բողոքարկել վերադաս ատյանին: Դատավարությունն ընթանում էր գրավոր: Ցուցմունքներն արձանագրվում էին:

ԲԱԺԻՆ 4

ՖԵՈՂԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ *Ընդհանուր բնութագիրը*

Արևելքում ֆեոդալականացման պրոցեսը տևել է մ.թ.ա. I հազարամյակի վերջից մինչև մ.թ. I հազարամյակի սկիզբը: Ստրկատիրական ֆորմացիայից ֆեոդալականին անցումը վկայող փոփոխությունները (Հնդկաստան, Չինաստան) համընկել են «բարբարոսների» հարձակումներին և բուդայականության տարածմանը: Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում ֆեոդալական ֆորմացիայի սկիզբը նշանավորող իրադարձություններ են մսհմեդականության ծագումը և արաբական նվաճումները: Արևելյան ֆեոդալիզմին բնորոշ է մասնավոր ֆեոդալական շահագործման ասպարեզում արտատնտեսական հարկադրանքի համեմատաբար փոքր դերը, ինչպես նաև, որպես կանոն, ֆեոդալական խոշոր կոռային տնտեսության բացակայությունը: Նախաֆեոդալական տարրերը կրոնագաղափարախոսական վերնաշենքին հաղորդել են առանձնահատուկ պահպանողականություն: Արևելքում ֆեոդալիզմի քայքայման ընթացքը զգալիորեն փոխակերպվել է եվրոպական կապիտալիզմի ազդեցությամբ: Ասիայի և Աֆրիկայի գրեթե բոլոր երկրներում ֆեոդալիզմը, որպես անցյալի մնացուկ, փոխակերպված ձևով պահպանվել է մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը:

Արևելյան ֆեոդալական պետության կառավարման առավել տարածված ձև է եղել այրևելյան բռնապետությունը (դեսպոտիա): Այն չպետք է հասկանալ բացարձակ իմաստով, այսինքն՝ իշխանությունը կենտրոնացված չէր մեկ մարտու բռնապետի, ձեռքում: Իշխանությունն իրականացնելիս բռնապետը դեկավարվում էր 1) իրավունքի և կրոնի նորմերով, 2) պետության և հասարակության մեջ տիրապետող վերնախավի և, հատկապես, կայսերական տան անդամների դիրքորոշմամբ:

Երբեմն, արևելյան ֆեոդալական երկրներում միապետի անձն աստվածացվում էր, որը նույնպես ոչ բացարձակ իշխանության վկայությունն է: Արևելյան ֆեոդալական պետությունների առանձնահատուկ գլիծն իրավական և բարոյական նորմերի պահպանողականությունն էր, կայունությունը և ավանդականությունը:

X

ԳԼՈՒԽ 12

ԱՐԱՐԱԿԱՆ ԽԱԼԻՖԱԹԸ ԵՎ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

89

1. ՊԵՏՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Մ.թ. VII դարում արաբական ցեղերի մոտ, որոնք ապրում էին Արաբական թերակղզու վրա, նկատվեց տոհմացեղային կարգերի քայքայումը: Մասնավոր սեփականության հետևանքով ուժեղացավ գայլաքային անհավասարությունը և սոցիալական շերտավորումը: Հասարակությունը բաժանվեց իրարամերժ դասակարգերի: Ցեղերի առաջնորդները՝ շեյխերը, և ցեղերի ավագանիները՝ սաիդները, նվաճեցին օազիսի լավագույն հողերը և այնտեղ պահեցին մեծ քանակությամբ անասուններ, որոնք հսկայական եկամուտ էին բերում նրանց: Այս բնագավառում և ընդհանրապես լայնորեն կիրառվում էր ստրուկների աշխատանքը: Բարձրագույն պաշտոններ զբաղեցնելու իրավունքը վերապահվեց հարուստներին, որոնք էլ ժառանգաբար այն փոխանցում էին իրենց հաջորդներին:

Տոհմացեղային հարաբերությունների քայքայումն առանձնապես վառ դրսևորվեց Խիջագում (Կարմիր ծովի շրջակայքում գտնվող շրջան), որտեղ բնակվող գեղերը զբաղվում էին ոչ միայն անասնապահությամբ, այլև՝ հողագործությամբ: Այս շրջանում էին գտնվում առևտրա-արհեստագործության խոշոր կենտրոն հանդիսացող Մեքքա, Յասրիբ և այլ քաղաքները, որոնցով անցել են առևտրական քարավանները: Քաղաքներում իշխում էին հարուստ վաճառականները:

Երկրի հասարակական, սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում հսկայական դեր է խաղացել կրոնը: Նոր կրոնի առաջագումը՝ իսլամը, կապված է Մուհամմեդի անվան հետ (մոտավորապես 570-632թ.թ.): Մուհամմեդը ձգտում էր նոր կարգ հաստատել և տարբերություն չէր տեսնում բոլոր ցեղերի միջև: Նրա կարծիքով, բոլոր ցեղերը, անկախ սոցիալական ծագումից, պարտավոր են միավորվել մեկ դրոշի տակ և կազմել միասնական ժողովուրդ: Նրանց պետք է գլխավորեր Ալլահի կողմից երկրի վրա ուղարկված կառավարիչը՝ մարգարեն:

VII դարի 20-30-ական թվականներին ավարտվել էր մուսուլմանական

կրոնական համայնքի կազմակերպական ձևավորումը: Այդ համայնքի կազմակերպիչն էր Մուհամմեդը, որի կողմից ստեղծված ռազմական ցուկատների նպատակն էր պայքար մղել իսլամի դրոշի ներքո՝ երկրի միավորման համար: Մուհամմեդի ղեկավարած զինվորական-կրոնական կազմակերպության գործունեությունն աստիճանաբար վերաճեց պետաքաղաքական բնույթի:

Ընդհանուր առմամբ Մուհամմեդի ձեռնարկած միջոցառումները տվեցին իրենց արդյունքը: (VII) կեսին Արաբիայի միավորումը հիմնականում ավարտված էր:

Հասարակական կարգը: Մուհամմեդի մահից հետո ազգակիցները և նրան մոտ կանգնած վաճառականներն իրենց նոր առաջնորդ ընտրեցին: Նոր առաջնորդը կոչվեց «մարգարեին փոխարինող»՝ խալիֆ: Նրա ղեկավարությամբ VII-VIII դդ. արաբները նվաճեցին հսկայական տերիտորիաներ առելով Սերձավոր և Միջին Արևելքը: Արաբների գերիշխանությունը հաստատվեց նաև Հյուսիսային Աֆրիկայում և Հարավ-արևմտյան Եվրոպայի երկրներում:

Արաբական նվաճումներն արդյունք էին մի կողմից արաբական ցեղերի միավորման, մյուս կողմից՝ Սասանյան Իրանի և Բյուզանդիայի թուլացման:

Արաբները ներխուժել են Հայաստան (640 թվականին) և որոշ ժամանակ սահմանափակվել են միայն երկրի ասպատակությամբ: Արաբական խալիֆայության բուն տիրապետությունը Հայաստանում տևեց 701-ից մինչև 862 թվականը:

Նվաճված հողերի հետևանքով ստեղծվեց նոր պետություն՝ Արաբական խալիֆայություն: Նրա կազմի մեջ մտավ նաև բուն Արաբիան:

Նվաճված երկրների մեծ մասը սոցիալ-տնտեսական, մշակութային, քաղաքական և իրավական բնագավառում զարգացման ավելի բարձր մակարդակի վրա էր գտնվում, քան Արաբիան: Դա նպաստեց վերջինիս համար տեղի ունեցած սոցիալական հեղաշրջումների արագացմանը, ֆեոդալիզմի ձևավորմանը: Այդ երկրներում արդեն հաթանակել էր ֆեոդալիզմը, մինչդեռ Արաբիայում դեռ պահպանվում էին տոհմացեղային մնացուկները: Հենց սա էր համարվում է Արաբական ֆեոդալիզմի գլխավոր առանձնահատկությունը:

Երկրում հողի գլխավոր սեփականատեր էր համարվում պետությունը (խալիֆը), որը հողային ֆունդը գյուղացիներին կամ առանձին անձանց օգտագործման նպատակով տրամադրում էր հողերը:

Պետական սեփականությունը սեփականության տիրոջ ձևն էր: Դրան գուգահեռ գոյություն ունեւր նաև հողի մասնավոր սեփականությունը:

Արաբական հասարակության դասակարգային կառուցվածքի առա-

ջին աստիճանում կանգնած էին ֆեոդալները, որոնք համարվում էին տիրապետող դասակարգը: Նրանք զբաղեցնում էին բարձրագույն պաշտոններ, ունեին բազմաթիվ արտոնություններ:

Գյուղացիությունը բաժանված էր երկու մասի: Մի մասն ուղարկվում էր աշխատանքի նվաճված հողերի վրա՝ ազատվելով հարկերից: Նրանց տրվում էին մի շարք առավելություններ և արտոնություններ: Իսկ մյուս մասը, որը զուրկ էր որևէ արտոնությունից, աշխատանք էր կատարում շեփոման և վճարում էր ծանր հարկեր:

Քաղաքային բնակչությունը միասեռ չէր: Այն բաժանված էր հարուստների և աղքատների: Հիմնական մասը զբաղվում էր արևտրով և արհեստագործությամբ:

Սոցիալական աստիճանի ամենաստորին կետում կանգնած էին ստրուկները, որոնք ենթարկվում էին ամենադաժան շահագործման: Ստրուկները ձեռք էին բերվում ռազմագերիներից, աճաբատներից, ինչպես նաև արտասահմանից՝ գնելու միջոցով:

Պետական կարգը: Խալիֆայությունում պետական ապարատը բավականին կենտրոնացված էր: Դրան շատ բանով նպաստեց այն հանգամանքը, որ երկրի հողային ֆունդի զգալի մասը գտնվում էր պետության առաջնորդի ձեռքում:

Բարձրագույն իշխանությունը՝ հագեր (իմամաթ) և աշխարհիկ (եմիրաթ), գտնվում էր խալիֆի ժողովում: Սկզբնական շրջանում խալիֆներին ընտրում էր մուսուլմանական վերնախավը (ընտրում էին իրենցից), իսկ հետագայում խալիֆի իշխանությունը դարձավ ժառանգական:

Արաբական պետությունը վերածվեց կենտրոնացված աստվածապետական միապետության:

Խալիֆի իշխանությունը սկզբունքորեն անսահմանափակ էր, իսկ իրականում նա պետք է հաշվի նստեր երկրի խոշոր ֆեոդալների հետ:

Պետական կառավարման կենտրոնական մարմիններ էին հանդիսանում հետևյալ գերատեսչությունները (ղիվանները)։

1) Դիվան-ալ-Ջուդը, որը իրականացնում էր բանակի նախապատրաստման և զինման աշխատանքները: Նրա հսկողության տակ էին աշխատում աստիճանավորները,

2) Դիվան-ալ-Խարաջը, որը հսկում էր կենտրոնական ֆինանսական մարմնի գործունեությունը, զբաղվում զանազան ներմուծվող հարկերի և այլ մուտքերի հաշվարկով,

3) Դիվան-ալ-Բարիդը, որը կառավարում էր փոստը, հաղորդակցությունը, ղեկավարում էր ճանապարհային շինարարությունը և այլն:

Գերատեսչության բարձրագույն աստիճանավորները նշանակվում էին խալիֆի կողմից և անմիջականորեն հաշվետու էին նրա առաջ: Նրանց մեջ

առաջին տեղը գրավում էր վեզիրը, որն աստիճանաբար իր ձեռքում կենտրոնացրեց կարևորագույն գործերը:

Խալիֆայությունը բաժանված էր առանձին պրովինցիաների, որտեղ կառավարումն իրականացվում էր զինվորական կառավարիչների՝ էմիրների կողմից: Վերջիններս պատասխանատու էին միայն խալիֆին: Նրանց տրամադրության տակ էին գտնվում զինված ուժերը: Հատուկ վարձկան ջոկատները կրում էին ոստիկանական ծառայություն: Էմիրներին ենթարկվում էր տեղական ապարատը, վարչաֆինանսական գործունեությունը:

Արաբական խալիֆայությունն աչքի էր ընկնում իր բնակով: Խալիֆները ժողովրդական շարժումները ճնշելու նպատակով ստեղծել էին նաև վարձկան ջոկատներ:

Երկրում բարձրագույն դատավորը խալիֆն էր: Նա կարող էր քննել ցանկացած գործ և կայացնել որոշում: Մակայն պրակտիկայում հազվադեպ էին այդպիսի գործեր պատահում: Իրականում բարձրագույն դատարանն աստվածաբանների հայտնի կոլեգիան էր, որը միաժամանակ իրավագետների միություն էր: Այն խալիֆի անունից նշանակում էր դատավորներին՝ կադիներին, և տեղեյտն դատավորների գործունեությունը հսկող, հատուկ լիազորված անձանց: Թե՛ մեկը և թե՛ մյուսը հոգևորականության ներկայացուցիչներն էին:

~~Կադիներն~~ ժողոված էին լայն իրավասություններով: Նրանց որոշումներն ու դատավճիռները վերջնական էին և բողոքարկման ենթակա չէին, բացառությամբ այն դեպքերի, երբ միջամտում էր խալիֆը:

Ոչ մուսուլմանական բնակչությանը սովորաբար դատում էին նրանց հոգևորականության ներկայացուցիչները:

Ավելացնենք, որ VIII դարի վերջում արաբական խալիֆայությունում նկատվում էր երկրի թուլացման և մասնատման միտում: Տեղական առաջնորդներն աստիճանաբար չէին ենթարկվում խալիֆին: Էմիրները լայն հնարավորություն ունեցան ստեղծելու հզոր, բազմաքանակ զորք և հարկերը հավաքել միայն իրենց համար:

Խալիֆայության քայքայումը դարձավ ժամանակի գլխավոր խնդիրը: Դրան նպաստեցին նաև արտաքին պայմանները. VIII դ. երկրորդ կեսին Իսլամիայում ~~Կորսովյան~~ էմիրայությունը անկում ապրեց, որից հետո հաջորդության համար ~~Թունիսը~~ և Մարոկկոն: XI դարի կեսին նրանից անջատվեց Եգիպտոսը: Խալիֆը պահպանեց իր իշխանությունը միայն Արաբիայում և Միջագետքի մի մասի վրա:

90

2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Խալիֆաթի առաջացման հետ մեկտեղ ձևավորվում է նաև նրա իրավունքը՝ շարիաթը (շարիա՝ արաբերեն նշանակում է «պատշաճ ճանա-

պարհ)»: Իրավունքը ձևավորվեց որպես կրոնի կարևորագույն մաս: Նրա հիմնական աղբյուրներն էին.

1) Ղուրանը՝ իսլամի սուրբ գիրքը: Դրանում ընդգրկված պատվիրանները կլանա-բարոյական և խրատական բնույթ ունեն,

2) Սուրնան, որը պատվիրանների (խաղիսների) ժողովածու է՝ Մուհամմեդի արարքների և լուսատու առաջների մասին,

3) Իջման՝ որոշումներ, որոնք տարբեր հարցերի վերաբերյալ կայացնում էին հեղինակավոր մուսուլման իրավագետները,

4) Ֆետվան՝ բարձրագույն հոգևորականների գրավոր եզրակացությունն աշխարհիկ իշխանությունների հասարակական կյանքի առանձին հարցերին վերաբերող որոշումների մասին:

Հետագա ժամանակաշրջանում իսլամի տարածման հետ մեկտեղ ստեղծվեցին իրավունքի այլ աղբյուրներ՝ խալիֆի կարգադրություններն ու հրամանագրերը (ֆիրմանները), տեղական սովորույթներն ու այլ աղբյուրներ, եթե դրանք, իհարկե, չէին հակասում իսլամին:

Աստիճանաբար նկատվում էր իրավական նորմերի համախմբման միտում:

Մուսուլմանական իրավունքը ելնում էր այն հանգամանքից, որ մարդկանց գործունեությունը վերջին հաշվով պայմանավորված է «աստծու ակնդծությամբ», բայց դա չի բացառում, որ մարդիկ իրենք ընտրեն իրենց արարքների կատարման ուղղությունը: Եվ եթե որևէ մեկը շեղվում էր պատշաճ ճանապարհից, նա արժանանում էր պատժի: Յուրաքանչյուր մարդու գործունեությունը դիտվում էր որպես՝ 1) խիստ պարտադիր, 2) ցանկալի, 3) թույլատրելի, 4) անցանկալի, բայց ոչ պատժելի, 5) արգելվող և խիստ պատժվող:

Այս բաժանումը կարևոր էր հատկապես իսլամի արժեքները պաշտպանելու համար: Այդ արժեքներն էին. կրոնը, կյանքը, միտքը, սերունդների շարունակությունը, սեփականությունը:

Իրավունքը. նկերով այդ արժեքների դեմ կատարված ոտնձգություններից, իրավախախտումները բաժանում էր երեք տեսակի՝

1) հանցագործություններ, որոնք ուղղված էին կրոնի և պետության դեմ, և որոնց կատարման դեպքում նախատեսվում էր մահապատիժ,

2) հանցագործություններ, որոնք ուղղված էին առանձին անձանց դեմ: Նման հանցագործությունների դեպքում սահմանված էր կոնկրետ սանկցիա,

3) իրավախախտումներ, որոնց համար պատժի տեսակը օրենքով նախատեսված չէր: Պատժի կոնկրետ տեսակի սահմանման իրավունքը վերապահված էր դատարանին:

Կրոնի դեմ ուղղված հանցագործություններից ավելի շատ տարածված

էր անտվածախայեայտությունը. աստուծուն անարգելք; Առանձին անձանց դեմ ուղղված հանցագործություններից տարածված էր դիտավորյալ սպանությունը: Նման դեպքերում սահմանված պատիժը ավտերմնատիվ բնույթ էր կրում: Սպանվողի հարազատներին էր իրավունք տրվում ընտրելու պատժի տեսակը:

Ընդհանրապես հաշվի էր առնվում հանցագործության սուրբեկտիվ կողմը: Անզգույշ սպանությունների դեպքում հանցագործը տուգանվում էր և ենթարկվում կրոնական քափության:

Մարմնական վնասվածքների դեպքում հանցագործները պատժվում էին տալիոնի սկզբունքով: Կողոպուտի դեպքում կտրում էին ձեռքը (կային նաև սահմանափակումներ, օր., գլխու, խոզի կողոպուտի դեպքում նման պատիժ նախատեսված չէր):

Դատավարությունը մուսուլմանական իրավունքում կրում էր մեղադրական բնույթ: Գործը հարուցվում էր ոչ թե պետության, այլ շահագրգռված անձանց անուկից: Դատական գործը քննվում էր հրապարակորեն, որին կայող էին մասնակցել բոլոր ցանկացողները: Կողմերը հանդես էին գալիս առանց պաշտպանների: Դատավարությունը բանավոր էր: Հետագայում՝ Աբասիդի կառավարման տարիներին, միայն քաղաքացիական գործերով կազմվեցին դատական արձանագրություններ: Դատական պրոցեսն անընդհատ բնույթ էր կրում: Այն պետք է ավարտվեր նույն օրը: Դատական վեճերը լուծվում էին միանձնյա կարգով: Քրեական և քաղաքացիական գործերի միջև տարբերություն գոյություն չուներ:

Ապացույցներ էին հանդիսանում վկաների ցուցմունքները, երդումը, խոստովանումը:

9) Սեփականության իրավունք: Շարիաթը պաշտպանում էր սեփականության իրավունքը: Սեփականատիրական հարաբերությունները կարգավորվում էին առանձին նորմերով: Երկրում հողատիրության հիմնական ձևերն էին հանդիսանում՝ 1) Խիջազը, որտեղ, ըստ պատվիրանների, ապրում էր Մուհամմեդը, և որոնց համար սահմանվել էր հատուկ իրավական ռեժիմ: Այս հողերի վրա կարող էին բնակվել միայն մուսուլմանները, վճարելով տասնույոթ: 2) Վակֆ հողեր, որոնք օգտագործվում էին մուսուլմանական դպրոցներին, կրոնական կազմակերպություններին ծառայելու և բարեգործության նպատակներով: Դրանք ազատվում էին հարկերից: Վակֆ կայող էր լինել նաև այլ անշարժ և շարժական գույք: 3) Մուլք՝ հողեր, որոնք իրենց տերերի իրավասության համաձայն կարող էին նույնացվել մազմափոր սեփականատիրական հողերի հետ: 4) Իկտա հողեր, որոնք դրանց վրա ապրող բնակչության հետ միասին ժամանակավորապես շնորհվում էին այս կամ այն ծառայության դիմաց: Այդ հողերին տիրապետող իրավունք ուներ գյուղացիներից հարկեր՝ գանձել:

91 Պարտավորական իրավունք: Շարիաթում պարտավորական իրավունքը լիակատար ձևավորված չէ: Պարտավորությունները լինում են ժամկետային և անժամկետ, հատուցելի և անհատուցելի, միակողմանի և բազմակողմանի: Առավել տարածված էին միակողմանի պարտավորությունները:

Պայմանագիրը, ըստ շարիաթի, դիտվում էր որպես փոխադարձ համաձայնություն կողմերի միջև: Այն կարող էր արտահայտվել ցանկացած տեսքով՝ փաստաթիթով, ոչ պաշտոնական նամակով կամ բւսնավոր:

Անվավեր էին անբարոյական նպատակներով կնքված պայմանագրերը կամ այն պայմանագրերը, որոնք կնքված էին շրջանառությունից հանված գույքի վերաբերյալ:

Հայտնի են առուժախի, վարձակալության, հատկապես հողի վարձակալության պայմանագրերը:

Շարիաթը պարունակում էր դրույթներ, որոնք դատապարտում էին վաշխառությունը, սակայն պրակտիկայում այն գրեթե չէր պահպանվում: Չէր թույլատրվում պարտքի դիմաց պարտապանին վաճառել ստրկության:

57 Ամուսնաընտանեկան և ժառանգական իրավունք: Մուսուլմանական կրոնը և շարիաթը չամուսնանալը դիտում են անցանկալի երևույթ, իսկ ամուսնությունը՝ որպես կրոնական պարտականություն: Ամուսնությունը դիտվում էր որպես յուրահատուկ առևտրական գործարք: Ամուսնության համար ձևականորեն պահանջվում էր կողմերի համաձայնությունը: Սակայն փաստորեն այն կախված էր աղջկա հոր համաձայնությունից, որը պսակելով աղջկան՝ փեսայից ստանում էր մեծ գումար:

Դուրանը թույլատրում է մուսուլմաններին ունենալ միաժամանակ չորս կին: Կինը պարտավոր էր զբաղվել տնային տնտեսությամբ, դաստիարակել երեխաներին:

Ամուսնալուծության դեպքում առավելությունը տրվում է տղամարդուն, որը կարող էր ամուսնալուծվել մույնիսկ առանց որևէ պատճառի: Կինը կարող էր հասնել ամուսնալուծության միայն դատարանի միջոցով՝ ունենալով միայն հիմնավոր պատճառներ (ամուսինն ունի ֆիզիկական թերություններ, չի կատարում ամուսնական պարտականությունները և այլն):

Շարիաթը նախատեսում էր ժառանգության երկու կարգ՝ ըստ օրենքի և ըստ կտակի: Կտակը կարող էր արտահայտվել բանավոր (երկու վկայի ներկայությամբ) կամ գրավոր:

ԳԼՈՒԽ 13

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

Ճապոնիայի պետության և իրավունքի պատմությունը բաժանվում է հետևյալ ժամանակաշրջանների. 1) վաղ ֆեոդալիզմի (VI-XII դդ.), 2) գարգացած ֆեոդալիզմի (XII-XVII դդ.) և 3) ուշ ֆեոդալիզմի (XVII-XIX դ. I կեսը), որոնցից յուրաքանչյուրն առանձնանում է իր հասարակական, պետական և իրավական կարգով:

92 1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

Ա) Վաղ ֆեոդալիզմի շրջան: Ճապոնիայում վաղ ֆեոդալական պետության կազմավորմանը նախորդեց նախնադարյան-համայնական կարգերի քայքայումը և դասակարգային ռասարակության առաջացումը: III-VII դդ. հասարակության մեջ առանձնանում էր ~~տոհմային սոցիալականությունը:~~

VI-VII դդ. տոհմային համայնքը տեղը զիջում է գյուղական համայնքին, որտեղ պարբերաբար հողի բաժանումներ էին կատարվում: Յուրաքանչյուր ընտանիքի տրվում էր որոշակի հողակտոր ժամանակավոր օգտագործման համար: Լավագույն հողերը տրվում էին տոհմացեղային ազնվականությանը:

Ճապոնիայում ամենաազդեցիկ տոհմը նշված ժամանակաշրջանում Տայկա տոհմն էր, որի թագավորության շրջանը սկսվում է 645 թվականից: Այդ շրջանից էլ սկսվում է կենտրոնացված պետության կազմավորման և ռեֆորմների անցկացման պլանները:

Ռեֆորմներով սահմանվեց միասնական պետական հարկ: Գյուղացիներին տրվում էր հողաբաժին, որը լքելու իրավունք չուներին: Այն օգտագործելու համար գյուղացին պետությանը պարտավոր էր վճարելու հարկեր: Դրա հետ մեկտեղ ձևականորեն ազատվեցին անազատ հողագործները և կիսաազատ արհեստավորները: Ստրուկներն ազատ չէին:

Հողի պետական ֆեոդալական սեփականության և գյուղացիության բաժնեհողային հողօգտագործման համակարգը չէր նշանակում հողե-

հավասար վերաբաժանում: Լավագույն հողերը, ինչպես և առաջ, գտնվում էին Ֆեոդալական ազնվականության ձեռքում: Հողերի մեծ մասը գյուղացիների հետ միասին դարձավ կայսերական տների և բուդայական վանքերի սեփականությունը:

Հողօգտագործման համակարգը մեծ տարածում չգտավ Ճապոնիայում:

Երկրում հասարակության ֆեոդալականացման պրոցեսը նպաստեց հողային համակարգի քայքայմանը: Արդեն X դ. դադարեցվեցին հողերի պարբերական բաժանումները: Տիրապետող ձևը դարձավ ֆեոդալական կալվածքը (սյոեն):

Նոր կալվածքային համակարգը վերացրեց երկրի քաղաքական մասնատվածության և խոշոր ֆեոդալական կալվածքների ամրապնդման ճանապարհին եղած խոչընդոտները:

Տայրա և Մինամուրո տոհմերի միջև իշխանության համար մղված պայքարը XII դ. հաղթանակ բերեց Մինամուրո տոհմին:

Բ) Չարգացած ֆեոդալիզմի շրջան: XIII դ. արդեն Ճապոնիայում ձևավորվում են ավատական հարաբերությունները: Դեռևս XII դարում ֆեոդալ դասակարգը բաժանվում էր արտոնյալ խմբերի՝ ցեմվորական առաջնորդների (սյոգունոկների) անմիջական վասալներ և ֆեոդալական կալվածքների, վանքերի ու տաճարների վասալներ:

Ֆեոդալական աստիճանակարգի ներքևում կանգնած էր հասարակ ժողովուրդը՝ գյուղացիները, արհեստավորները և առևտրականները: Գյուղացիների ֆեոդալական շահագործման առավել տարածված ձևը ռենտան էր, որը խլում էր գյուղացուց բերքի 50-60%-ը: Չնայած դրան՝ XIII-XIV դդ. դեռևս չէր ավարտվել գյուղացիների լիակատար ճորտացման պրոցեսը:

XV-XVI դդ. երկրի տնտեսական կյանքում տեղի ունեցան զգալի տեղաշարժեր, որոնք նպաստեցին արհեստների ու առևտրի զարգացմանը, որն էլ իր հերթին խթանեց քաղաքների աճմանն ու զարգացմանը և տեղական շուկաների ստեղծմանը: Իշխանների տիրույթներում վերջնականորեն հաստատվեցին խոշոր, տնտեսապես հզոր ֆեոդալական տնտեսություններ:

Ֆեոդալական մասնատվածության շրջանում զգալիորեն փոփոխվեց նաև գյուղացիների իրավական վիճակը: Գնալով ծանրանում էր նրանց դրությունը: Բարձրացված հարկերը, լրացուցիչ պարհակների ու հարկադրական աշխատանքի կատարումն էլ ավելի վատթարացրին ֆեոդալիզմի կաթառում գալարվող գյուղացու վիճակը: Ստեղծված իրադրության մեջ նրանք հաճախ էին դիմում հակաֆեոդալական շարժման, որը նպատակ ուներ ազատություն բերել գյուղացիներին: Այդ շարժումներից մեկը տեղի

ունեցավ 1485թ. Յամասիրո պրովինցիայում: Ապստամբության արդյունքն եղավ այն, որ այդ պրովինցիայում ստեղծվեց գյուղացիական կառավարություն (ժողովրդական խորհրդակցություն), որը գոյատևեց ութ տարի:

Գ) Ուշ ֆեոդալիզմի շրջան: XVI դ. վերջերին Ճապոնիան կենտրոնացված ֆեոդալական բացարձակ պետություն էր: Երկրում արագ թափով զարգանում են արհեստագործությունը և առևտուրը: Չնայած ֆեոդալական սահմանափակումներին՝ Ճապոնիայում սկսեցին երևալ կապիտալիստական արդյունաբերության առաջին ծիլերը՝ Տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները նպաստեցին միասնական ազգային շուկայի ստեղծմանը:

Նպաստավոր պայմաններ էին ստեղծվել նաև քաղաքական միավորման համար: Նշված ժամանակաշրջանում երկրում գոյություն ունեին չորս դասեր՝ սամուրայներ (զինվորական մանր ազնվականները), գյուղացիներ, արհեստավորներ և առևտրականներ:

Ֆեոդալական աստիճանակարգը գլխավորում էր միապետը, որը տիրում էր երկրի հողերի 1/4 մասին և առևտրի խոշոր կենտրոններին:

Խոշոր իշխանները բաժանվում էին երկու կատեգորիաների: Դ-խանցից մեկն ակտիվորեն մասնակցում էր կառավարմանը, զբաղեցնում բարձր պաշտոններ, իսկ մյուսը հեռու էր կանգնած կառավարման գործերից:

Ֆեոդալական աստիճանակարգի ստորին սանդուղքում կանգնած էին արհեստավորներն ու առևտրականները, որոնց դերը գնալով մեծանում էր:

Ճապոնիայի ֆեոդալական հասարակության մեջ ամենաշահագործվող մասը գյուղացիությունն էր:

XVI դ. վերջին վերջնականապես ձևավորվեց ճորտատիրությունը: Գյուղացիական ելույթները հաճախակի բնույթ էին կրում: 1601-1867թթ. Ճապոնիայում տեղի է ունեցել 1640 գյուղացիական ելույթ:

XVIII դ. նկատվում է ֆեոդալիզմի քայքայման պրոցեսը: Կապիտալիզմն իրեն զգացնել է տալիս հատկապես բուրժուական հեղափոխությունից հետո (1867-1868թթ.), երբ տապալվեց սյոգունի կառավարությունը, և իշխանությունն անցավ բուրժուա-կալվաժատիրական խմբավորմանը:

93

2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Ա) Վաղ ֆեոդալիզմի շրջան: Տայկայի ռեֆորմները, որոնք վաղ ֆեոդալական Ճապոնիայի համար ունեին քաղաքական հեղափոխության նշանակություն, զգալիորեն կարգավորեցին նաև պետական կարգը: Ըստ ռեֆորմների, պետության գլուխ է համարվում միապետ-իմաստունը՝ աստծո կամակատարը: Երկրի ամբողջ բնակչությունը ենթարկվում էր նրան:

Միապետի իշխանությունը ժառանգական էր: Միապետին կից ստեղծվեցին իշխանության կենտրոնական և տեղական մարմինները: Կարևոր տեղ էր գրավում բարձրագույն պետական խորհուրդը (Դաձյոկան)՝ առաջին նախարարի գլխավորությամբ: Դրան ենթարկվում էր ավելի քան ութ գերատեսչություն, որոնցից գլխավորներն էին զինվորականը, դատականը և ֆինանսականը:

Չնայած միապետն աստվածացվում էր, բայց նրա իշխանությունն անսահմանափակ չէր: Նա իշխանությունը բաժանում էր խոշոր ֆեոդալական տների առաջնորդների միջև:

Սկսած 645 թվականից՝ երկիրը բաժանվեց առանձին պրովինցիաների և գավառների, որոնց ղեկավարում էին միապետի կողմից՝ տեղական ազնվականությունից նշանակված կառավարիչները:

Վաղ ֆեոդալական ճապոնիայում ծևավորվում է մշտական բանակը, որը բաղկացած էր հիմնականում գյուղացիներից: Ստեղծվում է սամուրայների հատուկ ռազմա-ֆեոդալական դասը, որը հանդիսանում է խոշոր ֆեոդալների վասալը և նպատակ ուներ ճնշելու գյուղացիական շարժումները:

Բ) Չարգացած ֆեոդալիզմի շրջան: Ճապոնիայում զարգացած ֆեոդալիզմի շրջանում առաջին անգամ ստեղծվում է կառավարման ապարատ՝ Բակուֆու, որը գործում էր նոր մայրաքաղաքում՝ Կամակույայում:

Կառավարման ապարատը բաղկացած էր վարչական, զինվորական և դատական պալատներից և իրականացնում էր օրենսդրական, զինվորական և դատական գործունեություն:

Բոլոր պրովինցիաներում նշանակվեցին զինվորական նահանգապետեր կամ հովանավորներ, որոնք հետևում էին կենտրոնական կառավարման օգտին պարեհակների կատարմանը, ղեկավարում էին տեղական կայագործերը, տեղերում իրականացնում էին դատական և ոստիկանական իշխանությունը:

Բակուֆուի դերը XV դարում զգալիորեն թուլացավ: Դրան զուգահեռ մեծանում էր բուդայական եկեղեցու նշանակությունը, որը պետության ներսում հավակնում էր անկախության:

Գ) Ուշ ֆեոդալիզմի շրջան: Պետության գլուխ կանգնած էր սյոգունը՝ գորավարը: Չինվորական ուժերի դերն այս ժամանակաշրջանում էլ ավելի է մեծանում:

Բակուֆուին կից ստեղծվում է ճյուղավորված բյուրոկրատական ոստիկանական ապարատ: Երկրում գոյություն ունեւ սամուրայների հատուկ դասը, որից համարվում էր սյոգունի հաշվառման, վարչական և հարկային ապարատը:

Բարձրագույն աստիճանավորներին էին ենթարկվում ֆինանսական

ապարատը, արտաքին հարաբերությունները և կայսերական պալատը:

Երբեմն սահմանվում էր հատուկ պաշտոն՝ գլխավոր ռեզենտ կամ գլխավոր նախարար, որը կոչվում էր թայրո:

Ճապոնիան ոստիկանական պետություն էր, որը դաժանորեն ճնշում էր ցանկացած հակաֆեոդալական շարժում:

Կայսերական պալատի պահպանման համար նշանակվել էր հատուկ կառավարիչ:

Ստեղծվեց հետախուզման հատուկ համակարգ, որն իրականացնում էր գաղտնի ոստիկանական հսկողություն բոլոր աստիճանավորների և երկրի ամբողջ բնակչության վրա:

Պետական ապարատում մեծ դեր խաղաց բանակը, որը ենթարկվեց զգալի փոփոխությունների: Նրա կազմից աստիճանաբար հեռացրին գյուղացիներին: Դա բացատրվում էր նրանով, որ գյուղացիական ելույթները սարսափեցրին իշխանություններին: Նյունք, վախենալով զինված գյուղացիներից, 1591 թվականին վերջնականապես գյուղացիներին արգելեցին դառնալ զինվոր:

Պետական ապարատը բոլոր դեպքերում ծառայում էր իշխանություններին:

94 3. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Աղբյուրները: Իրավունքի կարևոր աղբյուր է հանդիսացել սովորույթը: Հետագայում հանդես եկան ճապոնական կայսրերի հրամանագրերը, որոնց փոխարեն XII դարից կլիրառելի դարձան կառավարության կարգադրերը և հրահանգները: Դրանք հրապարակվեցին առանձին ժողովածուներով և կոչվեցին օրենսգրքեր: Այդպիսի օրենսգրքերից էր 17 հոդվածներից բաղկացած «Կենսի տարիների օրենսգիրքը» (1334-1338թ.թ.), որը, ըստ էության, երկրորդ սյոգունյան դինաստիայի յուրահատուկ քաղաքական ծրագիրն էր:

Իրավունքի աղբյուրների թվին է պատկանում նաև դատական նախադեպը:

Սեփականության իրավունք: Ճապոնիայում հողի նկատմամբ սեփականության իրավունքը լայն տարածում գտավ: Սկզբնական շրջանում ֆեոդալական կենտրոնացված պետությունը հենվում էր հողի պետական ֆեոդալական սեփականության և գյուղացիության բաժնեհողային հող օգտագործման համակարգի վրա:

X դ. հաստատվեց հողի մասնավոր ֆեոդալական սեփականությունը. Տիրապետող ձևը դարձավ ֆեոդալական կալվածքը (սյոեն):

Պարտավորական իրավունք: Պարտավորությունների առաջացման հիմք են հանդիսանում պայմանագրերը: Առավել տարածված պայմանագրերից էր աճ ու ծախի պայմանագիրը, որի օբյեկտ էր հանդիսանում ցանկացած գույք, այդ թվում մաքուր հողը: Չնայած կառավարությունը հրապարակել էր բազմաթիվ որոշումներ, որոնցով սահմանափակվում էր հողի առ ու ծախը, այնուամենայնիվ այն մեծ չափերի հասավ:

Հայտնի են նաև նվիրատվության, փոխառության, վարձակալության և մի շարք այլ պայմանագրեր, որոնցից աչքի էր ընկնում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հողերի վարձակալության պայմանագիրը: Ուշ ֆեոդալիզմի շրջանում վարձակալներ էին համարվում աղքատ գյուղացիները:

Ամուսնաընտանեկան իրավունք: Ծապունիայում ընտանիքը, որպես կանոն, նահապետական բնույթ էր կրում: Մեծ ընտանեկան համայնքի մեջ մտնում էին մի քանի փոքր ընտանիքներ: Ընտանիքի գլուխը կանգնած էր նահապետը, որն ուներ մեծ իշխանություն ընտանեկան համայնքի բոլոր անդամների վրա: Առանց նրա համաձայնության ընտանիքում չէր կարող կատարվել ամուսնություն, ամուսնալուծություն կամ որդեգրում:

Երեխաները պարտավոր էին ծնողների առաջ, որոնք, եթե ոչ օրենքով, ապա սովորության ուժով իրավունք ունեին երեխաներին վաճառել ստրկության և նույնիսկ սպասել:

Ընտանիքում հատուկ կարգավիճակում էր ավագ որդին, որն ընտանեկան գույքի նկատմամբ ուներ ժառանգական իրավունք:

Ամուսնաընտանեկան հարաբերություններում ամուսինն ավելի արտոնյալ վիճակում էր, քան կինը: Նա ցանկացած պահին կարող էր ամուսնալուծվել, եթե, իհարկե, ընտանիքի գլուխը համաձայն կլիներ դրա հետ: Կնոջ կողմից ամուսնական անհավատարմությունը համարվում էր ~~տեղ~~ ցածր ծրույթ: Մինչդեռ ամուսնու արտասամուսնական կապերը դիտվում էին բարոյական երևույթ:

Անբաժանելի ընտանեկան իրավունքում մեծ տեղ էր գրավում որդեգրման ինստիտուտը: Որդեգրումը համատարած բնույթ էր կրում:

Քրեական իրավունք և դատավարություն: Ծապունիայում պատժական համակարգը ձևավորվել էր դեռևս վաղ ֆեոդալիզմի շրջանում:

Առավել տարածված հանցագործություններ էին պետության, սեփականության, անձի և ընտանիքի դեմ ուղղված հանցագործությունները, որոնց դեպքում նախատեսված էին պատժի տարբեր տեսակներ: Դրանք էին մահապատիժը, մարմնական պատիժները, աքսորն ու արտաքսումը, տանջալի աշխատանքի ուղարկելը և այլն: Մահապատիժը իրականացվում էր տարբեր եղանակներով ու մեթոդներով:

Պատիժներն ունեին սարսափեցնելու նպատակ և կիրառվում էին խս-

տությամբ:

Երկար ժամանակ, մինչև 1880 թ., ճապոնիայում պահպանվեց արյան վրեժի կիրառումը: Երեխաները կամ թոռները կարող էին տեղն ու տեղը սպանել իրենց ծնողների սպանողներին: Եթե մարդասպանը թաքնվում էր, ապա կախող էին սպանել նրա հարազատներից որևէ մեկին:

Պատիժը նշանակելիս հաշվի էին առնում դասակարգային պատկանելությունը, հանցագործության սուբյեկտիվ կողմը և մի շարք այլ կարևոր հագամանքներ:

Դատավարությունը ճապոնիայում կրում էր մեղալրական բնույթ: Տուժողն ինքն էր դատարան ներկայացնում հայց:

Որպես ապացույց ընդունելի էր մեղադրյալի ինքնախոստովանումը: Լայնորեն կիրառվում էր ծեծը, որը վերջնականապես վերացվեց 1880թ. քրեական օրենսգրքով:

Դատավարության ընթացքում օգտագործում էին նաև լրտուներին:

ԳԼՈՒԽ 14

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

1. Հասարակական կարգը

Չինաստանում ֆեոդալական հարաբերությունները ձևավորվել են դեռևս մեր թվականությունից առաջ՝ ստրկատիրական հասարակության ճգնաժամի և նախնադարյան կարգերի քայքայման հիմքի վրա: Եռաթագավորության անկումից հետո ֆեոդալական կացութաձևը, որպես այդպիսին, վերածվեց սոցիալ-տնտեսական ֆորմացիայի: Չնայած դրան, այնուամենայնիվ, ստրկատիրական կացութաձևը ֆեոդալական Չինաստանում պահպանվեց շատ դարերի ընթացքում: Իսկ դա հանդիսացավ հասարակական կյանքի վերընթաց զարգացման գլխավոր խոչնդատը:

280թ. կայսրը հրաման արձակեց ագրարային համակարգ սահմանելու մասին, որի պայմաններում յուրաքանչյուր աշխատունակ հողագործ իրավունք ուներ հաղակտոր ստանալ՝ մշակելու պայմանով: Չափահաս հարկատու աշխատունակ տղամարդու հողակտորը հավասար էր 120 մուի, որից 70 մուն հողագործը մշակում էր իր համար, իսկ 50 մուի բերքը պարտավոր էր հանձնել պետությանը: Հարկատու համարվող կինն իրավունք ուներ ստանալու 50 մու հող, որից 30 մուի բերքն ամբողջովին պատկանում էր իրեն: /Մուն տարածության չափ է, որը հավասար է 0,06 հա/: Անչափահասներին և ծերերին հասնում էր զգալիորեն պակաս հողամաս:

Հողի բաժանումը գյուղացիական և պետական վարելահողերի՝ վկայում էր III դարում տնտեսության զգալի բնատուրացման մասին: Նման պայմաններում տնտեսության վերականգնումը դարձավ անհնար և երկյուր մոլեզմեցին անբերրիությունն ու սովը: Ժողովրդական ապստամբությունները բռնկեցին երկրի ամբողջ տարածքով:

Վաղ միջնադարի ժամանակաշրջանում ֆեոդալական հարաբերությունների ձևավորումը տեղի էր ունենում երկու տեմդեցների բախման պայմաններում: Ավագանին և խոշոր հողատերերը ձգտում էին հաստատել հողի անհատական սեփականություն, իսկ իշխող դասակարգի ավելի նվազ իզոք և ազդեցիկ ներկայացուցիչները շահագրգռված էին հաստատել ամբողջաուսակարգի սեփականությունը՝ թագավորի գերագույն իշխանու-

քյան միջոցով: Դրանք ֆեոդալական մասնավոր կամ պետական սեփականության զարգացման երկու տարբեր ուղիներ էին: Ժամանակի ընթացքում ամբողջ հողը հայտարարվեց պետական սեփականություն. ինչն իր հերթին արգելակեց երկրի տնտեսության հետագա զարգացմանը: Արտավայրերը շրջանառությունից դուրս հանվեցին: Գյուղացին այն կարող էր օգտագործել, եթե չէր կորցրել աշխատունակությունը և չէր լրացել նրա 70 տարին: Նրանք պարտավոր էին վճարել ծանր հարկեր ու տուրքեր և զրկված էին արտոնություններից: VIII դարի երկրորդ կեսին պետությանը հարկ վճարող գյուղացիների թիվը կրճատվեց գրեթե հինգ անգամ: Դրա հետ մեկտեղ, աճեց ֆեոդալների, մասնավոր անձանձ համար աշխատող գյուղացիների թիվը, ինչը պետությանը հարկադրեց մտածելու նոր բարեփոխումների մասին: 763թ. և 780թ. օրենքներով հողի նկատմամբ պետական մենաշնորհը վերացվեց: Ֆեոդալների կողմից ձեռք բերված հողերը, որոնք անլեզալ էին, օրինականացվեցին: Իսկ դա նպաստեց տնտեսության զարգացման հետագա աճին:

Չինական ֆեոդալական հասարակությունը բաղկացած էր սոցիալական տարբեր խմբերից, որոնք կազմում էին ֆեոդալական աստիճանակարգը: Նրանք բոլորն էլ ունեին միասնական պետություն, որն անձնավորված էր կայսրի մեջ և վերադասների վասալներ չէին համարվում:

Հասարակության բարձրագույն խմբին էր պատկանում տիտղոսավոր ազնվականությունը, որն ուներ տնտեսական մեծ իրավունքներ և սոցիալական արտոնություններ: Սույ դինաստիայի կայսրների կառավարման ժամանակ և առաջին Տաների օրոք տիտղոսներ ստանում էին սակավաթիվ ընտանիքներ: Արիստոկրատական ինը տիտղոսներ կրողներն իրենց հերթին տարբերվում էին միմյանցից ազնվականական աստիճանով, հողատիրության չափով և հարկատուների քանակով ու նրանց համար սահմանված համապատասխան վարքագծով: Ազնվականության տիտղոսներից բացի պատվավոր տիտղոսներ շնորհվում էին առանձին անձանց՝ կայսրության հանդեպ ունեցած հատուկ ծառայությունների համար:

Ֆեոդալների դասակարգում առավել բազմամարդ խումբը կազմում էին պաշտոնյանները, որոնք ինը կարգ ունեցող աստիճանակարգում գրավում էին տարբեր տեղեր: Կարգերի ներսում գոյություն ունեին լրացուցիչ ենթաբաժիններ: Պաշտոնների աստիճանների միջև գոյություն ունեին խիստ սահմանազատումներ և յուրաքանչյուր կարգին համապատասխանում էր բնավճար՝ որոշակի հողաբաժնի ձևով, որի պաշտոնյան ստանում էր իր եկամուտները: Պաշտոնյանների դյուրությունը կարող էր մշտապես փոխվել:

Սոցիալական սանդուղքի ստորին աստիճանի վրա կանգնած էին հարկատու գյուղացիները և տուրք վճարող վաճառականներն ու արհեստավորները: Հասարակության վերջին և ամենաստորին խավը համարվում էր հասարակ ժողովուրդը, որին պատկանում էին անձնապես կախվածո՞ւն-ը, կիսաստրուկները և ստրուկները: Նրանք պետական հողերից հողաբաժնի իրավունք չունեին և պետությանը հարկեր չէին վճարում, չնայած այդ կարգը երբեմն խախտվում էր: Առանձին ժամանակաշրջանում ստրուկին թույլատրվում էր հողաբաժին ստանալ, և նա իր ընտանի-քով դառնում էր հարկատու:

Ֆեոդալների սեփականության օգտին հողի վերաբաժանման պլոցեսը զգալիորեն ընդլայնվեց X-XII դարերում: Այս երևույթի իրավաբանական ձևերը բավականին յուրօրինակ էին: Օրինակ, Սուների կայսրության մեջ հաստատվել էր մի կարգ, որով լքված և խոպան հողերն անցնում էին հավիտենական սեփականության նրանց, ովքեր մշակում էին դրանք: Մասնավոր հողատիրության, քաղաքային տնտեսության և արտաքին կապերի զարգացման պայմաններում ակտիվանում էին իշխող դասակարգի ստորին, փաստորեն քսղաքսկանապես իրավագուրկ խավերը և նրանց հարող սոցիալական խմբերը: Նրանց չէր բավարարում արքունիքի ներքին ու արտաքին քաղաքականությունը, որն արտահայտում էր բյուրոկրատական ապարատի վերնախավի շահերը:

XVI դարում չինական հասարակության մեջ սրվեցին բուրձր հակասությունները, հաճախակի դարձան ժողովրդական ապստամբությունները: Մինչդեռ երկրում շարունակում էր տիրապետել անասան ֆեոդալական կարգը, իշխանությունը մնում էր բռնապետական: Կայսրը հենվում էր ֆեոդալական ազնվականության մի սահմանափակ շրջանի վրա, որը չէր ցանկանում հաշվի առնել սոցիալական մյուս խավերի շահերը:

1628թ. տեղի ունեցավ պալատական հեղաշրջում, և ներքինների կառավարությունը տապալվեց: Սակայն նոր միապետը միջոցներ ձեռք չառավ և երկրում շարունակվեց հետադիմության նույնգնումը: Նույն թվականին բռնկեց գյուղացիական պատերազմը: Գյուղացիները նվաճեցին ազնվականության հողերը: 1645թ. նրանք գրավեցին երկրի մայրաքաղաքը: Դրանով ջախջախվեց Մյն դինաստիայի վերջին կայսրը: Վախենալով ապստամբների հզորացումից, չինական ֆեոդալները պայ-մանագրեր կնքեցին մանչժուրյանների հետ և նրանց օգնությամբ ջախջա-խեցին գյուղացիական ելույթները: Նվաճելով երկիրը, մանչժուրիները հաստատեցին իրենց տիրապետությունը Չինաստանի վրա մինչև 1911թ.:

2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ֆեոդալական կայսրության պետական կազմակերպությունը ձևավորվում էր ստրկատիրական բռնապետությունների կուտակած փորձի հիման վրա: Պայքարելով հողային սեփականության մեջ պետական գերիշխանության համար ընդդեմ խոշոր հողատերերի ձգտումների, ֆեոդալական միապետները և պետական ապարատն աշխատում էին ուժեղացնել կենտրոնական կառավարությունը:

Գերագույն իշխանությունը ներկայացնում էր կայսրը, որն օժտված էր լիակատար և անսահմանափակ իրավունքներով: Նա իր իրավունքները չկորցնելու համար հենվում էր բազմաթիվ հիմնարկների պետերի ու պաշտոնյաների վրա:

Կայսրին կից գոյություն ուներ հատուկ խորհուրդ՝ նրա ազգականներից և ազդեցիկ պալատականներից: Նրանց մեջ բարձրաստիճան պալատականներից մեկը կամ կայսերական տան անդամներից մեկը կատարում էր վարչապետի պաշտոնը:

Պետական հիմնարկների մեջ բարձրագույնները համարվում էին երեք պալատներ, որոնց գլխավորում էին հատուկ պետերը և նրանց օգնականները: Պալատներից մեկը ղեկավարում էր վեց գերատեսչությունների գործնեությունը, որոնք ունեին գործադիր իշխանության ֆունկցիաներ: Գերատեսչությունները բաժանվում էին երկու խմբի, որոնցից յուրաքանչ-յուրը ղեկավարում էր պալատի պետի օգնականը: Առաջին խմբում բարձրակարգ տեղ էր զբաղվում աստիճանների գերատեսչությունը, որը զբաղվում էր պաշտոնյանների նշանակումով և ազատումով: Ֆինանսա-կան գերատեսչությունը զբաղվում էր բնակչության և հարկատուների հաշվառումով, հողերի բաժանումով, հարկերի նշանակումով և գանձումով, իսկ ծիսակատարությունների գերատեսչությունը հետևում էր բոլոր ծեսերի և արարողությունների կատարմանը, բնակչության բարոյական վիճակին, ղեկավարում էր կրոնական և եկեղեցական կազմակերպությունների գործերը:

Գերատեսչության երկրորդ խմբին էր պատկանում ամենից առաջ զինվորականը, որին ենթարկվում էին զինվորական պաշտոնյանները, բանակը, սահմանապահ զորքերը, կայսրության ծայրամասերում տեղավորված զինվորական բնակավայրերը: Պատիժների գերատեսչությանը ենթակա էին դատարանները և դատավարությունը: Վեց գերատեսչությունների մեջ վերջինը համարվում էր աշխատանքային գերատեսչությունը, որը ղեկավարում էր աշխատանքային պարիսպի օգտագործումը, շինարարական աշխատանքները և այլն:

Վեց գերատեսչություններից առանձին գոյություն ունեին պալատական վարչություններ կայսրի անձնավորության, կայսերական պալատների և հարեմների սպասարկման, օտարերկրյա դեսպանների ընդունելու-թյան, գույքի պահպանման և գվարդիայի ղեկավարության համար: Թա-գավորական զանձարանը և քազավորական գործերը դեռևս անջատված չէին պետականից: Գործում էին ոստիկանական ծառայության վարչությունները: Բյուրոկրատական ապարատում միանգամայն առանձին տեղ էր զբաղում տեսուչների պալատը, որն ուներ իր ենթաբաժինները: Նրա գործունեությունը կապված էր անմիջականորեն կայսրի հետ: Տեսուչները պարտավոր էին հետազոտել բյուրոկրատական հիմնարկները և առանձին պաշտոնյաների գործունեությունը:

Տասների օլաք ամբողջ կայսրությունը բաժանված էր 10 պլովին-ցիաների, որոնցից յուրաքանչյուրը ստորաբաժանվում էր նահանգների և գավառների: Վարչական բուրգի ներքևում գտնվում էին գյուղական համայնքները և տասական կամ հինգական ծխերը: Վարչական նշված միավորումներում պաշտոնները գրադեցնում էին տարբեր կարգի աստիճանավորները, որոնք պետք է լինեին գրագետ և ,այսպես կոչված, «գիտական աստիճան» ստացած:

Իրավունքը: Ֆեդալիզմի դարաշրջանում իրեն բնորոշ յուրահատկությամբ շարունակում էր գործել Հին Չինաստանի իրավունքը: Նրա հիմնական նորմերը պահպանվեցին դարերի ընթացքում և կարգավորում էին հասարակական կյանքի բոլոր կողմերը: Ինչպես արդեն նշել ենք, Չինաստանի իրավունքի ձևավորման ու կիրառման բնագավառում մեծ դեր է խաղացել փիլիսոփա Կոնֆուցիոսի ուսմունքը, որը, միաժամանակ, հանդիսացավ տիրապետող դասակարգի պաշտոնական գաղափարախոսությունը: Մեծ տեղ հատկացնելով հատկապես բարոյական նորմերին, կոնֆուցիականներն առաջնորդվում էին ենթակայության սկզբունքով, որն արմատավորվեց իրավունքում և գործեց դարեր շարունակ: Այդ սկզբունքի համաձայն ժողովուրդը պետք է ենթարկվի իր աստիճանավորներին և կայսրին. այնպես, ինչպես զինվոր՝ իր հրամանատարին:

Ժամանակի ընթացքում չին իրավաբաններին հաջողվեց համակարգել իրավունքի տարբեր ճյուղերին վերաբերող նորմեր, ստեղծել օրենքների հավաքածուներ, որոնք էլ հանդիսացան իրավունքի հիմնական աղբյուր-ները և որոնց միջոցով էլ կարգավորվում ու ամրապնդվում էր կոնֆուցիա-կանների համար այնքան կարևոր նշանակություն ունեցող հասարակա-կան ու պետական կյանքը:

ԳԼՈՒԽ 15

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

1. Հասարակական կարգը

Մեր թվականության սկզբին Հնդկաստանում ապրում էին շատ ցեղեր ու ժողովուրդներ, որոնք տարբերվում էին իրարից սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով: Դրանցից մի քանիսն ունեին ստրկատիրական բարձր կուլտուրա. որի հուշարձաններով իրավացիորեն հպարտանում է ժամանակակից Հնդկաստանը: Նրանց հետ կողք-կողքի ապրում էին բազմաթիվ ցեղեր, որոնք անխախտ կերպով պահպանել էին ինն նախնադարյան համայնական կարգերը՝ մայրիշխանության տոհմային կազմակերպության խառնուրդ մնացուկներով, բայց միաժամանակ գոյություն ունեին ցեղեր, որոնց մոտ սկսվել էր նախնադարյան կարգերի քայքայման պրոցեսը:

Մեր թվականության առաջին դարերում Հնդկաստանի տնտեսական կյանքում նկատվեցին լուրջ փոփոխություններ, որոնք նոր արտադրողական ուժերի աճման հետևանք էին: Դա նպաստեց ֆեոդալական արտադրահարաբերությունների սաղմնավորմանն ու ձևավորմանը:

VI դարի վերջին Հնդկաստանում ուժեղացան հատկապես երկու պետություններ, որոնցից մեկը Գաուդա թագավորությունն էր՝ ներկայիս Արևմտյան Բենգալիայում, մյուսը՝ Թիանեսար պետությունը՝ Գանգեսի վտակ Ջամնա գետի հովտում:

VII-XII դարերից մեզ հասած աղբյուրներն արժանահավատ պատկերացում են տալիս միջնադարյան Հնդկաստանի պետության ու իրավունքի պատմության մասին: Պատմական դեպքերի ոլորապտույտ զարգացման հետևանքով ֆեոդալական Հնդկաստանը բաժանվեց Հյուսիսային և Հարավային մասերի, որտեղ էլ ձևավորվեց ֆեոդալական դասակարգի աստիճանակարգը: Այն գլխավորում էր գերագույն կառավարիչը՝ մահառաջա-ադիիռաջան: Ֆեոդալական դասակարգի ամենաերևելի շերտը մարզերի կառավարիչներն էին՝ թագավորական ընտանիքի անդամներից, և վասալական այն իշխանները, որոնք ունեին

իշխանութուն իրենց հպատակների նկատմամբ: Նրանցից ներքև կանգնած էին բարձր ծառայող ավագանին, որն ազգակցական կապ չուներ իշխող տան հետ, և ֆեոդալական խոշոր կալվածատերերը: Այնուհետև գալիս էին ավելի ցածր աստիճանների ծառայողներն ու ֆեոդալական դասակարգի մանր հողատերերի միջնախավը:

Ֆեոդալական հասարակարգի աստիճանակարգում Հնդկաստանի բնակչությունը բաժանված էր բազմաթիվ կաստաների, ինչն էլ հանդիսանում էր միջնադարյան Հնդկաստանի յուրահատկությունը: Կաստան մարդկանց միավորում էր ոչ միայն ըստ զբաղմունքի տեսակի, այլ որ այդ զբաղմունքն ամրագրված էր գրված կամ չգրված հասարակական օրենքով, որպես նրանց ժառանգական կենսական կոչում, արգելելով մի կաստայից մյուսին անցումը և խառն ամուսնությունները տարբեր կաստաների միջև:

Կաստայական աստիճանակարգի վերևում կանգնած էին ֆեոդալական հասարակության երկու բարձր դասերի կաստաները՝ քյումական և ռազմա-հողատիրական: Նրանցից ներքև կանգնած էին առևտրական ու վաճառական բուզմաթիվ կաստաներ, որոնք իրենց համարում էին հին վաճառների միակ ժառանգորդները: Հաջորդ աստիճանում կանգնած էին շուրթաները: Կաստայական այս աստիճանակարգում ամենաստորին տեղը գրավում էին ամենարնչագուրկ ու սոցիալապես առավել ճնշված բնակչության խավերը: Ֆեոդալական հասարակության մեջ ստորին կաստաների վիճակի վրա անկասկածելիորեն անդրադառնում էր նրանց նախկին ստրկական վիճակը: Կաստայական այս աստիճանակարգում համապատասխան տեղ էին գրավում ֆեոդալականացման պայքեսով ընդգրկված ցեղերը:

Հյուսիսային Հնդկաստանում հողային սեփականության իրավունքը ֆեոդալները կենտրոնացրին իրենց ստեղծած ապարատի ձեռքում: Հողի պետական սեփականությունն իր տնտեսական արտահայտությունը գտավ նրանում, որ ամբողջ ռենտայի տնօրինողը դարձավ պետության գլխավորը՝ սուլթանը, որը որոշում էր ինչպես այդ ռենտայի չափը, այնպես էլ ձևերը:

Ֆեոդալների ճնշող մասը պետությունից ստանում էր պետական ռենտայի մի մասի իրավունք, որը երկրագործները վճարում էին սուլթանին հողային հարկի ձևով՝ մշակելի յուրաքանչյուր հողակտորից: Այն հողերը, որոնցից սուլթանները ռենտա-հարկեր էին տալիս ֆեոդալներին, բաժանվում էին երեք կատեգորիայի:

Հյուսիսային Հնդկաստանի ֆեոդալական դասակարգի մասուլմանական միջնախավը, որպես տիրույթ ստանում էր իկթա: Նման տիպի տիրույթի յուրաքանչյուր ստացող՝ իկթադար, պարտավոր էր

կատարելու մշտական զինվորական ծառայություն և ուներ զինվորական աստիճան, որը որպիսի էր նրա տեղը ֆեոդալական աստիճանակարգում: Այդ գորավարներին հատկացված իկթան ապահովում էր մի եկամուտ, որը բավական էր ինչպես ֆեոդալի անձնական սպառման, այնպես էլ գործի պահպանման համար:

Իկթայի տիրույթը ժառանգական չէր: Դեռ ավելին, իր կյանքի ընթացքում իկթալարը քանիցս թողնում էր նախկին իկթան և ստանում էր նորը՝ ֆեոդալական աստիճանակարգով բարձրանալու կապակցությամբ կամ էլ սուլթանի կամքով:

Մուսուլմանական հոգևորականությունը նույնպես ստանում էր հողակտորներ՝ ինամներ և վակֆեր: Ինամ կոչվում էին կրոնի պաշտոնյաներին, գիտնական աստվածաբաններին, կրոնական միաբանությունների գլխավորներին (շեյխերին) սուլթանի կողմից նվիրված հողերը: Վակֆեր էին այն հողերը, որոնք տրվում էին մզկիթների, ուսումնական հաստատությունների և դրանց նման հիմնարկների պահպանության համար: Ինամները փաստորեն դառնում էին ժառանգական տիրույթներ, իսկ վակֆերը՝ պահպանվում էին այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունեին այն հիմնարկները, որոնք դրանք նվիրել էին:

Իրենց ենթարկելով Հյուսիսային Հնդկաստանը և ոչնչացնելով այնտեղ գոյություն ունեցող իշխանությունները, նվաճողները հնդկ ֆեոդալ ազնվականներին դրեցին վասալական հարկատուների կամ էլ պետության կողմից սահմանված ռենտա-հարկի գանձողների դասության մեջ՝ այն հողերից, որոնց տերերը նախկինում նրանք էին: Այդպիսի գանձողները ստացան զամինդար անունը: Պետությունը նրանց թույլ էր տալիս վերցնել հավաքված հողային հարկի մի մասը և այն, ինչ նրանք կարող էին հարկել գյուղացիներից ավելին: Կառավարական մարմինները չէին միջամտում զամինդարների տիրակալության իրավունքներին, քանի դեռ նրանք կատարում էին իրենց պարտականությունները պետության հանդեպ: Չամինդարները կարող էին իրենց տիրույթները փոխարինել ժառանգաբար, մասնատել, օտարել և այլն:

Հողային հարաբերությունները Հարավային Հնդկաստանում ավելի բարդ էին, քան այն պետություններում, որոնք գտնվում էին մուսուլմանական կառավարողների իշխանության ներքո: Այստեղ պետությանը պատկանող հողերի կողքին պահպանվել էր մասնավոր ֆեոդալական սեփականությունը, այդ թվում նաև թագավորական ընտանիքի կալվածքները: Հողի խոշոր սեփականատերեր էին հնդկական տաճարները: Մանր կալվածատերերի գլխավոր զանգվածը կազմում էին

բրահմանները, որոնք որպես պարզև հողեր էին ստանում ավելի խոշոր հողային սեփականատերերից, այդ թվում և թագավորներից, ինչպես նաև համայնքի վարչական վերնախավը: Հողատիրության այս ձևերի հետ միասին զարգանում էր ամարամ պայմանական հույստիրությունը, որի տերերը կոչվում էին ամարանայականեր:

Մեծաթիվ էր ավելի մանր պայմանական հողատերերի՝ պալայակաների. միջնախավը: Որպես կանոն, պալայակաների պարտականությունն էր պահակային ծառայություն կատարել իր տիրույթի շրջանում:

Համայնական գյուղացիության դրությունը զգալիորեն վատացավ ավելի վաղ ժամանակաշրջանի համեմատությամբ: Համայնական գյուղացիության զգալի մասը փաստորեն ճորտական կախման մեջ էր ֆեոդալներից: Տաճարային կալվածքներում լայնորեն կիրառվում էր կոռային համակարգը, սակայն շահագործման տիրապետող ձևը մթերային ռենտան էր:

2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Վաղ ֆեոդալական միապետություններում (իսկ այդպիսիք առաջացան Հյուսիսային և Հարավային Հնդկաստանում, օրինակ Խարչայի, Պրատիխարների, Պալերի, Պալավների, Չոլաների և այլ տիրույթներում) նվաճված տարածքների կառավարողները վասալական հարաբերության մեջ էին պետության ղեկավարի հետ: Որպես կանոն, նրանք շարունակում էին իշխանությունը պահպանել իրենց հպատակների նկատմամբ և գերագույն միապետին նրանց ենթարկվելը սովորաբար արտահայտվում էր միայն տուրք վճարելու և ռազմական օգնություն ցույց տալու մեջ:

Ֆեոդալական միապետի իշխանությունը ժտանգաբար անցնում էր նրա տոհմին: Ըստ սովորության նրան հաջորդում էր ավագ որդին: Գահակալության նպատակով երկպառակտություններից խուսափելու համար թագավորը դեռևս կենդանության ժամանակ նրան հայտարարում էր թագաժառանգ ու դարձնում համատեղ կառավարող կամ նշանակում էր այս կամ այն մարզի փոխարքա, սակայն ավելի հաճախ իր անձնական անվտանգության համար պահում էր որպես իր խորհրդի անդամ: Անվտանգության սովորույթի խախտումը սովորաբար առաջ էր բերում ֆեոդալական խռովություններ:

Միապետը գլխավորում էր զինվորական, քաղաքացիական և դատա-

կան կազմակերպություններ: Այս ֆունկցիաների իրականացման գործում նրան օգնում էր բարձրաստիճան պաշտոնյաների խորհուրդը, որը կազմված էր կառավարող տոհմի ներկայացուցիչներից, աշխարհիկ ֆեոդալական ազնվականներից և բրահմայական դասին պատկանող մարդկանցից:

Պետությունը վաչական, հարկային և զինվորական կառավարման նպատակով բաժանվում էր մարզերի և շրջանների՝ պետության ղեկավարի կողմից նշանակված փոխարքաներով: Որպես կանոն, մարզերի կառավարիչ նշանակվում էին կառավարող դինաստիայի անդամներ: Մարզերի և շրջանների փոխարքաներն ունեին իշխանության տարբեր աստիճաններ: Նրանց հիմնական պարտականությունն էր պաշտպանել իրենց տարածքն արտաքին թշնամիներից, տուրք գանձել վասալներից, հարկեր՝ գյուղացիներից, վարել դատի ու դատարանի գործը հայատակների նկատմամբ: Առավել արտոնյալ վասալները պետական հողեր էին նվիրում կամ շնորհում իրենց անունից: Փոխարքաները նշանակում էին ավելի փոքր վարչական միավորների պետերին, որոնք հաճախ կալող էին լինել նրանց ընտանիքի անդամները:

Ստորին վարչական միավորը գյուղն էր, որի գլուխ կանգնած էր տանուտերը: Եթե գլխավոր գյուղից անջատվում էին նոր գյուղեր, ապա այնտեղ ընտրում էին իրենց տանուտերը, որը մեծ գյուղի տանուտերի հետ միասին մասնակցում էր ամբողջ գյուղական համայնքի շահերը շոշափող հարցերի լուծմանը: Տանուտերերը պաշտպանում էին գյուղի շահերը, գլխավորում համայնքի կյանքը ղեկավարող գյուղխորհուրդները («փանչայաթներ»-ինգյակներ): Կարևորագույն հարցերը լուծվում էին համայնքներում ընտանիքների գլխավորների ներկայությամբ:

XVI դարի սկզբին Հնդկաստանը գտնվում էր քաղաքական մասնատվածության շրջանում: Հյուսիսում Քաշմիրը, Սինդը, Մուլթանը, Գուջարաթը, Ջայփուրը, Մավլան, Բենգալիան և Բիհարն իրենցից ներկայացնում էին ինքնուրույն պետություններ: Հյուսիսային Հնդկաստանի ամենախոշոր պետությունում Դելիի սուլթանաթում, որտեղ կառավարում էր աֆղանական Լոդի դինաստիան, սուլթանների իրական իշխանությունը մայրաքաղաքի շրջապատի սահմաններից դուրս չէր տարածվում: Հարավային Հնդկաստանում XVI դարի սկզբին առավել նշանավոր պետություններ էին Բիջափուրի, Գոլկոնդայի, Ահմեդնագարի, Բիլաթի և Բեյարի թագավորությունները: Ավելի հարավ՝ Կրիշնա գետից այն կողմ գտնվում էր Վիջայանագար կայսրությունը, որտեղ տիրապետող էին ինդուս ֆեոդալները:

Պետական կարգն ամրապնդելու և իշխանությունն ուժեղացնելու

նպատակով միապետները հաճախ էին դիմում բարեփոխումների: Այսպես, օրինակ, Հյուսիսային Հնդկաստանի կառավարող փաղիշահ Աքբարը (1556-1605թթ.) ձեռնամուխ եղավ մի շարք միջոցառումների իրա-կանացմանը, որոնք պետք է ամրապնդեին լայնածավալ, սակայն ներսից թուլացած բազմազգ պետությունը: Ֆեոդալական կարգերի հիմքը կայսրության մեջ առաջվա պես կազմում էր հողի նկատմամբ ֆեոդալական պետության սեփականությունը, որը չէր բացառում ֆեոդալական հողատիրության տարբեր ձևերի առկայությունը: Աքբարի կենտրոնացման քաղաքականության նպատակն էր ուժեղացնել հողի պետական ֆեոդալական սեփականության տիրապետությունը, որը շատ, թե քիչ իրականացավ: Հարկային բարեփոխումը հաստատում էր, որ ռենտա-հարկը յուրաքանչյուր գյուղացու տնտեսությունից գանձվում է առանձին-առանձին: Հարկի չափերը փոխվում էին հողի որակի և մշակվող բերքի համեմատ: Մթերային ռենտան փոխարինվեց դրամականով:

Հողային բարեփոխումը դուր չափով թեթևացրեց գյուղացիության վիճակը: Սակայն հարկային նոր համակարգը գյուղացիական տնտեսության վրա ունեցավ քայքայիչ ազդեցություն: Այն ամրապնդեց ֆեոդալական պետության սեփականությունը հողի նկատմամբ:

Իրավունքը: Միջնադարյան Հնդկաստանի իրավունքն իր բնորոշ գծերով մոտ էր կանգնած Հին Հնդկաստանի իրավունքին: Այս ժամանակաշրջանում իրավական նորմերի ընդհանուր հսկողությունը կողքին (իսկ դրանց թիվը գնալով ավելանում էր) հանդես եկան նաև այլ ժողովածուներ՝ նիբանդագներ, որոնք, ըստ էության, նշված հավաքածուների (դիսարմաշաստրաների) մեկնաբանություններ էին: Դրանք, միաժամանակ լուծում էին տարբեր նորմատիվ-իրավական ակտերի միջև առաջացած հակասությունները: Նիբանդագները ծնունդ առան XI դարից և գործեցին մինչև XVII դարի վերջը: Նրանցից ոմանք ներառում էին ամբողջական նորմեր, մյուսները՝ իրավունքի առանձին ինստիտուտներ:

XI-XIII դդ. Հնդկաստանում ձևավորվում են իրավունքի մի շարք դպրոցներ, որոնք տարբերվում էին հասարակական հարաբերությունների կարգավորման առարկաններով ու մեթոդներով: Հիմնականում տարածված էր Դայաբխագի և Միտակշարի դպրոցների ուսումնքը:

Միջնադարյան Հնդկաստանում իրավունքի հիմնական և դասական աղբյուր էին ոչ թե աշխարհիկ իշխանությունների օրենքներն ու դատական մարմինների որոշումները, այլ՝ իրավաբան գիտնականների աշխատությունները և հատկապես նրանց մեկնաբանումներն ու իրավական նորմերի հավաքածուները, որոնք իրենց բովանդակությամբ,

կարելի է ասել, բազմաձևավալ ու համակարգված սովորութեան իրավունք էին:

Հին սովորույթները, նախկինի պես, շարունակում էին մնալ իրավունքի աղբյուր: Սովորույթների ճանաչման ու կիրառման բնագավառում հիմնական դերը կատարում էին քուրմ իրավաբանները: Ժամանակի ընթացքում սովորութային իրավունքը կիրառելի դարձավ Պանչայատ կաստայում և պետական մարմինների կողմից դարձավ անընդունելի: Դրանք ավելի շատ կրում էին կրոնական և բարոյական բնույթ:

XVIդ. մուսուլմանական տիրապետությունն արգելք հանդիսացավ միջնադարյան Հնդկաստանի իրավունքի ամրապնդմանն ու զարգացմանը:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ բնդհանրապես միջնադարյան Հնդկաստանի պետական կառավարման, իշխանության իրականացման, ինչպես նաև իրավական կարգի ձևավորման վրա իր ներգործությունն ունեցավ Եվրոպական երկրների գաղութային քաղաքականությունը:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նոր ժամանակաշրջանի պետության և իրավունքի պատմությունը գրականության մեջ ընդունված է բաժանել երկու փուլերի, որոնց թվագրման հետ կապված համոզիչում ենք մասնագետների տալիքեր կարծիքների: Մենք նույնպես միանում ենք ծանրակշիւ մասնագետների այն կարծիքին, ըստ որի պետության և իրավունքի պատմության նոր շրջանը բաժանվում է հետևյալ երկու փուլերի. 1) 1640-1870 թթ. և 2) 1870-1917 թթ.:

Առաջին էտապը սկսվում է անգլիական բուրժուական հեղափոխությամբ, որը ֆեոդալիզմի դեմ մղած պայքարում ունեցավ համաշխարհային նշանակություն: Ըիշտ է, բուրժուական առաջին հեղափոխությունը տեղի էր ունեցել Նիդեռլանդներում (այժմ՝ Հոլանդիա) դեռևս XVI դարում, բայց այն չհամարվեց նոր պատմության սկիզբը, քանի որ Նիդեռլանդներում տեղի ունեցած հեղափոխության հաղթանակը տնտեսական մեծ նշանակություն ունեցավ միայն այդ երկրի համար, իսկ մյուս երկրների վրա այն ազդեց մասնավորապես որոշ բնագավառների վրա (օրինակ, միաջազգային առևտրի և գաղութային քաղաքականության վրա)¹: Բացի այդ՝ նիդեռլանդական հեղափոխությունը իր նշանակությամբ և պատմական սկզբունքներով, որոնց լուսաբանումը սույն առարկայի խնդիր չէ, չէր կարող համեմատվել անգլիական բուրժուական հեղափոխության հետ: Այս պատճառով էլ վերջինս է համարվում նոր պատմության շրջանի սկիզբը: Անգլիական բուրժուական հեղափոխությունը պատմության մեջ մտել է որպես բուրժուազիայի և նրա ազնվա-կանության միջև փոխզիջումով ավարտված հեղափոխություն²:

¹ Всемирная история, т. 5, М., 1958, էջ 7:

² Ապիյան Ն., Անգլիական բուրժուական հեղափոխության դասերը, տե՛ս «Պետություն և իրավունք» հանդեսը, N 1, Երևան, 1998, էջ 21:

Բուրժուական պետության և իրավունքի ձևավորման ընթացքը կախված էր զարգացման տարբեր ճանապարհներով և ոչ միանշանակ տեմպերով անցած առանձին երկրների կոնկրետ պատմական առանձնահատկություններից:

Ֆեոդալական կարգերի դեմ մղված պայքարում բուրժուազիան հենվում էր աշխատավոր զանգվածների հեղափոխական ելույթների վրա և հասնում հաղթանակի: Նա կարողացավ բացարձակ միապետությունը փոխարինել սահմանադրական միապետությամբ կամ հանրապետական կարգերի հաստատմամբ: Պայքարի արդյունքում բուրժուազիան հասավ գոյծադիր իշխանության վրա ներկայացուցչական մարմինների գերակայության հաստատմանը, մի շարք պաշտոնատար անձանց ընտրովիությանը, օրենսդիր և պետական այլ մարմինների ձևավորմանը:

Նոր շրջանի առաջին փուլում բուրժուազիան հուշակելով ազատության և հավասարության սկզբունքները, վերացրեց դասային սահմանափակումները: Բոլոր քաղաքացիները հավասար իրավունքների հետ մեկտեղ ձեռք բերեցին քաղաքական ազատություններ (խոսքի, մամուլի և այլն): Սակայն, պետք է նշել, որ բուրժուական պետություններում էլ դեմոկրատիան կրում էր սահմանափակ բնույթ: Բուրժուական իրավունքում հավասարության և ազատության սկզբունքներն ամենից առաջ անհրաժեշտ էին սեփականատերերին, քանի որ պայմանագրում կողմերի ազատության և հավասարության անվան տակ նրանք ստացան վարձու աշխատանքի շահագործման անսահմանափակ ազատություն:

Բուրժուական պետականության զարգացման ընթացքում պատմական իրադարձությունների, ինչպես նաև հասարակության պետական և իրավական կառուցվածքի վրա ազդելու նպատակով ժողովրդական զանգվածների համար ստեղծվեցին լայն հնարավորություններ: Բուրժուական քաղաքական և իրավական համակարգի վերջնական ձևավորումն ուղեկցվում էր տնտեսական լիբերալիզմի սկզբունքների օրենսդրական ամրապնդմամբ:

Նոր շրջանի առաջին փուլում հասարակության տնտեսական և քաղաքական կյանքի զարգացման հետևանքով բարձրանում է ներկայացուցչական մարմնի (պառլամենտի) հեղինակությունը, վերանում կամ փոփոխվում են գույքային ցեմզերը, օրինականացվում են արհմիությունները, կրճատվում է կանանց և երեխաների աշխատաժամանակի տևողությունը:

XVII-XIXդդ. բուրժուական պետականության զարգացումը ուղեկցվում էր գաղութային քաղաքականությանը զուգընթաց, որը կործանարար նշանակություն ունեցավ Ասիայի և Աֆրիկայի շատ

երկրների համար:

Նոր պատմության ստաջին փուլն ավարտվում է 1870-71 թթ. ֆրանս-պրուսական պատերազմով և 1870 թ. սեպտեմբերի 4-ի ֆրանսիական բուրժուական հեղափոխությամբ:

Բուրժուական պետության և իրավունքի պատմության երկրորդ փուլն ընդգրկում է 1870-1917 թթ. ընկած ժամանակահատվածը: Այն սկսվում է Փարիզի կոմունայի հաղթանակով: Այս ժամանակաշրջանում սկսում է տեղի ունենալ արդյունաբերական և բանկային կապիտալի կենտրոնացումն առանձին միավորումների՝ տրեստների, կարտելների, սինդիկատների, կոնցեռների ձեռքում: Այդ պրոցեսի հետևանքով ձևավորվում են հզոր մոնոպոլիաներ, որոնք վճռական դեր խաղացին երկրի տնտեսական և քաղաքական կյանքում:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին բարձրանում է արհմիությունների դերը, ձևավորվում են քաղաքական կուսակցություններ: Պաշտամենտներում պատգամավորական տեղեր են զրավում նաև սոցիալ-դեմոկրատները:

Հիշյալ ժամանակաշրջանում արդյունաբերության զարգացման տեմպերով աչքի էին ընկնում Անգլիան (XIX դ. վերջ), Գերմանիան (XX դ. սկիզբ), ԱՄՆ (XX դ.): Սրվում են քաղաքական կուսակցությունների միջև հակասությունները՝ պետական ապարատում տեղ գրավելու նպատակով: Նոր պայմաններում փոխվում է բուրժուազիայի վերաբերմունքը տնտեսական լիբերալիզմի և տնտեսական կյանքին շահագործող քաղաքականության նկատմամբ:

Բուրժուական հասարակության քաղաքական-իրավական ոլորտի զարգացման վրա մեծ ազդեցություն է թողել նաև բուրժուական երկրների միջև հակասությունների սրումը, որի նպատակն էր վերափոխել աշխարհի քարտեզը: Դա էլ հանգեցրեց առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918 թթ.), որով էլ ավարտվում է նոր ժամանակաշրջանի պետության և իրավունքի պատմության երկրորդ փուլը:

2. ԲՈՒՐՇՈՒԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Բուրժուական հեղափոխությունների հաղթանակը հանգեցրեց նոր հասարակական հարաբերությունների հաստատմանը, որն էլ իր հերթին նպաստեց նոր, բուրժուական իրավունքի ձևավորմանն ու զարգացմանը:

Այդ հաղթանակը չէր կարող իր ազդեցությունը չունենալ ազգային-իրավական համակարգերի սկզբնավորման ու զարգացման վրա:

Պահպանելով ֆեոդալական իրավունքին բնորոշ մի շարք սկզբունքներ, բուրժուական իրավունքը ձևավորվեց կատարելագործված, նոր սկզբունքների հիման վրա: Սկզբունքներ, որոնք իրենց հաստատուն տեղը գտան մեր կողմից ուսումնասիրվող երկրների սահմանադրությունների մեջ: Այդ սկզբունքներն էին օրենքի միասնականությունը, իրավահավասարությունը, օրինականությունը և ազատությունը:

Բուրժուական հեղափոխությունների գլխավոր խնդիրներից էր ողջ երկրում միասնական իրավունքի հաստատումը: Ստացվել էր այնպես, որ երկրի մի մասում գործում էր իրավական այնպիսի նորմ, որն, ըստ էության, տարբերվում էր երկրի մյուս մասերում գործող նորմերից: Այդ ամենն արգելակում էր նոր արտադրահարաբերությունների զարգացմանը և հարված հասցնում, ամենից առաջ, բուրժուազիայի շահերին: Այս պատճառով էլ իրավական միասնական համակարգի ստեղծումը դարձավ բուրժուական հեղափոխությունների գլխավոր խնդիրը: Այդ խնդրի լուծման մի քանի տարբերակներ առաջ քաշվեցին դեռևս հեղափոխության ընթացքում, որոնցից մեկն էլ հանդիսացավ տվյալ երկրի տարածքում միևնույն իրավական նորմերի կիրառումը: Սակայն հեղափոխության շրջանում ընդունված օրենքները վերաբերում էին առանձին հարցերի կարգավորմանը և չնպաստեցին միասնական իրավական համակարգի վերջնական ձևավորմանը: Միայն այն բանից հետո, երբ բուրժուազիան նվաճեց իշխանությունը և ամրապնդեց իր դիրքերը, միասնական ազգային համակարգի ձևավորումը, որն այնքան մեծ նշանակություն ունեցավ տնտեսական հարաբերությունների զարգացման համար, դարձավ իրական:

Բուրժուական հասարակությունում մեծ դեր էր խաղում պայմանագիրը, որի հիման վրա կարգավորվում էին այն հարաբերությունները, որոնք առաջանում էին մի կողմից՝ ձեռնարկությունների, մյուս կողմից՝ ձեռնարկությունների և քաղաքացիների միջև: Պայմանագրերն ընկած էին նաև ընտանեկան հարաբերությունների հիմքում:

Ցանկացած պայմանագրի կնքման մախաղոյալ էր համարվում ազատ քաղաքացիների իրավահավասարությունը և իրավաունակությունը: Մինչ բուրժուական հեղափոխությունները, բոլոր քաղաքացիների համար իրավահավասարություն գոյություն չուներ: Հաշվի էր առնվում անձի դասային պատկանությունը: Մեծ արտոնություններ ունեին ազնվականները և հոգևորականները, գյուղացիների իրավունքները

սահմանափակ էին: Սահմանափակ իրավունքներից էին օգտվում նաև կանայք: Գաղութներում դեռևս կային ստրուկներ: Այս և շատ այլ սահմանափակումներ, ըստ էության, վերացվեցին բուրժուական հեղափոխություններից հետո: Այս կամ այն չափով հաստատվեց քաղաքացիների իրավահավասարություն:

Իրավահավասարության սկզբունքը ծնում է արդարության, հասարակության բոլոր երևույթներն օբյեկտիվորեն վերլուծելու և ճիշտ եզրակացությունների հանգելու գաղափար: Այն սերտորեն կապված է օրինականության սկզբունքի հետ: Իրավահավասարություն նշանակում է ունենալ ոչ միայն հավասար իրավունքներ, այլ նաև՝ հավասար պարտականություններ: Բոլոր քաղաքացիները հավասարապես էին պատասխանատու օրենքի առաջ:

Օրինականությունն այն կարևորագույն սկզբունքներից մեկն է, որը նշանակում է, որ բոլոր քաղաքացիները (անկախ պաշտոնեական դիրքից) պարտավոր են հարգել օրենքը և ղեկավարվել նրա տառով: Բոլոր քաղաքացիները պարտավոր են լինել օրենքի գերին: Միայն այս դեպքում, ինչպես նշել է Յիցեբոնը, մարդը կալող է ապրել ազատ ու անկաշկանդ:

Օրինականության դրսևորումներից մեկը բոլոր քաղաքացիների և իրավաբանական անձանց օրինաչափ վարքագիծն է: Օրինաչափությունն ապահովում է քաղաքական և տնտեսական հարաբերությունների կայունությունը, որն էլ իր հերթին նպաստում է հասարակության զարգացմանը:

Բուրժուական իրավունքում կարևորագույն սկզբունք էր նաև ազատությունը՝ այդ բառի ամենալայն իմաստով: Ազատության սկզբունքն անխախտելիորեն կապված էր օրինականության սկզբունքի հետ: Լինել օրինական, նշանակում է լինել ազատ: Մասնավոր սեփականության և պայմանագրերի ազատությունը նպաստում էր ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը:

Նշված սկզբունքները կազմում էին բուրժուական իրավունքի ամբողջությունը: Առանձին երկրներ ունեին իրավունքի ազգային համակարգ՝ իրենց բնորոշ առանձնահատկություններով: Չնայած այդ համակարգի բազմազանությանը, այնուամենայնիվ, այն կարելի է առաձևացնել երկու հիմնական խմբերի մեջ:

Առաջին խումբը կազմում էր մայրցամաքային Եվրոպայի երկրների և նրանց ընդօրինակած պետությունների իրավական համակարգը: Իրավական այս համակարգը զարգացավ XIX դ. ֆրանսիական իրավունքի ազդեցության տակ, իսկ XX դ. նրա զարգացմանը նպաստեց նաև գերմանական իրավունքը: Այս համակարգին բնորոշ էր այն, որ

իրավունքը բաժանվում էր մասնավորի և հանրայինի: Մասնավոր իրավունքը պաշտպանում էր մասնավոր անձանց օրինական շահերը՝ առանձին անձանց և առանձին պետությունների հանցավոր ոտնձգություններից:

Մասնավոր իրավունքն իր մեջ ներառում էր քաղաքացիական, առևտրային, ընտանեկան իրավունքները:

Ի տարբերություն մասնավորի, հանրային իրավունքը սահմանում էր իշխանության և կառավարման մարմինների գործունեության ու կազմավորման կարգը և ցանկացած ոտնձգությունից պաշտպանում էր ամբողջ հասարակության և պետության շահերը: Հանրային իրավունքն իր մեջ ներառում էր սահմանադրական, վարչական, միջազգային, քրեական և դատավարական իրավունքները:

Մայրցամաքային իրավական համակարգի կարևորագույն առանձնահատկություններից էր նաև այն, որ այստեղ իրավունքը հստակ տարաբաժանվում էր նյութականի և դատավարականի, և իրավունքի հիմնական աղբյուրը համարվում էր օրենքը: Դատարանները չէին զբաղվում իրավաստեղծ գործունեությամբ, այլ կիրառում էին արդեն ստեղծված իրավական նորմերը՝ կոնկրետ դեպքերում: Հիշյալ համակարգն աչքի էր ընկնում ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի համակարգմամբ:

Երկրորդ խումբը կազմում էր անգլո-սաքսոնական իրավական համակարգը, որը ձևավորվել էր Անգլիայի ընդհանուր իրավունքի հիման վրա (այն առաջացել է XI-XII դդ.): Իրավական այս համակարգին հայտնի չէր իրավունքի բաժանումը հանրայինի և մասնավորի, նյութականի և դատավարականի:

Անգլո-սաքսոնական երկրներում չկային իրավունքի այնպիսի ճյուղեր, ինչպիսիք կային մայրցամաքային Եվրոպայում: Այստեղ բացակայում էր նաև օրենսդրության համակարգումը: Այս երկրներում իրավունքի հիմնական աղբյուրը դատական նախադեպն էր, որը պարտադիր էր բոլոր դատարանների համար՝ համանման գործ քննելու դեպքում: Դատարանը ստեղծում էր նորմեր, որոնք, սակայն կազուալ բնույթ էին կրում:

Անգլո-սաքսոնական երկրներում օրենքը և իրավունքը չէին համընկնում: Պառլամենտի կողմից ընդունված օրենքները կյանք էին մտնում այն դեպքում, երբ այն ընդունվում և կիրառվում էր դատարանի կողմից: Այս երկրներում որպես իրավունքի աղբյուր նշանակալից դեր խաղացին սովորույթները և սահմանադրական համաձայնագրերը: Վերջինս լայնորեն կիրառվում էր պետական իշխանության իրականացման

ուրրտում:

**Անգլո-սաքսոնական իրավունքին յուրահատուկ էին մի շարք ինստի-
տուտներ և հասկացություններ, որոնք չկային մյուս երկրների
իրավունքում:**

ԲԱԺԻՆ 5

ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՐԵՎԱՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 16

ԱՆԳԼԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Ը ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ

596

XVII դարն Արևմտյան Եվրոպայի երկրների պատմությանը հայտնի է որպես ճգնաժամի ժամանակաշրջան: Դճնաժամ, որն ընդգրկեց Արևմտյան Եվրոպայի մեծ մասը և իր ազդեցությունը բողեց նրա հասարակական կյանքի բոլոր կողմերի վրա: Այս ժամանակաշրջանում ~~ամօզիտական բուրժուական~~ ~~հեղափոխությունն~~ ազդարարեց նոր դարաշրջանի սկիզբը, դրեց նոր, բուրժուական հասարակության սկզբունքների հիմքը, ~~անշրջելի դարձրեց~~ բուրժուական հասարակական-քաղաքական կարգերի ձևավորման պրոցեսը ոչ միայն Անգլիայում, այլև ամբողջ Եվրոպայում:

Սոցիալական ուժերի տեղաբաշխումը հեղափոխության նախօրեին: Նախահեղափոխական Անգլիայի հասարակության քաղաքական-տնտեսական նկարագիրը որոշում էին երկու տնտեսական կացութաձևերը. նորը՝ կապիտալիստականը և հինը՝ ֆեոդալականը: Գլխավոր դերը պատկանում էր կապիտալիստական կացութաձևին: Եվրոպական մյուս երկրների համեմատ Անգլիայում կապիտալիստական հարաբերություններն ավելի արագ էին զարգանում: Այս երկրի զարգացման առանձնահատկությունը նրանում էր, որ միջնադարյան տնտեսությունը գյուղում ավելի շուտ սկսեց քայքայվել, ջան թե քաղաքում և ընթանում էր իրական հեղափոխական ճանապարհով: Անգլիական գյուղատնտեսությունն արյունաբերությունից ավելի շուտ դարձավ կապիտալի եկամտաբեր մեքլորման շահավետ օբյեկտ, ~~կապիտալիստական տիպի տնտեսության~~ ~~դարձ~~:

Այս պատճառով էլ հենց անգլիական գյուղը դարձավ սոցիալական բախման կենտրոն: Անգլիական գյուղում տեղի էր ունենում գյուղացիության հողազրկումը և կապիտալիստական վարձակալ - դասակարգի ձևավորում: Գյուղացիների հողազրկումը հասավ նրան, որ ոչնչացվեցին բազմաթիվ գյուղեր, հազարավոր գյուղացիներ դարձան քափառաշրջիկներ: Միահեծանությամբ, որն արգելափակում էր կապիտալիզմի զարգացմանը, չէր կարող աշխատանքով ապահովել հսկայ մարդիկին: Կառավարության գործունեությունը համազգային քափառաշրջիկների և առողջ մուրացկանների դեմ օրենսդրության ընդունմամբ, որը նախատեսում էր պատիժներ և հարկադրական աշխատանքի կիրառում: Անգլիայի բնակչության 9/10-ը մասը կազմում էին այն անձինք, որոնք զրկված էին պառլամենտի անդամների ընտրությանը մասնակցելու իրավունքից (օրավարձու բանվորներ, արհեստավորներ և այլք): Այսպես սեռի բնակչության միայն 1/10-ը մասն իրավունք ուներ մասնակցելու կառավարմանը:

Նախաինքափոխական ժամանակաշրջանի Անգլիայի հասարակական կառուցվածքի հատկապես ուշագրավ գիծ է հանդիսանում ազնվականության բաժանումը երկու մասի՝ հին և նոր (բուրժուականացված) ազնվականության: Նախահեղափոխական ժամանակաշրջանի Անգլիայի արդյունաբերության և առևտրի պատմությունը նշանակալից չափով ստեղծվում էր նոր ազնվականության կողմից: Այս առանձնահատկությունը XVII դ. 40-ական թվականների հեղափոխությանը տվեց պատմական յուրօրինակություն և կանխորոշեց նրա բնույթն ու վերջնական արդյունքը:

Այսպիսով, ֆեոդալական և բուրժուական Անգլիայի միջև սոցիալական կոնֆլիկտն իր մեջ ընդգրկել էր բնակչության տարբեր խավերին:

XVII դարի Անգլիական հեղափոխության կարևորագույն առանձնահատկություններից է նրա սոցիալ-դասակարգային և քաղաքական նպատակների յուրօրինակ գաղափարախոսության ձևավորումը: Ապստամբների համար մարտական տեսության դեր էր կատարում Ռեֆորմացիայի գաղափարախոսությունը՝ պայլիտանիզմի ձևով¹:

Պարիտանիզմը որպես կրոնական ուղղություն Անգլիայում առաջացել է հեղափոխական իրադրությունից դեռ շատ առաջ, բայց XVII դ. 20-30-ական թթ. այն վերածվեց հակամիապետական լայն ընդդիմադիր խմբերի գաղափարախոսության: Հեղափոխության ընթացքում պարիտանիզմը բաժանվում է տարբեր ուղղությունների. 1) Պրեփորմացիանությունը միավորում էր խաշոր բուրժուազիային ու հողային ազնվականությանը և քարտուս էր ստանապակային միապետության գաղափարը, 2) Բնդեպարտմենտականությունը իր մեջ մերտուս էր միջին և մանր բուր-

¹Haller W., Liberty and Reformation in the Puritan revolution. New York, 1955, էջ 17:

ծուազիային: Համաձայն լինելով սահմանադրական միապետության ընդհանուր գաղափարի հետ, ինդեպենդենտները, միաժամանակ պահանջում էին ընտրական տարածքների վերաբաշխում, որպեսզի պառլամենտում ավելացնեն իրենց ներկայացուցիչների թիվը: Նրանք ձգտում էին հասնել խղճի և խոսքի ազատության ճանաչմանը, 3) Առավել ռադիկալ էր Լեվելլեյների շարժումը, որը համախմբում էր անդենտավորներին ու ազատ գյուղացիներին, որոնք պահանջում էին հանրապետություն՝ հաստատում և բոլոր քաղաքացիների իրավահավասարություն:

Հեղափոխության նախադրյալները: Անգլիայում նորածին բուրժուազիան բացարձակ միապետությանն աջակցեց այնքան ժողովրդական, քանի դեռ վերջինս չէր լուծարվում բուրժուազիա ընդդեմ թագավորությանն ընդդեմ: Իսկ երբ միապետությունն արգելք հանդիսացավ կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը, նա զրկվեց արդեն ուժեղացած բուրժուազիայի աջակցությունից, որը, ըստ էության, չէր զգում թագավորի իրազեկությունը և մասոխճանաբար դառնում էր ընդդիմադիր ուժ: Միապետության սոցիալական հիմքը թուլանում էր այնքանով, որքանով «նոր ազնվականությունը» ավելի վճռականորեն էր միանում բուրժուազիայի դիրքաշրջմանը: Անգլիական պառլամենտն արտացոլեց երկրում ուժերի նոր հարաբերակցությունը, որը ներկայացված էր մի կողմից լորդերի, մյուս կողմից՝ համայնքների պալատներում:

Դրա հետ մեկտեղ անգլիական միապետությունը, գտնվելով ճգնաժամի ամենացածր փուլում, իր արտաքին և ներքին քաղաքականությունը վարում էր, հաշվի առնելով պալատական և մասամբ զավառային ազնվականության նեղ շրջանի շահերը: Նրանք նույն պայմաններում կազմում էին միապետության հիմնական սոցիալական հենարանը: Ի պատասխան դրա, բուրժուազիան հրաժարվում էր թագավորին դրամական միջոցներով աջակցելուց:

Այսպիսով, թագավորի և պառլամենտի միջև ավարտվում է ներդաշնակությունը, իսկ դասակարգային կոնֆլիկտը մի կողմից բուրժուազիայի և նոր ազնվականության, մյուս կողմից՝ ֆեոդալական միապետության միջև ձեռք է բերում թագավորի և պառլամենտի միջև սահմանադրական կոնֆլիկտի ձև:

Այդ բախումն աչքի է ընկնում Ստյուարտների կառավարման ժամանակ և իր զագաթնակետին է հասնում Կառլոս I օրոք (1628 թ)՝ պառլամենտի կողմից թագավորին «Իրավունքի մասին հանրազիր» («պետիցիա») տալու կապակցությամբ: 1628 թ. հանրազիրը (պետիցիան) 11 հոդվածից բաղկացած կարևորագույն մի փաստաթուղթ է, որը սկսվում է երկրի նախ-

¹ Батыр К.И., Всеобщая история государства и права, М., 2000, т.2 112:

կին օրենքների խախտումները նշելով (հատկապես Էդուարդ I և Էդուարդ III թագավորների օրոք տեղի ունեցած խախտումները): Հուլիսի 1-ում ամրագրված է այն դրույթը, որ ոչ մի հարկ չի կայադ մտցվել առանց պառլամենտի համաձայնության¹: Գրեթե կրկնելով 1215 թ. «Ազատությունների Մեծ Խարտիայի» 39 հոդվածը, պետիցիան հոդ. 3 -ում ամրագրված դրույթով հիշեցնում է, որ ոչ մի ազատ մարդ չի կայադ ձեռքակալվել, բանտարկվել, հուլյց գրկվել կամ արսորվել առանց դատավճռի²:

Պետիցիան առարկում է բնակչության մոտ զինվորների և նավաստիների հաճախակի օքևանման, ինչպես նաև ռազմական դրոյթյուն մտցնելու դեմ (հոդ. 6): Նշելով մահապատիժների բազմաթիվ դեպքեր, որոնք հսկառակ երկրի ավորություններին կայացնում էին դատարանները, պետիցիան նշում է, որ իսկական հանցագործները, բարձրաստիճան պաշտոնյաների «դեմքով» մնում են անպատիժ:

Տասներորդ հոդվածով ստորին պալատը խնդրում էր առանց պառլամենտի համաձայնության չսահմանել հարկեր, չպատժել նրանց, ովքեր կիրառարվեն անօրինական վարկեր մուծելուց, ոչ մեկին չձեռքակալել՝ առանց դատարանի որոշման:

Ընդհանուր առմամբ Պետիցիայի բովանդակության մեջ ուշադրություն է գրավում այն փաստը, որ ընդդիմությունը, ի հակակշիռ թագավորի բացարձակ հավակնությունների, պայքարում էր հին, իրական ազատությունների վերականգնման, և ոչ թե նորի սահմանման համար:

Կառլոս I-ը, այնուամենայնիվ, հարկադրված եղավ հաստատել իրավունքի մասին պետիցիան և այն դարձավ օրենք:

Թագավորի և պառլամենտի միջև նոր բախումը տեղի է ունենում 1629 թ., երբ Կառլոս I-ը ցրեց պառլամենտը և սկսեց միանձնյա կառավարել երկիրը:

XVII դ. 20-ական թթ. քաղաքական ճգնաժամը կարելի է բնութագրել որպես մի ամբողջ ժամանակաշրջան, երբ նախաձեռնությունն անցավ համայնքների պալատին:

Կարճատև պառլամենտ: Անգլիայում առանց պառլամենտի կառավարումն իրականանում է մինչև 1640 թ.: Դա թագավորական իշխանության լիովին ինքնակամության ժամանակաշրջան է, որի արդյունքներից մեկն էլ Շոտլանդիայում զինված ապստամբությունն էր: Այն սպառնաց Անգլիային:

Զինվորական անհաջողությունները Կառլոս I-ին հարկադրեցին հրա-

¹ Петиция о правах (1628г.), տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 5:

² Նույնը, հոդ. 3:

վիրել պառլամենտ: Այդ պառլամենտը գործեց 1640 թ. ապրիլի 13-ից մինչև մայիսի 5-ը և պատմությանը հայտնի է «Կարճատև պառլամենտ» անունով: Թագավորը համայնքների պալատից խնդրեց լուծել շոտլանդացիների դեմ պատերազմ մղելու համար նպաստներ տրամադրելու հարցը, սակայն վերջինս սկսեց քննադատել Կառլոս I-ին, նրա միտնոնյա կառավարման տարիներին վարած քաղաքականությունը: Հայտնարվեց, որ եթե չաճեցվածքներ իրավունքների չարաչափման բացառմանը նպաստող բարենորոգումներ, ապա համայնքների պալատը ընդհանրապես կհրաժարվի թագավորին նպաստներ տրամադրելուց: Այս հակասությունների կիզակետում էլ թագավորը ցրեց պառլամենտը: Սակայն, հասկանալով, որ առանց պառլամենտի չի հաջողվի դուրս գալ ռազմական և քաղաքական ճգնաժամից, մա 1640 թ. նոյեմբերին հրավիրեց նոր պառլամենտ, որը հայտնի է «Երկարատև պառլամենտ» անունով¹:

Երկարատև պառլամենտ: Երկարատև պառլամենտը գործեց 1640 թ. նոյեմբերից մինչև 1653 թ.: Նրա գործունեությամբ էլ սկսվում է հեղափոխության առաջին փուլը:

Ընդհանուր առմամբ անգլիական բուրժուական հեղափոխության պատմությունն ընդունված է բաժանել 4 փուլի. 1) սահմանադրական միապետության փուլ (1640 թ. նոյեմբերի 3-ից մինչև 1642 թ. օգոստոսի 22), 2) առաջին քաղաքացիական պատերազմի շրջան (1642-1646թթ.), 3) հեղափոխության դեմոկրատական բովանդակության խորացման համար պայքարի ժամանակաշրջան (1646-1649 թթ.), 4) անկախ ինդեպենդենտական հանրապետության հաստատման շրջան (1649-1653 թթ.):

Երկարատև պառլամենտի ընտրությունները չտվեցին թագավորի համար սպասելի արդյունքներ: Պառլամենտն իրեն ապահովելու համար հենց սկզբից ընդունեց իրավական ուժ ունեցող երկու կարևորագույն փաստաթղթեր, որոնցից մեկը 1641 թ. փետրվարի 15-ին ընդունված «Երեքամյա ակտն» էր: Այն մախատեսում էր յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ պառլամենտի իրավիրում ամկախ թագավորի կամրից: 1641 թ. մայիսի 10-ի ընդունված ակտով հայտատվում է այն դրույթը, ըստ որի թագավորը չի կարող ցրել պառլամենտն առանց վերջինիս սեփական որոշման: 1641թ. ընդունված մի շարք ակտերով ոչնչացվեցին թագավորական միապետության այնպիսի հիմնարկներ, ինչպիսիք էին Աստղային պալատը և Բարձր հանձնաժողովը:

1641 թ. դեկտեմբերի 1-ին պառլամենտն ընդունեց «Մեծ Ռեմոնստրա-

¹ Лавровский В.М., Барг М.А., Английская буржуазная революция, М., 158 էջ 5:
² Трехгодичный акт 15 февраля, 1641г., in:u Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 9-10:

ցիա» ակտը, որում շարադրված էր հեղափոխության լազնակիցների ծրագիրը: «Ռեմոնստրացիան» մատնանշում է այն «վտանգավոր» շարժումը, որն ուղղված էր պետական կարգի և կրոնի դեմ: Այս շարժումը դեկավարայ «չարաբաստիկ» կուսակցության գործողություններով էր բացատրվում թե՛ Շոտլանդիայի հետ պատերազմը, թե՛ Իռլանդիայում ծագած ապստամբությունը, և թե՛ սահմանադրական բախումը թագավորի ու պառլամենտի միջև: Այս ակտով պահանջվում էր լոռեյի պալատից հեռացնել եպիսկոպոսներին և թուլացնել նրանց իշխանությունը հպատակների վրա¹: Այդ նպատակով առաջարկվում էր եկեղեցու վերաբերյալ անցկացնել վերափոխում: Ակտը, ըստ էության, զարգացնում էր սեփականության անձեռնմխելիության գաղափարը: Մյ շարք հողվածներով արգելվում էր համայնական հողերն անօրինակա՞ն կարգով ցանկապատելը:

Համայնքների պալատը 11 ձայնի առավելությամբ հաստատեց «Մեծ Ռեմոնստրացիան», որը բաղկացած է 204 պարագրաֆներից: Նրա վերջին պարագրաֆները բովանդակում են կարևոր քաղաքական դրայթներ: Պառլամենտը պահանջում էր նախարարների գործունեության վրա հսկողություն իրականացնելու իրավունքը: Դրանով կյանքի կոչվեց բուրժուական պառլամենտարիզմի հիմնական սկզբունքը, որն Անգլիայում վերջնականորեն ձևավորվեց միայն XVIII դարում²:

Երկարատև պառլամենտի կողմից ընդունված բոլոր փաստաթղթերն ուղղված էին թագավորական իշխանության սահմանափակմանը և սահմանադրական միապետության հաստատմանը³: Իսկ թե ինչու էր Գառլուս I-ը համաձայնություն տալիս բոլոր սահմանադրական ակտերին, կարելի է բացատրել զինված լոռեյների սարսափով: Դրանով սահմանադրական ընդհարումը ոչ միայն սպառվեց, այլ նաև 1642 թ. աշնանը վերածվեց զինված բախման:

Քաղաքացիական պատերազմ: Քաղաքացիական պատերազմը կարելի է բաժանել 2 փուլի. 1) երբ զինվորական ղեկավարությունը գտնվում էր Պրեսբիտերականների ձեռքում, 2) երբ այդ ղեկավարությունն անցավ ինդեպենդենտներին:

Պատերազմի առաջին փուլում առավելությունը թագավորական բանակի կողմն էր: Պառլամենտապետ բանակի անհաջողությունները ստիպեցին նրան իրականացնել վերափոխում Կրոմվելի առաջարկած ծրագրով: Նորամուծության իտեղծումով ստեղծվեց բանակ, որը կոչվեց «Նոր

¹ Великая ремонстрация, in: X Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 14-15:

² Всемирная история, т. 5, М., 1958, էջ 45:

³ Английская буржуазная революция XVII в., под. ред. Косминского Е.А. и Левицкого Я.А., т. 2, М. 1954, էջ 248:

մոլե»: Ջինվորներ էին հավաքվում ռազմական ծագում ունեցող մայրկանցից, բանակը ենթարկվում էր մեկ ղեկավարության, զինվորական բարձր պաշտոնների նշանակվում էին ժողովրդից:

Կրոմվեկն ինդեպենդենտ էր և ապահովում էր ինդեպենդենտական համայնքների ղեկավարող ղեքը բանակում: Նա կարողացավ հասնել նրան, որ ազնվականներին զինվորական ղեկավարությունից հեռացնելու համար ընդունվի «Ինքնահրաժարման մասին բիլլը», որի համաձայն պառլամենտի անդամները բանակում չէին կարող գրավել ղեկավար պաշտոններ: Այս առումով բացառություն արվեց միայն Կրոմվելի համար:

1645թ. թագավորական զորքերը պարտություն կրեցին, իսկ թագաւորը փախավ Շոտլանդիա, որտեղից էլ հանձնվեց պառլամենտին:

Այլ ժամանակ ավելի ակնհայտ են երևում պառլամենտի և բանակի միջև տարածայնությունները: Պառլամենտի աշխատանքներին մասնակցող պրեսբիտերականների համար հեղափոխությունն ըստ էության ավարտված էր: Նրանց բավարարում էր պառլամենտի գերակայության գաղափարը: Պառլամենտ, որը երկրում իշխանությունն իրականացնում էր թագավորի հետ միասին: Ինդեպենդենտները և հատկապես լեվելերները պահանջում էին ավելի արագադեմ բարեփոխություններ:

Ինդեպենդենտների և պրեսբիտերականների միջև վայրբար արվեց 1648 թ. գարնանը, երբ սկսվեց Երկրորդ քաղաքացիական պատերազմը, որը սանձազերծեցին թագավորը և պրեսբիտերական պառլամենտը: Միայն լեվելերների աջակցությունն ապահովեց ինդեպենդենտական բանակի հաղթանակը¹:

Հարթանակից հետո Կրոմվելը պառլամենտից հեռացրեց այն ակտիվ անդամներին, ովքեր պատկանում էին պրեսբիտերականներին: Պառլամենտի մյուս անդամները կազմեցին ինդեպենդենտներին ենթարկվող մասը²:

Ինդեպենդենտական հանրապետություն: 1649 թ. թագավորի մահապատժից հետո պառլամենտն Անգլիան հայտարարեց հանրապետություն: Լորդերի պալատը լուծարվեց: Համայնքների պալատն իրեն ռոյալտարարեց անգլիական պետության գերագույն իշխանություն: Գերագույն գործադիր մարմին դարձավ Պետական խորհուրդը: Նրա խնդիրներն էին՝ միապետության վերականգնման դեմ ակտիվ գործողություններ ծավալելը, երկրի զինված ուժերի, առևտրի և արտաքին քաղաքականության կառավարման իրականացումը, հարկերի սահմանումը:

Հանրապետությունը, որը նվաճվեց ժողովրդի արյան գնով, ոչինչ

¹ Frank I., The Levellers, Cambridge 1955, էջ 34:
² Левин Г.Р., Вторая гражданская война в Англии и Левеллерское движение, Ленинград, 1955, էջ 328:

չտվեց հանրությանը: Դա էլ նրա թուլության գլխավոր պատճառն էր և կործանման նախալրջալը:

Կրոնվեյի պրոտեկտորատը: Ժամանակի ընթացքում Կրոնվեյի իշխանությունը վերածվեց անձնական դիկտատուրայի: Աջակցություն չստանալով պառլամենտում, Կրոնվեյը 1653 թ. վերացրեց այն:

1653 թ. դեկտեմբերի 16-ին ընդունվեց սահմանադրական ակտ, որը կոչվեց «Կառավարման գործիք» և ամրապնդեց Կրոնվեյի ռազմական դիկտատուրան: Այս ակտը, ըստ էության, արտացոլում էր Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ու նրանց պատկանող տիրույթներում գոյություն ունեցող կառավարման ձևը: 42 հոդվածներից բաղկացած սահմանադրական ակտի համաձայն բարձրագույն օրենսդրական իշխանությունը կենտրոնանում էր «լորդ-պրետեկտորի» և պառլամենտի ձեռքում¹: Պառլամենտն ուներ մեկ պալատ: Ընտրություններին մասնակցելով՝ համար սահմանվեց բավականին բարձր գույքային ցենզ, որը հարյուր անգամ ավելի բարձր էր քան նախահեղափոխական շրջանում սահմանված ցենզը: Պրոտեկտորատի խորհրդարանը չդարձավ ժողովրդի ներկայացուցչական մարմինը: Նրա դերի նվազեցումը սկսվեց նրանից, որ վանչանդսի հիմքը կազմող բանակի և նավատորմի պահպանության հարկերը դարձվեցին մշտական, այսինքն՝ կախված չեն խորհրդարանից²: Բարձրագույն գործադիր իշխանությունն իրականացնում էր լորդ-պրետեկտորը՝ պետական խորհրդի հետ համատեղ, որը կազմված էր 13-ից ոչ պակաս և 21-ից ոչ ավել անդամներից (հայ. 2): Խորհրդի անդամների նշանակումը կախված էր լորդ-պրոտեկտորից: Պառլամենտի նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում լորդ-պրետեկտորը ղեկավարում էր զինված ուժերը, իրականացնում էր դիվանագիտական հարաբերություններ մյուս պետությունների հետ, նշանակում բարձրագույն պաշտոնատար անձանց: Սահմանադրական վերոհիշյալ ակտի 33 հոդվածի համաձայն Կրոնվեյը համարվում էր ցմահ լորդ-պրոտեկտոր նշված պետությունների ու նրանց պատկանող տիրույթների վրա:

Դրանով ամրապնդվում էր նրա անձնական դիկտատուրան: Օգտվելով նրանից Կրոնվեյը շուտով դադարեցնում է պառլամենտի գործունեությունը, իսկ Պետական խորհրդի անդամներին նշանակում էր իր հայեցողությամբ: 1657 թ. վերականգնվեց վերին պալատը: Տեղերում կառավարումը կենտրոնացվեց Կրոնվեյի բանակի զեներալների ձեռքում:

Այսպիսով, «Կառավարման գործիք» սահմանադրական ակտը, որն

1. Ապիյան Ն., Անգլիական բուրժուական հեղափոխության դասերը, տե՛ս «Պետություն և իրավունք» հանդեսը, N 1, Երևան, 1998, էջ 24:

2. Орудие управления, илп. 1, տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 86:

արտահայտում էր բուրժուազիայի և նոր ազնվականության դասակարգա-
յին շահերը, որոնք ձգտում էին թույլ չտալ միապետության վերականգնու-
մը, այնուամենայնիվ, իր մեջ պարունակում էր միապետական դրույթներ:
Այդ ~~ժամանակաշրջանից էլ սկսվում է շարժումը հանրապետությունից դե-
պի միապետություն:~~

Ստյուարտների վերականգնումը: 1658 թ. Կրոմվելի մահն արագացրեց
իրադարձությունների զարգացման ընթացքը: Ռոյալ ժամանակով իշխա-
նությունն անգամ նրա ողորի՝ Ռիչարդ Կրոմվելին, որը չուներ մեծ հեղինա-
կություն և չէր կարող ազդել հասարակության վրա: 1659 թ. Երկարատև
պառլամենտի մնացորդն իրեն հայտարարեց սահմանադիր իշխանություն
և 1660 թ. գահին բարձրացրեց Կառլոս II -ին՝ մահապատժի ենթարկված
թագավորի որդուն: 1660 թ. ապրիլի 4-ին հրապարակելով «Բրեդական հռ-
չակագիրը» նոր թագավորը խոսք է տալիս պահպանել ազնվականների և
բուրժուազիայի հեղափոխական նվաճումները և չհետապնդել նրանց, ով-
քեր պատերազմի տարիներին պայքարում էին թագավորի դեմ: Նա խղճի
ազատությամբ վրջ էր անում և հանգստացնում տարբեր դավանանքի տեր
մարդկանց¹: Թագավորի տրված խոստումները իրականություն չդարձան:
Միապետության վերականգնումն ուղեկցվում էր հին կարգերի վերած-
նունդով:

Այդ տարիներին Անգլիայում սկսում են գործել երկու քաղաքական
կուսակցություններ: Նրանցից մեկը, որն այն ժամանակ կոչվում էր Տոբի,
համախմբում էր թագավորի բոլոր կողմնակիցներին, նրա իշխանության
ուժեղացման բոլոր համախոհներին, իսկ երկրորդ կուսակցությունը՝ Վիգե-
րը, ներկայացնում էր բուրժուազիայի և միջին ազնվականության շահերը:
Վիգերի կուսակցությունը կազմում էր բնորոշություն թագավորի նկատ-
մամբ:

Երկար ժամանակ Անգլիայի պառլամենտում իշխում էին տուրիների
ներկայացուցիչները: Վիգերը, գտնվելով ընդդիմության մեջ և ենթարկվե-
լով հետապնդումներին, փորձում էին պառլամենտով անցկացնել քաղա-
քացիների անձեռնմխելիության երաշխիքների մասին օրենքը: Դա նրանց
հաջողվեց անել միայն 1679 թ., երբ վիգերն ունեին մեծամասնություն պառ-
լամենտում: Նոր օրենքը կոչվում էր «Հաբեաս Կորպուս ակտ» (Habeas
Corpus): Համաձայն այս օրենքի յուրաքանչյուր բանտարկված անձը կա-
րող էր անձամբ կամ բարեկամների միջոցով դիմել Անգլիայի գերագույն
դատարաններից մեկին, պահանջելով տալ Հաբեաս Կորպուսի մասին
հրամանը: Համաձայն այդ հրամանի, անձը, որի տրամադրության տակ էր
գտնվում ձերբակալվածը, վախենալով տուժածի օգտին խոշոր տուգանք

¹ Бредская декларация, 4 апреля 1660г., in: в Хрестоматия по Всеобщей истории
государства и права, т. 2, М., 1996, էջ 24-25:

մուծելուց, պետք է մեկ օրվա ընթացքում ձերբակալվածին բերել դատարան և նշեր ձերբակալման պատճառները: Դատարանը քննելով ձերբակալման պատճառները, որոշում էր կայացնում ձերբակալվածին մինչև դատն ազատելու, ձերբակալված բողնելու, կամ լիավին ազատելու մասին¹:

Անձը, որն ազատված էր «Հաբեաս Կորպուսի» հրամանի հիման վրա, չէր կարող երկրորդ անգամ ձերբակալվել նույն պատճառով: Կրկնակի ձերբակալման համար մեղավոր անձը ենթարկվում էր տուգանքի 500 ֆունտ ստեռլինգի չափով: Նույն չափով տուգանքի էր ենթարկվում նաև այն դատավորը, ով հրաժարվում էր տալ «Հաբեաս Կորպուսի» մասին հրամանը:

1679 թ. մայիսի 26-ի ակտը չէր տարածվում այն անձանց վրա, ովքեր ձերբակալվել էին պետական ղավաճանության կամ ծանր հանցագործության կատարման համար, ինչպես նաև այն անձանց վրա, ովքեր ձերբակալվել էին քաղաքացիական գործերով:

Պատվամեծությամբ պահպանեց ժողովրդական հուզումների կամ ռազմական գործողությունների ժամանակ «Հաբեաս Կորպուս» ակտը դադարեցնելու իր իրավունքը: Այս ակտի նշանակությունը վիզական պառլամենտի անդամների և նրանց կողմնակիցների անձեռնմխելիության երաշխիքի ստեղծումն էր: Ավելի ուշ ակտը դարձավ Անգլիայի սահմանադրական կարևորագույն փաստաթղթերից մեկը:

Հաբեաս Կորպուս ակտը հաստատվեց Կառլոս II-ի կողմից այն պայմանով, որ վիզերը չեն առարկի. եթե գահն անցնի Հակոբ II-ին: Դա առաջին սահմանադրական փոխզիջումն էր հետհեղափոխական Անգլիայում, որի պատմությունը զարգանում էր նմանաբնույթ փոխզիջումների ազդեցության տակ:

Նոր թագավոր Հակոբ II-ը գահ բարձրացավ 1685թ.: Նա հակաբուրժուական քաղաքականությունն այնքան բացահայտ էր անցկացնում, որ պառլամենտը, որի մեծամասնությունը կազմում էին տորիները, չէր համարձակվում աջակցել նրան: Այս պայմաններում տորիները և վիզերը միանում են և կատարում հեղափոխություն: Այս իրադարձության հետևանքով անգլիական գահ բարձրացավ Նիդեռլանդների փոխարքա Վիլիելմ Օրանսկին: Այդ պահից Անգլիայում վերջնականորեն հաստատվեց սահմանադրական միապետությունը:

Նոր փոխզիջման էությունն այն էր, որ քաղաքական լիշխանությունն ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում մնում էր հողի սեփականատերերի ձեռքում: Նրանք պարտավոր էին պահպանել բուրժուազիայի շահերը:

¹ Habcas Corpus Act, 29 мая 1679, տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 117-118:

Իրավունքի մասին բիլլը: Գահ բարձրանալով թագավորը ստորագրեց «Իրավունքների մասին հռչակագիրը»: որը հետագայում կոչվեց «Բիլլ իրավունքների մասին»:

Ըստ «Բիլլի» թագավորն իրավունք չուներ. 1) առանց պառլամենտի համաձայնության դադարեցնել օրենքների գործողությունները. 2) որևէ մեկին ազատել օրենքների ազդեցությունից. 3) թույլատրել որևէ բացառում: Թագավորն առանց պառլամենտի համաձայնության չէր կարող իր օգտին հավաքել որևէ հարկ: Նա գորահավասար կազմակերպելիս նույնպես հաշվի էր առնելու պառլամենտի համաձայնությունը¹:

Պառլամենտի ընտրությունները պետք է լինեին ազատ: Պառլամենտում ապահովվում էր խոսքի և վիճարանությունների ազատությունը: Այնտեղ ելույթ ունենալու համար հենապարտք խստիվ արգելվում էր:

Թագավորի հպատակներն իրավունք ունեին խնդրանքներով դիմելու նրան:

Բիլլն արգելում էր պահանջել չափից ավելի մեծ գրավներ և տուգանքներ: Չէր թույլատրվում գործածել պատիժներ, որոնք օրենքով նախատեսված չէին:

Այսպիսով, «Իրավունքների մասին Բիլլը» իշխանության մարմինների համակարգում սահմանում էր պառլամենտի տեղը և նրան օրենսդրության ոլորտում տալիս բայն իրավասություններ: «Բիլլը» սահմանազատում էր գործադիր և օրենսդիր իշխանությունները: Թագավորը պառլամենտի հետ մեկտեղ մասնակցում էր օրենսդրական գործունեությանը: Նրան էր պատկանում բացարձակ վետոյի իրավունքը: Բացի դրանից, թագավորն իրականացնում էր գործադիր և դատական իշխանությունը:

Կառավարման մասին ակտը: 1701 թ. հունիսի 12-ին ընդունվում է ևս մեկ շատ կարևոր սահմանադրական օրենք: Այն կոչվում է «Ակտ կառավարման մասին» կամ «գահաժառանգության մասին օրենք»: Այս օրենքում կարևոր տեղ է գրավում գահաժառանգության հարցը: Բացի դրանից, օրենքը նախատեսում էր թագավորական իշխանության սահմանափակում հոգուտ պառլամենտի:

Բայց Անգլիայի սահմանադրական կարգի զարգացման համար հատկապես կարևորագույն նշանակություն ունեին հաջորդ երկու դյույթները: Դրանցից մեկը սահմանում էր այսպես կոչված հակատպագրական սկզբունքը, որի համաձայն թագավորի կողմից հրապարակված ակտերը, կյանք կարող էին մտնել միայն համապատասխան նախարարի ստորագրության ակայության դեպքում²:

¹ Билль о правах 1689г., см.в Международные акты о правах человека, М., 2000, т.9 14:
² Акт об устроении 12 июня 1701г., см.в Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, т.2 135:

Մյուս կարևոր դրույթը կայանում էր դատավորների անփոփոխելիության սկզբունքի հաստատումն էն: Մյնչև այդ դատավորները մնում էին իրենց պաշտոններին այնքան ժամանակ, երբ դա «ցանկալի էր թագավորին»: Հիմա նրանք կատարում էին իրենց պարտականություններն այնքան ժամանակ «քանի դեռ իրենց լավ էին պահում»: Պաշտոնից հեռացնել կարելի էր միայն պառլամենտի թույլտվությամբ: Այս դրույթը շատ կարևոր նշանակություն ուներ անգլիական սահմանադրության զարգացման համար, քանի որ դրանով դատական իշխանությունն առանձնանում էր գործադիր իշխանությունից:

Այսպիսով, կարելի է ասել, որ անգլիական սահմանադրությունն ամրագրում էր իշխանությունների տարածաշրջանային գաղափարը:

2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՌԼԱՍԵՆՏԱՐԻՉՄԻ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ XVIII-XIX դդ.

Վերևում նշեցինք, որ XVIII դ. վերջում Անգլիայում ընդունվեցին երեք կարևորագույն սահմանադրական օրենքներ, որոնք կազմեցին անգլիական սահմանադրության գրավոր մասը: Այդ սահմանադրության առանձնահատկությունն այն էր, որ այն իրենից չէր ներկայացնում միասնական օրենսդրական ակտ: Առանձին գրավոր օրենքների հետ մեկտեղ անգլիական սահմանադրության կարևոր մաս էին կազմում չօրված, պայմանական կամոնները, որոնք հաստատվեցին պրակտիկայում և դարձան սահմանադրական նախադեպ: Հենց այս կանոնների հաստատումն ամրապնդում էր XVIII դարում անգլիական սահմանադրության զարգացումը: Այդ կանոններից էին նախարարների կաբինետի նիստերին թագավորի մասնակցության արգելումը, ընտրություններում հաղթած կուսակցություններից կառավարության ձևավորումը, նախարարների կաբինետի կողմից պատասխանատվությունը, վետոյի իրավունքից թագավորի հրաժարականը և այլն¹:

XVIII դ. Անգլիայի սահմանադրական կարգի զարգացման մեջ կարելի է նշել երկու կարևոր ուղղություններ՝ պառլամենտի բարձրացումը և նախարարների կաբինետի կազմավորումը:

Պառլամենտ: Ինչպես և նախկինում, Անգլիայի պառլամենտը կազմված էր երկու պալատներից: Վերին պալատում (լորդերի պալատ) մարդիկ

¹ Акт об устройении 12 июня 1701г., տես Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 136:

² Лисневский Э.В., История государства и права Великобритании (1870-1917гг.), Ростов, 1957, էջ 17:

տեղեր էին գրադեցնում ժառանգարար. ըստ պաշտոնի. կամ ըստ թագավորի նշանակման:

Ստորին պալատը (համայնքների պալատ) կազմվում էր ընտրական իրավունքի ուղիղ վրա: Երկու քաղաքական կուսակցությունները (տորի և վիգեր) ձգտում էին սահմանափակել ընտրողների շրջանը՝ մեղացիական կազմով, սակայն վիգերը պաշտովաժողովում էին գործառն ցեղը՝ ընդհանրապես, իսկ տորիները՝ միայն իռլանդացի ցեղը:

1710 թ. հրապարակվեց մի օրենք, ըստ որի պառլամենտի անդամ կարող էին դառնալ այն անձինք, ովքեր գյուղական վայրերում ունեին անշարժ գույքից մոտ 500 ֆունտ ստեռլինգի չափով եկամուտ, իսկ քաղաքներում՝ 300 ֆունտ ստեռլինգի չափով եկամուտ: Ազնվականության հիմնական հենարան էին հանդիսանում, այսպես կոչված, «գրպանային» և «փտած» վայրերը, որոնք պառլամենտ էին ուղարկում իրենց ներկայացուցիչներին համապատասխան լիազորագրերով (այդպիսի լիազորագրեր գործում էին միջին դարերում):

Ազնվականությունն իր քաղաքական գերակշռությունն ապահովում էր նաև ընտրողների և Ստորին պալատի անդամների կաշառումով: Ստորին պալատի անդամներին խոստանում էին պաշտոններ: Ավելին, եթե 1701 թ. Կառավարման մասին ակտն արգելում էր Ստորին պալատի անդամի կոչման համատեղումը պետական պաշտոն գրավելու հետ, ապա 1706 թ. ընդունվեց մի ակտ, որով պետական պաշտոն զբաղեցնող Ստորին պալատի անդամը կարող էր վերընտրվել պառլամենտում, եթե ինքը համաձայն էր:

Այսպիսով, Ստորին պալատն իր սոցիալական կազմով քիչ էր տարբերվում վերին պալատից և ապահովում էր ազնվականության մեծամասնությունը պառլամենտում: Անգլիական ազնվականությունն ինքնամփոփ խավ չէր, նրա շարքերը համալրվում էին հարստացած արյունաբերողներով, վաճառականներով: Այն ներկայացնում էր ոչ միայն իր, այլև բուրժուազիայի շահերը, որը նույնպես սոցիալական կյանքում ապահովում էր ազնվականության ղեկավար դերը¹:

Պառլամենտի այսքան որոշակի սոցիալական կազմն ապահովում էր ազնվականության իրավասությունների ընդլայնման հնարավորությունը: Տիրապետող դասակարգերը չէին վախենում ամբողջ իշխանությունը նրան հանձնելուց:

1707 թվականից թագավորական իշխանությունը դադարեց օգտվել վետոյի իրավունքից. որանով ամբողջ օրենսդիր իշխանությունն աճեցավ պառլամենտին: Ժամանակ առ ժամանակ ընդլայնվում էին Ստորին պալատի լիազորությունները: 1716 թ. ակտով նրա գործունեության ժամկետը

¹ Лоуэлли А.Л., Государственный строй Англии, М., 915, էջ 17:

սահմանվեց երեքից մինչև յոթ տարի ժամանակով: Իրանով ավելի ակնհայտ դարձավ պառլամենտի անկախությունն իր ընտրողներից: Պառլամենտի նիստերը տեղի էին ունենում գաղտնի, և այն անձինք, ովքեր վեճ էին առաջացնում պառլամենտում, ենթարկվում էին հետապնդման:

Նախարարների կաբինետ: XVIII դ. Անգլիայում ձևավորվում է նախարարների կաբինետը՝ մի մարմին, որը հատուկ տեղ էր գրավում պետական համակարգում:

Չրկելով թագավորին օրենսդրական իշխանությունից, պառլամենտը ձգտում էր գործադիր բնագավառում սահմանափակել նրա գործունեությունը, հեռացնել կաբինետի գործերի կառավարումից և վերջինիս գործունեությունը վերցնել իր հսկողության տակ: Դա հաջողությամբ իրականացվում էր սահմանադրական նախադեպի օգնությամբ:

Նախարարների կաբինետի ինքնուրույնությունն ապահովող կանոններից մեկի համաձայն նախարարների կաբինետը նիստ կարող էր անցկացնել առանց թագավորի: XVIII դ. 20-ական թվականների կեսերից թագավորը չի մասնակցում նախարարների կաբինետի նիստերին, ինչն ազատում էր նրա անդամներին անմիջական թագավորական ճնշումից, նպաստում էր այդ մարմնի ինքնուրույնության մեծացմանը և պրեմիեր-նախարարի պաշտոնի ձևավորմանը:

Թագավորի հետ կաբինետի փոխհարաբերությունների փոփոխմանը նպաստում էր միապետի անպատասխանատվության սկզբունքի ընդունումը, որն արտահայտվում էր «թագավորը սխալ չի կարող լինել» բանաձևում: Այդ սկզբունքի հաստատումը զրկում էր նրան ռեալ իշխանությունից: Իր բազմաթիվ արտոնություններից թագավորը ոչ մեկը չէր կարող ինքնուրույն իրագործել:

Կաբինետի անդամների վրա պատասխանատվություն դնելը նրանց դրեց պառլամենտի հսկողության տակ: Պառլամենտի առաջ կաբինետի անդամների քաղաքական պատասխանատվությունն արտահայտվում էր կաբինետի անդամի հրաժարականի մեջ: Կաբինետի քաղաքականությունը չստացավ համայնքների պալատի աջակցությունը: XVIII դ. I կեսին կաբինետի անդամների պառլամենտական պատասխանատվությունը կրում էր անհատական բնույթ: Նախարարների համապարտ պատասխանատվությունը որպես անգլիական պառլամենտարիզմի զարգացած կարևորագույն սկզբունք ձևավորվեց XVIII դ. վերջում:

Նշված ժամանակաշրջանում սահմանափակվեց թագավորի իրավունքը՝ պետական բարձրագույն պաշտոնատար անձանց նշանակման և ազատման բնագավառում: Եվ դա եղավ նշանակման ու ազատման այն գոր-

ծունեորից մեկը, որի թուլացրեց թագավորի ազդեցությունը կաբինետի վրա: Դա կապված էր պառլամենտի և քաղաքական կուսակցությունների ուժեղացման հետ: Թուրքավորը ստիպված էր հաշվի նստել պառլամենտական մեծամասնության կարծիքի հետ: Այսպես, 1727 թ. Գեորգի II-ն ազատեց համայնքների պալատի աջակցությունից օգտվող Ուոլսլոյին. սակայն շուտով ստիպված էր նրան վերադարձնել իշխանություն. քանի որ պառլամենտը չհաստատեց թագավորի համար ցանկալի գահաթերթը:

XVIII դ. կեսին անգլիական սահմանադրական պրակտիկայում սկսում է գործել մի նորմ, որի համաձայն թագավորը կաբինետի կարևորագույն պաշտոններին նշանակում էր միայն այն անձանց, ովքեր ունեին պառլամենտական մեծամասնության և նրա առաջնորդների աջակցությունը:

Թագավորի ազդեցության թուլացումը նախարարների կաբինետի վրա իր հերթին ուժեղացնում էր վերջինիս վրա պառլամենտի հսկողությունը:

XVIII դ. առաջին կեսում ձևակերպվեց չափազանց կարևոր մի սկզբունք, որը սահմանեց պառլամենտի հետ նախարարների կաբինետների փոխհարաբերության հիմքերը. կաբինետն իշխանության է մնում այնքան ժամանակ, քանի դեռ ունի համայնքների պալատի մեծամասնության աջակցությունը: Այս նոր հաստատումը կապված է հայտնի Ուոլսլոյի հետ: Նա իշխանության մեջ էր գտնվում մոտ քսան տարի, բայց երբ Ստորին պալատի մեծամասնությունը հանդես եկավ նրա քաղաքականության դեմ, Ուոլսլոյը և նրա ընկերները հրաժարական տվեցին՝ հիմք դնելով նոր սահմանադրական պրակտիկային: Վերջապես, 1782 թ. Նորսի կաբինետը համայնքների պալատի հետ քաղաքական տարաձայնությունների հետևանքով ամբողջությամբ հրաժարական տվեց: Ակնհայտ էր դառնում, որ անհնար էր կառավարել պառլամենտի և հատկապես համայնքների պալատի հետ ընդհարվելու դեպքում: Մանավանդ, երբ համայնքների պալատից էր կախված բյուջեի հաստատումը: Պառլամենտի համագործակցությունը կաբինետի հետ երաշխավորվում էր այն դեպքերում, երբ վերջինս կազմվում էր պառլամենտական կուսակցական մեծամասնության առաջնորդներից: Կարող ենք նշել, որ կաբինետը ձևավորվում էր կուսակցությունների հիման վրա:

Այսպիսով, XVIII դ. ընթացքում անգլիական կաբինետը դարձավ թագավորից առանձին պետական գործերով կառավարման բարձրագույն մարմին, որը կազմված էր պետության հիմնական պաշտոնատար անձանցից՝ պառլամենտում մեծամասնություն կազմող կուսակցությունների առաջնորդներից, և կողեկտիվ պատասխանատու էր համայնքների պալատի առաջ: Այսպիսի կառավարությունը հայտնի է «Պատասխանատու կառա-

3. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Հասարակության դասակարգային կառուցվածքը: XVIII դ. վերջում XIX դ. սկզբում Անգլիայում տեղի էր ունենում արդյունաբերության բուռն զարգացում, որի հետևանքով վերանում է մանր արհեստագործությունը, աճում են նոր արդյունաբերական կենտրոններ: Լոնդոնը վերածվեց համաշխարհային նշանակություն ունեցող առևտրական և ֆինանսական կենտրոնի: Արդյունաբերական հեղաշրջումը կյանքի կոչեց բավականին ծանր վիճակում գտնվող պրոլետարիատին: Նրա տնտեսական վիճակը ծանրացավ հատկապես լճացման, արդյունաբերական արտադրության և առևտրի անկման տախներին: Արդյունաբերական հեղաշրջումն իր ազդեցությունը թողեց գյուղի վրա, որտեղ տեղի ունեցավ ագրարային հեղափոխություն: Հողի մանր վարձակալումը դուրս մղվեց խոշոր կապիտալիստական ֆերմերությամբ: Գյուղական վայրերում բնակչության մեծամասնությունը կազմում էին բատրակները, որոնք շահագործվում էին խոշոր ֆերմերների կողմից¹:

Այսպիսով, արդյունաբերական հեղաշրջումը և ագրարային հեղափոխությունը զգալիորեն փոխեցին հասարակության դասակարգային կառուցվածքը: Գյուղում առավել ակտիվ էին գործում լենդլորդերը, վարձակալ կուլակները և բատրակները: Քաղաքում ձևավորվեցին արդյունաբերական բուրժուազիան և պրոլետարիատը:

Քաղաքական համակարգը XIX դ. սկզբում: XIX դ. շեմին Անգլիայում ձևավորվել էր բավականին զարգացած քաղաքական համակարգ: Այդ ժամանակ իրենց դիրքերն ամրապնդեցին երկու կուսակցությունները՝ Տորիները և Վիգերը: Հասարակության դասակարգային կառուցվածքում տեղի ունեցած փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան մաս քաղաքական կուսակցությունների վրա: Փոխվեց այդ կուսակցությունների սոցիալական բազան: Տորիները լինելով սպահանդական, արտահայտում էին կալվածատերերի և ֆինանսական բուրժուազիայի շահերը: Այն իր վրա էր կրում պատմական սովորույթների ազդեցությունը: Ընդունելով նորը, տորիների կուսակցությունը ձգտում էր հնարավորին չափով պահպանել նրանում հինը: Վիգերը ներկայացնում էին արդյունաբերական բուրժուազիայի շահերը: Տորիների և վիգերի միջև իշխանության համար պայքարը, ըստ էության, պայքար էր առևտրա-ֆինանսական բուրժուազիայի և արդյունա-

¹ История государства и права зарубежных стран, под. ред. Галанзы П.Н., М., 1980, էջ 53:

քերական բուրժուազիայի միջև քաղաքական տիրապետման համար:

Կարևոր է նշել, որ այս երկու կուսակցությունները XVIII դ. ընթացքում հերթափոխում էին իշխանության մոտ և միայն նրանք մտան XIX դար:

1783 թ. տորիները համայնքների պալատում հանդես եկան մեծամասնությամբ: Նրանց տիրապետման ամրապնդմանը նպաստեց ֆրանսիական հեղափոխությունը: Տորիները կառավարեցին մինչև 1830 թվականը:

Այսբան երկար ժամանակ իշխանության մոտ գտնվելով տորիները փորձում էին փոխել պետական կառուցվածքում ուժերի փոխհարաբերությունը հոգուտ գործադիր իշխանության ուժեղացմանը, հատկապես թագավորական արտոնությունների ընդլայնմանը: Թագավորը նախկինի պես ձևակերպում էր պետության գլուխը: Նրա ձեռքում էր կենտրոնանում ամբողջ կառավարական իշխանությունը: Նա էր ներկայացնում երկիրը միջազգային հարաբերություններում, պատերազմ էր հայտարարում, նշանակում և ետ էր կանչում դեսպաններին: Նա համարվում էր զինված ուժերի գլխավոր հրամանատարը: Թագավորի անունից էին գործում գաղտնի խորհուրդը և պառլամենտը: Նա էր նշանակում և ազատում նախարարներին, իրավունք ուներ վաղաժամկետ ցրելու համայնքների պալատը, նշանակելու լորդերի պալատի նոր անդամներին: Սակայն, իր բազմաթիվ արտոնություններից ոչ մեկը թագավորը չէր կարող իրականացնել: Չգրված սահմանադրությունը ստեղծեց բուրժուական դրություն, որը զրկեց միապետությանն իր իրական բովանդակությունից: Նախարարների կաբինետների և նրա ղեկավարի գոյությունը չէր կարգավորվում ոչ մի օրենքով, այլ ամբողջությամբ որոշվում էր չգրված կանոններով:

Նախարարների կաբինետն իրենից ներկայացնում էր մի կոլեկտիվ, որի կազմը սահմանափակվում էր պառլամենտական մեծամասնությամբ: Դա ուժեղացնում էր նախարարների դիրքը թագավորի նկատմամբ և թուլացնում էր պառլամենտի հսկողությունը նախարարների վրա:

XIX դ. սկզբին անգլիական քաղաքական համակարգի ամենանշանավոր տարրը պառլամենտն էր: Հատուկ դեր էր խաղում համայնքների պալատը, որտեղ էլ իրականանում էր բուրժուազիայի և ազնվականության համագործակցությունը: Մինչդեռ, այդ պալատը իրենից ներկայացնում էր ֆեոդալական ներկայացուցչություն: Ընտրությունների հին նախահեղափոխական համակարգն ապահովում էր պառլամենտում ազնվականության և բուրժուազիայի տիրապետությունը: Իրերի այդպիսի դրությունը չէր կարող չառաջացնել ընտրական իրավունքի վերափոխությունների համար պայքար¹:

¹ Արչակյան Ա., Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն, պրակ. 2, Երևան, 1998, էջ 26:

Պայքար ընտրական վերափոխությունների համար: Նապոլեոնական պատերազմների ավարտից հետո Անգլիայի տնտեսությունն ապրում էր ժամանակավոր անկում: Անգլիայից ապրանքների արտահանումը նշանակալիորեն կրճատվեց: Ապրանքների վաճառքի ժամանակավոր կրճատումը նպաստեց արտադրության կրճատմանը և գործազրկության աճին:

Պատերազմների ավարտն ուղեկցվում էր հացի և այլ գյուղատնտեսական մթերքների գների իջեցմամբ: Լենդլոդերը վախենում էին, որ հացի ներմուծումն այլ երկրներից ավելի շատ կիջեցնի գները և կրեթի հողային ռենտայի անկմանը: Նրանք, ձգտելով ապահովել իրենց համար բարձր եկամուտներ, հասան նրան, որ 1815 թ. պառլամենտը օրենք ընդունեց հացի ներմուծման մասին: Համաձայն այդ օրենքի արգելվում էր հաց ներմուծել Անգլիա այն երկրներից, որտեղ հացահատիկի գինը մեկ կվարտերի համար 80 շիլլինգից ցածր էր: Հետագայում պառլամենտը թույլատրեց հացի ներմուծումը, եթե ներքին շուկայում հացահատիկի գինը մեկ կվարտերի համար 66 շիլլինգից ցածր չէր: Սակայն այլ երկրներից հացի ներմուծումն Անգլիա փաստորեն չէր իրականանում:

Արդյունաբերական և գյուղատնտեսական բանվորները սկսեցին պայքարել հացի մասին օրենքի դեմ, հույս ունենալով, որ դրա վերացումը կրեթի հացի գների էժանացմանը: Անգլիական արդյունաբերական բուրժուազիան իր հերթին թշնամաբար ընդունեց այդ օրենքները, քանի որ հացի բարձր գները խանգարում էին նրանց իջեցնել բանվորների աշխատավարձը:

Անգլիայում սկսվեցին ժողովրդական հուզումները, որոնց մասնակցում էին բանվորները, բատրակները, սնանկացած մանր բուրժուազիան: 1817 թ. կառավարությունը ժամանակավորապես դադարեցրեց Հաբեաս Կորպուս Ակտի գործողությունը և սկսեց հալածանքները: Իսկ երբ 1818 թվականից այդ օրենքը նորից մտավ ուժի մեջ, ժողովրդական հուզումները վերականգնվեցին:

Մանր բուրժուազիան և բանվորները պահանջում էին քաղաքական կարգի դեմոկրատացում և համընդհանուր ընտրական իրավունքի կիրառում: Քաղաքական պայքարը սրվեց 1830 թ., որին նպաստեց Ֆրանսիայի Հուլիսյան հեղափոխությունը: Այդ տարվա պառլամենտական ընտրությունները հաղթանակ բերեցին բարենորոգման կողմնակիցներին:

1831 թ. համայնքների պալատն ընդունեց բիլլ բարենորոգման մասին, որը սակայն, լուրջերը մերժեցին: Ի պատասխան դրա երկրում բարձրացավ հեղափոխական ելույթների ալիքը: 1832 թ. լորդերը ստիպված էին գնալ գիջման և հաստատել բարենորոգման բիլլը: 1832 թ. ընտրական ռեֆորմը, որը կոչվում էր «Ակտ ժողովրդական ներկայացուցչության մասին», ըստ էության առաջին պառլամենտական վերափոխումն էր Անգլիայում: Դրա-

նով 56 «փտած» վայրեր գրկվեցին պառլամենտում ներկայացուցչություն ունենալու իրավունքից (հոդված 1), 30 «փտած վայրեր» կարող էին պառլամենտ ուղարկել երկու պատգամավորի փոխարեն մեկին (հոդված 2): Լեֆորմով խոշոր արդյունաբերական քաղաքները պառլամենտական ներկայացուցչության իրավունք ստացան¹:

Այսպիսով, ռեֆորմի հետևանքով վերաբաշխվեցին մանդատները: Վերափոխումն ընտրական իրավունք վերապահեց 21 տարեկան հասած այն տղամարդկանց, ովքեր վճարում էին աղքատների հարկը և ունեին տարեկան 10 ֆունտ ստեռլինգից ոչ պակաս եկամուտ բերող անշարժ գույք (կոմսություններում՝ հողն էր, քաղաքներում՝ շինությունը):² Իրա հետևանքով ձայնի իրավունք ստացան հողային վարձակալները (նրանք մինչ այդ գրկված էին ընտրական իրավունքից), որոնք ունեին ռենտա ոչ պակաս տարեկան 50 ֆունտ ստեռլինգից: Ընտրական իրավունքից օգտվելու համար սահմանվեց նստակեցության ժամկետ՝ 6 ամիս ժամանակով:

Վերափոխման հետևանքով ընտրողների թիվը մեծացավ՝ հասնելով մինչև 652 հազար մարդու: Մակայն բանվորները և մանր բուրժուազիան, որոնք այդքան համառորեն պայքարում էին ընտրական իրավունքի համար, չօգտվեցին դրա պտուղներից: Չվերացվեց ընտրատարածքների անհավասարությունը և պահպանվեց բաց քվեարկությունը:

1832 թ. ռեֆորմն ապահովեց արդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցչությունը պառլամենտում: Այն հանդիսացավ արդյունաբերական բուրժուազիայի հետ հողատեր ազնվականության փոխգիջման արդյունք:

1832թ. վերափոխումը նշանակալից իրադարձություն էր Անգլիայի կյանքում: Այն երաժարվում էր ներկայացուցչական ֆեոդալական սովորույթներից և նպաստում էր համայնքների պալատի վերածմանը բուրժուական պառլամենտի: Վերափոխումն ապահովում էր արդյունաբերական բուրժուազիայի մուտքը պառլամենտ: Համայնքների պալատում դասակարգային կազմի փոփոխությունները թույլ տվեցին վերջնականորեն ամրապնդել կաբինետի ազատումը թագավորի կախվածությունից, քանի որ վերջինիս հենարան հանդիսացող ազնվականությունը չէր կարող համայնքների պալատում կազմել մեծամասնություն: Այդ ժամանակ էլ թագավորի արտոնությունները փոխանցվում են կաբինետին: Տեղի է ունենում պատասխանատու կառավարության սկզբունքի ամրապնդումը, որը մշակվել էր XVIII դարում: Նախարարական իշխանությունը մեխանիկորեն անցնում էր այն կուսակցության ձեռքը, որը պառլամենտում կազմում էր մեծա-

¹ Акт о народном представительстве, 1832г., տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 145-146:

մասնություն: Պատասխանատու կառավարության հասկացության հետ այդ ժամանակ ձևավորվեց մի սկզբունք, ըստ որի թագավորը թագավորում է, բայց չի կառավարում: Այս պայմանական, չգրված կանոնը հանդես էր գալիս որպես անգլիական պառլամենտարիզմի կարևորագույն հիմք:

1832 թ. ռեֆորմի հետևանքով վերափոխվում են քաղաքական կուսակցությունները: Կուսակցությունների նախկին անվանումները ժամանակակից իրադրության մեջ կորցնում են իրենց իմաստը և արդյունքն եղավ այն, որ տորիները դարձան պահպանողականներ, վիգերը՝ լիբերալներ: Ժամանակի հետ լիբերալիզմը և պահպանողականությունը դարձան հզոր քաղաքական հոսանքներ, որոնք նշանավորեցին բուրժուական հասարակության և պետության զարգացման մի ամբողջ ժամանակաշրջան:

Կուսակցությունների անվանումների հետ մեկտեղ փոխվեց և նրանց կառուցվածքը: Վերափոխումն ընդունելուց հետո առաջացավ ընտրողներին գրանցելու և ընտրողական ցուցակներ կազմելու անհրաժեշտությունը: Այս ֆունկցիաներն իրենց վրա վերցրին նոր ստեղծված տեղական կուսակցական կազմակերպությունները:

1832 թ. բարենորոգումը նպաստեց պետական ապարատի վերափոխմանը: Այդ վերափոխությունների հետևանքով ֆինանսների նախարարությունում վերացվեցին այնպիսի պաշտոններ, որոնք պահպանվել էին միջին դարերից և կորցրել իրենց նշանակությունը: Չգալիորեն պարզեցվել էր ռազմածովային նախարարությունը: Այդ ժամանակ բարձրանում էր ներքին գործերի և առևտրի նախարարությունների դերը:

Չարտիստական շարժումը: 1832 թ. վերափոխումը չբավարարեց Անգլիայի աշխատավոր զանգվածներին, որոնք ակտիվորեն պայքարել էին դրան հասնելու համար: 1836-1838 թթ. Անգլիայի տնտեսությունը կրկին ապրեց խոր ճգնաժամ: Այն ավելի ծանրացրեց անգլիական բանվորների դրությունը: Դա նպաստեց Անգլիայում բանվորական քաղաքական շարժման՝ շարտիզմի առաջացմանը:

1836թ. Լոնդոնում ստեղծվեց բանվորների միություն, որը ներկայացրեց հետևյալ պահանջները. 1) սահմանել համընդհանուր ընտրական իրավունք 21 տարին լրացած տղամարդկանց համար, ովքեր միևնույն գավառում ապրել են 6 ամսից ոչ պակաս ժամանակ, 2) վերացնել պառլամենտի պատգամավորի թեկնածուի համար սահմանված գույքային ցենզր, 3) սահմանել հավասար ներկայացուցչություն և ընտրատարածքների հավասարություն, 4) անցկացնել պառլամենտի ամենամյա ընտրություններ, 5) պատգամավորներին պարզևստրել աշխատանքի համար, 6) սահմանել գաղտնի քվեարկություն:

Այս պահանջները բանվորների համար շատ հանրամատչելի էին:

Նրանք գտնում էին, որ նվաճելով համընդհանուր ընտրական իրավունք, կկարողանան հասնել աշխատանքի և կյանքի արժանատի փոփոխությունների:

Բացի բանվորներից, քաղաքական կարգի դեմոկրատացման համար պայքարում էին նաև լիբերալները: Շարժման մասնակիցները որոշեցին պառլամենտին ներկայացնել իրենց պահանջները ժողովրդական հրովարտակի (չարտեր) մասին պետիցիայի ձևով: Այստեղից էլ ամբողջ շարժումը կոչվեց չարտիստական:

1838 թ. չարտիստները մշակեցին ժողովրդական խարտիայի (հրովարտակի) մասին ազգային պետիցիան, որը պարունակում էր վերը նշված պահանջները: Համայնքների պալատը մեյթեց այդ պետիցիան և դիմեց հալածանքների: 1839 թ. սկսվեց չարտիստական շարժման ժամանակավոր անկումը:

XIX դ. 40-ական թթ. սկզբին սկսվեց չարտիզմի նոր վերելքը, որն ուղեկցվում էր բանվորների հեղափոխական տրամադրվածության ուժեղացումով: 1842 թ. մայիսին չարտիստները պառլամենտ բերեցին ժողովրդական խարտիայի մասին երկրորդ պետիցիան՝ 3մլն. 300 հազար ստորագրությամբ: Այդ պետիցիայի հիմքը կազմում էին այն 6 պահանջները, որոնք ամրագրված էին ժողովրդական խարտիայի մասին առաջին պետիցիայի մեջ: Անգլիական պառլամենտը այս պետիցիան նույնպես մերժեց:

Երրորդ անգամ չարտիստները փորձեցին գյուհեկ պառլամենտը: Նրանք որոշեցին պետիցիան ներկայացնել պառլամենտ 1848 թ. ապրիլի 10-ին և նույն օրը Լոնդոնում անցկացնել զանգվածային ցույց՝ հանուն նրա պաշտպանության: Բայց կառավարությունը զորքի օգնությամբ ձախողեց ցույցի անցկացումը: 1848 թ. հուլիսին պառլամենտը հերքական անգամ մերժեց ժողովրդական խարտիայի մասին պետիցիան, իսկ կառավարությունը սկսեց չարտիստների զանգվածային հալածանքները:

Չնայած պարտությանը, չարտիզմը ստիպեց անգլիական բուրժուազիային և լեհղլորդերին հաջորդ տասնամյակներում անցկացնել վերափոխումներ:

Պայքար նոր ընտրական վերափոխման համար: XIX դ. 50-60-ական թվականներին երկրորդական պլան մոլվեց լոբլերի պալատը, իսկ թագավորական իշխանության ազդեցությունը հասցվեց նվազագույնի: 1832 թ. ռեֆորմի հետևանքով պառլամենտում գերակշռություն ստացած ազնվականությունը և առևտրական բուրժուազիան շահագրգռված չէին միջնադարից պահպանված օրենքների և սովորույթների փոփոխման մեջ:

40-ական թթ. վերջում պահպանողականների կուսակցության ներսում տեղի ունցավ անկում, որը լիբերալներին թույլ տվեց երկար ժամանակ

մնալ իշխանության գլուխ: Այս կուսակցությունը գլխավորեցին խոշոր քաղաքական գործիչները, որոնք կարող էին ժամանակին կատարել անհրաժեշտ զիջումներ միջին և մանր բուրժուազիայի օգտին: Այնուամենայնիվ, նրանք համառորեն դիմադրում էին ընտրական իրավունքի հետագա զարգացմանը:

Նշենք, որ դեռևս 30-ական թթ. լիբերալների կուսակցությունից առանձնացավ ռադիկալների խմբավորումը, որը գլխավորեց հացի մասին օրենքները չեղյալ հայտարարելու համար պայքարը: Այժմ նրանք ելույթ էին ունենում նոր ընտրական ռեֆորմի օգտին և այդ պայքարին մասնակից էին դարձնում նաև բանվորական կազմակերպություններին:

Չարտիստական շարժման պարտության հետևանքով Անգլիայում բանվորական շարժումը որոշ ժամանակով կորցրեց իր ինքնուրույնությունը և վերածվեց տնտեսական պահանջների համար գաղտնի պայքարի:

Հենց այդ ժամանակաշրջանում ընդհանուր գծերով ձևավորվեց տրեդ-յունիզմների՝ պրոֆեսիոնալ բանվորական միությունների կազմակերպությունը, որը միավորեց լավ վարձատրվող բարձր որակավորում ունեցող բանվորներին: Չնայած որ Տրեդ-յունիզմների խորհուրդը նպատակ չուներ խառնվելու քաղաքական պայքարին և չուներ ոչ մի քաղաքական ծրագիր, այնուամենայնիվ, բանվորական զանգվածների ճնշման ազդեցության տակ, ստիպված էր բանվորական կազմակերպություններին թույլատրել մասնակցելու ընտրական ռեֆորմի համար մղվող պայքարին: Բանվորների մասնակցությունն այդ պայքարին որոշակիորեն ապահովեց հաջողությունը: Տրեդ-յունիզմները հույս ունեին ընտրող բանվորների թիվը մեծացնելով ձեռք բերել որոշ ազդեցություն համայնքների պալատի վրա, և դրանով հնարավորություն ստեղծել ձեռնարկատերերի հետ ընդլայնել տնտեսական պայքարը:

Անգլիայի երկու կուսակցությունները վախենալով ժողովրդի փոթորկալի հուզումներից, վիճարկում էին նոր վերափոխումներ անցկացնելու շուրջը: Ի վերջո, պահպանողական կաբինետի ղեկավար Դիզրաելն առաջարկեց մի նախագիծ, որը որոշ լրացումներով պաշտպանեց լիբերալների ռադիկալ մասը:

1867թ. անցկացվեց երկրորդ պատվամենտական ռեֆորմը, որը նախատեսում էր պատգամավորական տեղերի նոր վերաբաշխում: Դա արտահայտվեց նրանում, որ 11 վայրեր բոլորովին զրկվեցին համայնքների պալատում պատգամավորներ ընտրելու իրավունքից, իսկ 35 վայրերը պահպանեցին միայն մեկ պատգամավոր ընտրելու իրավունքը: Ազատ մանդատները փոխանցվել էին խոշոր արդյունաբերական քաղաքներին ու կոմսություններին: Նոր օրենքը զգալիորեն փոխեց քաղաքների բնակիչների

կյանքը: Օրենքի առաջին մասում սահմանվում են այն պայմանները, որոնց առկայության դեպքում ցանկացած տղամարդ կարող է մասնակցել ընտրություններին: Այսպես, քաղաքներում ընտրական իրավունք ստանում էին բոլոր նրանք, ովքեր ունեին կամ վարձել էին բնակարաններ, մուծում էին աղքատների հարկը: Բնակարանների վարձակալները օգտվում էին այդ իրավունքից, եթե վարձ էին մուծում տարեկան 10 ֆունտ ստեռլինգից ոչ պակաս չափով: (Այս դեպքում սահմանվում էր նաև մեկ տարվա նստակեցության ցենզ)¹:

Կոմաթյուններում ձայնի իրավունք ստացան այն հողատերերը, որոնք ունեին տարեկան 5 ֆունտ ստեռլինգից ոչ պակաս եկամուտ, բնակելի շենքեր ունեցողները կամ վարձողները, որոնց եկամուտը կազմում էր տարեկան 12 ֆունտ ստեռլինգից ոչ պակաս, նույնպես ստացան ընտրական իրավունք (հողված 6):

Ռեֆորմում նորոյթ էր այն, որ աղքատների օգտին անմիջական հարկերի մուծող էր համարվում նաև նա, ով այդ հարկն անձամբ չէր մուծում, այլ մուծում էր իր տանտիրոջ միջոցով, որը մինչ այդ դիտվում էր որպես միակ հարկատու: Այժմ ընտրական ցուցակների մեջ էին մտնում ոչ միայն տան տերերը, այլև նրանց բոլոր բնակիչները: Այսպիսով, ընտրական ցուցակները ընդլայնվեցին միջին բուրժուազիայի, արհեստավորների և բանվորների հաշվին: 1867 թ. ռեֆորմի արդյունքում ընտրողների ընդհանուր թիվն ավելացավ, հասնելով մինչև մեկ միլիոնի: Սակայն Անգլիայի տղամարդ բնակչության 2/3-րդը, չխոսելով կանանց մասին, նախկինի պես զրկված էր ընտրական իրավունքից: Մինչև 1872 թ. պահպանվեց բաց քվեարկությունը: Պահպանվեց և ընտրատարածքների անհավասար բաշխումը²:

Քաղաքական կուսակցությունները: Անգլիայի քաղաքական կյանքում տիրապետող երկու խոշոր կուսակցությունները՝ լիբերալները և պահպանողականները, իշխանությունը նվաճում էին հաջորդաբար: Չնայած, որ երկու կուսակցությունները ներկայացնում էին ունևոր դասակարգերի շահերը և նրանց պրակտիկայում չկային սկզբունքային տարբերություններ, այնուհանդերձ, նրանք տարբերվում էին իրենց դասակարգային կազմով:

Լիբերալները ներկայացնում էին հիմնականում խոշոր բուրժուազիայի շահերը, ունեին մանր բուրժուազիայի աջակցությունը և ազդեցություն էին գործում բանվորական արիստոկրատիայի վրա: Ավելի արդյունավետ գործունեության համար լիբերալների կուսակցությունը 60-70-ական թթ. ըն-

¹Акт о народном правительстве 1867г., հոդ. 4, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 42-43:

²Черниловский З.М., Всеобщая история государства и права, М., 1995, էջ 262-263:

թացքում վերակառուցվեց՝ բոլոր ունտրուստարածքներում ստեղծելով մշտական կոմիտեներ: Կուսակցության ղեկավարությունը գործում էր կենտրոնում: Նոր համակարգի զարգացումն իր գագաթնակետին հասավ 1877 թ. լիբերալների Ազգային ասոցիացիայի ստեղծումով:

Պահպանողական կուսակցությունը մինչև 80-ական թվականներն իր ուժով և ազդեցությամբ զիջում էր լիբերալներին: Այն հիմնականում հենվում էր հողի սեփականատերերի, խոշոր ֆերմերների և անգլիական եկեղեցու վրա: 70-ական թվականների վերջում այն վերակառուցվեց և լիբերալների օրինակով ստեղծեց Պահպանողական ասոցիացիա Ազգային միասնությունը (1883 թ.): XIX դ. 70-ական թվականները լիբերալների կուսակցության ծագման շրջանն էր: 10 տարուց ավելի ժամանակով գտնվելով իշխանության մոտ լիբերալներն իրականացրեցին մի շարք ռեֆորմներ, որոնցով ձգտում էին իրենց կողմը նվաճել ընտրողներին: Լիբերալիզմի տիրապետման հիմքը հանդիսանում էր երկրում արդյունաբերության զարգացումը: Ե՛վ խոշոր, և՛ միջին արդյունաբերողները մերժում էին տնտեսական և հասարակական հարաբերությունների կարգավորման համար պետության յուրաքանչյուր պահանջը: Այլ կերպ ասած, լիբերալիզմի հաղթանակը նշանակում էր պետական իշխանության թուլացում: 1876 թվականից սկսվում է արդյունաբերության բոլոր ճյուղերի անկումը: Դրա հետևանքով Անգլիան կորցնում է իր ազդեցիկ դերը համաշխարհային շուկայում: Բուրժուազիան գերմանական և ամերիկյան մրցակցությունը ձգտում էր հաղթահարել բանվոր դասակարգի կենսամակարդակի իջեցման և զաղութային քաղաքականության աշխուժացման շնորհիվ: Թե՛ մեկը, և թե՛ մյուսը հակառակ էին լիբերալիզմի հին սկզբունքներին: Նոր պայմաններում միջին և մանր բուրժուազիան դիմում էր պետությանը, պահանջելով նրանից ցուցաբերել ակտիվ միջամտություն դասակարգային հարաբերություններում:

Լիբերալ կուսակցության հետագա թուլացումը կապված է իռլանդական հարցի հետ: Հարց, որը կարևոր դեր էր խաղում Անգլիայի քաղաքական կյանքում: Ձգտելով ապահովել իռլանդացիների աջակցությունը, լիբերալները մշակեցին Իռլանդիայի ինքնավարության մասին նախագիծը, որն էլ, ըստ էության, հանգեցրեց կուսակցության քայքայմանը: Լիբերալների մեծամասնությունը միացավ պահպանողականներին և սկսեց պայքարել Մեծ Բրիտանիայի ու Իռլանդիայի մեկ միության գաղափարի համար: Լիբերալների կուսակցությունն անկում ապրեց և իշխանությունը նվաճեցին պահպանողականները, որոնք խոստանում էին վարել ակտիվ վճռական արտաքին և ներքին քաղաքականություն:

XIX դ. վերջում աշխուժացավ բանվորական շարժումը, որը նպաստեց

տրեղ-յունիոնների անճանը:

1871 թ. լիբերալներն անցկացրեցին մի օրենք, որը թույլ էր տալիս տրեղ-յունիոններին ներկայանալ դատարան իրենց ներկայացուցիչների միջոցով: 1875 թ. պահպանողական կաբինետը հօգուտ բանվորների գնաց մի շարք զիջումների: Այն օրինականացրեց կոլեկտիվ պայմանագիրը և տրեղ-յունիոններին թույլ տվեց աջակցել գործադուլավոր բանվորներին:

1906 թ. կազմավորվեց Մեծ Բրիտանիայի Լեյբորիստական կուսակցությունը: Այն իրենից ներկայացնում էր տարբեր կազմակերպությունների, տրեղ-յունիոնների սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիայի Անկախ բանվորական կուսակցության և այլնի ֆեդերացիա: Այս կուսակցության նպատակն էր պառլամենտում տեղեր նվաճել և հասնել իշխանության: Նոր կուսակցությունում վճռական ազդեցություն ձեռք բերեցին մանր բուրժուազիան և բանվորական արիստոկրատիան: 1906 թ. լեյբորիստները պառլամենտում նվաճեցին 29 տեղ: Սկզբում լեյբորիստները ներկայացնում էին միայն լիբերալների ձախ թեր: Հետագայում այդ կուսակցությունը վերածվեց մշտական ինքնուրույն կազմակերպության և դարձավ լիբերալների ու պահպանողականների հիմնական մրցակիցը:

XIX դ. վերջի ընտրական վերափոխումները: XIX դ. վերջում ընդունվում են մի շարք օրենքներ, որոնք ուղղված էին ընտրական իրավունքի դեմոկրատացմանը:

1872թ. լիբերալ կառավարությունն ընդունում է գաղտնի քվեարկության մասին մի օրենք, որի նպատակն էր արգելել ընտրողներին կաշառելը: Մակայն այս դրական նշանակություն ունեցող վերափոխումը կյանքում նշանակալի հաջողություն չունեցավ: 1883 թ. ընդունվեց օրենք, որը սահմանափակում էր ընտրական ծախսերը և պարտադրում էր ընտրական գործակալներին հրապարակային հաշվետվությամբ հանդես գալ: Սահմանվեց ընտրական հանցագործությունների ցանկը և դրանց կատարման դեպքում նախատեսված պատիժներն ավելի խստացվեցին:

1884 թ. և 1885 թ. անցկացվեց XIX դ. երրորդ ընտրական վերափոխումը: 1884 թ. օրենքի համաձայն գույքային ցեմզը քաղաքներում վերացվեց, իսկ կուսակցություններում ձայնի իրավունք ստացան մանր վարձակալները: Վերջիններիս համար սահմանված էին 1867 թ. ռեֆորմով քաղաքային բնակչության համար նախատեսված պայմանները: Այդ վերափոխման հետևանքով ընտրողների թիվը կրկնապատկվեց:

Ըստ 1885թ. օրենքի կատարվեց տեղերի նոր վերաբաշխում, 105 վայրեր, որոնք ունեին 16 հազարից պակաս բնակչություն, գրկվեցին ինքնուրույն ներկայացուցչից, 57 հազարից պակաս բնակչություն ունեցող քաղաքները ստացան մեկ տեղ: Ավելի խոշոր քաղաքների համար մանդատ

մերի թիվը ավելացավ: Քաղաքները և կոմսությունները բաժանվեցին ընտրատարածքների (յուրաքանչյուր ընտրատարածք ընդգրկում էր 50-54 հազար բնակիչ), որոնք ընտրում էին մեկական պատգամավոր:

1884-1885 թթ. վերափոխումը չվերացրեց ընտրական համակարգի էական թերությունները: Միաժամանակ բնակչության զգալի մասը զրկված էր ընտրական իրավունքից: Բարդ էր ընտրողների գրանցման կարգը: Ընտրություններն ամբողջ երկրում մեկ օրում չէին ավարտվում: Պահպանվեց մեծամասնական ընտրական համակարգը, այսինքն՝ եթե թեկնածուն չէր ստանում ձայների բացարձակ մեծամասնությունը, ապա հաղթում էր նա, ով ստանում էր համեմատաբար ավելի շատ ձայներ:

Վերափոխումների հաջորդ փուլը կապված էր պահպանողականների անվան հետ: 1888 թ. նրանք կոմսություններում տեղական կառավարման վերափոխում անցկացրեցին, տարածելով այնտեղ ինքնավարության համակարգը, որը քաղաքներում սահմանվել էր դեռևս 1835 թվականից: Կոմսություններում ստեղծվեցին ընտրական խորհուրդներ, որոնց անցավ ամբողջ վարչական իշխանությունը: Հաշտաբար դատարաններն իրականացնում էին միայն դատական ֆունկցիաները: 300-ից ավելի բնակչություն ունեցող գավառներում մույնպես ստեղծվել էին ընտրական խորհուրդներ: Վերափոխման հետևանքով տեղական ինքնավարությունն ազնվականության ձեռքից անցավ բուրժուազիային:

Լիբերալների կողմից իրականացված վերափոխումների թվում պետք է նշել դատական ռեֆորմը, որի հետևանքով պարզեցվեց դեռևս ֆեոդալիզմի շրջանում ձևավորված բարձրագույն դատական համակարգը: Անգլիայի բոլոր բարձրագույն դատարանները միավորվեցին գերագույն դատարանի մեջ, որը կազմված էր բարձրագույն և քաղաքացիական գործերով բողոքարկման ատյաններից:

Գործադիր իշխանություն: XIX դ. երկրորդ կեսում նախարարների կաբինետը, որը պառլամենտի օգնությամբ դարձավ իշխանության բարձրագույն գործադիր մարմին, սկսեց վեր կանգնել պառլամենտից: Այդ միտումը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով. 1) պառլամենտի գերակայությունը հաստատվեց այն ժամանակ, երբ նրա սոցիալական հիմքը բավականին մեղ էր: Այդպիսի պառլամենտին կարելի էր առանց մտավախության հանձնել օրենսդիր իշխանությունը և գործադիր իշխանության վրա հսկողությունը: 1867 թ. վերափոխումով նոր տարրերին հնարավորություն տրվեց ազդելու պառլամենտի վրա: Այդ հանգամանքը տիրապետող դասակարգին հարկադրեց մտածել պառլամենտի իրավասությունների սահմանափակման մասին, քանի որ դրանք կարող էին օգտագործվել դեմոկրատիայի շահերի օգտին. 2) անգլիական պառլամենտի դանդաղեղ-

տությունը չէր համապատասխանում XIX դ. վերջի բուռն տնտեսական և հասարակական կյանքին: Պետական կառավարման ընդլայնվող և բազմապատկվող խնդիրները պահանջում էին արագացված լուծում, որին չէր կայտոյ հասնել պառլամենտը: Պառլամենտական գործավարության օգնությամբ փորձ էր արվել իրն պառլամենտական մեքենան հարմարեցնել նոր պայմաններին: 3) 1887թ. ընդունվեց վիճաբանությունների վերացման մասին ակտը, որով վերջ էր տրվում պառլամենտի կարևորագույն արտոնություններից մեկին:

Նշված նորամուծության այդյունքը եղավ այն, որ պառլամենտում քննարկում գոյություն չուներ. իսկ ընդդիմությունը կարող էր ցանկացած պահին լռեցվել: Ինչպես ընդդիմության, այնպես էլ պատգամավորների մեծամասնության կառավարության գործունեության քննարկման մասնակցելու հնարավորությունը սահմանափակվեց:

Այդ ամենը հանգեցրեց կառավարող կուսակցության վերնախավի դերի ուժեղացմանը: Կառավարող կուսակցության նկատմամբ նախարարների կաբինետը հանդես էր գալիս որպես կենտրոն, որին ենթարկվելը կուսակցության յուրաքանչյուր անդամի սրբազան պարտականությունն էր: Նախարարների կաբինետն ավելի է անրապնդվում օրենսդրի դերում և, բացի այդ իրականացնում էր կառավարման ապարատի ղեկավարումը:

Այսպիսով, քաղաքական համակարգում պառլամենտը զիջեց իր առաջատար տեղը նախարարների կաբինետին:

1911 թ. վերափոխումը: Իր սոցիալական կազմով լորդերի պալատն ազնվականության պատվարն էր և պառլամենտում, ըստ էության, շարունակում էր պահպանողական կուսակցությանը: Այդ պատճառով, երբ պահպանողականները հայտնվում էին փոքրամասնությամբ և որևէ հարցի լուծման հետ կապված կրում էին պարտություն, լորդերի պալատը գործի էր դնում իր գործունեությունը և պայքարող կողմերից մեկի համար ապահովում էր պաշտպանություն: Այնուամենայնիվ XX դ. սկզբին աղավաղվել էր երկպալատային համակարգի իսկական իմաստը:

Իրերի այդպիսի դրությունը չէր կարող չանհանգստացնել լիբերալներին, որոնք ձգտում էին վերափոխել լորդերի պալատը, կամ այն լիովին վերացնել: Լիբերալներին և լորդերի պալատի պայքարի հետևանքով 1911 թ. ծնվեց Պառլամենտի մասին ակտը: Համաձայն այս ակտի ֆինանսական բիլլերը լորդերի պալատի համաձայնության կարիքը չպետք է գրային: Բիլլի բովանդակությունը որոշում էր համայնքների պալատի խոսնակը: Այդ ակտով պառլամենտի գործունեության իրավասությունը սահմանվում էր 5 տարի ժամանակով: 1911 թ. ռեֆորմը չի կարելի բացատրել միայն կուսակցությունների պայքարի ծնունդ: Դրան էր նպաստում և՛ նախարարների

կաբինետի ուժեղացումը, և՛ լորդերի պալատի սոցիալական կազմի փոփոխությունը: XX դ. սկզբին տեղի ունեցավ ազնվականության և բուրժուազիայի միաձուլումը՝ վերջինիս գերակշռությամբ: Բուրժուազիան, չիրաժարվելով վերին պալատից, հույսը դնում էր ուժեղ նախարարների կաբինետի վրա:

4. ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Բրիտանական գաղութային կայսրությունը սկսեց ձևավորվել XVII-XVIII դդ.: Իսպանացիների, հոլանդացիների, ֆրանսիացիների հետ պայքարում Անգլիան ձգտում էր ստեղծել առևտրական և ծովային գերակշռություն: գաղութների նվաճումը և թալանը նպաստում էին անգլիական բուրժուազիայի ձեռքում հսկա կապիտալների կուտակմանը և անգլիական արդյունաբերական արտադրության արագ զարգացմանը: Արտաքին զավթողական քաղաքականությանը կողմնակից էին հատկապես վիգերը, որոնք պաշտպանում էին ֆինանսիստների, վաճառականների և արդյունաբերողների շահերը: Տորիները գաղութների զավթման հարցում զրավում էին ավելի չափավոր դիրք:

XVIII դ. Անգլիան զավթել էր լայն տարածքներ Կանադայում, Ավստրալիայում, Հարավային Աֆրիկայում, Հնդկաստանում: XIX դ. կեսին Անգլիան գտնվում էր իր գաղութային և առևտրա-արդյունաբերական հեգեմոնիայի գագաթնակետին:

Բրիտանական կայսրության գաղութային քաղաքականության մեջ հատուկ տեղ է զրավում Իռլանդիան: Դա առաջին անգլիական գաղութն էր, որի զավթումը սկսվել էր անգլիական ֆեոդալներով՝ դեռևս XII դարում և ակտիվացավ XVI-XVII դդ.: 1800 թ. Իռլանդիան միացավ Մեծ Բրիտանիայի հետ մեկ միության մեջ: Դրանով վերացվեցին Իռլանդիայի ինքնավարության վերջին մնացուկները: Իռլանդիան ուներ իր ներկայացուցչությունն անգլիական պառլամենտում: Սակայն, Իռլանդիայի ժողովուրդը պայքարում էր լիովին անկախություն ձեռք բերելու համար, իսկ նրա պատգամավորները պառլամենտում պաշտպանում էին «հորմուլի» (ինքնավարության) գաղափարը: Այդ գաղափարը XIX դ. 80-ական թթ. ընդունվել էր լիբերալների կողմից: 1886թ. լիբերալ կառավարությունը պառլամենտ ներկայացրեց Իռլանդիայի սահմանափակ ինքնակառավարման մասին օրենքի նախագիծը, որը սակայն մերժվեց համայնքների պալատի կողմից: 1893 թ. Իռլանդիայի ինքնավարության մասին նոր օրենքն անցավ համայնքների պալատով, սակայն մերժվեց լորդերի պալատի կողմից: Եվ միայն 1914 թ. պառլամենտը ստիպված էր ընդունել հորմուլի (ինքնավարության) մա-

սին օրենքը, որում Իռլանդիայի ինքնավարությունն արդեն սովորական դոմինիոնի կարգավիճակին էր: Այդ ակտի կիրառումը հետսօճվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը:

Անգլիայի մնացած բոլոր գաղութները կառավարվում էին ելնելով նրանց բնորոշ իրավական վիճակից: Դեռևս XVIII դարից գաղութները բաժանվում էին նվաճվածների և վերաբնակեցվածների: Նվաճված գաղութները, որտեղ գերակշռում էր բնիկ բնակչությունը, չունեին քաղաքական ինքնավարություն և կառավարվում էին զեներալ-մահանգապետի կողմից: Վերջինիս նշանակում էր մետրոպոլիս: Այն գաղութներում, որտեղ գերակշռող էին սպիտակամորթ գաղթականները, անգլիական կառավարությունը գնում էր զիջումների: Սպիտակամորթ գաղթականների պահանջներին զիջելով, Անգլիան ստիպված էր որոշ վերաբնակեցված տիպի գաղութներին տալ ինքնակառավարման իրավունք:

Հատկապես փոխվեցին Կանադայի հետ հարաբերությունները: XIX դ. 50-60-ական թթ. Անգլիայի և նրա էյուսիս-ամերիկյան գաղութների միջև տնտեսական կապն այնքան ամուր էր, որ բրիտանական կառավարությունը կարող էր առանց մտավախությունների գնալ նրա բնակչության պահանջների զիջմանը և ընդլայնել նրանց ինքնակառավարման իրավունքը:

1867 թ. Կանադայի կառավարումը վերակառուցվեց նոր հիմունքներով: Կանադայի 4 գավառները կազմեցին կոնֆեդերացիա (համադաշնություն), որը ստացավ Կանադայի դոմինիոն անունը: Դրանից հետո անգլիական թագավորի կողմից նշանակված մահանգապետը Կանադան կառավարելու էր նախարարների ֆեդերալ խորհրդի միջոցով:

XIX դ. 50-60-ական թթ. անգլիական գաղութներից ինքնակառավարման իրավունք ստացան Կալիֆոռնիայի երկիրը (1854 թ.) և Նատալը (1856 թ.):

Ավստրալիայում առաջին ներկայացուցչական մարմինները գործել են դեռևս XIX դ. 40-ական թվականներին: 1855 թ. այստեղ մշակվեցին և հետո հաստատվեցին առանձին գաղութների սահմանադրությունները, որոնք նախատեսում էին երկպալատային համակարգի ներմուծում և մահանգապետական իշխանության սահմանափակում: 1900թ. Մեծ Բրիտանիայի ինքնավարական գաղութներն Ավստրալիայում միացվեցին Ավստրալիական միության մեջ: 1900 թ. սահմանադրությունն Ավստրալիան հայտարարեց ֆեդերատիվ պետություն: Այստեղ օրենսդիր իշխանությունն սկսեց իրականացնել պառլամենտը, որը կազմված էր սենատից և ներկայացուցիչների պալատից: որժադիր իշխանությունը պատկանում էր զեներալ-մահանգապետին:

Նոր Զելանդիան իր սահմանադրությունն ընդունեց 1852 թ.: Անգլիական խոշորագույն գաղութ էր Հնդկաստանը: XVIII դ. Արևելա-հնդկական

առևտրական ընկերության կողմից նվաճված այս երկիրը ենթարկվեց անխիղճ քաղաքացիական պատերազմների և անգլիական բազմաթիվ առևտրական ընկերությունների իրավունք ստացան մուտք գործելու նրա շուկաները: Հնդկաստանի գալուստատանի ուղեկցվում էր անգլիական կալվածատերերի և կապիտալիստների կողմից՝ մեծ տարածքների և երկրի բնական ռեսուրսների զավթումով, տարբեր տեսակի հարկերի սահմանումով: Հնդկական արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն անկում ապրեցին:

1857-1859 թթ. Հնդկաստանում տեղի ունեցավ հզոր ազատագրական պայքար, որը սկսվեց հնդիկ զինվորների շրջանում Ապստամբության գլխավոր շարժիչ ուժերն էին գյուղացիները և արհեստավորները, բայց նրանց գլխավորում էին իշխանները, որոնք դժգոհ էին իրենց կալվածքները կորցնելուց: Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց:

Հնդկաստանի ազգային արդյունաբերությունը չնայած դանդաղ, բայց, այնուամենայնիվ, զարգանում էր, իսկ նրա զարգացման հետ աճում էր նաև ազգային բուրժուազիան: 1885թ. ստեղծվեց բուրժուազիայի քաղաքական կուսակցությունը՝ «Հնդկական ազգային կոնգրեսը»: Կոնգրեսի ծրագրի գլխավոր պահանջն էր թույլատրել հնդիկներին մասնակցելու երկրի կառավարմանը: 1892 թ. «Հնդկական խորհուրդների մասին» օրենքով հնդկական բուրժուազիային թույլատրվեց ներկայացուցիչներ ունենալ Հնդկաստանի գեներալ-նահանգապետին կից խորհրդատվական խորհուրդներում: Հնդիկների համար գործադիր մարմիններում մուտքը թույլատրվեց միայն 1906 թ-ից: Հնդկաստանի գործերով խորհրդում (մաստավայրը Լոնդոնում էր) ընդգրկվեցին երկու հնդիկ:

1909 թ. հրապարակվեց «Հնդկական օրենսդրական խորհուրդների մասին» ակտը, որի համաձայն գեներալ-նահանգապետին կից օրենսդրական խորհրդի և զավառային նահանգապետին կից խորհրդի անդամների թիվը զգալիորեն աճելու էր: Դրանով մեծանում էր նաև հնդկական բուրժուազիայի մասնակցությունը:

Այսպիսով, XIX դ. վերջում մի շարք անգլիական գաղութներ դարձան դոմինիոններ, ինքնակառավարվող գաղութներ: Մետրոպոլիաների հետ հարաբերություններում իրենց զարգացման աստիճանով դոմինիոններն ավելի շատ էին հավակնում իրավահավասար գործընկերոջ դեր կրելուն: Այդ հարաբերությունների կարգավորման համար 1887 թ-ից սկսեցին հաճախակի անցկացվել «գաղութային կոնֆերանսներ», որոնք 1907 թ. ստացան «կայսրական» անվանումը:

Դոմինիոններ են եղել Կանադան (1867 թ-ից), Ավստրալիական Միու-

բյուր (1901 թ-ից), Նոր Զելանդիան (1907 թ-ից), Հարավ-Աֆրիկյան Սյու-
բյուր (1910 թ-ից) և այլն:

Վ(Թ)

5. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

Անգլիայի իրավունքն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են նրա զարգացման պատմությամբ: Անգլիայի աշխարհագրական մեկուսացումը, նրա պատմության առանձնահատկությունները, արդյունաբերության և առևտրի վաղ զարգացումը հանգեցրին նրան, որ շատ դարերի ընթացքում անգլիական իրավաբանները և դատավորները զգալով այլ երկրների օրենսդրության ազդեցությունը, ինքնուրույն ստեղծեցին իրենց երկրի իրավունքը: Եվ հռոմեական իրավունքը, և մայրցամաքային իրավաբանական դոկտրինան քիչ ազդեցին անգլիական իրավունքի վրա: Արամով է բացատրվում անգլիական իրավական ինստիտուտների առանձնահատկությունը:

Ինչպես նշել ենք, անգլիական բուրժուական հեղափոխության արդյունքը եղավ ազնվականների և բուրժուազիայի միջև փոխզիջումը: Այդ փուլում նախահեղափոխական իրավունքն ամբողջությամբ չէր վերացվել և չէր փոխարինվել նոր իրավունքով: Նախահեղափոխական և հետհեղափոխական իրավունքի նշանակալից հաջորդականությունը հանդիսանում է անգլիական իրավունքի բնորոշ գիծը: Սակայն, անկասկած, կապիտալիստական հարաբերությունների զարգացումը չէր կարող չանդրադառնալ իրավունքի բովանդակության վրա և աստիճանաբար նրա ֆեոդալական էությունն իր տեղը զիջում էր բուրժուականին: Արդյունքում, հին իրավունքից մնում էին միայն նրա հնամնացուկ ձևերը, որոնք լրացվում են նոր բովանդակությամբ:

Իրավունքի աղբյուրները: Որպես իրավունքի աղբյուր մեծ դեր էր խաղում դատական նախադեպը: 1890 թ. տվյալներով գոյություն ունեին ղատական դրոշումների 1800 հատոր: Ամենուրեք գոյություն ունեին Մեծ Բրիտանիայի ամենահեղինակավոր դատական ատյանների երկու և ավելի հակասական կարծիքների՝ համաման գործերի վերաբերյալ: Ամհրասժեշտ է հիշել, որ դատական նախադեպերը հանդիսանում էին «ընդհանուր իրավունքի» գլխավոր աղբյուրը:

Նախադեպերի կիրառման համար սահմանվել էին հետևյալ կանոնները. 1) բարձրագույն դատարանները կախում չունեին ցածրագույն դատարանների որոշումներից, 2) առաջին ատյանի դատարանը կախված չէր նույնպիսի իրավասությամբ օժտված դատական մարմնի որոշումից,

3) յուրաքանչյուր դատարան պարտավոր էր հետևել բարձրագույն դատական ատյանների եզրակացություններին. 4) յուրերի պապատուր չէր սահմանափակվում նախկինում կայացած իր սեփական որոշումներով¹:

Կուսպիտալիստական հարաբերությունների զարգացման ընթացքում որպես իրավունքի աղբյուր մեծ դեր սկսեց խաղալ օրենքը: Դա բազատրվում է նրանով, որ նշված էտապում առաջ եկավ ավելի բարդ հասարակական հարաբերությունները կարգավորելու անհրաժեշտությունը, որը, սակայն, հնարավոր չէր «ընդհանուր իրավունքի» հնագույն նորմերով: Այդ պատճառով պատրամենտական ակտերի նշանակությունը մեծանում է նույնիսկ այնտեղ, որտեղ ավելի վաղ անբաժանելիորեն իշխում էր դատական նախադեպը:

Սակայն անգլիական բուրժուազիան մտադիր չէր լիովին հրաժարվել իրեն ձեռնառու իրավաբանական անորոշությունից, որի ժամանակ մեծ նշանակություն ուներ դատական հայեցողությունը:

Քաղաքացիական իրավունք: Անգլիական իրավունքը քաղաքացիական իրավունքի սուբյեկտ է ճանաչում ինչպես քաղաքացիներին, այնպես էլ իրավաբանական անձանց: Չնայած, իրավաբանական տեսակետից հավասարության սկզբունքը պահպանվում էր, այնուամենայնիվ գոյություն ունեին առանձին կատեգորիայի մարդիկ, որոնց իրավասունակությունը սահմանափակ էր: Դա վերաբերում էր անուսնացած կանանց, ինչպես նաև արտասահմանցիներին:

Անգլիայում, ի տարբերություն մյուս երկրների, լայն տարածում էին գտել իրավաբանական անձինք: Երկար ժամանակ իրավաբանական անձեր չէին համարվում ընկերությունները: Միայն հատուկ օրենքների և դատարանների որոշումների հիման վրա, որոնք կիրառվում էին առանձին իրավաբանաբերություններում, ընկերությունները ձեռք բերեցին իրավաբանական անձի կարգավիճակ:

Իրային իրավունք: Իրային իրավունքը բուրժուական իրավունքի հիմնական ինստիտուտներից էր: Անգլիայում իրային իրավունքը մեկնաբանվում էր ավելի լայն իմաստով, քանի որ իրային իրավունքի տակ հասկացվում էին նաև այնպիսի բացարձակ իրավունքները, ինչպիսիք էին հեղինակների, գյուտարարների իրավունքները: Դրա համար էլ երբեմն կարծես անհնար էր դառնում իրային և պարտավորական իրավունքների տարբերակումը:

Անգլիական իրավունքում իրերը չէին բաժանվում շարժականի և անշարժի: Դեռևս միջին դարերից այստեղ իրերը բաժանվում էին իրական ի-

¹ Лисневский Э.В., История государства и права Великобритании (1870-1917), Ростов на Дону, 1957, էջ 40:

րերի և անհատական իրերի: Էրական իրերի քվին էին պատկանում հողը, բույսերը, շենքերը, ինչպես նաև այն փաստաթղթերը. որոնք հողի հետ կապված տարածքների և առարկաների նկատմամբ սահմանում էին որոշակի իրավունք: Անհատական իրերն իրենց մեջ ներառում էին այլ առարկաներ ու իրավունքներ:

Նշենք, որ ժամանակակից իրավունքում օգտագործվում են «շարժական և անշարժ գույք» հասկացությունները: Անգլիայի իրային իրավունքի համակարգն աչքի էր ընկնում նշանակալից անորոշությամբ: Այդ բնագավառում իրավաբանական շատ հասկացություններ մինչև հիմա իրենց վրա կրում են ֆեոդալական ժամանակաշրջանի կնիքը:

Անգլիայում իրային իրավունքը դիտվում էր որպես սեփականության իրավունքի տարատեսակ:

Հողի սեփականության իրավունքն աչքի էր ընկնում անգլիական իրավունքին բնորոշ առանձնահատկությամբ: Անգլիայի ամբողջ հողը համարվում էր թագավորի սեփականությունը, իսկ առանձին անձինք դիտվում էին որպես հողի նկատմամբ արժեթղթեր ունեցող անձինք: Սակայն գործնականում այդ արժեթղթեր ունենալու իրավունքը մասնավոր անձանց կողմից բովանդակությամբ չէր տարբերվում սեփականության իրավունքից. այն անժամկետ էր և հնարավորություն էր տալիս օգտվել հողատարածքից ու օտարել այն առանց որևէ թույլատրության: Հողային տարածքի իրավունքների փոխանցումը պահանջում էր բալդ ձևականությունների կատարում: Չգալի տարբերություն կար նաև ժառանգական հողային տարածքների հերթականության և անձնական սեփականության միջև:

Պարտավորական իրավունք: Անգլիայում գոյություն չունեի պարտավորության ընդհանուր հասկացություն: Զաղաքացիական իրավունքի առանձին ենթաճյուղեր էին հանդիսանում պայմանագրային իրավունքը և պարտավորությունները: Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետ պայմանագրային իրավունքը դատական նախադեպի ձևով ենթարկվում էր մանրակրկիտ կարգավորման: Պարտավորությունների և պայմանագրերի վերաբերյալ ստեղծվում են ընդհանուր նորմեր:

Անգլիական պայմանագրային իրավունքի բնորոշ գիծը կողմերի իրավունքների և պարտավորությունների ճիշտ սահմանման և պարտապահի կողմից իր պարտավորությունների լիովին ու բարեխիղճ կատարման պահանջն էր:

Ստեղծվում են նորմեր, որոնք վերաբերում են ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով առաջացած վնասների փոխհատուցմանը: Նշենք,

¹ Батыр К.И., Всеобщая история государства и права, М., 2000, т.9 269:

որ այս բնագավառում հատուկ ուշադրություն էր դարձվում ոչ գույքային վնասի փոխհատուցմանը:

Անզվիայում բազմաթիվ պայմանագրերի հետ մեկտեղ մեծ նշանակություն ուներ հողի վարձակալության պայմանագիրը: Այս դեպքում իրավունքը պաշտպանում էր հողի սեփականատիրոջ շահերը. և չէր երաշխավորում վարձակալի շահերի պաշտպանություն: Վարձավճարը սահմանվում էր կողմերի համաձայնությամբ, որի ժամանակ գերազդեցություն ուներ հողատիրոջ կամքը:

Հողի վարձակալության պայմանագրով վարձակալն իր ստանձնած մի շարք պարտավորությունների հետ մեկտեղ պարտավոր էր ժամկետը լրանալուն պես ազատել օգտագործած հողատարածքը, հակառակ դեպքում վարձավճարի չափը կրկնապատկվում էր:

Ամուսնա-ընտանեկան իրավունք: Ընտանեկան իրավունքի համար բնորոշ էր ֆեոդալիզմի վերապրուկների երկարատև պահպանումը: Պահպանվեց ամուսնության եկեղեցական ձևը. 1836 թ. կյանք մտավ քաղաքացիական ամուսնությունը: Ամուսնությամբ ծեմ ընտրում էին ապագա ամուսինները: Ընտանիքում իշխանությունը տղամարդունն էր: Նրան էր պատկանում նաև կնոջը «հսկելու» և նույնիսկ կնոջը «չափավոր պանծելու» իրավունքը:

Գույքային իրավունքների մեջ կլինը բավականին սահմանափակ էր: Ամուսնական ունեցվածքի տիրապետման և տնօրինման իրավունքը պատկանում էր ամուսնուն: Կինը չէր հանդիսանում իրավունքի սուբյեկտ: Ժամանակի ընթացքում ամուսնու իշխանությունը կնոջ վրա թուլանում էր: 1822 թ. օրենքով ամուսնացած կնոջ համար սահմանվեց որոշակի գույքային ինքնուրույնություն:

Մինչև 1857 թ. Անզվիայում ամուսնալուծություն չէր թույլատրվում: Եթե համատեղ կյանքը դառնում էր անհնարին, ապա ամուսինները բաժանվում էին միայն «սեղանից և անկողնուց»: գործող օրենքներով մինչև 21 տարեկան երեխաները գտնվում էին հողի իշխանության տակ: Մայրը, որպես ծնող կարող էր իշխել նրանց վրա միայն հոր բացակայության ժամանակ: 1908 թ. ընդունվեց օրենք, ըստ որի ծնողները երեխաների նկատմամբ չափից ավելի դաժան վերաբերվելու դեպքում, ենթարկվում էին պատասխանատվության: Օրենքով արտասամուսնական երեխաների օրինականացումը թույլատրվում էր միայն բացառիկ դեպքերում՝ պառլամենտական ակտի հիման վրա:

Ժառանգական իրավունք: Ժառանգական իրավունքի բնորոշ գիծը կտակի լիակատար ազատությունն էր: Յուրաքանչյուր 21 տարին լրացած անձ կարող էր իր ունեցվածքը կտակել ցանկացած մարդուն: Այս դեպքում

նրա բարեկամներն իրավունք չունեին որևէ չափով բաժին ստանալու կտակում նշված գույքից: Ժառանգումն ըստ օրենքի տեղի էր ունենում այն ժամանակ, երբ այնքանով, երբ և որքանով այն չէր փոխվել կտակով:

Առանձնահատուկ էր ժառանգական իրավունքների փոխանցման մեխանիզմը: Ժառանգատուին պատկանող իրավունքները և պարտականությունները սկզբում փոխանցվում էին միջնորդ անձին, որի դերում հանդես էր գալիս համապատասխան դատարանի նախագահը: Վերջինից այդ իրավունքներն և պարտականությունները փոխանցվում էին դատարանով նշանակված «անձնական ներկայացուցչին»:

6102

Քրեական իրավունք և դատավարություն: Անգլիայի քրեական իրավունքի վրա իր ազդեցությունը թողեց անգլիական հեղափոխության պահպանողական բնույթը: Իրավունքի այս ճյուղում ֆեոդալական ինստիտուտները շատ դանդաղ էին իրենց տեղը զիջում նոր քրեա-իրավական ինստիտուտներին:

Միայն XVIII դ. կեսին Անգլիայի խաշորագույն իրավաբան Բյեկստոնի կողմից համակարգվեց քրեական իրավունքը: Քրեական իրավունքը հատկապես պահպանողական էր պատժի վերաբերյալ հարցում: Դեռ 1810 թ. պատժի տարածված ձևերն էին. քառատումը, կենդանի մարմնից ներքին օրգանների հեռացումը և այլն: Մինչև 1873 թ. Անգլիայում մահապատժի էր ենթարկվում նա, ով մեկ ամսից ավելի ժամանակով շփվում էր զննման հետ:

Քրեական իրավունքի պահպանողական բովանդակությունն արտահայտվեց նաև նրանում, որ այն շարունակում էր զարգանալ հիմնականում ոչ թե օրենքների հրապարակման, այլ նախադեպական իրավունքի զարգացման ճանապարհով:

1916 թ. ընդունվեց «գողության մասին» ակտը, որը նախատեսում էր քրեական պատասխանատվություն գույքային բոլոր հանցագործությունների համար (գողություն, շանտաժ, ավազակություն, խարդախություն և այլն):

Գույքի գաղտնի հափշտակման համար նախատեսվում էին տարբեր տեսակի պատիժներ: Այսպես, «սովորական» գողության համար նախատեսված էին տաժանակիր աշխատանքներ՝ մինչև 5 տարի ժամանակով, իսկ «որակավորված» գողությունը (դրա թվին էր դասվում արտադրության ժամանակ բրդյա, վուշե, կանեփե մանվածքի կամ մետաքսից, վուշից, բամբակից պատրաստված իրերի հափշտակումը), պատժվում էր տաժանակիր աշխատանքներով մինչև 14 տարի ժամանակով: Եթե կողոպուտ էր տեղի ունենում փոստում, ապա հանցագործը պատժվում էր ցմահ տաժանակիր աշխատանքների: Ըստ 1916 թ. ակտի ավազակության համար նա-

Կարգադրություն
Կրթության միջոցով

խատեսվում էր տաժանակիր աշխատանք՝ ցմահ ժամանակով:

1913 թ. լույս տեսավ «Փաստաթղթերի կեղծման մասին ակտը», որը իր մեջ ներառում էր նախկինում գործող 73 օրենքներ:

Անգլիայում կաշառակերությունն այնքան սանձարձակ չափեր էր բնորոշում, որ լիբերալները 1853 թ. ստիպված էին դիմել օրենսդրական որոշ միջոցների: Նրանց նպատակն էր պահպանողական կուսակցության համար ստեղծել դժվարություններ: Հարուստ տորիները որպես ընտրական պայքարի միջոց ավելի մեծ չափով էին դիմում կաշառակերությանը:

Ընդունվեց «Կաշառելու պրակտիկայի մասին ակտը», որը սահմանափակեց ընտրության համար նախատեսված ծախսերը և «ընտրողների վրա անօրինական ազդեցություն գործելու» համար թեկնածուի ու նրա գործակալի նկատմամբ սահմանեց պատասխանատվություն:

1889 - 1916 թթ. ընթացքում կաշառակերության դեմ պայքար մղելու համար ընդունվեցին մի շարք ակտեր, որոնք, սակայն, դրական քիչ նշանակություն ունեցան հասարակության մեջ այդ խորթ երևույթը վերացնելու համար:

1911 թ. ընդունվում է «Լքտեսության մասին օրենքը»:

Հանցագործ աշխարհի համար նախատեսված էին պատժի չափազանց դաժան տեսակներ: Առավել դաժան էին մարմնական պատիժները և դրամական տուգանքները: Դատական մարմիններն ամեն տարի տուգանքի էին դատապարտում մոտ 50.000 մարդ:

1908 թ. սկսեց գործել (սովորական հանցագործությունների մասին օրենքը), որն ավելի խիստ պատիժներ էր նախատեսում ռեցիդիվիստների համար:

Ժամանակի ընթացքում աճում էր հանցագործությունների թիվը հատկապես երիտասարդության շրջանում: Այս պատճառով 1908 թ. հրապարակվեց «Անչափահաս հանցագործների մասին ակտը», որի հիման վրա 1910 թ. հունվարի մեկից անչափահասների գործերը պետք է քննվեին հատուկ ստեղծված դատարաններում: «Հանցագործությունները կանխելու մասին» օրենքով անչափահաս հանցագործները պատիժը պետք է կրեին ազատագրկման հատուկ վայրերում:

Աշխատավորության ծանր կենսապայմանների հետևանքով Մեծ Բրիտանիայում հարբեցողությունը և զինեմոլությունը, որպես սոցիալական աղետ, հասան մեծ չափերի: 1898 թ. հրապարակված «Սովորական հարբեցողների մասին ակտով» հանցագործություն կատարած հարբեցող անձանց պետք է երեք տարով ուղարկեին հատուկ բուժական հիմնարկներ:

Քրեական դատավարության յուրահատկությունը նրանում էր, որ մեղադրական դատավարությունը միաժամանակ հանդես էր գալիս որպես մր-

ցակցային դատավարություն:

1907թ. սեպտեմբերյան քրեական իրավունքում տեղ է գտնում պայմանական դատապարտման ինստիտուտը:

1914թ. «Արդարադատության կատարման մասին» օրենքով կրճատվում է տուգանքը չմուծելու համար բանտ ուղարկվողներին բյուր:

Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշվելուց պես Անգլիայի կառավարությունն իրավունք ստացավ հրապարակել հրամանագրեր, որոնց նպատակն էր ապահովել պետության անվտանգությունն ու պաշտպանությունը:

Մեծ Բրիտանիայում դատական մագիստրատները պրակտիկորեն նշանակվում էին ցմահ: Չնայած դրան կոմսության դատավորը, հասնելով 72 տարեկանին, պետք է հրաժարական տար: Ըստ օրենքի չէին փոխվում միայն բարձրագույն դատարանների անդամները և կոմսության դատավորները: Դատարանի կազմի մյուս անդամները նշանակվում էին թագավորի ցանկությամբ: Նրանց կարելի էր ազատել աշխատանքից ցանկացած ժամանակ:

Գլխավոր դատավորը՝ լորդը, վարչապետի ներկայացմամբ նշանակվում էր արքունիքի կողմից: Մյուս դատավորները վարչապետի երաշխավորությամբ նշանակվում էին միապետի կողմից: Դատավորներն անշեղորեն պաշտպանում էին երկրի կառավարող շրջանների դասակարգային շահերը: Նրանց նշանակումը, ըստ էության, դիտվում էր որպես պարզև քաղաքական ծառայությունների համար¹:

Դատավորներն իրավաբանական կրթություն էին ստանում այն ուսումնական հաստատություններում, որտեղ հասկանալի պատճառներով, չէին կարող սովորել աշխատավորների երեխաները (այդ հաստատություններն էին Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանները): Հեռու մնալով աշխատավոր զանգվածից, նրանք չէին կարող իրականացնել արդարադատություն:

Հաշտարար մագիստրատի պաշտոն զբաղեցնելը պայմանավորված էր որոշակի սեփականություն ունենալով: Չնայած, 1906 թ. վերացրեցին գույքային ցենզը, սակայն այդ պաշտոնը մախկինի մման հասարակական բնույթ էր կրում (պաշտոն զբաղեցնողները չէին վարձատրվում): Այս պատճառով էլ հաշտարար դատավորներ էին հիմնականում բարձրաստիճան սպաներն ու պետական պաշտոնյաները, ձեռնարկատերերը, հոգևորականները, խոշոր ֆերմերները և կալվածատերերը: Նրանցից շատերը ծանոթ չէին օրենքներին և նշանակվում էին ոչ թե անձնական վաստակներ-

¹Лисневский Э.В., История государства и права Великобритании (1870-1917), Ростов на Дону, 1957, էջ 46:

րի կամ հասարակական ծառայությունների դիմաց, այլ ուղղակի հանձնարարականով հողին տիրելու հետևանքով: Առանց վարանելու կարող ենք նշել, որ նրանցից շատերի նշանակումն ավելի մեծ հանցագործություն էր, քան այն հանցագործությունները, որոնց համար նախատեսված էին պատիժներ:

Անգլիայում դատավարությունն ընթանում էր բաց, հրապարակային: Դատավարության ժամանակ առավել մեծ չափով հաշվի էին առնվում վկաների ցուցմունքները: Մեղադրյալն իրավունք ուներ իմանալու, թե ինչի մեջ է մեղադրվում և պարտավոր էր բացատրություններ տալու իրեն առաջադրված մեղադրանքի առթիվ: Նա պաշտպան ունենալու իրավունք ուներ: Պաշտպանի մասնակցությունը գործին թույլատրվում էր մեղադրյալին ներկայացնելու պահից:

2 Աշխատանքային և սոցիալական օրենսդրությունը: Անգլիայի աշխատանքային օրենսդրությունը ձևավորվեց դասակարգային պայքարի շնորհիվ: Տարրական իրավունքների նվաճումը բանվորներին հաջողվում էր դասակարգային անողոք պայքարի միջոցով: Այսպես, միայն 1901թ. իրավաբանորեն ամրապնդվեց աշխատանքային կարգապահությունն արդյունաբերության մեջ (աշխատաժամը, հանգիստը, ընդմիջումները և այլն): Ատելի «համակարգի» դեմ ելույթները շարունակվեցին XVIII դ. մինչև 1940 թ.: Պառլամենտն ընդունեց մի շարք ակտեր, որոնք անօրինական էին համարում դրամի փոխարեն ապրանքներով կամ սննդամթերքով վճարումը:

Մինչև 1863թ. ձեռնարկատիրոջ և բանվորների միջև հարաբերությունները կարգավորվում էին «տիրոջ ու ծառայի մասին օրենքով»: Եթե աշխատանքի ընդունվածը խախտում էր գործարքը, ապա նա ենթարկվում էր քրեական պատժի: Մեկ տարվա ընթացքում այս կանոնը կիրառվեց 10.339 անգամ:

Աշխատավորության բողոքները ստիպեցին կառավարությանը 1875 թ. պառլամենտով անցկացնել «ձեռնարկատերերի և բանվորների մասին ակտը», ըստ որի երկու կողմերն ունեին ձևականորեն հավասար իրավունքներ: Այդ ժամանակ Մեծ Բրիտանիայի բանվոր դասակարգը կռիվ-տիվ պայմանագրեր կնքելու հնարավորություն ստացավ:

Պրոֆեսիոնալ կազմակերպությունների իրավական դրությունն ամբողջովին անորոշ էր: 1871 թ. աշխատավորների ճնշման տակ հրապարակված ակտն իրավաբանական անձի կարգավիճակ չձևորեց տրեյդ-յունիաներին:

1871թ. մեկ ուրիշ օրենքով իշխանությունները քրեական պատասխանատվություն նախատեսեցին գործադուլների և պայքարի մի շարք այլ արյուրակետ միջոցների դեպքում:

XX դ. սկզբում երկրում դասակարգային պայքարի սրման ժամանակ մագիստրատները սկսեցին բավարարել տրեյ-յունիոնների նկատմամբ վնասների փոխհատուցման մասին ձեռնարկատերերի պահանջները:

1901 թ. Տաֆյան լեռնահովիտի երկաթուղային ընկերությունը գործ սկսեց երկաթուղայինների միության դեմ: Արդյունքը եղավ այն, որ երկրի բարձրագույն դատական ատյանը՝ լորդերի պալատը, կայացրեց մի որոշում, որը հզոր հարված հասցրեց աշխատավորների կազմակերպություններին: Վերջիններս պատճառած «վնասների» համար պարտավոր էին սեփականատերերին վճարել մի քանի միլիոն ֆունտ ստեռլինգ: Եվ միայն 1906 թ. բանվոր դասակարգի ուժեղ ճնշման տակ կատարությունն ընդունեց օրենք, ըստ որի ուժը կորցրեց վերը նշված որոշումը:

Բանվոր դասակարգի կազմակերպվածության և ակտիվության աստիճանական աճը թույլ տվեց նրան ազդել պետության վրա՝ աշխատանքի կարգավորման հարցերը լուծելու նպատակով: Պառլամենտը ստիպված էր ժամանակ առ ժամանակ զիջումների գնալ: Նա ընդունեց ամենից առաջ կանանց և երեխաներին վերաբերող օրենքներ:

Մանկական աշխատանքի կանոնակարգման փորձեր էին կատարվել դեռևս 1802 թ.: 1883 թ. ընդունվել էր օրենք, որի համաձայն մանածագործական արդյունաբերության մեջ արգելվում էր երեխաների գիշերային աշխատանքը: 9-13 տարեկան երեխաների համար աշխատանքային օրը չէր կարող գերազանցել 8 ժամից, իսկ մինչև 18 տարեկան դեռահասների համար՝ 12 ժամից: Բայց դա չտվեց նշանակալի արդյունք, քանի որ ձեռնարկատերերը սկսեցին օգտագործել «խմբակային աշխատանքի» համակարգը: Բանվորների հերթափոխը տեղի էր ունենում ամբողջ օրվա ընթացքում և առանձին դեռահասների աշխատանքի տևողության հսկողությունը դժվար էր:

1842 թ. արգելվեցին ստորգետնյա աշխատանքները կանանց և մինչև 10 տարեկան երեխաների համար:

1847 թ. հրապարակվեց օրենք, ըստ որի մանածագործական արդյունաբերությունում կանանց և 14 տարեկանից ավել դեռահասների համար 2 աշխատանքային օրը չպետք է գերազանցեր 10 ժամը (այդ կանոնը տարածվում էր նաև այն տղամարդկանց վրա, որոնք աշխատում էին կանանց և երեխաների հետ մեկ հերթափոխում): Միայն XIX դ. երկարող կեսում (1867 և 1878 թթ. օրենքներ) այդ դրույթները տարածվել էին բոլոր այն ձեռնարկությունների վրա, որտեղ աշխատում էին 50 հոգուց ավելի բանվորներ: Աշխատանքային օրվա կրճատման համար պայքարը Անգլիայում հատկապես ուժեղացավ այն քանից հետո, երբ 1866 թ. Համընդհանուր բանվորական կոնգրեսում առաջ քաշվեց 8-ժամյա աշխատանքային օրվա պա-

հանջր: Բայց սահմանադրության մեջ այս պահանջն իր արտահայտությունը գտավ միայն XX դ. սկզբում:

1880 թ. ընդունված օրենքով աշխատույի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում վարձատուն ենթարկվում էր պատասխանատվության: Սակայն, պետք է նշել, որ տվյալ դրույթը գործում էր ոլորակի վերապահումներով: 1897 թ. ընդունվեց օրենք, որը շատ քիչ ընդլայնեց սոցիալական ապահովագրության ոլորտը, քանի որ այն չէր տարածվում նավաստիների, գյուղատնտեսական աշխատողների և տնային ծառայողների վրա:

1908թ. ակտով ծերերի համար սահմանվեցին թոշակներ, որոնք վճարվում էին այն անձանց, ովքեր. 1) արդեն 70 տարեկան էին, 2) վերջին 20 տարվա ընթացքում բնակվել էին Միացյալ թագավորության սահմաններում, 3) 20 տարվա ընթացքում բարեգործական ընկերություններից չէին ստացել որևէ օգնություն, 4) սովորաբար չէին հրաժարվել իրենց ընդունակություններից և կարողություններից համապատասխան աշխատանքից, 5) տարեկան եկամուտ էին ստանում 30 գլինեյից ոչ ավելին: Չարմանայի չէ, որ այս խղճուկ նպաստները Անգլիայում ստացան «հանգուցյալների թոշակներ» անվանումը:

Միայն 1911 թ. սկսվեց կիրառվել աշխատավորների պարտադիր ապահովագրումը՝ հիվանդության կամ գործազրկության դեպքերում: Կառավարությունը ներկայացնում էր անհրաժեշտ միջոցների միայն 1/4 -ը, իսկ մնացած գումարը պետք է հավասարաչափ մուծվեր աշխատողների և ձեռնարկատերերի կողմից:

Դեմոկրատական հասարակայնության պահանջները, որոնք ամրապնդվում էին աշխատավորների ելույթներով, հասցրին նրան, որ երկրում ստեղծվեց պետական տարրական դպրոցների ցանց: Մինչև 1870 թ. տարրական կրթությունն այստեղ գտնվում էր եկեղեցու և բարեգործական ընկերությունների ձեռքում: Այդ տարվանից գաղտնի խորհրդի «կրթության դեպարտամենտում» հիմնադրվեց «Դպրոցական բյուրո»: Նորաստեղծ մարմինը պետք է տնօրիներ տարրական կրթությունը, որը 1891 թ. դարձավ պարտադիր:

1899 թ. Մեծ Բրիտանիայի պատմության մեջ առաջին անգամ ստեղծվում է Լուսավորության նախարարություն: 1902 թ. պառլամենտն ընդունեց օրենք, որով լուծարվեցին «Դպրոցական խորհուրդները» և ժողովրդական կրթության հարցերը հանձնվեցին տեղական ինքնակառավարման մարմիններին: Միաժամանակ սահմանվեց, որ դպրոցականը պետք է սովորի սկսած 5 տարեկանից՝ առնվազն 7 տարի:

Պետական երկրորդ կարգի դպրոցների պարապմունքները անվճար էին:

Այդ ժամանակաշրջանում փորձեր են ձեռնարկվում նաև սոցիալական հիվանդանայի իրավական կարգավորման համար:

Այս տիպի օրենքների շարքում առաջինը պետք է նշել 1875 թ. «Հասարակության առողջապահության մասին ակտը»:

ՖՐԱՆՍԻԱՅԻ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԸ

259

105

1. XVIII դ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՍԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հեղափոխության սկիզբը: Հեղափոխության արմատական և հիմնական պատճառը հանդիսացավ նոր գյուղացույ աբտադյոտական ուժերի և երկրում տիրող ֆեոդալական արտադրական հարաբերությունների միջև առավելագույնին հասած սուր հակասությունը: Ֆեոդալիզմն արդեն ի վիճակի չէր պահպանել նրանց անհրաժեշտ հետագա աճը: Ժողովուրդն այդ զգաց ամենից առաջ ֆեոդալական բռնակալության ուժեղացման մեջ:

Իր վիճակով գոհ չէր նաև արդյունաբերողների, վաճառականների, առևտրականների հիմնական մասը: Նրանք հարկադրված վճարում էին մեծ հարկեր և տուրքեր, ինչը հիմնականում ուղղված էր քաղաքական արքունիքի և արտոնյալ դասերի պահպանությանը:

Ներքին շուկան ծայր աստիճան սահմանափակ էր արդյունաբերության համար: Գյուղացիությունը (երկրի ազգաբնակչության հիմնական մասը) արդյունաբերական ապրանքներ համարյա չէր գնում: Առևտրին խանգարում էին բազմաթիվ քանակությամբ մաքսատները: Արտաքին առևտուրն (ամենից առաջ գաղութայինը) արհեստականորեն կենտրոնացված էր արտոնյալ վաճառականության փոքրիկ խմբի ձեռքում, որն իր եկամուտները կիսում էր ազնվականության վերնախավի հետ:

Ազնվականության հիմնական մասը և հոգևորականության վերնախավը ձգտում էր պահպանել զոյություն ունեցող հասարակարգը, որի պաշտպանության հիմնական զենքը նրանք տեսնում էին ֆեոդալական անսահմանափակ պետության մեջ: Մինչդեռ երկրում հասունանում էր խորը փոփոխությունների անհրաժեշտությունը: Դրան պատրաստվում էր նաև բուրժուազիան՝ հակաֆեոդալական շարժման տնտեսական և քաղաքական ամենաազդեցիկ ու առավել կազմակերպված (որը ոչ պակաս կարևոր էր), կրթված մեծ սոցիալական խումբը: Այդ ժամանակ Ֆրանսիայում ա-

ռաջին անգամ բուրժուա սկսեցին անվանել բանկի տերերին, վարձակալներին, մանուֆակտուրաների սեփականատերերին, վաճառականներին և, ընդհանրապես, ձեռնարկատերերին: Բուրժուազիայի կողմից նյութական և այլ աջակցության շնորհիվ լայն ճանաչում գտավ լուսավորիչների գաղափարախոսությունը: Այն քննադատում էր ֆեոդալական աշխարհայացքը, որն օրհնում էր կղերական անսահմանափակ բռնակալությունը, դասային արտոնությունները, միջնադարյան սնուսպաշտությունը և խավարամոլությունը: Ռեակցիոն գաղափարախոսությանը լուսավորիչները հակադրում էին նոր քաղաքական աշխարհայացքը, որը, ինչպես նրանք գրում էին, համապատասխանում էր համընդհանուր բանականության և արդարության պահանջներին: Նրանց կողմից հանգամանորեն ուսումնասիրվում էր հեղափոխությունների փորձը Իռլանդիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում:

Իրենց վերջնական եզրակացություններում նրանք միանշանակ չէին, բայց հիմնական հարցում համամիտ էին՝ ապացուցվում էր դեմոկրատական հիմունքներով պետա-իրավական լուրջ վերափոխումների անհրաժեշտությունը:

1788 թ. Ֆրանսիային մեծ հարված հասցրեց տնտեսական ճգնաժամը: Հերթական ոչ բերքառատ տարի լինելու հետևանքով երկրի մեծ մասի գյուղացիները և քաղաքային բնակչության ստորին խավը հայտնվեցին սովի վտանգի առջև: Արտադրությունը կրճատվեց և հազարավոր աշխատավորներ մնացին առանց աշխատանքի: Սկսվեցին գյուղացիական հուզումները, որոնք տարածվեցին նաև քաղաքներում: Մի շարք տեղերում զինվորները հրաժարվում էին դեմ կանգնել ժողովրդին: Այդ պայմաններում կառավարությունը ստիպված եղավ գնալ զիջումների: Այն հայտարարեց Գլխավոր շտատների գումարման մասին, որը 150 տարուց անել էր գումարվել: Կառավարող շրջանների կարծիքով Գլխավոր շտատները պետք է օգնեին միապետությանը հաղթահարելու ֆինանսական դժվարությունները՝ հավանություն տալով նոր մտցվող հարկերին: Գլխավոր շտատների հետ այլ հույսեր էր կապում երրորդ դասը, որն առաջարկում էր կարևոր վերափոխումների անցկացում Ֆրանսիայի հասարակական և պետական կայսերում: Իրենց լիազորներին ուղղված հրահանգներում նա պահանջում էր թագավորական բռնակալության սահմանափակում, բյուջեի հաստատման իրավունք և դրա իրագործման հսկողություն, վարչական մարմինների և դատարանների գործունեության մեջ խիստ օրինականության պահպանում, գյուղացիների վիճակի բարելավում և այլն:

1789թ. մայիսին կայացավ գլխավոր շտատների բացումը: Կառավարող շրջանները, ձգտելով նրանում պահպանել մեծամասնությունը, պահանջեցին քվեարկության հին կարգը՝ յուրաքանչյուր դաս պետք է ունենար

մեկ ձայն: Դրան չհամաձայնվեցին երկուրդ դասի ներկայացուցիչները: Նրանք պահանջում էին. որ նիստերն անցկացվեն ոչ թե առանձին՝ ըստ դասերի, այլ համատեղ: Այսպիսի համատեղ նիստերում որոշումները պետք է ընդունվեին ձայների մեծամասնությամբ: Միայն այդ դեպքում երրորդ դասի լիազորները կարող էին հույս դնել իրենց ձեռնարկումների հաջողության վրա:

Կառավարությունը հրաժարվեց քվեարկության նոր կարգ սահմանելուց: Դրանից հետո երրորդ դասի ներկայացուցիչներն իրենց հայտարարեցին որպես Ազգային ժողով (1789թ., հունիս), իսկ մեկ ամիս անց՝ Մահամառոյի ժողով: Ազգային ժողովի որոշմամբ պատգամավորներն անձեռնմխելի էին¹: Երրորդ դասը Ֆրանսիայի ժողովրդի անունից հայտարարեց հին օրենքների վերացման և նոր օրենքների ընդունման իր իրավունքի մասին: Թագավորը և ազնվականությանը որոշեցին ցրել ժողովը: Վերսալում, որտեղ գումարվել էր նիստը, սկսվեց գորքերի կենտրոնացումը: Թվում էր, թե ոչինչ չէր խանգարում կառավարությանն՝ իր նպատակներն իրագործելու համար:

Երբ Փարիզում հայտնի դարձավ կառավարության ձեռնարկած միջոցառումների մասին՝ հակաֆեոդալական շարժման դեմ պատրաստվող զանգվածային արյունահեղ դատաստանի վերաբերյալ, Փարիզի ժողովուրդը սկսեց զինված ապստամբություն: Չորքի մեծամասնությունը շուտով անցավ նրա կողմը և Փարիզը համարյա ամբողջությամբ հայտնվեց ապստամբների ձեռքում: Հուլիսի 14 -ին նրանք գրավեցին թագավորական ամրացը՝ Բաստիլի բանոթ: Բաստիլի անկման օրը, ըստ էության, դարձավ նոր Ֆրանսիայի ծննդյան օրը և ներկայումս նշվում է որպես ժողովրդական տոն:

Մահամառոյական միապետություն: Հեղափոխությունը, սկսվելով Փարիզում, շուտով ընդգրկեց ամբողջ երկիրը: Ապստամբներն արտաքսում էին թագավորական բյուրոկրատներին, գյուղացիները հրաժարվում էին կատարել ֆեոդալական պարիակները: Շատ գավառական քաղաքներում տեղական կառավարման հին մարմինները լուծարվել էին: Չորքը մեծամասնությամբ չէր ենթարկվում թագավորական զենեռալների: Չինվորները հրաժարվում էին կրակել ժողովրդի վրա:

Երրորդ դասի վերին խավերը (խոշոր բուրժուազիան), որոնք Մահամառոյի ժողովում զերակշռող դիրք էին զբաղում, ժողովրդական շարժումն օգտագործեցին տեղերում քաղաքական իշխանությունը նվաճելու համար: Ստեղծվեցին տեղական ինքնակառավարման նոր մարմիններ՝ մունիցի-

¹ Постановление Национального собрания, 23 июня 1789г., տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 228:

պախտեաներ. որտեղ երրորդ դասի առավել ունևոր անձինք ղեկավար
ղեր էին կատարում:

Միաժամանակ բուրժուազիան ձեռնամուխ եղավ զինված ուժերի
ստեղծմանը: Հայտարարվեց Ազգային զվարդիայի ստեղծման անհրա-
ժեշտությունը: Յուրաքանչյուր ազգային զվարդիական իր հաշվին պետք
է ձեռք բերել բանկարժեք զինամթերք և հանդերձանք. պայման. որը փա-
կում էր աղքատ քաղաքացիների մոտքն Ազգային զվարդիա: Խոշոր բուր-
ժուազիան ֆինանսավորում էր թնիանոթների ձեռք բերումը, ռազմական
ուսուցումը և այլն: Նա էր ղեկավարում Ազգային զվարդիան, որի պետ
դարձավ երկրում մեծ համբավ ունեցող, ԱՄՆ-ի անկախության համար
պատերազմի մասնակից, չափավոր ռեֆորմների կողմնակից մարկիզ Լա-
ֆայստը:

Արդյունքում, պետությունը հայտնվեց քաղաքական խմբավորման
ձեռքում, որն օբյեկտիվորեն սերտացվում էր համաժողովրդաբուրժուազիայի և
նրան հարած յլբերյալ ազնվականների շահերը: Նրա ղեկավարների գա-
ղափարական գործունեության հիմքում ընկած էր ոչ թե վճռական պայ-
քարն ազնվականության դեմ, այլ համատեղ փոխադարձ զիջումների մի-
ջոցով համաձայնության գալու փորձը: Նրանք սահմանադրական միա-
պետության կողմնակիցներ էին:

1789 թ. օգոստոսի 11-ին Սահմանադիր ժողովում հանդիսավորու-
թյամբ հռչակվեց «Ֆեոդալական իրավունքների վերացման մասին» օրեն-
քը, որով վերացվում էր ճորտատիրական իրավունքը: Մակայն այդ օ-
րենքն ընդհանուր առմամբ չբավարարեց գյուղացիների գլխավոր պա-
հանջները: Այստեղ խոսքը գնում էր համեմատաբար երկրորդական, այս-
պես կոչված անձնական ֆեոդալական իրավունքների մասին (2-3 հոդ-
վածներ): Նախատեսվում էր հրաժարվել այն պարտականություններից,
որոնցից գյուղացիները հրաժարվել էին դեռևս հեղափոխության առաջին
օրերին և սպասում էին առավել դեմոկրատական օրենքի ընդունման:

Մարտի և քաղաքացու իրավունքների հռչակագիրը: Սահմանադիր
ժողովի կողմից 1789 թ. օգոստոսի 26-ին ընդունվեց հեղափոխության
կարևորագույն փաստաթուղթը՝ «Մարտի և քաղաքացու իրավունքների
հռչակագիրը»: Որպես հեղափոխության ծրագիր, այն ստեղծողների կար-
ծիքով պետք է նպաստեր ժողովրդական շարժման հանդարտացմանը:

Դրա հետ մեկտեղ հռչակագրի բովանդակությունը ոչ քիչ չափով որոշ-
վում էր կոնկրետ պատմական պահի յուրօրինակությամբ: Դա ժամանակ
էր, երբ դեռ հեղափոխական ճամբարում չէր կատարվել քաղաքական ու

¹ Декрет учредительного собрания от 11 августа 1789г. об уничтожении феодаль-
ных прав и привелегий, илп. 1, տե՛ս Конституции и законодательные акты буржуаз-
ных государств, М., 1957, էջ 229:

ժերի սահմանսզատում: Հեղափոխականների և նրանց գաղափարախոս-
ների մի մասի մեջ դեռ ուժեղ էին «ազատության, հավասարության և եղ-
բայության» անհապաղ հաղթության հնարավորության պատյանքները:
Բայց քիչ չէին նաև նրանք, ովքեր ուզում էին հռչակագրում տեսնել վերա-
ցական սկզբունքների ամբողջություն, որին պետք է ձգտեր հասարակու-
թյունը, և որը պարտադիր չէր կյանքում անհապաղ իրականացնել: «Հռչա-
կագրի խնդիրը, -ասում էր Սահմանադրական ժողովի հայտնի պատգա-
մավոր Դյուպորր, - նրանում է, որ կայադանա արտահայտել բոլոր ժա-
մանակների և ժողովուրդների ճշմարտությունները»¹:

Պատմությունը ցույց տվեց, որ Հռչակագրի ստեղծողներին, որոնցից
կարևոր դերը պատկանում էր Լաֆայետին, Միրաբոյին, Մունյեին, Դյու-
պորին, չհաջողվեց հաշտեցնել ժողովրդական զանգվածներին նոր կազա-
վարության հետ: Բայց դա չէր նսննացնում նրանց կողմից կատարված
աշխատանքի կարևորությունը:

Հռչակագրի ձևակերպումների հստակությունը, նրա բոլոր պրոյեկտների
խիստ տրամաբանության վրա հիմնված փոխադարձ կապը վկայում է
փաստաթղթի հեղինակների տեսականորեն պատրաստվածության
բարձր մակարդակի մասին: Նրանց հաջողվեց առավելագույն խտացրած
բանաձևով շարադրել XVIII դ. Ֆրանսիայի առաջադեմ քաղաքական մտ-
քի գլխավոր եզրակացությունները նրա ապագա հասարակական-քաղա-
քական կարգի սկզբունքների վերաբերյալ: Դա հետևանք էր այն հսկայա-
կան աշխատանքի, որը կատարել էին Ֆրանսիայի փոլիտոսփաները և քա-
ղաքական գործիչները հեղափոխությունից դեռ շատ առաջ: Հռչակագրի
հեղինակներն առաջին հերթին հենվում էին Վոլտերի, Դիդրոյի աշխա-
տությունների Մոնտեսքիոյի, Ռուսոյի, Մարքիի աշխատանքների վրա:
Նրանց ստեղծագործության վրա նկատելի ազդեցություն ունեցան անգ-
լիացի գիտնականների՝ Լոկկիի, Մլոլտոնի, Բլեկստոնի, ստեղծագործու-
թյունները: Որպես կոնկրետ օրինակ հեղինակներն իրենց տրամադրու-
թյան տակ ունեին ամերիկյան անկախության Հռչակագիրը (1776 թ.), ի-
րավունքների Վլորջինյան Հռչակագիրը (1776 թ.), ինչպես նաև հայրենա-
կան պետա-իրավական պատմության փաստաթղթերը (Ֆրանսիայի գլ-
խավոր շտատների Հռչակագիրը և այլն):

Հռչակագիրը ձևակերպված էր համազգային մանիֆեստի ոգով. հան-
դիսավոր կերպով հռչակելով մարդկանց իրավահավասարությունը «մար-
դիկ ծնվում ու մնում են ազատ և հավասար են իրավունքների մեջ»²:

¹ Батыр К.И., Всеобщая история государства и права, М., 2000, էջ 204:

² Декларация прав человека и гражданина, 26 августа 1789г., հոդ. 1, տե՛ս
Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 85:

Հոչակվում էին դեմոկրատական պետա-իրավական կարգի սկզբունքները, որոնցում հատուկ տեղ էր տրվում մարդու բնական և անխախտելի իրավունքներին. ժողովրդական ինքնիշխանությանն ու իշխանությունների բաժանմանը: Հոչակագրում սահմանվում էր այդ սկզբունքների փոխադարձ կապը. այստեղ հիմնականը հայտարարվում էին մարդու իրավունքները, որոնց ապահովումը դրվում էր դեմոկրատական պետության վրա, որն էլ իր հերթին հենվում էր ժողովրդական ինքնիշխանության և իշխանությունների բաժանման սկզբունքների վրա:

Այսպիսի կառույցը բխում էր բնական իրավունքի դպրոցի գաղափարից, որը պետության գլխավոր նպատակը համարում էր մարդու անխախտելի իրավունքների պաշտպանությունը: Մարդու «բնական և անկապտելի» իրավունքներ էին հոչակվում ազատությունը, սեփականությունը, անժամանկությունը և ճնշմանը դիմադրություն ցույց տալը¹: Ազատության, ինչպես նաև մարդու մյուս բնական իրավունքների իրագործման համար օրենքով նախատեսվում էին որոշակի սահմաններ, որպեսզի հասարակության մյուս անդամները նույնպես կարողանային օգտվել այդ նույն իրավունքներից (հոդ.4):

Հոչակագրում ամրագրված են ազատության մի քանի տեսակներ (մամուլի, կարծիք արտահայտելու, դավանանքի): Այստեղ խոսք անգնան չկա ժողովների ու միությունների ազատության մասին: Դա բացատրվում էր զանգվածային ելույթների ու շարքային քաղաքացիների կազմակերպությունների և ամեն տեսակի միությունների հանդեպ օրենսդիրների ունեցած բացասական վերաբերմունքով:

Հոչակագիրն ընդգծում էր սեփականության իրավունքի նշանակությունը: Դրան ամբողջությամբ նվիրված էր 17-րդ հոդվածը, որը սեփականության իրավունքը համարում էր «սրբազան և անձեռնմխելի»: Այն անտեսում էր սեփականության տարբեր տեսակների միջև եղած սկզբունքային տարբերությունը և յրանով ստեղծում բոլորի գույքային շահերի հավասար պաշտպանության խաբուսիկ միտումը:

Ռուսոյի կողմից հստակ ձևակերպված՝ ամբողջությամբ և անբաժան ժողովրդին պատկանող սուվերենության գաղափարն, իր մարմնավորումը գտավ Հոչակագրի 3 հոդվածում: Բոլոր քաղաքացիներն իրավունք ունեին անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցել օրենքի ստեղծմանը²: Օրենքը հայտարարվում էր ընդհանուրի կամքի արտահայտությունը:

¹Декларация прав человека и гражданина, 26 августа 1789г., հոդ. 2, տես Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 85:

²Նույնը, հոդ. 6:

Մոնտեսփիոյի հետևութիւնները, որոնք քաղաքացիների ազատության և անվտանգության ապահովումը տեսնում էին պետական իշխանության (օրենսդիր, գործադիր և դատական) կազմակերպորեն իրարից անկախ և փոխադարձաբար միմյանց հավասարակշռող ճյուղերի ստեղծման մեջ, հանգեցրին այնպիսի եզրակացության, որ սահմանադրություն չի կարող ունենալ այն հասարակությունը, որտեղ իշխանությունները բաժանված չեն, և քաղաքացին սպառնալից չէ իր իրավունքներից օգտվելու հարցում (հոդ.16):

Հռչակագրում ~~ամրագրվեց անձի անձեռնմխելիության վերաբերյալ դրույթը, ըստ որի. «Ոչ ոք չի կարող ենթարկվել մեղադրության, ձերբակալման կամ կալանավորման այլ կերպ. քան օրենքով նախատեսված դեպքերում: Նա, ով կամայական հրաման կտա և կիրագործի, կամ կհրապարակի այն կատարել, ենթակա է պատժի» (հոդ.7):~~

Հանցագործության համար մեղադրվողը համարվում էր անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը չէր ապացուցվել օրենքով: Հասարակությունն իրավունք ստացավ հաշվետվություն պահանջել ցանկացած պաշտոնատար անձից:

Հռչակագիրը մեծ տպավորություն բողեց ժամանակակիցների վրա՝ ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Նա շատերի մոտ փոխեց դարաշրջանի աշխարհըմբռնումը, խթանեց միահեծանության դեմ պայքարի զարգացմանը և դեմոկրատիայի կազմավորմանը: Դրա հետ մեկտեղ Հռչակագրի դրույթները վերացական էին:

1789 թ. Հռչակագրով նախատեսվում էր վերացնել ֆեոդալական ճնշումը, ազնվականության հողերը: Սպասվում էր գործազրկության նվազեցում, սննդամթերքների գների իջեցում, շարքային քաղաքացիներին Հռչակագրում ամրագրված իրավունքների շնորհում: Սակայն իրականությունը փշրեց այդ պատրանքները: Իշխանության գլուխ եկած բուրժուազիան մտահոգված էր իր շահերով:

Պատմական իրադարձությունները, համարյա համընկնելով ժամանակի տեսակետից Հռչակագրի ընդունման հետ, ցույց տվեցին, որ նոր կառավարող շրջանները կանգնեցին Հռչակագրի սկզբունքների ոչ միայն փաստացի, այլ նաև նորմատիվ խախտման ճանապարհին: Նրա հյապապակումից չուրս ամիս անց Սահմանադիր ժողովը 1789 թ. դեկտեմբերի 22-ին ընդունեց ընտրողների համար դեկրետ գույքային և այլ ցեղեղ մտցնելու վերաբերյալ: Համաձայն դեկրետի, բոլոր քաղաքացիները բաժանվում էին այսպես կոչված «ակտիվների» և «պասսիվների»: Միայն ակտիվ քաղաքացիներն էին օգտվում ընտրական իրավունքից: Ակտիվ քաղաքացի համարվելու համար ~~անհրաժեշտ էր. 1) լինել ֆրանսիացի, 2) հասնել 25-ամյա~~

տարիքի, 3) ապրել տվյալ տարածքում մեկ տարուց ոչ պակաս, 4) վճարել ուղղակի հարկ երեք օրվա աշխատավարձի չափով, 5) չլինել սպասավորի կարգավիճակում. այսինքն՝ «ծառայող հոճիկի վրա» (հոլ.3)՝:

Առավել բարձր գույքային ցենզ սահմանվում էր այն ակտիվ քաղաքացիների համար, ովքեր կարող էին ընտրվել: Նրանք պետք է ունենային հող՝ սեփականության իրավունքով և հարկ վճարեին մեկ արծաթի մարկի արժողությամբ (այն ժամանակների համար բավականին զգալի գումար՝ մեկ արծաթի մարկը հավասար էր 50 լիվրի): (Ավելագնենք, որ այս դրույթը 1791 թ. սահմանադրությամբ չընդունվեց):

«Արծաթի մարկի» մասին դեկրետը դժգոհություն առաջացրեց նույնիսկ ունևոր քաղաքացիների շրջանում: 1791 թ. Սահմանադրյալ ժողովը որոշեց որոշ չափով իջեցնել գույքային ցենզը, սահմանափակելով այն սեփականության եկամտով, որը հավասար էր՝ 6000 մարդուց ավելի բնակչություն ունեցող քաղաքներում՝ 200 օրվա վարձու աշխատանքի միջին վարձատրությանը, իսկ 6000 մարդուց պակաս բնակչություն ունեցող քաղաքներում և գյուղերում՝ 150 օրվա: Չնայած դրան գլխավորը մնաց անփոփոխ. քաղաքացիների բաժանման հիմքում ընկած էր սեփականությունը:

Սահմանադիր ժողովի օրենսդրական գործունեությունը: Սահմանադիր ժողովն ընդունեց դեկրետներ դասային բաժանման վերացման, արտադրամասային կարգի, ներքին մաքսատների և այլ միջնադարյան ինստիտուտների վերացման մասին, որոնք խոչընդոտում էին արդյունաբերության և առևտրի զարգացմանը: Վարչա-տարածքային բաժանման մասին դեկրետով երկիրը բաժանվեց դեպարտամենտների, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում էր անտեսական կյանքի միասնությամբ կապված մի մարզ:

Հատուկ դեկրետով եկեղեցու ունեզվածքը հանձնվեց ազգի տնօրինությանը: Շուրջատրվեց եկեղեցական հողերի վաճառքը: Դրանց բարձր գները գյուղացիությանը զրկում էր այն գներու հնարավորությունից և բուրժուազիայի համար պայմաններ ստեղծում նոր տարածքներ ձեռք բերելու գործում:

— Գետության կողմից հոգևորականության վրա սահմանվում էր հսկողություն: Ֆրանսիական կաթոլիկ եկեղեցու վարչական ենթակայությունը Վատիկանին վերացվում էր: Քահանաները պետք է ընտրվեին և պետությանը տային հավատարմության երդում: Եկեղեցին զրկվում էր «տասնորդի» իրավունքից: Հավատարմության երդում տված քահանաները պետություն-

¹ Декрет 22 декабря 1789г., հոլդ. 3, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 88:

² Декрет о марке серебра, տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 233:

նից պարզ էին ստանում: Եկեղեցու տնօրինությունից վերցվում էր քաղաքացիական կացության ակտերի գրանցման իրավունքը:

Այս ամենին զուգահեռ հեղափոխության այլ կարևորագույն հարցերի նկատմամբ Սահմանադիր ժողովը բռնեց պահպանողական դիրք:

1791 թ. ձեռնարկատերերի պահանջով Սահմանադիր ժողովն ընդունեց դեկրետ «միևնույն մասնագիտություն և նույն կարգավիճակում գտնվող բանվորների ու արհեստավորների հավաքների վերաբերյալ», որը հայտնի դարձավ որպես Լե Շապելյեի օրենք (պատգամավոր Լե Շապելյեի անունով): Քաղաքացիների սահմանադրական ազատությունը պաշտպանելու կեղծ պատրվակի տակ բանվորներին արգելվում էր խմբավորվել միությունների մեջ և գործադուլներ անցկացնել¹: Աշխատավարձի և աշխատանքի պայմանների վերաբերյալ բանվորների կռիվները համարվում էին անվավեր, քանի որ «հակաաում» էին Հռչակագրին և սահմանադրությանը:

55 105 2. 1791 թ. ՍԱՀՍԱՆԱԴԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ցակորհինյանների սահմանադրական ակտերը: 1789 թ. վերջին Սահմանադիր ժողովը քննարկեց և հաստատեց սահմանադրական հիմնական սկզբունքները, որոնք սահմանում էին օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի, թագավորի, կառավարության, դատարանի և ընտրական համակարգի կարգավիճակը:

Դրանից հետո սահմանադրության ստեղծման հետ կապված աշխատանքը դանդաղեց: Երկրում սուր քաղաքական պայքարը ժողովի ուշադրությունն անընդհատ կենտրոնացնում էր այլ անհետաձգելի հարցերի լուծման վրա: Սահմանադրության առանձին դրույթներ ընդունվում էին օրենքների ձևով: Ստեղծվեց սահմանադրական ակտերի ընտրության և դասակարգման հատուկ հանձնաժողով, որի աշխատանքի արդյունքը եղավ սահմանադրության ստեղծումը: 1791 թ. սեպտեմբերի 3-ին Սահմանադիր ժողովը հաստատեց այն, որը շուտով թագավորը ստորագրեց և տվեց հավատարմության երդում:

Սահմանադրությունը հաստատեց իշխանությունների պետական բաժանման, միապետության սահմանափակման, ազգային ինքնիշխանության և ներկայացուցչական կառավարման սկզբունքների վրա հիմնված պետական կարգը:

¹ Закон относительно собраний рабочих и ремесленников одного и того же состояния и одной и той же профессии (Закон Ле-Шапелье), հոդ. 1, տես Խрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 92:

Օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինը դառնում էր մեկ պալատ ուժեցող Ազգային ժողովը, որն ընտրվում էր երկու տարած և չէր կարող արձանկվել թագավորի կողմից:

Պատգամավորներն օժտված էին անձեռնմխելիության իրավունքով: Նրանք չէին կարող ենթարկվել քրեական հետապնդման իրենց պարտականությունները կատարելու ժամանակ արտահայտած մտքերի կամ կատարած գործադրությունների համար: Քրեական հանցագործություն կատարած պատգամավորին հետապնդելու համար պահանջվում էր Ազգային ժողովի համաձայնությունը:

Ազգային ժողովի գլխավոր խնդիրն օրենքների ընդունումն էր: Ժողովի կողմից ընդունված օրինագիծը ենթակա էր թագավորի հաստատմանը: Իսկ եթե թագավորը մերժում էր այն և մերժված օրինագիծը նորից ընդունվում էր Ազգային ժողովի հաջորդ երկու կազմերի կողմից, ապա նախագիծը ձեռք էր բերում օրենքի ուժ:

Ազգային ժողովի լրավատությանը ենթակա էին հետևյալ կարևոր հարցերը. 1) ռազմական գործերի բնագավառում՝ ամենամյա որշումներին Ռթապարակումը զինված ուժերի քանակի և կազմի վերաբերյալ, նրանց աշխատավարձի սահմանման և պատերազմ հայտարարելու մասին որոշումներ կայացնելը, 2) Ֆինանսների բնագավառում՝ բյուջեի ամենամյա կազմումը և հաստատումը, հարկերի սահմանումը, պետական միջոցների ծախսումների վրա հսկողությունը, 3) վարչական կառավարման բնագավառում՝ ստեղծել նոր պաշտոններ, պարզեցնել պետական ապարատը, 4) արդարադատության բնագավառում՝ գերագույն դատարանում քրեական պատասխանատվության ենթարկել այն նախարարներին ու պաշտոնատար անձանց, ովքեր կասկածվում են պետության անվտանգության դեմ դավադրություն կազմելու մեջ, 5) արտաքին հարաբերությունների բնագավառում՝ պայմանագրերի վավերացումն օտարերկրյա պետությունների և այլն¹:

Ազգային ժողովի կարգավիճակի ամրապնդման համար սահմանվում էր կարգ, ըստ որի ժողովի նստաշրջանները պետք է հրավիրվեին օրենքի համաձայն, այլ ոչ թե թագավորի հայեցողությամբ:

Սահմանադրությամբ գործադիր իշխանությունը հանձնվեց թագավորին, որն այն պետք է իրագործեր իր կողմից նշանակված նախարարների հետ միասին:

Թագավորը գլխավորում էր զինված ուժերը, նշանակում էր հրամանատարական կազմը, հաստատում էր բարձրատիճան պաշտոնյաների նշանակումը, իրագործում էր ներքին կառավարման և արտաքին հարաբերու-

¹ Конституция 3 сентября 1791г., рашին 3, գլուխ 2, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 99:

քյունների ընդհանուր ղեկավարումը:

Թագավորի գործադիր իշխանությունն էականորեն սահմանափակվում էր: Նա կարող էր գործել միայն ԱԺ-ի կողմից ընդունված օրենքների սահմաններում:

Թագավորի կարգադրություններն օրենքի ուժ էին ստանում միայն համապատասխան նախարարի ստորագրությունից հետո: Նախարարն էլ կրում էր պատասխանատվություն ընդունված որոշման համար: Նրանք նշանակվում և ազատվում էին թագավորի կողմից, բայց իրենց գերատեսչություններում անօրինական գործողություններ կատարելու համար ԱԺ-ը կարող էր նրանց դատի տալ:

Տեղերում կառավարումն իրականացնում էին ընտրվի մարմինները: Նրանք պետք է գործեին համապատասխան նախարարների ղեկավարությամբ և խստությամբ: Թագավորը կարող էր տեղական իշխանությունների որոշումները չելյալ հայտարարել, եթե դրանք հակասում էին կառավարության օրենքներին և որոշումներին, իսկ անհնազանդության դեպքում իրավունք ուներ նրանց ազատելու պաշտոնից՝ այդ մասին տեղյակ պահելով Ազգային ժողովին: Վերջինս մերժում կամ հաստատում էր ընդունված որոշումը, իսկ մեղավորներին դատի տալիս: Սահմանադրության 3-րդ բաժնի 5-րդ գլուխը նվիրված է դատական իշխանությանը: Այն իրականացնում էին ժամկետով ընտրված դատավորները: Նրանք կարող էին պաշտոնագրկվել իրենց կողմից կատարված հանցագործությունների համար:

Քրեական գործերի քննության համար ստեղծվում էր երովսանեթի ստյան: Չևավորվեց վճռաբեկ դատարանը, որը զանգատների հիման վրա որոշումներ էր կայացնում գործս ըստ էության լսած դատավաճ վերջին ատյանի դատավճիռների նկատմամբ: Այն իրավունք ուներ բեկանելու անօրինական դատավճիռները և ետ ուղարկել նոր քննության: Վճռաբեկ ստյանն իրավասու չէր գործն ըստ էության քննելու:

Նախատեսվում էր ստեղծել գերագույն ռաստաբան, որը կոչված էր քննելու նախարարների կողմից կատարված իրավախախտումները, ինչպես նաև պետության անվտանգությանը սպառնող ոճրագործությունները:

Հատուկ նշանակություն ունեին սահմանադրության այն դրույթները, որոնք նվիրված էին ընտրական համակարգին: Ազգային ժողովի պատգամավորները պետք է ընտրվեին երկաստիճան ընտրությունների հիման վրա, որին մասնակցում էին միայն ակտիվ քաղաքացիները: Այսինքն՝ 25 տարին լրացած Ֆրանսիայի այն քաղաքացիները, ովքեր օրենքով սահմանված ժամկետով բնակվում էին որևէ վայրում, վճարում էին ուղղակի հարկ ոչ պակաս երեք քանվորական օրվա չափով, մտցված էին ազգային

մնալ իշխանության գլուխ: Այս կուսակցությունը գլխավորեցին խոշոր քաղաքական գործիչները, որոնք կարող էին ժամանակին կատարել անհրաժեշտ գիջումներ միջին և մանր բուրժուազիայի օգտին: Այնուամենայնիվ, նրանք համառորեն դիմադրում էին ընտրական իրավունքի հետագա զարգացմանը:

Նշենք, որ դեռևս 30-ական թթ. լիբերալների կուսակցությունից առանձնացավ ռադիկալների խմբավորումը, որը գլխավորեց հացի մասին օրենքները չեղյալ հայտարարելու համար պայքարը: Այժմ նրանք ելույթ էին ունենում նոր ընտրական ռեֆորմի օգտին և այդ պայքարին մասնակից էին դարձնում նաև բանվորական կազմակերպություններին:

Չարտիստական շարժման պարտության հետևանքով Անգլիայում բանվորական շարժումը որոշ ժամանակով կորցրեց իր ինքնուրույնությունը և վերածվեց տնտեսական պահանջների համար գաղտնի պայքարի:

Հենց այդ ժամանակաշրջանում ընդհանուր գծերով ձևավորվեց տյեդ-յունիանների՝ պրոֆեսիոնալ բանվորական միությունների կազմակերպումը, որը միավորեց լավ վարձատրվող բարձր որակավորում ունեցող բանվորներին: Չնայած որ Տրեդ-յունիանների խորհուրդը նպատակ չուներ խառնվելու քաղաքական պայքարին և չուներ ոչ մի քաղաքական ծրագիր, այնուամենայնիվ, բանվորական զանգվածների ճնշման ազդեցության տակ, ստիպված էր բանվորական կազմակերպություններին թույլատրել մասնակցելու ընտրական ռեֆորմի համար մղվող պայքարին: Բանվորների մասնակցությունն այդ պայքարին որոշակիորեն ապահովեց հաջողությունը: Տրեդ-յունիանները հույս ունեին ընտրող բանվորների թիվը մեծացնելով ձեռք բերել որոշ ազդեցություն համայնքների պալատի վրա, և դրանով հնարավորություն ստեղծել ձեռնարկատերերի հետ ընդլայնել տնտեսական պայքարը:

Անգլիայի երկու կուսակցությունները վախճանալով ժողովրդի փութորկալի հուզումներին, վիճարկում էին նոր վերափոխումներ անցկացնելու շուրջը: Ի վերջո, պահպանողական կաբինետի ղեկավար Դիզրաելն առաջարկեց մի նախագիծ, որը որոշ լրացումներով պաշտպանեց լիբերալների ռադիկալ մասը:

1867թ. անցկացվեց երկրորդ պառլամենտական ռեֆորմը, որը նախատեսում էր պատգամավորական տեղերի նոր վերաբաշխում: Դա արտահայտվեց նրանում, որ 11 վայրեր բոլորովին զրկվեցին համայնքների պալատում պատգամավորներ ընտրելու իրավունքից, իսկ 35 վայրերը պահպանեցին միայն մեկ պատգամավոր ընտրելու իրավունքը: Ազատ մանդատները փոխանցվել էին խոշոր արդյունաբերական քաղաքներին ու կոմսություններին: Նոր օրենքը զգալիորեն փոխեց քաղաքների բնակիչների

ազնվականությունը թագավորի գլխավորությամբ՝ գործադիր իշխանությանը: Փոխգիջումը խոշոր բուրժուազիայի և ազնվականության միջև՝ իշխանությունների սահմանադրական բաժանման մեջ, գտավ իր գործնական մարմնավորումը:

Պատգամավորները մեծամասնությամբ պահպանողական էին և հեղափոխությունը համարում էին ավարտված:

Երկրի իրավիճակի մասին այլ կարծիքի էր ժողովուրդը: Չբավարարվելով ագրարային օրենսդրությամբ, գյուղացիությունն ուժեղացնում էր պայքարը հողի համար:

Քաղաքների աշխատավորները, ուրոնց վիճակը չբարելավվեց, պահանջում էին վճռական միջոցներ ձեռնարկել գործազրկության և զենքի աճի դեմ: Շատ քաղաքներում տեղի էին ունենում բախումներ աշխատավորության և ազգային գվարդիայի միջև: Այդ ժամանակ իր գործունեությունն ակտիվացրեց ազնվական-միապետական հսկահեղափոխությունը: Կտրուկ ուժեղացավ կաթոլիկ հոգևորականության միապետական քարոզը:

Այդպիսի պայմաններում սահմանադրությունը ցույց տվեց իր անկենսունակությունը:

1791-1792 թթ. Ազգային ժողովը շարունակ ընդհարվելով գործադիր իշխանության հետ (համեմատաբար երկրորդական հարցերի շուրջ), փաստորեն ոչ մի լուրջ քայլ չէր նախաձեռնում և չէր էլ պատրաստվում նախաձեռնել հակահեղափոխության դեմ: Լարված քաղաքական իրավիճակում Ֆրանսիայում ստեղծվել էին տարբեր խմբավորումներ, որոնցից յուրաքանչյուրն արտահայտում էր այս կամ այն սոցիալական խմբի շահերը: Դրանցից ամենահզորները երեքն էին. 1) ֆեյաբները որոնք հիմնականում ներկայացնում էին սահմանադրական-միապետական խոշոր բուրժուազիայի և լիբերալ ազնվականության շահերը, 2) ժիրոնդիստները, որոնք ներկայացնում էին առևտրա-արդյունաբերական, գլխավորապես գավառական միջին բուրժուազիայի շահերը, 3) լակոբիցյանները, որոնք օբյեկտիվորեն արտահայտում էին մանր, մասամբ միջին բուրժուազիայի, արհեստավորների և գյուղացիության շահերը:

1789 - 1791 թթ. երկրի քաղաքական կյանքում իշխում էին ֆեյաբները:

Ժիրոնդիստական հանրապետությունը: 1792 թ. երկրում քաղաքական կյանքի վրա զգալիորեն սկսեց ներգործել քաղաքական մթնոլորտի ազդեցությունը: Չևավորվեց եվրոպական խոշոր միապետությունների հակաֆրանսիական ռազմական կոալիցիա: Նրա նպատակն էր ջախջախել հեղափոխական Ֆրանսիային և հաստատել խիստ կարգ ու կանոն: Ազնվական-դավադիրներն ապագայի իրենց բոլոր հույսերը կապել էին օտարերկրյա ներխուժման հետ: Թագավորական արքունիքը հայտնվեց դավադրու-

բյան կենտրոնում՝ երկիրը տանելով պատերազմի: Էյա հետևանքով ժողովրդի մեջ ուժեղացան հակամիապետական տրամադրությունները:

Այդ ժամանակ ուժեղացավ Փարիզյան Կոմունայի՝ մայրաքաղաքի ինքնակառավարման մարմնի, ազդեցությունը: Այն բաղկացած էր Փարիզի սեկցիաների (վարչական միավորումների) ներկայացուցիչներից: Յուրաքանչյուր սեկցիա կոմունա էր ուղարկում երեք ընտրովի պատգամավոր: Սեկցիաները միաժամանակ իրենցից ներկայացնում էին Փարիզի առանձին շրջանների տեղական կառավարման մարմիններ: Նշենք, որ սեկցիաները գոյացել էին դեռևս գլխավոր շտատների ընտրությունների ժամանակ: Հեղափոխության հաղթանակից հետո դրանք առանց նախապես զգուշացնելու իրենց ձեռքը վերցրին մայրաքաղաքի համապատասխան շրջանների կառավարումը: Սկզբում Կոմունայում գերակշռում էր ֆելյանների ազդեցությունը, իսկ հետագայում՝ ժիլոնդիստների: Այստեղ անշողուն աճում էր յակոբինյանների կողմնակիցների թիվը:

1792 թ. օգոստոսի 10-ին գրոհով վերցվեց թագավորական արքունիքը: Ֆելյանների վարչությունը տապալվեց: Կոմունան, որի ձեռքում հայտնվեց մայրաքաղաքի ողջ իշխանությունը, ձեռքակալեց Լյուդովիկոս XVI-ին: Այն ստիպեց օրենսդիր ժողովին (որտեղ ժիլոնդիստներն ամենաազդեցիկ խմբավորումն էին) ընդունել մի շարք կարևոր որոշումներ: Օգոստոսի դեկրետով թագավորն ազատվում էր գործադիր իշխանությունը գրավորելու պարտականություններից: Օրենսդիր ժողովն իրավունք ստացավ «անհատական ընտրության ճանապարհով» նշանակելու նախարարներ: Հայտարարվեց պետական իշխանության նոր բարձրագույն մարմնի՝ Ազգային կոնվենտի հրավիրման մասին 1792 թ. օգոստոսի 11-ի դեկրետը սահմանեց կոնվենտի ընտրությունները նոր կարգ:

Արձակված կառավարության փոխարեն Օրենսդիր մարմինը ստեղծեց ժամանակավոր գործադիր խորհուրդ, որը հիմնականում կազմված էր ժիլոնդիստներից:

Սեպտեմբերին ավարտվեցին Կոնվենտի ընտրությունները: Ընտրվեցին 783 պատգամավոր (այդ թվում 34-ը՝ գաղութներից): Նրանցից 200-ը ժիլոնդիստներ էին, իսկ մոտավորապես 100-ը՝ յակոբինյաններ էին (Փարիզը հիմնականում քվեարկում էր նրանց օգտին): Կոնվենտում յակոբինյանները գրավեցին վերին նստարանները, այդ պատճառով նրանց սկսեցին անվանել «լեռ»: Պատգամավորների մեծ մասը ոչ մի խմբավորման չէր պատկանում: Կոնվենտը միահամուռ կելայով հաստատեց Ֆրանսիայում միապետության լուծարումը է 1791 թ. սահմանադրության վերացումը¹:

¹Декрет Национального Конвента, уничтожающий во Франции Королевскую власть, 21-22 сентября 1792г., in: «Хрестоматия по Всеобщей истории государства и права», т. 2, М., 1996, т. 105:

Սեպտեմբերի 25-ի դեկրետով Ազգային կոնվենտը ֆրանսիական հանրապետությունը հայտարարեց անբաժանելի և միասնական¹: Յուրաքանչյուր քաղաքացու սեփականությունը գտնվում էր ազգի պաշտպանության ներքո²:

Այս ամենի հետ մեկտեղ հեղափոխության կարևորագույն հարցը՝ գյուղում ֆեոդալական հարաբերությունների լիակատար վերացումը, չլուծվեց:

1792 -93թթ. գյուղացիական հուզումները նորից ուժեղացան:

1793թ. մարտին Վանդեյում բռնկվեց միապետական խռովություն: Միաժամանակ խիստ վատացավ վիճակը ռազմաճակատում: Ժիրոնդիստների մտերիմ գեներալների դավաճանության հետևանքով թշնամու բանակին հաջողվեց Վալմիում կրած պարտությունից հետո ոտքի կանգնել և մի շարք լուրջ հարվածներ հասցնել Ֆրանսիացիներին: Թշնամու բանակը նորից մոտեցավ երկրի սահմաններին:

Երկրում ստեղծված ճգնաժամային վիճակը հիշեցնում էր 1792թ. օգոստոսյան օրերը:

24

Յակոբինյան հանրապետություն: 1793 թ. հունիսի 2-ին Փարիզի բնակիչները յակոբինյանների ղեկավարությամբ տապալեցին ժիրոնդիստների կառավարությունը:

Հունիսի 3-ին Կոնվենտը, որտեղ արդեն գերակշռում էին յակոբինյանները, ընդունեց դեկրետ՝ հակահեղափոխականների բռնագրաված հողերը գյուղացիներին արտոնյալ պայմաններով վաճառելու մասին: Թույլատրվեց համայնքի հողերը բաժանել նրա բնակիչների միջև³: Հատուկ նշանակություն ուներ 1793 թ. հունիսի 17-ի դեկրետը, որով վերացվում էին ֆեոդալական իրավունքները⁴:

Ընդունված որոշումներն անմիջապես սկսեցին իրագործվել կյանքում:

Արդյունքում՝ գյուղացիների զգալի մասը վերածվեց ազատ մանր հողատերականատերերի: Սակայն դա չէր նշանակում խոշոր հողատիրության վերացում (բռնագրավված էին վտարանդիների, եկեղեցիների, հակահեղափոխականների, և ոչ թե բոլոր կալվածատերերի հողերը): Հողերի մեծ մասը գնեց քաղաքի և գյուղի բուրժուազիան: Մեծ փոփոխություններ կատարվեցին նաև պետական ապարատում: Ընդունվեց նոր սահմանադրություն: Այն բաղկացած էր մարդու և քաղաքացու իրավունքների հռչա-

¹ Декрет о единстве и неделимости Французской республики, 25 сентября 1792г., տն՝u Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 106:

² Декрет 21 сентября 1792г. об утверждении Конституции народом и об охране личности и собственности граждан, տն՝u Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 282:

³ Декрет 10-11 июня 1793г. об Общинных землях, տն՝u Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 344:

⁴ Декрет 17 июля 1793г. об окончательном упразднении феодальных прав, հոդ. 1, տն՝u Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 349:

կարգից և բուն սահմանադրական ակտից: Առաջ անցնելով նշենք, որ 1793թ. սահմանադրությունը, չնայած իր բնույթով դեմոկրատական էր, այնուհանդերձ, չկիրառվեց կյանքում: Այն նպաստեց Յակոբինյան կոնվենտի շուրջ ժողովրդի համախմբմանը¹:

Սահմանադրությամբ օրենսդրորեն ամրապնդվեցին յակոբինյանների պետա-իրավական հայացքները, որոնք ձևավորվել էին լուսավորիչների ձախ թևի գաղափարախոսների ազդեցության տակ: Յակոբինյանների ղեկավարներին՝ Ռոբեսպիերին, Սեն-ժյուստին, Կուտոսին և շատ ուրիշներին, հոգեհարազատ էր հատկապես Ռուսոյի ուսմունքը (դեմոկրատական հավասարության սկզբունքների և այլնի մասին): Հավասարությունն ըստ յակոբինյանների պետք է ընդգրկեր ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական բնագավառը:

1793թ. մայրու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը, որն ընկած էր սահմանադրության հիմքում ընդօրինակում էր 1789 թ. Հռչակագրի հիմնական դրույթները, բայց տարբերվում էր նրանից բարձր դեմոկրատիզմով ու հեղափոխականությամբ:

Հռչակագիրն ամրագրում է այն կարևորագույն դրույթները, որոնց համաձայն հասարակության նպատակը «ընդհանուր երջանկությունն» է: Կառավարությունը կոչված է ապահովելու մայրու բնույթն է ազնվապետի իրավունքների օգտագործման հնարավորությունը²: Այդ իրավունքներից հիմնականներն են. հավասարությունը, ազատությունը, անվտանգությունը և սեփականությունը: Բոլորը հավասար են օրենքի առաջ: Այդ որակով հավասարության իրավունք չկար 1789 թ. Հռչակագրում և դա պատահական չէ: Ինչպես և Ռուսոն, յակոբինյանները ևս ընդունում էին իրավական հավասարությունն ամբողջ ծավալով (քաղաքացիների բաժանումը ակտիվների և պասսիվների ժխտվում էր):

Օրենքի գերակայությունը, որը դիտվում էր որպես «ընդհանուր կամքի արտահայտում», անբաժանելի կերպով կապվում է ազգի ինքնիշխանության հետ: Ինքնիշխանությունը պետության հատկությունն է, որը ուժով մասնակա է և ինքնուրույն իր քաղաքականությունն իրականացնելիս: «Ազգ» և «ազգի ինքնիշխանություն» հասկացությունների փոխարեն մտցվում են «ժողովուրդ» և «ժողովրդի ինքնիշխանություն» հասկացությունները: Դա տերմինների պարզ փոխանակում չէր: Յակոբինյանների կողմից ժողովուրդը դիտվում էր որպես քաղաքացիների խմբակցություն, որն ամբողջությամբ պատկանում է «միասնական, անբաժան և անօտարելի ինքնիշխանությունը»: Ժողովրդական ինքնիշխանությունը չի կարող տրվել մի

¹ История Франции, т. 2, М., 1973, էջ 46:

² Конституция 24 июня 1793г., հոդ. 1, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 110:

անձի կամ անձերի խմբի:

Դրանում յակոբինյանները տեսնում էին դեմոկրատական հանրապետության տեսական հիմնավորումը, օրենքների ստեղծման և պետական կառավարմանը ժողովրդի անմիջական մասնակցությունը և այլն: «Ժողովրդի ոչ մի մաս չի կարող իրագործել ամբողջ ժողովրդին պատկանող իշխանությունը: Յուրաքանչյուր ոք, ով կյուրացնի ամբողջ ժողովրդին պատկանող ինքնիշխանությունը, ազատ քաղաքացիների կողմից կենթարկվի մահվան»:

Հռչակված իրավունքներից հատուկ տեղ էր տրվում ազատությանը: Այն մարդուն հնարավորություն էր տալիս անելու ամենը, ինչը վնաս չէր հասցնում ուրիշի իրավունքներին (հոդ. 6):

Հռչակագիրը սահմանեց խոսքի, մամուլի, ժողովների անգատություն (հոդ. 6), պետական իշխանության ներկայացուցիչներին խնդրագիր հանձնելու իրավունք (հոդ. 32), խղճի ազատություն (հոդ. 7), ցանկացած աշխատանքով (երկրագործությամբ, արհեստագործությամբ, առևտրով) զբաղվելու ազատություն (հոդ. 17): Արգելվում են ստրկությունը, ֆեոդալական կախվածության բոլոր տեսակները. «Յուրաքանչյուրը կարող է պայմանագրով տրամադրել իր ծառայությունները և իր ժամանակը, բայց չի կարող վաճառել կամ վաճառված լինել» (հոդ. 18):

Պետությունն իր վրա է վերցնում հասարակության յուրաքանչյուր անդամի անվտանգության պահպանման պարտավորությունը: Հռչակագրով «Ոչ ոք չի կարող մեղադրվել, կաղանավորվել կամ բանտարկվել այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում» (հոդ. 10): Անձի դեմ ուղղված յուրաքանչյուր գործողություն, որը չի նախատեսվում օրենքով, կամ, երբ այն կատարվում է օրենքով սահմանված ձևերի խախտումով, ինքնական և բռնակալական գործողություն է: Անձը, որի դեմ ցանկանում են բռնի կերպով կատարել այդպիսի գործողություն, իրավունք ունի դիմադրություն ցույց տալ:

Հռչակագրում զարգացվում է նաև անմեղության կանխավարկածին վերաբերող դրույթը:

Բացառիկ ուշադրություն է արժանանում սեփականության իրավունքին. ոչ ոք առանց համաձայնության չի կարող զրկվել իր սեփականության փոքրիկ մասից, բացի օրենքով նախատեսված դեպքերից՝ արդարացի և նախնական փոխհատուցման պայմանով: Ամբողջովեց այն կարևորագույն դրույթը, ըստ որի ժողովրդի սրբազան իրավունքը և անհետաձգելի պարտականությունը կառավարության դեմ ապստամբելն է, եթե, իհարկե, վերջինս ոտնահարում է ժողովրդի իրավունքներն ու օրինական շահերը (հոդ. 35):

Հռչակագրի դեմոկրատական սկզբունքների հետևողականությունն արտահայտվեց Սահմանադրական ակտում:

1793թ. Սահմանադրությամբ Ֆրանսիան հռչակվում էր միասնական և

անբաժանելի հանրապետություն: Գերագույն իշխանությունը պատկանում էր ժողովրդին: Մահմանվում էր լավնդհանուր ընտրական իրավունք (արական սեռի): Ընտրելու հնարավորությունը տրվում էր այն բոլոր քաղաքացիներին, ովքեր միևնույն վայրում մշտական բնակվել են 6 ամսից ոչ պակաս ժամանակով (հոդ 11):

Մահմանադրությամբ Ֆրանսիայի քաղաքացի էր համարվում Ֆրանսիայում ծնված և բնակավայր ունեցող յուրաքանչյուր ք. ում 21 տարին լրացել էր: Օտարերկրացուն նույնպես կարող էր շնորհվել Ֆրանսիայի քաղաքացիություն, եթե լրացել էր նրա 21 տարին և մեկ տարի շարունակ բնակվում էր Ֆրանսիայում, ապրում իր աշխատանքով, ձեռք բերում սեփականություն կամ ամուսնանում ֆրանսուհու հետ: Քաղաքացիություն էր շնորհվում նաև այն օտարերկրացիներին, որոնք երեխա էին որդեգրում, խնամում ծերերին և որոնք օրենսդիր մարմնի կարծիքով բավականաչափ ծառայություն էին մատուցել մայրկությանը (հոդ. 4):

Օրենսդիր իշխանությունն իրականացնում էր Ազգային ժողովը, որը միասնական էր, անբաժան և գործում էր մշտապես: Այն բաղկացած էր մեկ պալատից և ընտրվում էր մեկ տարով: Այդչափ կարճ ժամանակը, Ռոբեսպիերի կարծիքով, բացառում էր ընտրողներից պատգամավորների չափից դուրս մեկուսացման հնարավորությունը: Ազգային ժողովն օրենքների առաջարկություններն ուղարկում էր քվեարկության իրավունք ունեցող սկզբնական ժողովների հաստատմանը (այն կազմված էր 200-600 քաղաքացիներից): Եթե որոշումից 40 օր անց սկզբնական ժողովների մեկ տասներորդ մասը չէր մերժում այն, նախագիծը համարվում էր ընդունված և դառնում էր օրենք: Նախագծի մերժման դեպքում նախատեսվում էր բոլոր սկզբնական ժողովների հրավիրում, որոնց որոշումը տվյալ հարցի շուրջ, ինչպես կարելի է ենթադրել, դառնում էր վերջնական: Օրենսդիր մարմինն ուներ նաև հանրաքվե չպահանջող դեկրետների հրատարակման իրավունք:

Մահմանադրությամբ պետական կառավարման բարձրագույն մարմինը գործադիր խորհուրդն էր: Այն գործում էր ընդունված օրենքների ու դեկրետների հիման վրա և դրանց շրջանակներում: Գործադիր խորհուրդը ստեղծվում էր հետևյալ կերպ. յուրաքանչյուր դեպարտամենտի ընտրողների ժողովն առաջադրում էր մեկական ներկայացուցիչ: Այդ ճանապարհով նշանակված 83 թեկնածուներից (ըստ դեպարտամենտների թվի) Օրենսդիր մարմինն ընտրում էր գործադիր խորհրդի 24 անդամ: Խորհրդի անդամների կեսը յուրաքանչյուր տարում նորացվում էր²:

¹ Черниловский З.М., Всеобщая история государства и права, М., 1973, էջ 285-286:

² Конституция 24 июня 1793г., т. 4, տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 338:

Այն հսկում էր բոլոր գերատեսչությունների գործունեությունը: Նրա կողմից էին նշանակվում գերատեսչությունների ղեկավարները:

Նոր սահմանադրության կիրառումը ձգձգվեց մինչև հակահեղափոխության վերջնական ջախջախումը: Այդ ժամանակաշրջանում ստեղծվեց կառավարման համակարգ՝ օժտված բացարձակ լիազորություններով: Հեղափոխական կառավարության (կառավարման) հիմքը կազմում էին այն հիմնարկները, որոնք ստեղծվել էին դեռևս Ժիրմոնիստների ժամանակ, բայց ակտիվացան Յակոբինյան հանրապետությունում:

Կոմվենտը համարվում էր պետական իշխանության բարձրագույն մարմինը: Նրան էր պատկանում օրենքների հրատարակման և մեկնաբանման իրավունքը:

Երկրի անմիջական կառավարումն իրականացվում էր Կոմվենտի հատուկ կոմիտեների և հանձնաժողովների միջոցով (ամենից առաջ Փրկության Կոմիտեի և Անվտանգության Կոմիտեի միջոցով):

Հասարակական Փրկության Կոմիտեն դարձավ հեղափոխական իշխանության կենտրոն: Նրա նշանակությունը ավելի բարձրացավ, երբ նրա կազմի մեջ մտան Ռոբեսպիերը, Սեն-ժյուստը, Կուտոնը: Կոմիտեն բաղկացած էր 12-15 մարդուց: Վերընտրվելով յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ, այն, այնուամենայնիվ, համարյա չփոխեց իր կազմն այն ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, երբ իշխանության գլուխ կանգնած էին յակոբինյանները: Հասարակության Փրկության Կոմիտեն Կոմվենտից ստացավ բացառիկ լիազորություններ (երկրի պաշտպանության ղեկավարումը, ընթացիկ կառավարումը, ներառյալ արտաքին քաղաքականությունը): Նրա ղեկավարության ու հսկողության տակ էին գտնվում բոլոր նախարարությունները, գերատեսչությունները, ներառյալ որժաղիք խորհուրդը:

Ներքին հակահեղափոխության դեմ պայքարն անմիջականորեն իրականացնում էր Հասարակական Անվտանգության Կոմիտեն: Նա վարում էր բոլոր այն գործերի հետաքննությունը, որը կապված էր հանրապետության անվտանգությանը սպառնացող հակահեղափոխական և այլ գործունեության հետ: Նրա կողմից հանցագործության կատարման մեջ բռնված անձինք հանձնվում էին Հեղափոխական դատարանին: Կոմիտեի տնօրինության տակ էր ոստիկանությունը, որը հսկում էր բանտերի վրա:

Նոր իշխանության համակարգում կարևոր տեղ գրավեց Հեղափոխական դատարանը (տրիբունալը): Այնտեղ ընթանում էր արագացված դատավարություն: Նրա դատավճիռները վերջնական էին: Մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ կիրառվում էր միայն մահապատիժ:

Ոչ պակաս կարևոր դեր էին խաղում Կոմվենտի կոմիսարները, որոնք

օժտված լինելով արտակարգ լիազորություններով, ուղարկվում էին այն-տեղ, որտեղ հեղափոխության առավել մեծ վտանգ էր սպառնում (բանակ, գերատեսչություններ, դեպարտամենտներ և այլն): Նրանց ղեկավարությամբ անցկացվեցին կարևոր միջոցառումներ բանակի մարտունակությունը բարձրացնելու, խռովությունները ճնշելու, երկիրը պարենամթերքով ապահովելու գործում:

Կոմիսարները հաճախ իրենց վրա էին վերցնում գորքի փաստացի հրամանատարությունը: Կոմիսարների կարգադրությունները չկատարելը դիտվում էր որպես ծանրագույն հանցագործություն: Կոմիսարները ենթարկվում էին Հասարակական Անվտանգության Կոմիտեին, որին սլավոնափոր էին յուրաքանչյուր 10 օրը մեկ հաշվետվություններ տալ:

Տեղական կառավարման վրա կենտրոնական իշխանության ազդեցությունը և հսկողությունն ուժեղացնելու նպատակով դեպարտամենտներ էին ուղարկվում կառավարության մշտական լիազորները՝ գործակալները: Բացառիկ դեպք էին խաղում տեղական հեղափոխական կոմիտեները, ինչպես նաև ժողովրդական ակումբներն ու ընկերությունները: Երկրի քաղաքական կյանքում, նախկինի նման, մեծ դեր էր խաղում Փարիզյան կոմունան:

1793թ. սեպտեմբերին ստեղծվեց հատուկ Հեղափոխական բանակ՝ խռովարարների և վերավաճառողների դեմ պայքարելու, ինչպես նաև Փարիզը և մյուս խոշոր քաղաքները պարենամթերքով ապահովելու համար:

Յակոբինյան հանրապետությունը փաստորեն խզեց հարաբերությունները կաթոլիկական եկեղեցու հետ: Յակոբինյանների մի մասն առաջարկում էր կաթոլիկությանը փոխարինել «բանականության պաշտամունքով»: Եկեղեցիները սկսվեցին փակվել: Սակայն բնակչության մեծամասնությունը թշնամաբար ընդունեց «ապակաթոլիկացումը»: Ընդունվեց նրոշում դավանանքի ազատության մասին: Բայց պայքարը ռեակցիոն հոգևորականության դեմ շարունակվում էր:

Հեղափոխության նվաճումների ամրապնդումը: Այլ գործում վճռական դեր խաղացին յակոբինյանների սոցիալական միջոցառումները: Նրանց կողմից վերջնականորեն վերացվեց ֆեոդալական հողատիրությունը: Դրա հետևանքով գյուղացիության զգալի մասը վերածվեց մանր ազատ հողատերականատերերի: Յակոբինյանները սոցիալական միջոցառումներ անցկացրին նաև քաղաքում: Սկսելով գործազուրկներին, բազմազավակ ընտանիքներին օգնելու միջոցառումներից, նրանք այնուհետև անցան սննդամթերքների և այլ կարևոր սպառողական ապրանքների գների նորմավորման հարցերի լուծմանը:

Ռոբեսպիերը և նրա մերձավոր զինակիցները, ոլորնք սկզբում բացասական էին վերաբերվում նորմավորմանը, համընդհանուր առավելագույնի

ներդրմանը, հետագայում, հաշվի առնելով ժողովրդի տրամադրությունը, փոխեցին իրենց վերաբերմունքը դրա նկատմամբ: Կոնվենտը 1793 թ. սեպտեմբերի 11-ին ընդունեց դեկրետ, որը սահմանում էր հացահատիկի, ալյուրի և այլնի առավելագույն գներ: 1793 թ. սեպտեմբերի 29-ին հաստատվեց «Հանընդհանուր առավելագույնի մասին» դեկրետը, որով սահմանվում էին առաջին անհրաժեշտության հիմնական ապրանքների հաստատուն գներ և աշխատավարձի առավելագույն չափեր¹: Այն կյանքի կոչելու համար 1793 թ. հոկտեմբերին ստեղծվեց Կենտրոնական պարենային հանձնաժողով: Փարիզում և շատ այլ քաղաքներում մտցվեց քարտային համակարգ: Վերսկսվեց պայքարը պարենամթերքի վերավաճառքի դեմ:

Գրա հետևանքով 1793 թ. վերջերին պարենամթերքի վիճակը քաղաքներում հաջողվեց մի փոքր կայունացնել:

Յակոբինյան Կոնվենտի նշանավոր ակտը հանդիսացավ գաղութներում ճորտատիրության վերացումը: Գաղութների բնակիչները համարվեցին Ֆրանսիայի քաղաքացիներ և օգտվեցին սահմանադրությամբ նախատեսված բոլոր իրավունքներից:

Յակոբինյանները մեծ բարեփոխություններ կատարեցին նաև բանակում: Վերափոխվեց բանակի կազմը և կառուցվածքը: Ընդունվեց աշխարհագործի մասին դեկրետ, որի արդյունքը եղավ 1 միլիոնանոց բանակի ստեղծումը: Աշխարհագործը կրում էր հանընդհանուր բնույթ: Անհրաժեշտության դեպքում չամուսնացածները և երեխա չունեցող 18-25 տարեկան տղամարդիկ առաջինն էին հանդես գալիս²:

1793 թ. վերջին և 1794 թ. սկզբին բանակը ճակատում տարավ վճռական հաղթանակներ: Բայց այդ շրջանում էլ առավել ցայտուն դրսևորվեցին Ռոբեսպիերի գլխավորած յակոբինյանների կառավարման բացասական կողմերը: Նրանց ձգտումները՝ ցանկացած միջոցներով (նույնիսկ հակառակ երկրի մեծամասնության շահերին և տրամադրություններին) հասնել իրենց դավանած հավասարապաշտության գաղափարների իրագործմանը, հանգեցրին ամբողջատիրական ռեժիմի ձևավորմանը:

Հեղափոխական ստյամները մահվան դատապարտեցին բազմաթիվ յակոբինյանների, որոնց ոչ մի դեպքում հակահեղափոխական անվանել չի կարելի: Հալածանքներին ենթարկվեցին շատ ուրիշներ, որոնց մեղավորությունն, ըստ էության, ապացուցված չէր:

Նպատակի փաստացի աղավաղումը, որի համար ստեղծվեց Հեղափո-

¹ Декрет об установлении максимума цен и заработной платы, 29 сентября 1793г., in:u Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 125-126:

² Декрет о Всеобщем ополчении 23 августа 1793г., in:u 1, in:u Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 353:

իւսկան ատյանը, նպաստեց դատավորների բարոյականութան քայքայման արմատավորմանը և պայքարի ոչ պատշաճ միջոցների անրապնդմանը: Դրան շատ բանով աջակցեցին ոլորդ ղեկրետներ, որոնք ծրագրված էին հակահեղափոխության դեմ պայքարն ուժեղացնելու, բայց չէին պայունակում քաղաքացիներին անհիմն հալածանքներից պաշտպանելու ոչ մի իրական երաշխիք: Այս առումով առավել ուշագրավ էր 1794 թ. հունիսի 10-ի դեկրետը, որով շրջանառության մեջ դրվեց «ժողովրդի թշնամի» հասկացությունը: Հեղափոխական դատարանը ստեղծվում էր հենց ժողովրդի թշնամիներին պատժելու համար: Ժողովրդի թշնամի էին համարվում նրանք, ովքեր ուժով կամ խորամանկությամբ ձգտում էին ոչնչացնել հասարակական ազատությունը¹: Յակոբինյան հանրապետությունն իր հերոսական էջերի հետ մեկտեղ պատմությանը տվեց նաև նախազգուշացնող դաս՝ օրինականության սահմաններից դուրս եկած հեղափոխական բռնությունը, վերջին հաշվով, վերածվում է կամայականության:

Յակոբինյան հանրապետության անկումը: 1794 թ. ամռանը հեղափոխության հիմնական խնդիրներն օբյեկտիվորեն լուծվել էին: Ծարունակ հարստացող բուրժուազիան հաշտվեց յակոբինյան կառավարման ծայրահեղությունների հետ այնքան ժամանակ, քանի դեռ կար միահեծանության վերականգնման վտանգը: Խռովությունների ճնշումը և ռազմական հաղթանակներն ամրապնդեցին Ֆրանսիայի դյուրությունը: Այդ ժամանակից սկսած բուրժուազիայի վերաբերմունքը յակոբինյան կառավարման հանդեպ փոխվում է:

Յակոբինյաններից սկսեց հեռանալ նաև գյուղացիությունը, որը հեղափոխական վերափոխումները պահպանեց այնքան ժամանակ, քանի դեռ չէին ոչնչացվել ֆեոդալական մնացուկները և չէր հաստատվել հողի սեփականության նրա իրավունքը: Դրան հասնելուց հետո գյուղացիները սկսեցին ավելի վճռականորեն արտահայտել իրենց դժգոհությունը հաստատուն գների և դրա հետ կապված ամեն ինչի նկատմամբ: Ռոբեսպիեյի և նրա կողմնակիցների ազդեցությունը քաղաքի աշխատավորության մեջ գնալով թուլանում էր: Քաղաքական տեռորն ուժեղացրեց ժողովրդի դժգոհությունը:

Յակոբինյանների սոցիալական հիմքի թուլացումը հանդիսացավ նրանց իշխանությունից հեռացնելու գլխավոր պատճառներից մեկը:

1794 թ. հուլիսի 27-ին (ըստ հանրապետական օրացույցի թերմիդորի 9-ին), զինված ելութների ընթացքում յակոբինյան հանրապետությունը Փարիզում տապալվեց:

¹Декрет о революционном трибунале 10 июня 1794г., հղ. 4-5, տես Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 122:

10 3/2 39

Պետության զարգացումը 1795-1870 թթ: Թերմիդորիականներն իշխանության գլուխ անցնելուց հետո մահապատժի ենթարկեցին առավել ճանաչված հեղափոխականներին, այդ թվում Ռոբեսպիերին, Սեն-ժյուստին, Կուտոնին: Հազարավոր յակոբինյաններ ձերբակալվեցին, մարդկանց ամբոխները «մսկյա երիտասարդության» ղեկավարությամբ, իշխանությունների զանցաթողությամբ, ներխուժում էին բանտերը և սպանում քաղաքական բանտարկյալներին:

Հարուստների նկատմամբ վերացվեցին հարկերի և առավելագույնի օրենքները: Վերավաճառքի և կաշառակերության սանձարձակությունը բռնկվեց չտեսնված չափերով: Չգտելով ամրապնդել իրենց քաղաքական դրությունը, թերմիդորիականները վերակառուցեցին պետական ապարատը: Կոնվենտը 1795 թ. ընդունեց նոր սահմանադրություն:

Սահմանադրությունը սկսվում է հռչակագրով: Այն կոչվեց «Մարդու և քաղաքացու իրավունքների ու պարտականությունների հռչակագիր»: Այստեղից հանվեցին այն բոլոր հեղափոխական դրույթները, որոնք ամրագրված էին յակոբինյան Հռչակագրում: Չէր խոսվում արդեն ժողովրդի ապստամբության իրավունքի, ժողովների, մամուլի, ազատության, պետական պաշտոններում բոլորի հավասար ընտրվելու իրավունքի մասին: Կրկնելով առաջներում արդեն հռչակված պետության և իրավունքի ընդհանուր սկզբունքները, հռչակագիրն ընդգծում էր յուրաքանչյուրի պարտականությունը՝ պաշտպանել պետությունը և սեփականությունը: Ըստ Սահմանադրության հեղինակների «քաղաքակիրթ է համարվում սեփականատերերի կողմից կառավարվող երկիրը»: Պետական կարգի հիմնական սկզբունքն ըստ Սահմանադրությանն ներկայացուցչական կառավարումն ու իշխանությունների բաժանումն էր: Նախատեսվում էին պետական իշխանության բարձրագույն մարմինների երկաստիճան ընտրություններ: Սկզբում ընտրողները (միայն տղամարդիկ, որոնք ծնվել և ապրում էին Ֆրանսիայում, 21 տարեկան էին, վճարում էին ուղղակի հարկ և բնակվում էին միևնույն վայրում մեկ տարուց ոչ պակաս) ընտրում էին ընտրյալների: Ընտրյալներ կարող էին լինել այն անձինք, որոնց տարիքը հասել էր 25-ի, Ֆրանսիայի քաղաքացի էին և ունեին 200 բանվորական օրվա աշխատավարձի նրժոդությունից ոչ պակաս չափով սեփականություն: Ընտրյալներն ընտրում էին օրենսդրական և բարձրագույն դատական մարմինների անդամներին:

Օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինը բաղկացած էր 2 պալատից. վերին (Ավագների խորհուրդ) և ստորին (Հինգհարյուրականների խորհուրդ): Ստորին պալատը կազմում էր օրենքի նախագծեր, որոնք այ-

¹Soboul A., Precis d'histoire de la Revolution francaise, Paris, 1962, էջ 380:

նուհետև հաստատվում կամ մերժվում էին Ավագների խորհրդի կողմից¹:

Սահմանադրությանը գործադիր իշխանությունն իրականացնում էր հինգ անդամներից բաղկացած դիրեկտորիան: Այդ հինգ անդամներին նշանակում էր Վերին պալատը Ստորին ավագների կողմից առաջադրված թեկնածուներից: Դիրեկտորիային իրավունք էր վերապահվում նշանակել նախարարներին, քանակի իրամասնատարներին և այլ բարձրաստիճան պաշտոնյաներին: Ընեն տարի Դիրեկտորիայի անդամներից մեկը պետք է վերընտրվեր:

3. ԲՈՆԱՊԱՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

ԵՎ 1799 թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

60
108

Իշխանության գլուխ եկած խոշոր բուրժուազիան շուտով հայտնվեց երկու իրար հակադիր ասցիալ-քսոդաքական ուժերի միջև: Քաղաքի աշխատավորությունը, ուր տառապում էր գործազրկությունից և կյանքի վատ պայմաններից, ուժեղացրեց պայքարը թերմիդորիականների ռեժիմի դեմ: Մյուս կողմից, ակտիվացավ ազնվականության ռեակցիան: Երկրում հասունանում էին միապետական դավադրությունները, որոնք խնդիր էին դրել վերականգնել նախահեղափոխական ռեժիմը: Դա ստիպում էր թերմիդորիականներին կռվել երկու ճակատով: Մի կողմից, հանդես գալով ժողովրդի դեմ, նրանք աջակցություն էին փնտրում աջից, մյուս կողմից, ազնվականության ռեակցիայի ահը ստիպում էր նրանց դեմոկրատների ձախ թևի հետ գնալ ժամանակավոր համաձայնեցման: Դա վկայում էր թերմիդորիան հանրապետության ներքին անկայունության մասին:

Կառավարող շրջաններն իրենց քաղաքական փրկությունը տեսան ռազմական դիկտատուրայի ռեժիմի մեջ, որը պետք է հաստատվեր ուժեղ և հեղինակավոր անձնավորության շնորհիվ: Առավել մեծ աջակցություն և վստահություն ձեռք բերեց զեներալ Նապոլեոն Բոնապարտը, որը մեծ համբավ ձեռք բերեց ֆրանսիական զորքերի տարած հաղթանակների շնորհիվ (հատկապես Իտալիայում և Եգիպտոսում):

1799 թ. նոյեմբերի 9-10-ին (Բրյուսների 18-19-ին) Բոնապարտը զորքերի օգնությամբ ցրեց օրենսդիր մարմինը և լուծարեց դիրեկտորիան: Երկրի ղեկավարությունը հանձնվեց երեք կայսրերի: Ռեալ իշխանությունը կենտրոնացվեց առաջին կայսրի մոտ: Այդ պաշտոնը զբաղեցրեց Նապոլեոն Բոնապարտը:

Նախորդ տարիներին զգալիորեն թուլացած դեմոկրատական ուժերը

¹Конституция французской республики, 22 августа 1795г., գլուխ 5 հոդ. 44, տես և Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 388:

չկարողացան պատշաճ կերպով դիմադրություն ցույց տալ: Բիրժան հեղաշրջմանը պատասխանեց արժեթղթերի կուրսի բարձրացմամբ: Նոր ռեժիմը զգալի աջակցություն գտավ գյուղացիության կողմից, որին խոստացվեց հողի սեփականության պաշտպանությունը: Նոր ռեժիմի իրավական ամրապնդմանը նպաստեց 1799 թ. Սահմանադրությունը: Յոթ զխից բաղկացած բարձրագույն իրավաբանական ուժով օժտված այդ կարևորագույն փաստաթղթով պետական կարգի հիմնական գծերն էին կառավարության գերակայությունը և ներկայացուցչությունը՝ ըստ հանրաքվեի: Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն կառավարությունը կազմված էր երեք հյուպատոսներից, որոնք ընտրվում էին 10 տարվա ժամկետով: Առաջին հյուպատոսն օժտված էր հատուկ լիազորություններով: Նա էր իրագործում գործադիր իշխանությունը, ըստ իր հայեցողության մշանակում և ազատում էր նախարարներին, պետական խորհրդի անդամներին, դեսպաններին, գեներալներին, տեղական իշխանության բարձրատիժան պաշտոնյաներին, դատավորներին: Նրան էր պատկանում օրենսդրական նախաձեռնության իրավունքը: Երկրորդ և երրորդ հյուպատոսներն ունեին խորհրդակցական լիազորություններ: Սահմանադրությունն առաջին հյուպատոս նշանակեց Նապոլեոն Բոնապարտին: Կառավարությունը տնօրինում էր պետական եկամուտները: Օրենսդրական իշխանությունն իրականացնում էին Պետական խորհուրդը, տրիբունալը, օրենսդիր մարմինը և սենատը: Իրականում նրանք միայն պաշտամենտի ծաղրապատկեր էին: Օրինագծեր կարող էին առաջարկվել միայն կառավարության կողմից, այսինքն՝ առաջին հյուպատոսի կողմից: Պետական խորհուրդն իրագործում էր այդ նախագծերի խմբագրումը: Տրիբունատն այն քննարկում էր, օրենսդիր մարմինը՝ ընդունում կամ ամբողջությամբ մերժում (առանց մտքերի փոխանակության), սենատը՝ հաստատում:

Ստիպված լինելով վերանայել միայն այն, ինչ առաջարկվում էր պետության կողմից, այդ մարմինները, որոնցից ոչ մեկը չունեին ինքնուրույն նշանակություն, միայն քողարկում էին առաջին հյուպատոսի մենիշխանությունը:

Օրենսդիր իշխանության մարմինների ձևավորման ընթացքն էլ ավելի էր ուժեղացնում նրանց կախվածությունը գործադիր իշխանությունից: Պետական խորհրդի անդամները նշանակվում էին առաջին հյուպատոսի կողմից: Սենատը բաղկացած էր ցմահ նշանակված անդամներից: Օրենսդիր մարմնի և Տրիբունատի անդամները նշանակվում էին սենատի կողմից:

Նշանակալից չափով փոփոխություններ կրեց նաև ընտրական իրավունքը: Բոլոր տղամարդիկ, որոնք ունեին Ֆրանսիայի քաղաքացիություն, պետք է մասնակցեին ընտրություններին՝ ըստ կոմունների: Այդպիսի

ընտրական նոր համակարգը ոչնչացրեց հեղափոխության ժամանակների բոլոր առաջընթաց նվաճումները այլ բնագավառում:

Ընտրությունները կրում էին ձևական բնույթ, որովհետև «թեկնածուները» այնքան շատ էին, որ բարձրաստիճան պաշտոնյաներն ունեին համապատասխան պաշտոններում նշանակելու ընտրության լավ հնարավորություն: Նման կարգն ամբողջությամբ հայտնի դարձավ որպես «ներկայացուցչություն ըստ հսկայական»¹: Պառլամենտական կարգը վերացվեց: գոյություն ունեցող դեմոկրատական ազատությունները ոչնչացվեցին:

Մեկ տարի անց լուծարվեց ընտրովի տեղական ինքնակառավարումը: Հաստատվեց երկրի վարչատարածքային բաժանումը դեպարտամենտների, դիստրիկտների, կոմունաների: Դեպարտամենտում ամբողջ իշխանությունը հանձնվեց կառավարության կողմից ընտրված ոստիկանապետին, իսկ դիստրիկտում՝ ենթաստիկանապետին: Կառավարությունը նշանակում էր կոմունաների և քաղաքների պետերին և խորհրդակցական խորհուրդների անդամներին: Սահմանվեց առաջին հյուպատոսին բոլոր պաշտոնյաների աստիճանական ենթարկվածության կարգ: Պետական ապարատի կենտրոնացման և բյուրոկրատացման ընթացքը հասավ իր տրամաբանական ավարտին: «Գեներալները ուստման ազգի հույսը և կերպարը»: Ամեն ինչ արվում էր ժողովում համար և համուն ժողովրդի, սակայն ոչինչ չէր արվում նրա սեփական ձեռքերով և սրտի թելադրանքով²:

Կայսրության հռչակումը: 1802 թ. Բոնապարտն իրեն հայտարարեց ցմահ հյուպատոս: Նրա իշխանությունը՝ դեռևս քողարկված հանրապետական շղարշով, ընդունում էր միապետական բնույթ: 1804 թ. Բոնապարտը հռչակվեց Ֆրանսիայի կայսր: Այդ ժամանակաշրջանից ոչ միայն գործադիր, այլև օրենսդիր իշխանությունը կենտրոնացվեց նրա ձեռքում (մասամբ նաև սենատի):

Երկրի քաղաքական կյանքի վրա վճռորոշ ազդեցություն ունեցավ բանակը, որն ազատագրող, հեղափոխական բանակից վերածվեց պրոֆեսիոնալ և փաստորեն, վարձու բանակի: Մտերմվեց արտոնյալ գործ կայսերական զինուորի: Իշխանությունների հատուկ հոգատարությամբ էր շրջապատված ոստիկանությունը, որը, ըստ էության, մույնիսկ մեկը չէր, այլ մի քանիսը, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում էր զաղտնի լրտեսություն մյուսի վրա: Առավել կարևոր նշանակություն ունեցավ անսահմանափակ լիազորություններով օժտված քաղաքական ոստիկանությունը: Մտցվեց խիստ գրաքննություն: Յուրաքանչյուր դեպարտամենտում փաստորեն թույլատրվում էր միայն մեկ թերթի հրատարակում, որը գտնվում էր ոստի-

¹ Robespierre M., Oeuvres complètes, t. VIII, էջ 142-143:

² Вандаль А., Возвышение Бонапарта, СПб, 1905, էջ 135:

կանապետի հսկողության տակ:

Նապոլեոնի կառավարությունը համաձայնագիր կնքեց հռոմեական կաթոլիկ եկեղեցու հետ: Կաթոլիկությունն ընդունվեց որպես «Ֆրանսիացիների» մեծամասնության կրոն: «Կրոնը վերականգնում եմ ինձ համար», հայտնաբերեց Նապոլեոնը: Եկեղեցական բոլոր աստիճանավորները նշանակվում էին կառավարության, այնուհետև հաստատվում Վատիկանի կողմից: Հոգևորականությունը սկսեց պետությունից ռոճիկ ստանալ: Եկեղեցին իր հերթին հրաժարվեց հեղափոխության տարիներին իրենից բռնագրավված բոլոր հողերի նկատմամբ ունեցած պահանջներից:

Բանակը, ոստիկանությունը, եկեղեցին դարձան կայսերական իշխանության հիմնական լծակները:

1812 թ. Նապոլեոնը ներխուժեց Ռուսաստան: Նրա բանակը ջախջախվեց: 1814 թ. ռուսական զորքերը դաշնակիցների (Ավստրիա, Պրուսիա, Անգլիա) զորքերի հետ համատեղ մտան Ֆրանսիա:

10-61 Լեգիտիմական (օրինականացված) միապետությունը և 1814թ. Հրովարտակը: Կայսրության պարտությունից հետո դաշնակիցների զորքերի օգնությամբ Ֆրանսիա ներխուժեցին վտարանդի ազնվականները: Վերականգնվեց Բուրբոնների միապետությունը: Միապետականներն իրենց ձեռքում կենտրոնացրին պետական ապարատի և բանակի ղեկավար պաշտոնները: Հետադեմ ազնվականությունը պահանջում էր նախահեղափոխական անսահմանափակ միահեծանության վերականգնումը: Սակայն նրանց շուտով պարզ դարձավ, որ անցյալը լիակատար չափով վերականգնել արդեն հնարավոր չէ: Հեղափոխությունը մինչև վերջ քանդել էր հին կարգերի հիմքերը: Լյուդովիկոս XVIII թագավորը (մահապատժի ենթարկված Լյուդովիկոս XVII-ի եղբայրը) ստիպված էր համաձայնվել սահմանադրական կառավարման հետ: Այն ձևակերպվեց 1814թ. սահմանադրական Հրովարտակում: Դրանով բոլոր ֆրանսիացիները, անկախ տիտղոսից և աստիճանից, հավասար էին օրենքի առաջ (հողված 6): Երաշխավորվում էր սեփականության անձեռնմխելիությունը. «Սեփականության բոլոր տեսակներն անձեռնմխելի են: Օրենքը ոչ մի տարբերություն չի դնում նրանց միջև»: Ոչ ոք չէր կարող ենթարկվել հետապնդման կամ բանտարկվել այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում: Սակայն այս բոլորը մնացին թրթի վրա: Սահմանափակվեցին քաղաքական ազատությունները:

Երկրում վերականգնվում էր լեգիտիմական սահմանադրական միա-

¹ Madelin L., Histoire du consulat et de l'Empire, V, VI, Paris 1946, էջ 167:

² Конституционная хартия 4 июня 1814г., հոդ. 9, տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 440:

պետությունը (լեգիտիմական միապետությունը տվյալ իրավունակում հիմնականում էր որպես միապետություն, որտեղ նորից կառավարում էր Բուրբոնների «օրինական» դինաստիան): Ընդ որում քաղաքացիի արտոնությունները (1791 թ. սահմանադրության համեմատ) մեծանում են: Թագավորը «սուրբ էր և անձեռնմխելի»¹: Նրան էր պատկանում գործադիր իշխանությունը: Հանդիսանալով պետության գլուխը, նա միաժամանակ ղեկավարում էր բանակը: Թագավորն իրավունք ուներ պատերազմ հայտարարելու և պայմանագրերի կնքելու (հաշտության, անկտորային, դաշնակցային): Նա էր նշանակում պետական ապարատի, բանակի, ոստիկանության և դատարանի բոլոր պաշտոնատար անձանց: Օրենսդրության բնագավառում նա իրավունք ուներ հրատարակել հրամանագրեր: Պետրոսյանների կողմից ընդունված օրինագիծն օրենքի ուժ էր ստանում միայն քաղաքացիի կողմից հաստատվելուց հետո: Նրա կողմից մերժված օրինագիծը չէր կարող կրկին ներկայացվել պատրասենու՝ նույն նստաշրջանի ընթացքում: Պետրոսյանները պետք է բաղկացած լինելու երկու պալատներից, պետք էր պալատից և դեպարտամենտներից ընտրված պատգամավորների պալատից: Թագավորին էր պատկանում պերի կոչում շնորհելու իրավունքը: Դա կնախող էր լինել ցմահ կամ ժամանակավոր: Պերի իրավունք ունեին ծագումով քաղաքացիական ընտանիքների անդամները և նրանց արյունակից հարազատները:

Պատգամավորների պալատի ընտրություններում ընտրելու իրավունք ունեին 30 տարեկան դարձած բոլոր այն անձինք, ովքեր վճարում էին ուղղակի հարկ 300 ֆրանկից ոչ պակաս չափով: Ընտրվելու իրավունք ունեին 40 տարին լրացած այն անձինք, ովքեր վճարում էին ուղղակի հարկ 1000 ֆրանկից ոչ պակաս չափով: Գույքային և տարիքային ցենզերը երկրի արական բնակչությանը զգալի մասին արգելում էին մասնակցել ընտրություններին: 31 մլն. ազգաբնակչությունից ընտրելու իրավունք ունեին մոտավորապես 30 հազարը, իսկ ընտրվելու իրավունք՝ 15 հազարը:

Լեգիտիմական միապետությունը պահպանեց Նապոլեոնի ժամանակ ստեղծված ռազմա-բյուրոկրատական և դատական պարատը:

Բուրբոնների վերականգնված միապետությունը երկրում առաջացրեց սուր դժգոհություն, որն ավելի սաստկացավ ժայռահեղական աջ միապետականների բռնություններից և անօրինականություններից:

Հուլիսյան միապետությունը: Ազնվական հետադիմությունն իր գագաթնակետին հասավ XIX դ. 20-ական թթ. կեսին, երբ գահին բազմեց Կառլոս X-ը: Պետությունում ղեկավար պաշտոններն ամբողջությամբ անցան նրա ձեռքը: Նոր քաղաքացի, ընդամենը գնալով հեղափոխության տա

¹ Конституционная хартия 4 июня 1814г., հոդ. 13, տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 442:

րիներին բռնագրաված հողերն ազնվականներին վերադարձնելու պահանջներին, հաստատեց վերադարձող վտարանդիներին դրամական փոխհատուցում վճարելու մասին օրենքը: Վճարման ողջ ծանրությունն ընկավ գյուղացիության ուսին: Ընդունվեցին օրենքներ, որոնք էապես շոշափում էին ձեռնարկատերերի շահերը: Եկեղեցու դեմ հանդես գալու համար մտցվեցին խիստ պատիժներ: Երկվիստների ուխտի գործունեությանը տրվում էր ազատություն:

1830 թ. հունիսին կառավարությունը որոշեց վերացնել 1814 թ. Հրովարտակով սահմանված սահմանադրական ռեժիմը: Ընդունվեցին հետևյալ օրոգնանքները. 1) պատգամավորների սրբապատի արձակման մասին, 2) ստորին սրբապատում պատգամավորների քվի կրկնակի կրճատման մասին, 3) մամուլի լրացուցիչ գրաքննություն մտցնելու մասին, 4) հավաքներ և ժողովներ արգելելու մասին:

Օրոգնանքները երկրում առաջացրին նոր բողոքներ: Ռեժիմից անընդհատ աճող դժգոհությունը երկար չտևեց: 1830 թ. հուլիսին Փարիզի ժողովուրդը բարձրացրեց զինված ապստամբություն: Թեժ մարտերից հետո մայրաքաղաքը հայտնվեց ապստամբների ձեռքում, որոնց աջակցում էին նահանգները: Կառլոս X-ը դիմեց փախուստի: «Լեգիտիմական» միապետությանն ընդմիջտ վերջ տրվեց:

Հաղթանակի պտուղներից, սակայն, օգտվեց խոշոր և ամենից առաջ ֆինանսական բուրժուազիան: Նրա դրածոները կազմեցին, այսպես կոչված, «Ժամանակավոր կառավարություն», որն էլ Լուի-Ֆիլիպ Օռլեանցուն հռչակեց թագավոր (բուրբոնների կրտսեր ճյուղի ներկայացուցիչ): Նա սերտ կապով կապված էր երկրի խոշորագույն բանկիրների հետ:

Նոր ռեժիմն իր ծնունդը նշանավորեց սահմանադրությամբ, որը պատմությանը հայտնի դարձավ, որպես 1830 թ. Հրովարտակ: Այն շատ դրույթներով նման էր 1814 թ. Հրովարտակին: 1830 թ. Հրովարտակով փոքր ինչ ընդլայնվեց պառլամենտի դերը: Օրենսդիր նախաձեռնության իրավունքը հանձնվեց երկու պալատներին և թագավորին: Մի փոքր իջեցվեցին տարիքային և գույքային ցենզերը (օրինակ պատգամավոր կարող էր ընտրվել 30 տարին լրացած անձը)¹: Ընդհանուր առմամբ, 1830 թ. Հրովարտակով պետական մեխանիզմի կարևորագույն օղակներն էական փոփոխությունների չենթարկվեցին: Աշխատողների վիճակը չբարելավվեց:

¹ Конституционная хартия 14 августа 1830г., հոդ. 32, տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 443:

4. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1848 Ք. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1848 Ք. հեղափոխությունը: 1848 Ք. ձմռանը Փարիզի ժողովուրդը և, ամենից առաջ, բանվորները զինված անպատամբություն բարձրացրին: Ապստամբության անմիջական շարժառիթը համդիսացավ այդ տարվա փետրվարին Փարիզի բնակիչների խաղաղ և անզեն ցույցի գնդակոծումը: Նրանք պահանջում էին քաղաքական կարգի դեմոկրատացում և ժողովրդական զանգվածների ծանր տնտեսական վիճակի բարելավման կոնկրետ միջոցառումների ընդունում: Կառավարության չարագործությունը բուռն զայրուք առաջացրեց: Արդեն հաջորդ օրն ապստամբները զրավեցին մայրաքաղաքի հիմնական ստրատեգիական կետերը: Լուի-Ֆիլիպը գահից հրաժարվեց:

Լիբերալ-դեմոկրատական ընդդիմության ներկայացուցիչներից ձևավորվեց ժամանակավոր կառավարություն: Հռչակվեց հանրապետություն: Կառավարությունը պարտավորվեց մտցնել համընդհանուր ուղղակի ընտրական իրավունք: Աշխատանքի մասին դեկրետով հռչակվեց աշխատանքի իրավունքը և պետության՝ բոլորին աշխատանքով ապահովելու պարտականությունը, կրճատվեց աշխատանքային օրվա տևողությունը (Փարիզում՝ մինչև 10 ժամ, մահանգներում՝ մինչև 11 ժամ): Տրվեցին նաև այլ դեմոկրատական բնույթի խոստումներ:

Կառավարությունը, դրան զուգահեռ, ամրապնդեց բանակի դիրքերը: Ստեղծվեց վարձու, այսպես կոչված, արագաշարժ զվարդիա: Այն պետք է դառնար կառավարության հիմքը՝ հակակառավարման ելույթների դեմ պայքարում:

Շուտով ժամանակավոր կառավարությունը բարձրացրեց հարկերը, որից տուժեց հատկապես գյուղացիությունը:

1848 Ք. գարնանը կայացան Սահմանադիր ժողովի ընտրությունները: Ժողովի ճնշող մեծամասնությունը կազմեցին խոշոր բուրժուաները և հողի սեփականատերերը:

Ժողովը 1848 Ք. ընդունեց Հանրապետության Սահմանադրությունը: Սահմանադրությամբ հաստատված պետական կարգի հիմնական սկզբունքներն են. կառավարման հանրապետական ձևը, իշխանությունների բաժանումը և ներկայացուցչական կառավարումը:

Օրենսդիր իշխանության բարձրագույն մարմին հայտարարվեց Ազգային ժողովը: Նրան էր հանձնվում օրենքների ընդունման բացառիկ իրավունքը, ներառյալ բյուջեն, պատերազմի և խաղաղության հարցերի լուծումը, անևտրական պայմանագրերի հաստատումը և այլն:

Ազգային ժողովն ընտրվում էր 3 տարի ժամկետով: Սահմանվեց հանրնդեանուր և ուղղակի ընտրական իրավունք՝ զաղտնի քվեարկությամբ (հոդ. 24): Ընտրելու իրավունք ունեին 21 տարին լրացած բոլոր Ֆրանսիացիները (անկախ որևէ ցեղգից), ովքեր օգտվում էին քաղաքացիական և քաղաքական իրավունքներից: Ընտրվելու իրավունք ունեին 25 տարին լրացած Ֆրանսիացիները՝

Բորժադիր իշխանությունն իրականացնում էր հանրապետության նախագահը, որն ընտրվում էր 4 տարի ժամանակով: Նա տեղաբաշխում էր զինված ուժերը, ղեկավարում ոստիկանությունը և վարչական ապարատը: Նախագահը նշանակում և ազատում էր նախարարներին, բանակի և նավատորմի հրամանատարներին, ոստիկանապետերին, գաղութների նահանգապետերին և բարձրաստիճան այլ պաշտոնյաներին: Նախագահն ընտրվում էր ոչ թե Ազգային ժողովի, այլ ղեկարտամենտի ընտրողների կողմից: Սահմանադրության VI գլուխը նվիրված էր Պետական խորհրդին, որը ստեղծվում էր որպես կառավարության օրինագծերը քննարկող խորհրդակցական մարմին: Նրա անդամները նշանակվում էին Ազգային ժողովի կողմից 6 տարի ժամկետով: Այն օժտված էր օրենքների կիրառման վրա հսկողություն իրականացնելու իրավունքով:

Հիշյալ սահմանադրությամբ կենտրոնական և տեղական կառավարման մարմիններն էական փոփոխություն չկրեցին: Պահպանվեց նախկին վարչա-տարածքային բաժանումը: Դեպարտամենտում անփոփոխ մնաց ոստիկանապետի իշխանությունը: Սահմանադրությամբ հատուկ գլուխ էր նվիրված քաղաքացիների դեմոկրատական իրավունքներին ու պայտույթություններին: Սակայն, բարձրագույն իրավաբանական ուժով օժտված այդ փաստաթղթում ամրագրված դեմոկրատական ինստիտուտները, ինչպես նաև հաջողականորեն անցկացվող իշխանությունների բաժանումը, կարող էին հաջողությամբ իրականացվել հարաբերական կայուն ներքաղաքական մթնոլորտ ունեցող երկրում, որը բացակայում էր այն ժամանակվա Ֆրանսիայում: Սահմանադրությունը չէր պայտունակում այն անհրաժեշտ իրավական միջոցները, որոնցով հնարավոր կլիներ կայունացնել հասարակությունը:

Նշենք, որ սահմանադրության լիբերալ-դեմոկրատական դրույթները կարճատև կյանք ունեցան: Սկզբում մտցվեց ընտրողների 6-ամսյա ցենզ, հետագայում այն սահմանվեց 3 տարի ժամանակով: Դրա հետևանքով ընտրողների ցուցակից դուրս մնացին մոտ 3 մլն. քաղաքացի: Հատուկ օրենքով վատթարացավ դեմոկրատական մամուլի ֆինանսական դրությունը:

Դ Конституция 4 ноября 1848г. հոդ. 24-26, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 135:

42 Երկրորդ կայսրությունը: Հանրապետության առաջին ընտրված նախագահ դարձավ Լուի-Նապոլեոնը՝ Նապոլեոն Բոնապարտի ազգակիցը: Լուի-Նապոլեոնն ընտրվել էր հիմնականում գյուղացիների շնորհիվ, որոնք հավատացին բոնապարտիստական քարոզիչներին, որ իբր կթեթևացվեն հարկերը, կտրամադրվեն վարկեր և այլն: Լուի-Նապոլեոնին պաշտպանում էին բանկիրները և խոշոր ձեռնարկատերերը:

1851թ. դեկտեմբերին կոալիտ կերպով խնայտելով Սահմանադրությունը, Լուի-Նապոլեոնը զորքերի օգնությամբ ցրեց Ազգային ժողովը: Առավել ակտիվ հակաբոնապարտիստները ձերբակալվեցին: 1848 թ. Սահմանադրությունը վերացվեց: Ռազմա-քաղաքական միջոցառումների շնորհիվ այդ ժամանակներում դեռ պահպանված հանրապետական-դեմոկրատական խմբերը և կազմակերպությունները ջախջախվեցին կամ անցան ընդհատակ: Շատ հանրապետականներ բռնեցին գաղթի ճանապարհը:

1852թ. Սահմանադրությունը: Նոր Սահմանադրությունն իրավաբանորեն ամրապնդեց 1851 թ. պետական հեղաշրջումը: Իշխանությունն ամբողջությամբ կենտրոնացավ նախագահի ձեռքում: Նրան էին ենթարկվում պետական մեխանիզմի բոլոր հիմնական օղակները, ներառյալ բանակը, ժանդարմերիան, ոստիկանությունը, վարչա-ֆինանսական ապարատը: Նախագահն իրավունք ստացավ իր հայեցողությամբ մշտնակել և ազատել բոլոր բարձրաստիճան պաշտոնյաներին:

Օրենսդիր իշխանությունն իրականացվում էր Պետական խորհրդի, օրենսդիր մարմնի և սենատի կողմից՝ նախագահի հետ համատեղ: Վերջինս էր նշանակում Պետական խորհրդի և սենատի անդամներին: Օրենսդիր մարմինն ընտրվում էր «ընդհանուր քվեարկությամբ», բայց պատգամավորների թեկնածուները հաստատվում էին նախագահի կողմից: Միայն պետության ղեկավարին էր վերապահվում օրենսդիր նախաձեռնության իրավունք: Նախագահի առաջարկությունների հիման վրա Պետական խորհուրդը կազմում էր օրենքի նախագծեր, որոնք ընդունվում կամ մերժվում էին օրենսդիր կորպուսի կողմից: Սենատն օժտված էր սահմանադրական վերահսկողության իրավունքով:

Ինչ վերաբերում է տեղական կառավարմանը, ապա այն այս անգամ ևս չկրեց էական փոփոխություններ:

1852թ. Սահմանադրությունը պայմաններ ստեղծեց կայսրության հռչակման համար: Նախագահը միապետից տարբերվում էր միայն նրանով, որ նրա իշխանությունը ժառանգական չէր: Նա ընտրվում էր 10 տարի ժամկետով:

Կայսրության վերականգնումը: 1852 թ. նոյեմբերին կայսրությունը հա-

տուկ օրենքով վերականգնվեց, իսկ Լուի-Նապոլեոնը դարձավ Ֆրանսիացիների կայսրը՝ Նապոլեոն III անունով:

Երկրում հաստատվեց Լուի-Նապոլեոնի ռազմա-քաղաքական դիկտատուրան:

XIXդ. 60-ական թվականների վերջին կայսրության քաղաքականության մեջ ամբողջությամբ բացահայտվեց բոնապարտիստական կառավարման բնորոշ գիծը՝ դեմագոգիայի և հայաժամանքների զուգակցումը: Աճող դժվարություններից դուրս գալու ելքը կայսրությունը հիմնականում տեսնում էր նոր պատերազմի մեջ: Անպարտելի թվացող պատերազմը, կառավարող շրջանների կարծիքով, պետք է ամրապնդեր բոնապարտիստական ռեժիմի հեղինակությունը, շեղեր շարքային քաղաքացիների ուշադրությունն երկրի ներքին կյանքի պրոբլեմներից:

1870 թ. ամռանը Լուի-Նապոլեոնը պատերազմ սկսեց Պրուսիայի դեմ: Նա մտալիք էր նաև խանգարել Գերմանիայի միավորմանը: Պատերազմը լիավին ցույց տվեց բոնապարտիստական կայսրության անկայունությունը:

Ֆրանսիայի պարտությունը Սեդանի վճռական ճակատամարտում կանխորոշեց նապոլեոնյան միապետության ճակատագիրը: Ջախջախման լուրը Փարիզ հասնելուց հետո (1870 թ. սեպտեմբեր) այնտեղ անմիջապես բռնկվեց ժողովրդական ապստամբություն: Կառավարությունն, ըստ էության, լուրջ դիմադրություն ցույց չտվեց և իշխանությունն անցավ նապոլեոնյան ընդդիմության ձեռքը: Ապստամբող ժողովրդի ճնշման տակ երկիրը հռչակվեց հանրապետություն:

1871 թ. սկզբին կնքվեց նախնական հաշտության համաձայնագիր, որով Ֆրանսիան Պրուսիային էր հանձնում Էլզասն ու Լոթարինգիան և պարտավորվում էր վճարել ռազմատուգանք:

265
112

5. 1871 թ. ՓԱՐԻԶՅԱՆ ԿՈՄՄՒՆԱՆ ԵՎ
1875 թ. ՄԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1871 թ. մարտի 18-ի լույս գիշերը կառավարությունը գորքի միջոցով փորձ արեց զինաթափել բանվորներին: Անսպասելի հարձակումն արդյունք չունեցավ: Չորքը հրաժարվեց կրակել քաղաքացիների վրա: Սկսվեց զինվորների և ժողովրդի երթայրացումը: Բարձրագույն աստիճանավորները փախան Վերսալ: Նրանց հետևից գնաց նաև կազմալուծված բանակը: Քաղաքում իշխանությունը հայտնվեց Ազգային գվարդիայի կենտրոնական կոմիտեի ձեռքում:

Գերմանիայի հետ պատերազմում կրած պարտությունը, ժողովրդի ա-

ռանց այդ էլ ծանր վիճակի կտրուկ վատթարացումը, կառավարող շրջանների ստեղծված իրավիճակը հաղթահարելու անընդունակությունը, բացահայտ ռազմական ճնշման փորձերը Փարիզի աշխատավորությանը դրդեցին ապստամբության, որն իշխանությունը հանձնեց հիմնականում բանվորներից բաղկացած Ազգային զվարդիային: Փարիզի պրոլետարիատին միացավ քաղաքային մանր բուրժուազիան, որի վիճակն այդ ժամանակ շատ ծանր էր: Ապստամբությունը ղեկավարող միջուկը բաժանվում էր այսպես կոչված «մեծամասնության» և «փոքրամասնության»: Առաջինը հիմնականում բաղկացած էր նոր յակոբինյաններից (1793-1794 թթ. յակոբինյան հանրապետության գաղափարների և սկզբունքների կողմնակիցներից) և բլանկիստներից՝ հեղափոխական Օգյուստ Բլանկի հետևորդներից: Բլանկիստներն անկեղծորեն պաշտպանում էին բանվոր դասակարգի շահերը: Նրանք քաջ և անվեհեր հեղափոխականներ էին:

«Փոքրամասնություն» զգալի մասը կազմում էին Պրուլոնի ուսմունքի հետևորդները: Պրուլոնիզմը վերջին հաշվով ուտոպիական ուսմունք էր, որը ձգտում էր իր ժամանակի հասարակության հակասությունները վերացնել հատուկ միավորումներ ստեղծելու ճանապարհով: Այդ միավորումների հիմնական կորիզը պետք է դառնար անհատական փոքր տնտեսությունը: Պրուլոնիստները ժխտում էին հետևողական քաղաքական պայքարի անհրաժեշտությունը:

«Մեծամասնությունը» և «Փոքրամասնությունը», չնայած իրենց տարբերություններին, հիմնական քաղաքական հարցերում հանդես էին գալիս բավականին համախմբված:

Ապստամբության առաջին օրերին ջախջախվեցին ոստիկանապետությունը և ոստիկանության բաժանմունքները՝ քաղաքներում: Քաղաքի ներքին պաշտպանության ֆունկցիան դրվեց Ազգային զվարդիայի հատուկ զումարտակների վրա:

Նոր իշխանության ղեկավար մարմինը դարձավ Ազգային զվարդիայի կենտրոնական կոմիտեն, որն ընդունեց որոշում իշխանության բարձրագույն ներկայացուցչական մարմնի, այսպես կոչված, Փարիզյան Կոմունայի Խորհրդի, ընդհանուր և ուղղակի ընտրություններ անցկացնելու մասին:

Մարտի 26-ին կայացած ընտրությունների հետևանքով Խորհրդի գերակշռող մասը կազմեցին բանվորները կամ նրանց ճանաչված ներկայացուցիչները:

Ձգտելով կայունացնել ստեղծված իրավիճակը պաշտպանության բնագավառում, Կոմունան մարտի 29-ի դեկրետով Ազգային զվարդիան հայտարարեց մայրաքաղաքի միակ զինված ուժը: Մշտական բանակի փախարեն ենթադրվում էր ստեղծել ժողովրդական աշխարհագոր: Սկզբուն-

քային նշանակություն ունեցավ ապրիլի 2-ի դեկրետը, որով եկեղեցին անջատվեց պետությունից:

Կոմունայի խորհուրդը դարձավ մշտապես գործող բարձրագույն մարմին: Խորհրդի անդամներն ընտրովի էին: Այն ընդունում էր որոշումներ և օրենքներ, որոնք կյանքում իրագործելու համար խորհրդի կազմից ստեղծվեցին հատուկ հանձնաժողովներ, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարում էր որոշակի բնագավառ (օրինակ՝ արդարադատության հանձնաժողովի իրավասության տակ էին դատական հիմնարկությունները: Ֆինանսական հանձնաժողովի կարևորագույն խնդիրը հանդիսանում էր դրամական շրջանառության պատշաճ կարգավորումը: Հասարակական ծառայությունների իրավասությանն էին հանձնվում փոստը, հեռագրատունը, հաղորդակցման ռադիոերը և այլն): Հանձնաժողովներից յուրաքանչյուրը պետք է զլխավորեր համապատասխան նախարարությունը: Հատուկ տեղ էր զբաղվում գործադիր հանձնաժողովը: Նրա խնդիրների մեջ էին մտնում առանձին հանձնաժողովների աշխատանքների կոորդինացումը և Կոմունայի դեկրետների ու հանձնաժողովների որոշումների կատարման հսկողությունը:

Խորհուրդը կապված էր տեղերում պետական կառավարման մարմինների հետ:

Պատարանը և դատավարությունը: Արդարադատության հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում էր դեմոկրատական սկզբունքների հիման վրա (ընտրովության, դատարանի առջև բոլորի հավասարության, դատարանի հրապարակայնության և այլն): Կոմունայի դատական համակարգը ձևավորվեց հետևյալ տեսքով. 1) ընդհանուր քաղաքացիական դատարաններ, 2) զինվորական դատարաններ:

Պատական համակարգը զլխավորեց Խորհուրդը: Այն հանդիսացավ բարձրագույն վճռաբեկ ատյան:

Կոմունան ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որոնք կոչված էին բարելավելու քաղաքային բնակչության ավելի քիչ ապահովված խավերի սոցիալ-տնտեսական վիճակը: Առավել կարիքավոր ընտանիքներին տրվեցին դրամական նպաստներ, հետաձգվեց բնակվարձի մուծումը, մինչև 20 ֆրանկ արժույթյամբ գրավ դրված շարժական գույքը անհատույց կերպով վերադարձվեց սեփականատերերին, արգելվեցին տուգանքները և աշխատավարձից պահումները¹: Կոմունայի ապրիլի 16-ի դեկրետով այն արհեստանոցները, որոնք լքվել էին սեփականատերերի կողմից («Վերսալ փախուստի» ժամանակ), հանձնվեցին բանվորների կողայերատիվ ընկե-

¹Протоколи заседаний Парижской Коммуны, под ред. Волгина В.П. и др., т. 2, М., 1960, էջ 182:

րություններին: Ապրիլի 25-ին հրապարակվեց դեկրետ դատարկ բնակարանների բռնագրավման և հրետակոծությունների ժամանակ տուժած բնակիչներին այդ բնակարաններում տեղ հատկացնելու մասին¹:

Անցկացվող վերափոխումների հետ մեկտեղ Կոմունան հրապարակեց ծրագրային փաստաթուղթ՝ Ֆրանսիայի պետական կարգի հիմնական սկզբունքների վերաբերյալ:

Մնալով միայն դեմոկրատական հանրապետություն, Ֆրանսիան պետք է իր երկրի քաղաքացիներին իրավունք վերապահեր ստեղծելու ինքնավար կոմունաներ: Առանձին Կոմունայի իրավասությունները կարող էին սահմանափակվել բոլոր այն կոմունաների իրավունքներով, որոնց միությունն ապահովում էր երկրի միասնությունը: Յուրաքանչյուր Կոմունայի իրավունքն էր տեղական բյուջեի ընդունումը, տեղական գույքերի կառավարումը, սեփական դատարանի, ոստիկանության և Ազգային զվարդիայի կազմակերպումը, կրթության և մի շարք այլ բնագավառներին վերաբերող հարցերի լուծումը:

Կոմունայի քաղաքացիներն ունեին իրենց հայացքներն ազատորեն արտահայտելու և օրինական շահերը պաշտպանելու իրավունք: Երաշխավորվում էր անձի խղճի և աշխատանքի ազատությունը: Պաշտոնյաներն ընտրվում կամ նշանակվում էին մրցակցությամբ և գտնվում էին հասարակական հսկողության տակ: Նրանց կարող էին հետ կանչել:

Փարիզի և Վերսալի միջև երկարատև դիմադրությունը լուծվեց ռազմական ճանապարհով: Մայիսի երկրորդ կեսերին վերսալցիները, օգտագործելով զինվորական ուժի վիթխարի առավելությունը ներխուժեցին Փարիզ:

Մայիսի 28-ին տապալվեց կոմունարների վերջին բարիկադը: Սկսվեցին մահապատիժներն ու դաժան հալածանքները: նդակահարվեցին Կոմունայի նշանավոր գործիչները: Չանգվածային բնույթ կրեց երեխաների վաճառքը: Ավելի քան 36.800 մարդ հանձնվեց զինվորական դատարանին²:

Երրորդ հանրապետությունը: 1870-1871 թվականների պատերազմների հետևանքները երկարատև ազդեցություն թողեցին Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի վրա: Հետպատերազմյան տարիների հիմնական քաղաքական խնդիրը մնում էր երկրի ապագա պետական կարգի հարցի կարգավորումը:

Սահմանադրության մշակումը պետք է դառնար հատուկ ընտրված սահմանադիր ժողովի գործը: Սակայն կառավարության պահանջով, այդպիսի մարմնի ֆունկցիաները հանձնվեցին Ազգային ժողովին: Նրա կազմը

¹Протоколи заседаний Парижской Коммуны, под ред. Волгина В.П. и др., т. 1, М., 1969, էջ 358:

²История Франция, т. 2, М., 1973, էջ 454:

բաղկացած էր ծայրահեղ պոսիպանոլականներից:

Միապետականները կազմում էին ճնշող մեծամասնություն: Այնինչ Փարիզում միապետության համար բավականաչափ սոցիալական հիմք արդեն չկար: Երկրորդ կայսրության քաղաքականությունը վերջնականապես ցրեց գյուղացիության միապետական պատրանքները, որն այն ժամանակ կազմում էր երկրի բնակչության մոտ 70 %-ը: Բանվոր դասակարգի հանրապետական համոզումներն ակնհայտ էին: Դա ստիպեց միապետական մեծամասնությանը Ժողովում ժամանակավորապես հրաժարվել միապետության վերականգնումից:

1875 թ. Սահմանադրական օրենքները: 1875 թ. ընդունվեցին երեք հիմնական օրենքներ, որոնք ամբողջությամբ կազմեցին երկրի նոր սահմանադրությունը: Դրանք էին. 1) «Պետական իշխանությունների կազմակերպման մասին սահմանադրական օրենքը», 2) «Մենատի կազմակերպման մասին օրենքը», 3) «Պետական իշխանությունների հայրաքերությունների մասին օրենքը»:

Սահմանադրական այս ակտերը բովանդակում էին պետական իշխանության բարձրագույն մարմինների կառուցվածքը և իրավասությունը: Նրանցում ոչ մի հոդված ուղղակիորեն չէր հասնում սուր հանրապետության հռչակումը: Միայն նախագահական իշխանության առկայությունն էր խոսում կառավարման ոչ միապետական ձևի մասին (օրենքում օգտագործվում է «հանրապետության նախագահ» տերմինը): Ընդ որում ավելորդ չէ նշել, որ «հանրապետության նախագահի» մասին հոդվածն ընդունվեց մեծամասնությամբ:

Սահմանադրության մեջ ոչինչ չէր ասվում քաղաքացիների դեմոկրատական իրավունքների և ազատությունների մասին:

Բայց, ընդհանուր առմամբ, երեք սահմանադրական օրենքները հաստատում էին հանրապետական կարգ՝ նախագահի գլխավորությամբ և պառլամենտական կառավարմամբ:

Նախագահն ընտրվում էր 7 տարի ժամկետով՝ սենատի և պալատի ներկայացուցիչների ձայների բացարձակ մեծամասնությամբ: Նա կարող էր վերընտրվել: Նրան տրված էր օրենսդիր նախագծողության, օրենքների հրատարակման, դրանց կատարման վրա հսկողության իրականացման իրավունքը: Նա կարող էր հետաձգել պալատների միստերը, պահանջել պալատների հետ համաձայնեցված օրինագծերի նոր քննարկում:

Սենատի համաձայնությամբ կարող էր արձակել պատգամավորների պալատը: Նախագահը գլխավորում էր զինված ուժերը: Նրան իրավունք էր վերապահված նշանակելու և ազատելու բարձրագույն պաշտոնյաներին: Նա ուներ ներում շնորհելու իրավունք:

Կարելի է նշել, որ սահմանադրությունը նախագահին վերագրեց գրեթե բոլոր այն հատկանիշները, որոնք բնորոշ էին միապետին: Այստեղ բացակայում էր միայն իշխանության ժառանգական բնույթի վերաբերյալ դրույթը: (Այդ բացը միապետության կողմնակիցները հույս ունեին հետագայում լրացնել):

Օրենսդիր իշխանությունն իրագործվում էր պատգամավորների պալատի և սենատի կողմից: Պառլամենտական հիմնարկները ձևավորելիս ձգտում էին ամենից առաջ չեզոքացնել պատգամավորների պալատը՝ պետական մեխանիզմի ամբողջ համակարգի, ըստ էության, միակ մարմինը, որը համարվել էր ուղղակի ընտրությունների հիման վրա և այդ պատճառով ինչ-որ չափով կախված էր ընտրողների կարծիքից: սենատի դերը և իրավասությունները պատճենահանված էին Բուրբոնների վերականգնման ժամանակների պերերի պալատի դերից և իրավասություններից, որն ամենից առաջ նշանակում էր սենատի անկախություն շարքային ընտրողներից: Օրենսդրության բնագավառում սենատին պատգամավորների պալատի հետ տրվեց հավասար իրավունքներ: Սահմանվեց միայն այն, որ ֆինանսական օրինագծերն առաջինը վերանայում էր պատգամավորների պալատը: Ստեղծվեց իրավիճակ, երբ առանց սենատի համաձայնության ոչ մի նախագիծ չէր կարող օրենքի ուժ ստանալ: Ավելին, սենատը մի շարք առավելություններ ստացավ պատգամավորների պալատի համեմատությամբ: Նրա համաձայնությամբ նախագահը կարող էր արձակել պատգամավորների պալատը, իսկ սենատն արձակվելու ենթակա չէր: Սենատը կարող էր վերածվել մեկ գերագույն դատական մարմնի՝ նախագահին և նախարարներին ուստելու համար:

Սահմանադրության մեջ չկար պետական կառավարման բարձրագույն մարմիններին նվիրված հատուկ բաժին: Օրենքները պարունակում են նախարարների գործունեությանը վերաբերող դրույթներ:

Հանրապետության հաստատումը: Միապետականների և հանրապետականների միջև պայքարը շարունակվեց մեկ 1875 թ. հետո: Պայքարի բովանդակությունն ամենից առաջ արտահայտվում էր միապետության կողմնակիցների (բանկիրների, խոշոր ձեռնարկատերերի, հողասեփականատերերի և այլոց)՝ պետության մեջ հատուկ ձիրք գրավելու ձգտումներով: Իշխանության հավակնորդների դեմ, ըստ էության, հանդես էր գալիս մնացած Ֆրանսիան, այսինքն՝ նրա ժողովրդի մեծամասնությունը: Դա էլ ապահովեց հանրապետականների վերջնական հաղթանակը, թեպետ պայքարը լարված էր:

1877 թ. երեք միապետական խմբավորումները (լեգիտիմիստները, օրլեանիստները և բոնապարտիստները) միավորվեցին՝ Հանրապետության

դեմ դավադրություն կազմակերպելու համար: Դավադիրյուներին գլխավորող նախագահ Մակ-Մագոնը (բռնաւարտիստ) փորձեց պետական հեղաշրջում կատարել: Սակայն, դեմ առնելով հանրապետականների համառ դիմադրությանը, Մակ-Մագոնը ստիպված էր պաշտոնաթող լինել: Անհաջողությամբ ավարտվեց հակահանրապետական հեղաշրջման և մյուս փորձը, որը ձեռնարկվել էր ռազմական նախարար Բուլանժեի կողմից: Հանդիպելով ժողովրդի անընդհատ աճող ու համառ դիմադրությանը, միապետականները ստիպված էին հյրաժարվել նոր հեղաշրջումների ծրագրերից:

Հանրապետության ամրապնդումը հանգեցրեց փաստական սահմանադրական ռեժիմի կարևոր փոփոխությանը: Դա ամենից առաջ վերաբերում էր նախագահական իշխանությանը: Հանրապետականների աչքում նախագահի իշխանությունը վարկաբեկվեց միապետական հեղաշրջումից հետո, որը կատարվեց երկրորդ հանրապետության նախագահ Լուի-Նապոլեոնի կողմից, նախագահ-դավադիր Մակ-Մագոնի գործունեությամբ: Նախագահին տրված իրավասությունները դարձան կտրուկ քննադատության առարկա: Մյուս կողմից, նոր կառավարող շրջանները պետության ղեկավարի սահմանադրական լիազորություններում տեսնում էին կարևոր երաշխիք՝ նոր ներքաղաքական վարչությունների դեպքում: Ելքը գտնվեց պետության նախագահի դերի և գործունեության փաստացի սահմանափակման մեջ: Կուսակցությունների լուռ համաձայնությամբ այդ պաշտոնի համար սկսեցին փնտրել քիչ նշանակություն ունեցող և ինքնուրույն քաղաքական գիծ անցկացնող գործիչների: Նախագահի իրավասությունների զգալի մասն անցավ պառլամենտի և կառավարության ձեռքը: Մնացած լիազորություններից ոմանք էլ (պատգամավորների պալատն արձակելու իրավունքը, օրենսդիր վետոն) նախագահի կողմից չէին օգտագործվում ինքնուրույն: Նախագահի լիազորությունների փաստացի սահմանափակումը չէր նշանակում այդ իմաստիտուտի վերացում: Նրան հատկացվում էր իշխանության յուրահատուկ ռեզերվի դեր՝ պառլամենտական և կառավարական կառույցներում հնարավոր ճգնաժամի դեպքերում:

1884թ. երկրում դեմոկրատական շարժման աշխուժության մթնոլորտում ընդունվեցին 1875 թ. սահմանադրությանը կից որոշ կարևոր ուղղումներ և լրացումներ: Արգելվում էր վերամայել կառավարման հանրապետական ձևը: Ֆրանսիան կառավարող դինաստիաների անդամները զրկվում էին նախագահի պաշտոնում ընտրվելու իրավունքից: Փոխվեց սենատի համալրման կարգը. լուծարվեց անփոխարինելի սենատորների կատեգորիան, այժմ նրանց բոլորին ընտրում էին կոմունաներից, ընդ որում մեծ քանակությամբ ունեցող կոմունաներն ընտրում էին ավելի մեծ թվով ներկայացուցիչների:

Արդյունքում՝ 1875 թ. սահմանադրությունը կրեց կարևոր փոփոխություններ. 1) պատգամավորների պայատր և սենատը վերածվեցին պետական իշխանությունների հիմնական օղակի, 2) տեղի ունեցավ նախագահի իշխանության սահմանափակում, 3) ակնհայտ դարձավ կառավարական իշխանության հարաբերական թուլացումը. կառավարությունը ենթակա էր վերահսկման երկու պալատների կողմից և պետք է ապահովված լիներ նրանց վստահությամբ (ամփստահության քվե տալը (նույնիսկ պառլամենտի մեկ պալատի կողմից) պարտադրում էր կառավարությանը հրաժարական տալ):

Պատգամավորների պալատն ընտրվում էր ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ 2 փուլով: Գործում էր մեծամասնական ընտրական համակարգը: Երկիրը բաժանվում էր ընտրատարածքների, որոնցից յուրաքանչյուրն ընտրում էր մեկ պատգամավոր: Առաջին փուլում ընտրված էր համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկել էր ձայների բացարձակ մեծամասնությունը (ընտրության մասնակիցների 50 տոկոսից ավելին): Եթե առաջին փուլում ոչ մի թեկնածուի օգտին չէր քվեարկել պահանջվող մեծամասնությունը, անցկացվում էր ընտրության երկրորդ փուլը, որի ժամանակ ընտրված էր համարվում ավելի շատ ձայն ստացած (հարաբերական մեծամասնություն) թեկնածուն:

Բազմակուսակցության պայմաններում, սովորաբար ընտրության առաջին փուլում հաղթողներ (ընտրվածներ) քիչ էին լինում: Ընտրության ճակատագիրը հիմնականում կախված էր երկրորդ փուլից, երբ մի քանի կուսակցություններ միավորվում էին հօգուտ մեկի: Քանի որ երկրորդ փուլում ընտրվելու համար պահանջվում էր ձայների հարաբերական մեծամասնություն, շատ պատգամավորներ ներկայացնում էին իրենց ընտրատարածքի ընտրողների փոքրամասնությունը:

Ընտրություններին կարող էին մասնակցել 21 տարին բոլորած, միևնույն վայրում 6 ամսից ոչ պակաս բնակվող Ֆրանսիայի քաղաքացիները: Ընտրական իրավունքից զրկված էին կանայք, զինծառայողները և գաղութների հիմնական բնակիչները:

Սենատորներն ընտրվում էին անուղղակի ընդհանուր քվեարկման ճանապարհով: Յուրաքանչյուր կոմունա ընտրում էր մեկական լիազոր, որանք էլ ընտրում էին սենատորներին: Սենատորների ընտրությունների համար որպես ընտրատարածք նախատեսված էին դեպարտամենտները (ընտրություններն անցկացվում էին յուրաքանչյուր դեպարտամենտի գլխավոր քաղաքում): Սենատորների ընտրության համար առաջին երկու փուլերում պահանջվում էր ձայների բացարձակ մեծամասնություն, իսկ երրորդ փուլում բավական էր հարաբերական մեծամասնությունը:

Կառավարությունը: Պառլամենտի բազմակուսակցական (բազմաֆրակցիոն) կազմը և որպես որա հետևանք, նրանում կայուն մեծամասնության բացակայությունը հանգեցնում էր կաբինետների հաճախակի փոփոխվելուն: 1875-1918 թթ. լինկած ժամանակահատվածում կառավարության գոյության ժամկետը չէր գերազանցում միջին հաշվով մեկ տարուց: Կաբինետի փոփոխությունը սակայն չէր նշանակում կառավարության ամբողջ կազմի պարտադիր փոփոխում:

Կառավարությունում մեծ դեր էր խաղում դեռևս Նապոլեոն I-ի կողմից ստեղծված պետական խորհուրդը: Այն հանդես էր գալիս որպես կառավարման հարցերով խորհրդատու:

Գործելով ստվերում խորհուրդն երբեմն վճռական ազդեցություն էր ունենում կառավարության կողմից ընդունված որոշումների բնույթի վրա: Միաժամանակ, Պետական խորհուրդը հանդիսանում էր վարչական արդարալատության բարձրագույն մարմին, որը քննարկում էր ապտիճանավորների կողմից իրենց պարտականությունները կատարելու ժամանակ թույլ տված իրավախախտումները:

Տեղական կառավարում: Հանրապետությունը հիմնականում պահպանեց նախկին վարչա-տարածքային բաժանումը: Առանձին նախարարություններ դեպարտամենտներում, իսկ մի շարք դեպքերում նաև ավելի փոքր վարչական տարածքներում, ունեին իրենց տարածքային կառավարումը: Դեպարտամենտում կենտրոնական իշխանության լիազոր ներկայացուցիչը համարվում էր ոստիկանապետը: Նրան ներքին գործերի նախարարի ներկայությամբ նշանակում էր նախագահը: Նահանգները դեկավարում էին ենթաոստիկանապետը, որը նշանակվում էր ներքին գործերի նախարարի կողմից և ենթարկվում ոստիկանապետին:

Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ տեղական ինքնակառավարում գոյություն չուներ:

1914 թ. Ֆրանսիան ներքաշվեց առաջին համաշխարհային պատերազմի մեջ:

6. ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ֆրանսիան գաղութային նվաճումները սկսել էր դեռևս XVI դարից: Այս բնագավառում նրա գլխավոր հակառակորդներն էին Իսպանիան և Պորտուգալիան:

XVII դ. սկզբին Ֆրանսիան նվաճեց Կանադան (Քվեբեկը), որից հետո մի շարք կղզիներ: Նրան հաջողվեց գերիշխանություն հաստատել նաև Աֆրիկայում և Մադագասկարայում:

Յոթնամյա պատերազմից հետո, 1763թ. ֆրանսիական կայսրությունը բուլացավ և նրանից շատ գաղութներ ազատվեցին: Կանադան, Հնդկաստանը և շատ ուրիշ տարածքներ անցան Անգլիայի տիրապետության տակ:

Ֆրանսիայի գաղութային քաղաքականության նոր ակտիվացումը սկսվեց հեղափոխությունից հետո: 1830 թ. սկսվում է Ալժիրի նվաճումը, որը տևեց ավելի քան 20 տարի:

XIX դ. 50-60-ական թթ. Ֆրանսիան ճանապարհ հարթեց դեպի Հնդկասիան, նվաճեց Կիսմերը (Կամբոջիա), ընդարձակեց իր տարածքները Սենեգալում, հաստատվեց Խաղաղ օվկիանոսի կղզիներում և այլուր:

Գաղութային քաղաքականությունը ծայրահեղ չափերի հասավ 1881 թ. սկսած, երբ ֆրանսիական բանակը նվաճեց Թունիսը, ներխուժեց Աֆրիկայի խորքերը և ներառեց իր դիրքերն այդ աշխարհամասում:

1886 թ. ավարտվեց Հնդկասիանի նվաճումը, 1895 թ., վերջապես նվաճվեց Մադագասկարը և այլն: Նշենք, որ ֆրանսիական գաղութներում բնակչության թիվը 1870 թ. կազմում էր 6 մլն. մարդ, իսկ 1914 թ. այն հասավ 55 մլն. մարդու:

Ֆրանսիայի գաղութների հիմնական մասը բաժանված էր չորս գեներալ-նահանգապետությունների. 1) ֆրանսիական Արևմտյան Աֆրիկայի, 2) ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայի, 3) Մադագասկարի, 4) Հնդկասիանի:

Ամենամարդաշատ և ամենահարուստ նահանգապետությունը համարվում էր Հնդկասիան: Այն հեշտ կառավարելու նպատակով բաժանված էր մի քանի մասերի. Կոնսինյուսինա (երվ. Վիետնամ), Տոնկին (Հյուս. Վիետնամ), Աննամ (Կենտ. Վիետնամ), Կամբոջիա, Լաոս: Հնդկասիանի նահանգապետի գերագույն իշխանությունը տարածվում էր բոլորի վրա: Հարավային Վիետնամն անմիջապես կառավարում էին ֆրանսիական իշխանությունները: Կամբոջիայում և Աննամում նրանք բուլլատրեցին տեղական դինաստիաների գործունեությունը:

Հատուկ կարգավիճակում էր գտնվում Ալժիրը: Այն կառավարում էր ներքին գործերի նախարարը: Ալժիրին վերաբերող կառավարական ակտերը, ինչպիսի բովանդակությամբ էլ դրանք լինեին, ստորագրվում էին հանրապետության նախագահի կողմից: Երկիրը բաժանված էր երեք դեպարտամենտների և հարավային տարածքի: Դեպարտամենտներում քաղաքացիական կառավարումն իրականացնում էին ոստիկանապետերը և գլխավոր խորհրդականները: Բնիկ ալժիրցիները քաղաքացիներ չէին համարվում: Նրանք «դիտվում» էին որպես Ֆրանսիայի «հայատակներ»:

Թունիսում և Մարոկկոյում պահպանվեց տեղական միապետությունը: Թունիսի բեյը և Մարոկկոյի սուլթանը ձևականորեն համարվում էին իրենց երկրի գլխավորը (ղեկավարը): Սակայն իրականում նրանց իրավասու-

թյուններն ուժ չունեին առանց ֆրանսիական ներկայացուցչի համաձայնության: Ֆրանսիան գաղութները կառավարում էր դաժան միջոցներով ու խիստ մեթոդներով:

8. ՖՐԱՆՍԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

Ֆրանսիական բուրժուազիան հեղափոխության կարևոր խնդիրներից մեկը համարեց ազգային միասնական իրավական համակարգի ստեղծումը: Այն ուղեկցվում էր ֆեոդալական հարաբերությունների կործանմամբ և արդեն իսկ հեղափոխության ընթացքում, իրավական նոր դրույթների իրականացմամբ: Հենց սկզբից հարց բարձրացվեց ոչ միայն Նոր օրենսդրության ստեղծման, այլ նաև նրա համակարգման մասին: Այդ են վկայում օրենսդրության համակարգման հետ կապված փորձերը, որոնք ձեռնարկվել էին դեռևս հեղափոխության ընթացքում: 1791 թ. կազմվեց քրեական օրենսգրքի նախագիծը, իսկ 1793, 1794, 1796 թթ. առաջարկվեցին քաղաքացիական օրենսգրքի նախագծերը: Սակայն այս փորձերը որևէ դրական արդյունք չտվեցին:

Անհաջողության պատճառները հասկանալի են. 1) տեղի էր ունենում իշխանության մոտ գտնվող խմբերի անընդհատ փոփոխություն: Խմբեր, որոնք տարբերվում էին իրենց գաղափարախառությամբ և կոնկրետ նպատակներով, 2) իր բացասական դերը խաղաց մի շարք միջոցառումների ժամանակավոր բնույթը, 3) ազդեցիկ նշանակություն ունեցավ բնակչության աղքատ խավերի պահանջների դեմ խաշոր բուրժուազիայի պայքարը: Այս ամենը խոչընդոտում էր նոր հասարակական հարաբերությունների կայունացմանը և միասնական օրենսգրքերի ստեղծմանը:

Միայն խաշոր բուրժուազիայի իշխանության ամրապնդումից հետո Նապոլեոնի կառավարությունը ստեղծեց օրենքների մի համակարգ, որը կարգավորում էր հասարակական այս կամ այն հարաբերությունները:

Նապոլեոնի դարաշրջանը նշանավոր է հինգ հիմնական օրենսգրքերի ստեղծմամբ: Դրանք են. քաղաքացիական, քրեական, առևտրական, քաղաքացիադատարական և քրեադատարական օրենսգրքերը:

Քաղաքացիական օրենսգիրքը: Այս օրենսգիրքը պատմությանը հայտնի է Նապոլեոնի օրենսգիրք անունով: Օրենսգրքի նախագծի մշակման համար 1800 թ. հուլիսի 13-ին ստեղծվեց հանձնաժողով, որի կազմի մեջ էին մտել Ֆրանսիայի այնպիսի նշանավոր իրավաբաններ, ինչպիսիք էին Տրունշեն, Պորտալիսը, Մալվիլը և այլք: Կարճ ժամանակաընթացքում (4 ամիս) նախագիծը կազմվեց և ուղարկվեց բարձրագույն դատարանների քննարկմանը: Վերջիններս պետք է տային իրենց դիտողություններն ու

առարկությունները, որից հետո նախագիծը անցնելու էր օրենք դառնալու համար նախատեսված ճանապարհով: Սակայն, պետք է նշել, որ օրենքի նախագիծը սկզբնական շրջանում հանդիպեց լուրջ քննադատության և չընդունվեց: Նապոլեոն Բոնապարտի միջամտությունից հետո միայն այն ընդունվեց:

Օրենսգիրքը պատմությանը հայտնի է որպես Նապոլեոնի Օրենսգիրք: «Իմ փառքը ոչ թե 40 ճակատամարտում տարած հաղթանակներն են, այլ... հավերժ ապրող քաղաքացիական օրենսգիրքն է», - մատնանշում էր Նապոլեոնը¹:

Նապոլեոնի օրենսգիրքը Ֆրանսիայում մեծ դեր խաղաց բուրժուական հարաբերությունների ամրապնդման գործում: Այն օրինակ հանդիսացավ Իտալիայի, Բելգիայի, Հոլլանդիայի, Լեհաստանի, Շվեյցարիայի և այլ երկրների համար՝ քաղաքացիական օրենսգրքեր ստեղծելու բնագավառում: Այս օրենսգիրքը բազմաթիվ ուղղումներով հանդերձ գործում է մինչև հիմա:

Նապոլեոնի Օրենսգիրքը մարմնավորում և զարգացնում էր քաղաքացիա-իրավական այն սկզբունքները, որոնք ամրապնդված էին 1789թ. Մարտի և քաղաքացու իրավունքների հռչակագրում:

Օրենքի ստեղծման ժամանակ նրա հեղինակները հենվել են իրավաբանական դոկտրինայի վրա, ակտիվորեն իրագործել հեղափոխական օրենսդրությունը, պահպանել ֆրանսիական սովորությանի ն իրավունքի ուրուջը որույթներ, կիրառել հռոմեական իրավունքը:

Հռոմեական իրավունքի ազդեցությունն արտացոլվեց օրենսգրքի կառուցվածքի վրա: Այն կառուցված էր այսպես կոչված սահմանադրական համակարգի հիման վրա: Օրենսգիրքը բաղկացած է նախաբանից (որտեղ նշվում է իրապարակայնության, օրենքների գործունեության և կիրառման մասին) և երեք գրքերից: Առաջին գիրքը նվիրված է անձանց (իրավաբանական և ֆիզիկական) շեղակորդը բովանդակում է գույքային և սեփականատիրական հարաբերությունների իրավական կարգավորման հիմնական դրույթներն ու սկզբունքները: Տրորդը վերաբերում է սեփականության իրավունքի ձեռքբերման տարրեր միջոցներին:

Օրենսգիրքը, ելնելով իրավահավասարության սկզբունքից, քաղաքացիական իրավունքի սուբյեկտ է համարում ցանկացած ֆրանսիացու: Դրա հետ մեկտեղ այս սկզբունքը լիովին չէր իրագործվում (արտասահմանցիները, անուսնացած կանայք լիակատար իրավունակ չէին):

Օրենսգրքի բնորոշ առանձնահատկությունն այն էր, որ իրավաբանական անձանց չհամարեց որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ: Այդպիսի բացասական վերաբերմունքն իրավաբանական անձանց նկատ-

¹ Madelin L., Histoire du consulat et de l'Empire, V, Paris 1947, էջ 207:

մամբ բացատրվում էր նախ, կապիտալիստական հարաբերությունների թրոգարգացմամբ (այդ ժամանակ մեծ դեր էր խաղում անհատական ձեռնարկատիրական գործունեությունը, իսկ փոքրաթիվ առևտրական ընկերությունները գործում էին Առևտրական օրենսգրքի կանոններով), երկար, դեռ հեղափոխությունից սկսված պահպանվել էր իրավաբանական անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքը (վախենում էին, որ դրանով կվերականգնվեն ֆեոդալական հիմնարկները):

Սեփականության իրավունք: Հեղափոխության շնորհիվ ձևավորվեցին նոր դասակարգեր՝ բուրժուազիա և գյուղացիություն, որոնք հանդիսացան Նապոլեոնի կառավարության հենարանը:

Հողային հարաբերություններում ֆեոդալական կարգերի վերականգնման փորձերը ենթարկվեցին ձախողման: Նոր սեփականատերերի շահերն ավելի օրինական էին և ակնհայտ:

Նապոլեոնի օրենսգիրքը չի տալիս սեփականության իրավունքի սահմանումը, բայց, ըստ էության, ամրագրում է սեփականատերերի հիմնական իրավասությունները (հոդված 544): Այդպիսի իրավասություններն էին իրերի օգտագործումը և տնօրինումը:

Ֆրանսիական հեղափոխության բոլոր հռչակագրերում հռչակված մասնավոր սեփականության իրավունքն աշխարհի ոչ մի օրենսգրքում այդքան լայնորեն և բացարձակ չի ձևակերպված, ինչպես այստեղ: Բացարձակ և ազատ սեփականության իրավունքի հռչակումը վկայում է օրենսգրքի բուրժուական բովանդակության մասին: Այն մարմնավորում էր հեղափոխական պատկերացումները սեփականության իրավունքի վերաբերյալ: Միաժամանակ օրենսգրքով ամրագրված սեփականության իրավունքը հռոմեական իրավունքի կրկնօրինակն էր, որը սեփականատիրոջը թույլ էր տալիս օգտագործել և տնօրինել իրեն պատկանող իրը:

Սեփականության իրավունքը Պորտալիսը համարում էր հիմնական իրավունք, որի վրա հենվում էին հասարակության բոլոր հիմնարկները: Համամիտ լինելով այդ կարծիքի հետ Նապոլեոնը Պետական խորհրդի նիստերից մեկի ժամանակ ընդգծեց, որ «անհրաժեշտ է բազմապատկել սեփականատերերի թիվը, քանի որ նրանք հանդիսանում են պետության անվտանգության ամուր հենարանը»¹:

Ընդհանուր առմամբ կարող ենք նշել, որ սեփականության իրավունքին մվիրված հոդվածների բովանդակության վրա մեծ ազդեցություն թողեցին հեղափոխական օրենսդրությունը և հռոմեական իրավունքը:

Սակայն սեփականատիրոջ անվտանգությունը լիակատար համարել չի կարելի, քանի որ Նապոլեոնի օրենսգիրքը նախատեսում էր նրա կամայա-

¹ Locre, *Esprit du Code Napoleon*, Paris 1805-1808, էջ 99:

կանության որոշ սահմանափակումներ՝ հոգուտ երրորդ անձանց: Այդ սահմանափակումները կոնկրետ էին և չկային ընդհանուր կանոններ, որոնք յուրաքանչյուր սեփականատիրոջ հարկադրեն հաշվի նստել հասարակության կամ երրորդ անձանց կարևորագույն շահերի հետ: Այդպիսի սահմանափակման վառ օրինակ կարող է ծառայել 545-րդ հոդվածը, որը կրկնում է 1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի դրույթն այն մասին, որ ոչ մեկին չի կարելի հարկադրել հրաժարվելու իր սեփականությունից, եթե դա չի պահանջում հասարակության շահը կամ օրենքի սահմաններում արդարացիորեն նախապես չի վճարվել դրա դիմաց:

Օրենսգրքի բոլոր հոդվածներն անդրադարձել են սեփականության իրավունքին: Նշենք, որ օրենսդիրն ուշադրությունը կենտրոնացնում է հատկապես անշարժ գույքի (մասնավորապես հողի) սեփականության վրա: Ամրագրված նորմերով օրենսգիրքն այս կամ այն չափով կարգավորում է սեփականատիրական հարաբերությունները: Այստեղ մանրամասնորեն կարգավորված են հողի սեփականատիրոջ իրավունքները, սերվիտուտը, ժառանգների միջև անշարժ գույքի բաժանումը, հողի գրավ դնելը և այլն:

Անշարժ գույքի առավելության մասին է խոսում այն փաստը, որ եթե շարժական գույքը խնամակալը կարող էր տնօրինել անձամբ՝ առանց որևէ մեկի համաձայնության, ապա անշարժ գույքի տնօրինման դեպքում անհրաժեշտ և պարտադիր էր ընտանեկան խորհրդի կամ դատարանի համաձայնությունը: 1880թ. շարժական գույքի արժեքի բարձրացման կապակցությամբ հրապարակվեց օրենք, որը սահմանափակում էր խնամակալի իրավունքը՝ շարժական խոշոր մասշտաբի գույքի տնօրինման մեջ:

Հողի սեփականատիրոջ իրավունքներն ամրագրված են օրենսգրքի 552 հոդվածում, որի բովանդակությունից պարզ երևում է, որ սեփականատերն իրավունք ունի ոչ միայն իրեն պատկանող հողի, այլև այդ հողի տակ և վրա գտնվող օբյեկտների նկատմամբ¹:

Օրենսգրքում մոռացված չեն նաև շարժական գույքի սեփականատերերը (բանկիրները, վաճառականները):

Բնցի սեփականության իրավունքից, Նապոլեոնի օրենսգրքին հայտնի են նաև այլ իրային իրավունքներ (իրավունք ուրիշի իրերի նկատմամբ, տիրապետում և պահպանում): Օրենսգրքում սեփականությանը վերաբերող դրույթները XIX դ. ընթացքում չենթարկվեցին գործնական փոփոխությունների: Նորամուծությունների շարքում անհրաժեշտ է նշել միայն 1810 թ. օրենքը, ըստ որի սեփականատերերի կողմից հողի ընդերքը կարող էր մշակվել միայն պետության թույլտվության դեպքում:

¹Из Гражданского кодекса 1804г., гл. 552, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 193:

Պարտավորական հարաբերություններ: Նապոլեոնի օրենսգրքում մեծ տեղ են զբաղում պարտավորական իրավունքին նվիրված հոդվածները: Օրենսգրքի այս բաժնի վրա մեծ ազդեցություն թողեց հռոմեական իրավունքը:

Օրենսգիրքը չի տալիս պարտավորության ընդհանուր հասկացությունը, սակայն այնտեղ հստակ կերպով ձևակերպված է պայմանագրի սահմանումը (հոդ. 1101). «պայմանագիրը համաձայնություն է, որի միջոցով մեկ կամ մի քանի անձինք պարտավորվում են մյուս կամ մի քանի այլ անձանց առջև՝ ինչ-որ բան տալու, ինչ-որ մի բան անելու կամ որևէ բան չանելու մասին»: Պայմանագրի առարկայի հասկացությունը համընկնում է պարտավորության առարկայի հասկացության հետ: Դժվար չէ նկատել, որ ֆրանսիական իրավունքի պարտավորության բովանդակությունն ամբողջովին համընկնում է հռոմեական իրավունքի այդ հասկացության հետ:

Պայմանագրի վավեր լինելու կարևորագույն պայմաններից մեկը օրենսդիրը համարում է կողմերի համաձայնությունը (հոդ. 1108): Կողմերի համաձայնության տակ ֆրանսիական դոկտորինան հասկանում է կամքի համաձայնությունը (ներքին հոգեբանական գործողությունը): Օրենսգրքում ամրագրված է այն կարևորագույն դրույթը, ըստ որի անվավեր են ճանաչվում այն պայմանագրերը, որոնք կնքվել են մոլորության, խաբեության, բռնության և սպառնալիքի թաղեցության տակ¹: Միաժամանակ, պայմանագիրը չէր կարող համարվել անվավեր, եթե այն կողմերից մեկին ակնհայտ վնաս բերեր: Բացառություն կարող էր լինել օրենքով նախատեսված դեպքերում: Այսպես, օրինակ, եթե անշարժ գույքի տերն այն վաճառում էր իրական (շուկայական) գնի 7/12-րդ մասից պակաս գնով, ապա պայմանագիրը կարող էր ճանաչվել անվավեր (հոդ. 1674):

Ընդհանրացնելով, կարող ենք նշել, որ պայմանագրի կնքման կարևորագույն սկզբունքներից մեկը իրավահարաբերության սուբյեկտների համաձայնությունն է, որը, լինելով կողմերի կամքի բացահայտ արտահայտությունը, հնարավորություն է տալիս պայմանագիրը կնքած կողմերին գործելու օրենքի սահմաններում՝ իրենց կամքին համընթաց:

Երկրորդ կարևոր սկզբունքը, որի վրա կառուցվում են պայմանագրային հարաբերությունները, ձևակերպված է օրենսգրքի 1134 հոդվածում: Դա պայմանագրի անխախտելիության սկզբունքն է: Օրենսդիրը պայմանագրի կողմերին հնարավորություն էր տալիս պարտավորությունների կատարման ընթացքում փոխադարձ համաձայնության առկայության դեպքում փոփոխել պայմանագրի պայմանները կամ այն լրացնել նոր դրույթներով: Կողմերից մեկի կողմից պայմանագրի պայմանների չկատարումն

¹Из Гражданского кодекса 1804г., հոդ. 1109, տես Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 219:

առաջացնում էր որոշակի իրավական հետևանքներ:

Ֆրանսիայում պայմանագրերից առավել տարածված էին առուծախի, նվիրատվության, փոխանակության և վարձակալության պայմանագրերը: Բուրժուական իրավունքում առանձնահատուկ տեղ էր գրավում առուծախի պայմանագիրը, որի մեջ նշանակալից տեղ էր գրավում իրի բնութագրումը և գնի սահմանումը: Բացի պայմանագրերից, օրենսգիրքը սահմանում է նաև պարտավորությունների առաջացման այլ հիմքեր: Պարտավորություններ կարող են առաջանալ վնաս պատճառելու հետևանքով: Հայտնի է նաև «բնական պարտավորությունը», որի էությունն այն է, որ չի կարելի պահանջել պարտավորության կատարումը դատական կարգով: Սակայն, եթե պարտավորությունը կատարվել է, ապա չի կարելի այն վերադարձնելու պահանջ ներկայացնել: Նապոլեոնի օրենսգրքում «բնական պարտավորությունը» սահմանվել է որպես երեխաներին օժիտ տալու պարտավորություն: Պարտավորությունները կարող են ծագել նաև օրենքով նախատեսված դեպքերում:

XIX դ. ընթացքում պարտավորական իրավունքը գրեթե փոփոխության չենթարկվեց:

40 Ամուսնաընտանեկան հարաբերություններ: Ֆրանսիական Քաղաքացիական Օրենսգրքի կողմից կարգավորվող բոլոր հարաբերություններից ամուսնաընտանեկան հարաբերությունները հանդիսացան այն բնագավառը, որտեղ օրենսգիրքը կազմելու պահին ավելի մեծ ուժգնությամբ արտահայտվեցին հակահեղափոխական միտումները: Ամուսնու և եռր լիիշխանությունը, ամուսնացած կնոջ սահմանափակ իրավունակությունը և անգործունակությունը դարձան այն սկզբունքները, որոնց հիման վրա 1804 թ. սովորության իրավունքի ազդեցության տակ ստեղծվում է ընտանեկան իրավունքը: Հեղափոխական օրենսդրության ազդեցության տակ թույլատրվեց աշխարհիկ ամուսնությունը և ամուսնալուծությունը, որն էլ հանդիսացավ առաջադեմ երևույթ ամուսնության և ընտանիքի հարցերում:

Օրենսգիրքն ամուսնությունը դիտում է որպես պայմանագիր. այդ պատճառով էլ ամուսինների համաձայնությունն անհրաժեշտ պայման է հանդիսանում ամուսնության դեպքում:

Ամուսնության համար սահմանվեց որոշակի տարիք (տղամարդու համար 18, կնոջ համար՝ 15 տարեկան): Բացի դրանից արգելվում էր ամուսնությունն այն անձանց միջև, ովքեր որոշակի աստիճանով միմյանց հետ զտնվում էին ազգակցական կամ արյունակցական կապի մեջ: Ամուսնալուծությունը թույլատրվում էր հետևյալ դեպքերում. 1) ամուսնական անհավատարմության (այս դեպքում ամուսինը միշտ կարող էր ամուսնալուծություն պահանջել, իսկ կինը՝ եթե ամուսինն իր սիրուհուն պահում էր նույն

տանը), 2) չարաշահման (կոպիտ վարվելաձևի կամ ծանր վիրավորանքներ հասցնելու դեպքում), 3) ամուսիններից մեկի դատապարտման, երբ ամուսինները համաձայն են և համառորեն պահանջում են այն:

Ամուսինների փոխհարաբերությունները կառուցվում էին իշխանության և ենթարկման սկզբունքի հիման վրա. «ամուսինը պետք է հովանավորի կնոջը, կինը՝ հնազանդվի ամուսնուն» (հոդված 213): Օրենսգրքի 213 հոդվածից պարզ երևում է, որ հենց ամուսնու իշխանությամբ է պայմանավորված ամուսնացած կնոջ սահմանափակ իրավունակությունը և լիովին անգործունակությունը: Կնոջ անգործունակությունն այն էր, որ նա ինքնուրույն չէր կարող իրագործել իրավաբանական ոչ մի գործողություն՝ ինչպես դատական, այնպես էլ արտադատարանային կարգով: «Կինը չի կարող ելույթ ունենալ դատարանում առանց ամուսնու թույլտվության, թեկուզև նա լինի վաճառական կամ ամուսնու հետ չունենա գույքային ընդհանրություն» (հոդված 215):

Չնայած այս ամենին, օրենսդիրը կնոջն իրավունք էր վերապահում ինքնուրույն հանդես գալ ամուսնալուծությանը և իրեն պատկանող գույքը կտակելուն վերաբերող հարցերում:

Ամուսինների գույքային հարաբերությունները որոշվում էին ամուսնական պայմանագրով, որը կնքվում էր ամուսնությունից առաջ: Ընդհանուր օրենքի համաձայն, եթե ամուսնական պայմանագրում ուրիշ ոչինչ չի նախատեսվում, կնոջ ունեցվածքն անցնում էր ամուսնու կառավարման տակ, և վերջինս տնօրինում էր այլ ունեցվածքի եկամուտները: Որպես ընտանիքի ղեկավար՝ ամուսինն ինքն էր իրականացնում իշխանությունն անչափահաս երեխաների նկատմամբ¹:

Օրենսդիրը թույլ էր տալիս արտաամուսնական կապերով ծնված երեխաների օրինականացումը, սակայն այն իրականացվում էր կամավոր սկզբունքներով, քանի որ համաձայն 340 հոդվածի «հայրության որոնումը արգելված էր»: Դրա հետ մեկտեղ թույլատրվում էր «մայրության որոնումը»: Արդեն օրինականացված արտաամուսնական երեխաները ստանում էին որոշակի իրավունքներ, որոնք, սակայն, չէին կարող հավասարվել օրինական ամուսնությունից ծնված երեխաների իրավունքներին: XIX դ. վերջում XX դ. սկզբում օրենսգրքում կատարվեցին մի շարք փոփոխություններ և լրացումներ, որոնք վերաբերում էին ամուսնալուծման կան հարցերին:

1816 թ. արգելվեց ամուսնալուծությունը: 1884 թ. ամուսնալուծությունը վերականգնվում է, բայց արդեն նոր տեսքով: Ամուսնալուծությունը դիտար

¹Из Гражданского кодекса 1804г., стр. 372-373, см'у Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 181:

վում էր որպես սանկցիա՝ ամուսինների մեղավոր վարքի համար: Այս պատճառով չվերականգնվեց ամուսնալուծությունն այն դեպքում, երբ առկա էր ամուսինների երկկողմանի ռեալ համաձայնությունը:

1893թ. օրենքով առանձին ապրող կանայք դարձան գործունակ:

Ծնողների և երեխաների փոխհարաբերությունների փոփոխումներն արտահայտվեցին ծնողական իշխանության թուլացման և երեխաների իրավունքների ընդլայնման մեջ: Ընդլայնվեցին մոր իրավունքները երեխաների նկատմամբ: Թույլատրվեց արտասամուսնական կապերով ծնված երեխաների հոր որոնումը դատական կարգով:

Ժառանգական իրավունք: Օրենսգրքի համաձայն ժառանգումն իրականացվում էր ըստ օրենքի և ըստ կտակի: Ժառանգումն ըստ օրենքի տեղի է ունենում այն դեպքում և այնքանով, երբ և որքանով այն չի փոփոխվել կտակով: 1917 թ. օրինական ժառանգների շրջանակը սահմանափակվեց ազգակցության 6-րդ աստիճանով (մինչ այդ գործող 12 աստիճանի փոխարեն):

❗ **Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը:** Քաղաքացիական օրենսգրքի ծնունդն առաջացրեց անհրաժեշտ նախադրյալներ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ստեղծման համար: Անհրաժեշտ էր դատավարական նորմերը համապատասխանեցնել նյութական նոր նորմերին: 1806 թ. հրապարակվեց քաղաքացիադատավարության օրենսգիրքը, որի հիմքում ընկած էին 1667 թ. քաղաքացիական արդարադատության մասին օրոգմանսի դրույթները:

Օրենսգիրքը սահմանում էր քաղաքացիական իրավահարաբերություններից ծագող վեճերի վերաբերյալ գործերի քննության կարգը: Այն իր մեջ ներառում էր մի շարք բարդ ձևականությունների կատարում, որը խոչընդոտում էր արդարադատության իրականացմանը:

Ընդհանուր դատարաններում պահանջվում էր փաստաբանի պարտադիր մասնակցությունը: Քաղաքացիադատավարության օրենսգիրքը հետագա տարիներին քիչ փոփոխության ենթարկվեց:

Ֆրանսիական առևտրական օրենսգիրքը: Ֆրանսիական մասնավոր իրավունքի մեջ առևտրական իրավունքը հանդես էր գալիս որպես ինքնուրույն ճյուղ: Դրանով էր պայմանավորված 1807 թ. քաղաքացիական օրենսգրքից առանձին, առևտրական օրենսգրքի ստեղծումը: Առևտրական օրենսգրքի համար հիմք հանդիսացան Լյուդովիկոս XIV-ի ժամանակ հրապարակված օրոգմանների դրույթները (1673 թ. ցամաքային առևտրի մասին և 1681 թ. ծովային առևտրի մասին օրոգմանները):

1807թ. Առևտրական օրենսգիրքը կազմված է 4 գրքից: Առաջին գիրքը պարունակում է առևտրի վերաբերյալ ընդհանուր դրույթներ (առևտրով

գրադվող անձանց, բորսաների, միջնորդների, մուրհակների մասին): Երկրորդ գրքում խոսքը գնում է ծովային առևտրի մասին: Երրորդ գիրքը վերաբերում է սնանկությանը և լուծարմանը, իսկ չորրորդ գիրքը նվիրված է առևտրական իրավասությանը:

Առևտրական օրենսգիրքը հանդես էր գալիս միայն որպես քաղաքացիականի լրացում, քանի որ քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր կանոնները (սեփականության մասին, պայմանագրերի մասին) կիրառելի էին նաև առևտրական գործարքների նկատմամբ:

Առևտրական օրենսգիրքն այնպիսի նշանակություն չունեւ ինչպես, օրինակ, քաղաքացիականը: Առևտրական սովորույթները, որոնք ոչ մի տեղ գրված չէին, օրենսգրքի դրույթների նման կիրառվում էին պարտադիր կարգով:

49

Քրեական օրենսգիրքը: Քաղաքացիական օրենսգրքից հետո ֆրանսիական իրավունքի պատմության մեջ ամենանշանակալիցը քրեական օրենսգիրքն էր: Այն տողորված էր առաջադեմ գաղափարներով, որոնք ձևակերպված էին 1789 թ. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում: Քրեական իրավունքին են վերաբերում Հռչակագրի հետևյալ դրույթները. «Օրենքն իրավունք ունի արգելել միայն այն արարքները, որոնք վնասակար են հասարակության համար: Այն ամենը, ինչ արգելված չէ օրենքով՝ թույլատրելի է», «Օրենքն ընդհանուրի կամքի արտահայտությունն է: Այն պետք է նույնը լինի բոլորի համար», «Օրենքը պետք է սահմանի միայն խիստ անհրաժեշտ պատիժները, ոչ մեկը չի կարող պատժվել այլ կերպ, քան օրենքի ուժով»:

Այս հոդվածներում իրենց արտահայտությունը գտան օրինականության, քրեական օրենքի առջև բոլորի հավասարության, պատիժների և հանցագործությունների համաչափության, օրենքի հակառակ գործողության անթույլատրելիության սկզբունքները:

Քրեական առաջին օրենսգիրքը ընդունվեց 1791 թ.: Այն հենվում էր ֆրանսիական լուսավորիչներ Մոնտեսքիոյի, Վոլտերի, իտալացի իրավաբան Բեկկարիայի և այլոց մարդասիրական գաղափարների վրա: Չնայած դրան, այնուամենայնիվ, հենց օրենսգրքում հակասություն է նկատվում այդ գաղափարների և հաղթանակած բուրժուազիայի պահպանողական մտտեցումների միջև: Օրենսգիրքը կազմվեց այն ժամանակ, երբ բուրժուազիան շահագրգռված էր հեղափոխության նվաճումների պահպանման մեջ: Այս պատճառով էլ նա հետևողականորեն իրագործեց վերը նշված սկզբունքները:

1791թ. քրեական օրենսգիրքն ուներ չափազանց պարզ և հասարակ կառուցվածք: Դրա առաջին մասում («Պատիժների մասին») մանրակր-

կիտ ձով սահմանված են օրենքի շրջանակներում կիրառվող պատիժները: Ընդհանուր առմամբ պատիժները մնացին բավականին դաժան: Մահապատիժը, որը կատարվում էր հրապարակայնորեն, մախատեսված էր ավելի քան 40 դեպքերում: Օրինականացվեցին տաժանակիր աշխատանքները, օգտագործվում էին բանտարկության տարբեր տեսակները:

Օրենսգրքի երկրորդ մասում («Հանցագործությունների և պատժների մասին») ամրագրված են և այն արարքները, որոնք հասարակության համար վտանգավոր են և համարվում են հանցավոր: 1810 թ. օրենսգիրքը հրապարակվեց բոլորովին այլ քաղաքական իրավիճակում: Քրեական իրավունքի օգնությամբ բուրժուազիան ձգտում էր ամրապնդել հեղափոխության միայն այն արդյունքները, որոնք ձեռնուտ էին նրան: Այդ պատճառով 1810թ. օրենսգիրքը մեկ քայլ նահանջ էր 1791թ. օրենսգրքի համեմատ:

Այնուամենայնիվ, 1810թ. օրենսգիրքը բուրժուազիայի դասական օրենսգիրքն է: Հայտնի փոփոխություններով ու լրացումներով այն գործում է մինչև հիմա: Օրենսգիրքն օրինակ ծառայեց բազմաթիվ բուրժուական երկրների համար:

Օրենսգիրքը սկսվում է նախաբանով (նախնական որոշումներով), որոնցում խոսքը գնում է հանցավոր արարքների տեսակների բաժանման մասին (ի դեպ բաժանման հիմք է հանդիսանում պատիժների բնույթը): Այն հանցավոր արարքները դասակարգում է հետևյալ խմբերի. 1) հանցագործություններ (ծանր հանցանքներ), 2) զանցանքներ, 3) ոստիկանական խախտումներ:

Օրենսգիրքը բաղկացած է 4 գրքերից, որոնցից առաջին երկուսը նախնական դրույթների հետ կարելի է անվանել ընդհանուր մաս: Այն նվիրված է պատիժներին, դրանց տեսակներին և քրեական արտասխանատվությանը վերաբերող ընդհանուր հարցերին:

Երրորդ և չորրորդ գրքերն իրենցից ներկայացնում են օրենսգրքի հատուկ մասը: Դրանցում ամրագրված են հանցավոր արարքները:

Օրենսգրքում ամրագրված են պատժի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են. մահապատիժը, ցմահ և ժամկետային տաժանակիր աշխատանքները, բանտարկումը, աքսորը, տուգանքը, մի շարք իրավունքներից ժամանակավոր զրկելը (քաղաքական, քաղաքացիական, ընտանեկան) և այլն: Խիստ ու դաժան պատիժներ սահմանելիս զգացվում է, որ օրենսգիրքը կրել է ֆեոդալական իրավունքի ներգործությունը:

Դաժան պատժատեսակներն իրագործվում էին հրապարակայնորեն: Դա վկայում է այն մասին, որ պատժելու հիմնական նպատակը ոչ թե հանցագործին վերադաստիարակելն էր, նրան ուղղելը, այլ քարտափեցնելը:

Քրեական օրենսգրքի երկրորդ գիրքը սահմանում է պատաս-

խանատվության ենթարկելու և պատասխանատվությունից ազատվելու հիմքերը:

Մանրամասնորեն նկարագրված են հանցակցության տարբեր ձևերը՝ դրդումը և օժանդակումը:

Օրենսգիրքը, սակայն չի նախատեսում նվազագույն տարիքը՝ հանցագործին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Նշենք, որ 16 տարեկանին չհասած անձանց նկատմամբ, այնուամենայնիվ, կիրառվում էր ավելի մեղմ պատիժ, քան 16 տարեկանից բարձր անձանց նկատմամբ: Պատասխանատվության չափը որոշելիս հաշվի էր առնվում հանցավոր արարքի կատարման դիտավորությունը կամ անգուշտությունը:

Պետք է նշել, որ օրենսգրքի ընդհանուր մասում քրեական իրավունքի շատ հարցեր մնում են չլուսաբանված (չեն սահմանվում մեղքի ձևերը, չի խոսվում հանցագործությունների ամբողջության մասին, վաղեմիության մասին և այլն):

Օրենսգրքի երրորդ գիրքը նվիրված է հանցագործություններին և զանցանքներին, որոնք լինում են երկու տեսակի՝ հանրային և մասնավոր:

Հանրային օրինախախտումներ էին այն գործողությունները, որոնք ուղղված էին պետության անվտանգության, կայսրության սահմանադրության, հասարակության անդորրության դեմ: Հանրային հանցագործությունների թվում, ի տարբերություն ֆեոդալական իրավունքի, օրենսգիրքը չի նշում կրոնականը: Մասնավոր օրինախախտումներ էին համարվում այն հակաօրինական գործողությունները, որոնք ուղղված էին մասնավոր անձանց կամ նրանց սեփականության դեմ: քրոմ հողվածների կեսից ավելին նվիրված են սեփականության պաշտպանությանը: Օրենսգրքում մանրամասնորեն նկարագրված են տարբեր տեսակի զոդությունները, որոնց համար նախատեսված են խիստ պատիժներ:

Քրեական օրենսգիրքը, ինչպես և քաղաքացիականը, տոգորված էր սեփականության ոգով: Եթե քաղաքացիական օրենսգիրքը հաստատում է սեփականության իրավունքը, ապա քրեականն ապահովում է նրա առավելագույն անվտանգությունը:

Օրենսգրքի չորրորդ գիրքը նվիրված է ոստիկանական խախտումներին և պատիժներին: Հետագա տարիներին քրեական օրենսգիրքը ենթարկվում է բազմաթիվ փոփոխությունների, որոնք առաջին հերթին վերացնում են ֆեոդալական մնացուկները:

1912թ. սահմանվում է քրեական պատասխանատվության ենթարկելու նվազագույն տարիքը (13 տարեկան):

Ֆրանսիայում քրեական իրավունքը զարգանում էր նոր օրենքների ընդունման ճանապարհով, որոնք գործում էին քրեական օրենսգրքին զուգահեռ:

1808թ. Քրեական դատավարության օրենսգիրքը: 1808 թ. օրենսգիրքն առաջին դատավարական օրենսգիրքն էր, որն ամրապնդեց կառավարության կողմից դատավորների նշանակման սկզբունքը և հաստատեց դատարանի այն համակարգը, որը համապատասխանում էր քրեական օրենսգրքով սահմանված իրավախախտումների երեք տեսակի բաժանմանը: Օրենսգրքով հաշտարար դատավորը, որն իրականացնում էր հասարակ ոստիկանության քրեական գործերով զբաղվող դատարանի ֆունցիաները, հանդես էր գալիս որպես առաջին ատյան: Երկրորդ ատյանն ուղղիչ նազիկանության դատարանն էր: Այն կոլեգիալ դատարան էր, սակայն գործում էր առանց երդվյալ ատենակալների: Երրորդ ատյան հանդիսացավ բողոքարկման դատարանը, որը կոլեգիալ էր՝ երդվյալ ատենակալներով և բաղկացած էր երկու բաժիններից. ըստ քրեական և քաղաքացիական գործերի:

Դատական համակարգը գլխավորում էր վճարելի դատարանը: Դատարանին կից ստեղծվել էր դատախազություն, որը պաշտպանում էր մեղադրանքը և իրականացնում հսկողութունն դատական ասպրատի պաշտոնյա անձանց գործողությունների օրինականության վրա:

1808թ. օրենսգիրքը հաստատեց դատավարության խառը, մրցակցային հետախուզական ձևը:

Աշխատանքային և արհմիութենական օրենսդրությունը: Դեռևս Մեծ հեղափոխության տարիներին ֆրանսիական բուրժուազիան ֆեոդալական տիպի կորպորացիաների հետ պայքարի պատրվակով միջոցներ կիրառեց արհմիությունների ստեղծման դեմ: 1791թ. Լե Շապելյեի օրենքն արգելեց ոչ միայն նույն մասնագիտության տեր բանվորների միավորումը, այլև օրենքից դուրս հայտարարեց գործադուլները և աշխատանքային պայմանների քննարկման նպատակով հրավիրված ժողովները: Այս օրենքը, ինչպես նաև 1810 թ. քրեական օրենսգրքի որոշ նորմեր հանդիսացան հիմնական խափանող միջոցը՝ արհմիություններ ստեղծելու ճանապարհին: Դատակարգային պայքարի սրման հետևանքով Նապոլեոն III-ը, որը բանվորներին ենթարկեց բազմաթիվ հալածանքների, ստիպված էր օգտագործել բանվոր դասակարգի սիրաշահման պրակտիկան: Նա 1864 թ. չեղյալ համարեց Լե Շապելյեի օրենքը: Դրանով օրինականացվեցին գործադուլները և բանվորական սինդիկատները, եթե միայն դրանք չէին ուղեկցվում «ոչ իրավաչափ» գործողություններով: Բայց Երկրորդ կայսրության հետադիմական ռեժիմի պայմաններում բանվորական կազմակերպությունները չէին կարող հեշտ ու հանգիստ կազմվել և գործել: Միայն 1884 թ. բանվորական շարժման աճի նոր պայմաններում Երրորդ հանրապետության պառլամենտն օրինականացրեց բանվորական միությունների ազատ ստեղծումը, որը հետապնդում էր տնտեսական նպատակներ: Սինդիկալիստական շարժման արագ աճի կապակցությամբ XIXդ. ֆրանսիական բուրժուազիան ձգտում էր սինդիկալետները ենթարկել իր գաղափարային ազդեցությանը, դրդել նրանց միայն տնտեսական պայքարի:

Ինչպես և անգլիական բուրժուազիան, Ֆրանսիայի կառավարող շրջանները նույնպես ժամանակ առ ժամանակ աշխատանքի կարգավորման հարցերում զնդում էին շնչին զիջումների: Բայց միայն Երրորդ Հանրապետության ժամանակվա ընթացքում օրենքներն արգելեցին մինչև 13 տարեկան երեխաների աշխատանքը: Մինչև 16 տարեկան դեռահասների համար սահմանվեց 10-ժամյա, իսկ կանանց և մինչև 18 տարեկան դեռահասների համար՝ 11-ժամյա աշխատանքային օր: 1898 թ. ընդունվեց օրենք, ըստ որի ձեռնարկատերերը պատասխանատվություն էին կրում բանվորների արտադրական վնասի համար:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԶԳԻ ՀՌՈՍԵԱԿԱՆ
ՍՐԲԱԶԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ» ԱՆԿՈՒՄԸ

«Գերմանական ազգի հռոմեական սրբազան կայսրությունը», որը գոյություն ունեցավ ավելի քան 800 տարի, կործանվեց նապոլեոնական հաղթարշավների հետևանքով:

1805 թ. Ֆրանսիայի ճնշման ներքո Արևմտյան գերմանական մի շարք պետություններից ստեղծվեց գերմանական համադաշնություն, իսկ հետագայում՝ Ռեյնի միությունը (39 պետություն): Այդ խմբավորման իրավական հիմքը հանդիսանում էր Ռեյնի միության վավերագիրը, որտեղ մի կողմը ներկայացնում էին գերմանական իշխանները, իսկ մյուս կողմը՝ Նապոլեոնը («Միության» պրոտեկտորը): Պրոտեկտորին իրավունք էր վերապահված իրականացնելու Ռեյնի միության անվտանգությունը, վարելու արտաքին գործերը: Նա զինված ուժերի հրամանատարն էր և ուներ պատերազմ կամ խաղաղություն հայտարարելու իրավունք:

Այսպիսով, Ռեյնի միությունը, ունենալով համադաշնությանը բնորոշ հատկանիշները, ըստ էության, դարձավ ֆրանսիական պրոտեկտորատ: 1806 թ. հայտարարվեց «գերմանական ազգի հռոմեական սրբազան կայսրության» գոյության վերջը:

Ֆրանց II Հաբսբուրգ կայսրը զրկվեց գերմանական թագից: Ավստրիան բռնի կերպով անջատվեց Արևմտյան Գերմանիայի մյուս պետություններից: Իր գոյությունը մի կերպ պաշտպանեց Պրուսական քազավորությունը: Այն դարձավ երկրորդական կարգի գերմանական պետություն: Նրա տարածքի վրա տեղադրվեց ֆրանսիական զորք (շուրջ 150 հազար ֆրանսիական զինվորներ): Պրուսիան պարտավորվեց Ֆրանսիային վճարել ռազմատուգանք:

Նապոլեոնական զորքերի ջախջախումից հետո, 1815թ. Պրուսիան, Ավստրիան, Ռուսաստանը և Անգլիան դարձան հաղթանակած երկրների Վիեննայում կայանալիք կոնգրեսի կազմակերպիչները: Կոնգրեսի հիմնա-

կան խնդիրների նախկին վարչակարգերի վերականգնման, հեղափոխությունների և նոր պատերազմների կանխման լուծումը պահանջում էր Եվրոպայում հասնել ռազմա-քաղաքական հավասարակշռության և այդ հավասարակշռությունն ապահովելու համար Գերմանիայում ստեղծել պետական կառուցվածքի նոր ձևեր:

1815 թ. դաշնակցային ակտը հիմք դարձավ գերմանական պետության միավորման ստեղծման համար: Գերմանական միությունն իրենից ներկայացնում էր չափազանց անորոշ համադաշնություն, որտեղ բացակայում էին իշխանության և կառավարման կենտրոնական մարմինները: Միութենական սեյմը կազմված էր պետական աստիճանավորներից, որոնք նշանակվում էին առանձին գերմանական պետությունների կառավարությունների կողմից, և որոնք չունեին ինքնուրույն իրավունքներ ու պետք է գործեին միայն իրենց կառավարությունների համաձայնությամբ:

1815 թ. գերմանական միության կազմի մեջ մտնում էին 41 պետություններ, իսկ 1866 թ.՝ 35 պետություն: Միության մեջ մտնում էին մեկ կայսրություն (Ավստրիա), հինգ թագավորություններ (Պրուսիա, Սաքսոնիա, Բավարիա, Հաննովեր, Վյուրտեմբուրգ), դքսություններ և իշխանություններ, ինչպես նաև 4 քաղաք-հանրապետություններ:

Գերմանական միությունը, ինչպես նախկինում, իր կազմում ուներ օտարերկրյա տերությունների գերիշխանության ներքո գտնվող տարածքներ (Անգլիայի, Դանիայի, Հոլանդիայի և Լյուքսեմբուրգի):

Ավստրիայի և Պրուսիայի անժխտելի ռազմա-տնտեսական գերակշռությունը նրանց միության մյուս անդամների համեմատ, դարձնում էր արտոնյալ, չնայած ձևականորեն հռչակված էր բոլոր անդամների հավասարությունը: Միաժամանակ Ավստրիական կայսրության (Հունգարիա, Սլավոնիա և այլն) և Պրուսական թագավորության (Արևելյան և Արևմտյան Պրուսիա, Պոզնան) մի շարք հողեր լիովին դուրս էին մնում միութենական ենթակայությունից: Այդ հանգամանքը մեկ անգամ ևս հաստատում էր միությունում Ավստրիայի և Պրուսիայի առանձնահատուկ դիրքը:

2. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նապոլեոնի դեմ ուղղված ազատագրական պատերազմների ժամանակ գերմանական մի շարք իշխանություններ ժողովրդին խթանում էին ստեղծել նոր սպիանադություններ: 1814 թ. մինչև 1820 թ. ընկած ժամանակաշրջանում սահմանադրություններ ընդունվեցին Վյուրտեմբուրգում, Հաննովերում, Բավարիայում և այլուր:

Գերմանական մյուս պետություններում հետագայում սահմանադրություններ ընդունվեցին ֆրանսիական 1830 թ. հուլիսյան հեղափոխության ազդեցության և բուն Գերմանիայում՝ 30-ական թվականների ժողովրդական ակեղծությունների ներքո:

Սահմանադրությունների մեծամասնությունը գրեթե ազդեցություն չունեցավ ժառանգական միապետության վրա: Այդ հիմնական կոչված օրենքում իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների՝ համակարգը կառուցված էր հետևյալ կերպ՝ կառավարության գլուխ կանգնած էր միապետը, որն ուներ օրենսդիր և գործադիր իշխանություն: Օրենսդիր ներկայացուցչական մարմին էր լանդտագը, որը ստեղծված էր ծայրաստիճան հակադեմոկրատական ընտրական օրենքների հիման վրա: Գործադիր իշխանությունն իրագործվում էր միապետի նշանակած նախարարների կողմից: Սահմանադրությունները ձևականորեն ամրագրեցին գերմանական հայտակների որոշ իրավունքները (հավասարություն օրենքի առաջ, դատավորների անկախությունը, խլճի ազատությունը և այլն): Շատ պետություններում անցկացվեցին հողային ռեֆորմներ, չեղյալ հայտարարվեց գյուղացու անձնական կախվածությունը: Մի շարք ռեֆորմներ (ճղրտատիրական իրավունքի վերացումը (1807-1810 թթ.), ռազմական ռեֆորմը (1813-1815 թթ.), պետական կառավարման ռեֆորմը (1806-1808 թթ.) անցկացվեցին նաև Պրուսիայում: Նշենք, որ Պրուսիայում և Ավստրիայում սահմանադրություններն ընդունվեցին միայն 1848-1849 թթ. հեղափոխության ազդեցությամբ ներքո:

XIX դ. կեսերի հեղափոխական շարժումը սկիզբ առավ Ֆրանսիայում, սակայն քաղաքական ճգնաժամը վաղուց հասունացել էր նաև Գերմանիայում: Նրա հիմնական ներքին առաձգական հարցը դարձավ Գերմանիայի միավորումը և գերմանական պետությունների տնտեսական կյանքում ֆեոդալական ուժերի միջամտության վերացումը, որը կհարթեր կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետագա ուղիները: Ըզնաժամն ավելի էր սաստկանում Գերմանիայում առաջատար դիրքեր գրավելու համար՝ ավստրո-պրուսական մրցակցության հետևանքով: Պրուսիան, ստեղծելով և գլխավորելով սկզբում գերմանական մաքսային միությունը (1834 թ.) և, այնուհետև հարկային միությունը, դառնում է ամենահզոր գերմանական տերությունը, որն աստիճանաբար Ավստրիային դուրս մղում գերմանական միությունից: Արդյունքում ձևավորվեցին Գերմանիայի միավորման երկու ուղիներ՝ Պրուսիայի և Ավստրիայի զլխավորությամբ:

1848-49թթ. հեղափոխության ընթացքում ստեղծված Ազգային ժողովը 1849 թ. մարտի 28-ին ընդունեց այն ժամանակաշրջանի համար ամենադեմոկրատական սահմանադրությունը: Այն Գերմանիան հռչակեց կայսրու-

թյուն, որի կազմի մեջ մտան նախկին գերմանական միության տարածքները (§1): Սահմանադրությամբ առանձին գերմանական պետություններ պահպանում էին իրենց ինքնուրույնությունը և ունեին իրավունքներ ու պարտականություններ այնքանով, «որքանով դրանք չէին սահմանափակվում կայսերական սահմանադրությամբ»¹:

Գերմանական առանձին կառավարությունների երկրի հիմնական օրենքն իրավունք վերապահեց պայմանագրեր կնքել միմյանց հետ: Ոչ գերմանական կառավարությունների հետ նրանք պայմանագրեր կնքելու հարցում ունեին սահմանափակ իրավունք (§8): Այդ պայմանագրերը հաստատում էր կայսրը: Սահմանադրությունը կայսերական իշխանությանն օժտել էր լայն իրավասություններով: Պատերազմ և խաղաղություն հայտարարելը կայսրի բացառիկ իրավունքն էր (§10): Նա էր ղեկավարում զինված ուժերը, նշանակում և ազատում զինվորական բարձրագույն աստիճանավորներին: Կայսերական իշխանությունն իրավունք ուներ հրապարակելու օրենքներ և դրանց վրա իրականացնելու գերագույն հսկողություն: Նա պետք է ապահովեր երկրի ներքին ու արտաքին անվտանգությունը և միջոցներ ձեռնարկեր այն պահպանելու համար: Կայսրն իրավասու էր գումարել և փակել ռայխստագը, ցրել ժողովրդական պալատը (§79): Կայսրը կարող էր մեղմացնել կայսերական դատարանի կողմից սահմանված պատիժը: Նա իրականացնում էր գործադիր իշխանությունը՝ սահմանադրության շրջանակներում:

Սահմանադրության գլխավոր արժանիքը ռայխստագի ստեղծումն էր: Այն բաղկացած էր երկու պալատից. պետությունների պալատից և ժողովրդական պալատից (§85): Պետությունների պալատը ձևավորվում էր գերմանական առանձին պետությունների ներկայացուցիչներից, որոնց մի մասին (սահմանադրությամբ նախատեսված թվի կեսին) նշանակում էր կառավարությունը, իսկ մյուս մասին ընտրում էին տվյալ պետության բնակիչները: Այն պետություններին, որոնք պալատ էրն ուղարկում միայն մեկ անդամ, կառավարությունն առաջարկում էր երեք թեկնածու, որոնցից ժողովուրդն ընտրում էր մեկին (§89):

Այդ պալատում ամենաշատ տեղերը զբաղեցնում էին Պրուսիան (40 անդամ) և Ավստրիան (38 անդամ): Պալատի անդամ կարող էր դառնալ այն անձը, որը. 1) տվյալ պետության քաղաքացի էր, 2) օգտվում էր քաղաքացիական և քաղաքական բոլոր իրավունքներից, 3) հասել էր 30 տարեկանի:

Պետությունների պալատի անդամներն ընտրվում էին 6 տարի ժամա-

¹Конституция 28 марта 1849г., § 5, տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 519:

նակով, սակայն 3 տարի հետո պալատի կեսը տրավում էր նոր անդամներով (§92):

— ժողովրդի պալատը կազմված էր գերմանական ժողովուրդների կողմից ընտրված պատգամավորներից: Սկզբում պալատն ընտրվում էր 4 տարով, իսկ հետագայում՝ երեք: Ընտրությունները կարգավորվում էին հատուկ օրենքով:

Ուայխսնազի յուրաքանչյուր պալատ ուներ իր նախագահը, փոխնախագահը և քարտուղարը: Ընտրված պատգամավորը երդվում էր պահպանել սահմանադրության յուրաքանչյուր տառը: Նրանք անձեռնմխելի էին և կարող էին ձերբակալվել միայն տվյալ պալատի համաձայնության դեպքում¹: Սահմանադրության հիմնգերդող բաժինը նվիրված էր կայսերական դատարանին, որն իրավասու էր իրականացնելու պետական բարձրագույն դատական գործունեությունը:

Դատավարությունը բանավոր էր և հրապարակային: Ոչ հրապարակային (փակ) դատավարություն կարող էր տեղի ունենալ միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Գերմանական ժողովրդի հիմնական իրավունքներն ու ազատությունները և դրանց իրականացման մեխանիզմն ամրագրված են սահմանադրության VI բաժնում (§130-189): Պարագրաֆ 131-ի համաձայն գերմանական ժողովուրդը բաղկացած է գերմանական կայսրության կազմի մեջ մտնող պետությունների քաղաքացիներից: Յուրաքանչյուր գերմանացի ուներ քաղաքացիության, ընտրելու և ընտրվելու, կրթության և դաստիարակության, բնակարանի անձեռնմխելիության սեփականության և մի շարք այլ իրավունքներ: Թույլատրվեց խոսքի և մամուլի ազատություն: Օրենքի առաջ բոլորը հավասար էին: Մարդիկ չէին կարող հետապնդվել իրենց արտահայտման մտքի կամ կրոնական համոզմունքների համար: Պարագրաֆ 144-ում ամրագրված դրույթը սահմանում էր խղճի և դավանանքի ազատության իրավունք: «Յուրաքանչյուր կրոնական կազմակերպություն ինքնուրույն էր կառավարում իր գործը»²: Սահմանադրության դեմոկրատական բնույթը վառ արտահայտվեց պար. 161-163-ում: Այն նախատեսում էր խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ անցկացնելու, այլ անձանց հետ միավորումներ կազմելու, արհեստակցական միություններ ստեղծելու իրավունք:

Գերմանիայում ապրող մյուս ժողովուրդները (գերմաներեն լեզվով չխոսողները) ունեին ազգային ինքնորոշման իրավունք: Նրանք դատարա-

¹ Конституция 28 марта 1849г., § 117, տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 534:

² Նույնը, § 147:

նում իրենց մայրենի լեզվով էին հանդես գալիս:

Վերացնելով դասային անհավասարությունը, սահմանելով օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքը, սահմանադրությունը չեղյալ համարեց բոլոր այն տիտղոսները, որոնք կապ չունեին պետական ծառայության հետ:

Սահմանադրությունը չնայած լիբերալ էր, պարունակում էր առաջադեմ գաղափարներ, այնուամենայնիվ, «մեռած» էր, քանի որ մնաց թղթի վրա, չիրականացվեց կյանքում: Այն օրենքի ուժ չստացավ, քանի որ պրոսական գործերի կողմից Ազգային ժողովը ցրվեց:

3. ՊՐՈՒՍԻԱՅԻ 1850 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հեղափոխական շարժման ճնշումից հետո պրոսական ազնվականությունը 1850 թ. հունվարի 30-ին ընդունեց Պրուսիայի պատմության մեջ առաջին սահմանադրությունը: Այդ սահմանադրությունն ամենահետադիմականներից մեկն էր, որը հետագայում օրինակ դարձավ Ճապոնիայի 1889 թ. սահմանադրության համար: Սահմանադրությունը կազմված է 11 գլուխներից՝ տիտղոսներից («Թագավորի մասին», «Նախարարների մասին», «Պալատների մասին», «Դատական իշխանության մասին» և այլ գլուխներից):

Հեղափոխության ազդեցության ներքո այնտեղ ամրագրվեց նաև «Պրոսացիների իրավունքների մասին» գլուխը, որտեղ մի շարք դրույթներ կրում էին դեմոկրատական բնույթ: Այսպես, օրինակ, վերացվեցին դասային արտոնությունները, սահմանվեց օրենքի առաջ բոլոր պրոսացիների հավասար լինելու սկզբունքը, անձի և բնակարանի անձեռնմխելիությունը (հոդ. 4-6) և այլն¹: Նախատեսվում էր կրոնի, մամուլի, գիտության և դասավանդման ազատություն: Այդ դեմոկրատական դրույթներից, սակայն, ոչ մեկը չէր երաշխավորված և, ըստ էության, ձևական բնույթ էր կրում:

Երկրի ղեկավարը՝ պրոսական թագավորը, օժտված էր մեծ իրավասություններով: Նրան էր պատկանում գործադիր իշխանությունը: Թագավորն ինքն էր նշանակում և ազատում բոլոր նախարարներին, ստորագրում և հրատարակում օրենքներ ու կարգադրություններ²: Նա բանակի գլխավոր հրամանատարն էր: Օտարերկրյա կառավարությունների հետ պայմանագրեր կնքելու, պատերազմ և խաղաղություն հայտարարելու իրավունքը,

¹Конституционная Хартия Пруссия 31 января 1850г., տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 155:

²Նույնը, հոդ. 45:

սահմանադրության 48 հոդվածի համաձայն, վերապահված էր թագավորին: Վերջինիս էր պատկանում նաև օրենսդրական իշխանությունը՝ լանդտագերի հետ միասին (հոդ. 62): Նա էր նշանակում լանդտագի վերին պալատի անդամներին, գումարում և փակում նրա նստաշրջանները: Լանդտագը կազմված էր երկու պալատներից: Վերին պալատը (իշխանավորների պալատ) ձևավորվում էր թագավորի կողմից, իսկ Ստորին պալատը (պատգամավորների պալատ)՝ ժողովրդի կողմից. ընտրությունների միջոցով:

Սահմանադրության 6-րդ գլուխը նվիրված է դատական իշխանությանը: Դատավորները նշանակվում էին թագավորի-կողմից՝ ցմահ: Նրանք անկախ էին և ենթարկվում էին միայն օրենքին: Դատավորներ նշանակում էին այն քաղաքացիներից, ովքեր բավարարում էին օրենքով նախատեսված պահանջները:

Ամբողջ Պրուսիայում գործում էր մեկ գերագույն դատարան: Դատական միստերը տեղի էին ունենում բանալոր և հրապարակային: Ընդհանուր առմամբ, կարող ենք նշել, որ Պրուսիայի սահմանադրությունը ռեակցիոն էր և ֆեոդալական ու միապետական կարգերի փաստացի հաստատումն էր:

Այդ կարգերի ամրապնդմանը նպաստեց նաև «Պաշարման դրության մասին» 1851 թ. օրենքի ընդունումը, որը ոչ միայն թագավորին, այլև կառավարող շրջաններին իրավունք էր վերապահում հայտարարելու արտակարգ իրավիճակ, եթե ներքին և արտաքին վտանգը սպառնալու էր վերոհիշյալ կարգերին: Օրենքը դարձավ սահմանադրության անբաժանելի մասը: Սահմանադրության բնորոշ գիծը կենտրոնական իշխանության անկառավարելիությունն էր և բանակի վրա հենվելը: Բանակը երդում էր տալիս թագավորին, անտեսելով սահմանադրությունը: 1851 թ., օրենքի ընդունումից հետո, իշխանությունը քաղաքացիական մարմիններից անցավ զինվորականների ձեռքը:

Հյուսիս-գերմանական միության ստեղծումը: XIX դ. 40-50-ական թթ. Պրուսիայի տնտեսական արագ զարգացումը, նրա պատերազմները Դանիայի հետ, քաղաքական իրադրության փոփոխությունը 50-60-ական թթ. ապահովեցին հաջողությունը Գերմանիայի աստիճանական միավորման համար: Այն ընթացում էր պրուսական ուղիով՝ առանց Ավստրիայի: 1866 թ. Պրուսիան հանդես եկավ Ազգային ժողովի, ինչպես նաև ամբողջ գերմանական պետական կառուցվածքի վերափոխման առաջարկով: Գերմանական այլ պետությունների ժողովուրդներին խոստանալով ստեղծել դեմոկրատական համագերմանական պառլամենտ (ռայխստագ), Պրուսիան միաժամանակ պահանջեց ապագա Գերմանիայի կազմից հա-

նել «հետադիմական» Ավստրիային: Հենց դա էլ պատճառ հանդիսացավ 1866 թ. ավստրո-պրուսական պատերազմին:

Ավստրիայի պարտությունից հետո ստորագրվեց պայմանագիր, որով Ավստրիան դուրս մնաց գերմանական միության կազմից: Նշենք, որ բազմազգ Ավստրիան գնալով դադարում էր գերմանական պետություն լինելուց: XIX դ. վերջում գրեթե 37 մլն. բնակչությունից 19,3 մլն-ը սլավոններ էին, 7,44 մլն-ը՝ հույներ և միայն 10,58 մլն-ը՝ գերմանացիներ: Այս հանգամանքը մեծ դեր խաղաց ջախջախման և Գերմանիայի կազմից նրա դուրս մնալու հարցում:

Թշնամու դեմ տարած հաղթանակը թույլ տվեց Պրուսիային ստեղծել գերմանական պետություն՝ իր գլխավորությամբ: 1866 թ. ստեղծվեց Հյուսիս-գերմանական միությունը, որի կազմում ընդգրկվեցին բոլոր հյուսիսային և մի շարք արևմտյան ու հարավ-գերմանական պետություններ: Միությունը հենվում էր պրուսական թագավորության ռազմական և տնտեսական ուժի վրա և դարձավ վերջին հենարանը գերմանական կայսրության ստեղծման ճանապարհին:

Հյուսիս-գերմանական միության սահմանադրության մեջ տեղ գտան մինչ այդ չգործող շատ դեմոկրատական դրույթներ (համընդհանուր, հավասար և գաղտնի ընտրական իրավունքը, քաղաքական և քաղաքացիական իրավունքի պահպանումը և ազատությունը): Դրա հետ միասին սահմանադրությունը բացարձակորեն ամբողջությամբ Պրուսիայի ղեկավար դերը, տալով նրա թագավորին նախագահի պաշտոն: Նրան տրվեց նաև գործադիր իշխանության ամբողջ իրավունքը, որը հանձնարարվում էր միայն իրեն ենթակա և իր կողմից նշանակված միության կանցլերին:

118 4. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 1871 թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Գերմանական հողերի միավորումը և Պրուսիայի հզորացումը Ֆրանսիայի համար դարձավ վտանգավոր:

Հուսալով տանել հաղթական միտերազմ, Լուի Բոնապարտն ուղիներ էր փնտրում դուրս գալու ներքաղաքական ճգնաժամից, որը նոր հեղափոխությամբ էր սպառնում Ֆրանսիային: Հյուսիս-գերմանական կանցլեր Բիսմարկը կարողացավ դողել Նապոլեոն III-ին պատերազմ հայտարարելու Պրուսիային: Դրա հետևանքով Պրուսիան դարձավ ագրեսիայի ենթարկված երկիր, որը նրան բերեց մի շարք առավելություններ միջազգային ասպարեզում:

Համաժողովրդական աջակցության շնորհիվ Հյուսիս-գերմանական միության համար պատերազմը եղավ հաղթական և արագընթաց: Հյուսիս-

գերմանական միությունը միացրեց իրեն մի շարք հարավ-գերմանական մարածքներ և Ֆրանսիայից ստացավ 5 միլիարդ ռազմատուգանք:

Մի քանի ամիս անց Հյուսիս-գերմանական միության հիման վրա ստեղծվեց նոր (երկրորդ) գերմանական կայսրությունը:

Կայսրության կազմավորման մասին ակտը հրապարակվեց 1871 թ. հունվարին, իսկ նույն թվականի մայիսին ուժի մեջ մտավ կայսրության սահմանադրությունը, որն ամրապնդեց պրուսական թագավորության անվիճելի գերակշռությունը Գերմանիայի ֆեդերատիվ կայսրությունում:

Սահմանադրությունը կազմված է 78 հոդվածից: Առաջին հոդվածի համաձայն կայսրությունը բաղկացած է 25 հողերից, որոնցից 22-ը միապետություններ են, իսկ 3-ը՝ «ազատ քաղաքներ» (Լյուբեկը, Բրեմենը և Համբուրգը): Միայն գերմանական կայսրությունն ուներ բացարձակ սուվերեն իրավունք: Նրան էր պատկանում բոլոր կարևորագույն հարցերի կառավարման իրավունքը, այն է՝ արտաքին գործերի վարումը, ռազմական ուժի ղեկավարումը, դրամ կտրելու, ֆինանսական և տնտեսական գործունեության ղեկավարման իրավունքը, ինչպես նաև դատավարության կազմակերպումը: Պրուսական պետության գերակշռությունն արտահայտվում էր սահմանադրության շատ հոդվածներում: Միայն պրուսական թագավորը կարող էր դառնալ գերմանական կայսր: Միութենական խորհրդի կարևորագույն հարցերի քննարկման ծամանակ (քանակի, նավատորմի, մաքսային) վճռորոշ դեր ուներ Պրուսիան: Առանց Պրուսիայի համաձայնության որևէ փոփոխություն սահմանադրությունում անհնարին էր: Գերմանիայի «պրուսականացման» պրոցեսները, աստիճանաբար ձեռք էին բերում նոր ձևեր: Դրանք ազդում էին Գերմանիայի տնտեսական, իրավական հարաբերությունների, ինչպես նաև կայսրության կյանքի գործունեության այլ ոլորտների վրա: Արդյունքում՝ բոլոր թագավորությունները, դքսությունները, ազատ քաղաքները ենթարկվեցին պրուսական կայսրության ղեկավարությանը:

Սահմանադրությանը պետության գլուխ կանգնած էր պրուսական թագավորը, որը կրում էր գերմանական կայսրության տիտղոսը (գերմանական կայսր):

Նա էր միջազգային հարաբերություններում ներկայացնում կայսրությունը, հայտարարում պատերազմ և խաղաղություն, նշանակում և ընդունում դեսպաններին: Պատերազմ հայտարարելու դեպքում անհրաժեշտ էր նաև բունդեսրատի համաձայնությունը (հոդ. 11):

Կայսրն իրավունք ուներ գումարել, բացել, հետաձգել և փակել ներկա-

¹ Конституция Германской империи 16 апреля 1871г., հոդ. 6, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 159:

յացուցչական մարմինների (բունդեսրատի և ռայխստագի) նստաշրջանները (հոդ. 12): Բունդեսրատի նախագահը կայսրի կողմից նշանակված կանցլերն էր, որին կարող էր փոխարինել բունդեսրատի ցանկացած անդամ, եթե նրանից այդ մասին ստացել էր գրավոր լիազորություն: Կայսրն օրենքներ, հրամանագրեր և կարգադրություններ հրապարակելու և դրանց կատարման վրա հսկողություն իրականացնելու իրավունք ուներ: Կայսեր անձնական իշխանության ամրապնդմանը զգալի կերպով նպաստում էր այն հանգամանքը, որ նրան ենթարկվող պրուսական կառավարման մարմինները (քաղաքական, ռազմական և ռազմա-նավատորմային) ձեռք բերեցին կայսրական մասշտաբի ֆունկցիա: Դառնալով չարտոնագրված կայսրական մարմիններ, պրուսական թագավորական հիմնարկություններն անմիջական մասնակցություն ունեցան կայսրության արտաքին քաղաքականության կարևորագույն հարցերի լուծման բնագավառում:

Համաձայն սահմանադրության, կայսրության պետական գործերով զբաղվում էր կայսեր կողմից նշանակված կանցլերը: Նա դարձավ կայսրության միակ նախարարը, որը ղեկավարում էր բոլոր հիմնարկներն ու գերատեսչությունները (քացառությամբ ռազմական և ռազմա-նավատորմային հիմնարկների): Այդ հիմնարկությունների ղեկավարները՝ պետական քարտուղարները, նշանակվում էին կանցլերի կողմից և ենթարկվում էին նրան, իսկ ինքը՝ կանցլերը, պատասխանատու էր միայն կայսեր առաջ:

Միութենական խորհուրդը (բունդեսրատ) և խղրիդարանը (ռայխստագ) դարձան երկու կոլեգիալ մարմիններ գերմանական կայսրության իշխանության բարձրագույն մարմինների մեջ: Այդ մարմինները, ինչպես և կանցլերության ինստիտուտը, սկիզբ էին առել Հյուսիս-գերմանական միությունից:

Միութենական խորհուրդը կազմված էր կայսրության բոլոր հողերի ներկայացուցիչներից: Այն ղեկավարում էր Պրուսիայի ներկայացուցիչը:

1871թ. սահմանադրությամբ բունդեսրատին տրվել էին վերին պալատի իրավունքները: Նա ռայխստագի հետ համատեղ ընդունում էր կայսրության օրենքները: Ավելին, բունդեսրատն ուներ օրենսդրական նախաձեռնության իրավունք: Նրան տրվել էին նաև զգալի արտոնություններ գործադիր իշխանության ոլորտում: Վերին պալատը մասնակցություն ուներ և բարձաստիճան պաշտոնյաների նշանակման հարցում (կայսրական դատարանի հաշվիչ պալատի անդամների և այլն):

Բունդեսրատը կատարում էր նաև արքիտրի ֆունկցիաները: Նրա յուրաքանչյուր անդամ իրավունք ուներ առաջարկություններ անելու, իսկ նախագահը պարտավոր էր այդ առաջարկությունները դնելու քննարկման: Բունդեսրատի անդամներից ձևավորվում էին բանակի, ծովային, մաքսա-

յին և հարկային, առևտրի և փոխանակման, երկաթգծի, փոստի, հեռագրի, արդարադատության և հաշվիչ պալատի գործերով զբաղվող մշտական կոմիտեները (հոդ. 8):

Ոչ մեկը չէր կարող միաժամանակ լինել և՛ բունդեսրատի, և՛ ռայխստագի անդամ:

Գերմանական կայսրությունը ժամանակի ընթացքում դառնում է բացահայտ միատարր պետություն և այդ պայմաններում բունդեսրատի լիազորությունները սահմանափակվում են:

Ռայխստագը, սահմանադրության համաձայն, ձևավորվում էր հանրնդիհանուր, ուղղակի ընտրությունների հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ¹: Պատգամավորների ընդհանուր թիվը հասնում էր 382-ի:

Ռայխստագն օժտված էր օրենքների մշակման և ընդունման, միջազգային պայմանագրերին հավանություն տալու և մի շարք այլ իրավունքներով: Նրա ամենակարևոր իրավունքներից մեկը բյուջեի հաստատումն էր: Սակայն այստեղ էլ էական նշանակություն ունեցող հարցերը երբեմն լուծվում էին առանց նրա մասնակցության: Օրինակ՝ 1874 թ. ընդունվեց օրենք, որի համաձայն բանակը 7 տարի ֆինանսավորվելու էր առանց ռայխստագի համաձայնության:

Ռայխստագի լիազորությունները սահմանված էին երեք տարի ժամկետով: (Ավելացնենք, որ 1888թ. մարտի 19-ի օրենքով այդ ժամկետը սահմանվեց 5 տարի): Այդ ընթացքում ռայխստագի արձակումը թույլատրվում էր միայն կայսեր համաձայնությամբ և բունդեսրատի որոշմամբ:

Սահմանադրության 30-րդ հոդվածի համաձայն ռայխստագի անդամներն անձեռնմխելի էին: Նրանց կարող էին ձերբակալել միայն ռայխստագի համաձայնության դեպքում:

Կայսրության հիմնադիրները, և, մասնավորապես, նրա առաջին կանցլեր Օ. ֆոն Բիսմարկը, ամեն կերպ աշխատում էին խուսափել ռայխստագում «կուսակցական ոգու» ներկայությունից: Այդ մարմնում ստեղծված բազմաթիվ կոմիտեները և հանձնաժողովները պետք է փոխարինեին կուսակցական ֆրակցիաներին: Սակայն նրանց չհաջողվեց կանգնեցնել պատգամավորների կուսակցական բաժանման բնական ընթացքը, որը հատկապես ուժեղացավ XIX դ. վերջում:

Գերմանական ռայխստագը դարձավ XIX դ. վերջի - XX դ. սկզբի Եվրոպայի ամենավաղ քաղաքական ամբիոններից մեկը: Ռայխստագի նիստերը, ի տարբերություն բունդեսրատի, անցնում էին հրապարակավ և բոլոր ելույթները տպագրվում էին մամուլում:

¹ Конституция Германской империи 16 апреля 1871г., гл. 20, ст. 11 Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, т. 162:

Ընդհանուր առմամբ, գերմանական կայսրը ճնշում էր գործադրում բունդեսբատի և ուայխստագի վրա:

Քաղաքական վարչակարգի փոփոխությունները: Քաղաքական վարչակարգը, որպես պետության ձևի ամենադինամիկ բաղադրամասը, ավելի քան 50 տարիների ընթացքում ունեցավ մի շարք լուրջ փոփոխություններ:

Ակտիվ և հաջող պատերազմները, որոնք վարում էր Պրուսիան 70-ական թթ. սկզբին և այնուհետև Հյուսիս-գերմանական միությունը, նպաստում էին կայսրությունում միլիտարիստական գաղափարա-խոսության տարածմանը, պրուսական զինվորականության քաղաքական դերի և գեներտաբի ամրացմանը, (վերջինս կանցլերի հետ հավասար գրավեց առաջնակարգ տեղ պետական ապարատում):

Եվ՝ գեներտաբը, և՛ կանցլեր Բիսմարկը ներկայացնում էին պրուսական յունկերության շահերը, որոնք արտաքին քաղաքականության մեջ համընկնում էին ազգային բուրժուազիայի շահերի հետ, սակայն ներքին քաղաքականության հարցերում արդեն 70-ական թթ. երկու առաջատար դասերի շահերը սկսեցին զգալիորեն տարբերվել: Բուրժուազիային ճնշում էր կառավարությունը, նրա ներկայացուցիչները հաճախ գտնվում էին ուայխստագում: Այդ պայմաններում Բիսմարկը հետևողականորեն վարում էր բռնապարտիստական քաղաքականություն՝ նա ուայխստագը հակադրում էր բունդեսբատին, գեներտաբին հրահրում էր նրանց դեմ և ամենուրեք, պահպանելով պրուսական միահեծանությունը, ամրապնդում էր ոստիկանական ապարատը, որի օգնությամբ սահմանափակեց քաղաքական ազատությունը, հասարակական և նույնիսկ, կրոնական կազմակերպությունների գործունեությունը:

Սակայն 80-ական թթ. Բիսմարկի ռեժիմը կորցնում էր իր քաղաքական նշանակությունը:

90-ական թվականների սկզբին, Բիսմարկի պաշտոնաթողությունից հետո, Վիլհելմ II-ի կառավարման ժամանակաշրջանում սկսվեց ռեժիմի աստիճանական լիբերալիզացումը, որն արտահայտվում էր գերմանական սոցիալ-դեմոկրատիայի գործունեությամբ (այն է թերթերի և ամսագրերի հրապարակումը, ցույցերի և ժողովների անցկացումը և այլն):

Սոցիալ-դեմոկրատների գործունեությունն ակտիվացավ նաև ուայխստագում: Պետական ապարատում ի հայտ եկան նոր մարդիկ: Այժմ նրանք հիմնականում արտահայտում էին գերմանական մտնոպոլիստական կապիտալի շահերը:

Գերմանիայի մասնակցությունն առաջին համաշխարհային պատերազմին հանդիսացավ այն հզոր գործոնը, որը փոխեց նրա քաղաքակա-

նությունը:

Ռուսաստանին և այնուհետև Ֆրանսիային պատերազմ հայտարարելուց Գերմանիայում ձևավորվեց ռազմական դիկտատուրայի ռեժիմ, որն արտահայտում էր մոնոպոլիստական կապիտալի և յունկերության ամենաագրեսիվ շրջանների շահերը: Հրապարակվեց օրենք, որի համաձայն իշխանությունը տեղերում անցավ զինվորական հրամանատարներին:

Սկսեցին գործել ռազմա-դաշտային դատարանները:

1914 թ. օգոստոսին ռախստագն ընդունեց օրենք, որով կառավարությանը տրվեցին լայն լիազորություններ. ինչն արագացրեց պետական մոնոպոլիստական ձեռնարկությունների ստեղծումը, զրաված տարածքների օրինականացված կողպուտը:

Ռազմական դիկտատուրան հատկապես ուժեղացավ 1916 թ. օգոստոսին, երբ գենշտափի ղեկավար նշանակվեց այն ժամանակ բանակում հանրաճանաչ ֆելդմարշալ Հինդենբուրգը, իսկ նրա տեղակալ՝ գեներալ Լյուդեմիդորֆը: Ընդունվեց սահմանադրության մեջ փոփոխություն կատարելու մասին օրենքը, որով երկրի ղեկավարը զրկվում էր վճռորոշ լիազորություններից, իսկ կանցլերը, պետքարտուղարները և գենշտափը հսկում էին ռախստագի գործունեությունը:

Միաժամանակ, թագավորական կաթինետները հանվեցին թագավորի ենթակայությունից և փոխանցվեցին համապատասխան քարտուղարներին ու նախարարներին: Այդ փոփոխությունները հանգեցրին քաղաքական ռեժիմի լիբերալիզացմանը, սակայն չփրկեցին միապետությունը:

1914 թ. օգոստոսին Գերմանիան սանձազերծեց I համաշխարհային պատերազմը:

5. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

119
Քաղաքացիական օրենսգիրքը: XIX դ. վերջում մայրցամաքային իրավական համակարգը համալրվեց ևս մի խառն օրենսդրական ակտով, որը մեծ ազդեցություն թողեց շատ երկրների օրենսդրության վրա: Դա գերմանական քաղաքացիական օրենսգիրքն էր: Նշենք, որ Գերմանիայում, ավելի երկար ժամանակ, քան մյուս երկրներում, պահպանվեց իրավական մասնատվածությունը: 1871 թ. Գերմանիայի միավորումը չնպաստեց միասնական իրավական համակարգի ստեղծմանը: Դա բացատրվում է սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման առանձնահատկություններով: Առևտրական շրջանառության ցածր մակարդակը, Գերմանիայի առանձին մասերի միջև տնտեսական կապերի ցածր ինտենսիվությունը պատճառ հանդիսացան այն բանին, որ ոչ միայն յունկերությունը,

այլև բուրժուազիայի որոշ խմբեր ձգտում էին պահպանել հին օրենսդրությու-
նը: Գերմանական առանձին պետություններ, որոնք ձգտում էին
պահպանել իրենց ինքնավարությունը, նույնպես դեմ էին ընդհանուր գեր-
մանական իրավունքի ստեղծմանը: Դրա հետ մեկտեղ բուրժուազիայի
լայն շերտերը պետության համար միասնական և իր բովանդակությամբ
ժամանակակից օրենսդրության ստեղծման կարիք ունեին: Բուրժուա-
զիայի հետ մեկտեղ իրավաբանները ելույթ էին ունենում միասնական քա-
ղաքացիական օրենսգրքի ստեղծման համար: Այդ հարցի վերաբերյալ
ընդհանուր կարծիքի բացակայությունը բերեց նրան, որ օրենսգրքի ստեղ-
ծումը ձգձգվեց երկար տարիներ:

1873 թ. հրապարակվեց միասնական քաղաքացիական իրավունքի
մշակման բնագավառում կայսրության իրավասության հաստատման մա-
սին օրենքը, իսկ 1874 թ. բունդեսրատն օրենսգիրք կազմելու համար ստեղ-
ծեց հանձնաժողով: Այն բաղկացած էր դատական աստիճանավորներից
և իրավունքի տեսաբաններից: Նրա ստեղծած նախագիծը հրապարակ-
վեց 1887 թ.: Այն ենթարկվեց քննադատության և չենթարկվեց օրենսդրա-
կան քննարկման:

1890 թ. դեկտեմբերին ստեղծվեց նոր հանձնաժողով, որի կազմի մեջ
էին մտնում փաստաբաններ, կուսակցությունների ներկայացուցիչներ,
արդյունաբերողներ: Այդ հանձնաժողովն իր աշխատանքն ավարտեց
1895 թ.: Նախագիծը քննարկման ենթարկվեց ռախստագում և բունդես-
րատում: Նրանում կատարվեցին որոշ փոփոխություններ, որից հետո,
1896 թ. օգոստոսի 18-ին, այն հաստատվեց: Սակայն նոր օրենսգիրքն ու-
ժի մեջ մտավ 1900 թ. հունվարի մեկից, քանի որ Գերմանիայի կազմի մեջ
մտնող առանձին պետություններին ժամանակ էր տրվել իրենց օրենսդ-
րությունները համաձայնեցնել նոր օրենսգրքի հետ:

Գերմանական քաղաքացիական օրենսգիրքը հիմնականում հենվում
էր հռոմեական իրավունքի վրա: Միաժամանակ, այն պարունակում էր
գերմանական իրավունքին բնորոշ դրույթներ:

Օրենսգիրքը բաղկացած է 5 գրքերից: Առաջին գրքում ամրագրված
են բոլոր ինստիտուտներին վերաբերող ընդհանուր դրույթները: Երկրորդ
գիրքը նվիրված է պարտավորական հարաբերություններին, երրորդը՝ ի-
րային իրավունքին, չորրորդը՝ ընտանեկան իրավունքին, իսկ հինգերորդը՝
ժառանգական իրավունքին:

Օրենսգրքի տարբերակիչ գծերն են հանդիսանում իրավաբանական
ընդհանուր հասկացությունների բացակայությունը, նրա պարագրաֆների
մանրակրկիտ նկարագրական բնույթը, բազմաթիվ, հատուկ իրավաբա-
նական տերմինների օգտագործումը: Այն կազմված է 2385 պարագրաֆ-

ներից:

Օրենսգրքի ամենաբնորոշ գիծն այսպես կոչված «կաուչուկե» պարագրաֆների առկայությունն է, որոնք պարունակում են իրենց բովանդակությամբ բարոյական և ոչ թե իրավական բնույթ կրող այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «քարի կամք» և «քարի բարքեր», հասկացություններ:

Օրենսգիրքը լինելով առաջադիմական և կրելով բուրժուական բնույթ, այնուամենայնիվ, այն փոխզիջում էր բուրժուազիայի և յունկերության միջև, պաշտպանելով վերջինիս շահերը:

Քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտները: Ֆիզիկական անձանց (որպես իրավահարաբերության սուբյեկտ) իրավունակությունը հենվում է իրավահավասարության սկզբունքի վրա: Սակայն, հաշվի առնելով կանանց սահմանափակ իրավունակությունը, կարելի է ասել, որ այս երկրում էլ այդ սկզբունքը լիովին չի կիրառվել: Չափահաս էին համարվում 21 տարեկանից: 7-21 տարեկան անձանց համար օրենսգիրքը սահմանում էր սահմանափակ գործունակության տարբեր աստիճաններ: Գերմանական քաղաքացիական օրենսգիրքն աչքի էր ընկնում նրանով, որ այն իրավաբանական անձանց ճանաչում էր որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ: Իրավաբանական անձի ինստիտուտը կապիտալի կուտակման ձևակերպման համար հանդիսացավ հարմար ձև, որը լայն տարածում գտավ XIX դ. վերջում:

Գերմանիայում ստեղծվեցին իրավաբանական անձանց տարբեր տեսակներ: Այս իրավական ձևն իրենց գոյության համար օգտագործում էին և՛ քաղաքական կուսակցությունները, և՛ տարբեր հասարակական կազմակերպությունները:

Գերմանական քաղաքացիական օրենսգիրքը նշում է իրավաբանական անձանց երկու տեսակ՝ ֆերեյներ (ընկերությունները, միությունները) և հիմնարկություններ: Ֆերեյների տակ հասկացվում էին այն անձանց միությունները, որոնց կազմի մեջ մտնող անձինք կապված էին իրավունքներով և պարտականություններով: Այդ միությունները կարող էին լինել կամ տնտեսական (որոնց նպատակն էր եկամտո ստանալ), կամ ոչ տնտեսական (որոնք հետապնդում էին մշակութային, գիտական նպատակներ): Հիմնարկությունները կազմվում էին մասնավոր անձանց կամքով, որոնք որոշակի նպատակի հասնելու համար նշանակալի չափով ունեցվածք էին ներդնում: Միաժամանակ, կապիտալի կուտակման կարևորագույն իրավական ձևերը՝ բաժնետիրական ընկերությունները և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, չէին կարգավորվում քաղաքացիական օրենսգրքի նորմերով: Դրանց համար ստեղծվել էին ինքնուրույն

օրենքներ:

Օրենսգրքում չի սահմանված իրավաբանական անձանց իրավունակության բովանդակությունը: Ենթադրվում է, որ այն առաջանում է նրանց կազմակերպման փաստից: Այդպիսով, օրենսգիրքը ճանաչում է իրավաբանական անձանց բավականին լայն իրավունակությունը: Դրա հետ մեկտեղ, պետությունը պահպանում է իրավաբանական անձանց գործունեությունը հսկելու իրավունքը, և կարող է զրկել նրանց իրավունակությունից, եթե այդ գործունեությունը սպառնում է հասարակական շահերին:

Քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների թվում օրենսգիրքը նշում է նաև ոչ իրավունակ ընկերություններին: Դրանք այն միություններն էին, որոնք ունենալով իրավաբանական անձանց գծերը, չէին համապատասխանում նրանց բոլոր պահանջներին ու չէին ընդունվում որպես այդպիսին: Դրանք, որպես կանոն, տարբեր բանվորական միություններն էին, որոնց օրենսդիրը չէր կարող անտեսել, մի կողմից, և, մյուս կողմից՝ չէր կարող ընդունել բուրժուական միությունների հետ հավասար: Արդյունքում ստեղծվեց ոչ իրավունակ միության ինստիտուտը, որը գործում էր ընկերությունների պայմանագրերի կանոններով:

Իրային իրավունք: Իրային իրավունքի ինստիտուտն ավելի վառ է արտահայտում քաղաքացիական օրենսգրքի տոթյունը: Օրենսգիրքը բուրժուար իրերը բաժանում է անշարժ և շարժականի: Շարժական գույք էր համարվում այն ամենը, ինչը հողակտոր չէր և իր պատկանելությամբ կապված չէր հողի հետ: Օրենսգիրքը խստությամբ տարբերում է շարժական և անշարժ գույքի իրավական վիճակը: Այն առաջին քաղաքացիական օրենսգիրքն էր, որը պարունակում էր շարժական իրերի (հատկապես արժեթղթերի) սեփականության իրավունքի մասին բազմաթիվ դրույթներ:

Գերմանական քաղաքացիական օրենսգիրքը նշում է իրային իրավունքների մի ամբողջ շարք՝ սեփականության, տիրապետման, ուրիշների իրերի օգտագործման, ուրիշի իրից եկամուտների ստացման և այլ իրավունքներ:

Օրենսգրքում սեփականության իրավունքը լիարժեքորեն չի սահմանվում: Նրա բովանդակության մասին կարելի է ենթադրել 903 պարագրաֆից, որի համաձայն. «Իրի սեփականատերը դրա հետ կարող է վերաբերվել իր հայեցողությամբ և թույլ չտալ, որպեսզի ուրիշները ներագրեն նրա վրա»: Այդ ձևակերպումն իր բնույթով մոտ է ֆրանսիական իրավունքում սեփականության իրավունքի հասկացությանը:

Այլ կերպ ասած, օրենսգիրքը դնում է մասնավոր սեփականության իրավական հիմքը և պաշտպանում սեփականատիրոջ շահերը: Դրա հետ մեկտեղ օրենսգիրքը պարունակում է սեփականատիրոջ իրավունքների

սահմանափակումների մեծ թիվ, քան Նապոլեոնի օրենսգիրքը. ինչը համապատասխանում էր ժամանակի ոգուն: Շարժական իրերի սեփականության իրավունքի վերաբերյալ օրենսգիրքը չի պարունակում նշանակալից սահմանափակումներ: Այստեղ մեծ ուշադրություն է դարձվում անարժ գույքի սեփականության իրավունքի սահմանափակումների ձևերը:

Օրենսգիրքը ճանաչում է սեփականատիրոջ իրավունքները հողի, իրա ընդերքի և օդային տարածքի նկատմամբ: Սակայն, ի տարբերություն Նապոլեոնի օրենսգրքի, այստեղ սեփականատիրոջ իրավունքները սահմանափակվում են. օրինակ, եթե որևէ մեկը ցանկալի նպատակներով որոժողություն է կատարում (ներգործում է) սեփականատիրոջ հողի ընդերքում կամ օդային տարածքում, ապա վերջինս իրավունք չունի մերժել՝ անկախ այն բանից նա շահ ունի, թե ոչ՝:

Դրա հետ մեկտեղ սեփականատերը կարող էր պահանջել, որպեսզի արևան հողատարածքների վրա չկառուցվեն կամ չպահպանվեն այնպիսի կառույցներ, որոնց գոյությունը կամ օգտագործումը կունենա անբույսատրեյի հետևանք իր տարածքի վրա²: Սա վկայում է հողի սեփականատիրոջ քաղաքացիական պաշտպանության մասին:

Գերմանական յունկերության շահերը պաշտպանում են օրենսգրքի շարք հողվածներ, հատկապես այն հողվածները, որոնք որոշում են սեփականության իրավունքի անցման կարգը: Եթե խոսքը գնում էր շարժական գույքի մասին, ապա սեփականության իրավունքն առաջանում է իրի անձնական պահից: Անշարժ գույքի սեփականության իրավունքի ժառանգումը տեղի էր ունենում հրապարակայնորեն, հողային գրքի մեջ գրանցման ճանապարհով: Սա գերմանական քաղաքացիական օրենսգրքի ռաբբերակիչ գիծն է, որը վկայում է նրա ոչ միայն բուրժուական, այլև լավաժատիրական ուղղվածության մասին:

Պարտավորական իրավունք: Գերմանական քաղաքացիական օրենսգրքի համար, ի տարբերություն մյուս բուրժուական օրենսգրքերի, մտրոշ է պարտավորություններին վերաբերող ընդհանուր հասկացությունների սահմանումը:

~~Պարտավորության սահմանման համաձայն, պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջելու պարտավորությունների կարողությունը:~~

Օրենսգրքի ընդհանուր մասում առանձնացված են գործարքների մասին դրույթները, որոնք տարածվում են ինչպես միակողմանի գործարքների, այնպես էլ պայմանագրերի վրա:

Германское Гражданское Уложение, հոդ. 905, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 290-291: Նույնը, հոդ. 907:

Պայմանագրերը պարտավորական իրավահարաբերությունների առաջացման ամենատարածված ձևն են: Ի տարբերություն Նապոլեոնի օրենսգրքի, գերմանական օրենսգիրքը չի տալիս պայմանագրի սահմանումը: Սակայն, ելնելով 145 և 241 պարագրաֆների դրույթներից, կարելի է նշել, որ պայմանագիրը մի քանի անձանց միջև հաստատված իրավաբանական կապ է:

Պայմանագրային հարաբերությունները, ըստ օրենսգրքի կառուցված են պայմանագրի ազատության սկզբունքի վրա: Պայմանագրային պարտավորությունների սահմանման համար մասնավոր անձանց տալով մեծ ազատություն, օրենսգիրքը, այնուամենայնիվ, նախատեսում է որոշակի պայմաններ, որոնց խախտման դեպքում պայմանագիրը կհամարվի անվավեր:

Օրենսգիրքը պայմանագրեր կնքելու ժամանակ կարևոր պայման էր համարում կողմերի գործունակ լինելը: Նշենք, որ Գերմանիայում անգործունակ էին մինչև 7 տարեկան երեխաները: Պայմանագրի վավեր լինելու պարտադիր պայման էր կանքի արտահայտությունը: Այսինքն՝ պայմանագիրը կնքվել էր կողմերի կամքին, ցանկությանը համապատասխան, թե՞ արտաքին ուժի ազդեցության ներքո: Ելնելով դրանից օրենսդիրն անվավեր էր համարում խաբեության, բռնության, սպառնալիքի և մոլորության ազդեցության տակ կնքված պայմանագրերը:

Քաղաքացիական օրենսգրքում ամրագրված են պայմանագրերի տարբեր տեսակներ, որոնց թիվը հասնում է մոտավորապես քսանի: Առավել հայտնի էին առուծախի, վարձակալության, փոխանակության, փոխառության պայմանագրերը:

Օրենսգրքի համաձայն պարտավորությունները ծագում են ոչ միայն պայմանագրերից, այլ նաև դեյիկտներից (քաղաքացիական իրավախախտումներից): Նշենք, որ օրենսգրքում մեծ տեղ է հատկացված դեյիկտներին: Ընդհանուր կանոնների համաձայն պատասխանատվություն է կրում այն անձը, ով ճանաչվում է մեղավոր՝ վնաս պատճառելու մեջ: Օրենսգիրքն արգելում էր անձնական ոչ գույքային վնասը հատուցել գույքով: Առանձին դեպքերում միայն (դա նախատեսված էր օրենքով) մնանատիպ վնասները կարող էին հատուցվել դրամով:

Օրենսգիրքը պարտավորության հատուկ տեսակ է համարել այն պարտավորությունը, որը ծագում էր անհիմն հարստացման հետևանքով:

Ընտանեկան իրավունք: Օրենսգիրքը ճանաչում էր միայն մեկ օրինական ամուսնություն՝ քաղաքացիական ամուսնություն: Ամուսնական տարիքն էր համարվում կանանց համար՝ 16, տղամարդկանց համար 21 տարեկանը: Ամուսնության համար անհրաժեշտ էր նաև երկկողմանի համա-

ձայնություն: Անչափահասների ամուսնության ղեկարում պահանջվում էր ծնողների համաձայնությունը:

Արգելվում էր ազգակից և արյունակից բարեկամների ամուսնությունը: Ամուսնալուծված կանայք նորից կարող էին ամուսնանալ միայն ամուսնալուծվելուց 300 օր հետո: Ընդհանրապես, առանց ամուսնալուծության փաստի առկայության անձը չէր կարող երկրորդ անգամ ամուսնանալ:

Գերմանական օրենսդրությանը բնորոշ էր այն, որ ամուսնական անհավատարմության ղեկարում ամուսնալուծված ամուսնուն չէր թույլատրվում ամուսնանալ այն անձի հետ, ում հետ նա դավաճանել էր իր ամուսնուն, եթե պարզվեր, որ ամուսնալուծության համար հիմք է ծառայել այդ անհավատարմությունը:

Ամուսնությանը նախորդում էր պայմանագրի կնքումը, ըստ որի երկու կողմերը պարտավոր էին կատարել իրենց տված խոսքը և ամուսնանալ: Այդ պայմանագրի խախտումը մեղավորին պարտավորեցնում էր հատուցել ամուսնության կապակցությամբ մյուս կողմի կատարած ծախսերը և փոխհատուցել բարոյական վնասը:

Ամուսնալուծությունը թույլատրվում էր միայն օրենքով նախատեսված դեպքերում: Օրենսգիրքն ամուսնալուծության հիմք է համարում ամուսնական անհավատարմությունը և որոշ այլ «բարոյականությանը հակառոշ» զանցանքները, մյուս ամուսնու կյանքի դեմ ուղղված ոտնձգությունը, ամուսնական պարտավորությունների կոպիտ խախտումը, կամ «անագնիվ վարքը, որ խախտում է ամուսնական հարաբերությունները այնպես, որ անհնարին է դառնում մյուս ամուսնուց պահանջել ամուսնության շարունակությունը» և այլն: Ամուսինների անձնական փոխհարաբերություններում վճռորոշ դեր ունեն տղամարդը: Նա էր գլխավորում ընտանիքը: Ամուսնուն էր իրավունք վերապահված լուծելու համատեղ ամուսնական կյանքին վերաբերող բոլոր հարցերը, մասնավորապես, ընկույթյան վայրին վերաբերող հարցը: Կինը կարող էր չենթարկվել, եթե ամուսինը չարաշահե՞ր էր ամուսնուհե՞ն իրավունքը: Այսպիսով օրենսգիրքը չի հայտարարում ամուսնու իշխանությունը կնոջ անձի նկատմամբ՝ օժտելով ամուսնուն միայն ընդհանուր ընտանեկան հարցերի լուծման իրավունքով: Ամուսնացած կինը գործունակ էր, չնայած նրա գործունակությունը սահմանափակ է: Ամուսնացած կինը կարող է զբաղվել արհեստով կամ ունենալ մասնագիտական զբաղմունք, վարել տնտեսական գործունեություն, սակայն դրա համար պահանջվում էր ամուսնու համաձայնությունը:

Ամուսինների գույքային հարաբերությունները որոշվում են ամուսնական պայմանագրով: Եթե կողմերն իրենց ամուսնական պայմանագրով չեն հաստատել այլ կարգ, ապա օրինական է համարվում կառավարման և օգ-

տագործման համակարգը, կամ ամուսինների գույքի միացման համակարգը: Այդ համակարգը բնութագրվում է նրանով, որ պահպանվում է ամուսինների գույքի սեփականության իրավունքի բաժանվածությունը (բաժնային ընդհանուր սեփականություն). ամուսինն իրականացնում էր ընտանեկան ունեցվածքի միասնական կառավարում և օգտագործում, իսկ կինն ունեցվածքի նկատմամբ պահպանում էր ինքնուրույնություն:

Ծնողների և երեխաների միջև փոխհարաբերությունները կառուցվում են հոր կողմից ծնողական իշխանության իրականացման սկզբունքի վրա, եթե նա գրկված չէր դրանից: Մորը ծնողական իշխանությունն անցնում էր միայն հոր մահվանից հետո կամ նրան ծնողական իշխանությունից գրկելու հետևանքով, բայց այդ ժամանակ մոր կողքին կարող էր նշանակվել խորհրդատու, որը կհսկեր նրա գործողությունները: Ծնագական իշխանությունը շատ մեծ էր: Երեխաները կարող էին լինել ծնողների համար շահագործման օբյեկտ: Եթե ծնողները պահում էին երեխաներին, ապա վերջիններս պարտավոր էին աշխատել ծնողների տնտեսությունում իրենց ուժերի և կյանքում իրենց դիրքի համաձայն:

Արտասնտեսական կապերից ծնված երեխաները մոր և նրա բարեկամների նկատմամբ գրավում էին իրավական տեսակետից նույն դիրքը, ինչ օրինական երեխաները:

Պ Ժառանգական իրավունք: Օրենսգրքի համաձայն ժառանգումն իրականացվում էր ըստ օրենքի և ըստ կտակի: Ըստ օրենքի ժառանգումը տեղի էր ունենում կտակի բացակայության դեպքում: Այս դեպքում ժառանգներ են համարվում ժառանգատուի երեխաները, ծնողները, պապն ու տատը, եղբայրներն ու քույրերը և ընդհանրապես նրանք, ովքեր բարեկամական կապ ունեին ժառանգատուի հետ: Այս առումով էլ օրենսդիրը սահմանել էր տարբեր հերթի ժառանգների ցանկ, որի հիման վրա էլ ժառանգորդներն օգտվում էին ժառանգությունից: Առաջին հերթի ժառանգներ էին երեխաները, երկրորդ հերթի ժառանգները ծնողներն էին և նրանց վայրընթաց ժառանգները, երրորդ հերթի ժառանգները պապն ու տատն էին և նրանց վայրընթաց ժառանգները և այլն: Այսինքն՝ ցանկացած բարեկամ կարող էր լինել ժառանգորդ, եթե ապացուցեր իր արյունակցությունը ժառանգատուի հետ:

Կնոջ մահից հետո ամուսինն առաջին և երկրորդ հերթի ժառանգների հետ հանդես էր գալիս որպես ժառանգ: Այդպիսիներ չլինելու դեպքում ամուսինը ստանում էր ամբողջ ժառանգությունը: Օրենսդիրը թույլատրում էր կտակել 16 տարեկանից, բայց մինչ 21 տարեկան հասակն այն կատարվում էր հրապարակայնորեն: Սահմանելով ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը, օրենսդիրը, դրանով սահմանափակում էր կտակի ազա-

տությունը:

1897թ. Առևտրական օրենսգիրքը: Գերմանական քաղաքացիական օրենսգրքի ստեղծումը հանգեցրեց առևտրական օրենսգրքի վերանայման անհրաժեշտությանը: Այն գործում էր 1861 թվականից: Նոր գերմանական առևտրական օրենսգիրքը ընդունվեց 1897 թ. մայիսի 10-ին և սկսեց գործել 1900 թ. հունվարի մեկից:

Քանի որ գերմանական քաղաքացիական օրենսգիրքը պարունակում է գործարքների և առուծախի պայմանագրի մասին ընդհանուր կանոններ ու մի քանի այլ դրույթներ, առևտրական օրենսգիրքն ակնհայտորեն կորցնում էր իր ինքնուրույնությունը: Համդես գալով որպես քաղաքացիական օրենսգրքի լրացում, առևտրական օրենսգիրքը պարունակում է միայն հատուկ կանոններ՝ առևտրականների համար:

Առևտրական օրենսգիրքը բաղկացած է չորս գրքից: Առաջին գիրքը ներառում է առևտրական գործիչների, ֆիրմաների, առևտրական գրքերի մասին նորմեր: Երկրորդ գրքում խոսքը գնում է առևտրական ընկերությունների մասին: Այդ գրքի դրույթներն ունեն հատուկ նշանակություն, քանի որ կապիտալի կուտակման և կենտրոնացման պրոցեսները XIX դ. վերջում բերեցին բազմաթիվ միավորումների առաջացմանը: Օրենսգրքի երրորդ գիրքը պարունակում է կանոններ՝ առևտրական գործարքների, իսկ չորրորդը՝ ծովային իրավունքի մասին:

Ընհանուր առմամբ, օրենսգիրքը արդեն իր ստեղծման պահից չէր տարբերակվում և շատ դեպքերում արտաբերում էր հին, 1861 թ. համագերմանական օրենսգրքի դրույթները:

Հետագա տարիներին բազմաթիվ անգամ օրենսգրքի դրույթները փոփոխվեցին: Բացի դրանից, առևտրական իրավունքի վերաբերյալ ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնք մնացին օրենսգրքի սահմաններից դուրս:

1877 թ. հրապարակվեց քաղաքացիական դատավարության օրենսգիրքը՝ ամբողջ Գերմանիայի համար: Այն իր ծավալով բավականին մեծ էր. բաղկացած էր տաս գրքից (1048 պարագրաֆ):

Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրքը, ի տարբերություն Ֆրանսիականի, իր կառուցվածքով համեմատաբար ավելի հասարակ էր: Այն կողմերին տալիս էր բավականին լայն իրավունքներ՝ ապացույցներ ներկայացնելու և իրենց դատավարական իրավունքներն տնօրինելու բնագավառում: Դատարանը հանդես էր գալիս պասիվ դերում. այն միայն լսում և գնահատում էր կողմերի ներկայացրած նյութերը:

Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրքն իր դրական ներգործությունն ունեցավ նաև Շվեյցարական քաղաքացիական օրենսգրքի ձևավորման ու զարգացման վրա, որում ամրապնդվեց քաղաքացիական իրա-

վունքի նոր միտումների զարգացումը: Ուստի ավելորդ չենք համարում հենց այս գլխում հակիրճ գծերով տալ Շվեյցարական քաղաքացիական օրենսգրքի պատմության ընդհանուր բնութագիրը:

1907թ. Շվեյցարական քաղաքացիական օրենսգիրքը: Շվեյցարական քաղաքացիական օրենսգիրքը հանդիսացավ առաջին համադաշնային քաղաքացիական օրենսգիրքը: Այն բաղկացած է 4 գրքից, որոնցից առաջինը նվիրված է անձանց, երկրորդը՝ ընտանեկան իրավունքին, երրորդը՝ ժառանգական իրավունքին, իսկ չորրորդը՝ իրային իրավունքին: Այսպիսով, այս օրենսգիրքը, ի տարբերություն գերմանական քաղաքական օրենսգրքի, չունի ընդհանուր մաս: Այն իրեն բնորոշ շատ գծերով հիշեցնում էր Նապոլեոնի օրենսգիրքը:

Շվեյցարական քաղաքացիական օրենսգիրքը չունի պարտավորական իրավունքին նվիրված բաժին: Այն կարգավորվում էր 1881 թ. համադաշնային օրենքով: Այս պատճառով էլ, որպես օրենսգրքի լրացում, 1911 թ. ընդունվեց պարտավորության մասին օրենքը: Դրանով քաղաքացիական օրենսդրության համակարգումը ձեռք բերեց ավարտուն տեսք և ավելի հստակորեն արտացոլեց արդյունաբերական զարգացած կապիտալիզմի դարաշրջանին բնորոշ միտումները, քան Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրքը:

Այդ համակարգման նորամուծությունն այն էր, որ առևտրական իրավունքի հարցերը կարգավորվում էին պարտավորությունների մասին ընդհանուր օրենքով: Դա հանգեցրեց մայրցամաքային իրավական համակարգին բնորոշ մասնավոր իրավունքի երկակիության (դուալիզմի) վերացմանը:

Շվեյցարական օրենսգրքում, ավելի հստակ են շարադրված իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները, ինչը վկայում է բուրժուական իրավունքի համար այս կարևորագույն ինստիտուտի զարգացման մասին:

Օրենսգրքի 58 հոդվածի համաձայն իրավաբանական անձինք օրենքի սահմաններում ունեն որոշակի իրավունքներ և ստանձնում որոշակի պարտականություններ:

Իրավաբանական անձինք գործունակ են նրա ղեկավար մարմինների կազմավորման պահից:

Հետաքրքիր են օրենսգրքի այն հոդվածները, որոնք նախատեսում էին նոր սերվիտուտներ և հողի սեփականության համար սահմանափակումներ, ինչը կապված էր XIX դ. սկզբի կապիտալիզմի համար բնորոշ արդյունաբերական շինարարության, հաղորդակցումների անցկացման և այլնի հետ:

Համաձայն 691 հոդվածի, հողի սեփականատերը պետք է թույլատրի ջրի, էլեկտրական լարերի և գազի խողովակների անցկացումը՝ իրեն հասց-

րած վնասների նախնական փոխհատուցման պայմանով, եթե անցկացումն իր տարածքի օգտագործմամբ չի կարող կատարվել առանց ծախսումների:

Պարտավորությունների մասին օրենքը նույնպես նախատեսել էր պայմանագրային իրավունքի մի շարք նոր ինստիտուտներ՝ օրինակ, առուծախը, առուծախը տարածամկետային վճարումով, որոնք XXդ. սկզբին լայն տարածում գտան կասպիտալիստական առևտրում:

1871 թ. Գերմանական քրեական օրենսգիրքը: Գերմանիայի համար միասնական քրեական օրենսդրության մշակումը պայմանավորված էր բուրժուազիայի և յունկերության իշխանության ամրապնդումով:

Այդ նպատակով 1871 թ. մայիսին, որպես գերմանական կայսրության քրեական օրենսգիրք, ուժի մեջ մտավ 1870 թ. Հյուսիս-գերմանական միության քրեական օրենսգիրքը, որը տարբերվում էր համեմատաբար ավելի բարձր իրավաբանական տեխնիկայով և հարմարեցված էր Պրուսիայի կառավարող շրջանների պահպանողական քաղաքական հացքներին:

Քրեական օրենսգրքի կառուցվածքի և բովանդակության մեջ արտահայտվում էր Ֆրանսիայի քրեական օրենսգրքի ազդեցությունը, որը ժամանակին օրինակ հանդիսացավ 1851 թ. Պրուսիայի Քրեական օրենսգրքի համար: Օրենսգիրքը կազմված է երեք մասերից, որոնցից առաջին երկուսը մվիրված են քրեական իրավունքի հարցերին՝ հանցագործությունների սահմանազատման և զանցանքներին՝ նստրիկանական խախտումների, մահապարձին, հանցագործության մասնակցությանը, քրեական պատասխանատվությանը և այլն: Երրորդ մասը նվիրված է հանցագործությունների և պատիժների կոնկրետ տեսակներին և կատարում է օրենսգրքի հատուկ մասի դեր:

Օրենսգիրքն ամենադաժան միջոցներով պահպանում էր գերմանական կայսրության քաղաքական կարգը: Պետական ղավաճանություն էր դիտվում կայսրի սպանությունը, բռնության միջոցով կայսրության պետական կառուցվածքի, թագաժառանգության կարգի փոփոխումը: Այդ նպատակով միայն մի հրապարակային ելույթի կամ ստեղծագործության տարածման համար, մեղավորը պատժվում էր մինչև 10 տարի ազատազրկմամբ:

Ավելի դաժան պատիժներ էին նախատեսված այն անձանց համար, ովքեր հավաքվում էին ճանապարհի վրա, հրապարակում կամ փողոցում և չէին հեռանում պաշտոնյա անձի կամ «զինված ուժերի պետի» երեք զգուշացումներից հետո: Եթե վերջիններիս ցուցադրվում էր դիմադրություն, ապա մեղավորները պատժվում էին որպես խռովարարներ:

Մի շարք «կաուչուկե» նորմեր, որոնք Գերմանիայի ոստիկանական մարմինները օգտագործում էին աճող բանվորական շարժման ճնշման հա-

մար, ամրագրված էին օրենսգրքի հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործությունների բաժնում:

Օրենսգիրքը հանցագործություններից առավել վտանգավոր էր համարում պետության, կրոնի, հասարակական կարգ ու կանոնի և անձի կյանքի ու սեփականության դեմ ուղղված ռոմնոգությունները, որոնց դեպքերում ճախատեսվում էին ավելի խիստ ու դաժան պատիժներ:

Չնայած 1871թ. քրեական օրենսգրքի խիստ բնութիւն, այն, այնուհանդերձ, արտացոլեց իր ժամանակների որոշ լիբերալ միտումները, հատկապես մահապատժի վերացման հարցում:

Ըստ օրենսգրքի, մահապատիժը խաղաղ ժամանակ որպես պատժամիջոց նախատեսվում էր միայն երկու դեպքերում՝ պետության ղեկավարի և կանխամտածված սպանությունների դեպքերում:

Քրեական օրենսգիրքը ուներ հատուկ բաժին, որը վերաբերում էր ձեռնարկությունների սմանկացմանը:

Ոստիկանական խախտումների թվում օրենսգիրքը նշում է հակաօրինական արարքների շրջանակ՝ կնիքների պատրաստում, արտասահման մեկնելու կանոնների խախտում և այլն: Օրենսդիրը յուրաքանչյուր քաղաքացու պարտադրում էր աջակցել ոստիկանությանը:

Գերմանական քրեական օրենսգիրքը նախատեսում էր պատժի տարբեր տեսակներ (մահապատիժ, տաժանակիր աշխատանքներ, աքսոր, տուգանք, բանտարկություն և այլն), որոնք նշանակելիս դատարանը հաշվի էր առնում հանցագործության բնույթը և հանցագործի ուժ լինելը:

XIX դ. վերջում, XX դ. սկզբում գերմանական քրեական օրենսգիրքը որոշակի ազդեցություն թողեց մի շարք երկրների քրեական իրավունքի վրա:

1871թ. քրեական օրենսգիրքը լրացվեց 1877 թ. քրեական դատավարության օրենսգրքով: Դատավարությունը, ըստ այդ օրենսգրքի, իրականացվում էր մրցակցության, դատախազից դատավորի անկախության, դատական քննության ընթացքում պաշտպանի մասնակցության սկզբունքներով:

Նախաքննության փուլն անցնելուց հետո գործը դատախազն իր եզրակացությամբ ուղարկում էր դատարան, որն էլ կայացնում էր համապատասխան որոշում:

Մեղադրողը և ամբաստանյալը (նաև նրա պաշտպանը) ունեին հավասար դատավարական իրավունքներ: Դատարանում գործում էր ապացույցների ազատ գնահատման սկզբունքը:

Աշխատանքային և սոցիալական օրենսդրությունը: Գերմանիայի աշխատավոր զանգվածը երկար ժամանակ համառ պայքար էր մղում իր իրավունքների (միավորման, գործադուլների) ճանաչման և օրինական շահերի պաշտպանության համար:

1869թ. Բիսմարկը, որը միշտ ձգտում էր աշխատավորների պայքարին տալ տնտեսական ուղղվածություն, գերմանական արդյունաբերական կա-

նոնադրությունը համալրեց լրացուցիչ նորմով, ըստ որի նախկինում գոյություն ունեցող բանվորների միությունների արգելումը վերացվեց:

Այս միությունների գլխավոր նպատակներից էին աշխատավորների աշխատանքային պայմանների բարելավումը և աշխատավարձի բարձրացումը:

~~Կամունադրությունը բանվորական միություններից ազատորեն դուրս գալու իրավունք էր վերապահում բոլորին: Աշխատավորներն իրենց պայքարի շնորհիվ հասան որոշակի նվաճումների, որոնք իրենց արտահայտությունը գտան աշխատանքային օրենսդրության մեջ:~~

Գերմանիայում աշխատանքի մասին օրենսդրական նորմերը սկզբնական շրջանում ստեղծվեցին առանձին պետությունների իրավունքի մեջ: Համագերմանական օրենսդրությունը 1891-1909 թթ. պրոգնեց հանքերում կանանց աշխատանքը, սահմանեց ծննդաբերությունից հետո չորս շաբաթ նւնադրությունը արձակուրդ, նախատեսեց սկզբում 11, հետագայում 10 ժամվա տևողությանը աշխատանքային օր (10 հոգուց ավելի աշխատողներ ունեցող ձեռնարկություններում): 1891 թ. արգելվեց արդյունաբերական արտադրության մեջ օգտագործել մինչև 13 տարեկան երեխաների աշխատանքը:

XIX դ. վերջում Գերմանիայում ընդունվեցին օրենքներ մասնավոր ապահովագրության մասին: Այսպես, 1883 թ. ընդունվեց «Հիվանդությունների դեպքում բանվորների ապահովագրման մասին» օրենքը, ըստ որի պարտադիր ապահովագրման էին ենթարկվում այն բանվորներն ու ծառայողները, որոնց աշխատանքը չէր կրում ժամանակավոր բնույթ, իսկ աշխատանքային պայմանագիրը կնքված էր մեկ շաբաթից ավել ժամանակով¹: 1884թ. օրենքով դժբախտ դեպքերում ապահովագրված էին համարվում այն աշխատողները, որոնց տարեկան աշխատավարձը չէր գերազանցում 2000 մարկին²:

Անշուշտ, օրենսդրական այսպիսի վերապահումների օգնությամբ Գերմանիայի կառավարող շրջանները ձգտում էին ուժեղացնել իրենց ազդեցությունն աշխատավոր զանգվածի վրա՝ հեռու պահել նրան քաղաքական պայքարից:

Գրա վառ վկայությամբ էր նաև սահմանված չնչին նպաստների առկայությունը: Ապահովագրական հիմնադրամների ստեղծման մի շարք դեպքերում (ծերության և հաշմանդամության համար) ապահովագրական մուծումներ կատարելու պարտականությունը դրված էր ոչ միայն պետության և ձեռնարկատերերի, այլև աշխատավորների վրա: Ծերության կեն-

¹ Закон о страховании рабочих в случае болезни 15 июня 1883., հոդ. 1, տն՝ Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 275:

² Закон о страховании при несчастных случаях 6 июля 1884г. հոդ. 1, տն՝ Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 278:

սաթռչակ կարող էր ստանալ այն անձը, ով 30 տարի մուծել էր ապահովագրական վճարները և դարձել 70 տարեկան¹:

Ընդհանուր առմամբ, աշխատանքի մասին օրենսդրությունը (ինչպես և ամբողջ իրավական համակարգը) XIX դ. ընթացքում և XX դ. սկզբում փոփոխվող հասարակական պայմանների ազդեցության տակ կրեց նշանակալից փոփոխություններ և ձեռք բերեց նոր սոցիալական գծեր:

¹ Закон относительно страхования на случай инвалидности и старости от 22 июня 1889г., in: в Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 280:

ԲԱԺԻՆ 6

ՆՈՐ ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 19

122
ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

45. 1. ԱՄՆ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ
ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգները համարվում են աշխարհի ամենահզոր պետություններից մեկը:

Մինչև եվրոպացիների կողմից Ամերիկայի գաղութացումը, այնտեղ բնակվում էին հիմնականում հնդկացիները և էսկիմոսները, որոնց մոտ տվյալ ժամանակաշրջանում իշխող էին դեռևս նախնադարյան կարգերը: Նրանք զբաղվում էին որսորդությամբ, ձկնորսությամբ և բանջարաբուծությամբ:

Ք. Կոլումբոսի հայտնագործությունից հետո (1492 թ.) XVI դարից սկսվեց եվրոպացիների կողմից Ամերիկայի գաղութացման պրոցեսը: Գնադուրները զլխավորապես պատկանում էին Անգլիային: Այստեղ բաժին ունեին նաև Իսպանիան, Հոլանդիան և Շվեդիան:

Ատլանտյան օվկիանոսի ափերից գաղութարարները կարճ ժամանակում ներխուժում են մայրցամաքի խորքը, ճնշում տեղի բնակիչներին, բռնությամբ ու խաբեությամբ խլում նրանց հողերը:

Առաջին անգամ անգլիացիների կողմից բնակություն հաստատվեց 1607 թ. ներկայիս Վերջինիա նահանգի տարածքում:

Նոր գաղութը կարիք էր զգում աշխատուժի և քանի որ հնդկացիներին ստրկացնել չհաջողվեց, XVIIդ. սկզբից սկսվեց աֆրիկյան նեգրերի ներգաղթը, որոնց զլխավորապես աշխատեցնում էին հարավի սլանտացիա-

ներում:

Այսպիսով, XVIII դ. կեսերին Հյուսիսային Ամերիկայի հարավում ձևավորվեցին 13 անգլիական գաղութներ՝ Մասաչուսեթս, Կոննեկտիկուտ, Նյու-Հեմփշիր, Ռոդ-Այլենդ, Նյու-Յորք, Փենսիլվանիա, Նյու-Ջերսի, Դելավեր, Վերջինիա, Մերիլենդ, Հյուսիսային Կարոլինա, Հարավային Կարոլինա, Ջորջիա:

Գաղութացված Ամերիկայի հասարակական կյանքում տիրում էին վաղկապիտալիստական հարաբերությունները, որոնք ներմուծվել էին Եվրոպայից և զարգանում էին նոր պայմաններում:

XVIII դ. կեսերին, գերագույն իշխանության պատկանելության առումով, գաղութները բաժանվում էին երեք խմբի՝ ա) թագավորական, որտեղ իշխանությունը գտնվում էր թագավորական պաշտոնյաների, բ) մասնավոր սեփականատիրական, որոնք համարվում էին առանձին անձանց սեփականություն, գ) գաղութներ, որոնք գործում էին թագավորական հրովարտակների հիման վրա՝ ինքնակառավարման սկզբունքով:

Գաղութը կառավարում էր նահանգապետը, որը համապատասխանաբար նշանակվում էր թագավորի կամ գաղութատիրոջ կողմից, կամ էլ ընտրվում էր բնակչության կողմից (ընտրական իրավունքից օգտվում էր բնակչության 2-10 %-ը):

Բոլոր գաղութներում կային ներկայացուցչական մարմիններ, որոնք իրավունք ունեին հրատարակելու օրենքներ և սահմանելու հարկեր:

Առևտրի, արդյունաբերության և հողագործության զարգացումը գաղութներում միշտ բախվում էր Անգլիայի տնտեսական քաղաքականության հետ: Բայց գաղութների տնտեսական կյանքը սահմանափակող այդ կաշկանդիչ օրենքները փաստորեն քիչ էին պահպանվում և Ամերիկայում ծաղկում էր մաքսանենգությունն ու նվաճված հողերի շահագործումը:

XVII դ. 60-ական թթ. անգլիական կառավարությունն իր գաղութների համար ընդունեց մի շարք օրենքներ, որոնց իրագործումն խիստ վերահսկվում էր: Այսպես, 1763 թ. Վեորդի III-ը հրաման արձակեց, ըստ որի գաղութարարներին արգելվում էր բժաշկել Ալյեգոնյան լեռների հետևում և արևմուտքում գալթել հողեր: Այս օրենքը սրեց հողերի համար դասակարգային պայքարը՝ հզոր հողատերերի և ազատ ֆերմերների միջև: Անգլիայի այս քաղաքականությունը բողոքի հզոր ալիք առաջացրեց գաղութային բնակչության մեջ: Բողոքը զագաթնակետին հասցրեց թեյի վաճառման մասին ընդունված օրենքը (1773 թ.), որը նշանակում էր գաղութ բերած թեյի համար սահմանել նոր տուրք: Ի պատասխան դրա Բոստոնի այլալված բնակիչների մի խումբ 1773 թ. դեկտեմբերի 16-ին ծով նետեց անգլիական երեք նավերով այստեղ բերված թեյը: Անգլիան իր հերթին փակեց Բոստոն-

նյան նավահանգիստը, արգելեց Բոստոնին և ամբողջ Մասաչուսեթս գաղութին ունենալ իրենց ներկայացուցչական մարմինները:

Գաղութների համերաշխության անը հանգեցրեց 1774 թ. սեպտեմբերի 5-ին Ֆիլադելֆիայում առաջին մայրցամաքային կոնգրեսի գումարմանը: Այն հաստատեց «Իրավունքների հռչակագիրը», որում արտահայտված էր Մետրոպոլիայի մաքսային և հարկային քաղաքականության դեմ ուղղված բողոքը: Կոնգրեսը որոշեց դադարեցնել առևտուրն Անգլիայի հետ: Այն սկիզբ դրեց բուրբ գաղութների համար ներկայացուցչական մարմինների ստեղծմանը: Կոնգրեսի որոշմամբ թագավորին ռեզոլուցիոն խնդրագիր հպատակության մասին: Բուրժուական վերմախտվել-խաշոր ֆերմերները հույս ունեին փոխհամաձայնության միջոցով խուսափանել զինված ընդհարումից:

Դատապարտվեց գաղութների կառավարման համակարգը:

Անգլիական կառավարությունն ի պատասխան այս ամենի, դիմեց ռազմական գործողությունների:

Այսօրհանարար գաղութային ապարատը սկսեց երերալ: Տեղի ունեցան բախումներ անգլիական բանակի հետ: 1775թ. ապրիլի 19-ին անգլիական բանակի դեմ գաղութների հեթսական պայքարը սկիզբ դրեց Անկախության պատերազմին:

1775թ. մայիսի 10-ին Ֆիլադելֆիայում գումարվեց երկրորդ Մայրցամաքային կոնգրեսը, որը որոշում ընդունեց ամերիկյան բանակի ստեղծման մասին: Բանակի գլխավոր հրամանատար նշանակվեց Ջ.Վաշինգտոնը: Սկսվեց անկախության համար պատերազմը (1775-1783թթ.):

Պատերազմի ընթացքում պետք է լուծվեին չորս կարևորագույն խնդիրներ. 1) հասնել ստրկության վերացմանը, 2) թույլատրել բնակչություն հաստատել Ալլեգոնյան լեռների շրջակայքում, 3) ազատություն տալ անևտրա-արդյունաբերական բուրժուազիայի ձեռնարկատիրական գործունեությանը, 4) հասնել բնակիչների քաղաքական իրավունքների ճանաչմանը և ինքնավարության ձեռք բերմանը:

Կոնգրեսն արտակարգ պայմաններում խորհրդակցական մարմնից վերածվեց գաղութների ներկայացուցիչներից կազմված լիազոր ժողովի, որը կատարում էր հեղափոխական ֆեդերալ կառավարության ֆունկցիաներ: Կոնգրեսի որոշումների մեծ մասն անորոշ բնույթ ուներ, քանի որ բուրժուազիայի և ազնվականության ներկայացուցիչները վախենում էին ժողովրդից: Սակայն իրադրությունն հայրենասերներին ստիպում էր գործել առավել ակտիվ և պաշտպանել ընդհանուրի շահերը: Յուրաքանչյուր գաղութ իրեն հայտարարեց անկախ նահանգ-հանրապետություն:

1776թ. հուլիսի 4-ին Կոնգրեսը հռչակեց միավորված գաղութների ան-

կախությունն Անգլիայից: Նոր պետությունն անվանվեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ և հուլիսի 4-ը հայտարարվեց ազգային օր: Այս կարևորագույն դրույթն իր տեղը գտավ մեծ նշանակություն ունեցող փաստաթղթում՝ «Անկախության հռչակագրում», որն ընդունվեց Կոնգրեսի կողմից 1776 թ. հուլիսի 4-ին:

«Անկախության հռչակագրի» հիմնական հեղինակը Թ. Ջեֆֆերսոնն էր: Հռչակագիրն ազդարարեց մարդկանց հավասարության և իրավունքների անխախտելիության սկզբունքները: Այդ իրավունքներից ամենակարևորներն էին կյանքի, ազատության և երջանկության ձգտման իրավունքներն, որոնց «ապահովման համար մարդկանց միջից ստեղծվում է կառավարություն», որը պարտավոր էր արդարացի կարգով պաշտպանելու բոլորի իրավունքներն: Եթե կառավարությունը չէր պաշտպանելու ժողովրդին, ապա վերջինս իրավունք ուներ տապալելու այդպիսի կառավարությունը և ստեղծելու նորը¹: Դրանով Հռչակագիրն ամրագրեց ժողովրդի ինքնիշխանության սկզբունքը:

Հռչակագրում թվարկված էին անգլիական կառավարության չարաչափումները, որոնք էլ գաղութներին հիմք էին տալիս խզել հարաբերություններն Անգլիայի հետ:

Հռչակագիրն ամրագրել է նաև այնպիսի դրույթներ, որոնք վերաբերում են գաղութների և մայր երկրների միջև և քաղաքական կապերի խզմանը և յուրաքանչյուր գաղութի ինքնուրույնության ճանաչմանը:

Հռչակագիրն, ընդհանուր առմամբ, առաջադիմական երևույթ էր Ամերիկայի պատմության մեջ: Այն առաջին քայլն արեց իշխանությունների տարանջատման սկզբունքի ներդրման գործում: Տեղին է հիշատակել, որ «XVIII դ. վերջին քառորդում աշխարհում չկար մի պետություն, որ ղեկավարվեր օրենսդիր, գործադիր և դատական իշխանության տարանջատման սկզբունքով»:

Այնուհանդերձ, Հռչակագրի բովանդակությունը բուրժուական սահմանափակ բնույթ էր կրում: Այստեղ չի խոսվում Ամերիկայի բուն բնակչության՝ հնդկացիների, ստրկավաճառության վերացման, ռասիզմի, կանանց իրավունքների և այլնի մասին: րված լինելով ազատագրական պայքարի ժամանակաշրջանում, Հռչակագիրը չէր արժարժում մասնավոր սեփականության՝ որպես մշտական և անօտարերիկ իրավունքի, հարցը:

Անկախության համար պատերազմը հաջողություն բերեց ամերիկյան բանակին, որին, 1777թ. հաղթանակից հետո միացան նաև Ֆրանսիայի, Հոլանդիայի և Իսպանիայի բանակները: Միահամուռ ուժերով նրանք

¹Декларация Независимости 4 июля 1776г., տե՛ս Международные акты о правах человека, М., 2000, էջ 21-22:

1781թ. Յորքթաունի մոտ պարտության մատնեցին անգլիացիներին: Դրանից հետո 1783 թ. անգլիացիները հարկադրված էին կնքելու հաշտության պայմանագիր, որով ճանաչվեց ԱՄՆ-ի լիակատար անկախությունը:

Կոնֆեդերացիայի (համադաշնության) հողվածները: Անկախության հռչակագրի ընդունումից հետո Կոնգրեսը ձեռնամուխ եղավ նոր պատմության հիմնական օրենքի՝ Կոնֆեդերացիայի հողվածների, քննարկմանը, որոնք սահմանեցին հենց Կոնգրեսի՝ իբրև միութենական մարմնի լիազորությունները՝ նահանգների ինքնիշխանությունը պահպանելու պարագայում¹:

«Կոնֆեդերացիայի հողվածները» վավերացվեցին 1777 թ. նոյեմբերի 15-ին և ուժի մեջ մտան միայն 1781 թ. մարտի 1-ից՝ բոլոր նահանգների կողմից հաստատվելուց հետո: Էյս փաստաթղթի առաջին հոդվածը հռչակեց. «Այս կոնֆեդերացիան պետք է կրի «Ամերիկայի Միացյալ Նահանգներ» անվանումը» կարևորագույն դրույթը:

Յուրաքանչյուր նահանգ, ըստ «Հողվածների» պահպանում էր իր ինքնուրույնությունը, ազատությունն ու անկախությունը՝ ինչպես ներքին, այնպես արտաքին բնագավառում: Արտաքին թշտամբներից պաշտպանվելու, մեկը մյուսին փոխադարձաբար օգնելու, ազատությունը պահպանելու նպատակով ստեղծվում էր բարեկամական ամուր դաշինք համադաշնության անդամ նահանգների միջև²: Նահանգներն իրավունք ունեին հարկեր սահմանել իրենց տարածքներում: Ընդհանուր գործերի կառավարման համար Միացյալ Նահանգները հիմնադրեցին Կոնգրես, որը, համաձայն «Հողվածների», ընտրվում էր Նահանգների օրենսդրական մարմինների կողմից ամենամյա ընտրությունների հիման վրա: Յուրաքանչյուր նահանգից ընտրվում էին 2-7 պատգամավոր:

Կոնգրեսին իրավունք էր վերապահված կնքելու միջազգային պայմանագրեր, լուծել պատերազմի և խաղաղության հարցերը, տնօրինել երկրի նական միջոցներին, հաստատել բանակի ղեկավար կազմի հիմնական մասի նշանակումը: Նրան էր հանձնարարված լուծել Նահանգների միջև առաջացած կոնֆլիկտը:

Նմանատիպ հարցերի լուծման համար կայացվելիք որոշումները կարող էին օրենքի ուժ ստանալ միայն այն դեպքում, երբ այն հավանության էր արժանանում 9-ից ոչ պակաս նահանգների կողմից: Նշված իրավասու-

¹Ինչպատրյան Հ., Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությունը, Երևան, 1991, էջ 18:

²Статьи Конфедерации 1781-1788г., հոդ. 3, տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 171:

թյունների շրջանակներից դուրս Կոնգրեսն իրավունք չունի միջամտելու նահանգների գործերին:

Կոնգրեսի նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում, որը չէր կարող ճամսից ավել լինել, նրա մի շարք լիազորություններն իրականացնում էր նահանգների Կոմիտեն (այն կազմված էր յուրաքանչյուր նահանգից մեկական նշանակված պատգամավորներից): Կոնգրեսի որոշումները պետք է կատարեին առանձին նահանգների գործադիր իշխանությունները:

Նշենք, որ «Հոդվածների» հիման վրա ստեղծված համակարգն ամբողջությամբ վերցրած, կենսունակ չեղավ, սակայն «նրա առանձին տարրեր հիմք ծառայեցին ամերիկյան պետականության ձևավորման համար»¹:

Կոնֆեդերացիան իր թույլ կառավարմամբ չէր համապատասխանում կապիտալիզմի զարգացման պահանջներին, որը, ըստ էության, կենտրոնացված իշխանության կարիք էր զգում: Այնպիսի իշխանության, որն ընդունակ կլիներ հաղթահարելու նահանգների քաղաքական և տնտեսական մեկուսացվածությունը, իրականացնելու նահանգների միջև չընդհատվող առևտուրը և այլն: Այդպիսի կառավարությունն անհրաժեշտ էր նաև նորաստեղծ պետության հեղինակության բարձրացման համար: Նորածին հանրապետության համար խիստ դժվար ժամանակներ էին: Սրվել էր դասակարգային պայքարը, անկում էր ապրում ֆինանսա-տնտեսական կյանքը, աճում էր պետական և մասնավոր պարտքը: Պատերազմի ավարտից հետո, երբ իշխանությունն անցավ մանուֆակտուրիստների, հյուսիսային նահանգների վաճառականների և հարավային նահանգների ստրկատեր-ալանտատորների շահերն արտահայտող քաղաքական խմբավորումների ձեռքը, ավելի ծանրացավ ժողովրդական լայն զանգվածների վիճակը: Արդյունքը եղավ այն, որ մի շարք նահանգներում բռնկվեցին ապստամբություններ, որոնցից հատկանշական է Մասաչուսեթսի (1786-87 թթ.) ապստամբությունը՝ անկախության պատերազմի վետերան Դ. Շեյսի գլխավորությամբ:

Չնայած, այս և մյուս ապստամբությունները մեծ դժվարությամբ ճնշվեցին, բայց, այնուհանդերձ, ներգործություն ունեցան ԱՄՆ-ի ապագա պետական կառուցվածքի ձևավորման վրա: Այն մեկ անգամ ևս ապացուցեց կենտրոնական իշխանության անհրաժեշտությունը:

¹Խաչատրյան Հ., Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությունը, Երևան, 1991, էջ 19:

123

2. ԱՄՆ-ի 1787 թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՍԻՆ ԿՈՆԴԱԿԸ (ԲԻԼԸ)

1787 թ. մայիսին Կոնգրեսի որոշմամբ, Ֆիլադելֆիայում գումարվեց Սահմանադրական կոնվենտ, որի առջև խնդիր էր դրված վերանայել Կոնֆեդերացիայի հոդվածները: Կոնվենտին մասնակցում էին 55 պատգամավորներ՝ 12 նահանգներից (Ռոդ Այլենդ նահանգը հրաժարվել էր Կոնվենտին մասնակցելուց): Դեթե բոլոր պատգամավորներն ունեին պետա-իրավական աշխատանքի կամ ձեռնարկատիրական գործունեության մեծ փորձ: Նրանց մեջ աչքի ընկան այնպիսի իրավաբաններ ու քաղաքական գործիչներ, ինչպիսիք էին Ջ. Վաշինգտոնը, Ա. Համիլթոնը, Բ. Ֆրանկլինը, Ջ. Մեդիսոնը, Է. Ռենդոլֆը, Ջ. Վիլսոնը և ուրիշները: Կոնվենտի մասնակիցներին անվանեցին «հիմնադիր հայրեր»:

Նշենք, որ Կոնվենտի կազմը սոցիալական առումով միատարր էր, սակայն դա չկարողացավ արգելք հանդիսանալ տարածայնություններին ու վիճաբանություններին, որոնք առաջանում էին այս կամ այն կարևոր հարցի քննարկման կապակցությամբ:

ԱՄՆ-ի սահմանադրությունը մշակվել է Կոնվենտի փակ նիստերում, որոնք գումարվել են Ֆիլադելֆիայում՝ 1787 թ. մայիսի 14-ից սեպտեմբերի 17-ը: Նրա մշակմանը ու հաստատմանը ժողովուրդը չի մասնակցել: Կոնվենտը 1787 թ. սեպտեմբերի 17-ին ընդունեց ԱՄՆ-ի սահմանադրությունը, որն ուժի մեջ մտավ 1789 թ. սեպտեմբերի 3-ին՝ նահանգների 3/4 -ի համաձայնությունից հետո: Այս կարևորագույն և բարձրագույն իրավաբանական ուժով օժտված փաստաթղթի հիմքում ընկած է իշխանությունների տարաբաժանման սկզբունքը (օրենսդիր, գործադիր և դատական):

ԱՄՆ-ի սահմանադրությունը բաղկացած է երեք մասերից. 1) նախաբանից, 2) յոթ հոդվածներից (որոնք իրենց հերթին կազմված են բաժիններից), 3) 17 ուղղումներից (լրացումներից: 1919-1971 թթ. այդ լրացումների թիվն ավելացավ 28-ով):

Սահմանադրության նախաբանը լինելով շատ համառոտ, ըստ էության, հռչակում էր սահմանադրության ընդունման պատճառներն ու նպատակները: Այստեղ պարզ ամրագրված էր. «Մենք՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ժողովուրդս, նպատակ ունենալով ստեղծել առավել կառայրյալ դաշինք, հաստատել արդարադատություն, ապահովել երկրի ներքին անդորրը, կազմակերպել համատեղ պաշտպանությունը, նպաստել ընդհանուր բարեկեցությանը և ապահովել մեր և հաջորդ սերունդների ազատությունը, ստեղծում և գործողության մեջ ենք դնում Ամերիկայի Միացյալ Նա

հանգձների սույն սահմանադրությունը»¹:

Օրենսդիր իշխանությունն ԱՄՆ-ում պատկանում էր Կոնգրեսին, որը բաղկացած է երկու պալատից՝ ներկայացուցչական սպաքստից (ստորին պալատ) և սենատից (վերին պալատ): Պառլամենտի երկպալատ կառուցվածքն արտացոլում էր պետության ֆեդերալ կարգը:

Ներկայացուցիչների պալատը, ըստ սահմանադրության, կազմվում էր յուրաքանչյուր նահանգի բնակչության կողմի ընտրված անդամներից: Նրանք ընտրվում էին երկու տարին մեկ անգամ: Որոշակի պայմանների առկայության դեպքում միայն անձը կարող էր ընտրվել ստորին պալատի ներկայացուցիչ: Այդ պայմաններն էին. 1) պետք է լրացած լիներ անձի 25 տարին, 2) նա պետք է առնվազը յոթ տարի շարունակ հանդիսանար ԱՄՆ-ի քաղաքացի, 3) ընտրությամբ պահին պետք է լիներ սվյալ նահանգի բնակիչ:

Ներկայացուցիչների պալատն ընտրում էր իր խոսնակին և այլ պաշտոնատար անձանց, և միայն նրան էր բացառիկ իրավունք վերապահվում իմփիչմենք հարուցելու²:

Սենատի կազմի մեջ մտնում էին 6 տարի ժամանակով ընտրված սենատորներ: Յուրաքանչյուր նահանգից ընտրվում էին երկուական սենատորներ (ընտրվում էին համապատասխան նահանգների օրենսդիր ժողովների կողմից, իսկ 1913 թ. XVII-լրացումով, այդ ընտրության իրավունքը տրվեց նահանգի բնակչությանը): «Սենատոր չէր կարող դառնալ այն անձը, որի 30 տարին չէր լրացել, ով առնվազն ինը տարի շարունակ չէր հանդիսանում Միացյալ Նահանգների քաղաքացի, ով ընտրությունների պահին չէր հանդիսանում այն նահանգի բնակիչ, որտեղ նա պետք է ընտրվեր»:

ԱՄՆ-ի փոխնախագահն ի պաշտոնն համարվում էր սենատի նախագահը: Սենատը ընտրում էր նաև մյուս պաշտոնատար անձանց, ինչպես նաև նախագահ, որը փոխարինում էր փոխնախագահին (փոխպրեզիդենտին)՝ նրա բացակայության ժամանակ: Սենատին էր պատկանում իմփիչմենքի կարգով դատելու բացառիկ իրավունքը: Այդ նպատակով գումարվող միտտի ժամանակ կատարվում էր սենատորների երդման կամ հանդիսավոր խոստման արարողությունը: Իմփիչմենքի դեպքում դատավճիռը սահմանափակվում էր պաշտոնից հեռացնելու և ԱՄՆ-ի ծառայության մեջ որևէ պատվավոր ու պատասխանատու և վճարովի պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելով: Կոնգրեսը հավաքվում էր առնվազն տարին մեկ անգամ:

¹ Конституция Соединенных Штатов, 17 сентября 1787г., տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 178:

² Նույնը, հոդ. 1:

Սահմանադրության առաջին հոդվածի 6-րդ բաժնում ամրագրված դրույթի համաձայն սենատորը կամ ներկայացուցիչն իրենց լիազորությունների ժամկետում իրավունք չունենին զբաղեցնել որևէ այլ պաշտոն:

Պետական եկամուտների, հարկերի և տուրքերի վերաբերյալ օրինագծերը մշակվում էին ներկայացուցիչների պալատում, սակայն սենատը կարող էր առաջարկել փոփոխություններ ու լրացումներ: Նման իրավունք սենատն ուներ Ֆալս-մյուս օրինագծերի նկատմամբ:

Կոնգրեսի կողմից ընդունված յուրաքանչյուր օրենսգիծ օրենք էր դառնում ԱՄՆ-ի նախագահի ստորագրությունից հետո: Եթե վերջինս առարկում էր, ապա նախագիծը հետ էր ուղարկվում այն պալատ, որը քննարկել էր նախագիծը: Եթե նոր քննարկման հետևանքով տվյալ պալատը ձայների 2/3 -ով վերահաստատում էր օրինագիծը, ապա այն քննարկման նպատակով ուղարկվում էր մյուս պալատ, որտեղ ձայների 2/3-ով ընդունվելու դեպքում օրինագիծը դառնում էր օրենք:

Սահմանադրության մեջ ամրագրված էին Կոնգրեսի բացառիկ իրավունքները (հարկեր, տուրքեր, մաքսատուրքեր սահմանելու և զանձելու, դրամական փոխառություններ կնքելու, օտարերկրյա պետությունների հետ առևտուրն կարգավորելու, փոստային ծառայություններ և ուղիներ հիմնելով, պատերազմ հայտարարելու, զերագույն դատարանին ենթակա դատական մարմիններ հիմնադրելու և այլ իրավունքներ)¹:

Գործադիր իշխանությունն ԱՄՆ-ում իրականացնում էր նախագահը (պրեզիդենտը), որը գործում էր չորս տարի ժամկետով: Նույն ժամկետով գործում էր նաև փոխնախագահը: Նրանք ընտրվում էին անուղղակի եղանակով, երկաստիճան կարգով: Նահանգների բնակիչներն ընտրում էին իրենց ընտրիչներին, իսկ վերջիններս էլ՝ նախագահին: «Նախագահի պաշտոնում չէր կարող ընտրվել այն անձը, ով ի ծնե չէր հանդիսանում Միացյալ Նահանգների քաղաքացի»²: Նա պետք է լիներ առնվազն 35 տարեկան և 14 տարի շարունակ՝ ԱՄՆ-ի ժշտական բնակիչ:

ԱՄՆ-ի նախագահը համատեղում էր պետության գլխի և կառավարության գլխի ֆունկցիաները: Նա հանդիսանում էր բանակի և նավատորմի գլխավոր հրամանատարը, ինչպես նաև անհմծիճի Գահանգների ռազմականության գլխավոր հրամանատարը՝ երբ այդ Մարտեցների ռազմականությունը զորակոչվում էր Միացյալ Նահանգների իսկական ծառայության: Նա իրավունք ուներ հետաձգել դատավճիռների կատարումը, ներում շնորհել Միացյալ Նահանգների դեմ կատարած հանցագործությունների համար

¹ Конституция Соединенных Штатов Америки, 17 сентября 1787г., հոդ. 1, բաժին 8, տն՛ս տն՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 64:

² Նույնը, հոդ. 2, բաժին 1:

բացառությամբ իմփիչմենքի կարգով դատապարտելու դեպքերից), կնքել միջազգային պայմանագրեր (սենատի խորհրդով ու համաձայնությամբ), նշանակել դեսպաններ, հյուպատոսներ, գերագույն դատարանի դատավորներ (սենատի խորհրդով ու համաձայնությամբ), այլ պաշտոնատար անձանց:

Թվարկված լիազորությունները վետոյի իրավունքի հետ մեկտեղ գործադիր իշխանության ղեկավարին հնարավորություն էին ընձեռում ազդել օրենսդրության և արդարադատության իրականացման վրա: Նախագահի Կոնգրեսի վրա ազդեցություն գործելու իրավաբանական մեթոդներն էին վետոյի իրավունքը և ուղերձները: Վետո կարելի էր կիրառել ցանկացած օրինագծի նկատմամբ՝ բացառությամբ սահմանադրության մեջ փոփոխություն մտցնող օրինագծից:

ԱՄՆ-ի նախագահը Կոնգրեսի առջև քաղաքական պատասխանատվություն չէր կրում: Նա, ինչպես նաև բոլոր պաշտոնատար անձինք, ենթակա էին պաշտոնանկության, եթե իմփիչմենքի կարգով մեղավոր էին ճանաչվել պետական դավաճանության, կաշառակերության կամ այլ ծանր հանցագործությունների և հանցանքների համար:

Ընդհանուր առմամբ, կարող ենք նշել, որ քննարկվող ժամանակաշրջանում (այսօր նույնպես) ԱՄՆ-ին՝ որպես նախագահական հանրապետության, բնորոշ էին հետևյալ հատկանիշները. 1) ԱՄՆ-ի նախագահը պետության և կառավարության գլուխն էր, 2) կառավարությունը պատասխանատվություն չէր կրում պառլամենտի առջև, 3) ԱՄՆ-ի նախագահը չունեց Կոնգրեսի պալատները լուծարքի ենթարկելու իրավունք: Նախագահը կանխորոշում և իրականացնում էր երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը:

Դատարան: Սահմանադրության երրորդ հոդվածն ամբողջությամբ մվիրված էր դատական իշխանությանը, որն իրականացվում էր «գերագույն դատարանի և այն ցածրաստիճան դատարանների կողմից, որոնց ժամանակ առ ժամանակ հիմնում էր Կոնգրեսը»: Դատավորներն իրենց պաշտոնները զբաղեցնում էին այնքան ժամանակ, քանի դեռ նրանց վարքն անբասիր էր:

Դատական համակարգում բարձրագույն ատյանը գերագույն դատարանն էր, որի անդամների թիվն անընդհատ փոփոխվում էր: 1869 թ. նրանց թիվը հասավ 9-ի: Դատարանի նախագահին և անդամներին նշանակում էր ԱՄՆ-ի նախագահը:

Որպես առաջին և բացառիկ ատյանի դատարան գերագույն դատարանը գործում էր քավական սահմանափակ թվով դեպքերում՝ դեսպանների, հյուպատոսների գործերով, երկու կամ մի քանի նահանգների վեճերի

դեպքերում: Գերագույն դատարանն առաջին, բայց ոչ բացառիկ ատյան էր այն գործերով, որոնցում որպես կողմ հանդես էին գալիս արտասահմանյան պետությունների դեսպանները և դիվանագիտական ուրիշ գործակալները¹:

Գերագույն դատարանը բարձրագույն ատյան էր սահմանադրական արդարադատության ոլորտում:

ԱՄՆ-ի սահմանադրությունը չէր ամրագրում իրավական ակտերի սահմանադրականության հարցի որոշման որևէ հատուկ մեխանիզմ²:

Առաջին փաստաթուղթը, որն իրավական հիմք դրեց ընդհանուր իրավասության դատարանների համար լուծելու նաև նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերը, դա ԱՄՆ-ի գերագույն դատարանի որոշումն էր «Ուիլյամ Մերբերին ընդդեմ Մեդիսոնի» գործով, որն ընդունվեց 1803 թ. փետրվարի 24-ին³:

Խոսելով ԱՄՆ-ի սահմանադրությանը դատական իշխանությանը վերաբերող հիմնական դրույթների մասին, հարկ ենք համարում անդրադառնալ նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանի դատական համակարգը կարգավորող օրենքներից նվազագույնին:

ԱՄՆ-ի դատական համակարգն աշխարհում ամենաբարդ համակարգերից մեկն էր: Ամերիկյան հայտնի իրավաբան Դ. Ֆրանկը գրում էր, որ «մեր դատարանները՝ մեր կառավարման արտակարգ կարևոր մասն են: Բայց այն, ինչը կարող է կոչվել «դատավարություն», դեռ հիմա էլ անընթաց է անիրագել մեծամասնության համար»:

Արդարադատության մարմինները համալրելիս խստորեն պահպանվում էր դասակարգային ընտրության սկզբունքը: Երկրի պետական կառուցվածքի բարդ ձևը պայմանավորվեց արդարադատության մարմինների հստակ բաժանում՝ ֆեդերալ դատարանների և նահանգների դատարանների:

Ֆեդերալ դատարանների իրավասությունն ընդհանուր տեսքով սահմանված էր ԱՄՆ-ի սահմանադրության երրորդ հոդվածի երկրորդ բաժնի առաջին կետում:

Ֆեդերալ դատական համակարգը գլխավորում էր գերագույն դատարանը:

Ստորադաս ֆեդերալ դատարանները, որոնք հիմնվում էին Կոնգրեսի կողմից, երկու կարգի էին՝ ընդհանուր և հատուկ: Առաջիններին էին պատկանում 1891թ. ստեղծված բողոքարկման դատարանները, ինչպես նաև

¹ Խաչատրյան Հ., Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությունը, Երևան, 1991, էջ 69:

² Հարությունյան Գ., Սահմանադրական վերահսկողություն /համեմատական վերլուծություն/, Երևան, 1997, էջ 57:

³ Նույնը, էջ 57:

դատարանակազմության մասին օրենքի (ընդունվել 1789 թ.) հիման վրա ստեղծված օկրուգային և շրջանային դատարանները:

ԱՄՆ-ի ողջ տարածքը բաժանված էր 9 դատական օկրուգի, որտեղ միանձնաբար պետք է միստ գումարեին ԱՄՆ-ի գերագույն դատարանի անդամները: Սակայն վերջիններս՝ հսկայական ծանրաբեռնվածության կապակցությամբ, իրենց օկրուգներում նշանակում էին նաև անկախ իրավագործություն ունեցող հատուկ մագիստրատներ: Այսպիսով, դատական օկրուգում գործում էին ինչպես օկրուգային ֆեդերալ դատավորը, այնպես էլ ԱՄՆ-ի բարձրագույն դատարանի անդամը, որոնք օժտված էին հավասար լիազորություններով:

Դատական օկրուգն իր հերթին բաժանվում էր շրջանների, որոնց քանակը կախված էր քննարկվող գործերի թվից և ազգաբնակչության խտությունից: Սովորաբար նահանգում կային մեկից մինչև մի քանի ֆեդերալ շրջանային դատարաններ, որոնք հանդիսանում էին միության արդարադատության համակարգի հիմնական օղակները:

Մինչև 1891 թ. որպես բողոքարկման ատյան բոլոր ստորադաս դատական տեղերի համար հանդես էր գալիս ԱՄՆ-ի գերագույն դատարանը: Երբեմն բողոքների անվերջանալի հոսքն ամբողջությամբ կաթվածահար էր անում նրա գործունեությունը: Այն կանխելու նպատակով տեղերում ստեղծվեցին բողոքարկման մարմիններ: Դրանք կազմված էին դատական օկրուգի նիստին մասնակցող ֆեդերացիայի գերագույն դատարանի անդամից, մեկից-երկու օկրուգային և շրջանային ֆեդերալ մագիստրատներից: Օկրուգային մարմինները զրկվեցին պարտականությունների հսկողությունից և վերաժվեցին բացարձակապես առաջին ատյանի դատարանների: Բայց քանի որ նրանց իրավասությունները համարյա ամբողջությամբ համընկան շրջանային դատարանների լիազորությունների հետ, ուստի 1911 թ. լուծարվեցին¹:

Դատական մարմինների ենթակայությունը և ընդդատությունը բավականին ընդարձակ էին: Շրջանային մագիստրատները քննում էին ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործեր:

Ֆեդերալ արդարադատության ստորադաս ատյանին էին ենթակա մինչ 2000 դոլարի հայցագին պարունակող վեճերը: 1912 թ. Կոնգրեսն ընդունեց օրենք, որով շրջանային դատարանին ընդդատյա էր այն վեճերի դատաքննությունը, որոնց վերաբերյալ հայցագինը պակաս չէր 3000 դոլարից: Տվյալ մարմինը քննարկում էր նաև Միացյալ Նահանգների կողմից կամ նրանց դեմ ներկայացված հայցերը (այդ դեպքում վիճելի գումարը

¹Громаков В.С., История государства и права США (1870-1917гг.), Ростов, 1973, էջ 115:

չպետք է գերազանցեր 1000 դոլարից):

Միության օկրուգային դատարանների քրեական իրավասությունը տարածվում էր առավել վտանգավոր «Ֆեդերալ հանցագործությունների» վրա: Այդ դատական ատյանի քաղաքացիական գործերի ընդդատությունը նույնպես բավականաչափ ընդարձակ էր և տարածվում էր 2000 ֆունտ ստեռլինգից բարձր արժողությամբ հայցագների վրա:

Ֆեդերալ օկրուգի բողոքարկման դատարանը միակ տեղն էր, որտեղ ստորադաս դատական ատյանների որոշումների և դատավճիռների վերաբերյալ բողոքներ էին բերվում: Վերը հիշատակված մարմնի որոշումը (եթե այնտեղ շոշափվում էին սահմանադրական հարցեր կամ, եթե գործում հիշատակվում էին ԱՄՆ-ի կողմից կնքված միջազգային պայմանագրեր) կարող էր բողոքարկվել երկրի գերագույն դատարանին:

Ընդհանուր դատարանների ֆեդերալ մագիստրատները պատկանում էին բարձր կարգով վարձատրվող պետական պաշտոնյաներին (միության գլխավոր դատավորը ստանում էր 10.500 դոլար, ֆեդերացիայի գերագույն դատարանի անդամը՝ 10.000, օկրուգային դատավորը՝ 6.000, շրջանայինը՝ 3500-ից մինչև 5.000 դոլար):

Զմեարկվող ժամանակաշրջանում այստեղ կային և հատուկ դատարաններ, որոնցից կարևորներն էին՝ գնվորական տրիբունալը, մասնավոր սեփականության գործերով բողոքարկման դատարանը, Կոլումբիայի տարածքի և ֆեդերալ օկրուգի դատարանները, մաքսային դատարանները, առևտրական դատարանները և այլն: Նիւտերիմ ժառանգող անձինք, ի տարբերություն ընդհանուր դատարանի մարմինների մագիստրատների, իրենց պաշտոնը զբաղեցնում էին որոշակի ժամանակով և կարող էին ժամկետից շուտ պաշտոնազրկվել ԱՄՆ-ի նախագահի կողմից:

Նահանգների դատարանները բաժանվում էին ընդհանուր և հատուկ դատարանների: Առաջիններին էին վերաբերում. 1) հաշտարար դատարանները և քաղաքացուխների դատարանները, 2) կոմսությունների և մունիցիպալ դատարանները, 3) օկրուգային դատարանները, 4) գերագույն դատարանները:

Հաշտարար դատարանները և քաղաքացուխների դատարանները գործում էին միանձնյա դատավորի կազմով և իրավասություն ունեին նվազ կարևորություն ունեցող քրեական և քաղաքացիական գործերի վերաբերյալ: Տվյալ մագիստրատները նույնպես վարում էին կարևոր նշանակության իրավախախտումների հետաքննություն և հանցանքի ակնհայտության դեպքում հրապարակում էին հանցավորին ձերբակալելու հրամանը:

Կոմսությունների և մունիցիպալ դատարաններում բողոքներ էին բերվում ստորադաս դատական մարմինների ակտերի վերաբերյալ: Նրանց ի-

բավասության մեջ էր մտնում նաև առավել բարդ քաղաքացիական և քրեական գործերի քննումը:

Օկրուգային դատարանները հանդիսանում էին մունիցիպալ դատարանների և կոմսությունների դատարանների որոշումների ու դատավճիռների վերաբերյալ բողոքների դատաքննության վայր: Այստեղ առաջին ատյանով լուծվում էր նահանգների իրավասության տակ ընկած քաղաքացիական հայցերի և իրավական դեյլիկտների հիմնական մասը: Օկրուգային դատարանների գործունեության առանձնահատկությունը նրանում էր, որ նրանք միստ էին գումարում միայն դատարանի արտագնաց նստաշրջանի ժամանակ:

Նահանգների գերագույն դատարանները, որպես օրենք, գործերը, ըստ էության, չէին քննում: Նրանք ստուգում էին օկրուգային դատարանների գործողությունների վերաբերյալ բողոքները:

Ընդհանուրի հետ մեկտեղ, նահանգներում կային և արդարադատության մարմիններ: Դրանց թվին էին պատկանում, այսպես կոչված «խղճի» (կանցլերական) դատարանները և կտակների վերաբերյալ դատարանները:

«Խղճի դատարաններում» քննվում էին խաբեության, վստահությունը չարաշահելու ամուսնության, ամուսնալուծությունների, կտակների իսկության ճանաչման և այլնի վերաբերյալ գործերը: Դատավարական ձևերն այդ կարգի հիմնարկներում զգալիորեն տարբերվում էին ընդհանուր դատարաններում կիրառվող ընթացակարգից:

Կտակների վերաբերյալ դատարաններ կային Նահանգների մեծամասնությունում: Նրանց իրավասությունը բավականաչափ մեծ էր (Ժառանգատուի ճշմարիտ կամքի ապացուցումը, անշարժ գույքի կառավարումը, կտակակատարի նշանակումը, անչափահաս ժառանգների ունեցվածքի խնամակալությունը և այլն):

Նահանգների մեծ մասում մագիստրատները քվեարկությամբ ընտրվում էին ընտրողների կողմից 6-ից մինչև 12 տարի ժամկետով: Մի շարք տեղերում դատական պաշտոնում մնալը ավելի երկարատև էր. (օրինակ՝ Նյու-Յորքում 14 տարի): Որոշ նահանգներում դատավորներն ընտրվում էին օրենսդրական ժողովներով (ընդ որում Մասաչուսեթսում, Նյու-Հեմփշիրում և Ռոդ-Այլենդում ընտրվելը ցմահ էր): Որոշ դեպքերում սենատի թույլտվությամբ նրանց նշանակում էին նահանգապետերը: Ավելորդ չհամարենք նշել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում վերջնականապես ձևավորվեց ֆեդերալ դատախազությունը: Այն գլխավորում էր դատախազը, որը միաժամանակ հանդիսանում էր միության արդարադատության նախարարը: Տեղերում կային ԱՄՆ-ի նախագահի կողմից նշանակ-

ված շրջանային դատախազներ:

Սահմանադրության երրորդ հոդվածի վերջին բաժինը սահմանում էր պետական դավաճանություն հասկացությունը: «Սիացյալ Նահանգներին դավաճանել, նշանակում է նրա դեմ հրահրել պատերազմ, միանալ նրա թշնամիներին, ծառայել և օգնել նրան»¹:

Ֆեդերացիայի նահանգների փոխհարաբերությունները կարգավորված են սահմանադրության չորրորդ հոդվածով: Յուրաքանչյուր նահանգում հարգանք և վստահություն էին վայելում մյուս բոլոր նահանգների հանրային ակտերը, պաշտոնական փաստաթղթերը և դատական որոշումները:

Սահմանադրության հոդվածներից հինգերորդը սահմանում էր հիմնական օրենքի մեջ ուղղումներ մտցնելու ընթացակարգը, վեցերորդը՝ սահմանադրության գերակայությունը, իսկ յոթերորդը՝ այն վավերացնելու կարգը:

Այսպիսով, ընդհանրացնելով ԱՄՆ-ի սահմանադրության բնորոշ գծերը, կարող ենք նշել, որ այն բնութագրվում էր ինչպես դրական, առաջադիմական գծերով, այնպես էլ բացասական տարրերով: Այդ պատմական փաստաթուղթը, իր հիմքում դնելով իշխանությունների տարանջատման սկզբունքը սահմանեց, որ օրենսդիր իշխանությունը պատկանում է պառլամենտին, գործադիրը՝ նախագահին, դատականը՝ գերագույն դատարանին²: Այն ամրապնդեց արտադրական նոր հարաբերությունների հաղթանակը հասարակության մեջ, երկրի հետագա զարգացման համար ստեղծեց իրավական հիմքեր, ամրապնդեց ամերիկյան ժողովրդի հաղթանակն անգլիական գաղութատերերի նկատմամբ: Սակայն, այս ամենին զուգահեռ, սահմանադրության մեջ բացակայում էին քաղաքացիների իրավունքներին և ազատություններին վերաբերող կարևորագույն բաժինները:

Հիշյալ սահմանադրությունն իր մի շարք լրացումներով (ուղղումներով) համդերձ գործում է մինչև այսօր:

Իրավունքների մասին կոնդակը (բիլլը): Սահմանադրության ընդունումից հետո երկրում սկսվեց հասարակական նոր շարժում, որը ~~հասարակ~~ ուներ հիմնական օրենքում մտցնել լրացումներ, որոնք կամրագրեին քաղաքացիների դեմոկրատական իրավունքներն ու ազատությունները: Օրենսդիրները հասկացան, որ ամերիկացիների մեծամասնությունը սահմանադրության մեջ է ուզում տեսնել իր իրավունքներն ու ազատությունները ցանկացած ոտնձգությունից պաշտպանելու պետական երաշխիքը: Ժողովրդական լայն զանգվածների ճնշման ազդեցության տակ նահանգների օ-

¹Конституция Соединенных Штатов Америки, 17 сентября 1787г., гл. 3, п. 3, բաժին 3, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 70:

²Խրոպանյուկ Վ.Ն., Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997, էջ 136:

րենսդիր ժողովները պահանջեցին սահմանադրությունը լրացնել քաղաքացիների իրավունքների ու ազատությունների մասին հոդվածներով: 1789 թ. ԱՄՆ-ի դեկլարությունը հարկադրված էր սահմանադրության մեջ կատարել 12 ուղղումներ, որոնցից առանձնապես մեծ նշանակություն ունեցան առաջին տասն ուղղումները: Դրանք հաստատվեցին 1789-1791 թթ. ընթացքում և պատմությանը հայտնի դարձան «Իրավունքների մասին կոնդակ» (քիլ) անունով:

1 Առաջին ուղղումը հռչակում էր խոսքի, մամուլի, կրոնի ազատություն, արգելում էր գրաքննությունը: «Կոնգրեսը չպետք է իրապարակի օրենքներ, որոնք սահմանափակում են... խաղաղ նպատակներով հավաքվելու և չարաշահումները դադարեցնելու պահանջով կառավարությանը «դիմելու իրավունքը»¹:

2 «Բիլլի» երկրորդ հոդվածը ժողովրդին զենք կրելու և պահելու իրավունք էր վերապահում:

Արգելվում էր՝ զինվորների կողմից չարաշահումները: Նրանց չէր թույլատրվում խաղաղ ժամանակ մտնել որևէ մեկի տուն՝ օթևանելու նպատակով, իսկ պատերազմի ժամանակ թույլատրվում էր միայն օրենքով սահմանված կարգով (հոդված 3): Գործորդ ուղղումով ամրագրված էր անձի, բնակարանի, փաստաթղթերի և ունեցվածքի անձեռնմխելիության սկզբունքը: Առանց օրինական հրամանների արգելվում էին հետապնդումները և ձերբակալումները: Հինգերորդ ուղղումով մտցվեց երդվյալ ատենակալների ինստիտուտը: Ոչ մեկին չպետք է պարտադրվեր քրեական գործով ցուցմունքներ տալ իր իսկ դեմ:

Բուրժուազիան և խոշոր պլանտատորները հասան նրան, որ «կոդակում» մտցվեց մասնավոր սեփականության անձեռնմխելիության մասին դրույթը: «Մասնավոր ոչ մի սեփականություն առանց արդարացի հատուցման չպետք է վերցվի հասարակական օգտագործման համար» (հոդված 5):

«Իրավունքների մասին կոնդակը» պահանջում էր, որ քրեական գործերը քննվեն երդվյալների դատարանում: Մեղադրյալն իրավունք ուներ պահանջելու, որպեսզի. 1) իրեն հայտնեին մեղադրանքի բնույթի և շարժառիթների մասին, 2) կասկածները առերեսված իր դեմ ցուցմունք տվող վկաների հետ, 3) պարտադիր հրավիրեին իր կողմից վկաներին: Նա իրավունք ուներ պաշտպանության համար օգտվել փաստաբանի ծառայությունից (հոդված 6):

Ընդհանուր իրավունքի վրա հիմնված բոլոր քաղաքացիական գործերով (որոնցում հայցի վիճարկվող զինը բարձր է քսան դոլարից) նույնպես

¹Билль о правах, հոդ. 1, տե՛ս Международные акты о правах человека, М., 2000, էջ 24:

պահպանվում էր երդվյալների դատի իրավունքը (հոդված 7): Ութերորդ ուղղումն արգելում էր չափից դուրս դաժան պատիժների կիրառումը և մեծ տուգանքների գանձումը: ~~Գրդ ուղղումով նշվում էր, որ սահմանադրության մեջ որոշակի իրավունքների թվարկումը չպետք է մեկնաբանվի որպես ժողովրդի պահպանած մյուս իրավունքների մերժում կամ նսեմացում:~~

«Կոնդակում» ամրագրված կարևորագույն դրույթով կարգավորվում էր առանձին նահանգների լիազորությունների հարցը: Այստեղ ուղղակիորեն նշված է. «սույն Սահմանադրությամբ Միացյալ Նահանգներին չվերապահված լիազորությունները, որոնց իրականացումն արգելված չէ առանձին նահանգների, պատկանում են նահանգներին կամ ժողովրդին»¹:

«Իրավունքի մասին կոնդակի» ընդունումն ունեցավ առաջադիմական նշանակություն: Այդ կարելի է դիտել որպես դասակարգային պայքարի հետևանք և դեմոկրատական ուժերի կարևոր հաղթանակ:

Դրա հետ մեկտեղ այն չփոխեց ընտրական հին համակարգը, որը շատ քաղաքացիներին զրկում էր քաղաքական կյանքին ակտիվորեն մասնակցելու հնարավորությունից: Հարավային նահանգներում ստրկությունը չվերացվեց:

3. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ XIX ԴԱՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 13-15-ԲԴ ՈՒՂՂՈՒՄՆԵՐԸ

1860թ. նոյեմբերին ԱՄՆ-ի նախագահ ընտրվեց հանրապետական կուսակցության անդամ Ա. Լինկոլնը: Նրա իշխանության տարիներին (1861-65 թթ.) ԱՄՆ-ը բռնկված էր քաղաքացիական պատերազմի բոցերով: Դա դասակարգային սուր պայքար էր, բուրժուական հեղափոխություն, որի ընթացքում երկրի բաժանվել էր երկու պատերազմող մասերի: Քաղաքացիական պատերազմն արդյունաբերական առաջավոր Հյուսիսի և հետամնաց ստրկատիրական Հարավի բախումն էր: Այնտեղ, որտեղ գոյություն ուներ ստրկություն, իսկ այն գոյություն ուներ ամբողջ Հարավում, այսինքն ամբողջ երկրի տարածքի զգալի մասում արգելակվում էր գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացումը: Ստրուկները շահագրգռված չէին խնամքով մշակել հողը: Հարավում սովորաբար հողը մշակում էին բրիչով, մույնիսկ գութանը հազվադեպ էր օգտագործվում: Պլանտացիաների հողերն արագ ուժասպառ էին լինում, կտրում էին անտառները:

Բանվորները և ֆերմերները պայքարում էին ստրկության դեմ, որով-

¹ Билль о правах, илл. 10, տե՛ս Международные акты о правах человека, М., 2000, էջ 25:

հետև այն վատթարացնում էր իրենց կյանքի պայմանները: Ճերմերները պահանջում էին հողերի ձրի բաժանում, իսկ պլանտատոր-ստրկատերերը հակառակում էին դրան: Բուրժուազիայի առաջավոր շրջանները դեմ էին սննդկուրթյանը, որովհետև ստրկատիրական Հարավը քիչ էր սպառում արդյունաբերական ապրանքներ և ստրկության հետագա պահպանումը սպառում էր ամբողջ երկրի զարգացմանը՝ կապիտալիստական մյուս երկրների հետ համեմատած:

Այսպիսով, քաղաքացիական պատերազմի հիմնական պատճառը արտադրության երկու համակարգերի՝ ստրկական համակարգի և վարձու աշխատանքի համակարգի բախումն էր, և ստրկատերերի ու Հյուսիսի ժողովրդական զանգվածների օժանդակությունն ստացած բուրժուազիայի պայքարն իշխանության համար: Բայց բուրժուազիայի մեջ կային և այնպիսի խավեր, ինչպես, օրինակ, Հյուսիսի տեքստիլ ֆաբրիկատերերը, որոնք վախենում էին կապերը խզել Հարավի հետ: Հարավից բամբակի տեղափոխումը դադարեցվելու հետևանքով կանգ կառնեին նրանց ֆաբրիկաները և, հետևապես, կկրճատվեին նրանց շահույթները: Պատերազմում բեկում սկսվեց, երբ ժողովրդական զանգվածային ելույթների ճնշման տակ Հյուսիսի կառավարությունն անցավ վճռական միջոցառումների:

Նախագահ Աբրահամ Լինկոլնը ժողովրդի ճնշման տակ, 1862թ. հաստատեց հոմստեդների մասին օրենքը, որի համաձայն Արևմուտքի ազատ հողերի հսկայական ֆոնդից ձրի հողաբաժիններ էին տրվում բոլոր նրանց, ովքեր կցանկանային դրանք մշակել:

Բանվորները, ֆերմերները, բանակի զինվորները պահանջում էին ստրկության ոչնչացում: Ամեն օր զորամասերի դասավորության շրջանն էին գալիս իրենց տերերից փախած ստրուկներ: Եթե տերերին հաջողվում էր բռնել փախած ստրուկներին, ապա նրանց ծեծում էին, իսկ հաճախ էլ սպանում: Չինվորներն իրենց պաշտպանության տակ էին առնում փախած ստրուկներին և նրանց չէին հանձնում ստրկատերերին: Բանակի մի քանի զորամասեր սկսեցին չենթարկվել: Վերջապես 1862թ. սեպտեմբերի 22-ին Լինկոլնը ստորագրեց կառավարական հայտարարություն այն մասին, որ եթե խռովությունը չդադարեցվի, ապա 1863թ. հունվարի 1-ից խռովությամբ բռնկված նահանգների կամ շրջանների՝ ստրուկները ազատ կարձակվեն: Ստրուկներին շուտով ազատագրելու մասին հայտարարությունը կենդանի արձագանք գտավ ժողովրդական զանգվածների մեջ: Մեն նահանգում, օրինակ, ինչպես 1776թ. «Անկախության հռչակագրի» հռչակման ժամանակ, ազատագրության հայտարարության առթիվ կրակեցին հրանոթներից, զանգեր խփեցին և խարույկներ վառեցին: Նյու-Յորքի փողոցներում մարդիկ կանգ էին առնում և միմյանց շնորհավորում պատե-

րագմի արագ ավարտման հեռանկարի առթիվ:

Վերջապես եկավ նոր տարվա՝ 1863 թ. առաջին օրը, և ստրկությունը վերացվեց: Սակայն նեգրերը հող չստացան: 186 հազար նեգրեր, երեկվա ստրիկները, մտան բանակ և նավատորմ: Ավելի շատ նեգրեր աշխատում էին ամրությունների կառուցման վրա: Բայց ռասիստորեն տրամադրված ամերիկյան բուրժուազիան բանակում էլ նեգրերին դրեց անհավասար դրության մեջ. նրանց ավելի քիչ էին վճարում, քան սպիտակներին, թույլատրում էին գրավելու միայն զինվորական ցածր պաշտոններ, իսկ նավատորմում նույնիսկ մեծահասակ նեգրերին դարձնում էին միայն յունգեր, այսինքն՝ դեռահաս աշակերտների պաշտոններ էին տալիս: Այնինչ նեգրերը հյուսիսիցիների բանակի շարքերում անձնուրաց կերպով, հերոսաբար էին մարտնչում:

Այն ժամանակ, երբ հյուսիսիցիների զորքերը ներխուժել էին հակառակորդի խոր քիչուները, հյուսիսիցիների բանակների գլխավոր հրամանատար րանտը պաշարել էր Ռիչմոնդը: 1865 թ. ապրիլին Ռիչմոնդը գրավվեց:

Հաղթանակի առթիվ ամբողջ Հյուսիսում աղմկալից տոնկատարություններ սկսվեցին: Մոռացվեց ամեն մի զգուշություն պարտված թշնամու նկատմամբ: Ապրիլի 14-ին Վաշինգտոնում հանդիսավոր ներկայացման ժամանակ իր օթյակում սպանվեց ամերիկյան ժողովրդի հավատարիմ գավակ Լինկոլնը: Նրան սպանեց մի դերասան, որին կաշառել էին հարավցի ստրկատերերը:

Իշխանության համար մղվող պայքարում, որն շարունակվեց Աբրահամ Լինկոլնի մահից հետո, հաղթեց խոշոր բուրժուազիան և հաստատեց իր դիկտատուրան:

Այն բանից հետո, երբ հյուսիսիցիներն իրնց զորքերը դուրս բերեցին Հարավից, երեկվա ստրկատերերը դադարեցին ճանաչել Միության կառավարության նշանակած իշխանություններին և սկսեցին վերականգնել նեգրերի ստրկությունը: Առաջացավ վտանգ, որ հարավը նորից կանջատվի միությունից:

Այդ ժամանակ Կոնգրեսը որոշեց հյուսիսիցիների զորքերով նորից գրավել հարավը և այն բաժանել հինգ օկրուգների՝ քաղաքացիական պատերազմի մարտական գեներալների գլխավորությամբ:

Հյուսիսի բուրժուազիան նեգրերին օգտագործեց նախկին ստրկատերերի քաղաքական ջախջախումն ավարտելու համար, բայց նեգրերին հող չտվեց, այն թողեց երեկվա ստրկատերերին: Հյուսիսի բուրժուազիան, տեսնելով նեգրական զանգվածի հեղափոխական շարժման ուժեղացումը, նոր գործարքի մեջ մտավ Հարավի նախկին ստրկատերերի հետ: Հարավում նախկին ստրկատերերը աստիճանաբար վերականգնեցին նեգրերի

նկատմամբ տեռորիստական ռեժիմը, կազմակերպեցին նեգրական մի շարք արյունոտ ջարդեր և վերադարձան իշխանության գլուխ: Նեգրերը զենքը ձեռքին դիժադրում էին նախկին ստրկատերերին, սակայն ջախջախվեցին:

1876 թ. նախօրյակին Հարավում ամենուրեք իշխում էին նախկին ստրկատերերը՝ բուրժուազիայի հետ դաշնակցած: Նեգրերը փաստորեն նորից զրկվեցին քաղաքական իրավունքներից և ենթարկվեցին ռասայական խտրականության:

Քաղաքացիական պատերազմի նշանակությունը Հյուսիսային Ամերիկայում: Եթե մինչև քաղաքացիական պատերազմն ԱՄՆ-ում իշխանությունը պատկանում էր ստրկատերերին, ապա այժմ իշխանության գլուխ անցավ հյուսիսի խոշոր բուրժուազիան, որը գործարք կնքեց հարավի նախկին ստրկատերերի հետ: Քաղաքացիական պատերազմը հարավային նահանգների նեգրերին իսկական ազատագրում չբերեց: Պլանտատորական ստրկությունը, որն արգելակում էր ամբողջ երկրի զարգացումը, վերացվեց, նեգր-ստրուկներն ազատագրվեցին, սակայն նրանք հող չստացան և ստիպված էին որպես բատրակներ կամ կիսրար-վարձակալներ, աշխատել իրենց նախկին տերերի դաշտերում: Նախկին ստրկությունը փոխարինվեց նորով՝ կապիտալիստականով, որը միացած էր ստրկության մնացորդների հետ. պահպանվեց նեգրերի ռասայական ճնշումը: Նույն աշխատանքի համար նեգրերին ավելի քիչ են վճարում, քան սպիտակներիին, հարավում չէին թույլատրում սովորել սպիտակների հետ, նրանց հետ միասին երթևեկել միևնույն տրամվայներով, ավտոբուսներով և այլն:

Հնդկի ցեղերի վիճակը քաղաքացիական պատերազմից հետո էլ ողբերգական մնաց: Ամերիկյան գորքերն ապաշների մի մեծ ցեղի քչեցին Ժայռոտ լեռների կիրճերը: Այնտեղ հնդկացիները 11 տարի շարունակ հերոսաբար պաշտպանվում էին ամերիկյան գորքերից: Հնդկացիների դեմ ուղղված իրենց դաժանություններով անփառունակ անուն վաստակեցին քաղաքացիական պատերազմի զեներալները՝ րանտը և մյուսները:

Հյուսիսի հաղթանակն ուժեղացրեց կապիտալիզմի զարգացումը և բանվորների շահագործումը, բայց այս հաղթանակը մեծ նշանակություն ունեցավ բանվորական շարժման զարգացման համար: Քաղաքացիական պատերազմի ընթացքում արագորեն ստեղծվեցին արհմիություններ, պատերազմի վերջանալուց հետո բանվորները որոշ նահանգներում նվաճեցին 8-ժամյա բանվորական օրվա մասին առաջին օրենքները:

Քաղաքացիական պատերազմը ֆերմերներին տվեց հոմստեդների մասին օրենքը և վերացրեց ստրկատերերի կողմից արևմտյան հողերը զավթելու վտանգը: Ֆերմերների թիվը աճեց նաև հարավում, որտեղ բուրժուա-

զիսն գնում էր մախկին ստրկատերերի հողերը և մանր կտորներով վաճառում: Միաժամանակ քաղաքացիական պատերազմից հետո ուժեղացավ ֆերմերության շերտավորումը. առաջացավ կուլակություն, ֆերմերների հիմնական զանգվածը քայքայվեց, համալրելով բատրակների շարքերը: Ֆերմերները կրում էին կապիտալիստական շահագործման ամենադաժան աղետները: Հոմստեդների մասին օրենքներից լայնորեն օգտվեց բուրժուազիան՝ շատ ֆերմերներից գնելով փոքր հողամասեր կամ կաշառքի միջոցով հոմստեդների անվան տակ ստանալով հսկայական տարածությամբ հողեր:

Պատերազմի ավարտից հետո կոնգրեսը ստիպված էր սահմանադրության մեջ կատարել մի շարք ուղղումներ (լրացումներ): 1865 թ. մինչև 1870 թ. ընդունվեցին երեք ուղղումներ (լրացումներ): 1865 թ. ուժի մեջ մտավ 13-րդ ուղղումը, որով Միացյալ Նահանգներում և մեկ այլ վայրում, որտեղ տարածվում էր ԱՄՆ-ի լիազորությունը և առկա էր հարկադրական աշխատանքը վերացվում էին: Հարկադրական աշխատանքը կարող էր կիրառվել միայն հնացագործության համար պատիժ կրելու դեպքում:.....

Այս դրույթը կյանքի կոչելու համար կոնգրեսին իրավունք վերապահվեց հրապարակելու համապատասխան օրենքներ: Ընդունվեցին օրենքներ, որոնցով արգելվում էր սևամորթների և սպիտակամորթների միջև ամուսնությունը, պայքար էր մղվում թափառաշրջիկության դեմ: Անչափահաս նեգրերին կարող էին հանձնել սպիտակամորթ բնակչությանը՝ «ուսուցանելու» նպատակով: Նեգրերի համար աշխատանքները խիստ սահմանափակ էին: Թույլատրվում էր ծեծի ենթարկել նեգրերին:

1866 թ. ընդունվեց 14-րդ ուղղումը, որն ուժի մեջ մտավ 1868 թ. հուլիսի 28-ից: Դրանով ԱՄՆ-ում ծնված բոլոր անձինք (նույնիսկ նեգրերը), ովքեր ենթարկվում էին նրա իրավագործությանը, հանդիսացան ԱՄՆ-ի քաղաքացիներ: Նահանգներին արգելվեց հրապարակել կամ գործողության մեջ դնել այնպիսի օրենքներ, որոնք կսահմանափակեին քաղաքացիների արտոնություններն ու ազատությունները:

14-րդ ուղղումով. «... Ոչ Միացյալ Նահանգները, ոչ էլ նահանգներից որևէ մեկը չպետք է իրենց վրա պարտավորություններ վերցնեն և վճարեն այն պարտքերը, որոնք վերցրվել են Միացյալ Նահանգների դեմ խռովության կամ ապստամբության աջակցության նպատակով...»: Կոնգրեսի անդամը կամ ԱՄՆ-ի պաշտոնատար անձը, ինչպես նաև նահանգների Օրենսդիր ժողովի անդամները կամ պաշտոնատար անձինք, որոնք երդում

¹Статьи, дополняющие и исправляющие Конституцию Соединенных Штатов Америки, стр. 13, տե՛ս Конституции и законодательные акты буржуазных государств, М., 1957, էջ 194:

էին տվել Սահմանադրության պահպանման առթիվ, չէին կարող լինել սե-
նատոր կամ ներկայացուցիչ Կոնգրեսում, նախագահի և փոխնախագահի
ընտրիչ, ինչպես նաև զբաղեցնել այլ պաշտոն, եթե խախտել էին այդ եր-
դումը և մասնակցել էին սահմանադրության դեմ ուղղված ապստամբու-
թյանը կամ խռովությանը, կամ թե ծառայություն էին մատուցել թշնամիներ-
ին: Իրավունքների նման սահմանափակումը կարող էր վերացվել Կոնգ-
րեսի յուրաքանչյուր պալատի ձայների 2/3-րդով:

1870 թ. մարտի 30-ից ուժի մեջ մտավ 13-րդ լրացումը, որով հավասար
ընտրական իրավունքներ տրվեցին ԱՄՆ-ի բոլոր քաղաքացիներին՝ ան-
կախ ռասայից, մաշկի գույնից կամ նախկինում ստրուկ լինելու հետ կապ-
ված հանգամանքից:

Չնայած այս ամենին, հասարակական կյանքի բոլոր բնագավառներ-
ում սպիտակամորթների և «գունավոր մարդկանց» միջև տարբերու-
թյունն ակնհայտ էր: Առավել սահմանափակ էին նեգրերի իրավունքները:

XX դ. սկզբում 1913 թ. ԱՄՆ-ի սահմանադրության մեջ կատարվեցին
ևս երկու փոփոխություններ: 16-րդ լրացումով Կոնգրեսին իրավունք վե-
րապահվեց ցանկացած աղբյուրից գոյացած եկամուտներից սահմանել և
զանձել հարկեր՝ անկախ առանձին նահանգների միջև դրանց բաշխումից
և որևէ մարդահամարից ու բնակչության հաշվարկումից: Սահմանադրու-
թյան 17-րդ լրացումը փոփոխություն նախատեսեց սենատի կազմում:
Այժմ արդեն սենատի կազմի մեջ էին մտնում յուրաքանչյուր նահանգի
բնակչության կողմից վեց տարի ժամկետով ընտրված երկու սենատոր, ո-
րոնցից յուրաքանչյուրն ուներ մեկ ձայնի իրավունք: Յուրաքանչյուր նա-
հանգի ընտրողները պետք է համապատասխանեին այն նույն պահանջ-
ներին, որոնց համապատասխանում էին նահանգի օրենսդրական ժողովի
առավել բազմանդամ պալատի ընտրողները:

ԱՄՆ-ի պետական կարգում XX դարում, տեղի ունեցան նաև այլ փո-
փոխություններ:

4. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում արագորին ընդարձակվում
էին ԱՄՆ-ի պետական սահմանները: Այն կատարվում էր մի կողմից նվա-
ճումների, մյուս կողմից՝ գնումների շնորհիվ:

1846թ. Միացյալ Նահանգները հարավի պլանտատորների ճնշման
ներքո զավթողական պատերազմ մանձազերծեցին Մեքսիկայի դեմ: Այդ
անարդար պատերազմի հետևանքով, ըստ 1848թ. փետրվարի 2-ի պայմա-
նագրի, Մեքսիկայից բռնի կերպով անջատվեցին հսկայական տարածու-

թյուններ, ներառյալ Կալիֆորնիան, Կոլորադոն, Նյու-Մեքսիկան, Տեխասը և այլն, որոնց մակերեսը գերազանցում էր խառը եվրոպական պետությունների՝ Գերմանիայի և Ֆրանսիայի տարածքները միասին վերցրած: Այսպես Ամերիկայում առաջացան Մեքսիկական ծագում ունեցող ամերիկացիները:

Նոր շուկաներ և հումքի աղբյուրներ ձեռք բերելու նպատակով Միացյալ Նահանգները զրավում են նորանոր տարածքներ, հասնելով մինչև Անտիլյան կղզիներ ու Խաղաղ օվկիանոսի ազատ տարածությունները: Նրանք Ռուսաստանից գնեցին Ալյասկան:

Երկրի տնտեսական արագ զարգացումը մշտապես ուղեկցվում էր արտաքին քաղաքական նվաճումներով: Եթե XIX դ. առաջին կեսին էքսպանսիան ուղղված էր ֆեդերացիայի տարածքի ընդարձակմանը՝ արևմտյան հողերը մինչև Խաղաղ օվկիանոսի ափերը գաղութացնելու հաշվին, ապա XIX դ. վերջին ԱՄՆ-ն անցան բացահայտ նվաճումների:

Երկիրը XIX դ. վերջին վերածվեց հզոր ռազմածովային տերության:

XIX դ. վերջին ԱՄՆ-ի արտաքին քաղաքական կյանքը նշանավորվեց այդ երկրին հաջողություն բերող իրադարձություններով: Իսպանիայի հետ պատերազմի հետևանքով ԱՄՆ-ը հսկողություն սահմանեց Կուբայի վրա, զրավեց Ֆիլիպինյան կղզիները, Պուերտո-Ռիկան և Գուաման:

Ամերիկյան մայրցամաքի նկատմամբ պրոամերիկյան քաղաքականությունը հասցրեց Կոլումբիա, Արգենտինա, Չիլի, Բրազիլիա և լատինաամերիկյան մյուս երկրներ ԱՄՆ-ի գործերի ներխուժմանը: Սկսվեցին նվաճումները Հեռավոր Արևելքում և Արևելյան Ասիայի երկրներում:

Կուբան վերածելով կիսազաղութի, ԱՄՆ-ը այստեղ ստեղծեց հենակետային բազաներ և 1903թ. սկսեց Պանամայի ջրանցքի շինարարությունը, որն ուներ մեծ տնտեսական և ռազմաստրատեգիական նշանակություն:

Կիրառելով տնտեսական դիվանագիտական և ռազմական ճնշում, ԱՄՆ-ը Կենտրոնական Ամերիկայի երկրները դարձրեցին կիսազաղութային երկրներ (մասնավորապես Կուբան, Սան-Դոմինգոն, վատենալան, Կոստա-Ռիկան, Նիկարագուան): Այն տարածքները, որոնք խաղաղ կամ ռազմական ճանապարհով ձեռք էին բերվել Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Իսպանիայից, Ռուսաստանից, Մեքսիկայից, բնակեցվեցին գաղութաբնակներով, իսկ հետագայում նոր նահանգների իրավունքներով ընդգրկվեցին ֆեդերացիայի կազմում:

Պանամայի ջրանցքի շինարարության հետ մեկտեղ Կարիբյան ծովն արագորեն վերածվում էր ԱՄՆ-ի ներքին ծովի, իսկ ողջ Կենտրոնական Ամերիկան՝ Վաշինգտոնի կալվածքի:

Իսպանա-ամերիկյան պատերազմի հետևանքով ԱՄՆ-ի պաշտոնա-

կան գաղութը դարձավ Պուերտո-Ռիկան: Կղզու վարչական կառուցվածքը 1900 թ. սահմանվեց ամերիկյան Կոնգրեսի կողմից: Պուերտո-Ռիկայի բնակչությունը ստացավ ոչ թե ԱՄՆ-ի քաղաքացիություն, այլ հպատակություն: Նրա բնակիչների վրա տարածվում էին Վաշինգտոնի կողմից սահմանված բոլոր պարտավորությունները, բայց ոչ այն իրավունքները, որոնք ունեին ամերիկյան քաղաքացիները: Իրավաբանորեն այդ պարադոքսային դրույթը վաշինգտոնյան քաղաքագետները հիմնավորում էին նրանով, որ Պուերտո-Ռիկան կղզի է, որը պատկանում է միայն ԱՄՆ-ին, բայց ֆեդերացիայի կազմի մեջ չի մտնում:

Ընդհանրացնելով, նշենք, որ ԱՄՆ-ի արտաքին նվաճողական քաղաքականությունն իր բնույթով չէր տարբերվում եվրոպական երկրների համանման քաղաքականությունից:

5. ԱՄՆ-Ի ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

1259
Իրավունքի աղբյուրները և առանձնահատկությունները: ԱՄՆ-ի իրավունքն առաջացել և ձևավորվել է բուրժուական պետության և իրավունքի առաջացմանն ու զարգացմանը բնորոշ դասական կանոններով: Համաձայն այդ կոնոնների իշխանության գլուխ անցած բուրժուազիան պետական կարգերը վերափոխում և համապատասխանեցնում էր իր շահերին:

ԱՄՆ-ի իրավակարգի վրա մեծ ներգործություն ունեցավ ամերիկյան ֆեդերալիզմը, որը ձևականորեն բխում էր հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտների իրավական կարգավորման վերաբերյալ նահանգների բավականին լայն իրավասության հռչակումից: Ֆեդերալ իշխանությունները լիազորված էին կարգավորել միայն այն հարցերը, որոնք ենթակա էին նրանց բացարձակ տնօրինությանը:

Վ
Ամերիկյան ֆեդերացիայի առանձնահատկությունն իրավական դուալիզմն էր, ըստ որի յուրաքանչյուր նահանգի վրա դուալիզմն գործում էին մի կողմից այդ նույն նահանգի ընդունած իրավական ակտերը, մյուս կողմից՝ ֆեդերացիայի ակտերը:

Անգլիացի գաղութաբնակներն իրենց հետ Ամերիկա բերեցին ընդհանուր իրավունքը: Սակայն, խոսելով անգլիական ընդհանուր իրավունքի մասին, անհրաժեշտ է ընդգծել Ամերիկայում նրա ընդօրինակման առանձնահատկությունները: Բանը նրանում է, որ որոշ գաղութներ (հետագայում նահանգներ) այն ընդօրինակեցին սահմանափակումներով (մի որոշ ժամկետով, օրինակ՝ մինչև 1640 թ.), մյուսները՝ այն վերափոխեցին:

Բոլոր դեպքերում ժխտվում էին անգլիական եկեղեցական կառուցված-

քը, մայրատները և ֆեոդալիզմի այլ մնացուկները:

Նախադեպը, որպես այդպիսին, ընդունվեց առանց վերապահումների: յործերի մեծ մասը լուծվում էր «արդարության» հիման վրա: Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ դեռևս XVII դ. անգլիական գաղտնի խորհուրդն ընդունում էր, որ անգլիական իրավունքն կիրառելի է գաղութներում այն չափով և այն դեպքերում, որչափով և երբ դրա մասին ուղղակի հիշատակվում է համապատասխան կարգադրություններում: Գաղութաբնակները ստեղծում էին իրենց սեփական օրենքները, ունեին սեփական նախադեպեր:

ԱՄՆ-ի իրավունքի աղբյուրներ էին ինչպես ֆեդերալ կոնգրեսի և նահանգների օրենսդիր ժողովների կողմից ընդունված օրենքները, այնպես էլ բազմաթիվ նախադեպերը՝ ձևակերպված քրեական գործերի դատավճիռներով և քաղաքացիական գործերի վճիռներով, որոնք կազմում էին ընդհանուր իրավունքի այսպես կոչված ամերիկյան համակարգը: Իրավաստեղծ գործունեության մեջ հատուկ դեր էր կատարում ԱՄՆ-ի գերագույն դատարանը՝ նրա դոկտրինաները և օրենքների ու նախադեպերի մեկնաբանումները, ըստ էության, համարվում էին պարտադիր ինչպես ֆեդերալ դատարանների, այնպես էլ նահանգների դատարանների համար:

ԱՄՆ-ի ընդհանուր իրավունքը ծայր աստիճան խճճված էր և հակասական: Բավական է հիշել, որ XIX դ. կեսին ԱՄՆ-ում հրապարակվել են ֆեդերալ դատարանների և նահանգների դատարանների շուրջ 4 հազար հատոր որոշումներ և վճիռներ: Ինչ վերաբերում է ստատուտային իրավունքին, որը ձևակերպված էր կոնգրեսի և նահանգների օրենսդրական գործունեությամբ, ապա կապիտալիզմի զարգացման մինչնոնապո - լիստական շրջանում, ընդհանուր իրավունքի համեմատությամբ, այն խաղաց երկրորդական դեր: Բացի այդ, չպետք է մոռանալ, որ ԱՄՆ-ի սահմանադրությունն ամրապնդեց (հոդված VI, կետ 2) ֆեդերալ օրենսդրության գերակայությունը նահանգների օրենսդրության նկատմամբ:

Ի տնորրերություն անգլիական ստատուտային իրավունքի, Միացյալ Նահանգներում իրավունքը նահանգների շրջանակներում հարաբերականորեն համակարգված էր:

ԱՄՆ-ի իրավունքում հատուկ տեղ էին գրավում այսպես կոչված «Սև օրենսգրքերը», որոնք արգելում էին նեգրերին, մասնավորապես, ամուսնանալ սպիտակամորթների հետ, զբաղեցնել հասարակական պաշտոններ և զբաղվել մի շարք մասնագիտական աշխատանքներով՝ թողնելով նրանց պլանտացիաներում և մանուկարարման ոլորտում աշխատելու «առավելությունը», զրկելով տեղաշարժման, ժողովների ազատության, զենք կրելու և մի շարք այլ իրավունքներից:

Իր զարգացման ընթացքում Միացյալ Նահանգների իրավունքը ձեռք է բերում մի շարք առանձնահատկություններ և անզլիական իրավական համակարգից տարբերվում է հետևյալով. 1) մետրոպոլիայից ամերիկյան գաղութների անջատման ժամանակից սկսած ամերիկյան դատավորները դատական պրակտիկան իրականացնում էին անզլիական դատական մարմինների գործունեությունից անկախ, 2) Միացյալ Նահանգների իրավունքը ֆեդերացիայում և նահանգներում տարբեր կերպ էր զարգանում (օրենսդրության և դատավորության դուալիզմի պատճառով), 3) օրենսդրությունն իր ազդեցությունն ունեցավ իրավունքի ձևավորման և զարգացման վրա շատ ավելի վաղ և մեծ չափով, քան Անզլիայում:

Իրավաբանական նախադեպի հետ մեկտեղ, Միացյալ Նահանգներում (ինչպես և Անզլիայում) զարգանում էր ստատուտային իրավունքը, որը ստեղծվել էր ֆեդերալ Կոնգրեսի և, զլխավորապես՝ նահանգների օրենսդիր մարմինների կողմից: Այս ոլորտում ևս նկատվում էին կարգավորման և համակարգման միտումներ: ործնականում դա հանգեցրեց երկու տեսակի օրենքների ստեղծմանը: Դրանցից առաջինը կազմում էր, այսպես կոչված, «համախմբման» խումբը, որը պարունակում էր միայն օրենքներ (ֆեդերալ կամ նահանգների) և, որը կարծես թե լրացնում էր ընդհանուր իրավունքը: Այս խմբում նորները համակարգված էին ոչ թե ըստ առարկայի հատկանիշի, այլ այբբենական կարգով: Երկրորդ խումբը (կամ օրենքների տեսակը) կազմում էին օրենսգրքերը, որոնք կազմվել էին Եվրոպայում ձևավորված համակարգման սկզբունքների ազդեցության ներքո: XIX դ. սկզբին անզլիացի հայտնի իրավաբան Բենտամն ԱՄՆ-ի կառավարությանն առաջարկեց մշակել ԱՄՆ-ի քրեական օրենսգրքի նախագիծ: Անհրաժեշտ է նշել ամերիկյան իրավաբան Ֆիլդի մեծ դերը Միացյալ Նահանգների իրավունքի համակարգման գործում: Նա XIX դ. կեսին նախապատրաստեց քրեական, քրեական-դատավարության, քաղաքացիական և քաղաքացիական - դատավարության օրենսգրքերի նախագծերը:

ԱՄՆ-ի օրենսգրքերում օրենսդիրը մտադիր էր արտահայտել միայն այն նորը, որը դատական պրակտիկայի ընթացքում արդեն անցել էր փորձության շրջանը, մինչդեռ իրավունքի մայրցամաքային համակարգում օրենսդրության համակարգումը համարվում էր նոր իրավունք ձևավորող կարևորագույն ակտ: Օրենքը Միացյալ Նահանգներում (ինչպես և Մեծ Բրիտանիայում) միայն այն ժամանակ էր ձեռք բերում կայունություն և կենսունակություն, երբ ստանում էր դատական դրական մեկնաբանում և հաստատվում էր դատական պրակտիկայի կողմից:

Այստեղից հասկանալի է դառնում ԱՄՆ-ի գերագույն դատարանի առաջատար դերը՝ օրենքների սահմանադրական լինելու վերաբերյալ հար-

ցերի լուծման գործում:

ԱՄՆ-ի իրավական համակարգն ընդգրկում էր իրավունքի այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են քաղաքացիականը, քրեականը, դատավարարականը, առևտրականը, բանկայինը, հարկայինը և այլն:

92

Պետական իրավունք: ԱՄՆ-ի ազգային-իրավական համակարգի գլխավոր բաղադրիչ մասը պետական իրավունքն է, որն իրենից ներկայացնում էր պետական իշխանության իրականացման ընթացքում առաջացող հարաբերությունները կարգավորող նորմերի ամբողջություն: Դա առաջին հերթին նշանակում է, որ պետա-իրավական կարգավորման ոլորտի մեջ մտնում է այնպիսի կարևորագույն իրավական ինստիտուտ, ինչպիսին է պետական իշխանության մարմինների ձևավորման կանոնների համակարգը, այսինքն՝ ընտրական համակարգը:

ԱՄՆ-ում ամբողջ երկրի համար միասնական ընտրական իրավունքը և ընտրական համակարգը սահմանադրությամբ ամրագրված չէին: Սահմանադրությամբ այդ հարցի լուծումը վերազրկում էր նահանգների իրավասությանը: Իսկ առանձին նահանգների սահմանադրությունները նախատեսում էին բազմատեսակ ընտրական ցենզեր, որոնք սահմանափակում էին պետության կառավարմանը ժողովրդական լայն զանգվածների մասնակցությունը:

ԱՄՆ-ի քաղաքական շրջաններում բազմիցս քննարկման է ենթարկվել տարիքային ընտրական ցենզի հարցը: Իր ժամանակ նախագահ Դ. Էյզենհաուերը կոչ արեց Կոնգրեսին սահմանադրության մեջ կատարել ուղղում՝ ընտրական տարիքը մինչև 18 տարեկան իջեցնելու վերաբերյալ: Բայց այդ առաջարկությունն ընդունվեց միայն որոշ նահանգներում: Մնացած նահանգներում քվեարկությունն անցկացվում էր 21 տարին բուրած անձանց մասնակցությամբ:

ԱՄՆ-ում ֆեդերալ ընտրությունների ընտրարշավը կարելի է բաժանել երկու փուլի. առաջինի ժամանակ որոշվում էին ընտրովի պաշտոնների թեկնածուները, երկրորդի ժամանակ առաջադրված թեկնածուների համար անցկացվում էր բուն քվեարկությունը: Քանի որ առաջին փուլն իր ընթացակարգով մնան էր երկրորդին, այն սկսեցին անվանել առաջնային ընտրություններ (պրայմերիզ), որը, ըստ էության, ընտրություն չէր հանդիսանում (ինչպես օրինակ՝ Ֆրանսիայում), այլ իրենից ներկայացնում էր հասարակական կարծիքի բացահայտման յուրահատուկ ձև:

Առաջնային ընտրությունների կարգն առաջին անգամ օգտագործվեց 1904 թ. Ֆլորիդայում և շուտով տարածվեց ամբողջ երկրում: Ոյություն ունեւր առաջնային ընտրությունների երկու տիպ՝ բաց, որին կարող էին մասնակցել ցանկացած կուսակցության կողմնակիցները, և փակ, որին մաս-

նակցում էին որևէ մեկ կուսակցության անդամ զրանցված ընտրողները:

XIX դ, երկրորդ կեսը նշանավորվեց ԱՄՆ-ի սենատում ուղղակի ընտրություններ սահմանելու ակտիվ պայքարով:

1907 թ. ընդունվեց օրենք, որն արգելում էր միություններին (կորպորացիաներին) գումարներ մուծել համազգային ընտրական արշավների անցկացման նպատակով ստեղծվող կուսակցական ֆոնդերին: Սակայն այդ օրենքը հեշտորեն շրջանցում էին խոշոր կորպորացիաների սեփականատերերը, որոնք մուծումներ էին կատարում հանրապետականների կանդիդատների օգտին ոչ թե իրենց ընկերությունների անունից, այլ՝ անձամբ, որպես քաղաքացիներ:

Ամբողջությամբ բնութագրելով ԱՄՆ-ի պետական իրավունքը, կարող ենք նշել, որ այն որպես ազգային իրավական համակարգի ինքնուրույն ճյուղ, հանդիսանում էր շատ բարդ համակարգ: Դա պայմանավորված էր ամենից առաջ ԱՄՆ-ի պետական կառուցվածքի ֆեդերատիվ ձևով:

Քաղաքացիական իրավունք: Քննարկվող ժամանակահատվածում ԱՄՆ-ում նկատվում էր քաղաքացիա-իրավական նորմերի բազմազանությունը, նույնանման ինստիտուտների բախում: Առքուվաճառքի, փոխադրման և ապահովագրության պայմանագրերը, արժեթղթերի գործառնությունները, բաժնետիրական ընկերությունների իրավական կարգավիճակը կարգավորվում էին բացարձակապես նահանգների ընդհանուր իրավունքով: Տարածքային մոնոպոլիստական խմբավորումները զգուշանալով պահպանում էին իրենց կալվածքները մրցակիցներից:

Զարգացած կապիտալիստական տնտեսության օբյեկտիվ պահանջները, այնուամենայնիվ, անհրաժեշտություն էին համայնում մասնավոր իրավունքի միասնությունը: Այսպես, 1870 թ. ընդունվեց ֆեդերալ օրենք արտոնագրերի և հայտնագործությունների մասին: ԱՄՆ-ի հայտնի իրավաբան Դ. Ֆիլդը մշակեց Նյու-Յորք նահանգի քաղաքացիական օրենսգրքի նախագիծ: Դա քաղաքացիական իրավունքի բոլոր ճյուղերի համախմբման առաջին փորձն էր (ինչպես ընդհանուր իրավունքի, այնպես էլ «արդարության դատի»): Սակայն տվյալ առաջարկությունը քննադատվեց ընդդիմության կողմից: 1879 թ. նահանգապետը վետո դրեց այդ օրինագծի վրա (չնայած որ օրենսդիր ժողովը հավանություն էր տվել դրան):

Այնուամենայնիվ, առևտրական գործունեության պահանջը համառոտեց թելադրում էր իրավական միասնության ստեղծման գաղափար: Այդ պատճառով 1889 թ. Ֆիլդի գլխավորությամբ ստեղծվեց հատուկ կոմիտե:

¹ Мишин А.А., Государственное право США, М. 1973, т. 9: 10:

² Громаков В.С., История государства и права США (1870-1917гг.), Ростов 1973, т. 80:

Այն արդյունավետ աշխատանք կատարեց հատկապես առևտրային իրավունքի բնագավառում:

1895 թ. Դետրոյտում կայացավ կոնֆերանս, որտեղ որոշում ընդունվեց շրջանառու փաստաթղթերը կարգավորող իրական նորմերի մասին: Երկու տարի անց, շրջանառու փաստաթղթերի վերաբերյալ լույս տեսավ այդպիսի միատեսակ օրենք: Այնուհետև Ֆիլդի կոմիտեն ներկայացրեց միատեսակ օրենքի օրինակ առքուվաճառքի մասին:

Սակայն համապատասխան ակտերի հաստատումը նահանգների կողմից ընթանում էր չափազանց դանդաղ: Այսպես, 1913 թ. նրանցից միայն 12-ը հավանություն տվեցին օրենքներին:

Քաղաքացիական իրավունքի ճյուղում հիմնական փոփոխությունն առաջացավ մոնոպոլիստական կապիտալի կազմակերպա-իրավական ձևավորման և քաղաքացիա-իրավական հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունից:

ԱՄՆ-ում մոնոպոլիաների կազմավորման համար առաջին իրավական ձևը հանդիսացավ ընկերության պայմանագիրը: Ընկերությունը ստորաբաժանվում էր կորպորացիաների և ֆիրմաների:

Հետագայում մոնոպոլիստական միավորումների հիմնական կազմակերպա-իրավական ձևը դառնում են տրեստները:

Միանգամայն հասկանալի է, որ խոշոր մոնոպոլիաները, տիրապետելով վերահսկողական փաթեթին, ղեկավարում էին իրենց հետ կապված ձեռնարկություններն ու բաժնետիրական ընկերությունները: Կարևորագույն հարցերի լուծման ժամանակ վերջին խոսքը պատկանում էր արդյունաբերական և ֆինանսական կապիտալի մագնատներին:

ԱՄՆ-ի պարտավորական իրավունքի բնագավառում ձևականորեն ամրագրված էր պայմանագրի ազատության և անխախտելիության սկզբունքը:

ԱՄՆ-ի քաղաքացիական իրավունքին հայտնի էր նաև ժառանգման ինստիտուտը: Ժառանգումը կարող էր լինել ըստ օրենքի և ըստ կտակի: Ըստ օրենքի ժառանգումն իրականացնելիս, ինչպես անշարժ, այնպես էլ շարժական գույքը բաշխվում էր այնպես, որ 1/3 մասը ժառանգում էր ամուսինը, իսկ մնացած ողջ գույքը բաշխվում էր երեխաների միջև հավասար չափով: Ինչպես Անգլիայում, այնպես էլ ԱՄՆ-ում ընդունված էր կտակային կարգադրությունների լիակատար ազատությունը:

Քրեական իրավունք և դատավարություն: XVIIIդ. վերջի և XIXդ. սկզբի ամերիկյան քաղաքական առաջնորդները, հանդես գալով անգլիական քրեա-իրավական ուսմունքի և դատավարության բնագավառում առաջադեմ ինստիտուտների օգտին (նկատի է առնվում, օրինակ՝ Երդվյալների-

դատարանը, «Habeas Corpus Act»-ը), միաժամանակ բողոքում էին միապետական իրավական ժառանգության դեմ՝ վստելով ինկվիզիցիոն քրեական դատավարության հիմնական դրույթները:

ԱՄՆ-ի քրեական իրավունքը հիմնականում ընդօրինակեց անգլիական հանցավոր արարքների դասակարգման համակարգը՝ դավաճանություն, ծանր քրեական հանցագործություններ, պատժելի զանցանքներ:

ԱՄՆ-ի քրեական իրավունքի հիմնական աղբյուրն էր ընդհանուր իրավունքը, որը պահպանել էր անգլիական բազմաթիվ նախադեպերը: Եյսպես օրինակ, գործարարների դեմ պայքարի ժամանակ ԱՄՆ-ի դատական պրակտիկայում լայնորեն կիրառվել է «հանցավոր դավադրության դուկտիվան», որն անգլիական ընդհանուր իրավունքում ձևավորվել էր դեռևս սիջնադարյան ժամանակաշրջանում:

ԱՄՆ-ի քրեական օրենսդրությունը նույնպես որոշ չափով վերաբառադրում էր անգլիական բնօրինակ իրավունքը Քրեա-իրավական նորմերը հիմնականում հրապարակվում էին նահանգների կողմից: Ֆեդերալ քրեական օրենսդրությունն ուներ գործողության սահմանափակ ոլորտ. այն լինողրկում էր դավաճանությունը, դրամանենգությունը, ծովահենությունը, սիջազգային իրավունքի նորմերը խախտելու համար սահմանում էր պատասխանատվություն և այլն:

Ֆեդերալ օրենսդրության պրակտիկայում ստեղծվեցին օրենքներ, որոնք բացահայտ հակասում էին անկախության Հռչակագրի սկզբունքներին: Օրինակ, 1798 թ. հուլիսի 14-ին ընդունվեց օրենք խռովության սադրանքների մասին, որը կառավարությանը քննադատելու համար նախատեսում էր տուգանք՝ մինչև 5 հազար դոլար կամ ազատազրկում՝ մինչև 5 տարի ժամանակով:

Համակարգված քրեական օրենսդրություն այդ ժամանակ ունեին մի քանի նահանգներ (Նյու-Հեմփշիրի 1801թ. օրենսգիրքը, Դելավերի 1852 թ. օրենսգիրքը, Կալիֆոռնիայի 1872 թ. օրենսգիրքը և այլն): Ի տարբերություն անգլիական քրեական իրավունքի, ԱՄՆ-ում քրեա-իրավական նորմերը նախատեսում էին ավելի մեղմ պատժամիջոցներ: Բայց ԱՄՆ-ի իրավունքում ամրագրվեց պատիժներն ի մի գումարելու սկզբունքը, որի հետևանքով հաճախ դատավճիռներով սահմանվում էր ազատազրկում մինչև 99 տարի ժամանակով: Ավելի դաժան պատժի ենթարկվում էր մեզրբնակչությունը: Նրանց նկատմամբ շարունակվում էին կիրառվել արտադատարանական հալածանքները, այսպես կոչված «Լինչի դատարանը»:

1909թ. ընդունվեց ֆեդերալ քրեական օրենսգիրքը, որը պատասխանատվություն էր նախատեսում պետական, պաշտոնական հանցագործությունների, վալյուտային օրինախախտումների, դրամանենգության, ծո-

վահեճության, թմրադեղերի առևտրի, մարդկանց առևանգման և այլ օրինախախտումների դեպքերում:

Քրեական օրենսդրությամբ մասին (ինչպես մահանգների, այնպես էլ ֆեդերալ) ընդհանուր առմամբ կարող ենք նշել, որ այն աչքի էր ընկնում իրավական նորմերի բազմազանությանը, համակարգված չլինելով, ընդհանուր և հատուկ մասերի բացակայությամբ, հնացած և երբեմն անհեթեթ ու իրար հակասող կարգազրեղի առկայությամբ և այլն:

Քրեական-դատավարության իրավունքը որպես իրավունքի ճյուղ, սերտորեն կապված էր քրեական իրավունքի հետ: ԱՄՆ-ի պայմաններում այն հաճախ միախառնվում էր քրեական իրավունքի հետ և, ընդհանուր առմամբ, ուներ վերջինիս բնորոշ կառուցվածքը: Այն նույնպես բաժանված էր գրված և չգրված նորմերի: Նրա բովանդակությունը որոշվում էր ինչպես ֆեդերալ իրավունքով, այնպես էլ մահանգների նորմատիվային ակտերով:

Ֆեդերալ քրեական դատավարության օրենսդրության հիմնական աղբյուրը սահմանադրությունն էր:

Հատուկ նշանակություն ուներ 1911 թ. ընդունված ֆեդերալ «Դատական օրենսգիրքը», որը հիմնական հարցերում կարգավորում էր ԱՄՆ-ի արդարադատության մարմինների գործունեությունը:

1787թ. սահմանադրությունը և Իրավունքների մասին կողակն ամրագրեցին անգլիական իրավունքից փոխառված «Habeas Corpus Act»-ը և երդվյալների դատարանը: Երդվյալները որոշում են մեղավորության հարցը և, եթե ամբաստանյալն իրեն ճանաչում էր մեղավոր, ապա երդվյալներից վերդիկտ (վճիռ) չէր պահանջվում:

1679թ. Անգլիայում ընդունված «Habeas Corpus Act»-ը նախատեսում էր մեղադրյալի համար մի շարք դատավարական երաշխիքներ:

Մեղադրյալի պաշտպանության իրավունքը ձևակերպված է սահմանադրության VI ուղղմամբ մեջ, որը մեղադրյալին փաստաբանի ծառայությունից օգտվելու իրավունք է տալիս:

Քրեական դատավարության սահմանադրական սկզբունքները ձևականորեն տարածվում էին բոլոր քաղաքացիների վրա: Դատավարության ընթացքում կողմերը իրավահավասար էին: Դատավորները պետք է լինեին անաչառ և անկողմնակալ:

34 Աշխատանքային և սոցիալական օրենսդրությունը: Քննարկվող ժամանակշրջանում իրավունքի այս կամ այն ճյուղի ձևավորմանն ու զարգացմանը զուգահեռ ստեղծվում էին նորմեր, որոնք կարգավորում էին աշխատանքային իրավահարաբերությունները, նպաստում բանվորական միությունների ստեղծմանը: 1787 թ. սահմանադրությունը չէր կարգավորում աշխատանքային հարաբերությունները, բայց որոշ ձեռնարկությունների իրավունք էր վերապահում կարգավորել աշխատանքը, եթե վերջին-

ներս զբաղվում էին միջնահանգային առևտրային գործունեությամբ:

ԱՄՆ-ում բանվորներն անընդհատ պայքար էին մղում արհմիությունների կազմավորման և իրենց օրինական շահերի պաշտպանության համար: Դատական պրակտիկայում մշակվեց այն գաղափարը, ըստ որի անօրինակացում էին հասարակում կազմակերպված գործադուլները և այն արհմիությունների գործունեությունը, որոնք օրինականությունը պաշտպանում էին ոչ թե սեփական այլ ուրիշ միջոցներով: Այդպիսի որոշում կայացրեց Մասաչուսեթսի դատարանը 1842 թ.՝

Քաղաքացիական պատերազմից հետո ԱՄՆ-ի մի շարք մահանգներում ստեղծվեցին հատուկ օրենքներ, որոնք բանտարկություն և տուգանքներ էին նախատեսում երկաթգծի աշխատանքները վնասելու ~~խնդրելու~~ նաև գործադուլներ կազմակերպելու և դրդելու համար:

Ամերիկյան ձեռնարկատերերը կազմակերպված բանվորական շարժման դեմ պայքարում օգտագործում էին «պայմանագրի ազատությունը», այսինքն՝ բանվորների ճնշման պայմանագրային մեթոդները: Այսպես, XIX դ. վերջում, XX դ. սկզբում լայն տարածում գտան «գեղին շան» պայմանագրերը, որոնց համաձայն բանվորը, ընդունվելով աշխատանքի, նախօրոք հրաժարվում էր արհմիություններին և գործադուլներին մասնակցելուց: Այս պայմանները խախտելու դեպքում բանվորը հեռացվում էր աշխատանքից: Այսպիսի «պայմանագրային» պրակտիկան Կոնգրեսը ստիպված էր արգելել հատուկ օրենքով (չնայած ԱՄՆ-ի գերագույն դատարանը Կոնգրեսի որոշումը համարեց ոչ սահմանադրական):

XIX դ. երկրորդ կեսում և XX դ. սկզբում, երկարատև ու համառ պայքարից հետո աշխատավոր զանգվածը հասավ նրան, որ ընդունվեցին օրենքներ՝ կանանց ու երեխաների աշխատանքի վերաբերյալ: 1886 թ. Ֆեդերալ օրենքը սահմանեց 8-ժամյա աշխատանքային օր՝ պետական փոքրաթիվ ձեռնարկություններում աշխատողների համար: Նույն թվականին Նյու-Յորքում ստեղծվեց աշխատանքային վեճերը կարգավորող արբիտրաժ: 1900 թ. այդպիսի արբիտրներ գոյություն ունեին արդեն 14 նահանգներում: 1913 թ. ստեղծվեց աշխատանքի ֆեդերալ նախարարությունը, որին զուգահեռ նախատեսվում էր ստեղծել 10 միջնորդներից բաղկացած հաշտարար ծառայություն:

1902 թ. Մերիլենդ նահանգում ընդունվեց օրենք, որի համաձայն աշխատանքի ժամանակ վնաս ստացած աշխատողը պետք է ստանար փոխհատուցում: Համանման ակտեր ընդունվեցին նաև Մոնթանում (1909 թ.) և Նյու-Յորքում (1910 թ.): Սակայն այդ ակտերը գերագույն դատարանը համարեց հակասահմանադրական և անհիմն:

Աշխատավոր զանգվածի անընդհատ ու հետևողական պայքարը՝ իր ի-

¹История государства и права зарубежных стран, ч. 2, под ред. Жидкова О.А., Крашенинниковой Н.А., М., 1991, т. 153:

րավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար, նպաստում էր աշխատանքային օրենսդրության կատարելագործմանն ու զարգացմանը:

ԱՄՆ-ում, ինչպես իրավունքի մյուս ճյուղերը, աշխատանքային իրավունքը նույնպես ժամանակ առ ժամանակ ենթարկվեց բազմաթիվ փոփոխությունների:

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐ ԱՎՈՒՆՔԸ

1. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Իսպանական և պորտուգալական գաղութային նվաճումները: Իսպանիայի և Պորտուգալիայի գաղութային նվաճումներն Ամերիկայում սկիզբ են առնում XV դ. վերջից և XVI դ. սկզբից: Չմտած այդ նվաճումներն իրենցից ներկայացնում էին նախնական կապիտալի կուտակում, այնուհանդերձ իրականացվում էին բացառապես ռազմա-ֆեոդալական մեթոդներով: Կաղութներում հողը պաշտոնապես համարվում էր միապետի սեփականությունը: XVI դարից սկսած այն դառնում է գալութարարների ավարտ: Լայն տարածում ստացավ Էնկոմիենդի համակարգը, որի դեպքում հնդիկների համայնքները, որոնք գտնվում էին գրաված տարածքներում, փոխանցվում էին լատիֆունդիստ-էնկոմիենդերների խնամակալությանը: Էնկոմիենդան իրենից ներկայացնում էր հնդիկների կիսաճորտային աշխատանքի տարատեսակ՝ հողատեր ֆեոդալի համար: XVIII դ., նորածին կապիտալիստական հարաբերությունների ազդեցության տակ, էնկոմիենդը փոխարինվում է շահագործման նոր ձևով՝ պեոնաժով, որը հիմնվում էր պարտքի համձանության վրա: Այդ ժամանակահատվածում ֆեոդալները գաղութներում դարձան իրենց կալվածքների բացարձակ տերերը: Հնդիկները, որոնք զրկված էին հողից, գտնվում էին մշտական պարտքի տակ:

Լատինական Ամերիկայում գաղութային վարչակարգը ձևավորվում էր Իսպանիայի և Պորտուգալիայի կողմից զավթողական քաղաքականության հետևանքով տարածքների ընդլայնմանը և դասակարգային ու սոցիալական այլ հակասությունների սրմանը զուգահեռ:

Ամերիկայում Իսպանիայի տիրապետության 300 տարիների ընթացքում կազմակերպվեց այն ժամանակվա համար ամենակենտրոնացված կառավարման համակարգը: Այդ համակարգի վերևում կանգնած էր իսպանական թագավորը, բայց, փաստորեն, կառավարումը գաղութներում իրագործում էր Առևտրական պալատը, իսկ 1524 թվականից «Հնդկաստանի» գործերով զբաղվող Խորհուրդը: Խորհուրդը հրապարակում էր գաղութային օրենքներ,

նշանակում էր աստիճանավորներին: Այն գաղութների բոլոր դատարանների նկատմամբ համարվում էր վերադաս ատյան:

Գերագույն իշխանությունը բուն Ամերիկայում իրագործում էին փոխ-քաղաքավորները, որոնք մարմնավորում էին իսպանական քաղաքությունը: XVIII դ. վերջին Լատինական Ամերիկայում ստեղծվեցին չորս փոխ-քաղաքավորություններ՝ Նոր Իսպանիա (մայրաքաղաք Մեխիկո), Նոր բանադա (Բոգոտա), Պերու (Լիմա), Ռիոդե լա-Պլատա (Բուենոս-Այրես): Փոխքաղաքավորները ղեկավարում էին ռազմական ուժերը, հրատարակում էին տեղական օրենքները, բաշխում էին հողերն իսպանական ֆեոդալների միջև, հսկում հարկահավաքման աշխատանքները:

Գաղութները բաժանվում էին նահանգների, որտեղ վարչակարգի, դատարանի և եկեղեցու ղեկավարությունն իրագործում էին նահանգապետները:

Լատինական Ամերիկայի կառավարման բարդ ապարատը բացառապես բյուրոկրատական էր: Խիստ կենտրոնացումը աստիճանավորներին չէր խանգարում ինքնակամություն և անօրինություն դրսևորել: Իսպանական կառավարությունը խստորեն հետևում էր գաղութների բնակչության ապրելաձևին, մշակում բազմաթիվ օրենսդրական ակտեր: 1680 թ. հրատարակվեց «Թագավորության օրենքների» ժողովածուն (9 գիրք և 6377 օրենք), որը գաղութային իրավունքի պատմության մեջ առաջին պաշտոնական ժողովածուն էր: Գաղութային օրենսդրությունն ամրապնդեց հողի սեփականության ֆեոդալական համակարգը, և հասարակության շերտավորումը: Այդ շերտավորումը գաղութարարներին օժտում էր ֆեոդալական առավելություններով, իսկ տեղի բնակչությանը՝ հնդիկներին, նեգրերին, մուլաթներին և մեթիսներին, զրկում շատ ու շատ իրավունքներից: Բնորոշ էր նաև այն, որ կրեոլները, որոնք կազմում էին տեղի ֆեոդալական վերնախավի զգալի մասը, ավելի ցածր աստիճանի էին կանգնած, քան բուն Իսպանիայում ծնվածները:

Ֆեոդալական տիրապետությունը քաղաքական և իրավական ինստիտուտների գաղութներում չէր կարող խանգարել բուրժուական հարաբերությունների զարգացմանը: Չնայած բազմաթիվ արգելքների և սահմանափակումների, գաղութներում աստիճանաբար զարգանում էին արդյունաբերությունն ու առևտուրը: XVIIIդ. երկրորդ կեսին Լատինական Ամերիկայում արթնացավ ազգային ինքնագիտակցությունը, որը կապված էր ԱՄՆ-ի ազատագրական պայքարի հետ: Մետրոպոլիայի քաղաքականությունն առաջացնում էր լայն զանգվածների դժգոհությունը: Աշխատավոր ժողովուրդը՝ հնդիկները, մեթիսները, մուլաթները, նեգրերը տառապում էին դաժան շահագործումից, ռասայական և քաղաքական անհավասարությունից: Տեղի բուրժուազիան, գաղութային մտավորականությունը մույմպես

դժգոհում էին գաղութային ռեժիմից, տնտեսական և քաղաքական հետամնացությունից:

XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին մի կողմից գաղութների բնակչության, մյուս կողմից Իսպանիայի և Պորտուգալիայի իշխող շրջանների միջև հակասությունները խիստ սրվեցին: Եթե նախկինում աշխատավորության ելույթները կրում էին տարերային բնույթ, ապա XIX դ. սկզբին ազգային շարժումը դարձավ ավելի նպաստակալաց և խնդիր ուրեց տալով իսպանական գաղութատիրությունը Այս պայքարում կրեոլներն ունեին առավելություն և ղեկավարում էին այն:

Գաղութներում ազատագրական պայքարի վրա մեծ ազդեցություն ունեցավ XVIII դ. ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը: Այդ ժամանակ, չնայած բազմաթիվ արդյունքների. հասարակության առաջադեմ մասի մոտ տարածվեց ֆրանսիական հեղափոխականների և լուսավորիչների գրականությունը:

1806 թ. ազատագրական պայքարի նշանավոր ներկայացուցիչ վենեսուելացի Ֆ. Միրանդան, որը ֆրանսիական հեղափոխության մասնակից էր, սկսեց զինված պայքարը իսպանական լծի դեմ: Այն ավարտվեց անհաջողությամբ: Լատինական Ամերիկայի անկախության համար պատերազմը սկսվեց Նապոլեոնի զորքերի՝ Իսպանիա ներխուժելուց հետո: 1810 թ. սկսվեցին հակաիսպանական ելույթները Կարակասում, Բուենոս-Այրեսում, Բոգոտայում և այլուր:

Հակագաղութային պատերազմների ընթացքում, որը բաժանվում էր երկու էտապի (1810-1815 թթ. և 1816-1826 թթ.) ստեղծվեցին կառավարական խումտաներ, որոնք ղեկավարում էին հակաիսպանական շարժումը և ի հայտ եկան այնպիսի տաղանդավոր ռազմական գործիչներ, ինչպիսիք էին Ս. Բոլիվարը, Խ. Սան-Մարտինը, Խ. Արտիգասը և թրիչներ: Պայքարի ընթացքում հայրենասերները մշակեցին քաղաքական իշխանության մոր ձևեր, որոնք փոխարինեցին հին գաղութային կառավարմանը: Ազատագրական պատերազմի հաջողությունների հետ միասին, հայրենասիրական շրջանները հռչակեցին առանձին գաղութների անկախությունը և հաստատեցին առաջին սահմանադրական փաստաթղթերը: Ազատագրական պատերազմի ավարտին իսպանական և պորտուգալական նախկին գաղութների փոխարեն առաջացան 10 անկախ պետություններ՝ Արգենտինա, Բոլիվիա, Բրազիլիա, Մեծ Կոլումբիա, Մեքսիկա, Պարագվայ, Պերու, Կենտրոնական Ամերիկայի Ֆեդերացիա, Չիլի, Ուրուգվայ:

Այսպիսով, իսպանական բոլոր գաղութները (բացառությամբ Կուբայի և Պուերտո-Ռիկոյի) դարձան քաղաքականապես ինքնուրույն պետություններ:

Լատինական Ամերիկայի անկախության համար պատերազմը բուրժուական հեղափոխության յուրօրինակ ձև էր: Այն հանդես եկավ որպես գաղութատիրության դեմ ուղղված համազգային շարժում: Ինքնուրույն պետությունների ստեղծումը և գաղութային ռեժիմի անկումը նշանակում էր ֆեոդալական ուժերի թուլացում և նոր կապիտալիստական հարաբերությունների զարգացում:

Դեռ պատերազմի ընթացքում, նոր պետությունների գոյության առաջին տարիներին, բուրժուա-ազնվականական իշխանությունները ստիպված էին անցկացնել հակաֆեոդալական բնույթի վերափոխումներ: Շատ երկրներում արգելվեց ստրկավաճառությունը (վերացվեց ստրկությունը): Բուրժուական բնույթ էր կրում ֆեոդալական տիտղոսների, առևտրական և այլ ֆեոդալական մենաշնորհների վերացումը: Հին գաղութային ապարատի լուծարման հետ լուծարվեցին նաև ֆեոդալական կարգերին բնորոշ շատ ինստիտուտներ՝ բյուրոկրատական կենտրոնացումը, աստիճանավորների քաղաքական անպատասխանատվությունը, ինկվիզիցիոն դատարանները և այլն: Նորածին պետությունների քաղաքական պրակտիկայում տեղ էին գտնում նոր բուրժուա-դեմոկրատական և իրավական ինստիտուտները՝ պետական մարմինների ընտրովիությունը, քաղաքացիների քաղաքական և անձնական իրավունքներն ու ազատությունը, անձի պաշտպանության երաշխիքը և այլն: Սակայն, տարբեր երկրներում անցկացվող այդ վերափոխումները, ոչ մի տեղ չհանգեցրին սոցիալ-տնտեսական, հետևաբար նաև իրավական կառուցվածքի արմատական փոփոխության: Լայն ժողովրդական զանգվածները, որոնք ազատագրական պայքարի հիմնական շարժիչ ուժն էին, պայքարելով կեղեքման և շահագործման դեմ, չունեին դրանց վերացման հստակ ծրագիր: Առանձին երկրներում հնդիկ-գյուղացիների հակաֆեոդալական պահանջներն իրենց հետքը թողեցին հայրենասիրական ուժերի քաղաքական պայքարի վրա: Սակայն այդ պահանջները չէին կարող իրականանալ, քանի որ կաթոլիկ եկեղեցին դիմադրում էր նրանց:

Իշխանության գլուխ կանգնած կալվածատիրական և կղերական ուժերը կարողացան պահպանել իրենց դասային ու սոցիալական արտոնությունները, և, ամենակարևորը, խոշոր հողային կալվածքները: Բուրժուական տարրերը շատ թույլ էին և չէին կարող ինքնուրույն պայքարել բուրժուա-դեմոկրատական ձևափոխումների համար: Նույնիսկ ազատագրական պայքարի ակնամվոր առաջնորդներ (օրինակ՝ Ս. Բոլիվարը) ցուցաբերեցին զգուշություն և անհետևանքություն սոցիալական հարցերի լուծման ժամանակ:

2. ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ, ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լատինական Ամերիկայի առաջին սահմանադրությունները լրում էին բուրժուազիայի առաջադեմ գաղափարներով ազդեցությունը: Առկախ պետությունների կազմավորման ժամանակաբաժանում իշխող ուսմանը կառավարման հանրապետական ձևի հաստատումն էր: Չնայած դրան, սի շարք պետություններում հանրապետական կարգերի հաստատումը տեղիք էր տալիս սուր պայքարի: Օրինակ, Արգենտինայի առաջին սահմանադրությունը, որն ընդունվեց 1819 թ. Սահմանադիր ժողովի կողմից, շրջանցեց կառավարման ձևի հարցը: Եվ միայն 1826 թ. Սահմանադրությունը Արգենտինայում հաստատեց կառավարման հանրապետական ձևը:

Մեքսիկայում, 1821 թ. անկախության հռչակումից հետո, Սահմանադիր ժողովը մտադրություն ուներ հաստատել սահմանադրական միապետություն: Սակայն քաղաքական արկածախնդիր Իտուրբիդեն 1822 թ. կազմակերպեց ռազմական հեղաշրջում և իրեն հայտարարեց կայսր: Ավգուստին I անունով: Միայն Իտուրբիդեի գահազրկումից հետո 1824թ. սահմանադրությունը Մեքսիկան հռչակեց հանրապետություն:

Միապետությունը, երկար ժամանակ պահպանվեց Բրազիլիայում, որտեղ գաղութային լուծը թոթափելու սկսված շարժումը չվերածվեց պորտուգալական միապետության դեմ ուղղված զինված պայքարի: Բրազիլիայում ստեղծված հեղափոխական իրավիճակը և դրա հետևանքները շատ լավ հասկանալով. Պորտուգալիայի թագավորն ինքն էր ձգտում կատարել սահմանադրական շրջանցումներ. նպատակ ունենալով Բրազիլիան հռչակել անկախ պահպանելով միապետական իշխանությունը և հին սոցիալ-տնտեսական կառուցվածքը: Արքայազն Պեդրոն 1822 թ. օգոստոսի 1-ին հրապարակեց Բրազիլիայի անկախության մանիֆեստը, իսկ ինքը հռչակվեց երկրի կայսր: Սահմանադիր ժողովի ցրումից և հանրապետականների շարժման ճնշումից հետո, կայսր Պեդրո I-ը 1824 թ. Բրազիլիայի սահմանադրության մեջ մտցրեց ուղղումներ: Սահմանադրությունը հաստատեց «իշխանության բաժանում», որը պետք է քողարկեր կայսրի ամենագործությունը: Նրան էր պատկանում գործադիր իշխանությունը: Նա էր նշանակում սենատորներին, արձակում պատգամավորների պալատը, նշանակում և ազատում նախարարներին: Կայսրն ուներ վետոյի իրավունք:

Օրենսդիր իշխանությունն իրականացնում էր գլխավոր ասամբլեան: Այն բաղկացած էր սենատից, որի անդամները նշանակվում էին ցմահ և պատգամավորների պալատից, որտեղ ընտրվում էին չորս տարի ժամկե-

տով՝ երկաստիճան ընտրությամբ: ույքային և կրթական բարձր ցենզի պատճառով ընտրություններին կարող էին մասնակցել միայն կալվածատերերը և բուրժուազիայի վերին խավը: Գլխավոր ասամբլեայի իրավունքները խիստ սահմանափակ էին: Սահմանադրությամբ դատավորներն անկախ էին:

Սահմանադրական միապետությունը Բրազիլիայում հեռու էր իսկական բուրժուական դեմոկրատիզմից: Կայսրը, փաստորեն, կառավարում էր միահեծանությանը բնորոշ մեթոդներով: Պետական ապարատը մնում էր հին պորտուգալական աստիճանավորների ձեռքում, երկրում պահպանվում էին ստրկությունը, կալվածատիրական հողատիրությունը, զինվորական և այլ արտոնությունները:

Լատինաամերիկյան սահմանադրությունների կառուցվածքը և բովանդակությունը կրում էին եվրոպական և հյուսիսամերիկյան սահմանադրությունների ազդեցությունը: Մեծ ներգործություն են ունեցել հատկապես 1787 թ. ԱՄՆ-ի սահմանադրությունը և XVIII դ. ֆրանսիական սահմանադրական փաստաթղթերը: Բուրժուական պետական ինստիտուտների (պետական մարմինների ընտրովիությունը, քաղաքական ազատությունները և իրավունքները) փոխադրումը լատինաամերիկյան միջավայր կրում էր մեխանիկական բնույթ, քանի որ ոչ մի լատինաամերիկյան հանրապետությունում անկախության համար մղված պատերազմը սոցիալական կառուցվածքում և իրավա-քաղաքական տրադիցիաներում չբերեց արմատական փոփոխություններ: Այդ պատճառով Լատինական Ամերիկայում բուրժուական սահմանադրությունները կրեցին զգալի փոփոխություններ:

Սահմանադրության միջոցով նոր իշխանության ձևավորման առաջին փորձն արեցին Վենեսուելայի հայրենասերները: 1811 թ. ընդունված սահմանադրությունը շատ դրույթներով նման էր ԱՄՆ-ի սահմանադրությանը: Ֆեդերալ իշխանությունները ստացան պայմանագրեր կնքելու, պատերազմ հայտարարելու, բանակ ու նավատորմ պահելու և այլնի իրավունք: Սահմանադրությունը յուրաքանչյուր զավառին երաշխավորում էր «ինքնիշխանություն, ազատություն և անկախություն» այն բոլոր հարցերում, որոնք անմիջապես ուղղված չէին դաշնությանը:

Ֆեդերալ մարմինները ստեղծվում էին իշխանության բաժանման սկզբունքով: Օրենսդիր իշխանությունն իրականացնում էր երկպալատ Կոնգրեսը (Պալատ և Սենատ), գործադիր իշխանությունը՝ հյուպատոսային կոլեգիան, որը կազմված էր 3 անձից, իսկ դատական իշխանությունը՝ երագույն դատարանը և ստորադաս ատյանները:

Ֆրանսիական սահմանադրական փաստաթղթերի ազդեցության տակ Վենեսուելայի 1811թ. Սահմանադրությունը պարունակում էր մեծ թվով

տղվածներ՝ նվիրված իշխանության կազմակերպման և մարտի իրա-
յունքների ընդհանուր սկզբունքներին: Այն ամրագրեց քաղաքացիների
իմնական ղեմնկրատական իրավունքները, չեղյալ համարեց սզնվա-
յան, զինվորական և եկեղեցական արտոնությունները: Դրա հետ մեկտեղ
սահմանադրությունը լաթոլիկությունը համարեց Վենետիկյան «փակ և
ազատիկ կրոնը»: Ելևելով բնա-իրավական հայեցակարգից և հուսարա-
յական պայմանագրի գաղափարից, սահմանադրությունն անձին երաշ-
տավորում էր «ազատորեն տիրապետել և օգտագործել իր գույքը՝ սյունե-
լի իրավունքները հարգելու պայմանով»¹:

Սահմանադրությունը հռչակում էր բոլոր քաղաքացիների, այլ թվում
սակ մեթիսների և հնդիկների, հավասարությունը:

Այդ առաջադիմական դրույթները, ինչպես և 1811 թ. սահմանադրությու-
նը, ունեին ցուցադրական նշանակություն, դրանց գոյությունը դալարեց-
վեց առաջին Վենետիկյան հանրապետության անկման և իսպանա-
կան բանակի ժամանակավոր հաղթանակի հետ (1812 թ.):

Առաջին սահմանադրությունները երկարատև կյանք չունեցան լատի-
նաամերիկյան մյուս հանրապետություններում: Դա բացատրվում էր քա-
ղաքական կայունության բացակայությամբ, մշտական խռովություննե-
լով և առանձին գավառների անջատողականությամբ:

Լատինաամերիկյան երկրներում XIX դ. 20-ական թթ. վերջերից սկս-
վեց քաղաքական անկայունության պրոցես, որը տևեց երկար ժամանակ:

3. ԼԱՏԻՆԱԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ XIX ԴԱՐՈՒՄ

Քաղաքական կուսակցությունները և կառույցիլիզմը: XIX դ. լատինաա-
մերիկյան պետությունների պատմությունը բնորոշվում է սուր սոցիալ-
քաղաքական պայքարով, որը պայմանավորեց սահմանադրական և պե-
տա-իրավական զարգացման ողջ ընթացքը: Առաջին սահմանադրությու-
նները հռչակեցին բուրժուական հասարակարգի հիմնական սկզբունքները,
որոնցից, սակայն շատ քչերը կյանքում կիրառվեցին:

Բուրժուական վերափոխումների անկատարելությունը, շահագործ-
ման տարբեր ձևերի առկայությունը, ժողովրդական զանգվածների քաղա-
քական և սոցիալական անհավասարությունն արգելք էին հանդիսանում
կապիտալիզմի զարգացմանը և նպաստում կալվածատեր-կղերականնե-
րի ձեռքում իշխանության պահպանմանը:

¹История государства и права зарубежных стран, ч. 2, под ред. Жидкова О.А.,
Крашенинниковой Н.А., М., 1991, т. 2 112:

Արդեն XIX դ. 20-ական թթ. լատինաամերիկյան շատ հանրապետություններում առաջացան մրցակից քաղաքական խմբավորումներ, որոնց հիման վրա կազմավորվեցին երկու ավանդական քաղաքական կուսակցություններ, ընդ որում երկուսն էլ շատ հեռու էին ժողովրդական զանգվածների արմատական շահերն արտահայտելուց: Լատիֆունդիստների և կղերականների գերիշխանությունն օգնեց նրանց այդ կուսակցություններում որոշակի դիրքեր գրավելու և ազդելու քաղաքականության վրա: Լատինաամերիկյան բուրժուազիան այդ ժամանակ շատ թույլ էր և չկարողացավ ստեղծել սեփական քաղաքական կուսակցություններ՝ ինքնուրույն քաղաքական ծրագրով: Անկախության ձեռքբերումից հետո միապետները՝ ունիտարիզմի և բյուրոկրատական կառավարման կողմնակիցները, ստեղծեցին կուսակցություն, որը շատ երկրներում ստացավ «պահպանողական» անունը:

Այդպիսի կուսակցությունը սովորաբար հենարան էր խոշոր կալվածատերերի և կղերականների համար: Հետադիմականներն ամեն կերպ հանդես էին գալիս դեմոկրատական վերափոխումների անցկացման դեմ: Նրանք կողմնակից էին պահպանելու եկեղեցու և բանակի արտոնությունները, որտեղ սովորաբար զբաղեցնում էին բարձր պաշտոններ:

Պետության ֆեդերատիվ կառուցվածքի կողմնակիցները և բյուրոկրատական կառավարման հակառակորդները կազմում էին լիբերալների կուսակցության բջիջը:

Այստեղ նույնպես ավելի ամուր դիրքերում էին լատիֆունդիայի տերերը, որոնք զգալի չափով շահագրգռված էին կապիտալիստական հարաբերությունների զարգացման մեջ: Լիբերալների կուսակցությունում տեղ էին գտել առևտրա-արդյունաբերական տարրերը և մտավորականները, որոնք ձգտում էին բուրժուական վերափոխումների:

Բուրժուազիան Լատինական Ամերիկայի երկրներում չէր պայքարում գոյություն ունեցող տնտեսական և քաղաքական ամբողջ համակարգը վերացնելու համար: Նա պայքար էր մղում միայն առանձին մասնավոր հարցերի (եկեղեցական հողատիրության, ներգաղթման, կրթության և այլն) լուծման համար:

Իշխանության համար մղվող պայքարում բուրժուազիան ձգտում էր օգտագործել ոչ թե գյուղացիական զանգվածային շարժումները, այլ ֆեոդալ-կղերականների հետադիմական մեթոդները (զինված հեղաշրջումներ, դավադրություններ, ընտրական նենգություններ և այլն): Միայն որոշ դեպքերում էին բուրժուազիայի առաջադեմ ներկայացուցիչները բռնում հեղափոխական պայքարի ուղին: Այսպես օրինակ, Մեքսիկայում ռադիկալների ձախ թևը, հենվելով հնդիկների, քաղաքի աղքատ բնակչության և մանր

բուրժուազիայի վրա, 1854 թ. գլխավորեց բուրժուական հեղափոխությունը, իսկ 1857-1860 թթ. պատերազմ սկսեց պահպանողականների դեմ Սակայն այդ հեղափոխությունն ի վերջո հանգեցրեց մի քանի մասնակի հակաֆեոդալական բարեփոխումների: Կուսակցական պայքարը շրջանցում էր ժողովրդի կենսական շահերը:

Կղերականների և կալվածատերերի իշխանությունը կուսակցություններում մեծ ազդեցություն էր գործում ամբողջ քաղաքական կյանքի վրա: Կալվածատիրական հետադիմությունը զգույնորեն դանդաղեցրեց կուսակցական համակարգի զարգացումը, խանգարեց բուրժուական լիբերալիզմի առաջընթացին:

Լատինական Ամերիկայում քաղաքական կուսակցությունները դարձան պառլամենտական համակարգի տարրեր (ինչպես դա տեղի ունեցավ Եվրոպայում):

Լատինական Ամերիկայի պետական և կուսակցական կյանքի ամենայուրահատուկ երևույթներից մեկը կառույցիկվան էր: Այն սերտորեն կապված էր լատիֆունդիզմի և այն արտոնությունների հետ, որոնք պահպանվեցին և զարգացում ստացան նոր հանրապետություններում: Քաղաքական անկայունության պայմաններում յշխանությունը երկրում հաճախ գրավում էին ռազմական բռնապետները՝ կառույցյունները: Նրանք հենվում էին տեղի կալվածատերերի զինված խմբավորումների վրա, ձգտում հսկողություն սահմանել որևէ կուսակցության վրա՝ վերջինիս օգտագործելով իր շահադիտական և ավանտյուրիստական քաղաքականության մեջ: XIX դ. կեսերին կառույցիկվան ամենուրեք դարձավ այն քաղաքական գործիքը, որը խանգարում էր բուրժուական դեմոկրատիայի զարգացմանը և ժողովրդի քաղաքական ակտիվացմանը:

XIXդ. լատինաամերիկյան շատ երկրներում (բացառությամբ Չիլիի) պետական հեղաշրջումները դարձել էին սովորական երևույթ: Անկախության ձեռք բերումից սկսած մինչև առաջին համաշխարհային պատերազմը Լատինական Ամերիկայում տեղի ունեցած 115 հեղաշրջումներն ավարտվեցին խռովարարների հաղթանակով և նախկին կառավարությունների տապալումով: Նոր կառույցյունները գոյություն ունեցող տնտեսական և քաղաքական համակարգում կատարեցին էական նշանակություն չունեցող փոփոխություններ: Եթե նրանք որոշ դեպքերում հանդես էին գալիս բարեփոխումների խոստումներով, ապա դա, ըստ էության, դեմագոգիա էր:

Հեղաշրջում կատարած բռնապետները և նրանց հովանավորող խմբավորումները ձգտում էին հասնել իրենց քաղաքական նպատակներին: Այդ կապակցությամբ նրանք չեղյալ էին հայտարարում նախկինում գործող սահմանադրությունները և մշակում ու ընդունում նորերը:

Այսպես, Էկվադորում XIX դ. փոխվեց 12 սահմանադրություն, Բոլիվիայում՝ 9, Կոլումբիայում՝ 11, Վենեսուելայում՝ 11 և այլն:

Լատինաամերիկյան շատ սահմանադրություններ արտաքինապես պահպանում էին դեմոկրատական ձևը, բայց կառույիլյոյի և կալվածատերերի իշխանության պայմաններում դրանք միայն արտաքին շղարշ էին:

Սահմանադրությունում հաստատված ընտրական սահմանափակումները (գույքային և կրթական ցենզը) բնակչության լայն զանգվածներին զրկում էին ընտրություններին մասնակցելու հնարավորությունից: Փաստորեն ընտրությունների ժամանակ հաղթանակում էին կառավարության թեկնածուները: Այդ պատճառով լատինաամերիկյան հանրապետությունների պառլամենտները, որպես կանոն, գործիք էին դառնում բուրժուազիայի ձեռքում: Ընդդիմադիր կողմը կարող էր հասնել հաղթանակի միայն նոր հեղաշրջման միջոցով:

Կառավարությունն իրավիճակն ամրապնդելու նպատակով կարող էր երկրում հայտարարել հատուկ դրություն, որի ժամանակ վերացվում էին սահմանադրական բոլոր իրավունքներն ու ազատությունները:

Սակայն լատինաամերիկյան հանրապետությունների XIX դ. սահմանադրական պատմությունը չի կարելի դիտել որպես առանձին հետադիմական ուժերի կամքի և շահերի արտացոլում: Նրանցում արտացոլվեցին դասակարգային պայքարի ամբողջ բարդությունը և այդ երկրների սոցիալական զարգացման հակասությունները: Պայքարի արդյունքում առանձին սահմանադրությունների մեջ տեղ գտան այն ժամանակվա համար առաջադեմ դրույթներ, իսկ սահմանադրական փաստաթղթերը դառնում էին կարևոր ուղենշան բուրժուա-դեմոկրատական շարժման ճանապարհին: Առավելապես նշանակալից և կայուն էին Արգենտինայի 1853 թ. և Մեքսիկայի 1857 թ. սահմանադրությունները:

Արգենտինայի 1853 թ. սահմանադրությունը վերջնականապես ձևավորեց երկրի քաղաքական միավորումը, ամրապնդեց պետական կառուցվածքի ֆեդերատիվ ձևը, հռչակեց մի շարք կարևոր դրույթներ, որոնք անհրաժեշտ էին տնտեսության արագ զարգացման համար: Հաստատելով մասնավոր սեփականության անձեռնմխելիության դրույթը, սահմանադրությունն օրինականացրեց լատիֆունդիզմի կիսաֆեոդալական համակարգը, բայց դրա հետ միասին նախատեսվում էր ձեռներեցության ազատությունը, պաշտպանվում էին հեղինակային և ընտրական իրավունքները:

Հետագայում այդ սահմանադրության հիման վրա լիբերալ-բուրժուական որոշ կառավարություններ անցկացրին մի շարք միջոցառումներ, որոնք նպաստեցին կապիտալիստական հարաբերությունների զարգաց-

ման արագացմանը (ազգային բանկի ստեղծումը, արտաքին կապիտալի ներմուծումը, ներգաղթը և այլն):

Մեքսիկայի 1857 թ. սահմանադրությունը մակվել էր բուրժուազիայի և կալվածատերերի ներկայացուցիչների կողմից: Այնտեղ արտացոլվեցին 1854-1857 թթ. բուրժուական հեղափոխության արդյունքները (ստրկության արգելումը, կաթոլիկ եկեղեցու և զինվորականության որոշ արտոնությունների վերացումը, եկեղեցական հողատիրության սահմանափակումը և այլն): Սահմանադրության մեջ տեղ էին գտել բուրժուական ազատության և ազնի անձեռնմխելիության հարցերը, որոնք ունեին առաջադիմական նշանակություն և արտահայտում էին մեքսիկական պետության բուրժուական գործազման միտումները: Բայց հեղափոխական ուժերի աստիճանական մտահանջը հանգեցրեց հետադիմական կալվածատիրական դիրքերի ուժեղացմանը և 1876 թ. Օ.Դիասի արյունալի բռնապետության հաստատմանը: Վերջինս կառավարում էր «զիբերալիզմ» և «սահմանադրություն» կայրախոսերով, բայց, իրականում 1857 թ. սահմանադրությանը զրկեց դեմոկրատական բովանդակությունից:

Մեծ նշանակություն ունեցող դեմոկրատական փոփոխություններ տեղի ունեցան նաև Բրազիլիայում, որտեղ 1888 թ. վերացվեց ստրկությունը, իսկ 1889 թ. տապալվեց սիապետությունը: Այստեղ դեմոկրատական պայքարի ղեկավարները հակված էին հետադիմական ուժերի հետ փոխզիջման գնալու: Դա իր արտահայտումը գտավ Բրազիլիայի 1891 թ. սահմանադրությունում:

Հետադեմ ուժերը, որոնք ունեին ամուր դիրքեր գավառներում և կապված էին օտարերկրյա կապիտալի հետ, ձգտում էին երկրի բաժանմանը և դիմադրում էին ուժեղ կենտրոնացված իշխանության ստեղծմանը: Սահմանադրությունն ամրապնդեց Բրազիլիայի ֆեդերատիվ կառուցվածքը: Ֆեդերացիան ձեռք բերեց արտաքին գործերի վարման, բանակ և նավատորմ պահելու, ներմուծվող ապրանքի վրա մաքսատուրք դնելու, դրամ կտրելու և փոստային ծառայություն իրականացնելու իրավունք: Նահանգները պահպանեցին բոլոր լիազորությունները, որոնք չէին վերաբերում ֆեդերալ իրավասություններին: Յուրաքանչյուր նահանգ ուներ իր սահմանադրությունը, պահպանում էր ներքին կարգը, ստեղծում էր իր պետական մարմինների համակարգը, պահպանում կարևոր արտոնությունները տնտեսական ոլորտում:

Նահանգների այդ իրավունքներն արտահայտում էին կալվածատերերի, բուրժուազիայի և օտարերկրյա ընկերությունների շահերը: Սահմանադրությամբ արգելվում էր միջամտել նահանգների գործերին, բացառությամբ մի շարք դեպքերի (ապստամբությունների ճնշման, կարգ ու կանոնի հաստատման և այլն):

Ֆեդերալ մարմինների կառուցվածքը (նախագահ, երկպալատային կոնգրես, գերագույն դատարան), որը, կարելի է նշել պատճենված էր ԱՄՆ-ի սահմանադրությունից, հենվում էր իշխանությունների բաժանման վրա, ո-

րոնք գործում էին «մերդաշնակ և իրարից անկախ»: Ֆեդերալ մտրություններին կարող էին մասնակցել միայն 21 տարիեկանից բարձր զրագետ տղամարդիկ: Սև համադրությունը հույսկում էր խոսքի, մամուլի, ժողովների ազատություն խնդրագրեր հանձնելու իրավունք և այլն:

1891 թ. սևահամադրությունը նպաստեց արտադրական հարաբերությունների զարգացմանը:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Լատինական Ամերիկայի երկրների ազգիալ-տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցան լիակատար փոփոխություններ, որոնք, ինչ խոսք, նաև օտարերկրյա պետությունների կողմից (հատկապես Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի) կազմակերպված զաղութային նվաճումների հետևանք էին:

Գաղութային նվաճումների մասին վերևում արդեն նշվել է, իսկ ավել լորդ է մեկ անգամ ևս անդրադառնալ այդ խնդրին: Ավելացնենք միայն, որ հիշյալ ժամանակաշրջանում լատինամերիկյան երկրները նկատմամբ առավել ակտիվ սպրեհիվ դիրք բռնեց ԱՄՆ-ը, որն առաջնորդվում էր ԱՄՆ-ի 1823 թ. նախագահ Մոնրոյի առաջ քաշած «Ամերիկան՝ ամերիկացիներին» կարգախոսով:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Լատինական Ամերիկայի երկրներում նոր թափ ստացան գյուղացիական շարժումները, ուժեղացան դեմոկրատական և համազգային ելույթները: Այդ իրավիճակում մի շարք երկրներում բուրժուական կուսակցությունները պայքար մղեցին իշխանության նվաճման համար: այով իշխանության գլուխ. նրանք ձեռնարկեցին մի շարք վերափոխումներ, որոնք, սակայն, մասնակի բնույթ էին կրում:

Այսպես, Արգենտինայում ռադիկալների երկարատև պայքարից հետո ընդունվեց օրենք. համաձայն որի ընտրության իրավունք էին ստանում բոլոր այն քաղաքացիները, որոնք 18 տարեկան էին, ընդ որում ընտրություններին մասնակցելը պարտադիր էր (ընտրության ժամանակ անձնագրում նշումներ էին կատարվում): Դրանով ռադիկալները ձգտում էին ապահովել բնակչության լայն զանգվածների մասնակցությունը և ամրապնդել իրենց քաղաքական դիրքերը:

4. 1910-1917 թթ. ՄԵԶՄԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1917 թ. ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

XXդ. Լատինական Ամերիկայում բուրժուա-դեմոկրատական պայքարի առավել նշանակալի իրադարձությունը դարձավ 1910-1917թթ. Մեքսիկական հեղափոխությունը: Այդ հեղափոխությունը վերջ դրեց ամենադաժան բռնապետությանը՝ Դիասի դիկտատուրային, որը ճնշում էր երկիրը երեք տասնամյակ շարունակ: Դիասի կառավարությունը, արտահայտելով

կալվածատերերի և բուրժուազիայի շահերը, բացահայտորեն դավաճանում էր երկրի ազգային շահերին: Իշխող քաղաքական խմբավորումը՝ սենտիֆիկոսը, գտնում էր, որ երկրի զարգացումը պետք է զնա ոչ թե ներքին վերափոխումների ուղիով, այլ օտարերկրյա կապիտալի ներդրմամբ: Դիասի կառավարությունը լայն հնարավորություններ էր տալիս օտարերկրացիներին և հատկապես ԱՄՆ-ի երկաթուղային ու նավթային մոնոպոլիաներին: Օտարերկրյա կապիտալը բացահայտ կողոպտում էր Մեքսիկայի ազգային հարստությունը: Երկրում տիրապետող դիրք էին զրավում հողատեր-կալվածատերերը: Շարունակվում էր գյուղացիությանը զրկելու քաղաքականությունը:

1883 թ. օրենքի հիման վրա («ԱՆճակ տարածությունների գաղութացման մասին») ստեղծված սահմանագծային ընկերությունները պահանջում էին գյուղացի-հողատերերից ներկայացնել փաստաթղթեր հողի սեփականության վերաբերյալ: Սահմանագծային ընկերությունները պատժիչ ջրկատների օգնությամբ զրավում էին գյուղացիների հողերը և հանձնում կալվածատերերին:

1910 թ. Մեքսիկայում բռնկվեց հեղափոխություն, որի ժամանակ Դիասի դիկտատուրային դեմ դուրս եկան ազգային բուրժուազիայի և լիբերալ կալվածատերերի զգալի ուժերը: Հեղափոխությունն իր զարգացման ընթացքում վերածվեց հակաֆեոդալական և հակաիմպերիալիստական շարժման: Հեղափոխական ուժերը տապալեցին բռնապետական կառավարությունը, լուրջ վնաս հասցրեցին ֆեոդալա-կոերական հետադիմությանը, թուլացրեցին Մեքսիկայում իմպերիալիստական պետությունների դիրքերը:

1917թ. ընդունվեց Մեքսիկայի նոր սահմանադրությունը, որը եղավ 1910-1917 թթ. հեղափոխության արդյունքը և ամրապնդեց ժողովրդական զանգվածների որոշ պահանջները: Այն մինչ այդ գոյություն ունեցող սահմանադրական բոլոր փաստաթղթերից ամենադժոխատականն էր:

Առավել հետաքրքիր են սահմանադրության այն բաժինները, որոնք նվիրված են պետության հիմնական սկզբունքներին, իրավունքի երաշխավորմանը, ինչպես նաև աշխատանքի ու սոցիալական ապահովմանը:

Այստեղ կենտրոնական տեղ էր զբաղեցնում 27-րդ հոդվածը, ըստ որի հողի ու ջրի նկատմամբ սեփականության իրավունքը վերապահվում է պետությանը, որը կարող էր օրենքի սահմաններում այդ իրավունքը փոխանցել մասնավոր անձանց: Ամրագրված է բուրժուական սահմանադրությունների համար ընդհանուր մի սկզբունք, համաձայն որի սեփականության իրավունքի դադարումը կարող էր տեղի ունենալ, եթե դա պահանջում էր հասարակության շահը: Այս դեպքում սեփականատիրոջ վնասը հատուցվելու

էր: Ֆեդերալ կառավարությունը երկրի բնական հարստությունների մշակումը (քացառությամբ մավթի և մի բանի այլ օգտակար հանածոների) կարող էր կոնցեսիայի տեսքով հանձնել մասնավոր անձանց կամ ընկերությունների: Սահմանվեց այն նորմը որ միայն մեքսիկացիները և մեքսիկական ընկերություններն իրավունք ունեն սեփականացնել հողը և ջուրը, ստանալ կոնցեսիա հանքահորերի համար և այլն: Պետությունն իրավունք կարող էր տալ նաև օտարերկրացիներին՝ նրանց մեքսիկացի համարելու պայմանով: Օտարերկրացիներն իրավունք չունեին սեփականացնել հողը և ջուրը 100 կիլոմետր սահմանամերձ և 50 կիլոմետր ծովափնյա գոտիներում:

Սահմանադրությունը հռչակեց սի շաքք հակաֆեոդալական սկզբունքներ: Նախատեսվեց ազրարային ռեֆորմի անցկացում

Պ. Դիասի ժամանակ կատարված հողի բռնագրավումը չեղյալ հայտարարվեց: Համայնքները, որոնք չունեին բավարար քանակությամբ հող, կարող էին ստանալ պետական ֆոնդից: Ֆեդերալ կոնգրեսը և օրենսդիր մարմինները նահանգներում պետք է որոշեին մասնավոր հողային սեփականության առավելագույն չափը, իսկ հայտնաբերված ավելցուկները թույլատրում էին վաճառելու: Անձեռնմխելի էր մանր հողային սեփականությունը (այդպիսին, սահմանադրության համաձայն, համարվում էր այն սեփականությունը, որը կազմում էր 100 հա ջրովի հող): Սահմանադրությամբ կրոնական կազմակերպություններն իրավունք չունեին ձեռք բերել կամ գրավ դնել անշարժ գույք: Այդպիսի ունեցվածքը վերադարձվում էր պետական ֆոնդին:

«Աշխատանքի և սոցիալական ապահովության մասին» բաժինը, որը կազմված էր մեկ, բայց շատ մանրամասն մշակված հոդվածից, իրենից ներկայացնում էր աշխատանքի մասին օրենքների յուրահատուկ հավաքածու: Չմայած նրա դրույթներից շատերը կրում էին ցուցադրական բնույթ, սակայն նման բաժնի առկայությունը սահմանադրության մեջ (որն անսովոր էր բուրժուական պետությանը) նշանակում էր աշխատավոր զանգվածների հաղթանակը Մեքսիկայում:

Սահմանադրությամբ հաստատվեց 8-ժամյա աշխատանքային օր (գիշեր ժամանակ՝ 7 ժամ): Մինչև 16 տարեկան երեխաներին արգելվում է աշխատել վնասակար ու վտանգավոր արտադրամասերում և գիշերային հերթափոխում: 12 տարեկանից ցածր երեխաներին արգելվում էր ընդունել աշխատանքի: Մինչև 16 տարեկան անձինք պետք է աշխատեին 6 ժամից ոչ ավել: Աշխատանքային 6 օրից հետո աշխատավորը, համաձայն սահմանադրության, պետք է ստանար հանգստյան օր, իսկ կանայք ծննդաբերությունից հետո՝ մեկամսյա արձակուրդ աշխատավարձի լրիվ պահպա-

նումով: Նույնաբնույթ և նմանատիպ աշխատանքների համար անկախ սեռից և ազգությունից նախատեսվում էր հավասար աշխատավարձ: Աշխատավարձը չպետք է վճարվեր ապրանքի, չեկերի և ստացականների տեսքով:

Սահմանադրությունը ճանաչեց բանվորների արհմիությունների մեջ միավորվելու իրավունքը, օրինականացրեց բանվորների կողմից գործադուլ անցկացնելու իրավունքը: Գործադուլները համարվում էին օրինական այն դեպքում, «երբ նպատակ ունեին հասնելու արտադրության տարբեր գործոնների հավասարակշռությանը՝ հավասարեցնելով աշխատանքի իրավունքները կապիտալի իրավունքների հետ»: Սահմանադրությունն անօրինական էր համարում այն գործադուլները, որոնք վտանգ էին սպառնում բուրժուական կարգերին:

Սահմանադրությունը հռչակեց քաղաքացիների քաղաքական իրավունքներն ու ազատությունները (գրելու և հրապարակելու ազատությունը, կարծիքի արտահայտման, մասնագիտության ընտրության իրավունքը և այլն):

Մեքսիկայի պետական մարմինների համակարգը, ըստ 1917 թ. սահմանադրության, իր վրա էր կրում ԱՄՆ-ի սահմանադրության ազդեցությունը և կառուցվում էր իշխանության բաժանման սկզբունքով: Ամրապնդվեց Մեքսիկայի Միացյալ Նահանգների ֆեդերատիվ կառուցվածքը, հաստատվեցին ֆեդերալ օրենսդիր մարմնի (երկպալատային կոնգրես), գործադիր մարմնի (նախագահ) և դատական իշխանության (գերագույն դատարան) ստեղծման կարգն ու լիազորությունները:

1917 թ. սահմանադրությունը հռչակելով մի շարք առաջադեմ սկզբունքներ, չկարողացավ փոխել իշխանության բնույթը, որը, ինչպես և նախկինում, գտնվում էր բուրժուա-կալվաժատիրական շրջանների ձեռքում: Սահմանադրությամբ ստեղծված կառավարությունը նպատակ ուներ ոչ թե իրականացնել դեմոկրատական բնույթի դրույթները, այլ երկրում սահմանել կարգ ու կանոն և ճնշել անընդհատ շարունակվող գյուղացիական շարժումները: Կառավարությունը հալածանքի էր ենթարկում աշխատավոր զանգվածներին, բայց զգուշորեն էր մոտենում արտաքին կապիտալի ազդեցության թուլացման հարցին: Մեքսիկական սահմանադրությունն արտահայտեց լատինաամերիկյան երկրների պետական կարգին բնորոշ հակասությունները՝ դեմոկրատական սկզբունքների հռչակման ցուցադրումը՝ մի կողմից, և բուրժուա-կալվաժատիրական ու արտաքին մոնոպոլիաների ռեալ իշխանության պահպանումը՝ մյուս կողմից:

ԲԱԺԻՆ 7

ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 21

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. ՄԵՅԴՉԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1889 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

129

Ճապոնիայի բուրժուական պետության ձևավորման յուրահատկությունները կապված են XIX դ. ճապոնական բուրժուական հեղափոխության ընթացքում սոցիալ-քաղաքական ուժերի դիրքավորման հետ: Այն որոշեց երկրում տեղի ունեցող փոփոխությունների ընթացքը, ձևը և մեթոդները:

XIX դ. նախահեղափոխական Ճապոնիայում կապիտալիստական հարաբերությունները նոր և միայն նոր էին ձևավորվում. գոյություն ուներ զարգացած արհեստավորական արտադրություն, տնային և մանուֆակտուրային արդյունաբերություն: Տնտեսության զարգացման մեջ մեծ դեր ուներ առևտրա-վաշխառուական բուրժուազիան: Ֆեոդալական հարաբերությունների քայքայման խորացման վկայությունն էին այնպիսի սոցիալական պրոցեսները, ինչպիսիք էին գյուղատնտեսության քայքայումը, գյուղացիների զանգվածային աղքատացումը, ճապոնական գյուղի սոցիալական շերտավորման խորացումը և այլն:

Այդ սոցիալական շարժման ուղղակի հետևանքները դարձան ճապոնական ազնվականության դժգոհությունը, հակակառավարական տրամադրվածությունները, դասակարգային պայքարի ուժեղացումը: Դրա տա-

րածված ձև էին (սկսած XVIII դարից), այսպես կոչված, «բրինձային խոտ-վորությունները»: Գյուղացիները պայքարում էին սովի, հարկային ճնշման, պոչտոնյանների չարաշահումների դեմ: Գյուղացիությունը հետագայում դառնում է հեղափոխության հիմնական հենարանը: Այն հաջողություն բերեց հակաբակուֆյան քաղաքական ընդդիմությանը, որի՞ն դեկավարում էր կայսրական ազնվականությունը՝ հենվելով խոշոր վաճառականների և սամուրայների ստորին խավի վրա:

Հակաբակուֆյան շարժումը հարված հասցրեց նաև խոշոր ֆեոդալների մի մասին, որոնց մեջ առանձնակի տեղ էին գրավում Հարավ-արևմտյան իշխանությունները:

Ժողովրդի դժգոհության պատճառ էր հանդիսանում այն, որ սյոգունատը չէր կարողանում պահպանել երկրի անկախությունը: 1865 թ. Անգլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Հոլանդիան հետևողականորեն հասան ոչ իրավահավասար առևտրական պայմանագրի վավերացմանը, որի համաձայն, հետագայում, Ճապոնիան իր առևտրական հարաբերություններում հավասարվեց կիսագաղութային Չինաստանին:

Այդ պայմաններում սյոգունատների վերացումը և կայսրական իշխանության վերականգնումը դառնում են համընդհանուր գաղափարական հիմք, որի հիման վրա տեղի էր ունենում տարբեր հակաբակուֆյան սոցիալ-դասակարգային տարբեր ուժերի միավորում: Հատկանշական է նաև հակաբակուֆական գաղափարախոսության կրոնական ձևավորումը: Քանի որ բուդդիզմը սյոգունատի կրոնն էր, նրան սկսեց հակադրվել ճապոնացիների հնագույն կրոնը՝ սինտոն, որն աստվածացնում էր ճապոնական կայսրին:

Սյոգունատների դեմ զինված պայքարում մասնակցություն ունեցան Հարավ-արևմտյան իշխանությունները՝ զինված այն ժամանակվա համար կատարելագործված ռազմական տեխնիկայով:

Հակաբակուֆական ուժերի հաղթանակի արդյունքը եղավ սյոգունի հրաժարականը, բակուֆի լուծարումը և ճապոնական կայսրի իշխանության վերականգնումը: Այդ իրադարձությունները պատմական գրականության մեջ անվանում են հեղաշրջում, կամ Մեյձիի վերականգնում:

1868թ. իրադարձությունները դարձան այն հեղափոխության շարժման սկիզբը, որը ուղի հարթեց կապիտալիստական հարաբերությունների զարգացման և բուրժուական պետության կայունացման համար: «Մեյձիին» ճապոնական կայսր Մուցուխիտոյի պաշտոնական կառավարման ժամանակահատվածն է (1868-1912 թթ.): Մեյձիի վերականգնումից հետո տեղի ունեցած տնտեսական, սոցիալական և քաղաքական ռեֆորմները դարձան Ճապոնիայում հակաֆեոդալական վերափոխումների հիմնական ձևը:

Բուրժուական վերափոխումները: Մեյձիի բարեփոխումների շարքում հատուկ տեղ է գրադեցնում ագրարային վերափոխումը (1872-1873 թթ.),

որն ունեւր հետու գնացող սոցիալական հետևանքներ: Այն ասուալնդեց հողալին հարաբերությունները, և վերապրեց ֆեոդալական իրավունքը հողի նկատմամբ: Հողը դառնում էր օտարացած կապիտալիստական սեփականություն, որովորա դրվում էր հարկ պետության գանձարանի օգտին: Եթե գյուղացին որը ժառանգաբար ստացել էր հողամասը դառնում էր այդ հողի տերը: Եսպա վարձակալ գյուղացին սեփականություն ոչ մի իրավունք հողի նկատմամբ չունեւր: րավելոված հողի սեփականության իրավունք ստանում էր նա, ում համար այդ հողը գրավ էր դրված: Գյուղացիներից հետ վերսվեց նաև հասարակական հողը՝ մարգագետինները, անտառները, բացատները: Ռեֆորմը նախատում էր հողի վարձակալության ստրկական պայմանների պահպանումը, գյուղացիների հետագա հողազրկությունը: նոր հողատերերի զարգացմանը:

Այդ ակցիայի հիմնական նպատակն էր հարստացնել պետական գանձարանը և ճապոնիան դարձնել ժամանակակից պետություն՝ արդյունաբերության զարգացման և բանակի ամրապնդման ճանապարհով: Իշխանները հողի համար ստացան որամական փոխհատուցում պետական փոխառությունների տեսքով, ինչի շնորհիվ ճապոնական վերնախավը 80-ական թթ դարձավ երկրի բանկային կապիտալի զգալի մասի սեփականատերը: Դրանով տեղերում իշխանները զրկվեցին քաղաքական իշխանությունից:

Դրան նպաստեց նաև 1871թ. վարչական բարեփոխումը, որի հիման վրա ճապոնիայում ստեղծվեցին 50 խոշոր պրեֆեկտություններ՝ կենտրոնից նշանակված պրեֆեկտների ղեկավարությամբ: Վերջիններս խստորեն պատասխանատու էին կառավարությանը՝ իրենց գործունեության համար: Ազրարային վերափոխումն ամրապնդեց «նոր կալվածատերերի», գյուղական հարուստ վերնախավի դիրքերը: Միաժամանակ, այն ուժեղ հարված հասցրեց մանր հողատեր գյուղացու շահերին: Հողային բարձր հարկը (պետական բյուջեն 80%-ով համալրվում էր հողային հարկի միջոցով, որը հաճախ հասնում էր բերքի կեսին) նպաստում էր գյուղացիների գանգվածային սնանկացմանը, գյուղացի-վարձակալների անախադեպ աճին, որոնք շահագործվում էին տնտեսական հարկադրման ուժով:

Բարեփոխումն ունեցավ նաև լուրջ քաղաքական հետևանքներ: Կալվածատերերը և ճապոնական միահեծանությունը փոխադարձ կապի մեջ էին: Կալվածատիրական հողատիրությունը նույնիսկ գյուղատնտեսության տևական ճգնաժամի պայմաններում կարող էր գոյատևել, եթե պահպաներ կապը միահեծան կառավարության հետ: Այս պատճառով էլ «նոր կալվածատերերը» դարձան նրա անդավաճան հենարանը:

Արևմտյան երկրների զավթողական քաղաքականությունը նպաստեց մի շարք զինվորական բարեփոխումների անցկացմանը: «Ուժեղ երկիր, ուժեղ բանակ» կարգախոսը փոփոխություն մտցրեց ռազմական վերափոխ-

ման մեջ և վերացվեց այն դրույթը, որի համաձայն ստորին խավն ազատվում էր զինվորական ծառայությունից:

1878 թ. ընդունվեց համընդհանուր զինապարտության մասին օրենքը, որը հետևանք էր սամուրայական խմբավորումների փակմանը և 1871 թ. հռչակված «բոլոր դասերի հավասարությանը»:

1872 թ. ընդունվեց հին կոչումների վերացման մասին օրենքը, որը պարզեցրեց դասերի բաժանումը, այն է՝ ազնվականության վերնախավ (կիդոկու) և ազնվականության ներքին խավ (սիդոկու), մնացած ամբողջ բնակչությունը համարվում էր «հասարակ ժողովուրդ»: «Բոլոր խավերի հավասարությունը» կարգախոսը ծառայում էր միայն ռազմական նպատակներին: Նորաստեղծ բանակում սպայական պաշտոնները զբաղեցնում էին սամուրայները: Չինապարտությունը, սակայն, չդարձավ պարտադիր. դրանից կարելի էր ազատվել փողի ուժով: Չինծառայությունից ազատվում էին նաև աստիճանավորները, ուսանողները (հարուստ ընտանիքի երեխաները), խոշոր հարկատուները:

Երկրում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը նպաստում էր նաև առևտրի, ֆեոդալական արտադրամասերի ու զիլդիաների զարգացմանը, ինչպես նաև դրամական փոխհարաբերությունների պարզեցմանը խանգարող բոլոր տեսակի սահմանափակումների վերացումը: 1871 թ. թույլատրվեց ազատ տեղափոխվել երկրի ներսում և կատարել մասնագիտական գործունեության ազատ ընտրություն: Մասնավորապես, սամուրայներին թույլատրվում էր զբաղվել առևտրով և արհեստով: Բացի այդ, պետությունն աջակցում էր կապիտալիստական արդյունաբերության զարգացմանը. ձեռնարկություններին տալով վարկեր, նպաստներ, հարկային արտոնություններ, պետական գանձարանի միջոցները ներդնելով երկաթուղու կառուցմանը, հեռագրային գծերի անցկացմանը, ռազմական ձեռնարկությունների զարգացմանը:

Հեղափոխական փոփոխությունների ընդհանուր հոսքի հետ փոփոխվում էր նաև ճապոնական դպրոցը, կրթության ավանդական համակարգը: Բացվում էր լայն ասպարեզ արևմտյան գիտության զարգացման համար: 1872թ. ընդունված «Համընդհանուր կրթության մասին» օրենքի նպատակն էր վերացնել անգրագիտությունը: Սակայն դա չիրականացվեց, քանի որ կրթությունը մնում էր վճարովի և բավականին քանկ: Սակայն այն ծառայեց զարգացող կապիտալիստական արդյունաբերության նպատակներին և նոր վարչական ապարատն ապահովեց զրագետ մարդկանցով:

Քաղաքական կուսակցությունները: 1868թ. Ճապոնիայի կայսրական կառավարության մեջ մտան դայմյոները և սամուրայները, որոնց դերը սյոգունների գահագրկամն գործում մեծ էր: Կառավարող խումբը բուրժուական չէր, բայց նա սերտորեն կապված էր ֆինանսա-վաշխառուական բուրժուագիայի հետ և քիչ թե շատ մասնակից էր ձեռնարկատիրական գործու-

նեությանը:

Ճապոնիայի հակաբազմազան սոցիալ-քաղաքական ուժերն ամենակարգից շունչն էին պետական ապարատի վերակառուցման և առավել ևս նրա վեճակաբարձրացման ծրագիրը:

1868 թ. իր «երդման» մեջ կայսրը խոստացավ ապագայում ստեղծել խորհրդատվական ժողով և կառավարման բոլոր հարցերը լուծել հասարակական կարծիքի համաձայն: \IX դ. 70-80-ական թթ. նշանավոր են տարբեր սոցիալական խավերի քաղաքական ակտիվության աճով:

Լայն ժողովրդական շարժանք ֆոնի վրա առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի միջավայրում և սամուրայների շրջանում (որոնք դեռ էին դուրս գալիս պետական ապարատի մեջ կայսրական վերնախավի ներգրավմանը) ակտիվանում են ընդդիմական տրամադրությունները:

Քաղաքականապես ակտիվանում են կալվածատերերի և գյուղական հարուստների որոշակի խմբերը, որոնք պահանջում էին հարկերի իջեցում, ձեռնարկատիրական գործունեության երաշխիքներ և տեղական կառավարման մասնակցություն:

Քաղաքական տրամադրությունը հանգեցնում էր պետական կառավարման փոփոխության և սահմանադրության ընդունման պահանջի, նպաստում ընդդիմության միավորմանը. սկիզբ էր առնում լիբերալ-բուրժուական շարժումը, որը շարժում էր ազատության և ժողովրդական իրավունքի համար:

Սահմանադրական փոփոխությունների պահանջին կառավարությունը պատասխանեց հալածանքներով, կալանքներով, առաջադեմ մամուլի ճնշմամբ: Դրա հետ միասին, ժողովրդական բողոքները ստիպում են կառավարությանը գնալ փոխզիջման լիբերալ ընդդիմության հետ: 1881 թ. կայսրը հրապարակում է հրամանագիր, որով սկսած 1890 թ. երկիրն անցնում էր պառլամենտական կառավարման: Սահմանադրական վերափոխումների նախաշեմին երկրի քաղաքական համակարգում տեղի են ունենում նկատելի փոփոխություններ: Բուրժուա-լիբերալական ընդդիմությունը կազմակերպված ձևափոխվում էր քաղաքական կուսակցությունների: 1881 թ. ստեղծվեց Լիբերալ կուսակցությունը (դեյուտո), որը ներկայացնում էր կալվածատերերի, քաղաքացիների միջին խավի և գյուղական բուրժուազիայի շահերը: Սահմանադրական ռեֆորմների կուսակցությունը (կայսինտո), ուր ընդգրկվել էին միջին խավի բուրժուազիայի, մտավորականության ներկայացուցիչները, դարձավ ընդդիմադիր կուսակցություն: Երկու կուսակցությունների ծրագրային պահանջները համարյա նույնն էին. մտցնել պառլամենտական կառավարման ձևը, հասնել քաղաքական ազատությունների, տեղական ինքնակառավարման, հարկերի իջեցման և այլն: Լիբերալ կուսակցության շրջանակներում ձևավորվում էր ձախ թևը, որն իր առաջ դրել էր հանրապետության ստեղծման խնդիրը:

1883-1884թթ. ձախ քեի դեկավարները կազմակերպում են հակակառավարական ցույցեր: Պառլամենտի աշխատանքը սկսվելուց հետո 1890 թ. Դ՛զիյուտո և Կայսինտո կուսակցությունները պասիվ դեր էին խաղում երկրի քաղաքական կյանքում: 80-ական թթ.-ին Ճապոնիայի բանվոր դասակարգը հանդես էր գալիս որպես ինքնուրույն քաղաքական ուժ: Ստեղծվում են բանվորական կազմակերպություններ:

Ընդդիմության պահանջներին կառավարությունը պատասխանում էր կառավարական սահմանադրական կայսրական կուսակցության ստեղծմամբ (Մեյսեյտո), որի գործունեությունն ուղղված էր ապագա սահմանադրական ռեֆորմների սահմանափակմանը: Այդ կուսակցության պահանջները սահմանափակվում են «խոսքի և մամուլի ազատություն, հասարակական հանգստություն» կարգախոսով: Պահպանողական, հակադեմոկրատական նպատակներին էր ծառայում մաև մինչսահմանադրական օրենսդրությունը: Այսպես, 1884 թ. օրենքով Ճապոնիայում Եվրոպայի մման կիրառվում էին նոր տիտղոսներ՝ իշխան, կոմս, բարոն և այլն: Հետագայում նրանց իրավունք էր տրվում ձևավորել ճապոնական պառլամենտի վերին պալատը:

1885 թ. ստեղծվում են առանձին նախարարություններ և եվրոպական տիպի նախարարների կաբինետ, որոնք պատասխանատու էին կայսրին: 1886 թ. վերականգնվում է նախկինում լուծարված գաղտնի խորհուրդը: 1888 թ. անցկացվում է վարչական նոր վերափոխում: Յուրաքանչյուր պրեֆեկտությունում ստեղծվում են կառավարման ընտրովի մարմիններ, որոնք, իրենց հերթին, գտնվում են ներքին գործերի նախարարության խիստ հսկողության տակ: Այդ օրենսդրության գլուխգործոցը դարձավ կարգապահության մասին ոստիկանական օրենքը, որն ընդունվեց 1887 թ.: Դրանով արգելվեցին գաղտնի ընկերությունների կազմակերպումը, ոչ օրինական ժողովների գումարումը և ոչ օրինական գրականության հրատարակումը:

1889թ. Սահմանադրությունը: 1889թ. հրապարակվեց Ճապոնիայի Սահմանադրությունը, որը չեղյալ հայտարարել կամ փոփոխել կարող էր միայն կայսրը: Ճապոնական Սահմանադրության ընդունման համար, որը ստեղծվել էր բացարձակ գաղտնի պայմաններում, օրինակ ծառայեց պրուսական 1850 թ. հետադիմական Սահմանադրությունը: Ճապոնական Սահմանադրությունը կայսրին օժտում էր մեծ իրավասությամբ: «Կայսրը գահակալում էր հավերժ և կառավարում էր «համաձայն իր ծագմանը»¹: Նա պետական անկախության կրողն էր, ինչն արտահայտվում էր Սահմանադրության չորրորդ հոդվածում: Կայսրի անձը հայտարարվում էր «սուրբ և անձեռնմխելի»: Կայսրն ուներ պատերազմ և խաղաղություն հայտարա-

¹Конституция Японской Империи 11 февраля 1889г., հոդ. 1, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 164:

րելու, պայմանագրեր կնքելու բոլոր պաշտոնյաներին նշանակելու և ազատելու, պալամենտ գումարելու և ցրելու, զինված ուժերը ղեկավարելու և բազում այլ լրավունքներ: Օրենսդր իշխանությունը նույնպես պատկանում էր կայսրին և պառլամենտին (հոդված 5): Կայսրը հաստատում էր օրենքները և գլավոր կարգադրությունն անում դրանց կատարման համար: Սահմանադրությամբ կայսրի հրած սնագրերը, որոնք արձակվել են հասարակական կարգը պաշտպանելու համար, ունեին օրենքի ուժ: Այդ հրամանագրերը սովորաբար արձակվում էին պառլամենտի արձակուրդների ժամանակ, որոնց տևողությունը տարվա ընթացքում 9 ամիս էր:

Սահմանադրության համաձայն պառլամենտը կազմված էր երկու պալատից՝ պերերի պալատից և ներկայացուցիչների պալատից: Յուրաքանչյուր պալատ իրավունք ուներ օրենքի և այլ հարցերի յուրջ առաջարկություններով հանդես գալ կառավարության առջև: Հարցերի լուծման համար պալատներում անհրաժեշտ էր ձայների բացարձակ մեծամասնությունը: Սահմանադրությունն արվելում էր պառլամենտի կողմից որևէ քննարկում կայսրական տան կարգավիճակի վերաբերյալ¹:

Համաձայն 1890 թ. ընտրական օրենքի ներքին պալատն ընտրվում էր բարձր տարիքային ցենզով (25 տարի): Սահմանված էր նաև գույքային ցենզ (15 իեն ուղիղ հարկ) և մտակեցության ցենզ (15 տարի): Կանայք և զինապարտները չունեին ընտրական իրավունք: Այսպիսով, ընտրական իրավունքից օգտվում էր ճապոնիայի բնակչության աննշան մասը՝ 1%-ի չափով: Վերին պալատի անդամներն էին արքայազները, տիտղոսավոր ազնվականության ներկայացուցիչները, խոշոր հարկավճարները և կայսրին հատուկ ծառայություն մատուցած անձինք: Ստորին պալատի լիազորությունները յոթ տարի էին, իսկ վերին պալատին՝ յոթ տարի: Նախարարները հանդես էին գալիս միայն որպես կայսրի խորհրդականներ: Սահմանադրությունում չկար «անվստահության քվե» հասկացությունը:

Ճապոնական պառլամենտը չունեւ այն լծակը, որով կարող էր ազդել կառավարության վրա, քանի որ Սահմանադրությունը չէր նախատեսել բյուջեի տարեկան քննարկումը: Եթե պառլամենտը չէր ընդունում այդ տարվա բյուջեն, ապա կառավարությունը գործի էր դնում նախորդ տարվա բյուջեն: Բացի այդ Սահմանադրության 68-րդ հոդվածը նախատեսում էր մշտական ծախսերի ֆոնդ, որը հաստատվում էր մի քանի տարվա համար, ինչպես նաև դրամական գումարներ՝ կայսրի իրավունքներն իրագործելու համար: Նախատեսվում էին նաև ծախսեր «կապված կառավարության պարտականությունների հետ»²: Կառավարության ծախսերն առանց պառլամենտի համաձայնության կարող էր հաստատել կայսրը: Սահմա-

¹ Конституция Японской Империи 11 февраля 1889г., հոդ. 71, տես Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 168:

² Նույնը, հոդ. 68:

նադրությանը գաղտնի խորհրդի անդամներն էին նախագահը, փոխնախագահը և 25 խորհրդականները, որոնք նշանակվում էին կայսեր կողմից՝ բարձրագույն ռազմա-բյուրոկրատական շրջաններից: Այդ խորհուրդն անկախ էր պառլամենտից և նախարարների կաբինետից: Նրանց պարտականությունն էր կայսեր պահանջով պետական հարցերի քննարկումը: Փաստորեն յուրաքանչյուր շատ թե քիչ կարևոր պետական հարց քննարկվում էր և համաձայնեցվում գաղտնի խորհրդում, որն էլ հավանություն էր տալիս կայսրի հրամանագրերին ու նշանակումներին:

1889թ. կայսրը որոշեց, որ բանակին ու նավատորմին վերաբերող բոլոր կարևոր հարցերը համապատասխան շտաբի հրամանատարները պետք է զեկուցեն անմիջապես իրեն՝ կայսրին. շրջանցելով կառավարությանը, ռազմական և ծովային նախարարներին:

Սահմանադրության առանձին բաժին նվիրված էր ճապոնական հպատակների իրավունքներին ու պարտականություններին, որտեղ առաջնակարգ տեղ էին գրավում պարտականությունները՝ հարկերի վճարումը և զինվորական ծառայությունը:

Ազատությունների շարքում նշված էին բնակության վայրի ընտրությունը, տեղափոխման իրավունքը, խոսքի, մամուլի, հավատի, ժողովների, ցույցերի, միությունների ազատությունը: Սակայն այդ բոլոր ազատությունները թույլատրվում էին «օրենքի սահմաններում»: Ձևականորեն ամրապնդված բուրժուա-դեմոկրատական իրավունքն ու ազատությունը չէին կարող փոխել սահմանադրության պահպանողական բնույթը: Դրա հետ մեկտեղ, սահմանադրությունը որոշակի քայլ կատարեց ճապոնական հասարակության դեմոկրատացման ճանապարհին: Ներկայացուցչական մարմնի հաստատման և բուրժուա-դեմոկրատական իրավունք ու ազատություն հռչակելուց հետո, այն նպաստեց ճապոնական պետության բացարձակ միապետությունից դեպի դուալիստական միապետության անցմանը: Այս պայմաններում տեղի էր ունենում ճապոնական կապիտալիզմի արագ զարգացումը:

Դատական համակարգի ստեղծումը: 1889թ. Սահմանադրությունը սահմանեց ճապոնական դատարանի վերափոխման ընդհանուր դրույթները՝ ձևականորեն հաստատելով դատավորների անկախությունը և անփոփոխելիությունը: Նրանց գործունեությունն իրականացվում էր «կայսրի անունից և օրենքի համաձայն»: Ընդհանուր դատարանների իրավասությունները սահմանափակ էին: Նրանք չէին կարող քննել վարչակարգի դեմ ուղղված բողոքները: Սահմանադրությունը նախատեսում էր հատուկ, վարչական դատարանների ստեղծումը: Ներման իրավունքը պատկանում էր միայն կայսրին¹:

¹Конституция Японской Империи 11 февраля 1889г., հոդ. 16, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 165:

Ճապոնիայում հին դատական համակարգը և դատավարությունը դանդաղ էին վերակառուցվում: Դեռ սահմանադրության ընդունումից շատ առաջ, իրավաբանները ուսումնասիրեցին և ծանոթացան արևմտյան երկրների դատական և իրավական համակարգերին: Դրան նպաստեց այնպիսի գիտական կենտրոնների գոյությունությունը, ինչպիսին էր ֆրանկո-իրավական դպրոցը (1879 թ.), անգլիական իրավունքի դպրոցը (1885 թ.) և այլն:

Սկսած 1872 թ. մամուլի ներկայացուցիչներն իրավունք ստացան ներկա լինել դատավարություններին: Արգելված էր արյան վրեժը: 1874 թ. սահմանափակվեց, իսկ հետագայում լրիվ արգելվեց անձին տանջանքի ենթարկելը քրեական դատավարության պրոցեսում:

1890 թ. կայգավորվում է Ճապոնիայի դատական համակարգը: Ստեղծվում են տեղական տարածքային, բողոքարկման դատարաններ և արդարադատության բարձրագույն դատարան, որն իրավունք ուներ քննարկել օրենքները, հսկողնա գալ որպես բողոքարկման բարձրագույն ատյան: Բողոքարկման դատարանի և արդարադատության Մեծ դատարանի դատավորներից ստեղծվեց վարչական դատարանի կոլեգիա:

Սահմանադրությամբ ամրապնդվեց դատավորների անկախությունն ու անփոփոխելիությունը: Դատավորին կարելի էր ազատել պաշտոնից միայն հանցագործության կամ կարգապահական տույժի դեպքերում: Այդ նպատակով 1890թ. ընդունվեց օրենք դատավորի կարգապահական պատասխանատվության մասին: Դատավորների վրա անմիջական ազդեցիկ լծակներ ունեւր արդարադատության նախարարը: Նա իրականացնում էր ընդհանուր վարչական հսկողություն ճապոնական արդարադատության վրա:

Դատավորի պաշտոնի ժամանակավոր փոխարինման համար, համաձայն 1890թ. օրենքի, պահանջվում էր իրավաբանական գիտելիքներ և մասնագիտական փորձ: Դատավորներ էին դառնում այն անձինք, ովքեր հանձնում էին համապատասխան քննություններ և դատարանում, կամ դատախազությունում երեք տարվա ընթացքում, հաջողությամբ անցնում ծառայության փորձաշրջանը:

1893թ. ընդունվեց օրենք փաստաբանության մասին: Փաստաբանները մասնակցում էին դատական պրոցեսին: Փաստաբանական ծառայությունը գտնվում էր ինչպես արդարադատության նախարարի, այնպես և դատախազության հսկողության տակ: Դատախազն իրավունք ուներ նրանց ենթարկելու կարգապահական պատասխանատվության:

Բանակը և գաղութային քաղաքականությունը: Նպատակ ունենալով վերացնել տնտեսական և ռազմական հետամնացությունը, ճապոնական պետությունը ոչ միայն աջակցում էր կապիտալիստական արտադրությանը, այլ հենց ինքն էր մասնակցում դրան:

Կապիտալիզմը թևակոխեց նոր փուլ, որը կրում էր ռազմա-ֆեոդալա-

կան բնույթ:

Ճապոնական կառավարության հիմնական հոգսը ժամանակակից բանակի և հզոր ռազմական նավատորմի ստեղծումն էր, որը նպատակ ուներ վարել զավթողական-գաղութային քաղաքականություն: Կառավարությանն ընդդիմադիր ուժերը սկզբնական շրջանում քննադատեցին նրան: Սակայն 1894-1895 թթ. ճապոնա-չինական պատերազմի ավարտից հետո, ընդդիմություն համարվող բոլոր կուսակցությունները միաձայն պաշտպանեցին կառավարության քաղաքականությունը: Վերջինս ամեն տարի ավելացնում էր ռազմական բյուջեն: Չարգացած ոստիկանական ապարատի հետ միասին, բանակը տիրող ռեժիմի պաշտպանության գործում ուներ մեծ դեր: Հենց դրա համար էլ ամեն կերպ ջանում էին, որ բանակ չներխուժեն նոր դեմոկրատական գաղափարներ: Այն մեկուսացվում էր երկրի քաղաքական կյանքից. զինապարտները զրկված էին ոչ միայն ընտրական իրավունքից, այլև բոլոր մյուս քաղաքական իրավունքներից ու ազատություններից:

Նոր բանակի և ռազմական նավատորմի վերակառուցումը տեղի էր ունենում օտարերկրյա մասնագետների օգնությամբ: Ունենալով ռազմական մեծ ուժ, Ճապոնիան 1904 թ. պատերազմ սանձադեղծեց Ռուսաստանի դեմ (այն ավարտվեց 1905 թ.) իր պոտենկտորատը հաստատեց Կորեայի նկատմամբ, որին 1910 թ. բռնակցեց՝ վերածելով գաղութի: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1914 թ., պատերազմի մեջ մտնելով Անտանտի կողմում Ճապոնիան կարևոր քաղաքական ու տնտեսական դիրքեր նվաճեց Չինաստանում:

2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Ճապոնիայում իրավագիտությունը ձևավորվել է XIX դ. առաջին կեսին: Մինչ այդ, իրավունքը (ինչպես արդեն նշել ենք) ուսումնասիրվել է կոնֆուցիականության շրջանակներում: Կապիտալիզմի զարգացման պահանջների ազդեցությամբ Ճապոնիայի իրավական համակարգն արմատապես փոխվեց հիմնականում բուրժուական երկրների իրավունքը փոխառելու միջոցով: Բուրժուական իրավագիտության զարգացման ձգձգվելու և արտաքին գործոնների ազդեցության հետևանքով Ճապոնիայում առաջացան բազմաթիվ, հիմնականում՝ էլիեկտիկական դպրոցներ ու ուղղություններ: XIX դ. 70-ական թթ. վերջից տարածվում են բնական իրավունքի ֆրանսիական ըմբռնումները, որոնք դարձան «հանուն ազատության և ժողովրդի իրավունքների» դեմոկրատական շարժման հիմքը: XIX - XX դ.դ. սահմանագծին ուժեղանում է պոզիտիվիզմի ազդեցությունը: Սակայն, այնուհանդերձ, Ճապոնիայի իրավագիտության մեջ գերակշռում էր գերմա-

նական քաղաքական ուսմունքների ազդեցությունը, որոսք սահմանադրական միասնությունը դիտում էին որպես կառավարման լավագույն ձև: Այդ ազդեցության հետևանքով ճապոնիայում մշակվում էր պետական կառուցվածքի մասին իրացվողնալիստական-նացվողնալիստական տեսությունը, որը ծառայում էր բյուրոկրատական իրավական պետության հիմնավորմանը:

Քաղաքացիական իրավունք: Կոսպիտալիստական հարաբերությունների արագ զարգացման շրջանում ճապոնիայում ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնք կարգավորում էին հասարակական հարաբերությունների որոշակի բնագավառ: Դրանք կրում էին Եվրոպայի քաղաքացիական իրավունքի ուղղակի ազդեցությունը: Հենց այս շրջանում էլ զգացվեց ճապոնական քաղաքացիական օրենսգրքի ստեղծման անհրաժեշտությունը: Այն մշակվեց 1890 թ. և ուժի մեջ մտավ 1898 թ., այսինքն՝ ավելի շուտ, քան գերմանական քաղաքացիական օրենսգիրքը: Օրենսգիրքը բաղկացած է հինգ գրքից և ներառում է ավելի քան 1044 հոդվածներ: Իրավական նորմերի բաշխումը ճապոնիայի քաղաքացիական օրենսգրքում չի տարբերվում Սաքսոնական քաղաքացիական օրենսգրքի համակարգից (իրային իրավունք, պարտավորական իրավունք, ընտանեկան իրավունք, ժառանգական իրավունք):

Օրենսգրքի համաձայն պարտավորությունների առաջացման հիմքում ընկած են հիմնականում պայմանագրերը, որոնք վավեր էին համարվում, եթե կնքվել էին օրենքով նախատեսված պայմանների առկայության դեպքում: Որոշակի իրավական հետևանքներ կարող էր ունենալ այն պայմանագիրը, որը ճանաչվել էր անվավեր: Հայտնի են պայմանագրերի տարբեր տեսակներ (առուժախի, վարձակալության, փոխանակության, պահովության, փոխառության և այլն):

Պարտավորություններ կարող են առաջանալ նաև իրավախախտումներից և ուրիշի գույքին վնաս պատճառելուց:

Օրենսգրքի որոշ հոդվածներ պարունակում են դրույթներ, որոնք կարգավորում են ամուսնաընտանեկան հարաբերությունները (ամուսինների փոխհարաբերությունները միմյանց նկատմամբ, ծնողների և երեխաների հարաբերությունները և այլն): Քաղաքացիական օրենսգիրքը մի շարք իրավական նորմեր վերցրել էր Նապոլեոնի օրենսգրքից: Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի մասն ճապոնիայի քաղաքացիական օրենսգիրքը նույնպես նախատեսեց իրավաբանական անձանց ստեղծման և հողային սեփականատերերի իրավունքների սահմանափակման հնարավորությունը՝ հօգուտ արդյունաբերողների:

Քաղաքացիական օրենսգիրքը մեծ նշանակություն ունեցավ ճապոնիայի տնտեսական շրջանառության զարգացման համար: Այն ամրապնդեց բուրժուական քաղաքացիական իրավունքի կարևորագույն սկզբունք-

ները՝ մասնավոր սեփականության անսասանությունը, պայմանագրի ազատությունը, անձանց ձևական հավասարությունը: Բայց ճապոնիայի քաղաքացիական օրենսգիրքը պահպանեց որոշ ավանդական նորմեր, որոնք հատկապես վերաբերում էին ընտանեկան իրավունքին, կանանց իրավիճակին (օրինակ, կնոջ անգործունակությունը և այլն):

Մայրցամաքային համակարգի երկրների իրավունքի ազդեցության տակ ճապոնիայում XIX դ սահմանվեց մասնավոր իրավունքի երկակիություն:

1899 թ. ընդունվեց Առևտրական օրենսգիրքը, որը կրում էր եվրոպական երկրների (հատկապես Ֆրանսիայի և Գերմանիայի) առևտրական օրենքների ազդեցությունը: Այն բաղկացած էր 4 գրքից, որոնք նվիրված էին. 1) առևտրին և անձանց, 2) առևտրական ընկերություններին, 3) առևտրական գործարքներին, 4) ծովային առևտրին վերաբերող ընդհանուր հարցերին:

Քրեական իրավունք: ճապոնիայում առաջին քրեական օրենսգիրքն ընդունվել է 1880 թ.: Այն կազմել է Ֆրանսիացի իրավաբան Բուասոնադը: Օրենսգրքի ընդունումով ճապոնիայի դատական պրակտիկայում կիրառվեցին բուրժուական քրեական իրավունքի հիմնական սկզբունքները: Օրենսգիրքն ունի 430 հոդված և կառուցված է ֆրանսիական համակարգով:

Օրենսգիրքը նախատեսում էր պատժի առավել դաժան, նույնիսկ քարաբառասական, տեսակները (օրինակ, այրումը, խեղդամահ անելը և այլն): Սահմանվեց ճապոնիայում անհիշելի ժամանակներում կիրառված արյան վրեժը, որին տրվեց օրինական տեսք: Դրա էությունն այն էր, որ վիրավորված անձը կարող էր իրավապահ մարմիններից ստանալ գրավոր թույլտվություն՝ իրեն վնաս հասցնողին (վիրավորողին) պատժելու և նույնիսկ սպանելու մասին: Պատժի այս տեսակը (օրինական արյան վրեժը) XIX դ. վերջը թևակոխած ճապոնիան ժառանգեց նախնադարյան հասարակարգից:

Քրեական օրենսգրքով նախատեսված պատիժներն ունեին սարսափեցման և փոխհատուցման նպատակ: Մահապատիժը սահմանվել էր հանցագործությունների մոտ 20 տեսակի համար: Այն կիրառվում էր հատկապես քաղաքական հանցագործների, մարդասպանների, սուտ վկայություն տվողների և այլ հանցագործների նկատմամբ: Մահապատժից բացի նախատեսված էին նաև պատժի այնպիսի տեսակներ, ինչպիսիք էին ազատազրկումը և դրամական տուգանքը:

Հիմնական պատժատեսակների հետ մեկտեղ սահմանվել էին լրացուցիչ պատիժներ (քաղաքացիական իրավունքից զրկելը, ոստիկանական հսկողության տակ պահելը, գույքի բռնագրավումը և այլն):

1880թ. օրենսգիրքը XIXդ. վերջում, ըստ էության, հնացել էր և չէր կարող արտահայտել կառավարող շրջանների շահերը: Չզացվում էր նոր օ-

ըննագրքի ստեղծման անհրաժեշտությունը:

Պրուսիացի իրավաբան Ռուդոլֆի մասնակցությամբ կազմվեց նոր քրեական օրենսգիրքը, որը պառլամենտը հաստատեց 1907 թ. ապրիլին: Այն ուժի մեջ մտավ 1908 թ. հունվարի 1-ից: Օրենսգիրքը շատ հարցերում հետևում էր գերմանական 1871 թ. քրեական օրենսգրքին:

1907 թ. քրեական օրենսգիրքը սահմանեց հանցագործությունների և պատիժների նոր համակարգ: Հանցագործությունների տեսակներից էր պետության դեմ ուղղված ոտնձգությունը (կայսեր, նրա ընտանիքի, երկրի ներքին ու արտաքին անվտանգության դեմ կատարված հանցագործությունները), որոնց դեպքերում նախատեսված էր մահապատիժ: Առավել վտանգավոր էին համարվում նաև պետական կառավարման դեմ ուղղված, ինչպես նաև անձի կյանքի ու առողջության և մասնավոր սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները:

Նոր օրենսգրքում պատժի հնագույն, նպատակ չհետապնդող տեսակները, որոնք առկա էին 1880 թ. քրեական օրենսգրքում, վերացվեցին: Հայտնի պատժատեսակներից էին ազատագրկումը, տաժանակիր աշխատանքը, տուգանքը և այլն: Պատիժները հետապնդում էին նաև վերադատիարակման նպատակ:

1907 թ. օրենսգիրքը դատավորներին հնարավորություն էր տալիս մեծ ճնշում գործադրել ռեցիդիվիստների վրա: Կրկնակի հանցագործություն կատարելու համար բանտարկության ժամկետը կարող էր ավելացվել մեկուկես անգամ:

Օրենսդիրը, վախենալով հեղափոխական պոռթկումներից, գրքում հատուկ բաժին է նվիրում քաղաքական հանցագործություններին և ներքին անվտանգության դեմ ուղղված ոտնձգություններին:

XX դ. սկզբում Ճապոնիայում ընդունվեցին հասարակական կյանքը կարգավորող մի շարք այլ օրենքներ, որոնք դարձան ճապոնական օրենսդրության անբաժանելի մասը:

ԳԼՈՒԽ 22

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԸ

1. XIX ԴԱՐԻ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Չինաստանը մինչև XIX դ. կեսերը մնում էր հետամնաց ֆեոդալական երկիր և միայն 60-ական թթ վերջին, 70-ական թթ սկզբին սկսեցին զարգանալ կապիտալիստական հարաբերությունները: Այն զարգանում էր հատկապես արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունների ստեղծման ու ընդլայնման միջոցով: Ֆեոդալական տնտեսական և քաղաքական համակարգի պահպանմամբ շահագրգռված էր միայն Չինաստանի տիրապետող դասակարգը՝ ֆեոդալները (հատկապես մանջուրական ազնվականությունը), նորածին կոմպրոդորական բուրժուազիան և, առավելապես, այն ժամանակվա զարգացած կապիտալիստական երկրների (Եվրոպա, ԱՄՆ) բուրժուազիան:

XIX դ. սկզբին Չինաստանն ապրում էր տնտեսական և քաղաքական ճգնաժամ: Այն արտահայտվում էր ֆեոդալական կարգերի դեմ գյուղացիների անվերջ պայքարով, որը վտանգ էր սպառնում ցինական (մանջուրական) միապետությանը: Սակայն եվրոպական գաղութարարների ներխուժումը խախտեց չինական հասարակության բնական զարգացումը:

XIX դ. I-ին կեսին ուժեղացավ եվրոպական պետությունների, առաջին հերթին՝ Մեծ Բրիտանիայի, էքսպանսիան դեպի Չինաստան: 1840 թ. Մեծ Բրիտանիան Չինաստանի դեմ սկսեց, այսպես կոչված, առաջին «Քաշի-շային» պատերազմը և 1842 թ. Չինաստանին պարտադրեց Նանկինի անիրավահավասար պայմանագիրը, որով Չինաստանը պարտավորվում էր անգլիական առևտրի համար բացել հինգ նավահանգիստ, Մեծ Բրիտանիային հանձնել Սյանգան (Հոնկոնգ) կղզին: Շուտով նույնպիսի պայմանագրեր ստորագրվեցին Չինաստանի և ԱՄՆ-ի, Չինաստանի և Ֆրանսիայի, Չինաստանի և մյուս կապիտալիստական տերությունների միջև: Այդ ժամանակվանից սկսվեց օտարերկրյա կապիտալի զանգվածային

ներխուժումը Չինաստան, որի հետևանքով երկիրը վերածվեց կիսագաղութի (պետական անկախության սահմանափակում, տնտեսական և քաղաքական կախվածություն):

XIX դ. վերջին Յինական կայսրությունը կապիտալիստական հզոր պետությունների կողմից բաժանվեց ազդեցության ոլորտների: Չինաստանից կախվածության մեջ գտնվող երկրները (Վորես, Հնդկաստան, Թաիլանդ և այլն) նվաճվեցին Ճապոնիայի և Ֆրանսիայի կողմից և դարձան գաղութներ:

Չանգվածային ժողովրդական շարժումը, որն ուղղված էր օտարերկրյա ինպերիալիստների, մանջուրական և չինական ֆեոդալների դեմ, 1850-1864 թթ. վերածվեց Մեծ գյուղացիական պատերազմի:

1850 թ. կառավարական զորքերի նկատմամբ հաղթանակ տարած ապստամբները, հանդես եկան սոցիալական հավասարության և հողի մասնավոր սեփականության վերացման կարգախոսով: Նրանց նպատակն էր տապալել մանջուրյան դինաստիան և հռչակել «Մեծ բարօրության» պետություն (Տայպին տյանգո): 1853 թ. Նանկինը գրավելուց հետո, քաղաքը հռչակվեց Տայպինական պետության մայրաքաղաք և անվանվեց «երկնային մայրաքաղաք»: Շուտով հրապարակվեց «Երկնային դինաստիայի հողային համակարգ» դեկրետը, որը դարձավ Տայպինական պետության յուրօրինակ «սահմանադրությունը»: Այն կոչ էր անում ստեղծել մահապետական հասարակություն:

Տայպինների հաղթանակը և պետության ստեղծումը խոշոր ազդեցություն ունեցան Չինաստանի ժողովրդական զանգվածների վրա: Գյուղացիության հեղափոխական ելույթներն այնքան ուժեղ էին, որ Տայպինական պետությունը (գոյատևեց ավելի քան 10 տարի) տապալվեց միայն մանջուրական և չինական հակահեղափոխական զորքերի ու Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ռազմական համատեղ ուժերով՝ 1864 թ.: Բազմամիլիոնաճ չինական բնակչությունն իրեն ենթարկելու համար Յինական կայսրության կառավարող շրջանները օգտագործում էին ռազմա-քոնակալական բյուրոկրատական կառավարման ապարատը: Պետության գլուխ էր կանգնած անսահմանափակ իշխանությամբ օժտված միապետը, որի անձը, մախկինի նման, աստվածացվում էր: Բարձրագույն իշխանությունը պատկանում էր ռազմական խորհրդին, որը կազմված էր մանջուրական վերնախավից:

Պետական ապարատում կարևոր տեղ էին զբաղում վեց գերատեսչություններ (մախարարություններ):

Վարչական առումով Յինական կայսրությունը բաժանվում էր 18 նահանգների, որոնք իրենց հերթին բաժանվում էին 182 մարզերի: Չինաստա-

նում ստարածքային փոքրիկ միավորումներ էին համարվում շրջանները՝ գավառները և համայնքները՝ Նահանգները ղեկավարում էին ռազմական և քաղաքացիական նահանգապետերը, որոնք նշանակվում էին բոգդի խանի (միապետի) կողմից: Նահանգապետերը հիմնականում մանջուրներ էին և միայն XIX դ. վերջում այդ պաշտոնները կարող էին զբաղեցնել չինացիները: Կայսրության պետական ապարատը համալրումը կատարվում էր ծառայողներից քննություն ընդունելու միջոցով: Կայսրությունում մեծ դեր ուներ բանակը, որի միջոցով մանջուրական զավթիչները կարողացան ամրապնդել ֆեոդալական կարգերը, ճնշել ժողովրդական զանգվածների դիմադրությունը: Բանակը սկզբում բաղկացած էր մանջուրներից, այնուհետև թույլատրվեց այն համալրել նաև սոնդուներից և չինացիներից

Չինաստանի ներգրավումը կապիտալիստական զարգացման ոլորտի մեջ պահանջում էր անցկացնել պետա-իրավական վերափոխումներ: XIX դ. երկրորդ կեսին, կայսրության ուժեղացման նպատակով, վարչական ապարատում, ֆինանսներում, լուսավորության համակարգում, բանակում և նավատորմում անցկացվեցին մասնակի վերափոխումներ: Կազմակերպվեց հատուկ վարչություն, որը պետք է զբաղվեր այտաքին կապերով, արտաքին առևտրով, զենքի գնումով, երկաթուղու կառուցմամբ և այլն:

XIX դ. վերջում տնտեսական և քաղաքական վերափոխումներ անցկացնելու նպատակով շարժման գլուխ անցավ կոնֆուցիական Կան Յուվեյը: Այդ շարժման ծրագիրը հրապարակվեց 1895 թ.: Այն նախատեսում էր ուժեղացնել արտաքին ազդեցությունների դեմ ուղղված պայքարը, ամրապնդել պետական իշխանությունը, միջոցներ ձեռնարկել հեղափոխական շարժումները կանխելու համար: Այդ նպատակով պահանջվում էր վերափոխել բանակը (արևմտաքի օրինակով) և պետական ղեկավարման հնացած մեթոդները, հիմնադրել պետական բանկ, նորոգել կրթական համակարգը: Իր հայացքների տարածման համար Կան Յուվեյը ստեղծեց բարեփոխումների կողմնակիցների ակումբ՝ «Պետության ամրապնդման Ասոցիացիա»: 1898 թ. հունիսի 11-ին Կան Յուվեյի առաջարկությամբ հրապարակվեց հրամանագիր «Պետության ծրագրերի մասին»: 1898 թ. հունիսի 11-ից մինչև սեպտեմբերի 21-ը (բարեփոխումների 100 օր) բարեփոխության կողմնակիցները փորձեցին իրականացնել իրենց ծրագրերը: Հրապարակվեցին հրամանագրեր, որոնցով նախատեսվում էին պետական ապարատի վերափոխում և բանակում զինվորների թվաքանակի կրճատում: Նախատեսվում էր տաղանդավոր մարդկանց նշանակել պետական պաշտոններին: Հրամանագրերում խոսվում էր երկաթուղու, ֆաբրիկաների և գործարանների կառուցման, արհեստների զարգացման ու գյուղատնտեսական գործիքների կատարելագործման մասին:

Սակայն այս բոլոր միջոցառումները չէին հարվածում ֆեոդալական կարգերին և ցինական կայսրության քաղաքական ռեժիմին: Մանջուրական վերնախավը և չինական ֆեոդալները բավարարված չէին բարեփոխումների քաղաքականությամբ: Դա հանգեցրեց պալատական հեղաշրջման, որը տեղի ունեցավ 1898 թ. սեպտեմբերի 22-ին: Ռեֆորմների կողմնակիցները ձերբակալվեցին, իսկ Կան Յուվեյը փախավ արտասահման: Երկրի իշխանությունն անցավ կայսրուհի Ցիսի ձեռքը: Նա չեղյալ համարեց «100 օր» ժամանակաշրջանի բոլոր վերափոխումները: Կայսր ուսույուն, որն աջակցում էր ռեֆորմատոներին, գահազրկվեց կայսրուհի Ցիսի հետադիմական խմբի կողմից:

2. ՄԻՆԱՅԻ ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1912 թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

XX դ. սկզբին Չինաստանում սկսվեց նոր հեղափոխական վերելք, որի վրա մեծ ազդեցություն ունեցավ Ռուսաստանի 1905-1907 թթ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը: 1905 թ. Սուն Յաթ Սենը և նրա կողմնակիցները հիմնեցին համաչինական հեղափոխական կազմակերպություն՝ «Միավորված միությունը»: Նրա ծրագիրն էր. մանջուրական դինաստիայի տապալումը, Խանրայեությունից հաստատումը, հողի նկատմամբ իրավունքների հավասարեցումը: Սուն Յաթ Սենի ծրագրի հիմքում ընկած էին երեք կարևոր սկզբունքներ (նացիոնալիզմը, ժողովրդավարական իշխանությունը և ժողովրդական բարօրությունը): Նացիոնալիզմի սկզբունքը կոնկրետաճում էր մանջուրական դինաստիայի տապալման պայքարում: Ժողովրդական իշխանությունն արտահայտվում էր Սուն Յաթ Սենի կողմնակիցների ձգտման մեջ՝ Չինաստանում ստեղծել դեմոկրատական հանրապետություն, որտեղ իշխանությունը կիրականացնեին ընտրովի մարմինները: Ժողովրդական բարօրության սկզբունքը ենթադրում էր ռադիկալ ազրարային ռեֆորմ, որի ընթացքում ծրագրվում էր հողաբաժին տալ գյուղացիներին և ապահովել «հողի նկատմամբ հավասար իրավունքը»:

«Միավորված Միության» ռադիկալ ծրագիրը դարձավ այն շարժառիթը, որից սկսվեց հեղափոխական վերելքը:

1911թ. հոկտեմբերի 10-ին Ուչան քաղաքում բռնկվեց ապստամբություն, որը արագորեն ընդգրկեց մյուս շրջանները: Երկիրը կիսվեց երկու մասի՝ հեղափոխական հարավի, որտեղ իշխանության նոր մարմիններում գերակշռում էր լիբերալ բուրժուազիան և հետադիմական հյուսիսի, որտեղ նախկինի նման իշխանության գլուխ էին անցել մանջուրական ազնվականությունը և կայսրական կառավարությունը:

Գեկտեմբերի վերջին հեղափոխական հարավի ղեկավարները գումարեցին նահանգների ներկայացուցիչների կոնֆերանս (հետագայում վերանվանվեց Ազգային ժողով) Այն Չինաստանը հռչակեց հանրապետություն և ժամանակավոր նախագահ ընտրեց Սուն Յաթ Սենին, որը վերադարձավ վտարանդիությունից: Նոր կառավարությունը վարեց այնպիսի քաղաքականություն, որը նպատակ ուներ կանխելու գյուղացիական շարժումները: Դրանում արտահայտվեց 1911 թ. չինական հեղափոխության չափավոր բնույթը, որի շարժիչ ուժերն էին դեմոկրատական գյուղացիությունը և լիբերալ բուրժուազիան:

Հյուսիսի և Հարավի միջև եղած հակադրությունը հանգեցրեց նրան, որ Չինաստանի ղեկավար շրջանները ստիպված եղան համաձայնել միապետության և ցինական դինաստիայի վերացմանը և միաժամանակ, պահանջեցին. որ Սուն Յաթ Սենը հեռանա պաշտոնից: Սուն Յաթ Սենը, հասկանալով շարժման պառակտման և օտարերկրյա ներխուժման վտանգը, հրաժարվեց նախագահի պաշտոնից՝ հօգուտ հետադիմական Յուան Շի Կայի: 1912 թ. փետրվարի 12-ին ցին դինաստիան հրաժարվեց գահից: Միապետությունը վերացվեց: Յուան Շի Կայը Պեկինում կազմեց կառավարություն և հաստատեց ռազմական բռնապետություն:

Չինաստանի հետադիմական շրջանակների և իմպերիալիստների կապերի ամրապնդումը հանգեցրեց չինական հասարակության դեմոկրատական ուժերի վերախմբավորմանը, որն ավարտվեց հեղափոխական դեմոկրատների և լիբերալ բուրժուազիայի կազմակերպությունների միավորումով: Այդ միավորման ծնունդը հանդիսացավ ոմինդան կուսակցությունը (Ազգային կուսակցություն):

1912 թ. մարտի 10-ին Նանկինում Ազգային ժողովն ընդունեց Չինաստանի ժամանակավոր սահմանադրությունը, որով երկիրը հռչակվեց հանրապետություն, իսկ գեներալ Յուան Շի Կայը՝ նրա նախագահ: Օրենսդրական իշխանությունն իրականացնում էր Ազգային ժողովը:

1912 թ. ընտրական օրենքի համաձայն ընտրական իրավունք ունեին 21 տարեկանից բարձր քաղաքացիները, որոնք ընտրական տարածքում ապրել են ոչ քիչ, քան 2 տարի, վճարել են բարձր հարկեր, կամ ունեին մեծ հարստություն: Ընտրություններն անցկացվում էին երկու աստիճանով: Չինական հանրապետության Ազգային ժողովը կազմված էր Մենաոից և Ներկայացուցչական պալատից: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ոմինդանը ստացավ ձայների մեծամասնությունը, սակայն իշխանությունը գրավեց Յուան Շի Կայը և երկրում հաստատեց ռազմական դիկտատուրա: 1914 թ. Յուան Շի Կայի ճնշման ներքո Չինաստանի ժամանակավոր սահմանադրությունում կատարվեցին փոփոխություններ, որոնք

նպատակն էր պառլամենտի հաշվին մեծացնել նախագահի իրավունքները:

Այդ նույն ժամանակ հրապարակվեց հրամանագիր, որով նախատեսվում էր նախագահական լիազորությունների տասնամյա ժամանակաշրջան: Յուան Շի Կայն ամրապնդելով իր իշխանությունը, ճեռնարկեց երկրում միապետական ռեժիմի վերականգնման փորձ, սակայն նրա մահը (1916 թ.) կոմպրադորական-բյուրոկրատական ուժերին խանգարեց իրագործելու այդ նպատակը:

Հանրապետության նախագահ դարձավ փոխնախագահ Լի Յուան խունը, որը 1912 թ. սահմանադրությունը նորից կյանքի կոչեց:

1911-1913 թթ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, ընդհանուր առմամբ, մնաց անավարտ: Չիրականացվեցին պրմատական վերափոխումներ, որոնք պետք է վերացնեին ֆեոդալական ճնշումը և օտարերկրյա կապիտալի ազդեցությունը: Ընդհակառակը, մեծացավ գաղութարարների ճնշող ազդեցությունը, իսկ արտաքին կապիտալը սկսեց ավելի լայն մասշտաբով կողոպտել Չինաստանը:

Չնայած դրան, այնուհանդերձ, հեղափոխությունն ունեցավ մեծ դրական նշանակություն: Այն հանգեցրեց մանջուրական դինաստիայի տապալմանը և հանրապետության հաստատմանը: Հեղափոխությունն նպաստեց չինական ժողովրդի հեղափոխական ակտիվության բարձրացմանը և նախապատրաստեց նրան հետագայում ազգային անկախության համար մղվող պայքարին:

Այսպիսով, ընդհանրացնելով Չինաստանի նոր դարաշրջանի հետ կապված պետության պատմությունը, կարող ենք նշել, որ այդ ժամանակահատվածում այստեղ իշխեց հիմնականում Չին դինաստիան

(1644-1911 թթ.), որը իր գոյատևման առաջին կեսում (մինչև XIX դ. I-ի կեսը) վարեց ակտիվ արտաքին քաղաքականություն: XVII դարում նա առևտրական և դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Ռուսաստանի հետ: 1689 թ. Չինաստանի կառավարությունը ռազմական ասպարեզով ռուսական դեսպանությանը հարկադրեց կնքել Ներչինսկի պայմանագիրը, որով Ռուսաստանը Յին կայսրությանը զիջեց Արգուն գետի աջ ափի իր տիրույթները և Ամուր գետի ձախ ափի տիրույթների մի մասը: Ռուսաստանի և Չինաստանի միջև սահմանը վերջնականապես որոշվել էր Այգունի (1858 թ.) և Պեկինի (1860 թ.) պայմանագրերով:

XVII դ. վերջին Յին դինաստիան զավթեց Հյուսիսային Մոնղոլիան (Հարավայինը նվաճվել էր դեռևս 1636 թ.), 1757 թ. ոչնչացրեց մոնղոլական Ջունգարյան խանությունը, որի տարածքը 1760 թ. զավթած Արևելյան Թուրքեստանի (Կաշգարիա) հետ Սինցզյան («Նոր սահման») անունով

մտցվեց Յին կայսրության կազմի մեջ: XVIII դ. վերջին ցիները վերջնականապես զավթեցին Տիբեթը:

XIX դ. սկզբից Չինաստանը դարձավ այլ պետությունների (հատկապես Եվրոպայի) նվաճման հիմնական տարածքներից մեկը:

Իրավունքը: Չինաստանում իշխանության իսմենատար կայուն համակարգն ազդեցություն է թողել օրենսդրության վրա: Որպես կանոն բոլոր դինաստիաների օրոք մշակված օրենքների ժողովածուները նախորդներից ժառանգել են իրավունքի հիմնական դրույթները: Այդ երևույթը հատկապես ակնառու է Յինյան դինաստիայի օրենքների ժողովածուներում: Այսպես, «Յին մեծ դինաստիայի հիմնական ժողովածուների և ուրշումների» քրեական օրենսգրքի հիմնական հոդվածները, առանց էական փոփոխությունների փոխառնվել են Մին դինաստիայի օրենսգրքից (1368-1644 թթ.), որն էլ իր հերթին կազմվել է Տան դինաստիայի (618-907 թթ.) օրենսդրական համակարգի վրա: Սակայն նոր ժամանակաշրջանում իրավունքի ավանդական նորմերը չէին կարող բավարարել Չինաստանի տնտեսական և քաղաքական զարգացման պահանջները: XIX դ. վերջում, երբ Չինաստանում ծավալվեց բայենորոգումների համար շարժումը, նրա ներկայացուցիչները (Կան Յու Վեյ, Լյան Չիչաո և այլն) սահմանադրական միապետության շրջանակներում, կապիտալիզմի արագ զարգացման նպատակով, առաջադրելով բուրժուական վերափոխումների ծրագիր, հանդես եկան ավանդական օրենքների փոփոխման օգտին:

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԸԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր բնութագիրը

Նորագույն ժամանակաշրջանն ընդգրկում է 1918-2000թթ. ընկած ժամանակահատվածը: Նորագույն պատմության սկիզբը նշանավորվեց 1917-1923թթ. հեղափոխական վերելքով, որն աշխարհում հանգեցրեց եական սոցիալ-քաղաքական փոփոխությունների:

Նորագույն ժամանակաշրջանը՝ ժամանակակից դարաշրջանի առաջին աստիճանը, աչքի է ընկնում սոցիալիստական հեղափոխություններով, գաղութային կայսրության կործանմամբ, բուրժուական հասարակության կառուցվածքային փոփոխություններով, մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանումով, իրավահավասարության հաստատումով և այլնով: Դա այն դարաշրջանն է, որի ընթացքում արմատական վերափոխումներ տեղի ունեցան հասարակական կյանքի բոլոր բնագավառներում. փոխվեց մարդն իր ամբողջ էությանը: Եվրոպական պետությունների մի մասում, մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը, հաստատվեց բուրժուա-դեմոկրատական վարչակարգ, իսկ մյուս մասում՝ ֆաշիստական, կիսաֆաշիստական և ռազմական դիկտատուրա, որը ջախջախվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում: Ջգալի փոփոխություններ տեղի ունեցան Ասիայի ու Աֆրիկայի երկրներում: Մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, աֆրո-ասիական գրեթե բոլոր երկրներում իշխում էին ֆեոդալական կամ կիսաֆեոդալական կարաբեռություններ, գրեթե բոլորն էլ եղել են իմպերիալիստական տերությունների գաղութներ կամ

կլիսագաղութներ: Առաջին աշխարհամարտից հետո սկսվեց գաղութային հիմնակարգի ճգնաժամը, որի բնութագրիչը ստրկացված ժողովուրդների և իսպերիալիստական տիրությունների միջև հակասությունների առկայությունն էր: Այն հանգեցրեց Ասիայի ու Աֆրիկայի երկրներում նոր դասակարգերի՝ պրոլետարիատի և ազգային բուրժուազիայի երևան գալուն ու աճին: Պատերազմի ծանր աղետներն առաջացրին լայն զանգվածների դժգոհությունը, որն էլ բարենպաստ հող նախապատրաստեց ժողովուրդների՝ անկախ գոյության և ազատ զարգացման իրավունքի պաշտպանության համար մղվող պայքարին:

Ազգային-ազատագրական շարժման պայքարի վերելքը ֆրանսիական և անգլիական իմպերիալիստներին հարկադրում էր մանևրել. գալութներին ու կախյալ երկրներին պարտադրել «անկախության պայմանագրեր», «սահմանադրություններ», որոնք պահպանում էին Անգլիայի ու Ֆրանսիայի փաստացի տիրապետությունը (օրինակ, 1936թ. անգլո-եգիպտական պայմանագիրը. Հնդկաստանի 1935թ. «ստրկական Սահմանադրությունը» և այլն):

Ասիայի ու Արաբական Արևելքի երկրների պետության պատմության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղում 20-30-ական թվականների բարեփոխումները, որոնք նպաստեցին վարչական, դատական, կրթական ոլորտներում և այդ երկրների տնտեսական կյանքի որոշ բնագավառներում ֆեոդալիզմի առավել այլանդակ վերապրուկների վերացմանը:

Երկրորդ աշխարհամարտից հետո Ասիայի ու Աֆրիկայի շատ երկրներ ձեռք բերեցին անկախություն:

Պատմական դեպքերի մեծ զարգացումը չէր կարող չազդել ուսումնասիրվող երկրների հասարակական, պետական և իրավական կարգի վրա, որպիսի լուսաբանումը հանդիսացել է հեղինակի գլխավոր խնդիրը:

Ի տարբերություն դասագրքի նախորդ մասերի, չորրորդ մասն առանձնանում է իր կառուցվածքով և ուսումնասիրված նյութերով.

1. Դասագրքում իրավունքի պատմությունը լուսաբանվում է ոչ թե համապատասխան երկրի պետության պատմության հետ մեկտեղ, այլ առանձին մասով՝ ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր երկրները միասին վերցրած: Դա բացատրվում է ամենից առաջ նրանով, որ նորագույն դարաշրջանում իրավունքի բնագավառում կատարված զգալի փոփոխությունների հետևանքով նկատվեց անգլո-սաքսոնական և մայրցամաքային համակարգերի մերձեցում: Դրանով ուսումնասիրվող երկրների իրավունքի պատմությունը գրեթե մույնականացվում է: Այս հանգամանքն էլ հաշվի առնելով հեղինակը բոլոր երկրների իրավունքի պատմությունը լուսաբանել է մեկտեղ, 2. Ուսումնասիրության ընթացքում լուսաբանվել են այնպիսի նորմատիվ-իրավական ակտեր, որոնք կյանք ստանալով դեռևս նորագույն դարաշրջանի սկզբում, որոշակի փոփոխություններով ու լրացումներով

հանդերձ շարունակում են գործել առ այսօր: Այսինքն՝ այդ ակտերն անցյալից դարձել են ներկա և կարգավորում են հասարակական կյանքի որոշակի ոլորտ: Սա հիմք է տալիս նշելու, որ ուսումնասիրված ակտերի մեծ մասն աչքի է ընկնում իր հրատապությամբ: 3. Նշված ակտերն իրենց դրական ներգործությունն ունեցան Հայաստանի Երրորդ Հանրապետության արդեն իսկ ձևավորված պետա-իրավական ինստիտուտների կազմավորման ու գործունեության վրա:

ԲԱԺԻՆ 8

ՆՈՐԱԳՈՒՅՆ ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎԱՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 23

ԱՆԳԼԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. ԶԱՂԱԶԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Առաջին համաշխարհային պատերազմից Անգլիան դուրս եկավ հաղթանակով: Չնայած այդ հանգամանքին, լրջորեն թուլացան նրա ֆինանսա-տնտեսական դիրքերը: Արդյունաբերական արտադրությունը կրճատվեց 20%-ով: Անգլիան կորցրեց իր ազգային հարստության 1/3 մասը: Դեռևս պատերազմի տարիներին սկսեցին զարգանալ ռազմական նշանակության արտադրանք թողարկող արդյունաբերության նոր ճյուղեր: Արտադրությունը հին ճյուղերում զգալիորեն կրճատվեց: Ծանրացավ բանվոր դասակարգի նյութական վիճակը և, որպես դրա հետևանք, աճեց նրա քաղաքական ակտիվությունը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արհմիությունների շարքերն աճեցին երկու անգամ: Բանվորական շարժման ուժեղացմանը նպաստեց նաև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում: Հետպատերազմյան տարիներին ուժեղացավ նաև կապիտալիստական մոնոպոլիան: Համաշխարհային պատերազմի հետևանքով Անգլիան ձեռք բերեց գաղութային նոր տիրույթներ: Հին գաղութներում սկսեց զարգանալ արդյունաբերական արտադրությունը, աճեց պրոլետարիատի թիվը: Այստեղ ամրապնդվեց տեղական բուրժուազիան: Հնդկաստանի, Եգիպտոսի և այլ երկրների ժողովրդական լայն զանգվածները պայքարի ելան ազատության և ազգային անկախության

համար: Ազգային-ազա-տագրական շարժման ուժեղացումը Բրիտանական կայսրությանը հասցրեց ճգնաժամի:

Պատերազմի ավարտից հետո իշխանությունն Անգլիայում գտնվում էր լիբերալներից, պահպանողականներից և լեյբորիստներից կազմված Լլոյդ Ջորջի կալիցիոն կառավարության ձեռքում: 1918թ. դեկտեմբերին անցկացվեցին հերթական ընտրությունները: Այդ ընտրություններում պահպանողականները և լիբերալները նորից կազմեցին միասնական քույ: Ընտրություններից մի քանի օր առաջ լեյբորիստական առաջնորդները հեռացան կառավարական կոալիցիայից և հանդես եկան իրենց ծրագրով, որով հավաստիացնում էին, թե իշխանության գլուխ անցնելու դեպքում կհասնեն հողի և արդյունաբերության առաջատար ճյուղերի ազգայնացմանը, Իռլանդիայի և Հնդկաստանի ազատությանը և մի շարք այլ հարցերի լուծմանը:

Ընտրությունների հետևանքով լիբերալ պահպանողական կոալիցիան պառլամենտում հասավ հաջողության: Առաջատար տեղ զրավեցին պահպանողականները, որոնք ձեռք բերեցին մանդատների մեծ մասը: Լեյբորիստներից պառլամենտի անդամ ընտրվեց ավելի քան 60 պատգամավոր: Միաժամանակ, ընտրությունները ցույց տվեցին, որ լիբերալ կուսակցությունը գտնվում է քայքայման վիճակում: Մինչ այդ, իշխանությունն իր ձեռքում պահելով ավելի քան 100 տարի, լիբերալները, ըստ էության, 1918թ. ընտրություններում կորցրեցին մոտ 100 տեղ: Կուսակցության կազմը զգալի չափով նոսրացավ: Լիբերալների մի մասն անցավ պահպանողականների կողմը, մյուս մասը՝ լեյբորիստների, որոնց ազդեցությունը գնալով ուժեղանում էր: Որոշ ժամանակ անց, լիբերալներն Անգլիայի քաղաքական կյանքում այլևս դեր չէին խաղում: Նրանք իրենց տեղը զիջեցին լեյբորիստներին:

1924թ. լեյբորիստների առաջնորդ Ռամսեյ Մակդոնալդը ձևավորեց առաջին լեյբորիստական կառավարությունը, որի մեջ մտան կուսակցության աջ թևի ներկայացուցիչները: Քանի որ լեյբորիստները պառլամենտում մեծամասնություն չունեին, Մակդոնալդի կաբինետը կախում ուներ լիբերալ կուսակցության աջակցությունից: Դրա համար լիբերալները պահանջում էին, որպեսզի լեյբորիստներն իրագործեն իրենց ծրագրի միայն այն մասը, որը չէր հակասում լիբերալ կուսակցության պահանջներին: Մակդոնալդի կառավարությունն անցկացրեց մի շարք բարեփոխումներ, սակայն իր խոստումների մեծ մասը չիրագործեց:

Լեյբորիստական երկրորդ կառավարությունը ձևավորվեց 1929թ.: Այսպիսով, XX դարում Անգլիայում պահպանվում է երկկուսակցական համակարգ, որի էությունն ընտրություններում երկու հիմնական կուսակցությունների տիրապետությունն էր: Մինչև 1923թ. դրանք պահպանողականներն ու լիբերալներն էին, իսկ 1923թ.՝ պահպանողականները և լեյբորիստները: Երկկուսակցական համակարգը չէր բացառում այլ քաղաքա-

կան կուսակցությունների) գոյությունը (այսպես. 1920թ. ստեղծվեց կոսով-միխոսկան կուսակցությունը): Երկու քաղաքական կուսակցությունների տիրապետությունն այնպիսի ազդեցություն գործեց անգլիական սահմանափակության զարգացման վրա, որ երկկուսակցական համակարգը կայող է համարվել չգրված սահմանադրական սովորություններից մեկը:

Երկկուսակցական համակարգի կարևոր առանձնահատկությունը հասարակում է այն փաստը, որ երկու հիմնական քաղաքական կուսակցությունների առաջնորդներն անվեհապահորեն ընդունելի էին համարում գոյություն ունեցող հասարակական կարգի հիմքերը և իշխանությունը մեկը մյուսին հանձնելով, արմատական փոփոխությունների չէին գնում:

Երկկուսակցական համակարգի գոյության պահպանման հիմնական միջոցն ընտրական համակարգն էր, որի հիմքում ընկած էր յուրաքանչյուր ընտրական տարածքից մեկ թեկնածու ընտրելու սկզբունքը:

Արդյունքում, փոքր կուսակցությունների ներկայացուցիչները հայտնվում էին անբարենպաստ վիճակում: Նրանց համար պառլամենտում տեղ գրավելը դարձավ դժվարին խնդիր:

XX դարում ընդունվեցին մի քանի ընտրական օրենքներ, որոնք նպաստեցին ընտրական իրավունքի հետագա դեմոկրատացմանը: Առաջին ընտրական բարեփոխումն անցկացվեց համաշխարհային պատերազմից անմիջապես հետո (1918-1919թթ.): Համաձայն այդ օրենքի, ընտրելու իրավունք ստանում էին 21 տարին բոլորած արական սեռի այն անձինք, որոնք բավարարում էին նստակեցության ցեմզի պահանջներին (6 ամիս), կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով ձեռք էին բերել որոշակի տարածք¹: 1918թ. ընդունված ակտով ընտրական իրավունքից օգտվում էին 30 տարին բոլորած այն կանայք, ովքեր որպես սեփականություն ունեին անշարժ գույք, 5 ֆունտ ստեռլինգից ոչ պակաս տարեկան եկամուտ, կամ ամուսնացել էին այդ պայմանին բավարարող տղամարդու հետ²:

Ընտրական բարեփոխումը, այնուամենայնիվ, խտրականություն էր դնում տղամարդու և կնոջ միջև ու զրկում կանանց պառլամենտում ակտիվ հանդես գալու հնարավորությունից: 1929թ. պառլամենտական ընտրությունների նախօրեին պահպանողական կառավարությունը կյանքի կոչեց ևս մեկ բարեփոխում՝ «1928թ. ժողովրդական ներկայացուցչության մասին ակտը», որով հավասարվեցին տղամարդու և կնոջ ընտրական իրավունքները³:

¹Акт о народном представительстве 1918г., հղ. 1, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 321:

²Նույնը, հղ. 4:

³Акт о народном представительстве 1928г., հղ. 1, 2, 8, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 322-323:

Ընտրական իրավունքի դեմոկրատացման նոր փուլը սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: 1948թ. լեյբորիստական կառավարության կողմից ընդունված «ժողովրդական ներկայացուցչության մասին ակտը» փոփոխություն մտցրեց ընտրական տարածքների տեղաբաշխման մեջ և, որ ավելի կարևոր է, վերացրեց կրկնակի քվե տալը: Այսուհետ ոչ ոք չէր կարող քվեարկել ավելի, քան մեկ ընտրատարածքում¹:

Վերջապես, 1969թ. լեյբորիստական կառավարությունն ընդունեց «ժողովրդական ներկայացուցչության մասին ակտ», որով ընտրություններին կարող էին մասնակցել ոչ թե 21, այլ 18 տարին բոլորած Անգլիայի քաղաքացիները²:

2. ՊԱՌԼԱՍԵՆՏԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՅՈՒՄԸ

Պետական կարգը: Պետական կարգի զարգացումը XX դարում ընթանում էր գործադիր իշխանության ուժեղացման ճանապարհով: Այդպիսի զարգացման հիմնական նախադրյալներն ի հայտ էին եկել դեռևս XIX դարի վերջին, իսկ XX դարի իրադարձությունները բարենպաստ պայմաններ ստեղծեցին դրա իրականացման համար: Առաջին համաշխարհային պատերազմի կարևորագույն հետևանքների թվին է պատկանում օրենսդրական լիազորությունների և կառավարության փաստական իշխանության ընդլայնումը: Պատերազմի առաջին իսկ տարում կասեցվեց «Հաբեաս կորպուս ակտը»: 1914թ. ընդունվում է «Պետության պաշտպանության մասին ակտը», որն օրինական ճանապարհով պատերազմի ժամանակ ամբողջ իշխանությունը հանձնեց կառավարությանը: Պատերազմի ավարտից հետո այդ ակտը վերացվեց, բայց մի շարք լիազորություններ, որոնք վերապահված էին կառավարությանը, որպես ժամանակավոր և արտասովոր, շարունակվեցին կիրառվել: Բացի այդ, սկիզբ դրվեց օրենքների հրապարակման պրակտիկային, որը կառավարությանը վերապահում էր արտակարգ լիազորություններ:

1920թ. ընդունվեց օրենք արտակարգ լիազորությունների մասին, որը կրում էր արդեն ոչ թե ժամանակավոր բնույթ, այլ հանդիսանում էր մշտապես գործող ակտ: Այդ օրենքը հնարավորություն էր տալիս կառավարությանը՝ թագավորի անունից երկրում արտակարգ դրություն մտցնելու վերաբերյալ հրապարակել հրամանագրեր, եթե համարի, որ որևէ անձ կամ խումբ, իր արարքով խանգարում է հասարակության նորմալ կյանքը, վնաս

¹ Ակտ о народном представительстве 1948г., հղ. 1, տն'ю Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 323-324:

² Ակտ о народном представительстве 1969г., հղ. 1, տն'ю Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 324:

հասգում հանրության շահերին (խոչընդոտում են սննդամթերքի, ջրի, վառելիքի, լուսավորության մատակարարումների և այլն): Արտակարգ դրության պայմաններում կառավարությունը կարող է կիրառել ցանկացած միջոցառում, որն անհրաժեշտ կհամարի հասարակական անվտանգության և հասարակության նորմալ կյանքի համար: Օրենքը հնարավորություն էր տալիս պայքարել նաև գործադուլների դեմ, ինչը և բազմիցս իրականում արվում էր:

1939թ. պառլամենտի կողմից ընդունվեց արտակարգ լիազորությունների մասին նոր ակտ. որը գործադիր իշխանությանն իրավունք վերապահեց հրապարակելու այնպիսի կարգադրագրուր, որոնք կառավարությունն անհրաժեշտ կհամարեր հասարակական անվտանգության ապահովման, պետության պաշտպանության և հասարակական կարգ ու կանոնի պահպանման համար:

Կառավարությանը վերապահելով արտակարգ լիազորություններ, պառլամենտը ոչ միայն նպաստեց նրա գործադիր իշխանության ուժեղացմանը, այլև նրան հանձնեց օրենսդիր իշխանությունը:

Պառլամենտը գործնականորեն զրկվեց կառավարման մարմինների գործնեությունը վերահսկելու իրավունքից: Համայնքների պալատը զրկվեց քաղաքական իշխանությունն իրականացնելու առաջատար դերից: Կուսակցական համակարգի օգնությամբ կառավարությունը վերահսկում էր համայնքների պալատին: Վարչապետն իրավունք ստացավ ցանկացած ժամանակ պառլամենտը ցրելու: Դա նպաստում էր կաբինետի իշխանության էլ ավելի ուժեղացմանը: Կաբինետի այսպիսի դիկտատուրայի արդյունքը հանդիսացավ այն, որ նա կարող էր սկզբում գործել, իսկ հետո արդեն սպասել պառլամենտի կողմից իր գործողությունների հավանությանը:

1949թ. լեյբորիստական կառավարությունն անցկացրեց նոր բարեփոխում, որը վերաբերում էր Լորդերի պալատին: Այդ պալատում հնամյա հողային ազնվականության հետմորդները կազմում էին փոքրամասնություն: Պալատի անդամների մոտավորապես կեսը պերեր էին, որոնք ունեին XX դարում շնորհված տիտղոսներ:

1949թ. ընդունված օրենքը, ըստ էության, փոփոխություն էր նախատեսում «1911թ. պառլամենտի մասին ակտում»: Այն նպատակ ուներ թուլացնել Վերին պալատի իշխանությունը: Սակայն Լորդերի պալատը դեռ բավականաչափ հնարավորություններ ուներ: Այսպես, 1965թ. լորդերը տապալեցին մահապատիժը վերացնելու մասին օրինագիծը: 1958թ. պահպանողականները փորձեր արեցին ընդլայնել Լորդերի պալատի լիազորությունները, սակայն այն ավարտվեց անհաջողությամբ: Չնայած դրան, Վերին պալատն ընտրվող Ստորին պալատի դեմ, որպես խոչընդոտ, մնում էր բավականաչափ ուժեղ: Այն համարվում էր Մեծ Բրիտանիայի բոլոր դատարանների նկատմամբ բողոքարկման բարձրագույն ատյան:

Օժտված լինելով մեծ ազդեցությամբ, Վերին պալատն ընդունակ էր րան ճնշում գործադրել քաղաքական կյանքի վրա:

Մեծ Բրիտանիայի քաղաքական համակարգում յուրահատուկ տեղ էր գրավում միապետը Չեղականորեն պահպանվել էին նախկին քաղաքականական շատ արտոնություններ, այդ թվում կարևորագույնը՝ վարչապետ նշանակելու իրավունքը: Չնայած այս ընտրությունը սահմանափակ էր նրանով, որ նոր վարչապետը պետք է վայելի համայնքների պալատի մեծամասնության վստահությունը և կարողանար ձևավորել նախարարների կաբինետը, սակայն, երբ պառլամենտում մեծամասնություն կազմող կուսակցության առաջնորդը բավականաչափ ասուր դիրք չէր գրավում ապա կառավարող միապետի խոսքն ուներ վճռական նշանակություն: Այսպես, 1931թ. լեյբորիստական կաբինետն ընդունեց որոշում հրաժարականի մասին: Ենթադրվում էր, որ թագավորը կհանձնարարի Բոլդուինին ձևավորել պահպանողական կառավարությունը, սակայն Գեորգի V-ը Մակլոունայդին առաջարկեց գլխավորել նոր կառավարությունը: Պահպանվում են նաև միապետի մյուս լիազորությունները (օրինակ, ոչ մի օրինակով չէր կարող օրենք դառնալ առանց թագավորական սանկցիայի, միայն թագուհին կարող էր հրավիրել կամ ցրել պառլամենտը, շնորհել պետի տիտղոսը և այլն):

Այս բոլոր լիազորությունները համարվում էին պարզ ձևականություն, քանի որ համաձայն անգլիական սահմանադրական ակտերի, պետության ղեկավարը պետք է գործեր իր նախարարների խորհրդով: Միաժամանակ, նախատեսվում էր, որ միապետը պարտավոր չէ հետևել խորհրդատուների բոլոր խորհուրդներին. նա իրավունք ուներ իր համաձայնությունը չտալ այնպիսի քաղաքականությանը, որը նրա կարծիքով կքայքայեր անգլիական պետականության հիմքը: Այս առումով թագավորը կարող էր արձակել նախարարների կաբինետը, ցրել պառլամենտը, մերժել օրինագծերի հաստատումը և այլն¹:

Այսպիսով, թագավորի իշխանությունը կրում էր գաղտնի բնույթ և անհրաժեշտության դեպքում, շնորհիվ իր սահմանադրական իրավունքների, միապետությունը կարող էր հանդիսանալ իշխող դասակարգի լուրջ պահեստային ուժը:

Գործադիր իշխանության ուժեղացումը, ի դեմս նախարարների կաբինետի, ուղեկցվում էր պետական ապարատի բյուրոկրատացումով: Բյուրոկրատական ապարատի կանոնները ձևակերպվել էին դեռևս XIX դարի վերջին: Կառավարական բոլոր գերատեսչություններում, բացի արտաքին գործերի նախարարությունից, մտցվում էր պաշտոնների զբաղեցման ատեստավորման համակարգ: Բարձրակարգ պաշտոնների նշանակվում

¹ Батыр К.И., Всеобщая история государства и права, М., 2000, էջ 309:

էին մրցույթի հիման վրա:

XX դարի սկզբին ստեղծվեցին մի շարք նախարարություններ ու գերատեսչություններ: Հասարակության կյանքի բոլոր ոլորտներում աստիճանավորների լիազորությունների ընդլայնումն առաջ բերեց նրանց թվի ավելացում: XX դարի 60-ական թվականների կեսերին Անգլիայում գոյություն ուներ ավելի քան 100 նախարարություն:

Անգլիայի պետական կարգի անբաժանելի մասն էին կազմում բանակը, ոստիկանությունը և դատարանը: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը, անգլիական բանակը ձևավորվում էր կամավոր հիմունքներով: 1916թ. մայիսին պառլամենտի կողմից ընդունվեց օրենք պարտադիր զինվորական ծառայության մասին: Պատերազմի ավարտից հետո այդ օրենքը վերացվեց և բանակը, ինչպես նախկինում, կազմավորվում էր կամավորական սկզբունքով: Երկրորդ համաշխարհային պատերազմը սկսվելու նախօրյակին՝ 1939թ. ապրիլին, հրապարակվում է օրենք համընդհանուր զինվորական ծառայության մասին, որը պահպանվեց մաս հետպատերազմյան շրջանում:

Անգլիայի ոստիկանական ուժերը ձևավորվում են տեղական կազմավորումներից: Հատուկ «մշտական կոմիտեն» նշանակում է կոմսոթյան գլխավոր ոստիկանին, որը ստեղծում է ոստիկանական անձնակազմը և ղեկավարում այն՝ գտնվելով «մշտական կոմիտեի» հսկողության տակ: Քաղաքներում գործում է սեփական ոստիկանություն, որի պետին նշանակում է քաղաքային խորհուրդը: Ամենամեծաքանակը հանդիսանում է Լոնդոնի ոստիկանությունը: Երկրի ոստիկանական ուժերի ընդհանուր կառավարումն իրականացնում է ներքին գործերի նախարարությունը: Բացի կանոնավոր ոստիկանությունից, գոյություն ունեն հատուկ պահեստային ստորաբաժանումներ, որոնք հանդես են գալիս արտակարգ իրավիճակների առկայության դեպքերում:

Մեծ Բրիտանիայում բարձրագույն դատական ատյանը հանդիսանում է Լորդերի պալատը: Այն բողոքարկման ատյան է և, միաժամանակ, առաջին ատյանի դատարան՝ հանցագործությունների մեջ մեղադրվող պերերի համար:

Գերագույն դատարանը կազմված է 3 պալատներից.

1. Քաղաքացիական վեճերը լուծող բարձրագույն դատարանից;
2. Քրեական գործերում մասնագիտացած թագավորական դատարանից;
3. Բողոքարկման դատարանից:

Տեղերում արդարադատությունն իրականացնում են հաշտարար դատարանները:

Տեղական կառավարում: Մեծ Բրիտանիայում երկար ժամանակ պահպանվում էր XIX դարում ձևավորված տեղական մարմինների կառավարման համակարգը: 1972թ. ընդունվեց «Տեղական կառավարման մասին

ակտը», որը, փոփոխություններ մտցնելով, սահմանեց մարմինների երկաստիճան համակարգ կոմսություններում և զավառներում: Յուրաքանչյուր կոմսությունում և զավառում ձևավորվում էր խորհուրդ, որը կազմված էր նախագահից ու խորհրդակազմներից: Խորհուրդն իրականացնում էր օրենքով նախատեսված բոլոր լիազորությունները: Նախագահն ընտրվում էր խորհրդում՝ խորհրդակազմների կազմից, իսկ խորհրդակազմներին ընտրում էին տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիները¹: Խորհուրդը գործում էր չորս տարի ժամկետով: 1972թ. ակտով տեղական իշխանության մարմիններում կարող էին ընտրվել միայն 21 տարին բոլորած այն գործունակ անձինք, որոնք հանդիսանում էին Բրիտանիայի հպատակներ, կամ Իռլանդական հանրապետության քաղաքացիներ և առնվազն 12 ամիս մշտապես բնակվել էին տվյալ տարածքում²:

1985թ. լուծարվեցին խոշոր արդյունաբերական քաղաքների մունիցիպալիտետները: Ամբողջությամբ վերցրած տեղական կառավարման զարգացումն արտահայտվում էր իշխանության կենտրոնական մարմինների կողմից վերահսկողության ուժեղացմամբ: Դա ամենից առաջ արտահայտվեց նրանում, որ մի շարք պարտականություններ տեղական մարմիններից անցան կենտրոնական մարմիններին, որոնցից ֆինանսական կախվածության մեջ էին տեղական մարմինները: Վերջինիս շահույթի գործող աղբյուրները չէին բավականացնում և կենտրոնական իշխանությունը, մերժելով լրացուցիչ ֆինանսավորումը, իրագործում էր դատացիա՝ վերահսկելով տեղերում դրամական միջոցների բոլոր ծախսումների վրա:

Բրիտանական գաղութային կայսրությունը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Բրիտանական կայսրության դոմինիոններն Անգլիայի համար կարևոր հենարան էին հումքի մատակարարման և մարդկային ռեզերվի առումով: Այդ ժամանակաշրջանում զգալիորեն աճեց դոմինիոնների տնտեսությունը, հզորացավ ազգային բուրժուազիան, որն ավելի վճռական սկսեց պայքարել ինքնուրույնություն ձեռք բերելու համար:

Հետպատերազմյան շրջանում դոմինիոններն էլ ավելի ընդարձակեցին իրենց ինքնակառավարման շրջանակները: Նրանք հաճախ վարում էին միանգամայն ինքնուրույն քաղաքականություն:

Բրիտանական դոմինիոններից առավել զարգացածը Կանադան էր: Պատերազմի ավարտից հետո այստեղ ծավալվեց բանվորական և ֆերմե-

1. Акт о местном управлении 1972г., հոդ. 2, 3, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 317-318:

2. Акт о местном управлении 1972г., հոդ. 79, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 319:

րական ուժեղ շարժում: Պատերազմի հետևանքով կանադական բուրժուազիայի տնտեսական դիրքերը զգալի չափով ամրացան: Միաժամանակ ուժեղացան կանադական մոնոպոլիստների կապերը Միացյալ Նահանգների մոնոպոլիստների հետ: Այդ հանգամանքներն իրենց արտացոլումը գտան կանադական կառավարության քաղաքականության մեջ: Մասնակցելով փարիզյան հաշտության կոնֆերանսի աշխատանքներին, Կանադայի պատվիրակությունը ձգտում էր դոմինիոնների համար ձեռք բերել հաշտության պայմանագրերն ինքնուրույն ստորագրելու, ինչպես նաև Ազգերի լիգայում Անգլիայից առանձին ներկայացուցչություն ունենալու իրավունք:

Կայսերական հերթական կոնֆերանսում 1923թ. Անգլիան ստիպված եղավ ճանաչել դոմինիոնների՝ օտարերկրյա պետությունների հետ ինքնուրույն պայմանագրեր կնքելու իրավունքը:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո առավել մեծ լարվածության հասավ ազատության համար իռլանդական ժողովրդի մղած պայքարը, որի հետևանքով 1921թ. դեկտեմբերի 6-ին կնքվեց անգլո-իռլանդական պայմանագիրը: Այն նախատեսում էր Բրիտանական կայսրության դոմինիոնի ստեղծումը՝ «Իռլանդական ազատ պետություն» անվանումով:

Արդյունաբերական տեսակետից Իռլանդիայի առավել զարգացած մասը կազմող հյուսիս-արևելյան վեց կոմսություններ անջատվեցին նրանից և մնացին Մեծ Բրիտանիայի կազմում: Անգլիական կառավարությունը նոր դոմինիոնում պահպանեց իր ռազմական և ռազմածովային բազաները: Պայմանագրով իռլանդական գյուղացիներն առաջվա պես պետք է անգլիական գանձարան մուծեին հողի փրկագին:

Այսպիսով, իռլանդական ժողովրդի հեղափոխական, ազգային-ազատագրական պայքարը, չնայած ստիպեց Անգլիային գնալ Իռլանդական ազատ պետության ստեղծմանը, այնուամենայնիվ, չհասավ իր նպատակին: Իռլանդիան մասնատվեց, իռլանդական պետությունը մնաց Բրիտանական կայսրության կազմում, իսկ անգլիական բուրժուազիան այնտեղ զգալի չափով պահպանեց իր տնտեսական դիրքերը:

XX դարի 30-ական թվականների Անգլիայի պատմությունն աչքի է ընկնում գաղութային և կախյալ երկրներում ազգային-ազատագրական շարժումներով, դոմինիոնների հետ տնտեսական և քաղաքական հակասությունների լարվածությամբ: Բրիտանական կայսրության հիմքերը գնալով թուլանում են: Չզտելով պահպանել այն, անգլիական կառավարությունը հարկադրված եղավ գնալ նոր զիջումների:

1931թ. նոյեմբերի 24-ին անգլիական պառլամենտն ընդունեց մի օրենք, որն ուժի մեջ մտավ մույն թվականի դեկտեմբերի 11-ին և պատմությանը հայտնի դարձավ «1931թ. դեկտեմբերի 11-ի Վեստմինիստերյան ստատուտ» անունով: Այն ամրապնդեց «Ազգությունների բրիտանական

ընկերակցության» մեջ անգլիական բոլոր դոմինիոնների համախառնումը և սահմանեց նրանց փոխհարաբերությունների շրջանակը: Վեստմինիստերյան ստատուտը դոմինիոններին իրավունք տվեց ինքնուրույն որոշել ներքին ու արտաքին քաղաքականության հարցերը, այլ երկրներում ունենալ դիվանագիտական ներկայացուցիչներ, մասնակցել միջազգային համաձայնագրերի կնքմանը և այլն:

«1931թ. դեկտեմբերի 11-ի Վեստմինիստերյան ստատուտ» օրենքն առանձնանում է նրանով, որ.

1 Այն դոմինիոններին իրավունք վերապահեց ինքնուրույն ստեղծել օրենքներ: Դոմինիոնի պառլամենտի կողմից ընդունված ակտերն ունեին իրավաբանական ուժ անկախ նրանից հակասում էին դրանք Անգլիայի օրենքներին, թե ոչ;

2 Դրանով Միացյալ թագավորության պառլամենտի կողմից ընդունված ոչ մի ակտ չի կարող դոմինիոնի համար լինել պարտադիր, եթե վերջինս համաձայն չէ դրա հետ¹;

3. Ստատուտի ընդունումից հետո գեներալ-մահանգապետը նշանակվում էր դոմինիոնի կառավարության համաձայնությամբ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ազգային-ազատագրական շարժման ակտիվացման հետևանքով դոմինիոնի կարգավիճակ ստացան անգլիական մի քանի գաղութներ:

Անգլիացիներն ավելի մեծ դժվարությունների հանդիպեցին Հնդկաստանում: Անկախության համար մղած պայքարը տվեց իր արդյունքը: 1946թ. մարտին Անգլիայի կառավարությունը ճանաչեց Հնդկաստանի անկախությունը: Բայց և այնպես փորձ էր անում այլ ճանապարհներով պահպանել իր տիրապետությունը Հնդկաստանի նկատմամբ: Հնդկաստանն ըստ կրոնական հատկանիշի մասնատված էր երկու պետության, որոնք մնացին Բրիտանական կայսրության կազմում որպես դոմինիոններ: Այնուամենայնիվ, Հնդկական միությունը և Պակիստանը դադարեցին գաղութներ լինելուց և ձեռք բերեցին պետական անկախություն, որն ուներ սահմանափակ բնույթ:

Անկախություն և դոմինիոնի կարգավիճակ ստացավ նաև Ցեյլոնը:

1948թ. Մեծ Բրիտանիան ստիպված եղավ ճանաչել Իռլանդիայի կողմից ընդունված որոշումը՝ Բրիտանական միության կազմից դուրս գալու և Իռլանդական Հանրապետություն հռչակելու մասին:

Ավելի բարդ իրավիճակ ստեղծվեց Բրիտանական կայսրության գաղութներում: Գաղութային պատերազմի հետևանքով 1957թ. անկախություն

¹ Вестминстерский статут, 11 декабря 1931г., стр. 2, in: В. Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 327:

ձեռք բերեցին Գանան և Մալայան Ֆեդերացիան: 1960թ. անկախ դարձան Կիպրոսը և Նիզերիան: Չնայած այս ամենին, Մեծ Բրիտանիայի գաղութային կայսրությունը (մանավանդ նրա տիրապետությունն Աֆրիկայում) դեռ պահպանում էր զգալի չափեր և փլուզման ընթացքը հետագա տարիներին միայն ծավալվեց իր ողջ ուժով:

**ՖՐԱՆՄԻԱՅԻ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՌԵԺԻՄ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ**

Առաջին համաշխարհային պատերազմից Ֆրանսիան դուրս եկավ հաղթանակով: Վերսալյան պայմանագրով նրան հանձնվեց Գերմանիայի գաղութների մի մասը և վերադարձվեցին Էլզասն ու Լոթարինգիան: Երկրում արդյունաբերությունը բռնեց զարգացման նոր ուղի: Շարունակում էր մեծ դեր խաղալ նաև գյուղատնտեսությունը: 1930թ. գյուղատնտեսական արտադրանքի բաժինը երկրի արտադրության ընդհանուր ծավալում կազմում էր 44%: Հետպատերազմյան շրջանում զգալիորեն ուժեղացավ խաշոր կորպորացիաների և տրեստների աճը: Ֆրանսիան շարունակում էր մնալ խաշոր գաղութային տերություն: Դրա հետ մեկտեղ, առաջին համաշխարհային պատերազմը զգալիորեն քայքայեց ֆինանսական կապիտալի դիրքերը համաշխարհային շուկայում: Վարկատու երկրից Ֆրանսիան վերածվեց պարտապան երկրի: Պատերազմի շրջանում նա ԱՄՆ-ից պարտք վերցրեց ավելի քան 4 միլիարդ դոլար: Ֆրանսիայի հետպատերազմյան զարգացումն ընթանում էր ընդհանուր ճգնաժամի պայմաններում, որը հարված հասցրեց առաջին հերթին ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի տնտեսությանը:

Այս բոլորն էական ազդեցություն թողեցին երկրի սոցիալական հարաբերությունների վրա, որոնք բնութագրվում էին ծայրահեղ անկայունությամբ: 1920թ. սոցիալիստական կուսակցության համագումարում տեղի ունեցավ նրա պառակտումը կոմունիստների և սոցիալիստների: Ստեղծվեց կոմունիստական կուսակցությունը: Սոցիալիստները պահպանեցին իրենց կուսակցության հին՝ սոցիալիստական կուսակցություն, անվանումը: Երկրի ներքաղաքական ճգնաժամային իրավիճակում շարունակում էր գործել 1875թ. Սահմանադրությունը: Պարզ դարձավ, որ այն նախկինում ընդուն-

ված բոլոր սահմանադրություններից ամենահարատևն էր: 1875թ. սահմանադրությունը, ըստ էության, չէր պատասխանում շատ հարցերի, որոնք կապված էին կառավարության կառուցվածքի, ընտրական իրավունքի և այլնի հետ:

Ընտրական բարեփոխումներ: 1919թ. մասամբ բավարարվեց համամասնական ընտրական համակարգ մտցնելու ծախ քաղաքական խմբակցությունների պահանջը: 1919թ. ընդունվեց ընտրությունների մասին օրենք, որը նախատեսում էր մեծամասնական և համամասնական համակարգերի զուգակցում: Այսուհետ յուրաքանչյուր դեպարտամենտ պետք է ընտրեր մեկ պատգամավոր՝ 75 հազար բնակչից: Դեպարտամենտում ընտրվող պատգամավորների թիվը կախված էր այնտեղ ապրող ազգաբնակչության թվից: Յուրաքանչյուր կուսակցություն կամ կուսակցությունների միավորում հանդես էր գալիս թեկնածուների առանձին ցուցակով: Ընտրողները, սակայն, քվեարկում էին ոչ թե այդ ցուցակի համար ամբողջությամբ վերցրած, այլ յուրաքանչյուր առանձին պատգամավորի համար: Ընդ որում, նրանք իրավունք ունեին իրենց ձայնը տալ տարբեր ցուցակներում գտնվող թեկնածուներին: Ընտրված համարվում էր այն թեկնածուն, որը հավաքել էր ձայների բացարձակ մեծամասնություն: Համամասնական համակարգի սկզբունքները կիրառվում էին միայն այն դեպքում, երբ ոչ բոլոր մանդատներն էին բաշխվել վերը նշված եղանակով: Այդ դեպքում անցկացվում էին բավականին բարդ հաշվարկներ: Դեպարտամենտով քվեարկողների թիվն ամբողջությամբ բաժանվում էր մանդատների ընդհանուր թվի վրա, իսկ մեկ ցուցակում գտնվող թեկնածուների համար տրված ձայների ընդհանուր գումարը բաժանվում էր այնտեղ նշված թեկնածուների թվի վրա: Առաջին մասը կոչվում էր «ընտրական մետր», երկրորդը՝ «ցուցակի միջին»: Ռոշակի ցուցակի բաժին ընկնող պատգամավորական մանդատները հանձնվում էին այն թեկնածուներին, որոնք մտել էին ցուցակի մեջ և դրա շրջանակներում ստացել ձայների մեծամասնություն:

Դրա հետ մեկտեղ, պահպանվել էին հին ընտրական տարածքները՝ բնակչության անհավասարաչափ բաշխվածությամբ, ինչն իրականում պահպանողական, հիմնականում գյուղական, դեպարտամենտներից մեկ ընտրովի ձայնը հավասարեցնում էր խիտ բնակեցված արդյունաբերական շրջանների երկու-երեք ձայների:

1927թ., երբ կառավարությունը գլխավորում էր ծայրաստիճան պահպանողական մտքի քաղաքական գործիչ Պուանկարեն, վերականգնվեց ընտրությունների մեծամասնական համակարգն իր ողջ ծավալով: 1927թ. օրենքի համաձայն Ֆրանսիան և նրա անդրծովյան տիրույթները բաժանվել էին 612 ընտրական տարածքների (դրանցից 9-ն ընկնում էր Ալժիրին, իսկ 10-ը՝ մյուս գաղութներին: Ընտրական իրավունք ունեին այնտեղ բնակվող Ֆրանսիայի քաղաքացիները: Գաղութների բուն բնակչությունը գրկ-

ված էր նման իրավունքից):

Մեծամասնական համակարգի վերականգնումը չնպաստեց սակայն երկրի ներքաղաքական դրության կայունացմանը՝ հօգուտ պառլամենտական շրջանների:

XX դարի 30-ական թվականների տնտեսական ճգնաժամը, ապա նրան հետևող արվյունաբերական արտադրության հարաբերական լճացումը հանդիսացան սոցիալական հակասությունների հետագա լարվածության հիմքը, որը վճռական ազդեցություն թողեց երկրի պետական կարգի վրա: Դա առաջին հերթին արտաօրհանվեց պառլամենտի հեղինականության անկմամբ:

Սկսած 30-ական թվականների երկրորդ կեսից պառլամենտը գրեթե ամեն տարի կառավարությանն օժտում էր արտակարգ լիազորություններով: Կաբինետների անհարատևության պատճառով այդ լիազորությունները հայտնվում էին բարձրագույն բյուրոկրատիայի ձեռքում: Արդյունքում՝ պառլամենտական օրենսդրությանը հակադրվում էր վարչական կարգով իրականացվող օրենսդրությունը:

Կաբինետների ճակատագիրն ավելի հաճախակի սկսեց լուծվել ոչ այնքան անմիջականորեն պառլամենտականների, որքան տարբեր ոչ պառլամենտական կազմակերպությունների՝ կուսակցությունների, ձեռնարկատերերի խմբավորումների, արհմիությունների կողմից: Պառլամենտի պատգամավորները հաճախ միայն կատարում էին նրանց հրահանգները:

Երրորդ հանրապետության պառլամենտի դերի անկումը պարզ երևաց այն բանից հետո, երբ իշխանությունները, արհամարելով սահմանադրության դրույթները, 1939թ. սեպտեմբերին պատերազմ հայտարարեցին Գերմանիային: Այստեղ տեղին է հիշեցնել, որ 1875թ. սահմանադրության 9-րդ հոդվածով երկրի նախագահը չէր կարող պատերազմ հայտարարել առանց պառլամենտի երկու պալատների համաձայնության¹:

1940թ. մայիսին Գերմանա-Ֆաշիստական զորքերը ներխուժեցին Ֆրանսիա: Ֆրանսիական բանակը պարտվեց: Երկրի կառավարությունը ստիպված որոշում ընդունեց ռազմական գործողությունները դադարեցնելու մասին: Այդ ժամանակ Ֆրանսիայի զգալի մասն օկուպացված էր ֆաշիստական Գերմանիայի կողմից: Երկիրը բաժանվեց երկու անհավասար մասերի: Առավել մեծ մասը, որն ընդգրկում էր Ֆրանսիայի արդյունաբերական առումով առավել զարգացած և ռազմավարական նշանակություն ունեցող արևելքի, հյուսիս-արևելքի, հյուսիսի և ատլանտյան ափի դեպարտամենտները, օկուպացված էր Գերմանիայի կողմից, մյուս մասում՝ հարավ-արևելյան շրջաններում, պահպանվեցին ֆրանսիական պետականու-

1. Закон об отношениях государственных властей 16 июля 1875г., հոդ. 9, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 154:

թյան ինստիտուտները, որոնք ստացան «Վիշիի պետություն» անվանումը: Վիշի քաղաքում հիմնավորվեց Ֆրանսիայի կառավարություն, որը որևէ ինքնուրույն դեր չէր կատարում: Հիտլերականների մտահաղացումով «անկախ ֆրանսիական կառավարությունը» պետք է չեզոքացներ ֆրանսիական նավատորմը և զաղութային զորքերը: Երբ հիտլերականները համոզվեցին, որ Վիշիի ռեժիմն ի վիճակի չէր կատարել իր առջև դրված խնդիրները, 1942թ. նոյեմբերին նվաճեցին նաև հարավային գոտին՝ վերացնելով Վիշիի «պետականության» վերջին մնացորդները:

2. ԶՈՐԲՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1946 Թ. ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկրի օկուպացման առաջին իսկ օրերից Ֆրանսիական հայրենասերները սկսեցին համախմբվել պայքարելու գերմանական զավթիչների դեմ: Գեներալ դը Գոլլը, որը 1940թ. հունիսին գտնվում էր Անգլիայում, հիմնեց «Ազատ Ֆրանսիայի կոմիտե»: Այն նպատակ ուներ հնարավորին չափով մեծ ուժեր համախմբել Ֆրանսիան ազատագրելու համար: Շուտով դը Գոլլն անգլիական կառավարության կողմից ճանաչվեց որպես բոլոր ազատ ֆրանսիացիների ղեկավար: Երկրի ներսում քաղաքական ուժերը համախմբվում էին ըստ կուսակցական հատկանիշի: Կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ հիմնարկ-ձեռնարկություններում, ինչպես նաև երկրի առանձին շրջաններում ստեղծվեցին Ժողովրդական կոմիտեներ: Հետագա պայքարի ընթացքում տեղի էր ունենում ազգային-ազատագրական ուժերի համախմբում, ինչպես նաև նրանց կազմակերպչական կառուցվածքի զարգացում:

1943թ. ամռանը ստեղծվեց «Ազգային ազատագրման ֆրանսիական կոմիտե», որը հետագայում վերակազմավորվեց Ֆրանսիայի ժամանակավոր կառավարության՝ դը Գոլլի գլխավորությամբ: Այդ նույն ժամանակ էլ ձևավորվեց Խորհրդակցական ասամբլեան, որը կազմված էր բոլոր քաղաքական կուսակցությունների և խմբերի ներկայացուցիչներից, որոնք պայքարում էին կամ հանդես գալիս Ֆրանսիայի ազատագրման համար:

1944թ. ամռանն անգլո-ամերիկյան զորքերը մտան Ֆրանսիա: Այդ նույն տարվա վերջում Ֆրանսիան գրեթե ազատագրվեց:

Առաջին սահմանադիր ժողովը: Երկրի ներքաղաքական կյանքի կարևորագույն հարցը նրա ազատագրումից հետո հանդիսանում էր պետական կարգի ապագան, նոր սահմանադրության ընդունումը: Հակահիտլերյան կոալիցիայի ուժերի կողմից ֆաշիստական ռեյսիի ջախջախումից հետո Ֆրանսիայի Ժամանակավոր կառավարությունը (1945թ. օգոստոս) հաստատեց դրույթներ, որոնց համաձայն Սահմանադիր ժողովի ընտրությունների անցկացման հետ մեկտեղ պետք է կայանա հանրաքվե: Սահ

սահմադիր ժողովը կոչված էր կազմելու նոր սահմանադրություն: Ընտրողներին առաջարկվում էր պատասխանել երկու հարցի.

1. Ցանկանում են արդյո՞ք նրանք, որ ընթացիկ նոր սահմանադրություն, թե ուժի մեջ մնա 1875թ. սահմանադրական օրենքները;

2. Սահմանադիր ժողովի կողմից ընդունված սահմանադրության մասնագիծը համարել վերանական, թե՞ այն պետք է հաստատվի հանրաքվեով:

Հանրաքվեի ընթացքում ընտրողների 96,4%-ն արտահայտվեցին նոր սահմանադրություն ընդունելու, իսկ 66,3%-ը ընդունման և հաստատման օգտին:

1946թ. ապրիլին Սահմանադիր ժողովի կողմից ավարտվեց սահմանադրության մախագծի կազմումը: Ենթադրվում էր ստեղծել միապալատ ինքնուրույն պառլամենտ: Նախագծով երկրի մախագահը զրկվում էր մի շարք արտոնություններից (վետոյի, պառլամենտը ցրելու, ներում շնորհելու իրավունքներից և այլն): Սահմանադրորեն ամրապնդվում էր արդյունաբերական առանձին ճյուղերի ազգայնացումը:

Սահմանադիր ժողովը մեծ ջանքեր գործադրեց հիշյալ մախագիծն ընդունելու համար: Սակայն հանրաքվեով այն չընդունվեց: Նախագծի օգտին կողմ քվեարկեց ավելի քան 9 միլիոն 300 հազար ընտրող, իսկ դեմ՝ 10 միլիոն 600 հազար մարդ:

Հանրաքվեի արդյունքները պահանջեցին նոր Սահմանադրական ժողովի ընտրություններ, որի ընթացքում առավել շատ ձայներ հավաքեց Կոմունիստական կուսակցությունը: Երկրորդ Սահմանադիր ժողովը մշակեց և քննարկման դրեց սահմանադրության նոր մախագիծ, որը 1946թ. հոկտեմբերին հաստատվեց հանրաքվեի միջոցով:

1946թ. Սահմանադրությունը: Սահմանադրության ներածականում հանդիսավոր կերպով հաստատվեցին մարդու ու քաղաքացու իրավունքները և ազատությունները, որոնք ընդունվել էին դեռևս «1789թ. մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրով»: Սահմանադրության ներածության մեջ ամրագրված դրույթով կանայք բոլոր բնագավառներում իրենց իրավունքներով հավասարվում էին տղամարդկանց՝ Հիմնական օրենքը քաղաքական ապաստանի իրավունք էր տալիս ազատության համար պայքարող և դրա համար հետապնդվող անձանց: Այն ամրագրեց մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին վերաբերող դեմոկրատական այնպիսի կարևորագույն դրույթներ, որոնք սահմանում էին, օրինակ, աշխատանքի, կոլեկտիվ պայմանագրեր կնքելու, արհմիություններ ստեղծելու և նրա անդամ դառնալու, քաղաքացիների ոտնահարված իրա-

¹ Конституция Французской Республики 1946г., տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 375:

վունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով գործադու-
մեր կազմակերպելու և անցկացնելու ու մի շարք այլ իրավունքներ: Սահ-
մանադրությունը, հաշվի առնելով ժամանակի ստեղծված տնտեսական
վիճակը, աշխատանք կատարելը համարեց յուրաքանչյուրի պարտքը:
Բարձրագույն օրենքը հասարակության սեփականությունը համարեց բո-
լոր այն ձեռնարկությունները, որոնց շահագործումն ուներ ազգային նշա-
նակություն: Ներածական մասում հռչակվեց դրույթ, ըստ որի Ֆրանսիա-
յում կրթությունը դարձավ անվճար և համարվեց պետության պարտքը:

Ֆրանսիական Հանրապետությունը պարտավորվում էր չնախաձեռնել
զավթողական-նվաճողական բնույթի պատերազմներ և իր զինված ուժերն
երբեք չօգտագործել որևէ ժողովրդի ազատության դեմ:

«Ֆրանսիան համարվում է անբաժան, աշխարհիկ, դեմոկրատական և
սոցիալական Հանրապետություն»¹: Հռչակելով որպես սոցիալական պե-
տություն, սահմանադրությունը վերջինիս պարտքն էր համարում օգնել ե-
րեխաներին, մայրերին, ծերերին, հաշմանդամներին և սոցիալապես անա-
պահով վիճակում գտնվող անձանց: Այս նպատակով առանձին օրենքնե-
րով նախատեսվեցին նպաստների ու թոշակների տարբեր չափեր:

Ֆրանսիական ժողովրդին հանձնվեց երկրի իշխանությունը, որն այն
սահմանադրության շրջանակներում իրականացնում էր անմիջապես՝
հանրաքվեի միջոցով, կամ անուղղակի՝ ներկայացուցիչների միջոցով²:

Սահմանադրությամբ պետության կառավարման ձևը հռչակվեց որպես
պառլամենտական հանրապետություն: Երկրի պառլամենտը պետք է
կազմված լիներ երկու պալատից՝ Ազգային ժողովից և Հանրապետության
խորհրդից: Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարով՝ համընդհանուր և
ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա: Միայն Ազգային ժողովն ի-
րավունք ուներ օրենքներ ընդունելու: Նա չէր կարող այդ իրավունքը փո-
խանցել մեկ ուրիշի: Օրենսդրական նախաձեռնությամբ օժտված էին
պառլամենտի անդամները և Նախարարների խորհրդի նախագահը:

Հանրապետության խորհուրդն ընտրվում էր կոմունանների և դեպար-
տամենտների կողմից՝ համընդհանուր և անուղղակի ընտրական իրավուն-
քի հիման վրա:

Սահմանադրության 20-րդ հոդվածով Հանրապետության խորհուրդը
ստացավ Ազգային ժողովի կողմից ընդունված օրինագծերը քննարկելու ի-
րավունք: Դրանց վերաբերյալ եզրակացությունը խորհուրդը պետք է ներ-
կայացներ երկամսյա ժամկետում: Եթե եզրակացությունը չէր համապա-
տասխանում Ազգային ժողովի կողմից ընդունված օրինագծի տեքստին,

¹ Конституция Французской Республики 1946г., հոդ. 1, տե՛ս Хрестоматия по
Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 376:

² Նույնը, հոդ. 3:

վերջինս քննարկում էր նախագիծը կամ օրենքի առաջարկն երկուրդ ընթերցմամբ: Այն վերջնական որոշում էր կայացնում միայն Հանրապետության խորհրդի կողմից ներկայացված ուղղումների վերաբերյալ, ինդունելով կամ մերժելով արդ ուղղումները՝ ամբողջությամբ կամ մասամբ: Ուղղումներն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում օրենքի քննարկումն երկրորդ ընթերցմամբ կատարվում էր բաց, ընդ որում դրա ընդունման համար պահանջվում էր Ազգային ժողովի ամբողջ կազմի ձայների բացարձակ մեծամասնություն, եթե խորհրդում օրենքի քննարկումն ամբողջությամբ անցկացվել էր այդ նույն պայմաններով:

Պետական իշխանության բարձրագույն ներկայացուցիչն ըստ սահմանադրության համարվում էր Հանրապետության նախագահը, որն ընտրվում էր պառլամենտի կողմից 7 տարի ժամկետով և կարող էր վերստնորվել մեկ անգամ: Նախագահին երկրի համապատասխան մարմինները պարտավոր էին ժամանակ առ ժամանակ տեղեկություն տալ միջազգային բանակցությունների մասին: Նա էր ստորագրում և վավերացնում միջազգային պայմանագրերը: Նրա կողմից իրականացվում էր օրենքի հրապարակումը: Նախագահն երկու պալատներից կարող էր պահանջել պառլամենտի կողմից ընդունված օրենքի նոր քննարկում: Սակայն, պետք է նշել, որ պառլամենտի կրկնվող որոշումը վերջնական էր: Նախագահը հաստատում էր նաև կառավարական կարևորագույն դեկրետները: Դրա հետ մեկտեղ նրա հրապարակած ակտերից յուրաքանչյուրը պետք է ստորագրվեր նաև Նախարարների խորհրդի նախագահի և այն նախարարի կողմից, որի գերատեսչությանն էր վերաբերում տվյալ ակտը:

Երկրի պետական կառավարումն իրականացնող մարմինը Նախարարների խորհուրդն էր՝ վարչապետի գլխավորությամբ: Վերջինս նշանակվում էր նախագահի կողմից պառլամենտի քաղաքական ֆրակցիաների ղեկավարների հետ խորհրդակցելուց հետո: Վարչապետի թեկնածուն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնում էր ապագա կաբինետի ծրագիրը: Եթե նա բաց քվեարկությամբ՝ ձայների բացարձակ մեծամասնությամբ ստանում էր վստահության քվե, ապա նախագահի դեկրետով իրականացվում էր նրա, ինչպես նաև վերջինիս կողմից ձևավորվող կաբինետի նախարարների նշանակումը:

Վարչապետն ապահովում էր օրենքների կատարումը: Պետական ողջ ապարատը գտնվում էր նրա անմիջական ղեկավարության տակ: Նա էր իրականացնում երկրի զինված ուժերի ընդհանուր ղեկավարումը¹:

Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն նախարարները կաբինետի ընդհանուր քաղաքականության համար Ազգային ժողովի առջև

¹ Конституция Французской Республики 1946г., стр. 47, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М, 1996, էջ379:

կրում էին կոլեկտիվ, իսկ անձնական գործունեության համար՝ անհատական պատասխանատվություն: Նրանք պատասխանատվություն չէին կրում Հանրապետության խորհրդի առաջ:

Կառավարությունը կարող էր Ազգային ժողովի առջև հարց բարձրացնել վստահության մասին: Այդ իրավունքը վերապահված էր Նախարարների խորհրդի նախագահին: Կաբինետին վստահության մեջ կարող էր մերժել միայն Ազգային ժողովի պատգամավորների բացարձակ մեծամասնությունը: Այդպիսի մերժումն առաջ էր բերում կաբինետի կոլեկտիվ հրաժարական (հոդված 49): Ազգային ժողովն իր հերթին նույնպես իրավունք ուներ հարց բարձրացնել կառավարության վստահության վերաբերյալ և ձայների բացարձակ մեծամասնությամբ ընդունել բանաձև, որի դեպքում նույնպես կառավարությունը պարտավոր էր հրաժարական տալու:

Դրա հետ մեկտեղ, սահմանադրությունը նախատեսում էր մման բանաձևի ընդունման իրավունքի հնարավոր չարաշահման հակազդեցության համակարգ: 51-րդ հոդվածի համաձայն, եթե 18 ամսվա ընթացքում տեղի ունենար Նախարարական երկու ճգնաժամ, ապա Նախարարների խորհուրդը կարող էր որոշում ընդունել Ազգային ժողովը ցրելու վերաբերյալ: Այդ որոշման համաձայն Ազգային ժողովի լուծարումը հռչակվում էր երկրի նախագահի դեկրետով: Դրանից հետո պետք էր 20 օրից ոչ շուտ և 30 օրից ոչ ուշ անցկացնել Ազգային ժողովի նոր ընտրություններ:

Սահմանադրությունը փաստորեն պահպանեց տեղական կառավարման նախկին համակարգը, ինչպես նաև ինքնակառավարման մարմինների գործունեությունը կառավարության կողմից վերահսկելու նախկին կարգը:

Սահմանադրության VIII գլուխը նվիրված էր «Ֆրանսիական միությանը»: Այն արձանագրում էր հավասարություն Ֆրանսիական գաղութային կայսրության բոլոր մասերում, որոնք մետրոպոլիայի հետ միասին այսուհետ կազմելու էին «Ֆրանսիական միություն»: Ամբողջ միության համար ընդհանուր հարցերը պետք է քննարկվեին «Ֆրանսիական միության» հիմնադիր ժողովում: Այդպիսի վերակառուցումը, սակայն չէր նախատեսում Ֆրանսիական գաղութներում իրավիճակի արմատական փոփոխություններ: Ավելին, շուտով երկրի կառավարող շրջանները պատերազմ սանձազերծեցին գաղութների ժողովուրդների դեմ, որոնք պայքարում էին ազատության և անկախության համար:

1946թ. սահմանադրությունն ընդհանուր առմամբ պահպանեց XIX դարի Ֆրանսիական հանրապետական սահմանադրությունների հիմնական միտումները:

Դրա հետ մեկտեղ, նրան հատուկ էին որոշ առանձնահատկություններ, որոնք շատ բանով պայմանավորված էին երկրում դեմոկրատական շարժման վերելքով և միաժամանակ ձախ ու աջ (պահպանողական) քաղաքա-

կան ուժերի միջև փոխզիջման անհրաժեշտությամբ: Այդ առանձնահատկություններն էին.

1. Պահպանվեց պետլամենտական երկպալատ համակարգը: Դա պայմանավորված էր օբյեկտիվ անհրաժեշտությամբ: Երկու պալատների առկայությունն օրենսդրությանը կայունություն էր տալիս: Օրինագիծը, որն ենթարկվել էր կրկնափ քննարկման միմյանցից անկախ պալատներում, պետք է լիներ ավելի կատարյալ: Դրա հետ մեկտեղ, սահմանադրությունը, հաշվի առնելով Երրորդ հանրապետության սենատի փորձը, որը խաչընդդատում էր դեմոկրատական օրենսդրության լոնդոնմանը, էականորեն սահմանափակեց երկրորդ պալատի իրավունքները:

2. Օրենքներն ընդունելու իրավունքը վերապահվում էր միայն սեկ պալատին՝ Ազգային ժողովին:

3. Սահմանադրությունը չէր նախատեսում ուժեղ և պառլամենտից անկախ նախագահական իշխանություն:

4. Չևավորվում էր Ազգային ժողովից կախյալ կառավարական իշխանության վարչակարգ.

Սահմանադրության կյանք մտնելուց հետո երկրի օրենսդիրն անցկացրեց սահմանադրական որոշակի բարեփոխումներ: 1948թ. սահմանվեց Հանրապետության խորհրդի ընտրությունների մեծամասնական համակարգ, իսկ մի քանի տարի անց այդ համակարգը կիրառելի դարձավ մակ Ազգային ժողովի ընտրությունների համար: 1951թ. մայիսի 8-ի օրենքի համաձայն կուսակցությունը կամ կուսակցությունների դաշինքը, եթե որևէ ընտրատարածքում հավաքում էր ձայների ավելի քան 50%-ը, ապա ստանում էր պատգամավորական բոլոր մանդատներն այդ ընտրատարածքից: Սահմանված դրույթները կուսակցություններին դաշինք կազմելու հնարավորություն էին տալիս: Եթե ընտրություններում միասնական ցուցակով հանդես եկած կուսակցությունը կամ կուսակցությունների դաշինքը չէր ստանում ձայների բացարձակ մեծամասնություն, ապա նախատեսվում էր համամասնական ներկայացուցչություն: Այսպիսով, 1951թ. օրենքը փոխարինեց 1946թ. հոկտեմբերի 5-ի օրենքին, որը նախատեսում էր Ազգային ժողովի անդամների ընտրությունը բացառապես համամասնական համակարգով:

Լուրջ փոփոխություններ կրեց մակ Հանրապետության խորհուրդը: Նրան աստիճանաբար վերապահվում են մինչպատերազմյան սենատի համարյա բոլոր իրավունքներն ու լիազորությունները: Խորհրդի անդամներին վերադարձվեց սենատորի կոչումը: Այդ գործընթացում կարևոր ուղենիչ հանդիսացավ 1954թ. դեկտեմբերի 4-ի նորմատիվ ակտը, որի համաձայն օրենսդրության բնագավառում սահմանվեց պալատների լիակատար իրավահավասարություն:

Կառավարության իշխանությունն ուժեղանում էր պառլամենտից նրա

ոչ լրիվ անկախության հաշվին: Նշված ակտով հեշտացավ կառավարության ձևավորման գործընթացը, իսկ դրան զուգահեռ բարդացավ նրա հրաժարականի ընթացակարգը: Այդ բոլորին ոչ քիչ չափով նպաստեց նաև այն հանգամանքը, որ Ազգային ժողովը մշտապես գործող մարմնից (ինչը նախատեսված էր սահմանադրության 9-րդ հոդվածով) դարձավ ժամանակավոր, որն էլ թուլացնում էր նրա վերահսկողությունը կառավարության նկատմամբ:

3. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՋԱՐԳԱՅՈՒՄԸ XX ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՄԻՆ

1958թ. սահմանադրությունը: Երկրի տնտեսակարգի կառուցվածքային արդիականացման, գաղութային պատերազմներում Ֆրանսիայի պարտությունների ու գաղութային կայսրության փլուզման հետևանքով 50-ական թվականներին առաջացած սոցիալ-քաղաքական հակասությունների նոր ալիքի պայմաններում Ֆրանսիայի քաղաքական շատ խմբավորումներ ցանկանում էին ոչ միայն գործադիր իշխանության հետագա ուժեղացում, պետության գլխի դերի բարձրացում, այլև նրան հատուկ լիազորությունների շնորհում: Այս գաղափարները հատկապես հետևողականորեն էր պրոպագանդում 1947թ. գեներալ դը Գոլլի կողմնակիցների կողմից ստեղծված «Ֆրանսիական ժողովրդի միություն» կուսակցությունը:

1946թ. սահմանադրության վերացման ամսիջական պատճառը հանդիսացան Ալժիրում ծագած իրադարձությունները: 1958թ. ապրիլ-մայիս ամիսներին այնտեղ կտրուկ կերպով ակտիվացան աջ ուժերը, որոնք պահանջում էին մեկընդմիջտ ճնշել ազգային-ազատագրական շարժումները: Սկսվեցին ֆրանսիական զինվորների բացահայտ պրոգաղութային ելույթները: Քաղաքացիական պատերազմի փտանգը հասունանում էր նաև Ֆրանսիայում: Աջ և Կենտրոնական ուժերը պառլամենտում հասան նրան, որ ամբողջ իշխանությունը հանձնվեց երկրում մեծ հեղինակություն վայելող քաղաքական գործիչ դը Գոլլին: Վերջինիս պահանջով նրան վերապահվեցին արտակարգ լիազորություններ նոր սահմանադրություն կազմելու համար: Պառլամենտը, սահմանափակվելով ապագա սահմանադրության վերաբերյալ ընդհանուր դրույթներով, ըստ էության, ձեռնպահ մնաց այն կազմելուց: Շուտով Սահմանադրության նախագիծը դրվեց համազգային հանրաքվեի և հավանության արժանացավ շարքային ընտրողների մեծամասնության կողմից:

1958թ. Սահմանադրության ընդունումը նշանավորեց Հինգերորդ Համրապետության սկիզբը:

Սահմանադրության հիմքը կազմեցին ժամանակակից ֆրանսիական պետության ստեղծման վերաբերյալ դը Գոլլի գաղափարները: 1958թ. սահմանադրության ներածական մասում հանդիսավոր կերպով հաստատվեցին 1789թ. «Հռչակագրով» ընդունված և 1946թ. սահմանադրությամբ լրացված ու հաստատված մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները և ազգային իշխանության սկզբունքները: Ելնելով դրանից, ինչպես նաև ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքից, Հանրապետությունն անդրծովյան տարածքների ժողովուրդներին առաջարկում է ստեղծել խմբակցություն՝ նրա կազմի մեջ մտնող ժողովուրդների հավասարության և համերաշխության հիման վրա:

Սահմանադրությամբ օրենքի առաջ բոլոր քաղաքացիները հավասար են՝ անկախ նրանց ծագումից, ռասայից, կրոնական պատկանելիությունից: Ժողովուրդն իրեն պատկանող իշխանությունն իրականացնում է անմիջականորեն, հանրաքվեով կամ անուղղակի՝ ներկայացուցիչների միջոցով:

Նախագահական իշխանության գաղափարն իր արտացոլումը գտավ սահմանադրության 2-րդ բաժնում: Հանրապետության նախագահն իր գործունեությամբ պարտավոր է ապահովել պետական մարմինների բնականոն գործունեությունը: Նա հանդիսանում է ազգային անկախության և տարածքային ամբողջականության երաշխավորը¹: Նա ընտրվում է համընդհանուր և ուղղակի քվեարկությամբ: Հաղթող է համարվում նախագահի այն թեկնածուն, որը հավաքում է ձայների բացարձակ մեծամասնություն: Բացարձակ մեծամասնություն չհավաքելու դեպքում ընտրությունները տեղափոխվում են երկրորդ փուլ, որտեղ հաղթանակ է տանում առավել շատ ձայներ ստացած թեկնածուն: Հանրապետության նախագահը պառլամենտի պալատների նախագահների և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո իրավունք ունի ցրելու Ազգային ժողովը: Նրա իրավասության մեջ է մտնում արտակարգ դրության հայտարարումը, ինչպես նաև կառավարության կամ պառլամենտի առաջարկով պետական իշխանության կազմակերպմանը վերաբերող ցանկացած օրինագիծ հանրաքվեի դնելը: Նախագահն օժտված է նաև օրենսդրական նախաձեռնության իրավունքով: Նա է ստորագրում և հրապարակում օրենքները: Նախագահն իրավունք ունի.

1. Պառլամենտից պահանջել օրենքի կամ նրա առանձին մասերի նոր քննարկում;
2. Հրավիրել պառլամենտի արտահերթ նստաշրջան;
3. Պառլամենտի կողմից ընդունված օրենքը հանձնել Սահմանադրա-

¹ Конституция Французской Республики 4 октября 1958г., стлп. 5, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 383:

կան խորհրդին՝ Սահմանադրության համապատասխանության աստիճանը պարզաբանելու նպատակով:

Երկրի նախագահը մեծ իրավասություններ ունի նաև գործադիր իշխանության բնագավառում: Նա է նշանակում և ազատում վարչապետին, իսկ վերջինիս առաջարկով՝ նաև նախարարներին, նախագահում է նախարարների խորհրդում (հոդված 8-9):

Նախագահը նշանակում է քաղաքացիական և զինվորական բարձրագույն պաշտոնյաներին, գլխավորում զինված ուժերը, նախագահում ազգային պաշտպանության բարձրագույն կոմիտեներում և խորհուրդներում: Նա է ներկայացնում երկիրը միջազգային հարաբերություններում:

Առանձնահատուկ նշանակություն ունի սահմանադրության 16-րդ հոդվածը, ըստ որի. «Երբ Հանրապետության յնստիտուտներին, ազգի անկախությանը, տարածքային ամբողջականությանը կամ նրա միջազգային պարտականությունների կատարմանը լուրջ և անմիջական վտանգ է սպառնում, իսկ պետական իշխանության մարմինների նորմալ գործունեությունը խախտված է, Հանրապետության նախագահը վարչապետի, պառլամենտի պալատների նախագահների, ինչպես նաև Սահմանադրական խորհրդի հետ պաշտոնապես խորհրդակցելուց հետո, ձեռնարկում է իրավիճակից թելադրվող միջոցներ»: Այս դրույթը, ըստ էության. Հանրապետության նախագահին թույլ է տալիս փաստորեն ամբողջ իշխանությունը վերցնել իր ձեռքը: Դրա հետ մեկտեղ պահպանվում են պառլամենտական վերահսկողության որոշակի ձևեր (օրինակ՝ պառլամենտը հավաքվում է իրավունքով, այսինքն՝ մեխանիկորեն, նա կարող է հիմնել գերագույն դատարան պետական դավաճանության մեղադրանքով նախագահի գործը քննության առնելու նպատակով և այլն): Ներում շնորհելու իրավունքը վերապահված է նախագահին:

Սահմանադրությամբ պետության երկրորդ դեմքը հանդիսանում է վարչապետը, որը ղեկավարում է կառավարության գործունեությունը և ապահովում օրենքների կատարումը: Նախագահի հանձնարարությամբ և որոշակի օրակարգով նա նախագահի փոխարեն կարող է նախագահել նախարարների խորհրդի նիստը: Նա պատասխանատվություն է կրում ազգային պաշտպանության համար: Վարչապետն իրեն վերապահված լիազորությունները կարող է փոխանցել իր հայեցողությամբ որևէ նախարարի:

Հանրապետության պառլամենտը բաղկացած է երկու պալատից՝ Ազգային ժողովից և Սենատից: Ազգային ժողովի պատգամավորներն ընտրվում են ուղղակի քվեարկությամբ, իսկ Սենատը՝ անուղղակի քվեարկությամբ: Պառլամենտի նստաշրջանները գումարվում են տարեկան երկու անգամ: Նստաշրջանների ընդհանուր տևողությունը մեկ տարում չպետք է գերազանցի 170 օրվան: Արտահերթ նստաշրջաններ գումարում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի կամ Ազգային ժողովի անդամների

մեծամասնության պահանջով¹: Սահմանադրությամբ վերացվեցին հրամայական մանդատները, այսինքն՝ պատգամավորն այտուհետ կաշկանդված չէ հրամայական մանդատով և առաջնորդվում է իր խղճով ու համոզմունքներով: Նա չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ պատլամենտում հայտնած կարծիքի համար, եթե այն զրպարտանք կամ վիրավորանք չի պարունակում: Սահմանադրության 26-րդ հոդվածը պառլամենտականին օժտում է անձեռնմխելիությամբ: Նրան չի կարելի հետապնդել, կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել առանց պառլամենտի համապատասխան պալատի համաձայնության:

1958թ. սահմանադրությունը հատուկ տեղ է հատկացնում կառավարության ու պառլամենտի փոխհարաբերություններին: Պառլամենտն օրենքներ ընդունում է միայն 34-րդ հոդվածով նախատեսված դրույթի շրջանակներում (քաղաքացիական և քրեական իրավունք, դատարաններ, դատախազություն, հարկեր, աշխատանքային իրավունք, պետական ապարատի կազմակերպման սկզբունքներ և այլն): Օրենսդրության բնագավառից դուրս գտնվող հարցերը լուծվում էին վարչական կարգով և, ամենից առաջ՝ կառավարության արձակած ակտերով:

Պատերազմ հայտարարելու իրավունքը վերապահվեց պառլամենտին: Նրան հնարավորություն տրվեց անհրաժեշտության դեպքում իր օրենսդիր լիազորությունները փոխանցել կառավարությանը: Պառլամենտի պալատներում կառավարության օրինագծերը քննարկման ժամանակ օժտվում էին որոշակի առավելությամբ: Եթե պառլամենտը 70 օրվա ընթացքում կառավարության ներկայացրած ֆինանսական օրինագծերի վերաբերյալ որոշում չի կայացնում, ապա դրանք կարող են գործողության մեջ դրվել կառավարական ակտերի հրապարակման միջոցով:

Ամրագրվեց պառլամենտի առաջ կառավարության պատասխանատվության դրույթը, ըստ որի վարչապետը Ազգային ժողովի հավանությանը պետք է ներկայացնի կառավարության գործունեության ծրագիրը՝ Ազգային ժողովի նիստում դնելով իր վստահության հարցը: Սահմանված կարգով կառավարությանն անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի կողմից որոշում ընդունվելու դեպքում վարչապետը Հանրապետության նախագահին դիմում է ներկայացնում կառավարության հրաժարականի մասին: Նման որոշում չընդունվելու դեպքում կառավարության գործունեության ծրագիրը համարվում է հավանության արժանացած (հոդ.49-50):

¹ Конституция Французской Республики 4 октября 1958г., հոդ. 29, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 381:

Երկրի պետական ապարատի անբաժանելի մասն է կազմում Սահմանադրական խորհուրդը, որը բաղկացած է 9 անդամներից, որոնք լիազորությունները տևում են 9 տարի: Նրանք նշանակվում են պալատների նախագահների և Հանրապետության նախագահի կողմից՝ հավաստաբայես (յուրաքանչյուրը նշանակում է 3-ական անդամ): Խորհրդի նախագահը նշանակվում է Հանրապետության նախագահի կողմից: Նրա ծայնը համարվում է վճռորոշ ձայների հավասար բաժանման դեպքում: Խորհրդի կազմի մեջ ցմահ մտնում են նաև Հանրապետության նախկին նախագահները: Պառլամենտի և կառավարության անդամները միաժամանակ չեն կարող լինել խորհրդի անդամ (հոդված 57) Սահմանադրական խորհուրդը լուծում է Հանրապետության նախագահի, պատգամավորների, սենատորների և հանրաքվեների ընտրությունների հետ կապված վեճերը: Նա է լուծում նորմատիվ-իրավական ակտերի՝ սահմանադրության համապատասխանատվության հարցը: Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները և այլ իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն: Խորհրդի ընդունած որոշումները սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

Գործադիր իշխանության նորմատիվ ակտերի վերահսկողությունն իրականացնում է Պետական խորհուրդը, որի դերն ու նշանակությունը 1958թ-ից հետո զգալիորեն աճեց:

Սահմանադրությամբ երկրի դատական իշխանության անկախության երաշխավորը Հանրապետության նախագահն է (հոդված 64): Նա է նշանակում դատավորներին՝ մագիստրատների Բարձրագույն խորհրդի առաջարկությամբ: Դատավորներն անփոփոխելի են և նրանց լիազորությունները կարող են դադարեցվել միայն օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով: Արդարադատությունն իրականացնելիս դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին:

Մագիստրատների Բարձրագույն խորհուրդը գլխավորում է Հանրապետության նախագահը, իսկ արդարադատության նախարարն ի պաշտոնե համարվում է նրա տեղակալը: Խորհրդի կազմի մեջ մտնում են Հանրապետության նախագահի կողմից նշանակված 9 անդամներ:

Դատական իշխանությունն անձի ազատության պահապանն է:

Դատական համակարգի բարձրագույն ատյանը Գերագույն դատարանն է, որի կազմը, գործունեության կարգը և գործերի քննման ընթացակարգը սահմանվում են հատուկ օրենքներով:

1958թ. Սահմանադրությամբ Ֆրանսիայում հաստատվեց կառավարման այնպիսի ձև, որին բնորոշ են և պառլամենտական, և նախագահական հանրապետությունների հատկանիշները: Իհարկե վերջինիս հատկանիշներն ավելի գերակշռող են: Ավելացնենք, որ Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն կառավարման հանրապետական ձևը չի կարող վե-

րանայման առարկա դառնալ:

XX դարի 60-80-ական թվականներին Ֆրանսիայում անցկացվեցին մի շարք բարեփոխումներ, որոնք ուղղված էին պետական կարգի ամրապնդմանն ու հետագա զարգացմանը: 1962թ. սահմանադրական բարեփոխումով Հանրապետության նախագահի ընտրության նոր կարգ մտցվեց, որով նա ընտրվում է անմիջապես Ֆրանսիայի ժողովրդի (ընտրական իրավունք ունեցող անձանց) կողմից: Այս բարեփոխումն ունեցավ սկզբունքային նշանակություն: Դրանով էլ ավելի ամրապնդվեց ժողովրդի անմիջական ընտրյալի՝ նախագահի, անկախությունը մնացած իշխանություններից:

Մյուս բարեփոխումների թվում առավել կարևորը պետության ղեկավարի առջև կառավարության պատասխանատվության բարձրացումն է:

Դրա հետ մեկտեղ, փաստորեն դադարեցին գործել սահմանադրության XII և XIII գլուխները, որոնք նվիրված էին ինքնավար պետությունների (ֆրանսիական նախկին գաղութների) խմբակցություններին:

Վերջին տարիներին, հատկապես դը Գոլլի պաշտոնից հեռանալու վճռական պահին (1969թ. ապրիլին), Ֆրանսիայի կառավարող շրջաններին հաջողվեց ապահովել իշխանության հաջորդականությունը: Վարչակարգը, որը սկզբում շատերի կողմից ընդունվում էր որպես ժամանակավոր, բավականին կայուն գտնվեց և հարմարվեց ժամանակակից պայմաններին: Նրա օգնությամբ այս կամ այն չափով լուծվում են հասարակական կյանքի բոլոր բնագավառներում ծագած խնդիրները:

ԳԼՈՒԽ 25

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. ՎԱՅՄԱՐՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ 1919 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերյան հեղափոխությունը Գերմանիայում: 1918թ. գարնանը և աշնանը Գերմանիայում ստեղծվեց հեղափոխական իրադրություն: Ռուսաստանի 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը սրեց առանց այդ էլ սոցիալական և քաղաքական կրքերով շիկացած իրավիճակը. որն առաջացել էր առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի ակնհայտ պարտության հետևանքով: Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխության ազդեցության ներքո ամենուրեք սկսեցին ձևավորվել բանվորների, զինվորների և նավաստիների պատգամավորների խորհուրդներ: Հեղափոխությունը սկսվեց Քիլում 1918թ. նոյեմբերի սկզբին՝ զինվորական նավաստիների ապստամբությամբ: Գերմանիայի խոշոր քաղաքները՝ Համբուրգը, Լայպցիգը, Մյունխենը, Բրեմենը միացան նրան: Ամենուրեք առաջանում էին բանվորների ու զինվորների խորհուրդներ, որոնք իշխանությունը վերցնում էին իրենց ձեռքը: Վերջապես, 1918թ. նոյեմբերի 9-ին, հեղափոխությունը հաղթանակեց նաև Բեռլինում:

Ստեղծված իրավիճակում կայսերական կառավարությունը լավագույնը համարեց իշխանության հանձնումը սոցիալ-դեմոկրատներին՝ նրանց վստահելով «Հայրենիքի փրկությունը»: Չգալով իրեն սպառնացող վտանգը, կայսր Վիլհելմը փախավ Հոլանդիա: Գերմանական կայսրությունը վերացավ: Իշխանությունը հանձնվեց սոցիալ-դեմոկրատներին, որովհետև նրանք իրենց ծրագրից հանել էին սոցիալիստական հեղափոխության գաղափարը և նպատակ էին դրել համընդհանուր բարեկեցության ու սոցիալական պետության ստեղծմանը հասնել աստիճանաբար՝ բարեփոխումների ճանապարհով:

Ստանալով Բեռլինյան խորհրդի պատգամավորների առաջարկությունը, սոցիալ-դեմոկրատական Ժամանակավոր կառավարությունը Գեր-

մանիան տարավ առաջընթացի ճանապարհով՝ դեպի սահմանադիր ժողով: Դրանով, ինչպես նաև մասնավոր սեփականության անձեռնմխելիության մտահղացմամբ, նրանք փորձ արեցին հանդարտեցնել բուրժուազիայի և հողատերերի կրքերը:

Սոցիալ-դեմոկրատիայի օպորտունիստական քաղաքականությունը Գերմանիայի բուրժուական հին կուսակցությունների մոտ առաջ բերեց նոր եռանդ: Իրադրության այսպիսի պայմաններում նրանք որոշեցին նորով փոխարինել հին անվանումները («Ժողովրդական», «Դեմոկրատական», «Զրիստոնեա-դեմոկրատական» կուսակցություններ և այլն):

Սահմանադիր ժողովի ընտրությունները կայացան 1919թ. հունվարին: Բուրժուական կուսակցությունները ստացան մոտ 16 միլիոն ձայն, սոցիալ-դեմոկրատականը (նրանք երկուսն էին)՝ 13,5 միլիոն: Ժողովը հրավիրվեց արդյունաբերական ձեռնարկություններից զուրկ Վայմար քաղաքում: Այստեղից էլ հանրապետության անվանումը՝ Վայմարյան Հանրապետություն:

Սահմանադիր ժողովը Գերմանիայի նախագահ ընտրեց Մաքս Է-բերտին, որը 1916թ. Ռայխստագում սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարն էր, իսկ այնուհետև նշանակվել էր Գերմանիայի կանցլեր՝ արքայազն Մաքս Բադենսկոյի ցուցումով:

Երեք՝ սոցիալ-դեմոկրատական, դեմոկրատական և կենտրոն, կուսակցությունների կոալիցիան կազմեց Գերմանիայի կառավարություն՝ սոցիալ-դեմոկրատ Շեյդեմանի գլխավորությամբ: Սահմանադիր ժողովը դրականորեն լուծեց Վերսալյան խաղաղ պայմանագրի ստորագրման հարցը, հաստատեց երկրի բյուջեն և ընդունեց Գերմանիայի նոր սահմանադրությունը, որը պատմությանը հայտնի է Վայմարյան անունով: Սահմանադրության հեղինակը հայտնի իրավաբան, լիբերալ Հուգո Պրեյսն էր: Սահմանադրության ընդունմանը կողմ էին քվեարկել 262 ձայն, դեմ 75:

1919թ. սահմանադրությունը Գերմանիան հռչակեց բուրժուական պառլամենտական հանրապետություն՝ նախագահի գլխավորությամբ: Գերմանական կայսրության (այդ անունը պահպանվեց) բարձրակարգ օրենսդիր մարմինը հայտարարվեց Ռայխստագը, որն ընտրվում էր 4 տարի ժամկետով՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ¹:

Սահմանադրությունը մտցրեց ընրությունների համամասնական համակարգ: Ամբողջ Գերմանիան բաժանվում էր 35 ընտրական տարածքների: Ընտրություններին մասնակցող կուսակցությունները հանդես էին գալիս յուրաքանչյուրն իրենց թեկնածուների ցուցակներով: Պատգամավոր-

¹ Конституция Германской империи (Веймарская), 11 августа 1919г., стр. 22-23, in: Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, с. 328:

րական տեղերը լաշխվում էին այս կամ այն ցուցակին տրված ձայների քվին համապատասխան:

Ռայխստագի նիստերը հրապարակային էին: Դռնփակ նիստեր կարող էին գումարվել միայն ձայների 2/3-ով ընդունված որոշումների դեպքում: Բացառությամբ այս և սահմանադրությամբ նախատեսված մի շարք այլ դեպքերի, Ռայխստագն օրենքներն ու որոշումներն ընդունում էր ձայների պարզ սեծամասնությամբ (հոլոված 32): Ռայխստագը կամ նրա հանձնաժողովներն անհրաժեշտության դեպքում կարող էին ելույթի կանցլերին կամ նախարարներից որևէ մեկին պահանջել ներկա գտնվելու նիստերին: Ռայխստագը համարվում էր ստորին պալատ, իսկ վերին պալատն անվանվեց Ռայխսրատ (Կայսրական խորհուրդ):

«Միասնական Գերմանիան» բաժանված էր առանձին տարածքների (Հողերի), որոնց ներկայացուցիչներից էլ կազմված էր Ռայխսրատը (Օրինակ՝ Պրուսիան ռայխսրատում ուներ 26 ձայն, Բավարիան՝ 10, Սաքսոնիան՝ 7, Բադենը՝ 3 և այլն):

Պալատների համաձայնության դեպքում վիճելի հարցի լուծումը պատկանում էր Հանրապետության (Կայսրության) նախագահին: Նա միանում էր Ռայխսրատին (դրանով վեճը լուծվում էր) կամ այդ լուծումը հանձնարարում էր ժողովրդական հանրաքվեին:

Գերմանական Հողերից յուրաքանչյուրն ուներ իր սահմանադրությունը, իր օրենսդիր մարմինը՝ Լանդտագը և իր կառավարությունը: Հողերի սահմանադրությունը չէր կարող հակասել Վայմարյան սահմանադրությանը:

Սահմանադրությունը հատուկ տեղ էր հատկացնում Հանրապետության նախագահին: Ինչպես և Ռայխստագը, նախագահը նույնպես ընտրվում էր ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ (հողված 41): Նա ընտրվում էր 7 տարի ժամանակով: Նրա իշխանությունն իրեն բնորոշ հատկանիշներով նման էր միապետի իշխանության: Սահմանվեց, որ պալատների անհամաձայնության դեպքում հարցի լուծումը թողնվում էր նախագահի հայեցողությանը: Նա կարող էր իր իշխանությունը հակադրել Ռայխստագին նաև այնպիսի հարցում, ինչպիսին է կանցլերի պաշտոնում այս կամ այն անձի նշանակումը: Այստեղ տեղին է նշել, որ նման իրավունքը պահպանվեց նաև հետագայում և դրանից օգտվեց նախագահ Հիմլոենբուրգը՝ 1933թ. կանցլեր նշանակելով Հիտլերին:

Սահմանադրության 25-րդ հոդվածի համաձայն երկրի նախագահը կարող էր ցրել Ռայխստագը, նշանակել նոր ընտրություններ՝ ցրելուց ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում: Նա զինված ուժերի գլխավոր հրամանատարն էր, նշանակում և ազատում էր զինված ուժերի հրամանատարական կազմը և քաղաքացիական բնագավառի բարձր աստիճանավորներին

(հողված 46-47):

Նախագահին հատուկ լիազորությամբ էր օժտում սահմանադրության 48-րդ հոդվածը, ըստ որի նա կարող է սահմանել արտակարգ դրություն ցանկացած այնպիսի պահի, որը կհամարի վտանգավոր ներկա կարգ ու կանոնի համար: Պետք է հաշվի առնել և այն հանգամանքը, որ արտակարգ դրությամբ կարող էր հետևել զինված ուժերի օգտագործումը և սահմանադրությամբ ամրագրված քաղաքացիական ազատությունների դադարեցումը:

Վերջապես, նախագահի մշտական իրավասությունն էր նաև կառավարության նշանակումը: Այդ կառավարությունը, սակայն պատասխանատու էր մնում Ռայխստագի առջև: Պատմությունը ցույց տվեց, որ կառավարությունն իր գործունեությունն իրականացնում էր նախագահի վրա հենվելով՝ անտեսելով Ռայխստագի սահմանադրական իրավունքը:

Սահմանադրությունն ընդգծում էր կառավարության ղեկավարի՝ Հանրապետության կանցլերի, հատուկ դիրքը, որին հանձնարարվում էր իր ղեկավարած կառավարության «քաղաքականության հիմնական սկզբունքների ձևավորումը»:

Հռչակելով պետական իշխանության տարբեր կարգի ընտրական մարմինների իրականացումը, սահմանադրությունը նախատեսում էր աստիճանավորների ցմահ նշանակում, եթե, իհարկե, նրանք ծառայում են բավականաչափ անբասիր:

Հեղափոխական իրավիճակը, որը դեռ պահպանվում էր պարտված Գերմանիայում, բուրժուական և հատկապես սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների նախընտրական խոստումները, ինչպես նաև բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների սոցիալական զիջումների ճանապարհով անխուսափելի առաջխաղացումը, որը սկսել էր դեռևս Բիսմարկի ժամանակ, հանգեցրին նրան, որ Վայմարյան սահմանադրության մեջ ամրագրվեցին բավականին շատ դեմոկրատական դրույթներ, որոնք կարգավորում էին կառավարող դասի և աշխատավոր զանգվածի փոխհարաբերությունները:

Սահմանադրությունը հռչակում և օրինականացնում էր խոսքի, մամուլի, միությունների և այլնի ազատությունը: Սահմանադրության 109-րդ հոդվածի համաձայն բոլոր գերմանացիներն անկախ սեռից ունեն հավասար իրավունքներ ու պարտականություններ: Վերացվեցին դասային արտոնությունները: Առանձին տիտղոսներ կարող էին շնորհվել միայն պաշտոնյաներին և մասնագետներին՝ իրենց ցուցաբերած ծառայության դիմաց:

Յուրաքանչյուր գերմանացի ուներ հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունք: Այն կարող էր սահմանափակվել միայն բացառիկ դեպքերում՝ կայսերական օրենք

քի հիման վրա:

Սահմանադրության կարևորագույն դրույթներից է անձի ազատության անձեռնմխելիությունը: Ոչ ոք անձին անհիմն իրավունք չունի զրկելու ազատությունից: Ազատությունից զրկված անձին իշխանության համապատասխան մարմինը պարտավոր է ոչ ուշ, քան անձին ազատությունից զրկելու հաջորդ օրը վերջինիս տեղեկացնել ազատությունից զրկելու պատճառներն ու հիմքերը և նրան հնարավորություն տալ պաշտպանել իր՝ սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու օրինական շահերը:

Երաշխավորվեց նամակագրության հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը: Յուրաքանչյուր գերմանացի օրենքի շրջանակներում իրավունք ունի արտահայտելու իր կարծիքը: Արգելվում էր արտահայտված կարծիքի համար մարդուն հետապնդել և զրկել այլ իրավունքներից (օրինակ՝ աշխատանքից կամ ծառայությունից զրկելը և այլն): Չնայած այս ամենին օրենսդիրը ցուցաբերում էր ակնհայտ զգուշություն, վախենալով «ավելորդություններից»:

Դպրոցն անջատելով եկեղեցուց, սահմանադրությունը, որպես պետական քաղաքականություն, հոգ տարավ երեխաների պարտադիր կրթնական դաստիարակման, «հոգու բարոյական խնամքի» մասին:

Անհրաժեշտ ենք համարում նշել սահմանադրության 165-րդ հոդվածը, որը ձեռնարկություններում և տարածքներում բանվորական խորհուրդների ստեղծման հնարավորություն էր տալիս: «Բանվորները և ծառայողները ձեռնարկատերերի հետ հավասար իրավունք ունեն համատեղ մասնակցել աշխատավարձի չափի և աշխատանքի պայմանների սահմանմանը, ինչպես նաև արտադրողական ուժերի ընդհանուր տնտեսական զարգացմանը»:

Բանվորների և ծառայողների սոցիալական և տնտեսական շահերի պաշտպանումը դրվում էր նրանց ներկայացուցչական մարմինների վրա (ձեռնարկությունների, տարածքային և կայսերական բանվորական խորհուրդներ):

Հատուկ նշանակություն էր տրվում նրան, որ յուրաքանչյուր անգամ Ռայխստագին սոցիալական և տնտեսական նշանակության օրինագծեր առաջարկելով, կառավարությունը դրանք պետք է ներկայացներ կայսերական տնտեսական Խորհրդի եզրակացությամբ: Ավելին, Խորհուրդն ինքն էլ կարող էր պառլամենտին մամն օրինագծեր առաջարկել: Վերջապես, բանվորական և տնտեսական խորհուրդներին որոշ բնագավառներում վերապահվեց վերահսկողական և վարչական լիազորություններ:

Չչափազանցնելով իրենց ծագումով ու նշանակությամբ նոր սահմանադրական նորմերի նշանակությունը, կարող ենք ասել, որ դրանք վկայում են սոցիալական հարաբերությունների բնագավառում իրավաստեղծ դա

րաշրջանի գալստյան մասին:

Սահմանադրությունը սեփականության իրավունքը համարում էր մարդու և քաղաքացու անօտարելի իրավունքներից մեկը: Մասնավոր սեփականությունը պաշտպանվում էր պետության կողմից: Սեփականության հարկադիր օտարումը կարող էր տեղի ունենալ օրինական հիմունքներով «հասարակության բարօրության համար»: Այս դեպքում նախատեսվում էր համապատասխան վարձատրություն, եթե կայսերական օրենքն այլ բան չէր նախատեսում:

1918թ. նոյեմբերյան հեղափոխությունն իր բնույթով բուրժուա-դեմոկրատական էր: Այդպիսին էր նաև Վայմարյան հանրապետությունը: Կուսակցությունների, խոսքի, մամուլի ազատության, «աշխատանքի իրավունքի և աշխատանքի պաշտպանության» ճանաչումը վկայում էին այն նոր իրավիճակի մասին, որին հասան պրոլետարիատը և դեմոկրատիան:

Բանվոր դասակարգի նվաճումների թվին են պատկանում 8-ժամյա աշխատանքային օրվա, ձեռնարկատերերի հետ պայմանագրեր կնքելու իրավունքի օրինականացումը, գործազրկության նպաստների սահմանումը, կանանց ընտրական իրավունքի օրենսդրական ճանաչումը և այլն:

Չնայած իր «բուրժուա-դեմոկրատական» բնույթին, 1918թ. հեղափոխությունը Գերմանիայում, այնուամենայնիվ, զգալի չափով իրագործվեց պրոլետարական միջոցներով, ինչի մասին ակնառու կերպով վկայում են բանվորական և զինվորական խորհուրդները, գործադուլներն ու ցույցերը, Բավարիական խորհրդային կարճատև հանրապետության ստեղծումը և այլն:

2. ՀԻՏԼԵՐՅԱՆ ԳԵՐՄԱՆԻԱ

Վայմարյան հանրապետությունը գոյատևեց 10 տարուց մի քիչ ավելի: Նրա պատմությունն իրենից ներկայացնում է հզոր ֆինանսա-արդյունաբերական կորպորացիաների և բանվոր դասակարգի բարձր կազմակերպված ջոկատների միջև սուր պայքարի պատկեր:

Նոյեմբերյան հեղափոխությունը, չնայած պարտության, երկար ժամանակ իրեն զգացնել էր տալիս: 1923թ. Գերմանիան նորից վերապրեց հեղափոխական իրադրություն: Սաքսոնիայում և Թյուրինգիայում ստեղծվեցին բանվորական կառավարություններ, իսկ Համբուրգում բանվորները զինված ապստամբություն բարձրացրին, սակայն հայտնվելով մեկուսացման մեջ, ստիպված էին դադարեցնել պայքարը: Ապստամբությունը ղեկավարում էին կոմունիստները, բայց նրանց միացավ նաև սոցիալ-դեմոկրատները մի մասը:

Դրությունը հազիվ էր կայունացել, երբ 1929թ. բռնկվեց համաշխարհային ճգնաժամը: Արդյունաբերական արտադրանքի մակարդակը հա-մարյա կիսով չուսի նվազեց, իսկ գործազուրկների թիվը հասավ 9 միլիոն մարդու: Ժողովրդական լայն զանգվածներն անցնում էին կոմկուսի կողմը: 1930թ. ընդհանուր ընտրություններում նա ստացավ 4 5 միլիոն ձայն (1 մլն. 33 հազար ձայն ավել, քան 1928թ.): Սարսափելիվ բանվորական նոր հեղափոխությունից, գերմանական բուրժուազիան և հատկապես խոշոր մոնոպոլիաների պարագլուխները սկսեցին իրենց շահելը և հույսերը կապել Հիտլերի ֆաշիստական կուսակցության հետ: Այս կուսակցությունն ամբոխավալորեն իրեն անվանելով Գերմանիայի «Ազգային-սոցիալիստական բանվորական կուսակցություն», ձևավորվել էր դեռևս 1919թ.: Նրա ծրագիրը, կեղծ գովաբանվող մասով, կանխատեսված նպատակ էր հետապնդում՝ իր հետևից ստանելով դժգոհ զանգվածներին՝ բանվորներից մինչև մանր առևտրականները: Այդ կուսակցության ջատագովները բանվորներին խոստանում էին գործազրկության վերացում, գյուղացիներին՝ գյուղատնտեսական արտադրանքի գների բարձրացում և այլն: Կուսակցության ծրագիրն ազդարարում էր «Նոր գերմանական կայսրության» ստեղծում, մարքսիզմի և կոմունիզմի իսպառ վերացում, հրեաների ֆիզիկական բնաջնջում և այլն:

Կանխատեսելով ֆաշիզմի վտանգը, Գերմանիայի կոմկուսը, ձախուժեցին և հատկապես սոցիալ-դեմոկրատներին առաջարկեց միավորվել և հանդես գալ միասնական ճակատով: Այդ առաջարկը մերժվեց սոցիալ-դեմոկրատական դեկավարների կողմից, որոնք հայտարարեցին նաև, որ Հիտլերին դիմադրություն չեն ցուցաբերի, եթե նա իշխանության հասնի լեզալ, այսինքն՝ սահմանադրական ճանապարհով: Սոցիալ-դեմոկրատների գրաված դիրքը ճակատագրական և կործանարար էր Գերմանիայի համար: Այնինչ, միասնական հակաֆաշիստական ճակատի տակտիկան, որն ի դեպ հաջողվել էր Ֆրանսիայում, կանխելով ռեակցիայի հարձակումը, միակ փրկությունն էր Գերմանիայի համար: Այդպիսի հանգամանքներում անհեթեթության հասցրած «լեզալիզմը» կործանարար եղավ դեմոկրատների համար: Իսկ դա գերմանական սոցիալ-դեմոկրատիայի տեսաբաններին հասկանալի դարձավ միայն տարիներ հետո:

1932թ. հուլիսին կայացած Ռայխստագի ընտրություններում հիտլերականները ստացան 13 միլիոն ձայն, որն ամենևին էլ մեծամասնություն չէր: Նրանք փորձեցին հաղթանակ տանել նոյեմբերի ընտրություններում, սակայն, իրենց համար անսպասելիորեն, ընդհանենը 2-3 ամսում կորցրեցին 2 միլիոն ընտրողների: Միաժամանակ, կոմկուսը ստացավ 6 միլիոն ձայն, ավելին, քան երբևէ:

Նոյեմբերյան ընտրությունների արդյունքները Գերմանիայի մոնոպոլիստական պարագլուխների համար անակնկալ էին: Նրանք որոշեցին,

առանց հասպաղելու, իշխանությունը հանձնել Հիտլերին: Այդ ժամանակ Գերմանիայի նախագահ, ֆելդմարշալ Հինդենբուրգը ծանր հիվանդ էր: Նա դեպքերի նման զարգացման ժամանակ արդեն երդում էր տվել, որ կանցլերի պաշտոնը չի հանձնելու «ավստրիական եֆրեյտորին»՝ Հիտլերին: Սակայն չդիմանալով իր շրջապատի քաղաքացիական ու զինվորական բարձր պաշտոնական անձանց ճնշմանը, Գերմանիայի համար ճակատագրական ժամին, մահվանից քիչ առաջ՝ 1933թ. նոյեմբերի 30-ին, մա Ադոլֆ Հիտլերին նշանակեց երկրի կանցլեր: Դա սև օր եղավ ոչ միայն Գերմանիայի, այլև՝ ամբողջ Եվրոպայի համար:

Գերմանիայում ֆաշիստական դիկտատուրայի հաստատմանը նպաստեցին երեք կարևոր հանգամանքներ.

1. Մոնոպոլիստական բուրժուազիան տնտեսական ճգնաժամով պայմանավորված քաղաքական իրավիճակից դուրս գալու միակ ելքը տեսավ իշխանությունը ֆաշիստական կուսակցության հանձնելու մեջ;

2. Մանր բուրժուազիան և գյուղացիության որոշ շերտեր հավատացին հիտլերականների ուռճացած՝ մոնոպոլիաների անսահման իշխանության հետևանքով առաջացած և ճգնաժամով կրկնապատկված տնտեսական դժվարությունների վերացման խոստումներին;

3. Գերմանիայի բանվոր դասակարգը պառակտված էր և թուլացած: Գերմանիայի կոմկուսն էլ այնչափ ուժեղացած չէր, որ կարողանար առանց սոցիալ-դեմոկրատների կանխել վերահաս վտանգը:

Ընդհանրացնելով այս ամենը և XXI դարի նախաշեմից նայելով անցյալին միանգամ ևս համոզվում ես, որ երկրում գործող կուսակցությունների օտարացումը, նրանց պառակտումը բոլոր դեպքերում վնաս է բերում ողջ ժողովրդին, պետությամբ: Դեկավարվելով անձնական շահերով, սոցիալ-դեմոկրատները կուրացան և փորձ չարեցին կոմկուսի հետ միասին պայքարել ֆաշիստական մարդատյաց կուսակցության դեմ:

Հիտլերյան Գերմանիայի պետական և քաղաքական կարգը: Անցնելով իշխանության գլուխ, գերմանական ֆաշիզմը սկսեց վերացնել բուրժուա-դեմոկրատական ազատությունները: Այդ նպատակներին ծառայեց մի շարք արտակարգ դեկրետների հրապարակումը հիտլերյան կառավարման առաջին իսկ ամիսներին: Դրանցով վերացվում էր անձի խոսքի, մամուլի, ժողովների ազատությունը, իսկ ոստիկանությանը շնորհվում էին անսահմանափակ իրավունքներ: Չլսված հալածանքներ սկսվեցին առաջին հերթին կոմունիստների նկատմամբ: Ռայխստագում կոմկուսի պատգամավորները զրկվեցին մանդատներից և ձերբակալվեցին: Կոմկուսի գործունեությունն արգելվեց, նրա հրատարակությունը փակվեց: 1933թ. փետր-

վարի լույս 26-ի գիշերը հիտլերականները Խղեհեցին Ռայխստակի շենքը, որպեսզի դրանում մեղադրեին կոմկուսիս և ձեռք բերեին կոմունիստներին հալածելու նոր պատրվակ:

Լայպցիգյան հույտնի դատավարությունը, որը կոչված էր ասպացուցելու այդ մեղադրանքը, խայտառակ կերպով ձախողվեց: Հրկիզման մեջ մեղադրվողները՝ բուլղարական կոմունիստներ Գ.Դիմիտրովը և մյուսներն արդարացվեցին հանգակածի բացակայության հիմքով: Այնուամենայնիվ, այս ձախողումը խանգարեց երկրում կոմունեստների և դեմոկրատների նկատմամբ ծավալված կատաղի հալածանքներին, որին արվանացան նաև սոցիալ-դեմոկրատները, իսկ հետագայում՝ բուրժուական կուսակցությունները:

Գոյության և իշխելու իրավունք ստացավ միայն Ազգային սոցիալիստական կուսակցությունը: 1933թ. հուլիսի 14-ի օրենքով ազատագրվում էր սպասվում այն անձանց, ովքեր ինչ-որ ձևով կնպաստեին այլ կուսակցությունների գործունեությանը և նրանց կազմավորմանը¹: Յրվեցին արհմիությունները, նրանց միջոցները բռնագարվեցին: Օգտագործելով ֆաշիստական Իտալիայի փորձը, հիտլերականները ստեղծեցին իրենց սեփական արհմիությունները, որոնք գտնվում էին կուսակցության հսկողության տակ և մարդկանց անդամագրում էին բռնությամբ:

Շուտով ֆաշիստական կուսակցությունը կառավարման համակարգում գրավեց առաջնային տեղ: Ռայխստագում կառավարական ծառայության մեջ գտնվելը կապվում էր ազգային-սոցիալիզմին հավատարմության երդում տալու հետ: Կուսակցության կենտրոնական և տեղական մարմինները ստացան կառավարական պարտականություններ և գործնականորեն լուծում էին կառավարման բոլոր հարցերը: Ինչ վերաբերում է կուսակցության համագումարների որոշումներին, ապա դրանք ընդունման պահից ստանում էին օրենքի ուժ:

Կուսակցությունն ուներ հատուկ կառուցվածք: Կուսակցության անդամները պարտավոր էին անվերապահորեն ենթարկվել տեղական «ֆյուրերներին», նրանց հրամաններին և հրահանգներին: Այդ ֆյուրերները (առաջնորդները) նշանակվում էին վերևից և պատասխանատվություն էին կրում միայն նրանց առջև: Կուսակցական ամմիջական ենթակայության տակ էին գտնվում գրոհային ջոկատները, թիկնապահ ջոկատները (հայտնի Էսէսականները), հատուկ զորամասերը՝ համալրված Հիտլերի ֆանատիկ կողմնակիցներով: Կուսակցության անդամների կողմից կատարված հանցագործությունները քննության էին առնվում ընդհանուր դատական համակարգից անջատված հատուկ դատարանների կողմից և հատուկ ծի-

1. Закон против образования новых партий 14 июля 1933г., см.в Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 345:

սակատարությամբ (գաղտնի նիստերում):

Պատժիչ ապարատի համակարգում հատուկ տեղ էր գրավում գաղտնի ոստիկանությունը «Գեստապո» անունով, որն իր տրամադրության տակ ուներ հսկայական դրամական միջոցներ և մեծ թվով աշխատակիցներ: Այլ կերպ ասած Հիտլերյան Գերմանիայում պետական իշխանությունը կենտրոնացվել էր կառավարության մեջ, կառավարական իշխանությունը՝ Ֆյուրերի անձի մեջ:

Դեռևս 1933թ. մարտի 24-ի օրենքով կայսերական կառավարությանն իրավունք վերապահվեց, առանց պառլամենտի համաձայնության հրապարակել ակտեր, որոնք կարող են չհամապատասխանել 1919թ. սահմանադրությանը և «շեղվել» նրանից¹:

Հիտլերը «նվաճեց» հաջողության մի աստիճան ևս: Վերացվեց Հանրապետության նախագահի պաշտոնը, իսկ նրա իրավագործություններն անցան ֆյուրերին²: Ոչ մեկի առջև պատասխանատվություն չկրող Ֆյուրերն այդ պաշտոնում ցմահ էր և կարող էր նշանակել իրեն հաջորդող:

Ռայխստագը պահպանվեց հանդիսավոր ցույցերի համար: Նույն նպատակին էին ծառայում հանրաքվեները և, այսպես կոչված, «ժողովրդական հարցումները», որոնց արդյունքները նախօրոք հայտնի էին: 1934թ. փետրվարի 14-ի օրենքով վերացվեց նաև Ռայխստագը³:

«Ազգի միասնությունը» ընդունելով որպես պատրվակ և ի շահ կենտրոնացված կառավարման, վերացվեց պետության բաժանումը Հոդերի: Մարզերը կառավարում էին Բեռլինում կենտրոնական կառավարության կողմից նշանակված աստիճանավորները: Տեղական ինքնակառավարում գոյություն չուներ: Պետական ապարատը, ինչպես դա բնորոշ է նման վարչակարգի, երկու անգամ մեծացել էր: Այլ կերպ ասած, լիակատար «ջախջախվեց» Վայմարյան սահմանադրությունը, որը ձևականորեն պահպանվել էր: Նրանում ամրագրված ոչ մի դրույթ չէր գործում:

1938թ. մտցվեց ընդհանուր աշխատանքային պարհակ՝ քանվորը և ընդհանրապես աշխատողը, անկախ նրա մասնագիտությունեց և քնակության վայրից, վարչական կարգով կարող էր ուղարկվել ցանկացած աշխատանքի երկրի տարբեր շրջաններ:

Արտաքին քաղաքականությունը: Իշխանության նվաճելու առաջին իսկ օրերից (նույնիսկ մինչև այդ) հիտլերականներն առանց թաքցնելու խո-

1. Закон в целях устранения бедствий народа и государства 24 марта 1933г., տե՛ս Ի. Խրեոմատյա по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 345:

2. Закон о Верховном главе Германской империи 1 августа 1934г., տե՛ս Ի. Խրեոմատյա по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 344:

3. Закон о ликвидации Рейхсрата 14 февраля 1934г., տե՛ս Ի. Խրեոմատյա по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 344:

սում էին «Մեծ պատերազմի» մասին, որում «Մեծ Գերմանիան» կնվաճի իրեն արժանի «կենսական տարածություն»: Այդ նպատակի գաղափարական հիմքում ընկած էր, այսպես կոչված, ռասայական տեսությունը, ըստ որի գերմանացիներն որպես «բարձր ռասայական» ազգ պետք է տիրեն ամբողջ աշխարհին: Գերմանիան միակողմանի կարգով չեյրայ կայտարարեց 1919թ. Վերսալյան հաշտության պայմանագիրը և ասքողջ աշխարհի աչքի առաջ սկսեց համակողմանիորեն նախապատրաստվել համաշխարհային պատերազմի՝ նոր կենսական տարածություն ձեռք բերելու նպատակով:

1939թ. սեպտեմբերին Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա և 10-օրյա ժամկետում որպես ռազմական տերություն ոչնչացրեց նրան: Լեհաստանի տարածքն օկուպացվեց: Նա պետք է ծառայեր և իսկապես ծառայեց որպես պլացդարմ հետագայում ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմում Գերմանիան ջախջախվեց: Հիտլերյան բանակին կապիտուլյացիայի հարկադրելով և Գերմանիայի ողջ տարածքն օկուպացնելով, դաշնակիցները՝ ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, մշակեցին Գերմանիայի նկատմամբ համաձայնեցված քաղաքականություն: Սկզբնական շրջանում որոշվեց, որ հաղթանակած երկրներից յուրաքանչյուրի զորքերը կգրավեն օկուպացված չորս գոտիներից մեկնումնեկը: 1945թ. հունիսի 5-ին որոշվեց նշված երկրների զինվորական հրամանատարներից ստեղծել Վերահսկող խորհուրդ, որը պետք է լուծեր ամբողջ Գերմանիայի համար նշանակություն ունեցող ընթացիկ հարցեր:

Վերջապես, 1945թ. ամռանը (հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 2-ը) Պոտսդամում կայացավ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի կառավարությունների ղեկավարների կոնֆերանս: Դաշնակիցները համաձայնեցին Գերմանիայում սահմանել ժամանակավոր օկուպացիոն վարչակարգ, որի համար երկրի տարածքը բաժանվեց չորս գոտիների՝ Խորհրդայինն արևելքում, Ամերիկյանը, Անգլիականը և Ֆրանսիականը՝ արևմուտքում: Կոնֆերանսում որոշում ընդունվեց ցրել գերմանական զինված ուժերը և վերացնել գերմանական բանակի գլխավոր շտաբը, ձերբակալել և դատի տալ պատերազմի հանցագործներին, ոչնչացնել ֆաշիստական վարչակարգի հենարանը՝ կապիտալիստների մոնոպոլիստական միությունները, պատերազմի հանցագործներից մաքրել Գերմանական պետական ապարատը, ոչնչացնել Գերմանիայի ռազմա-արդյունաբերական պոտենցիալն այն նպատակով, որպեսզի նա այլևս չկարողանա զենք արտադրել: Վերականգնվում էին դեմոկրատական ինստիտուտները՝ տեղական ինքնակառավարումը, ժողովների, խոսքի, մամուլի ազատությունը և այլն:

Օկուպացված երկրի կառավարումը կենտրոնացվեց Միութենական վերաստուգիչ խորհրդում, որը կազմված էր Գերմանիան օկուպացրած տերությունների ներկայացուցիչներից:

Պատմական դեպքերի զարգացումը հասցրեց նրան, որ Գերմանիան բաժանվեց երկու գերմանական պետությունների՝ արևմուտքում ստեղծվեց 'Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը (ԳՖՀ), իսկ արևելքում՝ 'Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը (ԳԴՀ):

3. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ XX ԴԱՐԻ 2-Դ ԿԵՍԻՆ

Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն: Երբ Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային և ԱՄՆ-ին պարզ դարձավ, որ Գերմանիայի վերանիավորումն որպես միասնական պետության անհնարին է, արևմտյան օկուպացիոն իշխանությունները թույլատրեցին արևմտյան երեք գոտիներին միավորվել մեկ պետության մեջ՝ Գերմանական ֆեդերատիվ հանրապետության անվան տակ: 1949թ. մայիսի 23-ին Պառլամենտական խորհուրդը հավանություն տվեց վերը նշված երեք գոտիների Հողերի լանդտագերի 2/3-ի կողմից ընդունված հիմնական օրենքին՝ սահմանադրությամբ: Այն կոչվեց մայրաքաղաքի՝ Բոննի, անունով: Բոննի սահմանադրությամբ, որն ուժի մեջ մտավ 1949թ. մայիսի 24-ից վերականգնեց իշխանության և կառավարման դեմոկրատական ինստիտուտները և շատ կողմերով նմանվեց Վայմարյան սահմանադրությամբ: Ինչպես Վայմարյան հանրապետությունը, այնպես էլ նոր գերմանական պետությունը ձևավորվեց ֆեդերալ սկզբունքներով: Այն բաղկացած էր 10 Հողերից, որոնք միմյանցից անկախ էին և ունեին ինքնուրույն բյուջե: Հողերից յուրաքանչյուրն ունի բավականաչափ ինքնավարությամբ օժտված լանդտագ և կառավարություն: Սահմանվեց, որ յուրաքանչյուր Հողի կառավարություն իրավունք ունի իր լիազորին նշանակել պառլամենտի Վերին պալատի՝ Բունդեսրատի անդամ՝:

Ստորին պալատը՝ Բունդեստագը, պահպանեց իր դեմոկրատական նախահիմքը: Այն ընտրվում է ժողովրդի կողմից՝ 4 տարի ժամկետով: Ընտրությունները տեղի են ունենում մեծամասնական և համամասնական համակարգով: Առաջինի դեպքում բավական է ստանալ ձայների հարաբերական մեծամասնություն, իսկ երկրորդի դեպքում կուսակցությունները ներկայացնում են իրենց թեկնածուների ցուցակները, որոնց տրված ձայների թվով որոշվում են պառլամենտում մանդատներ ստացող կուսակցություն-

1 Основной закон Федеративной Республики Германии 23 мая 1949г., стр. 51, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 355: ..

ները: Եթե կուսակցությունը ստանում է 5%-ից պակաս ձայն, ապա զրկվում է որևէ ներկայացուցչությունից: Սահմանադրությանը գլխավոր օրենսդիր մարմինը Բունդեստագն է, որի լիազորությունները, այնուամենայնիվ, այս կամ այն չափով սահմանափակվում են Բունդեսրատի կողմից: Վերջինս մի շարք հարցերի լուծման հետ կապված ուներ վետոյի իրավունք, որի հետ Բունդեստագը չէր կարող հաշվի չնստել:

Սահմանադրությունը պետության ղեկավար հռչակեց նախագահին, որն ընտրվում է 5 տարի ժամկետով՝ ֆեդերալ դաշնային ժողովի կողմից: Վերջինս կազմված է Բունդեստագի անդամներից և համամասնական սկզբունքով Հողերի ընտրված ներկայացուցիչներից: Հանրապետության նախագահի առաջարկով Բունդեստագն ընտրում է երկրի կանցլերի թեկնածուին, որին էլ այդ պաշտոնին նշանակում է նախագահը: Որպես կանոն վարչապետ է նշանակվում Բունդեստագի ընտրություններում հաղթանակ տարած կուսակցության առաջնորդը: Կանցլերի ներկայացմամբ նախագահը նշանակում և ազատում է ֆեդերալ նախարարներին: Սահմանադրությունը Հանրապետության նախագահին արգելում է կատարել այլ վճարովի աշխատանք: Նա ներկայացնում է երկիրը միջազգային հարաբերություններում, ֆեդերացիայի անունից այլ պետությունների հետ կնքում է պայմանագրեր, ընդունում է դեսպաններին: Նախագահն է նշանակում և ազատում ֆեդերալ դատավորներին, ծառայողներին և սպաներին: Նրան է վերապահված ներման իրավունքը: Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է Բունդեստագի և Բունդեսրատի անդամների առջև երդում տալով: Երդման տեքստը սահմանված է սահմանադրությամբ:

Գերմանիայում իրական իշխանությունը կենտրոնացվեց կառավարության և հատկապես նրա առաջնորդի՝ կանցլերի ձեռքում: Կառավարությունը վերահսկում է օրենսդրությունը և իրազործում է իրեն վերապահված ողջ գործադիր իշխանությունը: Այն կազմված է կանցլերից և նախարարներից: Բունդեստագը ձայների բացարձակ մեծամասնությամբ կարող է անվստահություն հայտնել կանցլերին և դիմել Հանրապետության նախագահին՝ իրենց կողմից ընտրված նոր թեկնածուին այդ պաշտոնին նշանակելու առաջարկով:

Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն երկրում դատական իշխանությունն իրականացնում են ֆեդերալ սահմանադրական դատարանը, ֆեդերալ դատարանները և Հողերի դատարանները: Դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվեց: Սահմանադրական արդարադատության հիմնական բնութագրիչն այն է, որ սահմանադրական դատարանը չի զբաղվում ամեն տիպի վեճերով և բոլոր տիպի նորմատիվ ակտերի օրինականության հարցերով¹:

¹Հարությունյան Գ., Սահմանադրական վերահսկողություն (համեմատական վերլուծություն), Երևան, 1997, էջ 142:

Սահմանադրական դատարանը ունի սահմանադրությունը մեկնաբանելու իրավունք: Այնտեղ դիմելու իրավունք ունեն մահ սյուս դատարանները, իսկ բաղաբացին կարող է դիմել միայն օրենքով սահմանված մյուս բոլոր հնարավորությունները ստանելուց հետո:

Դաշնային (Ֆեդերալ) սահմանադրական դատարանը կազմված է դաշնային դատավորներից և այլ անդամներից: Անդամներն ընտրվում են Բունդեստագի և Բունդեսրատի կողմից՝ հավասար թվով: Նրանք չեն կարող միաժամանակ լինել Բունդեստագի, Բունդեսրատի, դաշնային կառավարության և ոչ էլ Հողերի համապատասխան մարմինների անդամ¹: Դատավորը, բացի համալսարաններում լրավունք դասավանդելուց, այլ գործունեությամբ զբաղվել չի կարող:

Սահմանադրությամբ վերացվեց մահապատիժը:

ԳՖՀ-ի առավել ազդեցիկ կուսակցությունը համարվեց Քրիստոնեա-դեմոկրատականը: Նրա կառավարման ժամանակ Արևմտյան Գերմանիան հաղթահարեց հետպատերազմյան ճգնաժամը և աշխարհում, ինչպես արտալրանքի ընդհանուր ծավալով, այնպես էլ աշխատանքի արտադրողականությամբ գրավեց առաջնակարգ տեղերից մեկը:

Կառավարող կուսակցություն էր մահ սոցիալ-դեմոկրատականը: Սակայն, ինչպես Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությանը, այնպես էլ սոցիալ-դեմոկրատներին չէր հաջողվում լիակատար ծայներ ստանալ՝ Բունդեստագում տիրապետող լինելու համար: Այս յուրահատուկ պայմաններում կառավարող կուսակցությունների թվում առաջ անցավ Ազատ դեմոկրատների փոքրաթիվ կուսակցությունը, որը հավակնել և հավակնում է կարևոր նախարարական պաշտոնների: Ազատ դեմոկրատների կուսակցությունը համազործակցում էր ինչպես քրիստոնեա-դեմոկրատների, այնպես էլ սոցիալ-դեմոկրատների հետ:

Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն: Ինչպես նշեցինք վերևում, պատերազմից հետո Գերմանիան բաժանվեց չորս գոտիների, որոնցից մեկը՝ խորհրդայինը, կազմում էր երկրի արևելյան մասը: Արևելյան Գերմանիան սկզբնական շրջանում կառավարվում էր խորհրդային զինվորական ղեկավարության կողմից: Շուտով կառավարական գործունեության մեջ ներգրավվեց մահ Գերմանիայի սոցիալիստական միասնական կուսակցությունը (ԳՍՄԿ), որն առաջացավ կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցական կազմակերպությունների միավորումից: 1946թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ամբողջ Արևելյան Գերմանիայում անցկացվեցին տեղական կառավարման մարմինների և Հողերի պառլամենտների՝ լանդտագերի ընտրություններ: ԳՍՄԿ-ն համայնքա-

¹Основной закон Федеративной Республики Германии 23 мая 1949г., հոդ. 94, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 357:

յին ընտրություններում ստացավ ձայների ավելի, քան 50%-ը, իսկ լանդտագերի ընտրություններում՝ 47%-ը: Դրա հետ մեկտեղ, անցկացվեցին սոցիալիստական բնույթի մի շարք բարեփախումներ: Հատկանշական էր ագրարային բարեփոխումը: Բռնագրավվեց մոնոպոլիաների ունեցվածքը:

Արևելյան Գերմանիայի Ժողովրդական կոմգրեսը (1948թ. մարտ) ընտրեց, այսպես կոչված, գերմանական Ժողովրդական խորհուրդ և հանձնարարեց նրան մշակել ապագա ԳԴՀ-ի սահմանադրությունը: 1948թ. հոկտեմբերի 7-ին Ժողովրդական խորհուրդը հայտարարեց Գերմանիայի դեմոկրատական հանրապետության ստեղծման մասին:

Դրա հետ մեկտեղ, Ժողովրդական խորհուրդը վերանվանվեց ԳԴՀ-ի Ժամանակավոր պալատի: Այդ կապակցությամբ ԽՍՀՄ կառավարությունը ԳԴՀ-ի կառավարությանը վերապահեց երկիրը կառավարելու իրավունքը՝ խորհրդային զինվորական ղեկավարությանը զրկելով նման իրավասությունից:

ԳԴՀ-ի օրենսդրական պալատի առաջին համաժողովրդական ընտրությունները կայացան արդեն 1949թ.: Գոյություն ունեցող և ժամանակին օրինականացված կուսակցությունները հանդես եկան միասնական ծրագրով և պատգամավորության թեկնածուների միասնական ցուցակով: Յուրաքանչյուր կուսակցությանն ընկնող քվոտան նախապես որոշված էր: Այդպես սկսեց իր գոյությունն արևելա-գերմանական «դեմոկրատիան»:

1952թ. ԳՍՄԿ-ի կոնֆերանսը ԳԴՀ-ում սոցիալիզմի կառուցման մասին որոշում ընդունեց: Դրանից 16 տարի անց ԳԴՀ-ի նոր սահմանադրությունը (1968թ.) արձանագրեց մարդու կողմից մարդու շահագործման բոլոր ձևերի վերացման փաստը, այսինքն՝ սոցիալիստական արտադրական հարաբերությունների հաղթանակ: Դրան զուգահեռ Արևմտյան Գերմանիան արդյունաբերական զարգացման մակարդակով, Ժողովրդի կենսամակարդակի բարձրացմամբ, դեմոկրատական զարգացման աստիճանով ավելի ու ավելի առաջ էր ընկնում Արևելյան Գերմանիայից:

Հրապարակայնության շնորհիվ ԳԴՀ-ի քաղաքացիները լայնորեն տեղեկանում էին ԳՖՀ-ի հաջողությունների մասին: 1989թ. ստեղծվեց այնպիսի իրավիճակ, որը Գերմանիայի վերամիավորումը դարձրեց անխուսափելի: Այն իրագործվեց 1990թ. հոկտեմբերին:

Միավորված Գերմանիայի հիմնական օրենքը դարձավ ԳՖՀ-ի 1949թ. սահմանադրությունը: Մինչև միավորումը, այդ սահմանադրության մեջ կատարվեցին ավելի քան 36 ուղղումներ, որոնք կանխեցին շատ ու շատ ճգնաժամեր և լուծեցին հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ծառայած շատ հարցեր:

1990թ. Գերմանիայի միավորման մասին պայմանագրով Գերմանական երկու պետություններն որոշեցին նոր ուղղումներ մտցնել վերը նշված սահմանադրության մեջ: Այդ գործընթացը հանձնարարվեց օրենսդիր

մարմիններին: Այս կապակցությամբ Բունդեստագն ու Բունդեսրատը 1991թ. նոյեմբերին ստեղծեցին համատեղ Սահմանադրական հանձնաժողով, որը մշակեց ու օրենսդիր մարմիններ կայացրեց սահմանադրության մեջ ուղղումներ և փոփոխություններ անելու մի շարք առաջարկություններ: 1994թ. սեպտեմբերի 7-ին Բունդեստագը, իսկ նույն թվականի սեպտեմբերի 23-ին Բունդեսրատն ընդունեցին ուղղումները և նախկին ԳՖՀ-ի 1949թ. սահմանադրությունը հռչակեցին որպես Միացյալ Գերմանիայի հիմնական օրենք:

Սահմանադրության հիմքում ընկած է իրավական և սոցիալական պետության գաղափարը: Այն ամրագրեց մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները և ամրապնդեց ժողովրդավարական կարգերի գոյությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

ԳԼՈՒԽ 26

ԻՏԱԼԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. ԻՏԱԼԻԱՆ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմից Իտալիան դուրս եկավ «հաղթանակով»: Այն ժամանակվա տարածված արտահայտությամբ Իտալիան իրեն զգում էր «պարտված՝ հաղթողների մեջ»: Պատերազմի ընթացքում նա կորցրեց մոտ 700 հազար մարդ: Ռազմական գործողությունների հետևանքով ամայացան երկրի հյուսիսային մասի պրովինցիաները: Ծանր հարված ստացավ արդյունաբերությունը: Ծայր առավ արտադրության շեշտակի անկում, որը 1920թ. վերածվեց տնտեսական ճգնաժամի: Չափազանց ծանրացավ գյուղատնտեսության վիճակը, որտեղ աշխատուժի պակասը հասցրեց ցանկատարածությունների խիստ կրճատման: Ավելացավ գործազուրկների թիվը:

Պատերազմի ծանր հետևանքները, գործազրկության աճը և աշխատավոր զանգվածների դրության վատթարացումը հանդիսացան դասակարգային պայքարի սրման գլխավոր պատճառները: Այդ պայքարը 1919-1920թթ. վերածվեց հեղափոխական ճգնաժամի: Գործադուլային շարժումն ամենամեծ լարվածության հասավ 1920թ. ամռանը: Պայքարը տեղի էր ունենում աշխատավարձի բարձրացման, աշխատանքային օրվա կրճատման համար և ընդդեմ գների բարձրացման:

Գործադուլային պայքարը հարկադրեց ձեռնարկատերերին գնալ որոշակի զիջումների: Պայքարը շատ դեպքերում ավարտվում էր բանվորների հաղթանակով: Քաղաքներում մի շարք ձեռնարկությունների կառավարումն անցավ բանվորների և նրանց առաջնորդների ձեռքը:

Աշխատավորների հեղափոխական տրամադրությունների վերելքն իր արտահայտությունը գտավ սոցիալիստական կուսակցությունների շարքերի աճի մեջ:

Հեղափոխական իրադրությունը պարտադրեց Իտալիայի բուրժուական կառավարություններին գնալ որոշակի բարեփոխումների: Դրանցից

կարևոր էին «Գործազրկության դեմ սոցիալական ապահովագրության մասին» օրենքի և «Աննշակ հողերի ինքնակամ բռնագրավման թույլատրելիության մասին» հրամանագիրը:

1921թ. ստեղծվեց Իտալիայի կոմունիստական կուսակցությունը: Լիվորնոյում սոցիալիստական կուսակցության համագումարում կուսակցությունը պառակտվեց ցեմտրիստների և կոմունիստների: Վերջիններս երբորդ ինտերնացիոնալին միանալու ցանկություն հայտնեցին:

Հեղափոխական վերելքի աճն երկրում տազնապ առաջացրեց կառավարող դասակարգի շրջանում և նրան ստիպեց հենարան որոնել քաղաքական նոր կազմավորումներում

Ժողովրդական կուսակցության կազմավորման հետ մեկտեղ Իտալիայում սկիզբ առավ նաև ֆաշիստական շարժումը: 1919թ. մարտի 23-ին Միլանում տեղի ունեցավ «Ֆաշի դի կոմբատիվներտո» (մայրտական ընկերություններ) նոր կազմակերպության հիմնադիր ժողովը: Նրա ղեկավար Մուսոլինին այդ ժամանակ հիմնեց «Պոպոլո դը Իտալիա» թերթը: Այն շուրջինիստական և հակասոցիալիստական պայքար ծավալեց, միաժամանակ հարձակվելով լիբերալ կառավարությունների վրա: Մուսոլինիի շուրջ համախմբվեցին մարդիկ, որոնց նպատակն էր ունենալ ուժեղ իշխանություն:

Իրենց ամբողջ ծրագրում ֆաշիստներն այդ ժամանակ մեծ տեղ էին հատկացնում արտաքին քաղաքականությանը՝ հանդես գալով ծայրահեղ շովինիզմի դիրքերից, համերաշխվելով իտալական ազգայնամուլների հետ: Ինչ վերաբերում է ներքին քաղաքականությանը, ապա պետք է նշել, որ դրանք այն ժամանակ պայմանավորված էին լայն զանգվածներին սոցիալիստական կուսակցությունից հեռացնելու ձգտմամբ և կրում էին ցուցադրական բնույթ: 1919թ. աշնանը հանդես գալով նախընտրական ծրագրով, ֆաշիստները պահանջեցին.

1. Գումարել սահմանադիր ժողով:
2. Հասնել 8-ժամյա աշխատանքային օրվա:
3. Նվազեցնել թոշակային տարիքը և այլն:

«Ֆաշիո» բառը փոխառված է Սիցիլիայի գյուղացիական կազմակերպություններից, որոնք այն օգտագործում էին «միասնություն» իմաստով: Կեղծ, ամբոխավարական կոչերով ֆաշիստներն իշխանությանը հասնելուց առաջ քարոզում էին երկրի ամբողջ ուժերի միասնություն:

Խոշոր կապիտալի ներկայացուցիչները շատ լավ հասկանալով ֆաշիստների ծրագրային դրույթների էությունն ու հեռու գնացող նպատակները, սկսեցին նրանց ֆինանսական օգնություն ցույց տալ: 1919թ. աշնանը ֆաշիստները ձեռնամուխ եղան զինված ջոկատների ստեղծմանը, որոնց համար նրանք կադրեր էին հավաքում ռազմաճակատային սպաներից, ազգայնականորեն տրամադրված մանր բուրժուազիայի և բուրժուա-

կան ուսանողությունից:

Ավելացնենք, որ այսպիսի պայմաններում երկրի կառավարությունն ոչ միայն չէր խոչընդոտում ֆաշիստներին, այլ ընդհակառակը՝ խրախուսում էր նրանց: 1922թ. օգոստոսի մի կողմից կառավարության քուլացումից, մյուս կողմից՝ քանվորական շարժման պատակտումից, ֆաշիստական ղեկավարությունը ստեղծում է իշխանությունը բռնագրավելու կոմիտե, որի կոչով հոկտեմբերի 28-ին 40-հազարանոց «Սև վերնաշապիկավոր» զինված զորասյուններն արշավեցին Հոռմի վրա:

Կառավարությունը բոլոր հնարավորություններն ուներ արագ և վերջնականորեն ջախջախել խռովությունը: Սակայն լռեց: Ավելին՝ Վիկտոր-Էմանուիլ թագավորը հրաժարվեց պաշարողական դրություն հայտարարելուց և մայրաքաղաքում գորքեր մտցնելուց: Դրա փոխարեն Մուսոլինիին հաջորդ օրն առաջարկեց զբաղեցնել կառավարության ղեկավարի պաշտոնը: Պատվամեծությամբ քվեարկելու ժամանակ բուրժուական կուսակցությունների 306 պատգամավորներ իրենց ձայնը տվեցին նոր կառավարության վստահություն հայտնելու օգտին (դեմ քվեարկեցին կոմունիստները, սոցիալիստները և հանրապետականների մի մասը՝ 102 պատգամավոր):

Մուսոլինիի առաջին կառավարությունը կռալիցիոն էր. մինչև 1923թ. ապրիլը նրա մեջ մտնում էին ժողովրդական կուսակցության ներկայացուցիչները, իսկ մինչև 1924թ. վերջը՝ լիբերալները:

Մուսոլինին անմիջապես իրականացրեց մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին բռնապետական իշխանության հաստատմանը: Շրջանցելով սահմանադրությունը նա ստեղծեց «ֆաշիստական մեծ խորհուրդ», որի մեջ մտան կուսակցության ղեկավարության անդամները, ֆաշիստ նախարարները և կուսակցական տեղական ղեկավարները: Այդ մարմինը քննարկում էր բոլոր ղեկընտններն ու օրենքները՝ պատվամեծ մտցնելուց առաջ և վերահսկում էր կառավարության գործունեությունը: Մեծ նշանակություն ունեցավ 1923թ. ֆաշիստական «ազգային անվտանգության կամավոր ոստիկանության» իրավաբանական ճանաչումը և նրա հանձնումն անմիջականորեն կառավարության ղեկավարի հրամանատարությանը: Դրանով իսկ «սև վերնաշապիկավորները» ներգրավվեցին պետության համակարգի մեջ, որը նրանց գործողություններին տալիս էր օրինականության տեսք:

Յրվեց ռազմական շահույթների հետաքննության հանձնաժողովը և ընդունվեցին մասնավոր խոշոր ձեռնարկությունների զարգացմանը նպաստող ղեկընտններ: Կառավարությունը կրճատեց ուղղակի հարկերը և ավելացրեց անուղղակիները: Վերացվեցին «Գործազրկության դեմ ապահովագրության մասին» օրենքը և «Անմշակ հողերի ինքնակամ գրավելու թույլատրելիության մասին» հրամանագիրը: Խիստ հսկողություն սահմանվեց

արհմիությունների վրա, սկսեցին ինտապնդվել դեմոկրատական կազմակերպությունները:

Չհամարձակվելով դեռևս զրել պառլամենտը, Մուսոլինին և նրա հանցախումբն անցկացրեցին բալետփոխում, ըստ որի մանդատների 2/3-ը ստանում էր այն կուսակցությունը, որի օգտին կքվեարկեին ընտրողների 1/4 մասը:

1924թ. պառլամենտական լինություններում ֆաշիստների օգտին քվեարկեց 4,5 միլիոն ձայն: Նրանք պառլամենտում հաղթանակ տարան: Ֆաշիստական անկարգությունները, ոչ դեմոկրատական ճանապարհով հաղթանակ ձեռք բերելը դժգոհություն առաջացրեց ժողովրդական լայն զանգվածների մոտ: Օպոզիցիան պառլամենտի առաջին իսկ նիստերում սկսեց քննադատել Մուսոլինիի վարչակարգը և նրա վարած քաղաքականությունը: Մոցիալիստ Ջակոմո Մատեոտտիի ելույթները մերկացրին Մուսոլինիի ծախվածությունը և նրա դիկտատուրան: Ֆաշիստները սպանեցին Մատեոտտիին: Դա առաջացրեց վիթխարի զայրույթ, որից վախեցած Մուսոլինին ձեռքակալեց մի շարք վարկաբեկված ֆաշիստների: Աշխատավոր զանգվածը պատրաստ էր վերացնել ֆաշիստական վարչակարգը: Սակայն ընդդիմությունը ճիշտ տակտիկա չընտրեց: Օգտագործելով ընդդիմության թուլությունը, ֆաշիստները նոր ուժով սկսեցին իրենց հարձակումը: Մուսոլինիի դեմ մահափորձի նախապատրաստության վերաբերյալ շշուկները որպես պատրվակ օգտագործելով, կառավարությունը 1925թ. վերջին ընդունեց «կասկածելի» տարրերից պետական ապարատի գտման, թերթերի համարները բռնագրավելու և այլ հարցերի մասին օրենքները: 1925թ. դեկտեմբերի 24-ի օրենքով Մուսոլինին (կառավարության ղեկավարը) ազատվում էր պառլամենտի առջև ունեցած պատասխանատվությունից և պարտավոր չէր հրաժարական տալու անվստահության քվե ստանալու դեպքում: Օրենքների նախագծերը չէին կարող պառլամենտի քննարկմանը դրվել առանց կառավարության ղեկավարի նախնական հավանության:

1926թ. ընդունվեցին մի շարք արտակարգ օրենքներ: Բոլոր քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները, բացի ֆաշիստներից, ցրվեցին և հայտարարվեցին օրենքից դուրս: Ընդդիմության պատգամավորները վտարվեցին պառլամենտից: Վերականգնվեց մահապատիժը և հիմնվեց «հատուկ տրիբունալ» հակաֆաշիստների հետ հաշվեհարդար կատարելու համար: Վերացվեցին տեղական ինքնակառավարման մարմինները: Արգելվեց ընդդիմության լրագրությունը, ոչնչացվեցին դեմոկրատական ազատությունները: Հազարավոր դեմոկրատներ մահապատժի ենթարկվեցին առանց դատ ու դատաստանի, ուղարկվեցին հանակենտրոնացման ճամբարներ:

Իտալական ֆաշիզմի քաղաքական վարչակարգն ավելի արագ

ձևավորվեց, քան նրա պետական կարգը: Երկրում պահպանվեց միապետությունը, բայց այնպիսի խղճուկ վիճակում, որ ոչ-ոք նրա հետ հաշվի չէր մտտում: Համարվում էր, որ Մուսոլինին պատասխանատու է թագավորի առջև (այդպես ամրագրված էր նույնիսկ օրենքներում), բայց ոչոք դրան չէր հավատում:

Արդեն 1925թ. «Կառավարության ղեկավարի լիազորությունների մասին» օրենքով վարչապետը դառնում էր պառլամենտից անկախ և պատասխանատու չէր նրա առջև: Նախարարները համարվում էին վարչապետի հասարակ օգնականները և պատասխանատու էին նրա առջև: Նրանք նշանակվում և ազատվում էին վարչապետի հայեցողությամբ: Մինչև 1936թ. Մուսոլինին գրավում էր միաժամանակ 7 նախարարական պաշտոն: 1926թ. «Իրավական նորմերը հրապարակելու գործադիր իշխանության իրավունքի մասին» օրենքը գործադիր իշխանությանը, ավելի շուտ՝ նրա ղեկավարին ղեկրետ-օրենքներ հրապարակելու իրավունք վերապահեց:

Պառլամենտի գոյությունը ժողովրդի և կառավարության միջև «միասնականություն» ցուցադրելու նպատակ էր հետապնդում: Պառլամենտի «պատշաճ» կազմն ապահովվում էր 1928թ. «Քաղաքական ներկայացուցչության բարեփոխումով»: Այն անսովոր ցայտուն կերպով պատկերում էր ֆաշիզմի բուն էությունը՝ սարսափը ժողովրդի առջև և ատելությունը նրա նկատմամբ:

Պատգամավորների ընտրությունները կատարվում էին հետևյալ կերպ.

1. Պատգամավորության թեկնածուներն առաջադրվում էին հիմնականում արհմիությունների կողմից (իրականում՝ ֆաշիստական միությունների ղեկավար կենտրոնների կողմից);

2. Այսպես կոչված ֆաշիզմի Ազգային մեծ խորհուրդը (կուսակցության շտաբը) արհմիությունների կողմից ներկայացված ընդհանուր ցուցակից ընտրում էր 400 պատգամավոր;

3. Ընտրողներին իրավունք էր վերապահվում հավանություն տալ այդ նշանակմանը:

Ընտրական իրավունքից օգտվում էին 21 տարին լրացած այն տղամարդիկ, որոնք բավարարում էին օրենքով նախատեսված պահանջներից որևէ մեկին: Այդ պահանջներն էին.

1. Արհմիություններին վճարումներ կատարելը;
2. 100 լիրից ոչ պակաս հարկ վճարելը;
3. Պետական կամ բանկային արժեթղթեր ունենալը;
4. Եկեղեցական կղերականներին պատկանելը;

Ֆաշիստական կուսակցությունը դարձավ պետական ապարատի քաղաքական մասը: Կուսակցական համագումարները վերացվեցին: Ֆաշիստական Մեծ խորհուրդը կազմված էր աստիճանավորներից (ըստ պաշտոնի կամ ըստ նշանակման) Խորհրդի նախագահը կառավարության ղեկավարն էր: Խորհուրդը տնօրինում էր սահմանափակ կազմակերպությունը, քննարկում կարևորագույն օրինագծերը: Կուսակցության կանոնադրությունը հաստատվում էր թագավորական ղեկերտով: Կուսակցության ղեկավարը (յարտուղարը) նշանակվում էր թագավորի կողմից՝ կառավարության ղեկավարի ներկայացմամբ:

Կուսակցության տեղական կազմակերպությունները ղեկավարվում էին վերևից նշանակված քարտուղարների կողմից: Ֆաշիստական վարչակարգը պահպանելու համար կառավարությունը ստեղծեց ընդհանուր ոստիկանություն: Գոյություն ունեին նաև «Հակաֆաշիստական հանցագործություններից պաշտպանվելու կազմակերպություն»․ «Քաղաքական հետաքննությունների հատուկ ծառայություն» և «Ազգային անվտանգության կամավոր ոստիկանություն»:

Վարչակարգի թշնամիների հետ դատաստան տեսնելու համար ստեղծվել էին հատուկ հանձնաժողովներ, որոնք կոչվում էին «ոստիկանական դատարաններ»: Այդ հանձնաժողովների անդամները ֆաշիստական ապարատի պաշտոնատար անձինք էին (ոստիկանության պետը, դատախազը և այլն): Մարդուն դատապարտելու համար ոչ մի պատճառ հարկավոր չէր, բացի «քաղաքական անվտանգությունից»:

Մուսոլինիի կառավարությունը գիտակցելով, որ հակաժողովրդական ոչ մի վարչակարգ չի կարող գոյատևել միայն բռնությամբ, աշխատավոր զանգվածին խաբելու և նրա կրքերը հանգստացնելու նպատակով կատարեց մի շարք մանկրումներ:

Այսպես ծնվեց 1926-1934թթ. օրենքներով ստեղծված «կորպորատիվ պետությունը»: Դրա պաշտոնական, ցուցադրական նպատակն էր աշխատանքի և կապիտալի հաշտեցումը, բայց իրական արդյունքն եղավ մոնոպոլիաների տնտեսական և քաղաքական գերիշխանության հզորացումը: Երկրում ստեղծվեցին 22 կորպորացիաներ (ըստ արդյունաբերության ճյուղերի): Յուրաքանչյուրի կազմում կային ֆաշիստական արհմիությունների, ֆաշիստական կուսակցության և ձեռնարկատիրական միությունների ներկայացուցիչներ: 22 կորպորացիաներից յուրաքանչյուրի նախագահը դարձավ Մուսոլինին: Նա էլ զխավորեց կորպորացիաների նախարարությունը:

Օրենքը կորպորացիաների համար սահմանեց աշխատանքի պայմաններն ու աշխատանքային վեճերի լուծման շրջանակը (գործադուլներն արգելվում և ճնշվում էին):

Կորպորատիվ կարգի սահմանումը թույլ տվեց Մուսոլինին հաշվե

հարդար տեսնել պառլամենտի հետ, որի փոխարեն ստեղծվեց «Ֆաշիստական կազմակերպությունների և կորպորացիաների պալատ»: Նրա անդամները նշանակվում էին Մուսոլինիի կողմից:

Պալատի իրավունքները սահմանված էին հետևյալ կերպ. օրենքների հրապարակման գործում համագործակցություն պետության հետ: Ֆաշիստական կորպորատիվ պետությունը ծառայում էր որպես մոնոպոլիաների զենք: Իսկ մոնոպոլիաները հաճույքով ծառայում էին ֆաշիստական կուսակցական և պետական վերնախավի շահերին:

Ֆաշիստական բռնապետության գլխավոր հատկանիշն արտաքին գավթողական քաղաքականությունն էր: Մուսոլինին «Հռոմեական կայսրության վերածննդի» պահանջ էր ներկայացնում:

Ֆաշիստական Իտալիան պահանջում էր ֆրանսիական որոշ հողեր (Սավոյան, Նիցցան, Կորսիկան), ձգտում էր գրավել Կորֆու կղզին, հույս ուներ տիրապետություն հաստատել Ավստրիայում, պատրաստվում էր գավթել Արևելյան Աֆրիկան և այլն:

Ի պատասխան այդ ծրագրի իրականացման, որն ոչ մի կերպ չէր համապատասխանում Իտալիայի ռազմական կարողություններին, Մուսոլինին հաջողվեց զավթել թույլ, հետամնաց Արիսսինիան (1936թ.), օկուպացնել Ալբանիան (1938թ.):

1940թ. հունիսին Իտալիան՝ Գերմանիայի և Ճապոնիայի դաշնակիցը, պատերազմ հայտարարեց Ֆրանսիային ու Անգլիային: Որոշ ժամանակ անց, նա հարձակվեց Հունաստանի վրա: Իտալական ֆաշիստական լրատվությունն ամսպագոգոռ հայտարարություններ էր անում մեծ աֆրո-եվրոպական Հռոմեական կայսրության մոտալուտ ստեղծման մասին: Սակայն ռեալ իրականությունն այլ էր:

2. ԻՏԱԼԻԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ 1940թ. ՄԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հիտլերյան Գերմանիայի ամենամերձավոր դաշնակիցը՝ ֆաշիստական Իտալիան, առաջինը դուրս եկավ պատերազմից: Մտալինգրադի շրջանում և Դոնի շրջակայքում Գերմանիայի աղետալի պարտություններից և դաշնակիցների զորքերը Սիցիլիայում հայտնվելուց հետո թուլացան Մուսոլինիի դիրքերը: Վերջինս օգնություն պահանջեց Հիտլերից, սակայն նա արդեն անկարող էր:

1943թ. հուլիսին հրավիրված ֆաշիստական մեծ Խորհուրդն որոշում ընդունեց գերագույն իրամանատարությունը թագավորին հանձնելու մա-

սին: Դրանից ամմիջապես հետո, իտ սլական ֆաշիզմի պարագլուխ Մուսոլինին ձերբակալվեց: Երկար ժամանակ ահաբեկչությանը կաշկանդվող զանգվածների հեղափոխական եռադր ստացավ ցանկալի ելք: Ողջ Իտալիայով ընդացավ ցույցերի և գործադուլների ալիքը: Ժողովուրդը բանտերից ազատում էր քաղբանտարկյալներին: Նրա ճնշման ռակ Մուսոլինին փոխարինած մարշալ Բադոլյոյ կառավարությունը ցրեց ֆաշիստական կուսակցությունը և նրան հարող կազմակերպությունները: Դեմոկրատական կուսակցությունները, այդ թվում և կոմունիստականը, օրինականացվեցին:

Մուսոլինիի վարչակարգին չօգնեցին ոչ ոստիկանական բռնությունները, ոչ էլ պաշարողական դրությունը: Ժողովրդական լայն զանգվածները ջախջախեցին ֆաշիզմը: Իր արժանի մահը գտավ սոցիալիստ Մատեոտտիի մարդասպան ֆաշիստ Դումինին:

1943թ. սեպտեմբերին Իտալիան ստորագրեց անվերսպահ կապիտուլյացիայի պայմանները և դրան համապատասխան դաշնակիցների տնօրինմանը հանձնեց իր օդային ու ռազմածովային նավատորմը: Սակայն կապիտուլյացիան Իտալիային դեռ պատերազմի դադար չբերեց: Երկրի մեծ մասը, նրա արդյունաբերական հյուսիսը, մայրաքաղաք Հռոմը մնում էին դեռևս Գերմանիայի կողմից օկուպացված: Գերմանացիների կողմից ձերբակալումից ազատված Մուսոլինին գլխավորեց մարիոնետային կառավարությունը:

Գերմանական զավթիչների դեմ ժողովրդի մղած պայքարը գլխավորելու, այն կազմակերպելու և նպատակին հասցնելու համար Իտալիայի կոմունիստական կուսակցությունը միասնական ճակատով միավորվում է հինգ այլ հակաֆաշիստական կուսակցությունների ու խմբերի հետ (դրանց մեջ էին նաև քրիստոնեա-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցությունները): Ավելացնենք, որ Զրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը հետագայում գլխավորեց կառավարությունը և մինչև օրս համարվում է տիրող բուրժուական կուսակցություններից մեկը: Նրա սոցիալական հենարան են հանդիսանում խռշոր կապիտալը, գյուղացիությունը և կաթոլիկական կազմակերպությունները: Միավորված կուսակցությունները ստեղծեցին Ազգային ազատագրման կոմիտե: Այն բանից հետո, երբ թագավորը և Բադոլյոն, գերմանացիներից փրկվելով, փախան երկրի հարավ, Կոմիտեն վերափոխվեց իշխանության մարմնի: Ամբողջ երկրով սկսեցին գործել պարտիզանական ջոկատները: Ծավալվեց ժողովրդական պատերազմ:

Ազգային ազատագրման կենտրոնական կոմիտեի օրինակով Հյուսիսային Իտալիայում ստեղծվեց Միլանի ազատագրման կոմիտեն, որից հետո ձևավորվեցին մարզային և տեղական կոմիտեները:

Պարտիզանական պայքարը զագաթնակետին հասավ հիտլերա

կանների դեմ հանընդհանուր ժողովրդական պատերազմի օրերին (1944թ. ապրիլ): 1945թ. ապրիլի 18-ին պարտիզանական ջոկատը Դոնգոյի վայրում կանգնեցրեց փախստականների մի ամբողջ շարասյուն, որը փորձում էր անցնել սահմանը, դուրս գալ Ըվեյցարիա: Նրանց մեջ էր նաև Մուստլինին՝ գերմանացի զինվորի համազգեստով: Հաջորդ օրը Մուստլինին կախադան բարձրացվեց:

Իտալիայի կոմունիստական կուսակցությունը մտադրված չէր այդ ժամանակաշրջանում ազատագրական պատերազմը զուգակցել սոցիալիզմի համար հեղափոխական պայքարի հետ: Նա հայտարարեց դեմոկրատական հանրապետության մասին, որն ընդունել կլինի իրագործելու սոցիալական և այլ բնույթի բարեփոխումներ՝ խիստ դեմոկրատական եղանակներով: Այս նպատակով Կոմկուսը նախաձեռնեց գումարել Սահմանադիր ժողով, որը պետք է մշակեր Հանրապետության Սահմանադրությունը: Այդ ժամանակաշրջանում երկրի քաղաքական կյանքում կարևոր տեղ զրավեց պետական կառուցվածքի ձևի հարցը: 1945-1946թթ. կայացած կուսակցական համագումարներում կոմունիստները, սոցիալիստները և քրիստոնեա-դեմոկրատներն արտահայտվեցին հանրապետություն հաստատելու օգտին: 1946թ. հունիսի 2-ին կառավարման ձևի մասին կայացավ հանրաքվե: Իտալական ժողովրդի մեծամասնությունն արտահայտվեց միապետության դեմ: 1946թ. հունիսի 18-ին Իտալիան հռչակվեց հանրապետություն:

Հանրաքվեի հետ միաժամանակ տեղի ունեցան Սահմանադիր ժողովի ընտրությունները: Ընտրություններն Իտալիայում իրականացվում էին համամասնական համակարգով, հանընդհանուր, ուղղակի և հավասար հիմունքներով՝ գաղտնի քվեարկությամբ: Արդյունքում՝ քրիստոնեա-դեմոկրատները ստացան ձայների 35%-ը, սոցիալիստները՝ 20%-ը, իսկ կոմունիստները՝ 19%-ը: Նրանք էլ համարվեցին Սահմանադիր ժողովի հիմնական ֆրակցիաները: Այս պայմաններում կաթոլիկների պարագլուխ դը Գասպերին նշանակվեց նախարարների խորհրդի նախագահ (ընտրություններում կաթոլիկական եկեղեցին ակտիվ օգնություն էր ցույց տվել քրիստոնեա-դեմոկրատներին): Գասպերիի կառավարությունը կոալիցիոն էր. նրա կազմում բացի քրիստոնեա-դեմոկրատներից մտնում էին սոցիալիստները, կոմունիստները, հանրապետականները և «անկախականները»:

Նոր կառավարության արտաքին քաղաքականության կարևոր քայլը հաշտության պայմանագրի ստորագրումն էր, որը տեղի ունեցավ 1947թ. փետրվարի 10-ին Փարիզի կոնֆերանսում: Կառավարության ջանքերով ընդունվեցին կալվածատիրական չմշակվող հողերը գյուղացիական կոոպերատիվներին հանձնելու, կիսրարության պայմանների փոփոխման և բերքի առավել արդարացի բաժանման, առանց արհմիությունների համա-

ձայնության ձեռնարկությունների, բանվորների ազատումն արգելելու և աշխատավարձի շարժական սանդղակ մտցնելու մասին օրենքները: 1946թ. սեպտեմբերին սոցիալիստներն ու կոմունիստները կառավարությանը սոցիալ-քաղաքական վերափոխման ծրագիր առաջարկեցին, որը ներառում էլ խոշորագույն մոնոպոլիաների ազգայնացումը և ագրարային բարեփոխումը: Սակայն բուրժուական կուսակցություններն ակտիվորեն հակադրեցին սոցիալ-տնտեսական նոր քաղաքականությանը: Կառավարությունը «գտելու» նպատակով Գասպերին 1947-ի մայիսին հրահրեց (արդեն 2-րդ անգամ) կառավարական ճգնաժամ: Նա հայտարարեց կառավարության հրաժարականի մասին, որից հետո, ունենալով ԱՄՆ-ի կառավարության շրջանների աջակցությունը, ձևավորեց նոր կառավարություն՝ բաղկացած միայն քրիստոնեա-դեմոկրատներից:

Դառնալով ընդդիմություն, այնուամենայնիվ, քաղաքական կյանքում շարունակում էին մեծ դեր խաղալ նաև սոցիալիստներն ու կոմունիստները, որոնք ակտիվորեն մասնակցեցին նաև երկրի սահմանադրության մշակմանը: Սահմանադրությունը հավանության արժանացավ Սահմանադիր ժողովի կողմից 1947թ-ին: Այն ուժի մեջ մտավ 1948թ. հունվարի 1-ից:

Սահմանադրության համաձայն Իտալիան աշխատանքի վրա հենվող հանրապետություն է: Նրանում ամրագրված դրույթները հռչակում են քաղաքական համոզմունքների, խոսքի, խղճի, մամուլի, ժողովների, անձի ազատություն, բնակարանի անձեռնմխելիություն, աշխատանքի և կատարված աշխատանքի համեմատ վճարման, արհմիութենական գործունեության ազատություն և գործադուլի իրավունք: Սահմանադրության համաձայն առանձին անձանց տնտեսական գործունեությունը չպետք է վնաս բերի հասարակության շահերին, իսկ մասնավոր սեփականությունը, այդ թվում և արտադրական ձեռնարկությունները, կարող են փոխհատուցման միջոցով բռնագրավվել հանուն ընդհանուր շահերի: Հօգուտ աշխատավորների ճանաչվում էր ձեռնարկությունների կառավարմանը մասնակցելու իրավունքը: Սահմանափակվում էին հողային սեփականության չափերը և նշվում կոոպերատիվներին ու մանր տնտեսություններին օգնություն ցույց տալու անհրաժեշտությունը: Իտալիայի պատմության մեջ առաջին անգամ իրավաբանորեն ճանաչվեց կնոջ և տղամարդու հավասարության իրավունքը: Սահմանադրությամբ պարտադիր և անվճար ուսման ժամկետը հասցվեց մինչև 8 տարվա: Նախատեսվեց մարզերի վարչական ինքնավարություն և կառավարման մարզային մարմինների ստեղծում:

Հիմնական օրենքով երկրի օրենսդիր մարմինը պառլամենտն է, որը բաղկացած է երկու պալատներից՝ սենատից և պատգամավորների պալատից: Երկու պալատն էլ ձևավորվում են ընդհանուր ընտրությունների ճանապարհով: Սակայն, եթե պատգամավորների պալատն ընտրվում է ամբողջ բնակչության համամասնական ներկայացուցչության հիման վրա, ա

պա սենատ են ուղարկվում յուրաքանչյուր մարզից որոշակի թվով պատգամավորներ՝ ըստ նրա բնակչության թվի: Պատվամենտի երկու պալատներն էլ օրնադրական ոլորտում ստացան հավասար ֆունկցիաներ և օժտված են կառավարությանը վերահսկելու միևնույն իրավունքով: Պատվամենտի որևէ պալատ կառավարությանը ձայների 2/3-ով անվստահություն հայտնելու դեպքում, վերջինս պարտավոր է հրաժարական տալու:

Հանրապետության նախագահն ընտրվում է պատվամենտի կողմից 7 տարի ժամկետով: Սահմանադրությունը նրան օժտում է մի շարք լիազորություններով, որոնց նպատակն է ապահովել երկրի իշխանությունների բնականոն գործնեությունը: Նա է նշանակում և ազատում երկրի վարչապետին, իսկ վերջինիս ներկայացմամբ՝ բոլոր նախարարներին¹: Նախագահը հանդիսանում է զինված ուժերի գլխավոր հրամանատարը, նշանակում և ազատում է զինվորական բնագավառի բարձր պաշտոնյաներին: Նա իրավունք ունի ցրելու պատվամենտը՝ սահմանադրությամբ նախատեսված նորմերի շրջանակներում: Պատվամենտի ընդունած օրինագծերի վրա նախագահը կարող է վետո դնել՝ դրանց քննարկումը կրկին պատվամենտին հանձնելով:

Իտալիայի հանրապետության կառավարությունն իրականացնում է գործադիր իշխանություն: Նրան է վերապահված նորմատիվ ակտերի պահանջները հասարակական կյանքի տարբեր բնագավառներում իրականացնելու իրավունքը:

Գործող սահմանադրությամբ Իտալիայի պետական ապարատի բաղկացուցիչ մասն է կազմում Սահմանադրական դատարանը, որի քննության ենթակա են օրենքների ու օրենքի ուժ ունեցող ակտերի սահմանադրության համապատասխանության հարցով առաջացած վեճերը, երկրի նախագահի և նախարարների դեմ սահմանադրությամբ նախատեսված կարգով հարուցվող մեղադրանքները, ինչպես նաև այն վեճերը, որոնք առաջացել են պետական տարբեր իշխանությունների, պետության և տարածքային իշխանությունների, տարածքային տարբեր մարմինների միջև:

Սահմանադրական դատարանը բաղկացած է 15 անդամներից, որոնք նշանակվում են Հանրապետության նախագահի (նշանակման մասին դեկրետը վավերացնում է վարչապետը), պատվամենտի պալատների համատեղ նիստով և բարձրագույն դատական մարմինների կողմից (յուրաքանչյուրն իրավունք ունի նշանակելու 5-ական անդամ): Սահմանադրական դատարանի նախագահին ընտրում է դատարանի կազմը՝ երեք տարի ժամկետով: Դատարանի լիազորությունները սահմանվեցին 12 տարի ժամկետով (հետագայում՝ 1967թ., այն սահմանվեց 9 տարի): Սահմանադրական դատարանը Հանրապետության նախագահի հետ միասին, որ

¹Конституция итальянской республики, илл. 92, տե՛ս Конституции государств Европейского Союз, М., 1999, էջ 438:

պես սահմանադրական նորմերի գերագույն երաշխավոր, դուրս դասական 3 իշխանություններից¹:

Իտալիայի սահմանադրության հաս ռատումը, անշուշտ, դեմոկրատիայի կարևոր հաջողությունն էր: Բայց դեմոկրատական սահմանադրություն դեռ չի նշանակում դեմոկրատական կտավարում: Իտալական սահմանադրությամբ նախատեսված սոցիալական վերափոխումների իրականացումն անհնար դարձավ սահմանադրության ստեղծման նպատակով ձևավորված միության դադարման պահից: Հետագայում միայն, երբ ստեղծվեց իսկական դեմոկրատական կոալիցիա, այն դարձավ իրագործելի:

Իտալիայի հանրապետության 1947 թ. դեկտեմբերի 22-ի սահմանադրությունը հետագա փոփոխություններով ու լրացումներով այսօր էլ շարունակում է մնալ այդ պետության հիմնական օրենքը:

¹ Հարությունյան Գ., Սահմանադրական վերահսկողություն (համեմատական վերլուծություն), Երևան, 1997, էջ 152:

ԻՍՊԱՆԻԱՅԻ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. ԻՍՊԱՆԻԱՆ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԵՐԻ ՄԻՋԵՎ
ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Ագրարային-արդյունաբերական Իսպանիան արդյունաբերության զարգացման մակարդակով առաջին համաշխարհային պատերազմից հետո շարունակում էր ետ մնալ առաջավոր տերություններից: Ֆեոդալական մնացուկները՝ Իսպանիայի զարգացման գլխավոր արգելակը, որոշում էին ներքին շուկայի սահմանափակվածությունը, գյուղատնտեսության վարման պարզունակ ձևը, բնակչության հիմնական զանգվածի կուլտուրական հետամնացությունը և կալվածատեր ազնվականության գերակշիռ դերը կառավարության մեջ ու ամբողջ պետական ապարատում: Իսպանիայի համար բնորոշ էր առանձին շրջանների տնտեսական զարգացման անհավասարաչափությունը: Իսպանիայի ֆինանսա-կալվածատիրական օլիգարխիայի բաղկացուցիչ մասը և գոյություն ունեցող կարևորագույն սոցիալ-քաղաքական հենարանը կաթոլիկ եկեղեցին էր: Միապետության և ռեակցիոն մյուս ուժերի հուսալի հենարանը բանակն էր, որն ակտիվորեն միջամտում էր երկրի քաղաքական կյանքին, պաշտպանելով իր կաստայական շահերը: Ամենասուր ճգնաժամերի պահերին միապետությունը դիմում էր հետադեմ սպայությանը, որպեսզի նրա օգնությամբ երկարացնի իր գոյությունը: Այդպես եղավ նաև 1923թ., երբ գեներալ Պրիմո դե Ռիվերան թագավորի և նրա շրջապատի համաձայնությամբ ու օժանդակությամբ կատարեց պետական հեղաշրջում և հաստատեց ռազմա-միապետական բռանապետություն: Նա ցրեց պառլամենտը (կորտեսները), վերացրեց բուրժուական ազատությունները և սահմանադրական երաշխիքները, արգելեց քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Չեղյալ համարելով 8-ժամյա աշխատանքային օրվա մասին դեկրետը և արգելելով գործադուլները՝ դրանց համար նախատեսելով քրեական պատասխանատվություն, թագավորը ձգտում էր ամրապնդել բուրժուազիայի իշխանությունը՝ մտցնելով կորպորատիվ համակարգ Իտալիայի օրինակով:

Ինչպես Իտալիայում. այստեղ նույնպես տեղծվեցին ձեռնարկատե-
րևից, արհմիություններ և ներկայացուցիչներից և պետական պատե-
նի սննդից բաղկացած կորպորացիաներ»։ Ե այց այս ամենն իզուր էր։
Ի սպանիայի բանվոր դուսակարգը չենթարկվեց դիկտատուրային։ Էյու-
դեցիական զանգվածները համառորեն պայքարում էին հողի համար։
Կառավարող ուժերին սպառակտում էր իշխանության համար պայքարը։
Ռուսական դիկտատուրայի շարունակումը պայամում էր հեղափոխա-
կան պայքարում։ 1930-ի հունվարին Պրիմո դե Ռիվերան հրաժարական
տվեց և հեռացավ երկրից։

Դիկտատուրայի տապալմանը հաջորդեց Իսպանոսիայան տապալու-
մը (1931թ. ապրիլ)։

Իրադարձությունները զարգանում էին արագորեն։ Հակամիապետա-
կան շարժման մեջ համախմբվեցին ամենատարբեր ուժերը՝ բանվորները,
գյուղացիները, ծախ բուրժուական կուսակցությունները և սոցիալիստներ-
ը։ Միապետությունը ձգտում էր մասնակի գիւումներով փրկել իրեն սա-
կայն ապարդյուն։ Բանը ոչ միայն բուն միապետության մեջ էր, այլև ան-
ցյալի այն բոլոր մնացուկների, որոնք նա պաշտպանում էր։ 1931թ. ապրի-
լին հանրապետականները փայլուն հաղթանակ տարան տեղական լնտ-
րություններում։ Դրանից անմիջապես հետո նրանք կազմեցին հանրապե-
տական կառավարություն՝ սկզբում Բարսելոնում, այնուհետև՝ Մադրի-
դում։ Ալֆոնս թագավորը փախավ Ֆրանսիա։

Միապետությունն ոչնչացնող հեղափոխությունն իր բնույթով բուր-
ժուա-դեմոկրատական էր։ Այն անցել է երեք էտապ. առաջին էտապը՝
1931թ. ապրիլի 14-ից մինչև 1933թ. նոյեմբեր. հանդիսացավ հանրապե-
տական-սոցիալիստական կառավարությունների էտապը, երկրորդ էտա-
պը՝ 1933թ. նոյեմբերից մինչև 1936թ. փետրվար, պատմության մեջ մտավ
որպես «սև երկամյակ», իսկ երրորդ էտապը՝ 1936թ. փետրվարից. այ-
սինքն՝ կորտեսների ընտրություններում ժողովրդական ճակատի տարած
հաղթանակի պահից մինչև 1939թ. մարտի վերջը։

Հեղափոխության առաջին էտապում՝ 1931թ. հունիսի 28-ին, տեղի ունե-
ցան սահմանադիր կորտեսների ընտրություններ։ Չայնի իրավունք ունեին
միայն 23 տարեկանից բարձր տարիք ունեցող տղամարդիկ։ Ընտրություն-
ներում ծախ ուժերը հաղթանակ տարան (նրանք ստացան 263 պատգա-
մավորական տեղ)։ Սահմանադիր կորտեսները բացվեցին հուլիսի 14-ին։
Նրանք հաստատեցին կառավարության լիազորությունները և ստեղծեցին
հանձնաժողով՝ սահմանադրություն մշակելու համար։ 1931թ. դեկտեմբերի
9-ին ընդունվեց սահմանադրությունը։ Այն Իսպանիան հռչակում էր «բոլոր
դասակարգերի աշխատավորության դեմոկրատական հանրապետություն,
որը կառուցված է ազատության ու արդարության սկզբունքների վրա» և
հաստատում էր մինչ այդ նվաճված հիմնական դեմոկրատական ազատու-

թյունները: Սահմանվեցին օրենքի առջև բոլորի հավասարություն, մարդու և քաղաքացու իրավահավասարության ամրակախ ծագումից, սեռից, ունեցվածքից, քաղաքացու հարստությանից և այլն), անձի և բնակությանի անձեռնմխելիության ու մի շարք այլ կարևորագույն սկզբունքներ

Սահմանադրությամբ օրենսդիր իշխանությունը հանձնվում էր հանրահանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքով գաղտնի քվեարկությամբ ընտրված պառլամենտին (կորտեսներին): Բարերելու իրավունք ունեին 2՝ տարին բոլորած երկու սեռի քաղաքացիները:

Կատալոնիան Իսպանիայի հանրապետության շրջանակներում դարձավ ինքնավար մարզ:

Սահմանադրությունը չեղյալ հայտարարեց ֆեոդալական հարաբերությունները և խոստացավ ազրարային բարեփոխում: Սահմանադիր ժողովն ընդունեց օրենքներ 8-ժամյա աշխատանքային օրվա և սոցիալական ապահովագրության մասին: Սակայն, պետք է նշել, որ այս ամենն ամբողջությամբ չլիազորվեցին: Շատ օրենքներ մնացին թղթի վրա:

Հեղափոխության արդյունքի ընդհանուր դժգոհության պայմաններում տեղի է ունենում ուժերի սահմանազատում: Բանվոր դասակարգը պառակտվեց սոցիալ-դեմոկրատական առաջնորդների մեղքով, իսկ կոմունիստական կուսակցությունը դեռ բավականաչափ ուժեղ չէր: Հարուստ և հզոր հետադիմությունն օգտվելով այդ ամիմից միավորվում է, այսպես կոչված Իսպանիայի կոնֆեդերացիայի մեջ: 1933թ. ընտրություններում նրան հաջողվում է խոշոր հաղթանակի հասնել և կազմել կառավարություն: Աջ կուսակցությունների հետադիմական քաղաքականությունը, հեղափոխության նվաճումներից նրանց բացահայտ հրաժարվելն առաջ բերեց աստուրիական հանքափորների հայտնի ապստամբությունը, որին աջակցեց Կատալոնիան: Ապստամբություններ հետագայում բռնկվեցին Սևիլիայում, Մադրիդում և ուրիշ քաղաքներում:

Մարոկկոյական գորքերի և օտարերկրյա լեզիոնի օգնությամբ կառավարությունը ճնշեց ապստամբությունը: Հազարավոր մարդիկ դատապարտվեցին ազատագրկման: Կատալոնիայի ինքնավարությունը վերացվեց:

«Սև երկամյակի» շրջանում հետադիմությանը հաջողվեց ոչնչացնել հեղափոխության սոցիալական բոլոր նվաճումները: Գյուղացիներն արտաքսվում էին հողից, բանվորները մյուսներից ոչ պակաս «ճաշակեցին» հակահեղափոխական ահաբեկչության դառնությունը: Սոցիալիստական ուժերը հարկադրված էին գործել ընդհատակում: Այնուհանդերձ, հետադիմության հաղթանակը խաբուսիկ էր: Նրա յուրաքանչյուր քայլ ուժեղացնում էր վարչակարգի ճգնաժամը, նպաստում նրա նախկին կողմնակիցների հեռացմանը: Երկրում հասունանում էր հեղափոխական իրադրությունը: Առաջացավ ժողովրդական ճակատ, որի կազմի մեջ մտան կոմունիստները, սոցիալիստները, հանրապետականները, Հանրընդհանուր բանվորա-

կան միության անդամները և այլք:

1936թ. փետրվարի 16-ի ընտրությունների ցույց տվեցին, որ իսպանական ժողովրդի մեծաթանությունը մերժում է ֆաշիզմն ու հետադիմությունը: Այդ ընտրություններում ժողովրդական ճակատի կուսակցությունն ընտրվեց պառլամենտում ստացան 268 տեղ (473 տեղերից): Չախ բուրժուական կուսակցություններից կազմված կառավարությունը 1936թ. փետրվարի 19-ին վերականգնեց հեղափոխության նվաճումները, բանտերից ազատեց քաղբանտարկյալներին, վերականգնեց Կառալունիայի ինքնավարությունը, ընդունեց բանվորների վիճակը բարելավող օրենքներ, սկսեց ազլարային բարեփոխման իրականացումը:

Ժողովրդական ճակատի հաղթանակն ակտիվացրեց իսպանական ֆաշիզմին, որը խմբավորվել էր «Ֆալանգա» կուսակցության մեջ և նրա շուրջը: 1936թ. հուլիսի 17-ին Մարոկկոյում, այնուհետև բազմաթիվ այլ քաղաքներում սկսեց ռազմա-ֆաշիստական խռովություն, որի գլուխ կանգնեց զեներալ Ֆրանկոն: Խռովարարները Գերմանիայի և Իտալիայի կողմից ստացան մեծ օգնություն: Նրանց կողմն անցան Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունները:

Հանրապետական Իսպանիային աշխարհի բոլոր երկրներից օգնության եկան հազարավոր նշանավոր ռազմիկ ղեմնկրատներ: Նրանք ստեղծեցին ինտերնացիոնալ ջոկատներ: Իսպանիայի ժողովուրդը պայքարում էր հերոսաբար: Քաղաքացիական պատերազմը տևեց 32 ամիս: Այդ ընթացքում ազգայնացվեց խոշոր արդյունաբերությունը, ավելի քան 300.000 գյուղացիական ընտանիքներ անհատույց ստացան հող, ընդունվեցին 48-ժամյա աշխատանքային շաբաթվա, աշխատանքի պաշտպանության, սոցիալական ապահովագրության մասին օրենքները և այլն: Ոչ միայն Կառալունիան, այլև Բասկոնիան ստացան ազգային ինքնավարություն: Սակայն այս ամենն երկար չտևեց:

1938թ. վերջին Իսպանիայի հանրապետության ռազմական դրությունը սկսեց վատանալ: 1939թ. հունվարին Բարսելոնն անձնատուր եղավ: Մարտի վերջին իսպանական ֆաշիզմը տոնեց հաղթանակը:

2. ՖՐԱՆԿՈՅԱԿԱՆ ԻՍՊԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԵՎ 1978 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1939թ. ապրիլին ամբողջ Իսպանիայում հաստատվեց ֆաշիստական դիկտատուրա: Պետության գլուխ կանգնեց արտակարգ լիազորություններով օժտված դիկտատոր (կառույիլո) զեներալ Ֆրանկոն: Ֆաշիստական տիրապետության գլխավոր զենքը տեռորն էր, որն իրականացնում էին բա

մակը, ոստիկանությունը և ֆաշիստական ջոկատները:

Ֆաշիստական դիկտատուրան ձգ ոտը էր զսպել բանվոր դասակարգին: Երկրում տեղի ունեցող կառավարական «ուղղահայաց» արհմիություններ, որոնց ղեկավարում էր Ֆալստեգիստական կուսակալությունը: Այդ արհմիությունների մեջ մտնում էին առկա կամ այն ճյուղի բոլոր բանվորները, ձեռնարկատերերը և տեխնիկական-կառավարչական անձնակազմը: Դրանց ղեկավար պոստերը գրավում էին վերևից նշանակվող ֆալստեգիստական կուսակալության անդամները:

Հեղափոխության նվաճումները չեղյալ հայտարարվեցին: Վերացվեցին բանվորական օրենսդրությունն ու աշխատանքային պայմանագրերը, արգելվեցին գործադուլները: Գյուղացիները հողը պետք է վերադարձնեին կալվածատերերին և վճարեին վերջին երեք տարվա հարկերը: Ֆաշիստական դիկտատուրայի կարևոր հենարանը կաթոլիկական եկեղեցին էր: Ֆրանկիզմը նրան վերադարձրեց նախկին արտոնությունները:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆրանկոյական վարչակարգը պաշտպանում էր իտալո-գերմանական ագրեսորներին: Պաշտոնապես պատերազմ չհայտարարելով Խորհրդային Միությանը, ֆրանկոյական Իսպանիան իրականում օգնում էր ֆաշիստական Գերմանիային:

Հիտլերյան Գերմանիայի պարտությունը և եվրոպական մյուս երկրներում ֆաշիստական ռեժիմների տապալումը Ֆրանկոյին ստիպեցին մանկել: 1945թ. մայիսի 8-ին Ֆրանկոն հայտարարեց նացիստական Գերմանիայի հետ կապերը խզելու և ֆաշիստական պետությունների ամբողջ սեփականությունն Իսպանիայում բռնագրավելու մասին: Հուլիսի 17-ին նա հրապարակեց «Իսպանացիների խարտիան», որը սահմանում էր իսպանական քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: «Խարտիան» ցույց տվեց, որ Ֆրանկոն կարող է ճարպկորեն օգտվել ոչ միայն բռնությունից, այլև՝ սոցիալական և քաղաքական դեմագոգիայի զենքից:

«Խարտիան» հռչակում էր խոսքի, ժողովի և միավորումների ազատություն, բայց մի վերապահությամբ՝ ազատություն ֆրանկիզմի կողմնակիցների համար: Հռչակված ազատություններն իրական էին կառուցվելու հավատարմության շրջանակներում: «Խարտիան» բովանդակում էր պետության խոստումը՝ օգնություն ցույց տալ անքատության մեջ գտնվող աշխատողներին և բազմազավակ ընտանիքներին: Սակայն, պետք է նշել, որ այդ խոստումներն ամրապնդված չէին պետական համապատասխան օրենքների ընդունմամբ:

Հետպատերազմյան առաջին տարիներին դեմոկրատական շարժման ճնշման տակ ամբողջ աշխարհում և բուն Իսպանիայում ֆրանկիզմը սասանվեց: Միապետականների մի մասը հակվեց ֆաշիստական դիկտատուրան սահմանադրական միապետությամբ փոխարինելուն: Որպեսզի խան-

գ արի ֆաշիստական բլոկի պառակտմանը, Ֆրանկոն 1947թ. հուլիսի 26-ին հրապարակեց «Պետության ղեկավարի պաշտոնը ժառանգելու մասին» օրենքը, ըստ որի Իսպանիան հռչակում էր թագավորություն, ստեղծվում էր թագավորական խորհուրդ և որոշվում պետության ղեկավարության պաշտոնը ժառանգելու կարգը: Սակայն այդ ակտը չէր սահմանափակում դիկտատորի արսունությունները: Օրենքի երկրորդ հոդվածը Ֆրանկոյին հռչակում էր երկրի ղեկավար: Նրան իրավունք էր վերապահվում իր հայեցողությամբ նշանակել հաջորդին՝ այնպիսի փոխարինողի. որն էլ կատարի իր մահվանից, կամավոր հրաժարականից կամ անկատարության ապացուցումից հետո կդառնար Իսպանիայի թագավոր կամ խնամակալ: Օրենքն իրավունք էր վերապահում Ֆրանկոյին վերացնել փոխարինողի նախկին նշանակումը: Թագավորական խորհուրդը միայն պետությանը կից խորհրդակցական մարմին էր:

Ֆրանկիզմի քաղաքական ճգնաժամն առաջ բերեց բանվորական ու դեմոկրատական շարժում և դրա ազդեցությամբ՝ բուրժուազիայի ավելի նշանակալի խավերի ընդդիմության շարքերի անցում: Որպեսզի խանգարեր ընդդիմության տարբեր ուժերի մերձեցմանը, Ֆրանկոն 1966թ. նոյեմբերի 22-ին կորտեսների առջև կարդաց «Պետության օրգանական օրենքը» և դեկտեմբերի 14-ին կազմակերպեց հանրաքվե՝ օրենքին այդ կամ ոչ ասելու վերաբերյալ:

«Պետության օրգանական օրենքը» մտցրեց պետության ղեկավարի և կառավարության ղեկավարի պաշտոնների բաժանում, որոնք նախկինում կենտրոնացված էին Ֆրանկոյի ձեռքում: Նոր օրենքի համաձայն կորտեսների 100 անդամներ (այսինքն՝ նրանց 1 5-րդ մասը) ընտրվում են ոչ թե ամբողջ բնակչության, այլ ընտանիքների գլխավորների կողմից: Հռչակվեց դավանանքի ազատություն:

«Պետության օրգանական օրենքի» ընդունումից հետո ֆրանկոյականները հակահարձակման անցան բանվորական և դեմոկրատական շարժման դեմ:

XX դարի 70-ական թվականների սկզբին ֆրանկոյական բռնապետության սոցիալական բազան նեղացավ: Սակայն ռեժիմի էությունը մնաց նույնը: Այն պահպանվեց մինչև Ֆրանկոյի մահը (1975թ.): Գրեթե այդ նույն ժամանակ էլ Իսպանական ժողովուրդը ոտքի կանգնեց դաժան վարչակարգը կործանելու նպատակով: Երկրի շատ քաղաքներում ու գյուղերում անցկացվեցին բազմամարդ ցույցեր, կազմակերպվեցին գործադուլներ: Ժողովուրդը պահանջում էր անցկացնել դեմոկրատական արմատական վերափոխումներ, ազատել քաղբանտարկյալներին, վերացնել արտակարգ օրենքները և ընդունել նոր, դեմոկրատական Սահմանադրություն, որը դարձել էր անհրաժեշտություն:

1978թ. կորտեսները հավանության արժանացրին սահմանադրության

նախագիծը որը հաստատվեց հասարակայնի միջոցով (1978թ. դեկտեմբերի 6-ին): Սահմանադրությունն ուժի մեջ մտավ 1978թ. դեկտեմբերի 27-ից: Այն, ըստ էության, պահպանեց կտրամադրված սահմանադրական միապետության ձևը, որը սակայն չխոսնգարեց դեմոկրատական պետության ստեղծմանը: Սահմանադրությունն Իսպանիան հռչակում է որպես իրավական, սոցիալական, դեմոկրատական պետություն՝ հիմնված ազատության, հավասարության, արդարության, քաղաքական բազմակարծության սկզբունքների վրա (հոդված 1): Երկրում ճանաչվում է բազմակուսակցությունը: Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն և նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ու ձևավորման արտահայտմանը: Նրանք պարտավոր են գործել սահմանադրության և օրենքների շրջանակներում (հոդված 7): Սահմանադրությունը պետությանը հնարավորություն է տալիս երկքաղաքացիության մասին կնքել պայմանագրեր: Հիմնական օրենքի առաջին բաժնում ամրագրված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, պարտականությունները և դրանց պաշտպանության ու իրականացման երաշխիքները: Մահապատիժը որպես բացառիկ պատժամիջոց, վերացվում է: Այն կիրառվում է միայն պատերազմների ժամանակ, եթե դա նախատեսված է քրեագիտական օրենքներով: Բոլոր քաղաքացիներին իրավունք վերապահվեց դատական կարգով պաշտպանել իրենց օրինական շահը և սահմանադրությամբ ամրագրված իրավունքը:

Հռչակելով դեմոկրատական իրավունքներն ու ազատությունները, սահմանադրությամբ, այնուհանդերձ, որոշ դեպքերում թույլատրվում է անձին ժամանակավորապես զրկել դրանցից, այսինքն՝ կասեցնել անձի իրավունքներն ու ազատություններն արտակարգ իրավիճակներում կամ սահմանադրական կարգին վտանգ սպառնալու դեպքերում: Օրինակ, 55-րդ հոդվածի համաձայն կարող է կասեցվել սահմանադրության 18-րդ հոդվածի 2-րդ կետը (որի համաձայն արգելվում է բնակարանի տիրոջ կամքին հակառակ կամ առանց դատարանի նախնական թույլտվության մուտք գործել այնտեղ):

Պետության գլուխ հանդիսանում է թագավորը: Նա ներկայացնում է Իսպանիան միջազգային հարաբերություններում: Թագավորի անձն անձեռնմխելի է: Նա չի ենթարկվում պատասխանատվության (հոդ. 51, կետ 3): Թագավորի արձակած ակտերը, սահմանադրության 64-րդ հոդվածի համաձայն ստորագրում է վարչապետը, իսկ անհրաժեշտության դեպքում համապատասխան բնագավառի նախարարը: Վարչապետի թեկնածուի առաջարկման և Ոչանակման հետ կապված ակտերը ստորագրում է Կոնգ-

¹ Конституция Королевства Испания (от 27 декабря 1978г.), հոդ. 1, տես Конституции Европейских государств, М., 1999, էջ 45:

րեւի նախագահը: Թագավորի արձակած ակտերի համար պատասխանատվություն է կրում այս ստորագրող անձը: Թագավորի իշխանությունը ցմահ է և ժառանգական: Թագավորը գլխավոր կորտեսների առջև ելույթ է ուսլիս այն մասին, որ բարեխղճորեն կկատարի իր ֆունկցիաները, կսահպանի սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված դրույթներն ու կհարգի քաղաքացիների իրավունքները: Հիմնական օրենքի 62-րդ հոդվածը թագավորին պարտավորեցնում է գոտարել և ցրել գլխավոր լորտեսներ, նշանակել օրենքով նախատեսված կարգով ընտրություններ, անհրաժեշտության դեպքում՝ հանրաքվեներ: Նրա պետք է նշանակի ազատի վարչապետին, իսկ վերջինիս առաջարկությամբ՝ նաև կառավարության անդամներին: Թագավորն իրականացնում է զինված ուժերի գլխավոր իրամանատարությունը, թագավորական ակադեմիայի բարձրագույն հովանավորությունը: Նրա պարտականություններից է նաև քաղաքացիական ու զինվորական ծառայողների նշանակումը, նրանց պատվավոր կոչումներով ու շքանշաններով պարգևատրելը և այլն:

Ներման իրավունքը վերապահված է թագավորին: Նրա ընտանիքի և պալատի ընդհանուր ծախսերի համար թագավորը պետական բյուջեից ստանում է որոշակի գումար ու ազատ տնօրինում է այն: Պալատականների նշանակումը և ազատումը թագավորի անձնական խնդիրն է:

Օրենսդիր մարմինը պատվամենտն է (կորտեսներ), որը բաղկացած է երկու պալատից՝ պատգամավորների կոնգրեսից և սենատից: Կորտեսներն իրականացնում են ոչ միայն պետության օրենսդրական իշխանությունը, այլև՝ ընդունում նրա բյուջեն և վերահսկում կառավարության գործունեությունը:

Կոնգրեսը բաղկացած է 300-400 պատգամավորներից, որոնք ընտրվում են 4 տարի ժամկետով՝ հավասար, ուղղակի, համընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա՝ զաղտնի քվեարկությամբ: Ընտրությունները տեղի են ունենում համամասնական համակարգով (հոդված 68, կետ 3):

Ընտրական տարածքները պրովինցիաներն են: Ընտրական իրավունք ունեն լրիվ չափով քաղաքական իրավունքներից օգտվող բոլոր իսպանացիները:

Սենատը տարածքային ներկայացուցչության պալատն է: Յուրաքանչյուր պրովինցիայից 4 տարի ժամկետով ընդհանուր, հավասար և ուղղակի հիմունքներով՝ զաղտնի քվեարկությամբ ընտրվում է 4 սենատոր, իսկ կղզիներից ընտրվում են 1-3 սենատորներ: Սենատը և Մեխիկան ընտրում են 2-ական սենատորներ:

Սահմանադրությունը կոնգրեսի պատգամավորին և սենատորին արգելում է միաժամանակ զբաղեցնել պետական այլ պաշտոն (օրինակ, լինել սահմանադրական դատարանի կամ ընտրական հանձնաժողովների անդամ, ժողովրդական պաշտպան, դատավոր կամ դատախազ և այլն), բացառությամբ որոշ դեպքերի:

Պատգամավորը և սենատորն անձեռնմխելի են: Նրանց դատում է միայն Գերագույն դատարանի քրեական պալատը:

Գործադիր իշխանությունն իրականացնում է կառավարությունը, որը ղեկավարում է երբին ու արտաքին քաղաքականությունը՝ վարչապետը գլխավորում է կառավարությունը, ղեկավարում նրա գործունեությունը և կոորդինացնում կառավարության մյուս անդամների ֆունկցիաները, որոնց համար էլ կրում է պատասխանատվություն:

Կոնգրեսի ընտրություններից հետո, թագավորը, խորհրդակցելով նրանում հաղթանակ տարած քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ, առաջարկում է թեկնածու՝ վարչապետի պաշտոնի համար: Վերջինս էլ կոնգրեսի պատգամավորների քննարկմանն է ներկայացնում կառավարության քաղաքական ծրագիրը: Եթե ձայների բացարձակ մեծամասնությամբ այն ընդունվում է, ապա թագավորը թեկնածուին նշանակում է վարչապետ: Կոնգրեսականների կողմից վարչապետի թեկնածուին անվստահություն հայտնելու դեպքում, առաջարկվում է նոր թեկնածու, որը վստահություն կարող է ձեռք բերել, եթե ստանա կոնգրեսի պատգամավորների ձայների պարզ մեծամասնություն:

Եթե վարչապետի առաջին թեկնածուի քվեարկությունից սկսած երկամսյա ժամկետում ոչ մի թեկնածու իր ներկայացրած ծրագրով չի արժանանում Կոնգրեսի վստահությանը, ապա թագավորը ցրում է երկու պալատները և նշանակում նոր ընտրություններ: Սահմանադրության այս դրույթը հնարավորություն է տալիս կանխել Կոնգրեսի «չարամտությունը» և կառավարությունից քաղաքական գործունեության համար պահանջել պատասխանատվություն միայն սահմանադրության և օրենքների շրջանակներում: Դրան զուգահեռ կառավարության ղեկավարը նախարարների խորհրդի քննարկումից հետո իր բացառիկ պատասխանատվությամբ կարող է առաջարկել կորտեսների ցրում, որն իրականացվում է թագավորի դեկրետով:

Այսպիսով, ստեղծվում է հակակշիռ իրավիճակ երկրի օրենսդիր և գործադիր մարմինների միջև:

Սահմանադրությամբ նախատեսվեցին տեղական կառավարման մարմինների լիազորությունները և նրանց գործունեության շրջանակը:

Հիմնական օրենքի 6-րդ բաժինը նվիրված է դատական իշխանությանը, որն իրականացնում են դատավորներն ու մագիստրատները՝ թագավորի անունից: Նրանք անփոփոխելի են, անկախ և ենթարկվում են բացառապես օրենքին (հոդված 117): Արգելվում է արտակարգ դատարանների ստեղծումը:

Դատարանները կոչված են պաշտպանելու մարդու և քաղաքացու ի-

1-Конституция Королевства Испания (от 27 декабря 1978г.), стр. 97, տն՝ս Конституции Европейских государств, М., 1999, էջ 66:

լուծվում են նաև ազատությունները, օրինակային շահերը: Դատարանների գործունեության և կազմակերպման հիմքը դատական իշխանության օլիգարխիայի սկզբունքն է:

Սահմանադրության 159-165 հոդվածներով վերաբերում են Սահմանադրական դատարանին: Այն կազմված է 12 անդամից, որոնց նախագահում է քաղաքացի: Նրանցից 4-ին առաջարկում է Կոնգրեսը՝ անդամների ծայերի 3/5-րդի մեծամասնությամբ, 4-ին՝ Սենատը, ծայերի նույն հարաբերակցությամբ, 2-ին՝ կառավարությունը՝ 2-ին՝ դատական իշխանության կառավարման մարմինը հանդիսացող Կերպույն խորհուրդը: Սահմանադրական դատարանի անդամները նշանակվում են 9 տարով լուրջաբանչյուր 3 տարին մեկ կազմը նորացվում է 1/3-ով: Դատարանի նախագահը նշանակվում է քաղաքացի կողմից՝ դատարանի անդամների կազմից 3 տարի ժամկետով: Նախագահի թեկնածույին ներկայացնում է Սահմանադրական դատարանի պլենումը: Սահմանադրական դատարանը իրավասությունը տարածվում է Իսպանիայի ամբողջ տարածքի վրա: Այն իրավասու է՝

1. Զննարկել օրենքների և օրենքի ուժ ունեցող նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով դիմումները;

2. Օրենքով նախատեսված կարգով ու դեպքերում որոշում ընդունել մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության վերաբերյալ;

3. Լսել սահմանադրությամբ կամ սահմանադրական օրենքներով նախատեսված այլ հարցեր:

Դատարանն իրավասու է նաև մեկնաբանել սահմանադրությունը: Սահմանադրությամբ ամրագրված են Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտները և նրանց իրավասության շրջանակը: Որպես կանոն քաղաքացին Սահմանադրական դատարանում վիճարկում է միայն պետական այն ակտերը, որոնցով խախտվել են նրա սահմանադրական իրավունքներն ու ազատությունները:

Իսպանիայի Սահմանադրական դատարանի բնորոշ առանձնահատկություններից է այն, որ մեծ տեղ է հատկացվում պետական իշխանության մարմինների թե հորիզոնական և թե ուղղահայաց հարթություններում առաջացած վեճերի ու տարաձայնությունների լուծմանը: Նման հարցերի քննության ընթացքում փաստորեն ճշտվում են համապատասխան մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունների շրջանակները՝

1978թ. սահմանադրությամբ վերացվեցին նախկինում ընդունված մի շարք օրենքները (օրինակ, «1947թ. հուլիսի 17-ի կորտեսների մասին օրենքը», «1945թ. հուլիսի 17-ի իսպանացիների խարտիան», «1967թ. հունվարի 10-ի պետության օրգանական օրենքը», «1947թ. հուլիսի 26-ի պետության

¹ Հարությունյան Գ., Սահմանադրական վերահսկողություն (համեմատական վերլուծություն), Երևան, 1997, էջ 152:

դեկլարի պատճառով ժառանգելու մասին օրենքը» և այլն) և այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք այս կամ այն չափով հակասում էին Մահմանադրությանը: Վերջինս գործում է առ այսօր և հասարվում է ժամանակակից Իսլամիայի մայր օրենքը:

Ավելացնենք, որ 1982թ. ֆրանկիստները կազմակերպելին զինվորական խռովություն, որը, սակայն ճնվեց Իսլամիայի թագավոր Խուան Կարլոսի անմիջական ղեկավարությամբ:

1982թ. սկսած երկրում կառավարող կուսակցություն դարձավ Իսլամիայի սոցիալիստական բանվորական կուսակցությունը:

ԲԱԺԻՆ 9

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 28

ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄՆ ՈՒ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԵՄՈՆՍՏՐԱՏԱՅՈՒՄԸ

XX դարի սկզբին ԱՄՆ-ը դարձավ խոշորագույն համաշխարհային տերություն՝ սեփական գաղութային կայսրությամբ: Արտակարգ բարենպաստ բնական, ժողովրդագրական, արտաքին քաղաքական պայմանների, ինչպես նաև ժողովրդի նախաձեռնության շնորհիվ Միացյալ Նահանգները հիմնական տնտեսական ցուցանիշներով աշխարհում զրավեցին առաջին տեղը: Ավելացավ երկրի բնակչության թիվը:

Համաշխարհային երկու պատերազմները, որոնց մասնակիցը դարձավ նաև Ամերիկան, ըստ էության, վնաս չհասցրին նրա տարածքին: Այդ պատերազմներից երկիրն ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմական առումով դուրս եկավ ուժեղացած: Արդեն առաջին համաշխարհային պատերազմից հետո նա պարտապան երկրից վերածվեց պարտատեր երկրի: Այդ ժամանակ էլ ամերիկյան տնտեսությունը կրեց կառուցվածքային սոցիալական կարևոր վերափոխումներ: Դեռևս անցյալ դարի վերջին այնտեղ իշխանությունն անցավ խոշոր ֆինանսա-արդյունաբերական կորպորացիաներին, որոնք յուրացնում էին ազգային եկամտի մեծ մասը: Սակայն դա էականորեն չէր խանգարում մանր ու միջին արդյունաբերական, առևտրական և գյուղատնտեսական ձեռնարկությունների զարգացմանը:

Գիտաստեղծական հեղափոխության պայմաններում աշխատավոր զանգվածը 50-ական թվականներին կարողացավ ձեռք բերել սոցիալ-քաղաքական մի շարք իրավունքներ:

Այդ բոլորը միասին ազդեց ասերիկյան պետականության զարգացման վրա, որը հիմնականում կրում էր փաստական բնույթ և չէր փոխում սահմանադրական կառուցվածքի հիմքերը: Այն իր բովանդակությամբ մարմնավորում էր ժամանակակից լիբերալ դեմոկրատական պետությունների զարգացման գրեթե բոլոր առավել բնորոշ գծերը:

Դա պայմանավորված էր մի քանի սկզբունքային կարևոր միտումներով, որոնք համարյալ են մեկը մյուսին:

20-ական թվականներից առաջադիմական միտում նկատվեց ամենից առաջ ընտրական համակարգի հետագա դեմոկրատացման մեջ: 1920թ. օգոստոսի 28-ին երկրի օրենսդիրը վավերացրեց սահմանադրության 19-րդ ուղղումը, ըստ որի «Միացյալ Նահանգների քաղաքացիների ընտրություններին մասնակցելու իրավունքը՝ կապված նրանց սեռի հետ չպետք է մերժվի կամ սահմանափակվի Միացյալ Նահանգների, ինչպես նաև առանձին նահանգների կողմից»¹: Դրանով կանայք և տղամարդիկ ձեռք բերեցին հավասար ընտրական իրավունք: 1961թ. «Միացյալ Նահանգների նստատեղի հանդիսացող ընտրատարածքի (Կոլումբիա)» ընտրողներն իրավունք ստացան մասնակցել նախագահի և փոխնախագահի ընտրություններին (23-րդ ուղղում), իսկ 1964թ. ընդունված սահմանադրական 24-րդ ուղղումով «Միացյալ Նահանգների քաղաքացիների ընտրական իրավունքը ...» չպետք է սահմանափակվի ցանկացած հարկ չվճարելու պատճառով: Դեռևս 1962թ. ընդունվեց որոշում երկրի ընտրածքների վերափոխման մասին: Դա նպատակ էր հետապնդում ընտրատարածքները վերաբաժանել այնպես, որպեսզի նրանցից յուրաքանչյուրում լինեն մոտավորապես հավասար քանակությամբ ընտրողներ: Նման միտումը հիմնավորված է նրանով, որ ըստ ԱՄՆ-ում գործող ընտրությունների մեծամասնական համակարգի ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է ձայների հարաբերական մեծամասնություն:

Ընտրական դեմոկրատիայի զարգացումն իր գագաթնակետին հասավ 1971թ.-ին, երբ սահմանադրության մեջ կատարվեց 26-րդ ուղղումը, որի համաձայն 18 և բարձր տարիքի անձանց իրավունք վերապահվեց մասնակցելու ընտրություններին: Միացյալ Նահանգների կամ առանձին նահանգների կողմից չպետք է ժխտվի կամ սահմանափակվի նրանց իրավունքը՝ տարիքի պատճառաբանությամբ:

Համաֆեդերալ օրենսդրության հիման վրա համապատասխանաբար դեմոկրատացվեցին ընտրական օրենքներն առանձին նահանգներում:

¹Поправки к Федеральной Конституции, поправка XIX, in:u Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 298:

Չուայած անցկացված վերափոխումներ չվերագրեցին առանձին նա հանգներում գործող բոլոր հին ցեղերը, այնուամենայնիվ, ընտրական իրավունքը դարձավ հավասար և համընդհանուր:

1932թ. մարտի 2-ին Սենատն ընդունեց Սահմանադրության 20-րդ ուղղումը՝ որը վավերացվեց միայն 1933թ. հունվարի 2-ին: Նրանով սահմանվեց նախագահի և փոխնախագահի, ինչպես նաև սենատորների ու ներկայացուցիչների լիազորությունների ավարտման ժամկետը: «Նախագահի ու փոխնախագահի լիազորությունների ժամկետն ավարտվում է հունվարի 20-ի կեսօրին, իսկ սենատորների և ներկայացուցիչների լիազորությունների ժամկետը՝ այն սարվա հունվարի 3-ի կեսօրին, երբ դրանք պետք է ավարտվեն»: Կոնգրեսը, ըստ սահմանված դրույթի, հավաքվում է տարին առնվազն մեկ անգամ: Նրա նստաշրջանները սկսվում են հունվարի երեքի կեսօրին, եթե, իհարկե, Կոնգրեսը մեկ այլ օր չի սահմանում:

Նորընտիր նախագահի՝ մինչև նրա լիազորությունների սկիզբը, մահվան դեպքում նախագահ է դառնում նորընտիր փոխնախագահը: Այն դեպքում, երբ ոչ նորընտիր նախագահը, և ոչ էլ նորընտիր փոխնախագահն իրավունք չունեն զբաղեցնել նախագահի պաշտոնը, Կոնգրեսն օրենսդրական ակտով կարող է որոշել, թե ով պետք է կատարի նախագահի պարտականությունները կամ ինչ կարգով պետք է ընտրվի այն անձը, ով կկատարի այդ պարտականությունները՝ մինչև նախագահը կամ փոխնախագահը կստանձնի այդ պաշտոնը: Միաժամանակ, Կոնգրեսն իրավունք ունի միջոցներ ձեռնարկել, երբ մահանում է այն անձանցից մեկը, որոնցից Ներկայացուցիչների պալատն ընտրում է նախագահ՝ ընտրության իրավունքն իրեն փոխանցվելու դեպքում և երբ մահանում է այն անձանցից մեկը, որոնցից Սենատն ընտրում է փոխնախագահ, երբ ընտրության իրավունքը նրան է փոխանցվում:

1951թ.-ից նախագահի պաշտոնում միևնույն անձը չի կարող ընտրվել ավելի, քան երկու անգամ (22-րդ ուղղում): «Նախագահին երկու տարուց ավելի փոխարինող կամ նրա պարտականություններն այդ ընթացքում կատարող անձը չի կարող ընտրվել նախագահ ավելի, քան մեկ անգամ»:

1967թ. փետրվարի 23-ին վավերացվեց սահմանադրության 25-րդ փոփոխությունը, ըստ որի, եթե երկրի նախագահը հեռացվում է իր պաշտոնից, մահանում է կամ պաշտոնաթող է լինում, ապա նրա լիազորություններն անցնում են փոխնախագահին, որն էլ դառնում է նախագահ, իսկ, եթե նախագահը Սենատի նախագահին և Ներկայացուցիչների պալատի սփիքերին զրավոր դիմում է ներկայացնում իր լիազորությունների կատարման անկարողության մասին, ապա նրա իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է փոխնախագահը որպես նախագահի պաշտոնակատար:

Եթե փոխնախագահը կամ իշխանության գործադիր մարմինները կամ Կոնգրեսի օրենսդրվ սահմանված այլ մարմնի պաշտոնակա ուր անձանց մեծամասնությամբ Սենատի նախագահին և Ներկայացուցիչների պալատի սփիքերին գրավոր դիմում են այն մասին, որ նախագահն անկարող է իրականացնել այդ պաշտոնի հետ կապված իր լիազորությունները, փոխնախագահն անհապաղ ստանձնում է այդ լիազորությունները՝ որպես նախագահի պաշտոնակատար: Նախագահը հետագայում կարող է դիմում ներկայացնել Սենատի նախագահին և Ներկայացուցիչների պալատի սփիքերին՝ լիազորությունների անկարողության վերացման մասին և վերականգնվել իր պաշտոնին: Բայց, եթե վերը նշված անձինք նորից դիմեն համապատասխան մարմիններին նույն խնդրով, ապա՝ դիմումը ստանալուց հետո, 21 օրվա ընթացքում Կոնգրեսը երկու պալատների քվեների երկու երրորդով որոշում է կայացնում, ըստ որի նախագահի լիազորությունները՝ կապված պաշտոնի հետ, վերականգնվում են, կամ ժամանակավոր հանձնվում են փոխնախագահին:

Փոխնախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում, նախագահը նշանակում է փոխնախագահ, որը, սակայն, պաշտոնակալում է միայն Կոնգրեսի երկու պալատների ձայների մեծամասնությամբ հաստատվելուց հետո:

Չզալի հաջողություններ նկատվեցին «սպիտակների և գունավորների» քաղաքացիական մյուս իրավունքների ոլորտներում: 60-70-ական թվականներին ընդունվում են կրթության, կենցաղային սպասարկման, աշխատանքային գործունեության բնագավառներում ռասայական խտրականության դեմ ուղղված օրենքներ:

Կատարված դեմոկրատական բարեփոխումները, հատկապես ընտրական իրավունքի բնագավառում, շատ բանով խթանեցին կուսակցական մեքենայի կատարելագործմանը, որի օգնությամբ իշխող վերնախավի ներկայացուցիչներից ապահովվում էր իշխանության և կառավարման մարմինների կադրային համալրումը: Դեռևս XIX դ. ստեղծված երկկուսակցական համակարգի համապատասխան կազմակերպչական կառուցվածքը (հանրապետականներ և դեմոկրատներ) ուղղված էր ընտրաարշավների պահանջների բավարարմանը: Կուսակցական կազմակերպության հիմնական օղակները հանդիսացան ընտրական տեղամասերի կոմիտեները, իսկ բարձրագույն մարմինները՝ ազգային կուսակցական կոմիտեներն ու ազգային կուսակցական կոնվենտները: Իրավական կարգավորման ենթարկվեցին կուսակցական գործունեության ֆինանսական և կառուցվածքային հիմքերը: Այդ գործում բավական կարևոր դեր խաղացին առանձին նահանգների սահմանադրությունները, ընտրական օրենքները, (մասնա

վորասարս 1965թ. և 1970թ.օրե րքները), ինչպես նաև Լաիմանադրական հսկողութան իրավունքով օժտված դատարանների ուղղումները:

Ֆ. ՌՈՒԶՎԵԼՏԻ «ՆՈՐ ԿՈՒՐՍԸ» ԵՎ 50-70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՕՐԵՆՄԴՐՈՒԻՅՈՒՆԸ

XX դարում երևան եկան ամերիկյան պետության գործունեության նոր ուղիներ: Դրանցից մեկը դարձավ հակաճգնաժամային մեխանիզմի ստեղծումը: Նրա անհրաժեշտությունը վերջնականապես գիտակցվեց 30-ական թվականներին, համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին: ԱՄՆ-ում արդյունաբերական արտադրությունը կրճատվեց՝ հասնելով մինչև 56%-ի, ազգային եկամուտը կրճատվեց 48%-ով, սնանկացան բանկերի 40%-ը՝ միլիոնավոր շարքային ամերիկացիների զրկելով իրենց համեստ խնայողություններից: Մոտ 17 միլիոն մարդ զրկվեց աշխատանքից: Նախագահ Գ. Գուվերի կառավարությունը, որի ձեռքում էր այդ ժամանակ իշխանությունը, փաստորեն էական ոչինչ ձեռնարկեց ճգնաժամից դուրս գալու համար: Մինչդեռ սոցիալ-քաղաքական մթնոլորտը սրվում էր: Չանգվածային ցույցերը, միտինգները, ելույթները և բողոքի այլ ձևերը հաջորդում էին մեկը մյուսին: Այդ պայմաններում, 1932թ. հերթական նախագահական ընտրություններում հաղթեց դեմոկրատական կուսակցության թեկնածու Ֆ.Ռուզվելտը: Նոր նախագահը հանդես եկավ ճգնաժամից դուրս գալու ծրագրով: 1933թ. մայիսի 17-ին ուղերձով դիմելով կոնգրեսին Ֆ. Ռուզվելտը երաշխավորեց ընդունել երկու կարևոր միջոցառումների վերաբերյալ ծրագիր, որը կնպաստեր ինդուստրիայի զարգացմանը, աշխատատեղերի ավելացմանը, աշխատանքային շաբաթվա կրճատմանը և այլն: Նա դրանով նպատակ ուներ երկիրը դուրս հանել ստեղծված ճգնաժամից: Ծրագիրը պատմությանը հայտնի դարձավ Ռուզվելտի «Նոր կուրսը» անունով: Նրա իրականացումը տնտեսական և սոցիալական հարաբերությունների կարևորագույն բնագավառներում սկսվեց համարյա միաժամանակ: Դրամական համակարգը կայունացնելու նպատակով արգելվեց ոսկու արտահանումը, խոշորացվեց բանկային համակարգը¹:

Արդյունաբերության կարգավորումը դրվում էր հատուկ ստեղծվող հիմնարկության՝ «Արդյունաբերության վերականգնման ազգային վարչության», վրա: 1933թ. հուլիսի 16-ի «Ազգային տնտեսության վերականգնման մասին» օրենքով ամբողջ արդյունաբերությունը բաժանվեց 17 խմբերի, ո-

¹ -Послание Ф.Д. Рузвельта конгрессу 17 мая 1933г., տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 302:

րոնցից յուրսքանչյուրի գործունեությունն այսուհետ կարգավորվում էր շտապ կարգով կազմված նորմատիվ ակտերով, այսպես կոչված, «ազնիվ մրցակցության օրենսգրքերով»¹։ որոնք նախատեսում էին թողարկվող արտադրանքի սահմանված նորման, վաճառահամման շուկանների բաշխումը, գները, վարկի պայմանները, աշխատաժամանակի տևողությունը, աշխատավարձի չափը և այլն։

Այդ օրենսգրքերով, ինչպես նաև օրենքի շրջանակներում կնքված համաձայնագրերով կամ լիցենզիաներով վարձու աշխատողներն իրավունք ունեն իրենց ներկայացուցիչների միջոցով կնքել կոլեկտիվ պայմանագրեր և աշխատել համատեղության կարգով²։

Գյուղատնտեսության բնագավառում հիմնադրվում է «Գյուղատնտեսության կառավարման վարչությունը», որը 1933թ. մայիսի 12-ի «Գյուղատնտեսության վիճակի բարելավման մասին» օրենքով օժտվում է լայն լիազորություններով։ Օրենքը գյուղատնտեսության նախարարին լիազորեց կարգավորել գյուղատնտեսության արտադրանքի գները և ցանքատարածությունների ու անասունների գլխանաքանակի կրճատման ճանապարհով այն հասցնել 1909-1914թթ. մակարդակին³։

Գործազրկության, նրա բացասական հետևանքների վերացման կամ նվազեցման նպատակներով ձեռնարկվում են արտակարգ միջոցներ, որի իրագործման դեկավարությունը համձնարարվում է «Արտակարգ օգնության ֆեդերալ վարչությանը»։ Այն շուտով փոխարինվում է «Հասարակական աշխատանքների զարգացման վարչությանը»։ Գործազուրկներին ուղարկվում էին հատուկ կազմակերպություններ, որոնք զբաղվում էին ճանապարհների, կամուրջների, օլանավակայանների շինարարությամբ և վերանորոգմամբ։

Ռուզվելտի «նոր կուրսի» իրականացումը պահանջում էր ֆինանսական մեծ միջոցներ, որոնք գտնվեցին նրա կառավարության օրոք։

Դրական տեղաշարժ նկատվեց նաև աշխատանքային և սոցիալական օրենսդրության զարգացման բնագավառում։ Մինչ այդ աշխատողի և գործատուի փոխհարաբերությունների հետ կապված վեճերը դատարանների կողմից քննվում էին պարտավորական իրավունքի ընդհանուր սկզբունքների հիման վրա, անտեսելով կողմերի՝ պայմանագրում տեղ գտած սոցիալ-տնտեսական անհավասարությունը։

1935թ. ընդունվեց Վազների օրենքը, որով ԱՄՆ-ի աշխատանքային օրենսդրությունը մտավ զարգացման նոր փուլ։

Առաջին անգամ համաֆեդերալ մասշտաբով օրինականացվեց արհմիությունների գործունեությունը։ Արհմիություններ ստեղծելու և օրինա-

1. Закон о восстановлении Национальной экономики 16 июля 1933г., рашдін 7, տն'ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 306:

2. Закон об улучшении положения в сельском хозяйстве 12 мая 1933г., տն'ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 303-304:

կան գործադրույններին մասնակցելու համար արգելվեց աշխատավորներին քրեական հետապնդումը: Չեմնարկատերերը պարտավորվում էին արիմիությունների հետ կնքել պա մանագրեր և աշխատանքի շնորհունել այն անձանց, ովքեր արիմիության անդամ չէին: Մտցվում էր, այսպես կոչված. «փակ արտադրամասի» սկզբունքը: Գործադուլի իրավունքը ճանաչվում էր, եթե խախտվել էր օրենքը: Օրենքի կատարումը վերահսկելու նպատակով ստեղծվեց աշխատանքային հարաբերությունների գծով Ազգային վարչություն: Նրա ղեկավար կազմը ձևավորվում էր լախագահի կողմից Սենատի հավանությամբ¹: Աշխատանքային պրակտիկայում անօրինականություն հայտնաբերելիս վարչությունը հարուցում էր գործ՝ դատարանին հանձնելու նպատակով: Վարչության աշխատանքին խաչընդոտող անձինք պատժվում էին դատարանով (տուգանվում էին մինչև 5000 դոլարի չափով կամ ենթարկվում Եզատագրկման I տարի ժամկետով կամ միաժամանակ պատժվում պատժի նշված երկու տեսակներով): 1935թ. ընդունվեց օրենք սոցիալական ապահովության մասին, որն ԱՄՆ-ի իրավունքի պատմության մեջ հանդիսացավ այդ կարգի տառաչին համաֆեդերալ նորմատիվ ակտը: Ստեղծվեց սոցիալական ապահովագրության վարչություն: Այսուհետ ծերության կենսաթոշակների պետք է վճարվեին ԱՄՆ-ի այն քաղաքացիներին. որոնց 65 տարին արդեն լրացել էր²:

1938թ. ընդունվեց աշխատուժն արդարացի վարձակալելու մասին օրենքը, որն աշխատողների որոշ խմբերի համար սահմանեց աշխատանքի ժամանակի առավելագույն տևողության և նվազագույն աշխատավարձի չափը:

Այսպիսով, Ռուզվելտը որոշակի չափով նպաստեց ճգնաժամի մեղմացմանը:

Երկյորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո կորպորացիաները Գերագույն դատարանի միջոցով ձգտում էին հասնել «նոր կուրսի» օրենսդրության վերացմանը: Ըգնաժամային երևույթների մեղմացման նպատակով լայնորեն սկսեցին ներդրվել պետական կարգավորման նոր տեսակներ, գլխավորապես, ֆինանսա-տնտեսական միջոցների օգնությամբ: Զգալի շեղումներ նկատվեցին հատկապես աշխատանքային օրենսդրության բնագավառում:

1947թ. ընդունվեց Տաֆտա Խարտլիի օրենքը՝ որպես Վագների օրենքի ուղղում, բայց իրականում վերացրեց նրա կարևորագույն դրույթները: Ծանրացան գործադուլային պայքարի պայմանները: Այսուհետ ծրագրված գործադուլի մասին պետք է նախազգուշացում արվեր այն սկսելուց 60 օր առաջ: Աշխատավորության դեմ ուղղված հիշյալ օրենքը քրեական

1. Закон Вагнера 5 июля 1935г., տն՛ս Խрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 449:

2. Закон о социальном обеспечении 14 августа 1935г., տն՛ս Խрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 447-448:

հանցագործություն էր համարում այն բոլոր գործադուլները, որոնք շրջանցում են տնտեսական պահանջները: Արգելվում էր պետական ծառայողների մասնակցությունը գործադուլներին: Նախագահին իրավունք վերապահվեց ցանկացած պահի 80 օրով կասեցնել գործադուլները: Վերացվեց «փակ արտադրամասի» պրակտիկան: Ձեռնարկատուներն իրավունք ստացան դատարանի միջոցով պահանջել օրենքի շրջանակներից դուրս եկած գործադուլների հետևանքով հասցված վնասի հատուցում: Վերահսկողություն սահմանվեց արհմիութենական միջոցների նշանում, որոնց օգտագործումը քաղաքական նպատակներով արգելվում էր¹: Ընդունվեցին արհմիությունների իրավունքներն այս կամ այն չափով սահմանափակող այլ օրենքներ և:

1950թ. ընդունվեց Մակարեն Վուդի օրենքը (պաշտոնապես այն կոչվում էր «Նեյթին անվտանգության մասին 1950թ. օրենք»), ըստ որի քայքայիչ գործունեության նկատմամբ ստեղծվում էր վերահսկողություն իրականացնող վարչություն: Նրան իրավունք էր վերապահված ճշտել արդյոք այս կամ այն կազմակերպությունը չի գործում կոմունիստական «տոնով» կամ չի հանդիսանում «կոմունիստական ճակատի կազմակերպություն»: Նմանատիպ կազմակերպությունները ենթակա են արդարադատության նախարարությունում պարտադիր գրանցման. իսկ նրանց անդամների քաղաքացիական իրավունքները սահմանափակվում էին: Գրանցումից հրաժարվելը նախատեսում էր բավականին խիստ սանկցիաներ: Եվ ընդհանրապես, այդ օրենքի պահանջները խախտելու դեպքում նախատեսվում էր տուգանք 10000 դոլարի չափով կամ ազատազրկում՝ 5 տարի ժամանակով կամ՝ այդ երկու պատժատեսակների կիրառումը միաժամանակ: ԱՄՆ-ի նախագահն իրավունք ստացավ արդարադատության նախարարի համաձայնությամբ կարգադրել ձերբակալելու այն անձանց, ովքեր «վտանգ են սպառնում ԱՄՆ-ի ազգային անվտանգության շահերին»²:

Շուտով ընդունվեցին նաև համանման այլ օրենքներ, որոնք հիմնականում ուղղված էին կոմունիստների ու «նրանց նման մտածող» անձանց դեմ: Հետագա տարիներին այդ արշավը դադարեցվեց:

3. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏՈՒՄ

Պետական քաղաքականության բնագավառում մեծ դեր էին խաղում

1. Закон Тафта-Хартли 1947г., տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 451-452:

2. Закон о Внутренней безопасности, հոդ. 2, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 458:

ձեռնարկատիրական միությունները և նման այլ ընկերություններ, որոնք հայտնի էին որպես «ճնշում գործադրող խմբավորումներ»: XX դարի առաջին կեսին դրանց թիվը 3000-ից ավել էր, հետագայում այն պակասեց: Այդ ընկերությունների թվում զգալի դեր էին խաղում և շարունակում են խաղալ Արդյունաբերողների ազգային ասոցիացիան ու Առևտրի պալատը: Առաջինը միավորում է արդյունաբերական ընկերությունների մոտ 70%-ը Այդ միավորումները կատարում են ինչպես տնտեսական, այնպես էլ, ըստ էության, քաղաքական ֆունկցիաներ: Բարձրորակ մասնագետների օգնությամբ նրանք կազմում են առաջիկա տնտեսական և սոցիալ-քաղաքական զարգացման ծրագրերի նախագծերը և նախապատրաստում հանձնարարականներ ու մույնիսկ ապագա օրինագծերի հիմնական քեզիսները, որոնք հետագայում ուղարկվում են նախագահին, կոնգրեսին և նահանգների իշխանություններին: Այդ փաստաթղթերը, իհարկե, իշխանությունների համար պարտադիր չեն համարվում, բայց վերջիններս իրենց քաղաքականության մեջ հաշվի են առնում մեծ բիզնեսի պահանջները: Խոշորագույն ֆինանսա-արդյունաբերական միավորումները բազմապատկում են կառավարության վրա ներգործող այլ ուղիները:

ԱՄՆ-ում քաղաքացիական պատերազմի ավարտից հետո էլ ավելի ակնառու դարձավ պետական իշխանության կենտրոնացումը: Դրա վառ դրսևորումը եղավ նախագահի գլխավորությամբ համաֆեդերալ գործադիր իշխանության իրավասությունների ընդարձակումը: Պետության գործադիր-կարգադիր ֆունկցիաների անշեղ ընդարձակումը և բարդացումը հանդիսացան վարձու ծառայող մասնագետներից բաղկացած խիստ ճյուղավորված ապարատի ստեղծման գլխավոր պատճառները: Նրա ձևավորումն ավարտվեց համեմատաբար ուշ, միայն XIX դարի վերջին: Մինչ այդ ԱՄՆ-ի բյուրոկրատական ապարատը համեմատաբար մեծ չէր և դրանով տարբերվում էր մայրցամաքային Եվրոպայի բյուրոկրատացված պետություններից: Բայց արդեն XX դարում նախագահին իր ղեկավարության տակ ուներ կառավարման բյուրոկրատական մեծ ապարատ, որի իրավասությունը տարածվում էր ամբողջ երկրի պետական և քաղաքացիական կյանքի կարևորագույն ոլորտների վրա: Այդ ժամանակ ԱՄՆ-ում գործում էին պետական հիմնարկությունների երեք տիպեր.

1. Դեպարտամենտներ (նախարարություններ), որոնք գլխավորում էին կառավարման առանձին ճյուղեր (XX դարում դեպարտամենտների քանակը ոչ միայն ավելացավ, այլև՝ փոխվեցին որակապես, զինվելով աստիճանավորների զգալի ապարատով, որոնք կատարում էին պետական աշխատանքի մեծ մասը);

2. Ազգային գործակալություններ (հիմնարկություններ, որոնք իրենց նշանակությամբ մոտ էին նախարարություններին, բայց չունեին նման կարգավիճակ);

3. Բազմաթիվ և բազմազան ժամանակավոր «հանձնաժողովներ», «բյուրոներ», «խորհուրդներ», «կոլեգիաներ», «վարչություններ» և այլն, որոնք ստեղծվում էին երկրի համար ելլեմն կենսականորեն կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ լուծելու համար:

Էական նշանակություն ունի նաև բարձրաստիճան պաշտոնյաների նշանակման կարգի սահմանումը: Սահմանադրության համաձայն, նախագահի կողմից դեպարտամենտների ղեկավարներին, դեսպանների և մի քանի այլ բարձրաստիճան պաշտոնյաների նշանակումը պահանջում է սենատի նախնական համաձայնություն¹: Մյուս ֆեդերալ իշխանավորների նշանակումը հետագայում՝ հաստատվում սենատի կողմից: Բոլոր «երկրորդական» պաշտոնների նշանակումը սենատու կարող է վստահել նախագահին: Իրականում նախագահի դերն այդ հարցում առավել նկատելի էր: Իրան անտղղակի ձևով նպաստում էր դեռևս XIX դարում ձևավորված կառավարման ապարատի բաժանման համակարգը: Այն բաղկացած էր. ա) քաղաքացիական ծառայությունից, որն ընդգրկում էր անփոփոխ պաշտոնյաներին և բ) կառավարական ծառայությունից, որը բաղկացած էր իշխանության գլուխ անցած նոր նախագահի կողմից նշանակված բարձրաստիճան պաշտոնյաներից: Վերջիններս հեռանում էին իրենց պաշտոններից նախագահի հետ միասին (այս կարգը հայտնի է «տրսի համակարգ» անունով): Նման պաշտոնյաներով կազմավորված կոլեգիալ մարմինների վրա համապարտ պատասխանատվություն չի դրվում: Այդ անձինք նախագահին հավատարիմ մարդիկ են և պատասխանատվություն են կրում նրա առջև:

Պետական կառավարման զարգացմանը բնորոշ են նաև այլ գծեր: Այսպես, ձևավորված պետական ծառայությունները հայտնվում էին պետաիրավական գործունեության վերահսկողությունից դուրս: Այդպիսի դրությունն ամենից առաջ պայմանավորված էր ԱՄՆ-ում վարչական դատարանների և դատախազական վերահսկողության բացակայությամբ: Կոռուպցիան, պետական իշխանության շարաշահումը, պետական ապարատի անտարբերությունն ու չեզոքությունն առաջ բերեցին հասարակության դժգոհությունը, որն էլ կոնգրեսին հարկադրեց զբաղվել բարեփոխումներով: Այդ ուղղությամբ առաջին քայլերն արվել էին դեռևս XIX դ.: Քաղաքացիական ծառայության մասին օրենքը (1883թ.) սահմանեց ֆեդերալ պետական ծառայությունների գործունեության սկզբունքները: Նախատեսվեցին բաց մրցույթներ, իսկ պետական պաշտոնների նշանակելու համար անցկացվեցին քննություններ: Արգելվեց անձին պաշտոնից հեռացնել՝ հիմք ընդունելով նրա քաղաքական միտումները: Օրենքի իրականացման հսկողությունը դրված էր անկախ մարմնի՝ «Քաղաքացիական ծառայության հանձնաժողովի», վրա: Ընդհիվ այս և մի շարք այլ օրենքների, կարճ

¹ Конституция Соединенных Штатов Америки, гл. 2, М., 1997:

ժամանակահատվածում ձևավորվեց պետական կառավարման ու պակաս բարձրորակ քաղաքացիական մասնագետների բանակ: Պայքար մղվեց կոռուպցիայի դեմ: Սակայն այս ամենը չիասուրեզ «որսի համակարգի» լիակատար վերացմանը: Չէր կիրառվում նաև քաղաքական նկատառումներով աշխատանքից ազատելու անթույլատրելիության սկզբունքը: 1939թ. «Քաղաքական գործունեության մասին» օրենքով արգելվում էլ պետական ծառայողների մասնակցությունը քաղաքական գործունեությանը: 1947թ. նախագահ Տրումենի հրամանագրով Քաղաքացիական ծառայության հանձնաժողովը պարտավորվում էր ստուգել պետական պաշտոնյաների թեկնածուների քաղաքական բարեհուսությունը: Այդ պրակտիկան ավելի խստացվեց նախագահ Էյզենհաուսերի (1953թ.) «Պետական ծառայողների քաղաքական բարեհուսության և օրինապահության ստուգման մասին» հրամանագրով: Հետագայում այդ հրամանագրերը դադարեցին կիրառվել. բայց, կարելի է նշել, որ դրանց ներգործության հետևանքները մինչև հիմա զգացվում են:

ԱՄՆ-ի պետական կառավարման համակարգն աչքի է ընկնում իր առանձնահատկություններով, որոնք պայմանավորված են ամենից առաջ նրա ֆեդերատիվ կառուցվածքով: Այստեղ չի ձևավորվել միասնական պետական ծառայություն: Յուրաքանչյուր նահանգ ունի իր վարչական ապարատը, որը, սակայն, չի նշանակում նրա փաստական համապետական մեկուսացում: Ֆեդերացիայի և նահանգների միջև հարաբերությունները զարգանում են կենտրոնածիզ գծով: Դա ևս բացատրվում է ամերիկյան ֆեդերալիզմի ընդհանուր զարգացմամբ: Կենտրոնական կառավարությունն ակտիվորեն միջամտում է նահանգների գործերին: Նահանգների կախվածության ամենալուրջ ձևը ֆինանսականն է, քանի որ նրանք գոյություն չեն կարող պահպանել առանց կենտրոնի դրտացիաների:

XX դարի առաջին կեսին հատուկ նշանակություն ձեռք բերեցին այնպիսի հիմնարկություններ, ինչպիսիք են Հետաքննության ֆեդերալ բյուրոն, Կենտրոնական հետախուզական վարչությունը, Ազգային անվտանգության խորհուրդը և Պաշտպանության նախարարությունը: Պատմությունը ցույց տվեց, որ ԱՄՆ-ի նախագահները, ունենալով այդ հիմնարկությունների աջակցությունը, հնարավորություն ստացան ընդունել և շարունակում են ընդունել պետական կարևորագույն որոշումներ՝ հաճախ վեր կանգնելով սահմանադրությամբ իրենց վերապահված լիազորություններից: Դա իրեն զգացնել էր տալիս, հատկապես, պատերազմի ու խաղաղության վերաբերյալ հարցերում: Հաշվի չնստելով սահմանադրության դրույթների հետ, նախագահները բազմիցս, առանց կոնգրեսի նախնական համաձայնության, հրամանագրեր էին արձակում այլ երկրներում ռազմական գործողություններ սկսելու մասին, ինչը, ըստ էության, նշանակում էր պատերազմ վարել: Գործադիր իշխանության ուժեղացումն ակնառու էր նաև օրենսդրության քննազավառում:

Այս ամենով հանդերձ, այնուամենայնիվ, գործադիր իշխանության ուժեղացումը, դեռ չէր նշանակում մյուս իշխանությունների չափից դուրս թու-

լացում: Օրենսդիր և դատական իշխանություններն այսօր էլ շարունակում են մնալ «հակակշիռ» համակարգի կարևորագույն օղակը: Այդ առումով հատուկ նշանակություն ունեն ֆինանսա-բյուջետային հարցերի վերաբերյալ կոնգրեսի իրավունքները, վարչական կարգավորությունների դատական բողոքարկման հնարավորությունը, սենատի կողմից պաշտոններ զբաղեցնելու հարցում նախագահի առաջադրված թեկնածուների հաստատումը, իմփիչմենթի իրավունքը և այլն:

ԲԱԺԻՆ 10

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 29

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. ՃԱՊՈՆԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԻՋԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմը ճապոնիայի կառավարող շրջաններն օգտագործեցին Չինաստանում և Հեռավոր Արևելքի մյուս շուկաններում իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով Դա հանգեցրեց արդյունաբերության ու առևտրի զգալի աճի և վիթխարի եկամուտներ ապահովեց մոնոպոլիստական ընկերությունների (ձայբացու), ամենից առաջ Միցուի, Միցուիսի, Յասուդա և Մումիտոմո կոնցեռների համար: Գապոնական հետպատերազմյան տնտեսության աճը, միաժամանակ, ուներ և հակառակ կողմը, այն է՝ բանվոր դասակարգի անընդհատ աճող շահագործումը և գյուղացիության կողոպտումը: Գյուղատնտեսության մեջ ֆեոդալական մնացուկների առկայությունը դեռևս իրեն զգացնել էր տալիս և գյուղացի-վարձակալներին դատապարտում էր խղճուկ գոյության, արգելակ հանդիսանալով ներքին շուկայի զարգացմանը: Շարունակվում էր սեփականատեր գյուղացիների հողագրկման պրոցեսը: Ոչ պակաս ծանր էր նաև քաղաքային աշխատավորության վիճակը: Բանվորների ու գյուղացիների դաժան շահագործումը, աշխատավոր զանգվածի աղքատացումը սրում էր դասակարգային պայքարը երկրում: Ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը կառավարող շրջանները տեսնում էին ռազմա-ոստիկանական ռեժիմի խստացման մեջ: Մշտապես հարձակումներ գործելով բանվորի և գյուղացու իրավունքների վրա՝ ուժեղացնելով շահագործումը, ճապոնիայի կառավարող շրջանները փորձում էին աշխատավորական զանգվածների շրջանում պահպանել պատլամենտական պատրանքները:

Անհրաժեշտ էր լինում հաշվի առնել դեմոկրատական ուժերի աճող քաղաքական ակտիվությունը: Լյս պայմաններում 1925թ. ընդունվեց օրենք, այսպես կոչված, ընդհանուր ընտրական իրավունքի մասին, որը գործադրվեց երեք տարի հետո:

Օրենքի պարունակում էր մի փարք դրույթներ, որոնք սահմանափակում էին աշխատավորության շահերը: Առաջվա նման ընտրական իրավունք չունեին կանայք, որոնք կազմում էին ճապոնական պոլիտարիատի կեսից ավելին: Ընտրելու իրավունք ունեին միայն 25 տարին լրացած, իսկ ընտրվելու՝ 30 տարեկան դարձած տղամարդիկ¹: Սահմանվեց նստակեցության գեներգ մեկ տարի ժամանակով (հոդված 12), որն էականորեն պակասեցնում էր ընտրող աշխատողների թիվը, որոնցից փատերը զբաղմունք գտնելու համար հարկադրված էին փոխել բնակության վայրը: Օրենքն ընտրական իրավունքից զրկում էր այն անձանց, ովքեր.

1. Ճանաչվել էին սնանկ և չլին վճարել իրենց պարտքերը,
2. Ճանաչվել էին անգործունակ,
3. Չունեին մշտական բնակության վայր,
4. Դատապարտվել էին ազատագրկյան կամ տաժանակիր աշխատանքների 6 տարուց ավել ժամանակով,
5. Ստանում էին մասնավոր կամ հանրային օգնություն²:

Օրենքի 68-րդ հոդվածն ընտրական գրավի չափ սահմանեց 2000 իեն, որն ըստ էության, շատերին զրկում էր ընտրություններին մասնակցելու հնարավորություններից: Պատգամավորների լիազորությունների ժամկետը սահմանվեց 4 տարի (հոդված 78):

Չնայած օրենքի սահմանափակումների և նրա հետադիմական բնույթի, այնուհանդերձ, այն զգալի չափով (գրեթե 4 անգամ) ավելացրեց ընտրողների թիվը: 1925թ. ընդունվեց և անմիջապես ուժի մեջ մտավ նաև «Հասարակական կարգի պահպանման մասին» օրենքը, որը ժողովրդի մեջ ստացել էր «Վտանգավոր մտքերի մասին» օրենք անունը:

Օրենքը 10 տարի բանտարկություն կամ տաժանակիր աշխատանքներ էր նախատեսում այն կազմակերպությունների մասնակիցների համար, ովքեր «նպատակ ունեն փոխել պետական կարգը կամ ոչնչացնել մասնավոր սեփականության համակարգը»: Պատժի համանման տեսակներ էին նախատեսում նաև այդ նպատակով այլ աշխատանքներ կատարող կամ ծառայություններ մատուցող (օրինակ, ֆինանսական միջոցներ տրամադրելը, քարոզարշավը և այլն) անձանց համար³:

¹Закон о выборах депутатов в нижнюю палату парламента 29 марта 1925г., հոդ. 5, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 399:

²Նույնը, հոդ. 6:

³Закон об охране общественного порядка 1925г., հոդ. 1, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 400:

Տեղորդի ու հալածանքները քաղաքականությունը չկասեցրեց դեմոկրատական ուժերի պայքարը: 1927թ. երկրի ֆինանսական ճգնաժամը վատթարագրեց աշխատավորների առանց այդ էլ ծանր վիճակը: Այս իրադրության մեջ 1927թ. գարնանն իշխանության գլուխ անցավ Տանակայի սույուկա կուսակցության պայուսգլխի կառավարությունը: Կառավարող խմբավորման մեջ գերակշռություն ձեռք բերեցին այն տարրերը, որոնք պահանջում էին բացահայտ հունդես գալ ճապոնիայի աշխատավորական զանգվածների դեմ և ուժեղացնել արտաքին ագրեսիան: Այս նպատակով 1928թ. անցկացվեցին նոր ընտրությունները 1925թ. օրենքով: Ցրեղով պալամենտը, որն անվտանգության քվե էր տվել նրան. Տանակայի կաբինետն ընտրություններն անցկացրեց կաշառակերության, ընտրողների վրա ամենալուծան ճնշման իրադրության մեջ:

Շարունակվում էին զանգվածային ձերբակալությունները, տեռորն ու հալածանքները:

1929-1933թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը վատթարացրեց ճապոնիայի աշխատավորական զանգվածների դրությունը, որն էլ իր հերթին նպաստեց երկրում դեմոկրատական շարժման վերելքին: Այն իր արտահայտությունը գտավ 1935 աշնան պրեֆեկտուրալ և 1936թ. փետրվարի պառլամենտական ընտրություններում, որոնցում, չնայած ոստիկանական կամայականության ուժեղացմանը, հաջողության հասան ձախ ուժերը: 1940թ. հուլիսին իշխանության գլուխ անցավ իշխան Կոնոեի կառավարությունը, որի քաղաքականությունն ուղղված էր ճապոնիայի պետական կարգի ֆաշիստականացմանը:

Կոնոեն անձամբ միապետական կարգի կողմնակից էր և միլիտարիստների ու ձայրացուի հովանավորյալ: Նրա կառավարությունը կազմված էր բանակի և նավատորմի, ինչպես նաև խոշոր կոնցեռներ Միցուրիսիի, Միցուի և Մումիտոմոյի ներկայացուցիչներից: Այն հայտարարեց «Նոր քաղաքական կառուցվածք» ստեղծելու մասին: Բոլոր լեզալ քաղաքական կուսակցություններին առաջարկվեց «ինքնալուծարում», ինչը և տեղի ունեցավ: Դրա փոխարեն, ստեղծվեց կիսահասարակական, կիսապետական «Գահի օգնության ասոցիացիա» միապետական ֆաշիստական կազմակերպությունը, որն ընդգրկեց ամբողջ երկիրը: Այն գլխավորում էր Կոնոեն (նախարար-նախագահը), իսկ նրա ստորաբաժանումները՝ զինվորական և քաղաքացիական բյուրոկրատիայի ներկայացուցիչները, ինչպես նաև միլիտարիստների վստահությունը վայելող «ինքնալուծարված» կուսակցությունների ղեկավարները: «Գահի օգնության ասոցիացիայի» կազմի մեջ կոլեկտիվ անդամի իրավունքով մտան նախկին կուսակցությունները, միությունները և ընկերությունները:

Ազատ արձակված արհմիությունների փոխարեն ստեղծվեցին «Հայրենիքին ծառայող ընկերություններ», որոնք ղեկավարվում էին կառավա-

րության կողմից նշանակված պաշտոնյաներով: Չնսվորվում են նման այլ կազմակերպություններ: Դրանց միջոցով ճապոնիայում չտեսնված մասշտաբներով հաստատվում է ընդհանուր ուտիկանական լրտեսության ցանկազած այլախոհի ճնշման վարչակարգ: Ուժեղանում է կայսրի անձն պաշտամունքի փառաբանումը և շովինիզմի պրոպագանդան: Արդյունքում՝ երկրի ողջ չափահաս բնակչությունն ընդգրկվեց ռազմա-բյուրոկրատական համակարգի մեջ, որով կոչված էր բնակչությանը նախապատրաստել պատերազմի:

«Նոր քաղաքական կառուցվածքը» լրացվեց «Նոր տնտեսական կառուցվածքով», որը նախատեսում էր տարածքային-ճյուղային սկզբունքով ձեռնարկությունների հարկադրական միավորում: Յուրաքանչյուր տարածքային-ճյուղային ստորաբաժանում ղեկավարում էր կառավարության կողմից նշանակված անձը: Նոր տնօրինությանն էր հանձնվում արտադրության և իրացման, հումքի, էներգակիրների, բանվորական ուժի, գները սահմանման, աշխատանքի հիմնական պայմանների, աշխատվարձի և այլ կարևորագույն հարցերի լուծումը:

Գոյծադուրը հայտարարվեց պետական հանցագործություն: Բանվորների աշխատանքի տևողությունը և արդյունավետությունը կտրուկ բարձրացան: Այդ ճանապարհով երկրի տնտեսությունը միլիտարիզացվեց:

1941թ. ղեկտենքերին ճապոնիան, որն արդեն ագրեսիվ պատերազմ էր վարում Չինաստանի դեմ, հանկարծակի հարձակվեց Պիլը-Հարբոր ամերիկյան ռազմական բազայի վրա: Սկսվեց պատերազմ ԱՄՆ-ի և ճապոնիայի միջև: Վերջինս շուտով պատերազմի մեջ մտավ նաև դաշնակից մյուս տերությունների դեմ:

2. ԳԱՊՈՆԻԱՅԻ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀՆՏՈ 1946 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմում ճապոնիան պարտություն կրեց: Պարտությունը և նրա լիակատար կապիտուլյացիան վճռական ազդեցություն ունեցան երկրի պետա-իրավական կարգի հետագա զարգացման վրա: 1945թ. ճապոնիա մտան ամերիկյան զորքերը և սահմանվեց օկուպացիոն ռեժիմ: Փաստական իշխանությունն անցավ ամերիկյան ռազմական վարչությանը, որը գլխավորում էր գեներալ Մակարտուրը: Պատերազմի գլխավոր մեղավորները դատապարտվեցին: Նոր կառավարության կազմը համաձայնեցվեց օկուպացիոն զորքերի շտաբի հետ: Նախկին վարչակարգի վերացումը սկսվեց ճապոնական բանակի լիակատար քայքայմամբ, ռազմա-տեղորիստական ճնշման բոլոր մյուս մարմինների, միլիտարիստական հասարակական կազմակերպությունների, ռազմա-ուստի

կանակատեժիմը հաստատող նորմատիվ ակտերի վերացմամբ: Պահպանված լառավարման պետության ապարատը շովինիստական և միլիտարիստական տարրերից, չնայած ոչ լրիվ չափով, մեթարկվեց գտնան Կարևոր բարեփոխումներ անցկացվեցին սոցիալ-տնտեսական հարաբերությունների բնագավառում՝ 1946թ. ագրարային բարեփոխումով լուծարվեց խոշոր հողատիրությունը, հիմնականում՝ կալվածատիրական հողատիրությունը: Այսուհետ մշակվող գյուղատնտեսական հողի չափը պետք է չգերազանցի 9 հեկտարին: Այդ չափի գերազանցող հողը գնվում էր պետության կողմից և վաճառվում գյուղացիներին (առաջին հերթին վարձակալ գյուղացիներին): Հողի հնարավոր վերավաճառքը կանխելու համար նախատեսվեցին այն կանխարկելի միջոցառումներ՝ Չնայած չանցկացվեց լիակատար ապամոնոպոլիզացում, այնուամենայնիվ, ապախոշորացման հետևանքով գոյացան զգալի քանակությամբ միջին, համեմատաբար ինքնուրույն բաժնետիրական ձեռնարկություններ: Դրանցից շատերի բաժնետոմսերի վերահսկողական փաթեթը հատնվեց խոշոր կապիտալի ձեռքում:

Դեմոկրատացվեցին աշխատանքային և սոցիալական օրենսդրության հիմունքները: Վերականգնվեց արհմիություններ ստեղծելու իրավունքը և նրանց կողմից կոլեկտիվ պայմանագրերի կնքումը, թույլատրվեց որոշակի պայմանների առկայության դեպքում անցկացնել գործադուլներ, սահմանվեց 8-ժամյա աշխատանքային օր և այլն: Մտցվեց սոցիալական ապահովագրության համեմատաբար դեմոկրատական կարգ:

Արդյունքում՝ հետպատերազմյան առաջին տարիների բավականաչափ արմատական միջոցառումները հանգեցրին ոչ միայն այն ամենի վերացմանը, ինչը կապված էր «նոր տնտեսական» և «նոր քաղաքական» համակարգերի հետ, այլև՝ ճապոնիայում ֆեոդալիզմի բոլոր մնացուկների վերացմանը և, լիբերալ-դեմոկրատական հիմքի վրա, հասարակական-տնտեսական կարգի վերափոխմանը: Պետական կարգի բնագավառում լիբերալ-դեմոկրատական վերափոխումները հաստատվեցին նոր սահմանադրությամբ: Նրա գլխավոր դրույթները մշակվում էին ճապոնիայում գտնվող ամերիկյան վարչության կողմից: 1946թ. նոյեմբերի 3-ին սահմանադրությունը հաստատվեց պառլամենտի կողմից, որի ընտրություններն անցկացվել էին նույն թվականի սկզբին՝ նոր ընտրական օրենքի հիման վրա (դրանով ընտրական իրավունք ստացան նաև կանայք, իսկ տարիքային ցենզը իջեցվեց 5 տարով):

Սահմանադրությունն ուժի մեջ մտավ 1947թ. մայիսի 3-ից: Դրանով ճապոնիայում հաստատվեց լիբերալ-դեմոկրատական պառլամենտական միապետություն: Միապետության պահպանումը ենթադրում էր պետության մեջ կայսրի դերի և տեղի արմատական փոփոխություն: Այսուհետ նա համարվում էր որպես պետության և ժողովրդի միասնության խորհրդահիշ: «Նրա կարգավիճակը որոշվում է ամբողջ ժողովրդի կամքով, որին պատկանում է սուվերեն իշխանությունը»¹: Միապետի իրավագործություններն

¹ Конституция Японии, вып. 1, М., 2000, էջ 9:

էապէս սահմանափակվում էին Անգլիական սահմանադրական ակտերի ռզով նա. պառլամենտի առաջարկությամբ, նշանակում է վարչապետին, կաբինետի ներկայացմամբ՝ Գեորգույն դատարանի լիսավոր դատավորին (հոդված 6): Կաբինետի խորհրդով և հավանությամբ կայսրն իրականացնում սահմանադրության ուղղումների, օրենքների, կառավարական հրահանգների և պայմանագրերի հրապարակում, պատլամենտի գումարում, ներկայացուցիչների պալատի արձակում, հայտարարում պառլամենտի ընդհանուր ընտրություններ, օրենքի շրջանակներում հաստատում նախարարների և այլ պաշտոնյաների նշանակումներն ու պաշտոնաթողությունը՝ համաներումը, պատվի մեղմացումը, պատհաչափի կրճատումը, իրավունքների վերականգնումը, դիվանագիտական փաստաթղթերը և այլն: Նա ընդունում է դեսպաններին (հոդված 7):

Պետության գործերին վերաբերող կայսրի մյուս բոլոր գործողությունները կախող են նախաձեռնվել և օրենքի ուժ ստանալ ոչ այլ կերպ, քան նախարարների կաբինետի խորհրդով և հավանությամբ, որն էլ դրա համար պատասխանատու է պառլամենտի առջև (հոդված 3):

Այսպիսով, Սահմանադրությունը երկրի կայսրին «ժտեց անգլիական միապետի դերով, այսինքն՝ «թագավորել, բայց չկառավարել», դրա հետ մեկտեղ, մարմնավորելով պետության զարգացման պատմական հաջորդականությունը: Բացառված չէ. որ դրանով կառավարող շրջանները ցանկանում են միապետության մեջ տեսնել քաղաքացիների վրա ներգործելու որոշակի գաղափարա-զգացմունքային գործոն, հատկապէս բացառիկ, արտակարգ հանգամանքներ առաջանալու ժամանակաշրջանում:

Սահմանադրությամբ ռեալ իշխանությունն իրականացաւում են պառլամենտը. կառավարությունը և դատարանը:

Պառլամենտին հանձնվում է օրենսդիր իշխանությունը: Այն բաղկացած է ներկայացուցիչների պալատից և խորհրդականների պալատից (հոդված 42): Առաջինն ընտրվում է 4 տարի ժամկետով, երկրորդը՝ 6 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր 3 տարին մեկ պալատի անդամների կեսի վերընտրությամբ: Արգելվում է միաժամանակ լինել երկու պալատների անդամ: Նախատեսվում է պառլամենտականների անձեռնմխելիություն (հոդված 50-51): Սահմանվեց օրենքների ընդունման հետևյալ կարգը. բոլոր օրինագծերը քննարկվում են պառլամենտում: Երկու պալատների կողմից ընդունվելուց հետո դրանք դառնում են օրենք (բացառություն են կազմում Սահմանադրությամբ նախատեսված որոշ դեպքերը): Ներկայացուցիչների պալատի կողմից ընդունված օրինագիծը խորհրդականների պալատի կողմից մերժվելիս, օրենք կարող է դառնալ միայն ներկայացուցիչների պալատի կողմից կրկնակի ընդունման դեպքում (այս անգամ անհրաժեշտ է պալատի ներկա գտնվող պատգամավորների 2/3-ի համաձայնությունը): Ներկայացուցիչների պալատի առավելությունն ակնհայտ է նաև բյուջեի քննարկման ժամանակ: Եթե խորհրդականների պալատը բյուջեի վերա-

բերյալ ընդունել է ներկայագուցիչների պալատին հակասող որոշում և Լեթե պալատները համաձայնություն չեն գալիս կամ խորհրդակցանակներ պալատը 30 օրվա ընթացքում չի ընդունում համապատասխան վերջնական որոշում, ապա ներկայագուցիչների պալատի ընդունած ակտը համարվում է պառլամենտի որոշում (հոդված 60):

Յուրաքանչյուր պալատ ստացավ պետական կառավարման հարցերի վերաբերյալ հետաքննություն անցկացնելու իրավունք. ընդ որում նա կարող է պահանջել վկաների ներկայությունը և ցուցումները (հոդված 62): Վարչապետը և նախարարներն անհրաժեշտության դեպքում պետք է ներկա գտնվեն պառլամենտի նիստերին և պատասխան տան պառլամենտականների հարցերին:

Պառլամենտն իրավունք ստացավ պատգամավորների թվից ստեղծել դատարան, որն իմփիշտների կարգով քննարկելու է այն դատավորների գործերը. որոնց նկատմամբ պաշտոնից ազատելու գործ է հարուցվել:

Պառլամենտի հերթական նստաշրջանները գումարվում են տարեկան մեկ անգամ: Արտահերթ նստաշրջանների գումարումը կատարվում է Սահմանադրությամբ:

Գործադիր իշխանությունը Սահմանադրության և օրենքների շրջանակներում իրականացնում է կաբինետը: Այն կազմված է վարչապետից և նախարարներից: Նրանք պետք է լինեն քաղաքացիական անձինք: Պառլամենտն իր անդամների թվից առաջադրում է կաբինետի նախագահի թեկնածուին, որն արդեն որպես վարչապետ նշանակվում է կայսրի կողմից: Վարչապետը, որպես գործադիր իշխանության ղեկավար, օժտված է կաբինետի ձևավորման և նրա քաղաքականության մշակման լիազորություններով: Նա է նշանակում նախարարներին (այս դեպքում նախարարների մեծ մասն ընտրվում է պառլամենտի անդամներից) և իր հայեցողությամբ ազատում նրանց¹:

Կաբինետը գործադիր իշխանություն իրականացնելիս պառլամենտի առջև կրում է կոլեկտիվ պատասխանատվություն (հոդ. 66): Ներկայացուցիչների պալատի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում, կաբինետը ողջ կազմով պարտավոր է հրաժարական տալ, եթե 10-օրվա ընթացքում ներկայուցիչների պալատը չի արձակվում:

Վարչապետը որպես կաբինետի ներկայացուցիչ օրենքների նախագծեր է ներկայացնում պառլամենտի քննարկմանը: Նա պետական գործերի և արտաքին քաղաքականության վերաբերյալ հաշվետվություն է տալիս օրենսդիր մարմնին: Կառավարման տարբեր ճյուղերի վրա իրականացնում է հսկողություն: Այլ ֆունկցիաների հետ մեկտեղ, կաբինետը պարտավոր է նաև հասարակական կյանքի տարբեր բնագավառներում բարեխղճորեն իրակա-

¹ Конституция Японии, հոդ. 65, М., 2000, էջ 18:

մացնել օրենքները, ղեկավարել արտաքին քաղաքականությունը, պառլամենտի լավանությանը կնքել վայմանագրեր, կազմ սկերպել և ղեկավարել քաղաք սցիակաճ ծառայությունը, կազմել բյուջեն և ներկայացնել պառլամենտի ղեկավարկմանը, որոշումներ ընդունել համաներման, պատժի մեղմացման, պատժաչափի կրճատման, իրավունքների վերականգնման մասին և այլն: Ի նենց պաշտոնեական ծառայության ժամանակ նախարարները առանց վարչապետի համաձայնության չեն կարող անթարկվել դատական պատասխանատվության (հոդված 75):

Գերակաճ իշխանությունն իրականացնում են Գերագույն դատարանը և ստորադաս առյանները, որոնց լիագորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են առանձին օրենքներով: Ճապոնիայում գործում է բազմաստիճան դատական համակարգ, որտեղ հիմնական օրակներ են հանդիսանում պրեֆեկտուրային դատարանները, վերաքննիչ դատարանները և Գերագույն դատարանը: Հատուկ դատարանների ստեղծումն արգելվում է:

Գերագույն դատարանի նախագահին, ինչպես արդեն նշել ենք, նշանակում է կայսրը՝ կաբինետի ներկայացմամբ: Մնացած դատավորներին նշանակում է կաբինետը՝ Գերագույն դատարանի կողմից առաջադրված ցուցակից: Սահմանադրությունը գերագույն դատարանին օժտել է նաև այնպիսի լիագորություններով, որպիսին բնորոշ է այլ երկրների Սահմանադրական դատարաններին: Այսպես, նա իրավունք ունի լուծել օրենքների հրամանների, կարգադրագրերի և բոլոր պաշտոնական ակտերի Սահմանադրության համապատասխանության հարցը (հոդված 81):

Սահմանադրության երրորդ գլուխը՝ «Ժողովրդի իրավունքներն ու պարտականությունները», ամրագրում է մարդու և քաղաքացու հիմնական ղեմկրատական իրավունքներն ու ազատությունները, որոնք հայտարարվում են «անխախտ ու հավերժական»: Վերացվում են պերությունը և մյուս արիստոկրատական ինստիտուտները (հոդված 14), հռչակվում արդարադատության ղեմկրատական սկզբունքները (ոչ ոք չի կարող հարկադրել անձին ցուցմունք տալ ինքն իր դեմ, անձը չի կարող դատապարտվել այն դեպքերում, ելր միակ ապացույցն ինքնախոստովանությունն է (հոդված 38) և այլն):

Երկրի հիմնական օրենքով Ճապոնիան մշտապես հրաժարվում է պատերազմից, ինչպես նաև, որպես միջազգային վեճերը լուծելու միջոց, զինված ուժերի կիրառումից կամ սպառնալիքից (հոդված 9): Հանուն այդ «հառահեղ » նպատակի Ճապոնիան պարտավորվում է երբեք չստեղծել ցամաքային, ռազմա-ծովային և ռազմա-օդային ուժեր կամ պատերազմ վարելու այլ միջոցներ:

Սակայն, հակառակ Սահմանադրությանը, շուտով «պաշտպանության ուժեր» անվան տակ ստեղծվեց ժամանակակից բանակ ու նավատորմ:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. ՉԻՆԱՍՏԱՆԸ ԵՐԿՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Չինաստանում աճեց ազգային կապիտալը: Ազգային արդյունաբերության զարգացումը խորացրեց հակասություններն ազգային բուրժուազիայի և օտարերկրյա իմպերիալիզմի միջև: Դրա հետ մեկտեղ, ընթանում էր չինական պրոլետարիատի ձևավորումը և նրա ներգրավումը քաղաքական պայքարի մեջ: Համաշխարհային պատմության նորագույն շրջանի սկզբին Չինաստանում էլ որպես տնտեսապես հետամնաց կիսաֆեոդալական ու կիսազարթոնային երկիր:

Օտարերկրյա և ազգային կապիտալի, ինչպես նաև ժողովրդական զանգվածների ու չինական ֆեոդալիզմի միջև ծագած հակասությունները հանդիսացան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության զարգացման հիմքը, որի նոր փուլը սկսվեց 1918թ.:

Համաշխարհային պատերազմի ավարտից հետո չինական ժողովրդական զանգվածների առաջին ելույթների անմիջական շարժառիթը հանդիսացան արտաքին քաղաքական իրադարձությունները, հատկապես ռուսական հեղափոխությունը: Ժողովուրդն օտարերկրյա տիրապետությունից ազատվելու իր հույսերը կապում էր պատերազմի ավարտի հետ: Մակայն դա չիրականացվեց: Խարված հույսերը զարկ տվեցին զանգվածային հուզումներին, որոնք ընթացան ամբողջ երկրով մեկ: 1919թ. մայիսին սկսվեց մի հայրենասիրական շարժում, որի համար առիթ հանդիսացավ Փարիզի հաշտության կոնֆերանսի որոշումը Շանդունի մասին: Առաջինը հանդես եկան Պեկինի ուսանողները (1919թ. մայիսի 4-ին)՝ ազգային սուլվերենության համար պայքարելու, ազգային դավաճաններին պատժելու, հաշտության պայմանագրի ստորագրումից հրաժարվելու կարգախոսերով: Նրանց միացան մյուս քաղաքների ուսանողները: 1919թ. հունիսին ուսանողական հուզումները վերաճեցին լայն հեղափոխական շարժման, որում համախմբվեցին բանվորները, քաղաքային չքավորությունը, ազգային բուրժուազիայի բազմաթիվ ներկայացուցիչները: «Մայիսի 4-ի շարժումը»

մեծ նշանակություն ունեցավ. այն վերածվում էր բուրժուա-դեմոկրատական հեղափոխության: Շարժումը բանվոր դասակարգի ակտիվ պայքարի սկիզբը դրեց: Հաճախակի դարձան տնտեսական և քաղաքական բնույթի գործադուլները: Երկրում սկսեց տարածվել կոմունիստական գաղափարախոսությունը: 1921թ. ստեղծվեց Չինաստանի կոմկուսը, որը 1923թ. հունիսին որոշում ընդունեց կոմկուսի և Սուն Յաթսենի ղեկավարած ազգային կուսակցության (գոմինդան) համագործակցության հիման վրա միասնական ճակատ ստեղծելու մասին: Այն իրականացվեց 1924թ.: Դրանով օտարերկրյա կապիտալի դեմ պայքարելու ազգային միասնական ճակատ ստեղծելու սկիզբը դրվեց: Այդ պայքարն ընդունեց քաղաքացիական-հեղափոխական պատերազմի ձև, որի ընթացքում լուծվում էին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության խնդիրները:

Ժողովրդական զանգվածների ակտիվացումը սակայն սթափեցրեց ազգային բուրժուազիային, որը միաժամանակ ցանկանում էր շարունակել պայքարն օտարերկրյա կապիտալի դեմ: Դրա համար էլ Գոմինդանի աջ թևը բռնեց հակահեղափոխության ճանապարհը: Հակահեղափոխական ուժերի կենտրոնական դեմքը դարձավ զեներալ Չան Կայչին: 1926թ. մայիսին նա զբաղեցնում էր Գոմինդանի Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահի պաշտոնը, հունիսին՝ Ազգային հեղափոխական բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը: Այդպիսի դրությունը լուրջ սպառնալիք էր հեղափոխության համար: 1927թ. պրովինցիաներում մեկը մյուսի հետևից հաղթանակ տարան հակահեղափոխական ուժերը:

Այդ իրադարձություններից հետո Գոմինդանը դարձավ բուրժուազիայի, կալվածատերերի և «նոր միլիտարիստների» շահերն արտահայտող խոշոր կուսակցություն: Այնտեղից հեռացվեցին հեղափոխական և առաջադեմ գաղափարների տեր մարդիկ: Իշխանության գերագույն մարմին հայտարարվեց Գոմինդանի համագումարը, իսկ նրա նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում՝ Կենտրոնական գործադիր կոմիտեն, որի անմիջական ենթակայության տակ էր գտնվում նրա կողմից նշանակված կառավարությունը:

1927թ. օգոստոսին Նանչանում ապստամբեցին կոմունիստների ղեկավարած միավորումները: Իրավիճակը բարդացավ Հյուսիս-արևելյան Չինաստան ճապոնական զորքերի ներխուժումով: Գոմինդանը չկարողացավ ազրեստրին հակահարված տալ և ճապոնացիները, իրենց հսկողության տակ վերցնելով Հյուսիս-արևելյան Չինաստանը, սկսեցին Շանհայը նվաճելու գործողությունները, որը, սակայն, հաջողությամբ չպսակվեց:

Քաղաքացիական պատերազմի ընթացքում ստեղծվում էին հեղափոխական բազաներ: 30-ական թվականներին հասունացավ այդ բազաների քաղաքական համախմբման և իշխանության կենտրոնական մարմնի ստեղծման անհրաժեշտությունը: 1930թ. նոյեմբերի 6-ին բացվեց բանվորական և գյուղացիական պատգամավորների՝ Չինաստանի բոլոր հեղափոխական բազաների ներկայացուցիչների, Խորհրդի առաջին համագումար-

րը: Այն ընդունեց ժամանակավոր սահմանադրության մախազիժ, որով հեղափոխական տարածքների բազաների վրա «ամբողջ իշխանությունը պատկանում է բանվորների, գյուղացիների, կարմիր բանակայինների և ամբողջ աշխատավորության խորհուրդներին» (հոդ 1): Համագումարը հաստատեց նաև հողի, աշխատանքի, տնտեսական և սոցաքականության հիմունքների մասին օրենքները: Այն ընտրեց Չինաստանի հեղափոխական շրջանների առաջին կենտրոնական կառավարությունը Մաո Յզեդու-նի գլխավորությամբ:

Հեղափոխական շրջանների կառավարությունը 1932թ. ապրիլին պատերազմ հայտարարեց Ճապոնիային և առաջարկեց Գոմինդանին դադարեցնել քաղաքացիական պատերազմն ու ագրեսորին հակահարված տալու համար համախմբել ողջ ուժերը: Սակայն Գոմինդանը մերժեց այդ պահանջները: Քաղաքացիական պատերազմը դադարեց միայն 1937թ. և ողջ ուժերն ուղղվեցին Ճապոնիայի դեմ: Ստեղծվեց սխասնական ազգային հակաճապոնական ճակատ:

1939թ. Ճապոնիային հաջողվեց Չինաստանի հյուսիս-արևելքում տիրանալ ընդարձակ տարածությունների: Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբից ճապոնական կառավարությունը բոլոր ջանքերը գործադրեց Չինաստանում պատերազմն ավարտելու համար: Այդ ջանքերն ուղղված էին միասնական հակաճապոնական ճակատի պառակտմանը և գոմինդանական զորքին ներգրավելու համագործակցությանը: Սակայն Չան Կայիին դրան չզնաց:

Չնայած Ճապոնիայի կողմից զգալի ուժերի մոբիլիզացմանը, ժողովրդական դիմադրության հակաճապոնական բազաները, որոնք գործում էին ազատագրված տարածքներում, հերոսական պայքար էին մղում: Բոլոր ազատագրված շրջաններում ստեղծվել էին ընտրովի ժողովրդա-քաղաքական խորհուրդներ, որոնք հաստատեցին յուրաքանչյուր շրջանի կառավարության կազմը:

Չորս տարվա ռազմական գործողություններից հետո միայն գոմինդանական կառավարությունը պատերազմ հայտարարեց Գերմանիային և Իտալիային:

2. ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ 60-90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Համաշխարհային պատերազմի ավարտին Չինաստանում սրվեց քաղաքական իրադրությունը: Գոմինդանյան վերնախավը հրաժարվում էր կոալիցիոն կառավարության ստեղծումից, ինչը Չինաստանի դեմոկրատական կազմակերպությունների պահանջն էր: 1944թ. նոյեմբերին Չան

Կայշին կառավարության կազմում կատարեց որոշ փոփոխություններ: Դրանով նա նպատակ էր հետապնդում ֆաշիստականացնել Գոմինդանի ռազմա-քաղաքական ղեկավարությանը՝ քաղաքացիական պատերազմ ծավալելու համար:

1945թ. Քվանտունյան բանակի պարտությունից և խորհրդային զորքերի կողմից Չինաստանի Հյուսիս-Արևելքի ազատագրումից հետո, ուժերի փոխհարաբերությունը փոխվեց հոգուտ ժողովրդական բանակի: Ժողովրդական զորքերը ծավալեցին լայն գործողություններ Չինաստանի ազատագրման համար: Գոմինդանյան կառավարությունը ձգտում էր խոչընդոտել Ժողովրդական բանակի հարձակումը և սանձազերծեց նոր քաղաքացիական պատերազմ, որը տևեց երեք տարի (1946-1949թթ.): Համաժողովրդական հեղափոխական վերելքը արագացրեց գոմինդանյան վարչակարգի փլուզումը: 1949թ. հունվարին Չան Կայշին դիմեց Չինաստանի կոմկուսին խաղաղ բանակցություններ վարելու առաջարկությամբ: Դա վկայում էր Գոմինդանի պարտության մասին: Բանակցությունների ընթացքում մշակվեց խաղաղ համաձայնագրի նախագիծը:

1949թ. սեպտեմբերի 21-ին բացվեց Ժողովրդա-քաղաքական խորհրդի կոնֆերանսի առաջին նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցեցին դեմոկրատական բոլոր կուսակցությունների և խմբերի ներկայացուցիչները: Նստաշրջանում ընդունվեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կենտրոնական ժողովրդական կառավարություն կազմավորելու մասին օրենքը, ինչպես նաև ընդհանուր ծրագիր, որը մինչև սահմանադրության ընդունումը հանդիսանալու էր հիմնական օրենքը: Կոնֆերանսը ընտրեց ՕՇՀ-ի Կենտրոնական ժողովրդական կառավարություն Մաո Յզեդունի գլխավորությամբ: Այն 1949թ. հոկտեմբերի 1-ին հանդիսավոր կերպով հռչակեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կազմավորումը: Ընդհանուր ծրագրով Չինաստանը հայտարարվեց նոր դեմոկրատական պետություն, որի գլխավոր խնդիրներն էին իմպերիալիստների արտոնությունների վերացումը, բյուրոկրատական կապիտալի ազգայնացումը, սեփականության տարբեր ձևերի պահպանումը, հողը գյուղացիներին հանձնելը, ժողտնտեսությունը զարգացման նոր ուղու վրա դնելը և այլն:

Ընդհանուր ծրագրով Չինաստանում պետական իշխանությունն իրենից ներկայացնում է բանվորների և գյուղացիների դաշինքի վրա ձևավորված «ժողովրդի դեմոկրատական դիկտատուրա», որտեղ ղեկավար դերը Չինաստանի կոմկուսի միջոցով իրականացնում է բանվոր դասակարգը: Հայտարարվեց կանանց և տղամարդկանց իրավահավասարություն, ընդլայնվեցին քաղաքացիների դեմոկրատական իրավունքները: Ամրագրվեցին նաև պարտավորեցնող դրույթներ (հայրենիքի պաշտպանությունը և զինծառայությունը, հասարակական սեփականության պահպանումը,

հարկելի վճարումը և այլն):

Պետական իշխանության բարձրագույն մարմինը ՉԺՀ-ում դարձավ Կենտրոնական ժողովրդական կառավարական խորհուրդը (ԿԺԿԽ), որն էլ ձևավորեց երկրի կենտրոնական պետական մարմինները՝ Պետական վարչական խորհուրդը (բարձրագույն գործադիր մարմին), Ժողովրդահեղափոխական զինվորական խորհուրդը, Գերագույն ժողովրդական դատարանը և Գերագույն ժողովրդական դատախազությունը: Նշված մարմինները ԿԺԿԽ-ի հետ միասին կազմեցին ՉԺՀ-ի կենտրոնական ժողովրդական կառավարություն: Կենտրոնական ժողովրդական կառավարության նախագահ դարձավ Մաո Յզեդունը, որը միաժամանակ ղեկավարում էր Կենտրոնական ժողովրդական կառավարության խորհուրդը, Ժողովրդահեղափոխական խորհուրդը և ՉԿԿ կենտրոնական կոմիտեն: ՉԺՀ կառավարությունը սկզբում միասնական ճակատի կառավարություն էր: Նրա բարձրագույն մարմիններում ՉԿԿ-ի հետ միասին ներկայացված էին թվով ոչ մեծ բուրժուական և մանր բուրժուական կուսակցություններ, որոնք պաշտպանում էին ՉԿԿ-ի ծրագիրը և ընդունում նրա ղեկավարումը:

50-ական թվականներին երկրում սկսվում է վերականգնման շրջան, որի ընթացքում լուծվեցին դեմոկրատական հեղափոխության հիմնական խնդիրները: 1953թ. Չինաստանի կոմունիստական կուսակցության գլխավոր գիծը հռչակվեց զարգացման սոցիալիստական ուղղությունը:

1953-1954թթ. երկրի պատմության մեջ առաջին անգամ կայացան իշխանության դեմոկրատական մարմինների՝ ժողովրդական ներկայուցուցչների ժողովների, ընդհանուր ընտրությունների:

1954թ. սեպտեմբերի 15-ին Պեկինում գումարվեց ժողովրդական ներկայացուցիչների Համաչինական ժողովի առաջին նստաշրջանը, որն էլ ընդունեց ՉԺՀ-ի Սահմանադրությունը: Այն էական փոփոխություններ մտցրեց ՉԺՀ-ի պետական մարմինների կառուցվածքում: Իշխանության բարձրագույն մարմինը դարձավ Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովը, իսկ նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում՝ նրա մշտական կոմիտեն¹:

ՉԺՀ-ի առաջին Սահմանադրությունն իրավաբանորեն ամրագրեց ՉԿԿ-ի գլխավոր գծի հիմնական դրույթները: Սահմանադրությամբ հռչակվեցին քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները:

Արտաքին քաղաքականության բնագավառում Սահմանադրությունը նախատեսում էր ԽՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ սերտ

¹ Конституция Китая 1954г., стр. 17, М., 1971:

քարեկամական հարաբերությունների զարգացում և ամրապնդում, բոլոր երկրների հետ իրավահավասարության, փոխադարձ շահավետության, ինքնիշխանության և տարածքային անբողջականությունը հարգելու սկզբունքների հիման վրա հարաբերությունների հաստատում և զարգացում:

Սահմանադրությունը նպատակ էր դրել կառուցել սոցիալիզմ: Սոցիալիստական զարգացման գաղափարներն իրականացվում էին ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանների միջոցով:

1958թ. մայիսին ՉԿԿ-ն առաջադրեց սոցիալիզմի վաղաժամկետ կառուցման կուրս, որը կրեց «Մեծ թռիչք» անունը: «Մեծ թռիչքի» քաղաքականությունը տարածվեց բոլոր բնագավառների, այդ թվում նաև՝ կուլտուրայի, գիտության և կրթության ոլորտների վրա: Դա հասցրեց ժողտնտեսության կազմալուծմանը: Սրվեցին երկրի զարգացման սոցիալական և տնտեսական պրոբլեմները: ՉԺՀ-ի կողմից հատուկ կուրս էր վերցված նաև արտաքին քաղաքականության բնագավառում, որի հետևանքը հանդիսացան չին-հնդկական և չին-խորհրդային սահմանների վրա սահմանամերձ կոնֆլիկտները:

«Մեծ թռիչքի» հետևանքները վերացնելու ուղղությամբ 60-ական թվականների սկզբում ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ: Չինական ղեկավարների մի մասը հանդես եկավ այդ քաղաքականության դեմ, որը հանգեցրեց գաղափարա-քաղաքական պայքարի: ՉԺՀ-ի ղեկավարության ներսում 60-ական թվականների վերջում սրվեցին տարածայնությունները: Իր հակառակորդներից ազատվելու նպատակով Մաո Յզեդունը և նրա կողմնակիցները «կուլտուրական հեղափոխություն» լոզունգի տակ վարեցին կուսակցության, ժողովրդական իշխանության մարմինների, հասարակական կազմակերպությունների «համընդհանուր գտնման» քաղաքականություն: Այն օրենսդրորեն ամրապնդվեց 1975թ. սահմանադրությամբ: Ելնելով դասակարգային պայքարի գաղափարից, որը ցնցեց հասարակությունը սոցիալիզմի կառուցման ընթացքում, փոփոխություններ կատարվեցին երկրի պետական կարգում, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների շրջանակներում: Սահմանափակվեցին ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի լիազորությունները, ամրագրվեց ընտրությունների փոխարեն պատգամավոր նշանակելու սկզբունքը: Տեղերում իշխանության մարմինները ձևավորելիս հաշվի չէին առնում ազգային առանձնահատկությունները: Մաոիզմը հռչակվեց ՉԺՀ-ի պետական գաղափարախոսության տեսական հիմք:

1976թ. ընդունվեց Չինաստանի նոր սահմանադրությունը, որը վերականգնեց առաջին սահմանադրության մի շարք դրույթներ: Երկրում ակտիվացավ իրավաստեղծ գործունեությունը: Հրապարակվեցին մի շարք օրենսգրքեր, ընդունվեցին օրենքներ, որոնք նպատակ էին հետապնդում կատարելագործել պետական մարմինների համակարգը:

1982թ ընդունվեց ՉԺՀ-ի նոր սահմանադրությունը: Այն սահմանեց պետության քաղաքական էությունը՝ որպես ժողովրդի ղեմնկրատական դիկտատուրա:

Սահմանադրությունն ամրասպնդեց տնտեսության բազմակացու-թաձևությունը. պետական սեփականության հետ մեկտեղ թույլատրվում է մասնավոր, ինչպես նաև խառը (պետական-կապիտալիստական) սեփա-կանության գոյություն: Ամրագրվեց օտարերկրյա մասնավոր կապիտա-լիստական ձեռնարկությունների գործունեության իրավունքը: Զգալի փո-փոխություններ կատարվեց նաև պետական կարգու: Վերականգնվեց ՉԺՀ-ի նախագահի պաշտոնը: Պետական իշխանության բարձրագույն և օրենսդիր մարմինը Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովն է. իսկ նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում՝ նրա մշտական կոմիտեն, որն իր լիազորություններով հավասարվեց Ժողովր-դական ներկայացուցիչների համաչինական ժողովին՝ Վերջինս ընտրում է ՉԺՀ-ի նախագահին և նրա տեղակալին¹:

Գործադիր իշխանության բարձրագույն մարմինը Պետական խոր-հուրդն է, որն ունի մշտական կոմիտե: Պետության ղեկավարները կարող են իրենց պաշտոններն անընդմեջ զբաղեցնել ոչ ավելի, քան երկու ժամ-կետով: Ստեղծվեց Կենտրոնական զինվորական խորհուրդ:

Տեղական ինքնակառավարման մարմինները ժողովրդական ներկա-յացուցիչների ժողովներն են և ժողովրդական կառավարությունները: Ինք-նավար վարչական միավորումներում գործում են ինքնավարության մար-միններ: Ժողովրդական կոմունաները կուլեկտիվ սեփականության տնտե-սական կազմակերպություններ են՝ առանց պետական իշխանության ֆունկցիաների:

Սահմանադրությամբ ընդլայնվեցին քաղաքացիների իրավունքները և պարտականությունները:

1982թ. սահմանադրությունը հանդիսացավ Չինաստանի օրենսդրու-թյան և պետական կարգի հետագա կատարելագործման հիմքը:

¹ Конституция Китая 1982г., кн. 23, М., 1971:

ԳԼՈՒԽ 31

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. ՀՆԴԿԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Առաջին համաշխարհային պատերազմը սոցիալ-տնտեսական տեղաշարժեր առաջացրեց Հնդկաստանում: Այն էլ ավելի սրեց հնդիկ ժողովրդի և անգլիական իմպերիալիզմի միջև առանց այդ էլ լարված հակասությունները:

Հնդկական բուրժուազիան պատերազմի տարիներին ունեցավ հարստանալու լայն հնարավորություն: Նրա և իմպերիալիզմի միջև հակասությունները սրվեցին հատկապես քաղաքական բնագավառում: Հնդկական բուրժուազիան պաշտպանում էր Անգլիայի ռազմական ջանքերը, հույս ունենալով պատերազմից հետո ընդլայնել իր մասնակցությունը երկրի կառավարմանը:

Ազգային կոնգրեսն օգնում էր զինվորներ հավաքագրել բանակի համար և աջակցում էր ռազմական փոփոխությունների տարածմանը: Սակայն զիջումների հույսերը չարդարացան: Հնդկաստանը շարունակում էր տառապել քաղաքական իրավազրկությունից:

Պատերազմը զգալիորեն վատթարացրեց աշխատավորների լայն գանգվածների դրությունը:

Բանվոր դասակարգը, գյուղացիությունը, քաղաքային մանր բուրժուազիան, կազմում էին հակաիմպերիալիստական ճամբարը: Այդ ճամբարում գոյություն ունեին ներքին, դասակարգային հակասություններ: ազատագրական շարժման դեմ մղած պայքարում անգլիական իմպերիալիզմը հենվում էր խոշոր հողատերերի, իշխանների, վաշխառուների, հետադիմական համայնքային կազմակերպությունների վրա:

1918-1921թթ. ազգային-ազատագրական շարժման վերելքի համար անմիջական առիթ ծառայեցին Մոնտեզյու-Չելմսֆորդի բարեփոխումներ-

ըը, որոնք ամրապնդում էին Հնդկաստանի գաղութային դրութունը և Ռուսելտի օրենքը, որն ուղղված էր ազգային-ազատագրական պայքարի մասնակիցների դեմ: Այդ օրենքի համաձայն ոստիկան ությունը և գաղութային իշխանությունները ստուգան արտակարգ լիազորություններ: Նրանք կարող էին ձերբակալել սնձի, ում կարող էին լսակաձել հակակառավարական տրամադրություն ունենալու մեջ: Գաղութային աղմինիստրացիայի գործողությունները բողոքներ առաջացրեցին ամբողջ երկրում:

Սկսված ազգային-ազատագրական շարժումը նոր վերելք ապրեց: Նրա գլուխ կանգնած Ազգային Կոնգրես կուսակցությունից պահանջվեց նոր տակտիկա:

Ազգային բուրժուազիայի շահերին ամենից շատ համապատասխանում էր Ազգային Կոնգրեսի ճանաչված ղեկավար Մ.Վ.Գանդիի՝ բոնություն չգործադրելու մասին ուսմունքը: Գանդիի կոչով 1919թ. ապրիլին Փենջաբում, Բիհարում, Մադրասում և այլուր անցկացվեցին ցույցեր՝ ի նշան բողոքի ընդդեմ Ռուսելտի օրենքի: Ի պատասխան դրա՝ անգլիական պառլամենտը հաստատեց «Հնդկաստանի կառավարման մասին» օրենքը (Մոնտեգյու-Չելմսֆորդի բարեփոխումները): Ըստ որի Հնդկաստանը մնում էր գաղութ: Բայց, միաժամանակ, անգլիական իշխանները աշխատում էին ունևոր վերնախավի հաշվին ընդլայնել կենտրոնական և նահանգական օրենսդիր ժողովների ընտրողների կազմը Հնդիկներին տեղեր տրամադրվեցին գործադիր մարմիններում: Օրենքի մտցրեց ընտրությունների կուրիաների համակարգը, ըստ որի խոշորագույն կրոնական համայնքներից յուրաքանչյուրը՝ ինդուսները և մուսուլմանները տեղեր էին ստանում օրենսդիր մարմիններում: Այս հանգամանքը գաղութային աղմինիստրացիային լայն հնարավորություն է ընձեռում թշնամանք բորբոքելու ինդուսների և մուսուլմանների միջև: Բարեփոխումների դեմ որպես բողոքի նշան՝ 1920թ. ամռանը կոնգրեսը Գանդիի գլխավորությամբ սկսեց քաղաքացիական անհնազանդության կամպանիա ամբողջ երկրի մասշտաբով՝ անկախության (սվարաջի) լոզունգով: 1922թ. գործադուլներն ընդգրկեցին բոլոր արդյունաբերական կենտրոնները: Գործադուլային շարժման ընթացքում առաջացան առաջին արհմիությունները: Դրա հետ մեկտեղ, հակաիմպերիալիստական պայքարը 1923-1927թթ. ընթացքում անկում ապրեց: Այն ուղեկցվում էր հալածանքներով ու ձերբակալություններով, շատ կազմակերպությունների ջախջախմամբ:

1929-1933թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամն էական ներգործություն ունեցավ Հնդկաստանի տնտեսության և քաղաքական իրադրության վրա: Կապիտալիստական շուկայի ոլորտում ներգրավված գաղութային Հնդկաստանն ընկավ տնտեսական ճգնաժամի կործանարար հարվածների տակ, որի ծանրությունը մետրոպոլիսան աշխատում էր զցել իր գաղութների ժողովուրդների վրա: Այս տարիներին էլ սկսվեց հակաիմ

պերիալիստական շարժման նոր վերելքը, որը կապված էր Հնդկաստանում իր տիրապետությունը պահպանելու Անգլիայի փորձերի հետ: 1928թ. Հնդկաստան ժամանեց լորդ Սայմոնի համձնաժողովը, որը պետք է մշակեր հնդկական սահմանադրությունը:

Ազգային Կոնգրեսի նախաձեռնությամբ հրավիրվեց զանազան կառավարությունների համահնդկական կոնֆերանս, որի ընտրած կոմիտեն Մ.Ներուի նախագահությամբ մշակեց սահմանադրության նախագիծ: Այն նախատեսում էր՝

- 1) Հնդկաստանին տալ դոմինիոնի իրավունքներ,
- 2) վերացնել կրոնական կուրիաներն ընտրություններում,
- 3) մտցնել ընդհանուր ընտրական իրավունք, որը պետք է սահմանափակվեր ցենզով,
- 4) վարչական բաժանումը վերակազմել ազգային (լեզվական) սկզբունքի հիման վրա:

Նախագիծը 1928թ. դեկտեմբերին հաստատվեց Ազգային կոնգրեսի նստաշրջանում: Կոնգրեսի ծախ թըր դեմ դուրս եկավ նախագծին, քանի որ այնտեղ լիակատար անկախությունը մենզափոխված էր դոմինիոնի ստատուսով (կարգավիճակով): 1930թ. Հնդկաստանի Ազգային կոնգրեսը քաղաքացիական անհնազանդության նոր պայքար սկսեց: Ի պատասխան, անգլիական իմպերիալիզմն ուժեղացրեց հալածանքները Հնդկաստանի անկախության համար պայքարող մարտիկների դեմ: Ստեղծվեց դեմոկրատական ազգային կազմակերպությունների գործունեությունը: Ավելին՝ 1935թ. Անգլիայի իմպերիալիստները հրապարակեցին օրենք «Հնդկաստանի կառավարման մասին», որը հնդիկ ժողովրդն անվանեց «ստրկական սահմանադրություն»: Նրա գլխավոր նպատակներն էին.

- 1) ունևոր դասակարգերին զիջումներ անելու միջոցով ընդլայնել անգլիական իմպերիալիստների սոցիալական հենարանը,
- 2) ուժեղացնել կալվածատերերի, խոշոր հողատերերի և իշխանների դիրքերը,
- 3) խորացնել պառակտումը ինդուսների և մուսուլմանների միջև,
- 4) ամրապնդել գաղութային ռեժիմի ընդհանուր հիմքերը:

Բրիտանական Հնդկաստանի նահանգներում ստեղծվում էին «օրենսդիր» մարմիններ, որոնք ենթարկվում էին կենտրոնական իշխանություններին: Նահանգներում առաջվա պես գործադիր իշխանության ղեկավար էին մնում անգլիացի նահանգապետերը: Որոշ զիջումներ անելով դասակարգերին, անգլիացիները մեծացրին ընտրողների թիվը՝ հիմնականում ունևոր գյուղացիության հաշվին, ինչպես մաս ստեղծվեցին նահանգային նախարարություններ, որոնք պատասխանատու էին «օրենսդիր» մարմնի առջև: Բայց, պետք է նշել, որ այդ մարմինները լիազորություններ չունեին, քանի որ երկրի քաղաքական ու տնտեսական կյանքի հիմնական հարցերը մնում

էին նրանց իրավասությունները ցրուրս, իսկ անգլիական նահանգապետը կարող է լետո դնել նրանց հրատարակած ամեն մի օրենքի վրա:

Ընտրական համակարգի հիմքում դրվեցին կուրիաները, որոնք կազմվում էին կրոնական-համայնքային հատկանիշի:

Ամբողջ երկրի կառավարման վերաբերյալ մախառեսվում էր ստեղծել ֆեդերալ Քրիտանական Հնդկաստանի նահանգներից և իշխանություններից, ընդ որում, իշխաններին հատկացվում էր անհամամասնորեն մեծ ներկայացուցչություն կենտրոնական օրենսդիր ժողովում:

«Ստրկատիրական սահմանադրության» դեմ սկսվեց բողոքի շարժում, որը ղեկավարում էր Ազգային կոնգրեսը: Շարժման ինտենսիվ սահմանադրության այն մասը, որը վերաբերում էր իշխանության համահնդկական մայրիմներին, չկենսագործվեց:

1937թ., Նահանգային ինքնավարության կանոնադրության համաձայն, Հնդկաստանում անցկացվեցին նահանգային օրենսդիր ժողովների ընտրություններ, որոնցում հաղթանակ տարավ «Ստրկատիրական սահմանադրության» դեմ պայքարող Ազգային կոնգրեսը Ընտրություններից հետո Հնդկաստանի 11 նահանգներից 7-ում կազմվեցին մախարարություններ, որոնց ղեկավարում էր կոնգրեսը:

Կոնգրեսի հաղթանակը ընտրություններում նպաստեց հակաիմպերիալիստական շարժման ակտիվացմանը:

2. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ԵՎ 1950Թ. ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմը մեծ հարված հասցրեց նաև Հնդկաստանի տնտեսությանը: Պատերազմն իր շահերին ծառայեցրեց ազգային բուրժուազիան, որն էլ ավելի հարստացավ: Կալվածատերերն ու իշխաններն այդ ընթացքում օգնում էին անգլիացիներին, իսկ Մահմեդական լիգան 1940թ. որոշում ընդունեց ստեղծել Պակիստան մահմեդական պետություն:

Երկրի դեմոկրատական ուժերը, առաջադեմ քաղաքական կազմակերպությունները, օգտագործելով Անգլիայի թուլացումը, ձգտում էին հասնել Հնդկաստանի լիակատար անկախությանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը և հետպատերազմյան առաջին տարիներն ընդհանրապես Ասիայի երկրների համար դարձան մի ամբողջ պատմական դարաշրջան (Վիետնամում հաղթանակեց Օգոստոսյան հեղափոխությունը, սկսվեց Ինդոնեզիայի ազատագրումը, ան-

կախություն ձեռք բերեցին Բիրման, Լաոսը, Կամպուչիան և այլն):

Այդ նույն ժամանակահատվածին է բաժին ընկնում նաև Հնդկաստանի ազգային ազատագրական հեղափոխությունը: Հույս չղնելով այլևս Անգլիայի խոստումների վրա, Հնդկաստանի բանվոր դասակարգը և գյուղացիությունը պահանջում էին անկախություն հեղափոխության ճանապարհով: 1946թ. փետրվարին սկսվեց հնդիկ զինվորական նավաստիների ապստամբությունը (զրեթե 20 ռազմանավեր բարձրացրին կարմիր դրոշմեր):

Անգլիայի լեյբորիստական կառավարությունն այդ ժամանակ որոշեց Հնդկաստանին՝ Բրիտանական ազգերի ընկերակցության շրջանակներում քաղաքական անկախություն շնորհելու մասին հանդես գալ հայտարարությամբ:

Լոնդոնից Հնդկաստան ուղարկված հատուկ հանձնաժողովն առաջարկեց հետևյալ նախագիծը. Հնդկաստանը վերափոխվում է ինքնավար գավառների և իշխանությունների միության, իսկ դրանից հետո ստանում է դոմինիոնի իրավունք, գավառներն իրենց հերթին ըստ կրոնական հատկանիշների ստորաբաժանվում են ինդուսների և մուսուլմանների:

Նախագծի նպատակն էր պառակտել երկիրը: Ենթադրվում էր, որ այդ տարբերակով հեշտ կլինի այն պահել կախվածության մեջ:

Տարբեր տեսակի մանկրումներից հետո, որոնք նպատակ ունեին պառակտել և իրար դեմ հանել Հնդկաստանի ազգային ազատագրման երկու գլխավոր քաղաքական կուսակցություններին (Հնդկաստանի ազգային կոնգրեսին և Մուսուլմանական լիգային), Անգլիային հաջողվեց իրագործել Հնդկաստանի պառակտման նախագիծը: 1947թ. օգոստոսի 15-ի օրենքով ստեղծվեց երկու դոմինիոն՝ Հնդկաստան և Պակիստան:

Պակիստանը (111 մլն. մարդ) կազմված էր երկու մասից, որոնք միմյանցից գտնվում էին 1,5 հազ. կիլոմետր հեռավորության վրա: Կաշմիրի իշխանությանը պահանջներ էին ներկայացնում ինչպես Հնկաստանը, այնպես էլ Պակիստանը: Արդեն 1947թ. հոկտեմբերին պակիստանյան զինված ջոկատները գրավեցին Կաշմիրի մի մասը: Կաշմիրի մահաբաջա-յի խնդրանքով իշխանությունը 1947թ. վերջերին մտցվեց Հնկաստանի կազմի մեջ:

Երկրի մասնատումն իր հետ բերեց անթիվ աղետներ: Հարյուր հազարավոր մարդիկ բռնությամբ վերաբնակեցվում էին մեկ դոմինիոնից մյուսը: Դարերով ամրապնդված տնտեսական կապերն արհեստականորեն խզվում էին: Կրոնական գժտությունը դարձավ էլ ավելի անողոր:

Պառակտմանը հաջորդեց Հնդկաստանի և Պակիստանի կառավարությունների ձևավորումը: Հնդկաստանի կառավարությունը կազմավորվեց Հնդկաստանի ազգային կոնգրեսով՝ ազգային բուրժուազիայի կուսակցությունից, հողատերերից և մտավորականներից: Կառավարության գլուխն անցավ Ջ.Ներուն:

Հնդկաստանի պետական անկախությունն իր վերջնական հաստատու-

մը ստացավ 1950թ. հունվարի 20-ի ակտով, որով Հնդկաստանը ազդարարվեց «խորհրդիական» և դեմոկրատական հանրապետություն»: Նույն օրն էլ ուժի մեջ մտավ Հնդկաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որն ընդունվել էր դեռևս 1949թ. նոյեմբերի 29-ին

Սահմանադրությունը հռչակելու նոր պետության ֆեդերատիվ կառուցվածքը, սկզբում նահանգները կառավարման ձևով տարբերվում էին միմյանցից, սակայն 1956 թվականին անցկացվեց բարեփոխում, որը սահմանեց վարչական նոր բաժանում: Ներկայումս բոլոր նահանգներն ունեն կառավարման նույնատիպ համակարգ:

Սահմանադրությամբ Հնդկաստանի բոլոր իշխանությունները պետք է մտնեին հանրապետության կազմի մեջ:

Ճանաչվում է քաղաքացիների հավասրությունը՝ անկախ կաստայից և կրոնական պատկանելիությունից: 1955թ. օրենքով կաստայական խտականությունը համարվեց պատժելի արարք: Չնայած այս ամենին, Հնդկաստանում բրահմանների գերակշռությունը, այնուամենայնիվ, քաղաքական կյանքում անխուսափելի է նրանցից են բաղկացած բարձրաստիճան պետական պաշտոնյաների հիմնական մասը, քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների առաջնորդները:

Սահմանադրությունը հատուկ հիշատակում է՝ որպես կառավարման խնդիր, ժողովրդի գոյության միջոցների ապահովման, բանվորների ու անչափահասների աշխատանքի պաշտպանության մասին:

1950թ. Սահմանադրությամբ պետության գլուխը պրեզիդենտն է (նախագահը), որին ընտրում են պառլամենտի և նահանգների օրենսդրության ժողովների ընտրովի անդամները՝ հինգ տարի ժամկետով: Նախագահն օժտված է լայն լիազորություններով: Նա նշանակում է նախարարների խորհրդի նախագահին, իսկ վերջինիս լիազորությամբ՝ կառավարության անդամներին, Գերագույն դատարանի անդամներին, նահանգապետերին և այլ պաշտոնատար անձանց: Սահմանադրությունը նրան իրավունք է վերապահել արձակել պառլամենտի Ժողովրդական պալատը, վետո դնել օրինագծերի վրա (հոդ.111), կասեցնել սահմանադրական երաշխիքների գործունեությունը, պառլամենտի նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում հրապարակել օրենքի ուժ ունեցող հրամանագրեր, մտցնել արտակարգ դրություն և ձեռնարկել արտակարգ միջոցներ հակակառավարական գործողությունների կանխարգելման համար և այլն:

Օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինը պառլամենտն է՝ բաղկացած երկու պալատից (հոդ. 79): Ստորինը՝ «Ժողովրդական պալատը», ձևավորվում է համընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական հիմունքներով՝ գաղտնի քվեարկությամբ: Ընտրական իրավունքից օգտվում են 21

¹ Конституция Индии 1950г., հոդ. 75, М., 1954, էջ 13:

տարին լրացրած բոլոր քաղաքացիները: Վերին պալատը՝ «Նահանգների խորհուրդը», ընտրվում է նահանգների օրենսդրական ժողովների կողմից (հոդ.80):

Երկրի կառավարությունը, չնայած օրենսդրությամբ զուտ խորհրդակցական մարմին է, իրականում ունի զգալի իշխանություն ներքին ու արտաքին (հատկապես ֆինանսների պաշտպանության) բնագավառում, իսկ «արտակարգ իրավիճակներում» նահանգների վրա տարածում է իր ողջ իշխանությունը: Կառավարությունը պատասխանատվություն է կրում ոչ թե երկրի նախագահի, այլ՝ պատլամենտի առջև, անվստահություն հայտնելու դեպքում, կառավարությունը պարտավոր է հրաժարական տալու:

Նահանգում գործադիր իշխանության գլուխը նահանգապետն է, որի լիազորությունների մեծ մասն իրականացնում է նահանգի կառավարությունը՝ նախարարների խորհուրդը: Յուրաքանչյուր նահանգում գործում է օրենսդրական ժողով, որի կազմի մեջ մտնում են նրա մեկ կամ երկու պալատներն ու նահանգապետը:

Միութենական տարածքների կառավարման ֆունկցիան Սահմանադրությունը վերապահում է հանրապետության նախագահին, որն այն իրականացնում է անմիջականորեն կամ իրեն ենթակա գլխավոր կոմիսարների միջոցով:

Դատական համակարգը կազմում են Հանրապետության Գերագույն դատարանը, որը մաս սահմանադրական հսկողություն իրականացնող մարմին է, նահանգների բարձրագույն դատարանները և տեղերում ստորին ատյանի դատարանները:

1950թ. գործողության մեջ դրված Սահմանադրությունն առ այսօր համարվում է Հնդկաստանի Ֆեդերատիվ Հանրապետության մայր օրենքը:

ԵԳԻՊՏՈՍԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ
ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո, Անգլիան հայտարարեց Եգիպտոսը Թուրքիայից անջատելու և նրա նկատմամբ բրիտանական պրոտեկտորատ հաստատելու մասին:

Եգիպտական ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը նոր քափ ստացավ Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո: այդ շարժումը ղեկավարում էր բուրժուական ազգային «Վաֆդ» կուսակցությունը՝ Սաադ Չազլուլի գլխավորությամբ: 1919թ. և 1921թ. ելկրում բռնկեցին ժողովրդական ապստամբություններ, որոնք անգլիացիները ճնշեցին մեծ դժվարությամբ:

1918-1919թթ. Կահիրեում, Ալեքսանդրիայում և Պորտ-Սահլում ստեղծվեցին առաջին սոցիալիստական և կոմունիստական խմբակները, որոնք 1920թ. միավորվեցին Սոցիալիստական կուսակցության մեջ, որը 1922թ. վերանվանվեց Եգիպտոսի կոմունիստական կուսակցության: Ազգային-ազատագրական շարժումը գնալով նոր վերելք էր ապրում: այն հարկադրեց Անգլիային 1922թ. փետրվարի 28-ին վերացնելու պրոտեկտորատը և Եգիպտոսը հռչակելու անկախ պետություն, որն ամրագրվեց 1923թ. սահմանադրությամբ: Սահմանադրությունը Եգիպտոսը հռչակեց անկախ պետություն՝ թագավորի և պառլամենտի կառավարությամբ: Եգիպտոսի սուլթան Ֆուադ I-ը ստացավ թագավորի տիտղոս: Չմայած թագավորի, պառլամենտի և կառավարության փաստական գոյությանը, Եգիպտոսի իրական տերը շարունակում էր մնալ Անգլիան: Վերջինս իրավունք ուներ պաշտպանելու Եգիպտոսն ու նրա տարածքով անցնող կայսերական ուղիները և համատեղ կառավարելու Սուդանը: Եգիպտոսում մնում էին անգլիական գլխավոր կոմիսարը, խորհրդականները և օկուպացիոն գործերը: Դրությունը չփոխվեց մակ այն բանից հետո, երբ ուժի մեջ մտավ 1936թ. անգլո-եգիպտական նոր պայմանագիրը, որը հայտարարեց ռազմական օկուպացիայի դադարեցման մասին: Եգիպտոսի տարածքում պահպանվում էին

ռազմական բազաները և Անգլիայի զինված ուժերը: Եզիպտոսն իրավունք է ստանում արտասահմանյան երկրներում ունենալու իր ներկայացուցչությունը, իսկ անգլիական գլխավոր կոմիսարը փոխարինվում էր դեսպանով¹:

Երկրորդ համաշխարհային պատերազմը նոր ուժ հաղորդեց ազգային-ազատագրական շարժմանը, ներգրավելով ժողովրդական լայն զանգվածներին: Նրանց ճնշման տակ եզիպտական պառլամենտը 1951թ-ին չեղյալ հայտարարեց անգլո-եզիպտական պայմանագիրը: Ի պատասխան՝ Անգլիան լրացուցիչ գորքեր մտցրեց Եզիպտոս: Ֆարուք թագավորը և նրա կառավարությունը, մեծ նշանակություն տալով իմպերիալիստների հետ դաշինքին, առանց որի չէին կարող պահպանել իշխանությունը, երկրում հայտարարեցին պաշարողական դրություն, ազատ արձակեցին պառլամենտը, սկսեցին ձերբակալությունները և բանտարկությունները: Այդ ամենն առաջ բերեց ընդհանուր դժգոհություն: Գամալ Աբդել Նասերի գլխավորությամբ հայրենասիրական զինվորական «Երիտասարդ սպաններ» գաղտնի կազմակերպությունը, հենվելով բանակի վրա, կատարեց հեղաշրջում: Այն վերածվեց ազգային-ազատագրական հեղափոխության (1952թ. հուլիսի 23): Թագավոր Ֆարուքը տապալվեց: Եզիպտոսի բարձրագույն իշխանությունն անցավ Հեղափոխական ղեկավար խորհրդին²: Խորհրդի որոշումներով վերացվեցին դասային արտոնությունները, ընդունվեց օրենք ազրարային բարեփոխման մասին, չեղյալ հայտարարվեց հին սահմանադրությունը, սկիզբ դրվեց երկրի ինդուստրացմանը: 1953թ. հունիսի 18-ին Եզիպտոսը հռչակվեց հանրապետություն: Վերացվեց Մուհամեդ Ալիի դինաստիան, որը կառավարում էր շուրջ 150 տարի:

Եզիպտոսի ազգային հեղափոխությունը ստիպեց Անգլիային հրաժարվել ուժ գործադրելու ծրագրերից, հաշտվել 1936թ. պայմանագրի վերացման հետ և զորքերը դուրս բերել երկրից (1956թ. հունիս): Եզիպտոսը դարձավ անկախ և ինքնիշխան պետություն: 1956թ. հունիսի 23-ին ընդունվեց հանրապետական սահմանադրություն:

Սահմանադրությունը երկրի ընդերքը հայտարարեց պետության սեփականություն: Այն հողօգտագործման բնագավառում նախատեսում էր բարեփոխումների լայն ծրագիր, որի նպատակը պետք է լիներ շահագործման ֆեոդալական ձևերի վերացումը: Առաջ քաշվեց տնտեսության պլանային զարգացման անհրաժեշտությունը, կոոպերատիվ ձևերի խրախուսումը և այլն:

Օրենսդիր իշխանությունն իրականացնող Ազգային ժողովն օժտված էր կառավարությանն ընդհանուր հարցերի վերաբերյալ առաջարկություններ անելու իրավունքով: Առավել մեծ լիազորություններ ուներ հանրապետու-

¹ Новейшая история арабских стран (1917-1966), М., 1968, էջ 231:

² Черниловский З.М., Всеобщая история государства и права, М., 1995, էջ 565:

քյան նախագահը, որն ընտրվում էր ժողովրդի կողմից: Այդ ժամանակ նախագահ ընտրվեց Նասերը: Որպես գործադիր իշխանության ղեկավար, նա էր նշանակում և պաշտոնազրկում նախարարներին, ղեկավարում երկրի զինված ուժերը: Նրան էր վերապահված ղեկրետներ հրապարակելու (որոնք հետագայում հաստատվում էին Ազգային ժողովում), արտակարգ դրություն հայտարարելու, ներման, համաներման իրավունքները և այլն¹:

1956թ. Եգիպտոսի կառավարությունն ընդունեց օրենք Սուեզի ջրանցքի ընկերության ազգայնացման մասին: Դա մեծ հարված էր Անգլիային ու Ֆրանսիային, որոնք Իսրայելի հետ միասին, 1956թ. հոկտեմբերի 29-ին ազրեսիա ձեռնարկեցին Եգիպտոսի դեմ:

Եգիպտոսի բանակի և ժողովրդի դիմադրության ու խորհրդային պետության ազդու նախազգուշացման շնորհիվ եռյակ ազրեսիան ձախողվեց: 1958թ. Սիրիան և Եգիպտոսը միավորվեցին մեկ պետության՝ Արաբական Միացյալ Հանրապետության (ԱՄՀ) մեջ՝ Կահիրե մայրաքաղաքով: ԱՄՀ-ի նախագահ ընտրվեց Նասերը: 1961թ. Սիրիան դուրս եկավ ԱՄՀ-ի կազմից, բայց Եգիպտոսը շարունակվեց կոչվել ԱՄՀ:

Սուեզի ջրանցքի ազգայնացումից հետո Եգիպտոսի կառավարությունը շարունակում էր օտարերկրյա ընկերությունների ազգայնացումը: 1961-1964թթ. ընդունվեցին մի շարք ղեկրետներ խոշոր բանկերի, արդյունաբերական, առևտրական և ապահովագրական ընկերությունների ազգայնացման, բամբակի արտահանման և երկրի ամբողջ ներմուծման նկատմամբ պետական մենաշնորհի հաստատելու մասին: Կրճատվեց ֆեոդալներին պատկանող հողերի առավելագույն չափը, սահմանվեց 42 ժամյա աշխատանքային շաբաթ, բանվորներն ստացան վճարովի արձակուրդի և կենսաթոշակի իրավունք, սահմանվեց աշխատավարձի նվազագույն չափ, ուսումը դարձավ ձրի:

ԱՄՀ-ի տնտեսական կյանքում վճռական դեր սկսեց խաղալ պետական սեկտորը: 1962թ. ընդունված Ազգային հռչակագրում արձանագրվեց, որ զարգացման կապիտալիստական ուղին ընդունելի չէ ԱՄՀ-ի համար: Ստեղծվեց Արաբական սոցիալիստական միությունը (ԱՄՄ), որը երկրում գործող միակ քաղաքական կազմակերպությունն էր: 1964թ. մարտի 25-ին ընդունվեց ժամանակավոր սահմանադրական հռչակագիրը, որը փոխարինեց 1956թ. ժամանակավոր սահմանադրությանը: Դրանով ԱՄՀ-ն հռչակվեց սոցիալիստական դեմոկրատական հանրապետություն:

Հռչակագրից բխում էր, որ ազգայնացված ձեռնարկությունները դառնում են համաժողովրդական սեփականություն, որը գոյություն ունի սեփականության մյուս ձևերի (կոոպերատիվ, մասնավոր) հետ մեկտեղ: Պետականացված ձեռնարկությունների սեփականատերերին վճարվող փրկագ-

¹ Конституция Египта 1956г., հոդ. 27, М., 1963, էջ 13:

նի առավելագույն չափը պետք է չգերազանցեր 30 հազար Եգիպտական ֆունտից:

Ազգայնացման և պետական արդյունաբերական շինարարության ակտերի շնորհիվ արտադրության բոլոր ոլորտներում միջոցներն Արաբական Միացյալ Հանրապետությունում դարձան համաժողովրդական սեփականություն: Եգիպտոսի պետական սեկտորըն արդեն 1971թ. ընդգրկեց ողջ արդյունաբերական արտադրության 85%-ը:

1961թ. հրապարակվեց դեկրետ, որով մեկ մարդուն ընկնող հողաբաժնի չափը սահմանվեց 100 ֆեդան (42 հեկտար)՝ նախկին 200-ի փոխարեն: Դրա հիման վրա ազգայնացվեց ավելի քան 1 միլիոն հա հող: Այն բաժանվում էր սակավահող և հողագույր կյուղացիներին՝ 2-5 ֆեդան հողակտորներով: Հողի առք ու վաճառքն արգելվում էր:

1969թ. հողաբաժնի առավելագույն չափը կրկին (երրորդ անգամ) վերանայվեց հոգուտ գյուղացիության: Այն մարդուն ընկնող հողաբաժնի չափը սահմանվեց 50 ֆեդան՝ 100-ից ոչ ավել ընտանիքի հաշվով:

1964թ. սահմանադրական հռչակագրով հանրապետության Ազգային ժողովի և մյուս բոլոր ընտրովի մարմիններում տեղերի 50%-ը լրացվում էր բանվորների և գյուղացիների կազմից ընտրված պատգամավորներից:

Պետականացումը և վերը նշված մյուս սոցիալական բարեփոխումները նշանակում են, որ ազգային-ազատագրական հեղափոխությունը մուտք գործեց դեմոկրատական փուլը: Դրա համար կարևոր միջոցառում հանդիսացավ Արաբական սոցիալիստական միության վերակառուցումը որպես «սոցիալիստական ավանգարդի», որը ժողովրդին տանում է իր հետևից, արտահայտում է նրա կամքը, ուղղություն տալիս ազգային գործողություններին և իրագործում արդյունավետ հսկողություն բուրք բնագավառներում: Արաբական սոցիալիստական միությունը համախմբեց երկրի բոլոր առաջադեմ ուժերը՝ բանվորներին, գյուղացիներին, զինվորներին, մտավորականությանը, ազգային կապիտալի ներկայացուցիչներին: Միության գերագույն մարմին էր ճանաչվել Ազգային կոնգրեսը, իսկ կոնգրեսի նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում՝ ԱՄՄ-ի Կենտրոնական կոմիտեն:

Առաջադեմ սոցիալական բարեփոխումների քաղաքականությունը հանդիպում էր հետադեմ ուժերի դիմադրությանը, որոնք պահանջում էին արդյունաբերական ձեռնարկությունների ապապետականացում, ազգային բարեփոխումների վերացում և այլն: Ի պատասխան՝ Եգիպտոսի կառավարությունը 1967թ. հրապարակեց «Մարտի 30-ի ծրագիրը», որով հաստատեց հակակապիտալիստական ուղղությամբ արմատական փոփոխությունների քաղաքականությունը:

Եգիպտոսում ինդուստրիալ շինարարության շնորհիվ զգալիորեն աճեց բանվոր դասակարգը: Ազգայնացված ձեռնարկությունների բանվորները ստացան 7-ժամյա աշխատանքային օրվա իրավունք: Աշխատանքի մա-

սին նոր օրենքով (1972թ.) աշխատավարձի նվազագույնի երաշխավորումն ապահոված էր ոչ միայն պետական, այլև՝ մասնավոր ձեռնարկությունների բանվորների համար, որտեղ զբաղված էր երկրի արդյունաբերական բանվորների գրեթե կեսը: Նույն օրենքով մասնավոր ձեռնարկությունների բանվորների համար սահմանվեց 42 ժամյա աշխատանքային շաբաթ: Նրանց իրավունքները հավասարվեցին պետական ձեռնարկությունների բանվորների իրավունքներին:

1971թ. սեպտեմբերի 1-ին ԱՄՀ-ը, Սիրիան և Լիբիան հանրաքվեի արդյունքներով միասին կազմեցին Արաբական հանրապետությունների ֆեդերացիա:

Նոր ֆեդերացիայի բարձրագույն մարմիններ դարձան Նախագահական խորհուրդը, որը բաղկացած էր երեք պետությունների ղեկավարներից, և Ազգային ժողովը, որը նստաշրջան էր հրավիրում տարին երկու անգամ: Նախագահական խորհրդի նախագահ ընտրվեց Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթը:

1971թ. հանրաքվեով ընդունվեց նոր սահմանադրություն, որով երկիրը վերանվանվեց Եգիպտոսի Արաբական Հանրապետություն (ԵԱՀ): Սահմանադրությունը ԵԱՀ-ը հռչակեց «աշխատավոր ժողովրդական ուժերի միության վրա հիմնված դեմոկրատական սոցիալիստական պետություն»¹:

1971թ. սահմանադրությունն առ այսօր գործող հիմնական օրենքն է, ըստ որի պետության գլուխ կանգնած է նախագահը, որն ընտրվում է 6 տարի ժամանակով: Նա ունի վերընտրվելու իրավունք: Նախագահն է որոշում հանրապետության ընդհանուր քաղաքականությունը, նշանակում կառավարության ղեկավարին, նրա տեղակալներին ու կառավարության անդամներին, քաղաքացիական ու զինվորական պաշտոնատար անձանց, դիվանագիտական ներկայացուցիչներին, հրապարակում է դեկրետներ, հայտարարում արտակարգ դրություն և պատերազմական վիճակ:

Օրենսդրական իշխանության բարձրագույն մարմինը միապալատ ժողովրդական ժողովն է, որը ձևավորվում է համընդհանուր ընտրությունների ճանապարհով: Ընտրական իրավունքից օգտվում են 21 տարին լրացած քաղաքացիները:

Երկրի արդարադատությունն իրականացնող դատական համակարգը երկաստիճան բնույթ է կրում: Այն բաղկացած է առաջին և երկրորդ աստիճանի դատարաններից:

Սահմանադրությամբ ամրագրված են նաև քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները և դրանք կյանքի կոչելու մեխանիզմը:

¹ Конституция Египта 1971г., հոդ. 1, М., 1991, էջ 3:

ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

1. ԱՖՐԻԿԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ

Երկրորդ հասաշխարհային պատերազմից հետո ազգային-ազատագրական շարժումը մեծ վերելք ապրեց նաև Աֆրիկայի երկրներում: Համաշխարհային ասպարեզում ուժերի հարաբերակցության փոփոխությունը, յնչպես նաև Եվրոպայի գաղութատեր պետությունների նոր իշխանությունների հումանիտական քաղաքականությունը նպաստեց գաղութային լծի տապալմանը և անկախ պետությունների ձևավորմանը:

Աֆրիկայի առանձին երկրներում ձևավորվեցին ազգային քաղաքական ուժեր, խմբավորումներ ու կազմակերպություններ, որոնք միահամուռ հանդես էին գալիս անկախության դրոշի ներքո:

1958թ. Գվինեիան նվաճեց անկախությունը: Նրա հետևից գնացին մյուս երկրները: 1960-ական թվականների կեսերին Աֆրիկայի երկրների մեծ մասը քաղաքականապես անկախ էր: Այստեղ կազմավորվեցին ավելի քան 30 անկախ պետություններ, որոնցից յուրաքանչյուրը դարձավ Միավորված Ազգերի Կազմակերպության լիիրավ անդամ:

Սույն դասագրքով հնարավոր չի լուսաբանել Աֆրիկայի բոլոր երկրների պետության ու իրավունքի պատմությունը: Սակայն, որպեսզի պատկերացում կազմենք այդ աշխարհամասի երկրների նորագույն ժամանակաշրջանի պետության ու իրավունքի մասին, հարկ ենք համարում այն ներկայացնել մի քանի երկրների օրինակով:

1. Ալժիրի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն: Հյուսիսային Աֆրիկայում գտնվող այս երկիրը երկար ժամանակ գտնվում էր տարբեր պետությունների տիրապետության տակ: Դեռևս հնագույն ժամանակաշրջանից այն համարվում էր Կարթագենի, Հռոմի, Բյուզանդիայի, իսկ VII դարից սկիսած՝ Արաբական խալիֆայության գաղութը: XVI սկզբում նվաճվեց Թուրքիայի կողմից, իսկ 1830 թվականից մինչև 1962 թվականն Ալժիրը եղել է Ֆրանսիայի գաղութը:

1954թ. նոյեմբերի 1-ից հայրենասեր ուժերի ջանքերով վերածնվեց

ազատագրական պայքարը, որի արդյունքում՝ 1962թ. հուլիսին, Ալժիրը նվաճեց անկախությունը:

Ալժիրի քաղաքական համակարգը մինչև 1989թ. գլխավորում էր 1954թ. ձևավորված Ազգային ազատագրական ճակատ կուսակցությունը, որն ուներ սոցիալիստական կողմնորոշում և արգելում էր այլ կուսակցությունների գործունեությունը: 1989թ. ընդունվեց օրենք քաղաքական կազմակերպությունների մասին, որով թույլատրվեց բազմակուսակցության գոյությունը: Այս հիմքով էլ 1991թ. երկրի պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցան պառլամենտի ընտրություններ՝ բազմակուսակցական համակարգով, որի արդյունքում հաղթանակ տարան ռադիկալ իսլամականները:

1989թ. Ալժիրում ընդունվում է Սահմանադրություն, որը 1996թ. կատարված փոփոխություններով ու լրացումներով հանդերձ գործում է առ այսօր:

Սահմանադրության համաձայն երկրի օրենսդիր իշխանությունն իրականացնում է պառլամենտը, որը բաղկացած է երկու պալատից՝ Ազգային ժողովրդական ժողովից (ստորին պալատ) և Ազգությունների խորհրդից (վերին պալատ):՝ Օրենսդիր մարմինն իշխանությունների համակարգում գրավում է պատվավոր տեղ և իրականացնում է բարձրագույն իշխանությունը:

Ստորին պալատը ձևավորվում է համընդհանուր ուղղակի ընտրությունների միջոցով՝ հինգ տարի ժամկետով: Այն կազմված է 380 պատգամավորից: Վերին պալատի լիազորությունների ժամկետը չորս տարի է: Նրա անդամների թիվը 144-ն է, որի կեսը յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ նորացվում է: Վերին պալատի անդամների 2/3-ն ընտրվում է կոմունանների և մարզերի ժողովորդական ժողովի անդամների թվից՝ անուղղակի, գաղտնի քվեարկությամբ, իսկ 1/3-ին՝ գիտության, արվեստի, տնտեսության և սոցիալական ոլորտի ականավոր գործիչներից նշանակում է երկրի նախագահը: Վերջինս իրավունք ունի ցրելու ստորին պալատը:

Օրենսդրական նախաձեռնությամբ օժտված են պատգամավորները և կառավարության ղեկավարը: Ցանկացած օրինագիծ պետք է քննարկվեր երկու պալատներում՝ Սովորական օրենքներն ընդունվում են ձայների պարզ, իսկ ավելի բարդ հարաբերությունները կարգավորող օրենքները՝ բացարձակ մեծամասնությամբ: Բոլոր դեպքերում օրինագծերը պետք է հավանության արժանանային վերին պալատի 3/4-ի կողմից, որից հետո այն 30 օրվա ընթացքում վավերացնում է երկրի նախագահը: Վերջինս իրավունք ունի օրինագիծն առարկություններով վերադարձնել

¹ Конституция Алжира, М., 1999, ст., 98:

պառլամենտ, որտեղ այն պետք է հաստատվի ստորին պալատի անդամների 2/3-ի կողմից:

Պառլամենտի կարևորագույն լիազորություններից է կառավարության գործունեության հսկողության իրականացումը: Ստորին պալատն անդամների 2/3-ի համաձայնությամբ կարող է որոշում ընդունել կառավարության հրաժարականի մասին:

Հանրապետության նախագահն ընտրվում է քաղաքացիների կողմից՝ հինգ տարի ժամկետով: Նա իրավունք ունի վերընտրվելու միայն մեկ անգամ:

Երկրի քաղաքական համակարգում առաջնակարգ դերը պատկանում է նախագահին: Սահմանադրության 70-րդ հոդվածի հաստատման նա ներկայացնում է երկիրը միջազգային ասպարեզում, հանդես է գալիս որպես սահմանադրական նորմերի իրականացման երաշխավոր: Նախագահն ազգային նշանակություն ունեցող հարցերի լուծումը ցանկացած պահին կարող է իրականացնել ժողովրդական հանրաքվեի միջոցով: Նա գլխավորում է կառավարությունը, ստորագրում դեկրետներ կնքում միջազգային պայմանագրեր նշանակում և ետ կանչում դեսպաններին:

Գործադիր իշխանության ոլորտում նախագահը նշանակում և ազատում է վարչապետին, կառավարության գլխավոր քարտուղարին, որն իրականացնում է Ալժիրի պետական բանկի կառավարումը, վարչապետի ներկայացմամբ՝ կառավարության անդամներին: Բացի դրանից նա է նշանակում դատավորներին, անվտանգության և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին:

Նախագահը համարվում է երկրի գործերի գլխավոր հրամանատարը և, միաժամանակ, զբաղեցնում է պաշտպանության նախարարի պաշտոնը:

Կառավարության ղեկավարը պարտավոր է հոգ տանել օրենքների և մյուս նորմատիվ ակտերի իրականացման մասին: Կառավարությունը հաշվետու է ինչպես պառլամենտի, այնպես էլ նախագահի առաջ: Վերջինիս է պատկանում կառավարության հրաժարականի մասին վերջնական որոշում կայացնելու իրավունքը:

Ալժիրը միատար պետություն է՝ բաղկացած 48 վարչատարածքային միավորներից:

Պետական ապարատի ամբաժանելի մասն է կազմում դատական համակարգը, որը գլխավորում է Գերագույն դատարանը: Միջին օղակում գտնվում են պրովինցիաների դատարանները, իսկ ներքևի օղակում՝ տեղական տրիբունալները: Գործում են նաև զինվորական դատարանները: Ստեղծվել է նաև սահմանադրական նորմերի նկատմամբ հսկողություն իրականացնող հատուկ մարմին՝ Սահմանադրական խորհուրդ, որն իր կառուցվածքով ու լիազորություններով կրկնօրինակում է

Ֆրանսիայի սահմանադրությանը:

2. Արևելյան Աֆրիկայի հզոր պետություններից է Եթովպիան: Դեռևս մեր թվականության սկզբներին Հյուսիսային Եթովպիայում ձևավորվեց խոշոր ստրկատիրական պետություն՝ Ակսում անունով: XIII-XIV դարերում ձևավորվեց եթովպական ֆեոդալական պետությունը, որն ավելի ուշ մասնատվեց ինքնուրույն իշխանությունների: Գաղութային նվաճումների շրջանում երկիրը գրեթե պահպանեց իր ինքնավարությունը՝ բացառությամբ 1936-1941թթ., երբ Իտալիան օկուպացրեց այն: 1974թ. Եթովպիայում հաստատվեց սոցիալիստական վարչակարգը, որը գոյատևեց մինչև 1991թ.:

Պատմական դեպքերի մնացած զարգացումը հարկադրում էր երկրի դեկավարներին անընդհատ փոփոխել պետական ապարատը, նրա գործունեության կարգն ու լիազորությունները սահմանող օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը: 1994թ. ընդունվեց մայր օրենքը, որով Եթովպիան հռչակվեց ֆեդերատիվ պետություն, իսկ կառավարման ձևով՝ պառլամենտական հանրապետություն:

Սահմանադրության 47-րդ հոդվածի համաձայն ստեղծվեցին 9-ը մահանգներ, որտեղ իրականացվում էր յուրահատուկ կառավարում: 39-րդ հոդվածը Եթովպիայում ապրող բոլոր ազգերին ու ազգություններին և ժողովուրդներին օժտում է ինքնորոշման իրավունքով:

Օրենսդիր իշխանությունն իրականացնում է պառլամենտը՝ Ֆեդերալ ժողովը, բաղկացած երկու պալատներից. Ժողովրդական ներկայացուցիչների պալատ (ստորին պալատ) և Ֆեդերացիայի պալատ (վերին պալատ): Երկու պալատների լիազորությունների ժամկետը հինգ տարի է:

Ստորին պալատի 548 պատգամավորներից 20-ը պետք է լինեին փոքր ազգերի ու ժողովուրդների ներկայացուցիչները: Այս պալատի անդամներից է ընտրվում երկրի վարչապետը, որի գլխավորած կառավարութ-յունը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել պառլամենտին: Ստորին պալատն իրականացնում է հսկողություն կառավարության գործունեության նկատմամբ և լուծում գործադիր իշխանության լիազորությունների հետ կապված ցանկացած հարց: Վերին պալատը բաղկացած է 155 պատգամավորից: Այն իրենից ներկայացնում է Եթովպիայում ապրող ազգերի, ազգությունների և ժողովուրդների շահերն արտահայտող ներկայացուցչական մարմին: Նրա կարևորագույն լիազորություններից է սահմանադրության մեկնաբանումը:

Սահմանադրությամբ պետության գլուխ կանգնած է մախագահը, որն ընտրվում է 6 տարի ժամկետով՝ պառլամենտի երկու պալատների համատեղ նիստում: Նա վարչապետի ներկայացմամբ նշանակում և ազատում է դեսպաններին ու դիվանագիտական ներկայացուցիչներին:

Գործադիր իշխանությունը պատկանում է վարչապետին և

մախագահին, որոնք պատասխանատու են պառլամենտի առաջ: Վարչապետը միաժամանակ գործերի գլխավոր հրամանատարն է:

Դատական համակարգը գլխավորում է ֆեդերատիվ գերսպունջ դատարանը: Նախնազգներում դատական բարձրագույն իշխանությանը օժտված է նահանգների գերագույն դատարանը, որի կատարած որոշումը տվյալ նահանգների հարցերի շլոջանակներում վերջնական է: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է: Դատավորներն անփոփոխելի են մինչև 60 տարեկան հասակը: Նրանց նշանակում է վարչապետը՝ ստորին պալատին ներկայացրած թեկնածուներից:

1994թ. Մահմանդությանը Եթովպիայում ստեղծվեցին մարդու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության ինստիտուտներ. որոնց դերն ու նշանակությունը գնալով մեծանում է:

3.Կենտրոնական Աֆրիկայում է գտնվում Կոնգոյի պետությունը: 1960թ. օգոստոսի 15-ին Կոնգոն հռչակվել է անկախ պետություն: 1965թ. նոյեմբերին երկրում տեղի է ունենում ռազմական հեղաշրջում, որի արդյունքը լինում է գեներալ Մորուսի իշխանության գլուխ անցնելը: Հաստատվում է մախագահական միապետություն՝ բռնապետական վարչակարգով: Թույլատրելի է դառնում մեկ, այն է՝ Հեղափոխական ժողովրդական շարժում, կուսակցության գործունեությունը: 1990թ. ապրիլին Մորուտը հարկադրված էր հրաժարվել միակուսակցական համակարգից և հայտարարեց իր հրաժարականը վերը նշված կուսակցության առաջնորդ լինելուց: Դրանից հետո միայն իրավական մի շարք ակտերով և, հատկապես 1994թ. սահմանադրական ակտով, վերաբաժանվեցին պետական իշխանության ֆունկցիաները՝ հօգուտ Հանրապետության բարձրագույն խորհրդի, որն, ըստ էության, ուներ պառլամենտի լիազորություններ և հսկողության տակ էր վերցնում կառավարության գործունեությունը: Մորուտը շարունակեց մնալ երկրի մախագահ մինչև նոր ընտրությունները: 1997թ. տապալվեց նրա կառավարությունը: Երկիրը հայտնվեց անցումային փուլում: Օրենսդիր և գործադիր իշխանությունն անցավ մախագահին: Կառավարման ձևով պետությունը վերածեց մախագահական հանրապետության:

Կոնգոյի դատական համակարգը չկատարելագործված, արդարադատությունը ոչ լիարժեք իրականացնող մարմին է, որը գլխավորում է Կինշասի՝ մայրքաղաքի, գերագույն դատարանը: Դատավորները նշանակվում և ազատվում են մախագահի կողմից, պարտադիր կատարելով նրա հրամանները:

Գաղութային լուծը թոթափելուց հետո եվրոպական իրավաբան-մասնագետները, այդ թվում նաև դատավորները, հեռացան Կոնգոյից, որի հետևանքով զգացվեց մասնագետների խիստ կարիք: Առ այսօր իշխանությունները կատարելագործված դատական համակարգ ձևավորե-

լու նպատակով մշակում և ստեղծում են նորմատիվ ակտեր, պատրաստում մասնագետներ, որոնց արդյունքը դեռևս չի երևում:

4.XIX դարի վերջից Բրիտանիայի փաստական գաղութն էր Սուդանը՝ անգլո-եգիպտական կառավարմամբ:

1956թ. Սուդանը հռչակվում է անկախ հանրապետություն: Երկրում սկսվում են անընդհատ բնույթ կրող ռազմական հեղաշրջումներն ու ապստամբությունները, որոնց հետևանքով էլ անընդհատ փոփոխվում են սահմանադրություններն ու մյուս նորմատիվ իրավական ակտերը:

1989թ. Սուդանում տեղի ունեցավ հերթական հեղաշրջումը: Իշխանությունն անցավ Հեղափոխական հրամանատարության խորհրդին: Վերջինս հատուկ դեկրետներով դադարեցրեց Սահմանադրության գործունեությունը, ցրեց իշխանության օրենսդիր և գործադիր մարմինները, արգելեց բոլոր քաղաքական կուսակցությունների և հասարակական (բացառությամբ կրոնական) կազմակերպությունների գործունեությունը: 1993թ. Խորհուրդը հայտարարեց ինքնալուծարման մասին: 1994թ. ձևավորվեց պառլամենտ, որն, ըստ էության, անցումային ժամանակաշրջանի ազգային խորհուրդն էր: 1996թ. մարտին տեղի ունեցան նախագահական և պառլամենտական ընտրությունները: 1998թ. ընդունվեց երկրի Սահմանադրությունը, որում ամրագրվեցին մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները: Սահմանադրությամբ օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ասամբլեան, որի լիազորությունների ժամկետը 4 տարի է:

Գործադիր իշխանությունը պատկանում է նախագահին, որն էլ նշանակում է կառավարության անդամներին: Նրա լիազորությունների ժամկետը 5 տարի է:

Սահմանադրության հիման վրա ընդունվեցին հասարակական հարաբերությունները կարգավորող բազմաթիվ նորմատիվ իրավական ակտեր, որոնցում ակնհայտ դեր է խաղացել մուսուլմանական իրավունքը:

Երկրորդ աշխարհամարտից հետո անկախ պետություններ կազմավորվեցին ոչ միայն Աֆրիկայի, այլև Հարավային ու Հարավ-Արևելյան Ասիայի, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, որոնց անդրադարձել ենք վերևում: Պետք է նշել, որ անկախության գործընթացն էլ ավելի արագացավ Խորհրդային կայսրության փլուզումից հետո:

ԲԱԺԻՆ, 11

ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 34

1. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Նորագույն պատմության ժամանակաշրջանում զգալի փոփոխություններ տեղի ունեցան նաև իրավունքի բնագավառում: Այն տարածվեց ինչպես իրավունքի աղբյուրների, իրավահարաբերությունների սուբյեկտների, այնպես էլ իրավունքի բոլոր ճյուղերի և ինստիտուտների վրա: Ուսումնասիրվող երկրների արտադրական հարաբերություններում էական կառուցվածքային փոփոխությունները մեծ ներգործություն ունեցան հատկապես քաղաքացիական ու առևտրական իրավունքի վրա: Այս ժամանակաշրջանում նկատելի է դառնում հանրային և մասնավոր իրավունքների միջև եղած տարբերությունների կրճատումը: Դրանում ոչ պակաս դեր խաղացին. ա) արտադրությունը կարգավորող տարբեր կարգի միջոցառումները, որոնք իրագործվում էին պետության կողմից ու դարձան տնտեսության հարաբերական կայունությունը պահպանելու կարևորագույն գործոն, բ) վարչական իրավունքի ինպերատիվ նորմերի կենտրոնացված ներթափանցումը քաղաքացիական և առևտրական իրավունքի դիսպոզիտիվ նորմերի բնագավառ և գ) քաղաքացիական ու առևտրական իրավունքներն իրենց վրա կրեցին գիտա-տեխնիկական հեղափոխության ներգործությունը, որով էլ պայմանավորված է իրավական կարգավորման նոր ձևերի ու նոր ինստիտուտների առաջացումը:

Պետությունների միջև տնտեսական կապերի քանակական ու որակական ընդլայնումը (օրինակ, «Ընդհանուր շուկայի» ձևավորումը, որը հանգեցնում է տնտեսական համագործակցության) խթանեց նրանց քաղաքացիա-իրավական ինստիտուտների նույնացմանը:

Այդ բոլոր գործընթացներն ընդհանուր առմամբ ներգործություն ունե-

ցան իրավունքի բոլոր սկզբնաղբյուրների վրա: Բայց այդ ներգործության աստիճանը, ինչպես նաև սկզբնաղբյուրների հարաբերակցությունը բոլոր երկրներում միատեսակ չէին:

Սկզբնական շրջանում մայրցամաքային Եվրոպայում (Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա և այլ երկրներ) նախկինի նման հիմնական սկզբնաղբյուրներ էին համարվում օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը: Մեկը մյուսի հետևից ընդունվում էին բազմաթիվ և բազմաբնույթ օրենքներ, որոնք այս կամ այն չափով փորձ էին անում կարգավորել հասարակական կարգի որոշակի բնագավառ: Ֆրանսիայում, օրինակ, 1926-1936թթ. չորս անգամ ավելի շատ օրենքներ ընդունվեցին, քան 1885-1925թթ.: Այստեղ քաղաքացիական օրենսգրքի հետ մեկտեղ գործում էին այնպիսի կարևորագույն օրենքներ, ինչպիսիք էին բնակարանի և գյուղատնտեսական հողերի վարձակալման, հեղինակային իրավունքի մասին օրենքները և այլն:

Անգլո-սաքսոնական իրավունքի երկրներում (Անգլիա, ԱՄՆ և այլն) որպես իրավունքի աղբյուր առաջվա պես շարունակում էր բացառիկ դեր խաղալ դատական նախադեպը, որը երբեմն վեր էր դասվում օրենքից, չնայած այն բանին, որ վերջինս համարվում է ավելի բարձր իրավաբանական ուժով օժտված նորմատիվ ակտ: ԱՄՆ-ի Առևտրական օրենսգիրքը, որը գործում է նահանգների մեծ մասում, դատավորներին իրավունք է վերապահում ազատորեն ստեղծել իրավական նորմեր և այն կիրառելի դարձնել դատարաններում: Օրենսգրքի այս դրույթը նորամուծություն չի և գործում է առ այսօր:

XXդ. երկրորդ կեսին տնտեսական հարաբերությունների զարգացումը, ինչպես նաև քաղաքացիական ու առևտրական իրավունքների նույնացումն անդրադարձան իրավունքի համակարգերի վրա: Նկատվեց անգլո-սաքսոնական և մայրցամաքային համակարգերի մերձեցում: Անգլո-սաքսոնական երկրներում որպես իրավունքի աղբյուր բարձրացավ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի դերը, իսկ մայրցամաքային համակարգի երկրներում օրենքների հետ մեկտեղ, կարևոր դեր սկսեց խաղալ դատական պրակտիկան (ստորին առյանի դատարանները համանման կատեգորիայի գործեր քննելիս ղեկավարվում էին բարձրագույն դատարանների որոշումներով): «Ընդհանուր շուկայի» առաջացումը, համանման իրավական կարգավորման անհրաժեշտությունը նոր ուժ հաղորդեցին իրավունքի սկզբնաղբյուրների մերձեցմանը: Դրանց միաձուլումն ավելի մեծ չափով կոնկրետացավ միջազգային համաձայնագրերում, ինչպես նաև միջպետական մակարդակով տիպային նորմատիվ ակտերում:

XX դարում իրավահարաբերության սուբյեկտների կարգավիճակը նույնպես ենթարկվում է զգալի փոփոխությունների: Հաստատվում է բոլոր անձանց իրավահավասարությունը քաղաքացիական օրենսդրության շրջանակներում: Վերացվում են անուսնացած կանանց քաղաքացիական

լիազորությունների բոլոր սահմանավակումները:

Իր հետագու զարգացումը ստացավ իրավաբանական անձի, որպես հատուկ կազմակերպության, վերաբերյալ օրենսդրությունը: Իրավաբանական անձն օժտված է իրավասուրյնկտությամբ, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Ազգային օրենսդրությունների մեծ մասում ավելի ակնհայտ դարձան մասնավոր և հանրային իրավունքների իրավաբանական անձանց տարբերությունները:

Մասնավոր իրավունքում իրավաբանական անձինք են համարվում բանկային, առևտրական, արդյունաբերական և այլ կազմակերպությունները, որոնք ստեղծվում են մասնավոր անձանց կողմից: Վերջիններս են որոշում այդ կազմակերպության խնդիրները, ստեղծում նրա նյութական բազան: Դրանց կարգավիճակն ամրագրվում է քաղաքացիական իրավունքի նորմերով և կրում է հիմնականում դիսպոզիտիվ բնույթ:

Հանրային իրավունքում իրավաբանական անձինք են պետական մարմինները, հիմնարկությունները, կազմակերպությունները, ձեռնարկությունները, պետությունն ամբողջությամբ: Նրանք ստեղծվում են պետա-իրավական ակտերի հիման վրա, որոնք ունեն իմպերատիվ բնույթ: Այդ կազմակերպություններին հատուկ են իրենց առջև դրված խնդիրների հրապարակային բնույթը, իրավազորությունների առկայությունը և անդամակցության յուրահատկությունը:

Ժամանակակից մասնավոր իրավունքի օրենսդրությունն իրավաբանական անձանց վերաբերյալ զգալի զարգացում ստացավ հատկապես բաժնետիրական ընկերությունների և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասով: Դա ավելի շատ պայմանավորված է նրանով, որ հատկապես այդպիսի իրավաբանական անձինք դարձան կապիտալի կենտրոնացման և համակենտրոնացման արդյունավետ գործիք:

Իրավաբանական անձանց լիազորություններն ամրագրվում են համապատասխան ազգային օրենսդրություններում (Անգլիայում՝ 1948թ., 1967թ., 1976թ., 1980թ., 1981թ. օրենքներում, Գերմանիայում՝ 1965թ., Ֆրանսիայում՝ 1966թ. օրենքներում և այլն):

Բաժնետիրական ընկերությունները համարվում են որպես ձեռնարկությունների, կազմակերպությունների և առանձին անձանց միավորման հատուկ կազմակերպչական ձև: Այն ստեղծվում է հիմնադիր-բաժնետերի կողմից: Բաժնետիրական ընկերությունը պարտավորությունների համար իր գույքի շրջանակներում կրում է պատասխանատվություն: Օրենսդրությամբ նախատեսվում է ընկերությունների երկու հիմնական կառուցվածք. ԱՄՆ-ում և Անգլիայում՝ վարչություն և բաժնետերերի ընդհանուր ժողով, Գերմանիայում՝ վարչություն, դիտորդ խորհուրդ և բաժնետերերի ընդհանուր ժողով, Ֆրանսիայում հիմնադիրներին հնարավորություն է տրվում նշ-

ված երկու համակարգերից կատարել ընտրություն:

Բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում կայացնել բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին: Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից: Կանոնադրական կապիտալն որոշում է նրա պարտատերերի շահերն երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերություն հիմնադրելիս նրա բոլոր բաժնետոմսերը պետք է բաշխվեն հիմնադիրների միջև: Վերջիններս պարտավոր են մինչև ընկերության գրանցումն ամբողջությամբ վճարել կանոնադրական կապիտալը: Արգելվեց բաժնետոմսերը վճարելու պարտականությունից ազատել բաժնետիրոջը: Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, իսկ գործադիր մարմինը՝ վարչությունն է:

Ժամանակակից օրենսդրության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում բաժնետոմսերին: Այն համարվում է արժեթուղթ, որը հավաստում է դրա տիրոջ ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը: Արժեթղթերը հանդիսացան սեփականության իրավունքի օբյեկտ: Դրանց անվանական արժեքը նշված է փաստաթղթի վրա, իսկ վաճառքի իրական գինը որոշվում է նրանց բորսային կուրսով: Այս կամ այն բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կուրսը կախված է առաջին հերթին ստացվող շահաբաժնի չափերից և, հատկապես, այդ բնագավառում ապագայի կանխատեսումներից, ինչպես նաև շատ այլ պատճառներից (քաղաքական, սոցիալ-հոգեբանական և այլն):

Բաժնետոմսերի կուրսի որոշումը և նրանց հրապարակումն իրականացվում է ֆոնդային բորսաներում, որոնք սովորաբար ունեն մասնավոր բաժնետիրական ընկերությունների (ԱՄՆ, Անգլիա և այլն) կամ պետական հիմնարկությունների (Ֆրանսիա, Գերմանիա և այլն) կարգավիճակ:

Ներկայումս տարածված ամենատարբեր տեսակի բաժնետոմսերը լի-նում են ըստ ներկայացնողի, անվանական, արտոնյալ և հասարակ:

Բաժնետոմսերից բացի, լայն տարածում ստացան ընկերության թողարկած փոխառությունները, որոնք հանդիսացան արժեթղթերի տեսակներ:

Մասնավոր իրավունքում իրավաբանական անձի մյուս տարածված տեսակը հանդիսանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՍՊԸ): ՍՊԸ-ի մասին օրենսդրությունն առաջին անգամ մշակվեց և ընդունվեց Գերմանիայում, հետագայում այն տարածվեց ամենու

րեք, հատկապես, Արևմտյան Եվրոպայում: Առավել կարևոր նորմատիվ ակտերն այդ բնագավառում (որոնք օլիմպակ ծառայեցին նման կարգի օրենսդրության համար) հանդիսանում են 1981թ. Գերմանիայում ընդունված օրենքը և Իրանսիայում 1966թ. ընդունված առևտրական ընկերակցությունների մասին օրենքի հատուկ բաժինը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալը կազմում է նրա մասնակիցների ավանդների արժեքից Այն սահմանում է պատաստերերի շահերը երաշխավարող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է: ՍՊԸ-ում ստեղծվում է գործադիր մարմին, որը հաշվետու է նրա մասնակիցների ընդհանուր ժողովին: Ընկերության մասնակիցն իրավունք ունի ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը կամ դրա մի մասը վաճառել կամ այլ ձևով զիջել տվյալ ընկերության մեկ կամ մի քանի այլ մասնակիցների:

Ընկերությունում անդամությունը հավաստիացնող փաստաթուղթը, այսպես կոչված, բաժնետիրական վկայականն է: Այն արժեթուղթ չի համարվում:

Ինչ վերաբերում է հանրային իրավունքի իրավաբանական անձանց, ապա պետք է նշել, որ իրավունքի զարգացման հետևանքով դրանք աստիճանաբար ենթարկվում են մասնավոր իրավունքին: Դա առաջին հերթին վերաբերում է պետական ձեռնարկություններին: Վերջիններիս կազմակերպա-իրավական ձևերը բազմազան են, սակայն ամենից հաճախ օգտագործվում են բաժնետիրական ընկերության, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և հանրային կորպորացիայի ձևերը:

Հանրային կորպորացիան չի նախատեսում իր կապիտալի բաժանումը բաժնետոմսերի և փայերի: Այն պետության լիակատար սեփականությունն է: Այդ ձեռնարկությունները պետության անունից և նրա հանձնարարությամբ կատարում են տնտեսական, գիտական, սոցիալական և տարբեր տեսակի այլ ֆունկցիաներ: Իրենց գործունեության համար նրանք պատասխանատու են պետության առջև, սակայն ունեն առանձնացված գույք և այդ առումով օժտված են առևտրային կազմակերպության իրավունքներով: Որպես կանոն, նրանց վերապահվում են հարկային արտոնություններ:

Պետական ձեռնարկությունները մտնում են պետական կառավարման համակարգի մեջ, ամբողջությամբ գործում են պետական բյուջեի հաշվին և զրկված են տնտեսական, ֆինանսական կամ իրավաբանական որևէ ինքնավարությունից:

ԳԼՈՒԽ 35

1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սեփականության իրավունք: Քաղաքացիական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկը XX դարում շարունակում էր մնալ սեփականության իրավունքը: Այն առանձնանում է նրանով, որ ենթադրում է.

1) սեփականատիրոջ լիազորությունների հետ երրորդ անձանց պարտավորությունների գույքորոշում;

2) սեփականության իրավունքի օբյեկտի անհատական որոշակիություն;

3) միայն քաղաքացիական իրավունքի նորմերով ամրագրված սեփականատիրոջ իրավասությունների ճանաչում:

Իրավունքի մայրցամաքային համակարգում սեփականության իրավունքը դիտվում է որպես սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունք: Սեփականատերն իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Այն գտնվում է սուբյեկտի ձեռքում, որն էլ օրենքով սահմանված կարգով կարող է օգտագործել: Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու հնարավորությունն է, որն ապահովվում է օրենքով: Գույքը տնօրինող անձն իր հայեցողությամբ, օրենքով սահմանված կարգով, կարող է որոշել նրա ճակատագիրը:

Գիտատեխնիկական հեղափոխության, տիրապետող արտադրական հարաբերությունների վերափոխման պայմաններում, սեփականության իրավունքի ինստիտուտը կրեց որոշակի փոփոխություններ: Դա ամենից առաջ ընդգրկեց սեփականության իրավունքի օբյեկտների շրջանակը: Օբյեկտներն ավելացան քանակապես և շատ բաներում փոփոխության ենթարկվեցին՝ որակապես: Մայրցամաքային Եվրոպայի երկրների մեծ մասում պահպանվեց սեփականության իրավունքի օբյեկտների բաժանումը «նյութականի» և «ոչ նյութականի»: «Նյութականը» իր հերթին բաժանվեց «շարժական» և «անշարժ» գույքի:

Անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, շենքերը, շինությունները և հողին ամ

րակայված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք առհմար է հողից անջատել՝ առանց այլ գույքի նշանակությունը անհամաչափ վնաս պատճառելու: Ֆրանսիայի օրենսդրությանը շարժական գույք է համարվում անշարժ չհամարվող գույքը:

Հատուկ օբյեկտ են դառնում արտադրության, առևտրի, կառավարման, Ֆինանսների և այլ բնագավառներում տեխնիկական գիտելիքներն ու պրակտիկ փորձը, որոնք ներկայացնում են առևտրական արժեք և նախկինում աստիճանավորված չեն եղել արտոնագրային պաշտպանությամբ:

«Շարժական գույքը», ինչպես նաև «ոչ նյութական» բարիքները սեփականատիրական հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում գրավում են առաջնակարգ տեղ:

Առավել մեծ չափով փոփոխության են ենթարկվում սեփականության իրավունքի ձևերը և տեսակները: 1960-70-ական թթ. զգալի տեղ էր գրավում պետական սեփականությունը, ինչպես նաև սեփականության խառը ձևը՝ բաժնետիրական ընկերությունների ձևով, որոնցում բաժնետոմսերի մի մասը պատկանում էր պետությանը, իսկ մյուս մասը՝ մասնավոր անձանց: Հրապարակվեցին բազմաթիվ օրենքներ՝ արդյունաբերական ձեռնարկություններ, բանկեր և այլ օբյեկտներ պետությանը սեփականության իրավունքով հանձնելու վերաբերյալ: Օրինակ, 1946թ. հունվարի 1-ից ազգայնացվեց ֆրանսիական բանկը¹, 1945թ. հունվարից՝ Ռենոյի գործարանը² և այլն: Ընդլայնվեց մասնավոր սեփականատերերի լիազորությունները սահմանափակող օրենսդրության շրջանակը: Հօգուտ պետության սահմանափակվեցին ընդերքի և օդային տարածության վերաբերյալ հողի սեփականատերերի իրավունքները: 1945թ. հունիսի 26-ի օրոնմանսով Ֆրանսիայում ազգայնացվեց օդային տրանսպորտը³, իսկ Անգլիայում, մեկ այլ օրենքով՝ ածխային արդյունաբերությունը⁴: Լայնածավալ և մանրակրկիտ մշակում ստացավ ընդերքի տնտեսական շահագործման վարչա-իրավական ռեժիմը:

Ընդարձակվում է հողի սեփականատերերի իրավունքների սահմանափակումը՝ ի շահ երրորդ անձանց: Սեփականատերերին արգելվում է

¹Закон относительно национализации французского банка и крупных банков и кредитных обществ 2 декабря 1945г., հոդ. 1, տն՝ս Խрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 420:

²Ординанс о национализации заводов Рено 16 января 1945г., տն՝ս Խрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 419:

³Ординанс относительно национализации воздушного транспорта 26 июня 1945г., տն՝ս Խрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 419-420:

⁴Закон о национализации угольной промышленности 1945г., տն՝ս Խрестоматия новейшей истории, т. 3, ч. 1, М., 1961, էջ 47:

խոչընդոտել հարևան հողերում գտնվող ձեռնարկությունների գոյծունեությանը: Անօրինակա՛ն չի համարվում ծխի և գոլորշիների ներթափանցումը նրանց հողերի վրա՝ սովյալ տեղանքի հասարթայատրելի նորմայի սահմաններում»: Նրանց չպետք է խոչընդոտեն զագատարների, էլեկտրահաղորդումների և այլնի անցկացմանը (փոխհատուցումը այդ դեպքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված չափը):

Այս բոլոր փոփոխությունները շատ բանով պայմանավորված են հասարակության շարունակ բարդացող արտադրական-տնտեսական կյանքով, նրա նորմալ գոյծունեության պահպանման անհրաժեշտությամբ:

Ձեռնարկությունների ազգայնացման ժամանակ սահմանվում է նախկին սեփականատերերի կողմից կրած կոյուստների արտոնյալ փոխհատուցում՝ պետական բյուջեից: Պետք է նշել, որ XX դ. վերջին երկու տասնամյակում նախկին սեփականատերերին ամբողջությամբ կամ մասնակիորեն (բաժնետոմսերով) վերադարձվեցին նրանց ձեռնարկությունները, հիմնականում պետության հաշվին:

Սերվիտուտներ: Հողային սեփականատերերի իրավագործությունների սահմանափակումը շատ բանով իրականացվում է սերվիտուտների բազայի վրա: Սերվիտուտն ուրիշի հողամասից սահմանափակ օգտվելու իրավունքն է: Հողամասի սեփականատերն իրավունք ունի հարևան հողատիրոջից պահանջել իրեն տրամադրելու այդ հողամասի սահմանափակ օգտագործման իրավունքը: Սերվիտուտ կարող է սահմանվել սեփականատիրոջ այն կարիքների համար, որոնք չեն կարող ապահովել առանց սերվիտուտի սահմանման: Քաղաքացիական օրենսդրությամբ արգելվում է սերվիտուտը դարձնել առուվաճառքի, գրավի կամ վարձակալության առարկա: Այն կարող է լինել կամավոր և հարկադիր:

XX դարում զարգացում ստացան հանրային իրավունքի սերվիտուտները, որոնք քաղաքացիա-իրավական սերվիտուտներից տարբերվում են ամենից առաջ նրանով, որ դրանց սուբյեկտները հանդիսանում են հանրային իրավունքի իրավաբանական անձինք և նրանց գործունեությունը կարող է տարածվել մեծ հողամասերի, երբեմն էլ ամբողջ ազգային տարածքի վրա:

Պարտավորական իրավունք: Իրավունքի մայրցամաքային ճյուղի երկրներում նկատելի երևույթ դարձավ քաղաքացիական իրավական օրենսդրության ոլորտից պարտավորությունների որոշ տեսակների առանձնացումը: Այդ գործընթացը պայմանավորված էր մի շարք պատճառներով: Գործադրության շարժման վերելքը կառավարող շրջաններին ստիպեց աշխատավորության նկատմամբ գնալ որոշակի զիջումների: Արդյունքում՝ աշխատանքի վարձակալության պայմանագիրն իր ուրույն տեղը գտավ ոչ այնքան քաղաքացիական, որքան աշխատանքային իրավունքի շրջանակներում: Մտցվեց տնտեսության պետական կարգավորում, որը, այնուհան

դերձ, խթանեց վարչական իրավունքի արտացոլման այնպիսի բնագավառ, որտեղ նախկինում անբաժան տիրապետող էր քաղաքացիական իրավունքը (այսինքն՝ դիսպոզիտիվ նորմերի ոլորտ թափանցեցին պետական կարգավորման իմպերատիվ նորմերը): Նույն երևույթը գրեթե նկատվում է նաև իրավունքի անզրո-սաքսոնական ճյուղում, թեպետ ոչ այդքան պարզորոշ արտահայտված ձևով:

Պարտավորությունների առաջացման հիմքերից առավել տարածվածը պայմանագիրն է, որը հանդիսանում է երկու կամ մի քանի անձանց միջև ձեռք բերված համաձայնություն: «Պայմանագրի կողմերից մեկը ԳՖՀ-ի օրենսդրության համաձայն, մյուս կողմին, այն կնքելու ժամանակ, առաջարկում է որոշակի պայմաններ»¹: Պայմանագրերը որոշակի փոփոխություններ կրեցին ժամանակակից քաղաքացիական իրավունքում.

1. Առաջացան պայմանագրերի նոր տեսակներ, որոնք պայմանավորված են բանկային գործառնությունների տարբերակմամբ, լիցենզիոն համաձայնագրերի հանդես գալով, լիզինգով և այլն: Չարգացում են ստանում բարտերային գործարքները:

2. Նկատվեց պայմանագրի դասական սկզբունքների (պայմանագրի ազատություն, պայմանագրում կողմերի հավասարություն, նրա իրավական անխախտելիություն) խախտում:

Պայմանագրի ազատության սկզբունքից շեղվելը ակնհայտ դարձավ դեռևս XIXդ., (օրինակ, տրանսպորտում բեռներ և ուղևորներ փոխադրելու համար կայուն տարիֆային դրույքներ սահմանելու կապակցությամբ): Այն գերիշխող դարձավ XX դարում, երբ խոշոր ընկերությունները պետությունից՝ ի դեմս նախարարությունների կամ դրա համար լիազորված մարմինների, իրավունք ստացան միակողմանի կազմել, այսպես կոչված, միացման պայմանագրի բանաձև (օրինակ, մատակարարման պայմանագրի), որը չի կարող փոփոխվել կոնտրազենտի կողմից: Այդպիսի պայմանագրերի հանդես գալը պայմանավորված էր վերջին հաշվով տնտեսության պահանջներով, մասնավորապես, ապրանքաշրջանառության զգալի մասի կատարելագործման և արդյունավետության անհրաժեշտությամբ: Բայց դրա հետ մեկտեղ, նման պայմանագրերը շատ բանում առոչինչ էին դարձնում պայմանագրում կողմերի իրավահավասարությունը, բանաձևը կազմողին դնում էին արտոնյալ վիճակում, թույլատրում նրան պայմանագրի մեջ մտցնել օգուտ բերող բոլոր հնարավորությունները: Դրա չափից դուրս չարաշահումը կանխեցին նորմատիվ ակտերը, որոնք արգելում էին պայմանագրերի մեջ ներառել որոշ առավել անցանկալի պայմաններ (օրինակ պայմանագրի ոչ պատշաճ կատարման համար վաճառողի կամ մատակարարողի պատասխանատվության բացառումը): Ներկայումս բանաձևե-

¹Закон об общих условиях сделок от 9 декабря 1979г., տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 423-424:

րի կազմումը մի շարք դեպքերում վերապահ լուծ է առևտրի պալատներին և բորսաներին: Սակայն, դա լիակատար չափով չվերացրեց նշված առավելությունները:

Էական փոփոխություններ կրեցին պայմանագրային հարաբերությունները պետական կարգավորման ներգործությամբ, որը հատկապես լայն չափեր ընդունեց համաշխարհային պատերազմների և տնտեսական ճգնաժամների ժամանակ: Հումքի շատ տեսակների, կիսաֆաբրիկատների և արտադրանքի բախման չափավորումը ազդեց հատկապես պայմանագրերի կնքման բովանդակության վրա (առաջին հերթին մատակարարման պայմանագրերի վրա): Դրանք կարող էին կնքվել միայն պետական համապատասխան սարմինների հատուկ թույլտվությունների դեպքում: Համանման փոփոխություններ պայմանագրային հարաբերություններում տեղի ունեցան նաև տնտեսության մյուս բնագավառներում՝ արտաքին առևտրում, բանկային համակարգում և այլուր:

Այդ գործընթացի կարևոր ոլորտը հանդիսացավ գների կարգավորումը: Համաշխարհային պատերազմների ժամանակ մտցվեցին որոշակի, նույնիսկ շարքային քաղաքացիների համար ընդունելի գներ՝ հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների համար: Սահմանվեցին բնակարանների գների առավելագույն չափերը և այլն: Պատերազմների ավարտից հետո այդ կարգի միջոցառումները վերացվեցին: Ըստ էության, դրանից մնացին միայն նրանք, որոնք ծառայում են մեծ քիզնեսի շահերին:

Ներկայումս պետական կարգավորման ձևերը կրում են կարևոր փոփոխություններ, էլ ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում դրամավարկային կարգավորման միջոցառումները: Այդպիսի ներգործության կարևորագույն միջոցներ են հանդիսանում բյուջեն, հարկային քաղաքականությունը, բանկային տոկոսի մակարդակի կարգավորումը և այլ միջոցառումները:

Ինչպես նշեցինք վերևում, պայմանագրի անխախտելիության սկզբունքը նույնպես չկիրառվեց: Արդեն առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում պարզ դարձավ, որ շատ պայմանագրերի և, հատկապես, խոշոր ու երկարաժամկետ մատակարարման պայմանագրերի պահանջների կատարումը, սահմանված ժամկետների պահպանումը, որպես կանոն, օբյեկտիվորեն դարձան անհնարին: Հումքի թանկացումը, նրա փոխադրումը և մշակումը ենթադրում էին գների կտրուկ աճ և մատակարարման ժամկետների փոփոխություն:

Այդպիսի պայմաններում պայմանագրի պարտադիր կատարման սկզբունքներից հրաժարվելը ձեռք բերեց զանգվածային բնույթ: Ընդ որում նրա դրսևորումն իրավունքի մայրցամաքային և անգլո-սաքսոնական ճյուղում ոչ միշտ էր միանշանակ: Իրավունքի մայրցամաքային ճյուղում, հատկապես, ֆրանսիական իրավունքում, հետևելով հռոմեական դասական օրինակներին, հնարավոր էր համարվում պարտապանի ազատումը պարտականությունները կատարելուց այն անհնարին լինելու դեպքում («անհնդթահարելի ուժի»), անկանխատեսելի դեպքերի և այլն): Այդպիսով, դա-

տարանները համապատասխան որոշումներ կատարելիս ունեին որոշակի իրավական հիմք: Այդ կարգի գործերը քանակական առումով շատ էին: Պահանջվում էր ավելի ճկուն և տարողունակ իրավական բանաձև: Առավել ընդունելի են եղավ «չկանխատեսված հանգամանքների մասին» ուսմունքը, որը հիմնավորում էր պայմանագրի լուծարման կամ փոփոխման օրինաչափությունը, եթե պայմանագրի պայմանների կատարման ժամանակ արմատապես փոփոխվել էին պայմանագրի կնքման պահին առկա հանգամանքները:

Այդ ուսմունքը, որն առաջացել էր դեռևս միջին դարերում, հարմարեցվեց նոր պայմաններին ու դատական պրակտիկայում լայն կիրառում գտավ հատկապես համաշխարհային պատերազմների և տնտեսական ճգնաժամերի ժամանակաշրջանում:

Անգլիայի և ԱՄՆ-ի քաղաքացիական իրավունքի պայմանագրում կանխատեսված հանգամանքների դրույթը գործում էր համարյա տրամագծորեն հակառակ դիրքից. պայմանագրի կատարման հետագա անհնարինությունը պարտապանին չի ազատում պատասխանատվությունից: Դրանում ոչ քիչ դեր խաղաց ավանդական «ընդհանուր իրավունքի» համար դրույթը, այն է՝ պայմանագրի կատարման անհնարինությունը չի ազատում պարտապանին պատասխանատվությունից, բայց պայմանագրի կատարման իրական անհնարինության դեպքում այն պետք է փոխարինվի այլ ձևով, ավելի հաճախ դրամական փոխհատուցումով: Միաժամանակ, XX դարում տեղի ունեցած փոփոխությունները պահանջում էին պարտապանի՝ որոշակի հանգամանքների առկայության դեպքում պայմանագրի պայմանների կատարումից հրաժարման այլ լուծումներ: Դրանք մարմնավորվեցին դատական նոր մախաղեպերում: Իրավունքում ճանաչում ստացավ պայմանագրի «ապարդյունության» մասին ուսմունքը, որը հիմնավորում էր պայմանագրային պարտավորություններից պարտապանի ազատումը՝ պայմանագրի օբյեկտի կորուստի, կնքված պայմանագրի նպատակի կարևորությունը կորցնելու, ինչպես նաև պայմանագիրն իրագործելու պահին կտրուկ, արմատական փոփոխությունների (որոնք անհնար են դարձնում պայմանագրի կատարումը) դեպքերում: Սակայն, չնայած դրան, օրինական ուժի մեջ են մնում մախաղեպերը, որոնք պարտադրում են կատարել պայմանագրի պայմանները: Արդյունքում՝ դատարաններին հնարավորություն է տրվում այդ կարգի գործերը քննելիս ավելի շատ հաշվի առնել կոնկրետ իրադրությունը և համանման գործերը քննել տարբեր կերպով:

Քաղաքացիական իրավունքում վերը նշված փոփոխությունները, հասկանալի է, չհանգեցրին XIX դարի դասական սկզբունքների վրա հիմնված նորմերի լիակատար վերացմանը: Դրանք առաջվա պես գերիշխում են մանր և միջին ձեռնարկատիրության և հատկապես կենցաղային գույքային հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում: Ազգային իրավունքի առանձնահատկությունների շրջանակներում նույնը տեղի է ունենում նաև անգլո-սաքսոնական իրավունքի համակարգի երկրներում:

1. ԱՄՈՒՄՆԱԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նորագույն ժամանակաշրջանում կարևոր փոփոխություններ տեղի ունեցան մաս ուսումնասիրվող երկրների ամուսնա-ընտանեկան իրավունքում: Այն պայմանավորված է ամենից առաջ հասարակական-քաղաքական կյանքում կնոջ դերի ակտիվացմամբ: Շատ երկրներում կնոջը վերապահվեց ընտրական իրավունք: Նրա ձայնը հավասարվեց տղամարդու ձայնին:

Տնտեսական կյանքում մույնպես փոխվեց կնոջ դերն ու նշանակությունը: Շատ երկրներում մա դարձավ աշխատանքային իրավահարաբերությունների լիարժեք սուբյեկտ:

Այս ամենը չէին կարող իրենց դրական ներգործությունը չունենալ ամուսնա-ընտանեկան իրավունքի վրա: Աշխարհի շատ պետություններում ընդունվեցին օրենքներ, այլ նորմատիվ իրավական ակտեր, որոնք, կարգավորելով ամուսնա-ընտանեկան հարաբերությունները, ընդլայնեցին կնոջ լիազորությունները մաս ընտանիքում: Ճապոնիայում, Սահմանադրության ընդունումից հետո, 1947թ. ընդունվեց օրենք, որով թուլանում էր հոր իշխանությունն ընտանիքում, արգելվեց ծնողների համաձայնությամբ երեխաների ամուսնությունը, այն պետք է լիներ ամուսնացողների համաձայնությամբ: Հավասարվեցին բոլոր երեխաների իրավավունքները ծառանգության հարցում և այլն: ԳՖՀ-ում 1957թ. ընդունվեց օրենք քաղաքացիական իրավունքում կնոջ և տղամարդու իրավահավասարության մասին: Դրա հիման վրա փոփոխություն կատարվեց մաս ընտանեկան իրավունքում և իրավաբանորեն բարձրացվեց կնոջ դերն ընտանիքում: Սակայն, իրականում կինը շարունակում էր ընտանիքում զրկված մնալ շատ իրավունքներից: Նա պետք է ծառայեր ամուսնուն և երեխաներին, զբաղվեր տնային տնտեսությամբ: Եվ, եթե նրա մասնագիտական գործունեությունը կարող է խանգարել երեխաների խնամքին ու դաստիարակմանը, ապա ամուսինն իրավունք ուներ դատարանի միջոցով զրկել կնոջը ծնողական իրավունքից:

Ամուսնալուծության հարցերում ամուսիններն օգտվում էին գրեթե հավասար իրավունքներից: Անգլիայում, որտեղ վաղուց ամուսնալուծությունը նորանուծություն չէր, 1923թ. ակտով կինը մույնպես կարող էր ամուսնալուծության խնդրով (հայցով) դիմել դատարան, եթե ամուսինը դավաճանել է իրեն: 1965թ. Անգլիայում համակարգվեցին ամուսնալուծության համար նախատեսվող հիմքերը, որոնցից տարածված էր ամուսնական անհավատարմությունը, դաժան վերաբերմունքը միմյանց նկատմամբ և այլն: Սահմանվեց հատուկ նորմ, ըստ որի ամուսնալուծության համար անձը դատա-

րան կարող է դիմել ամուսնանալուց միայն երեք տարի հետո: Բացառությամբ կարող էր լինել օրենքով նախատեսված դեպքերում: Կնոջ սիրեկանը ենթարկվում էր տուգանքի:

Ֆրանսիայում նույնպես ամուսնալուծության համար նախատեսվեցին որոշակի հիմքեր: Այստեղ առանձնահատուկ նշվում է ամուսնական դավաճանությունը, տանջանքներն ու դաժան վիրավորանքը:

ԱՄՆ-ում ամուսնալուծությունը կարգավորվում է նահանգների օրենքներով: Այս պատճառով էլ տարբեր նահանգներում ամուսնալուծության հիմքերը տարբերվում էին ոչ միայն որակով, այլև քանակով: Օրինակ, Նյու-Յորքի նահանգում ամուսնալուծությունը հնարավոր է միայն օրենքով նախատեսված մեկ պատճառի առկայության դեպքում, իսկ Միսիսիպիում՝ 12 և այլն: Նահանգներից մեկում թույլատրվում է ամուսնալուծվելուց անմիջապես հետո ամուսնանալ, իսկ մյուսներում՝ 2-12 ամիս հետո: Կան նահանգներ (օրինակ, Նևադայում), որտեղ ամուսնալուծության համար անհրաժեշտ չի ոչ մի պատճառ:

Իտալիայի քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է ոչ թե ամուսնալուծություն, այլ ամուսինների բաժանում, ընդ որում կինը այդ իրավունքը չունի, անգամ ամուսնու դավաճանության դեպքում:

Իսպանիայում ամուսնալուծությունը թույլատրվում է այն դեպքում, եթե ամուսնությունը գրանցվել է քաղաքացիական մարմիններում և ոչ թե եկեղեցական մարմիններում:

Օրենսդրորեն ամրապնդվեց ալիմենտային պարտականությունը, չնայած դրան, շատ վատ վիճակում էին գտնվում արտասամուսնական ճանապարհով ծնված երեխաները: Այստեղ գործում է նաև «հասարակական կարծիքը», որի «ճնշման» տակ այդ երեխաները և նրանց մայրերը գրկվում էին շատ իրավունքներից: Վերջապես, 1926թ. օրենքով, Անգլիան վերացրեց բազմադարյան այդ ավանդույթը և այդ երեխաներին օժտեց մի շարք իրավունքներով: Նրանք «օրինական ճանապարհով» ծնված երեխաների հետ ունեն գույքը ժառանգելու իրավունք (բայց չեն ստանում տիտղոսներ): 1924թ. համանման օրենք ընդունվեց նաև Ֆրանսիայում:

Ժառանգության իրավունքում կատարված փոփոխությունն աչքի ընկավ նրանով, որ ինչպես շարժական, այնպես էլ անշարժ գույքի համար մտցվեց ժառանգման միատեսակ կարգ, իսկ արտասամուսնությունից ծնված երեխաներին այս կամ այն ձևով թույլատրվեց մասնակից դառնալ ժառանգմանը:

Առանձնահատուկ տեղ է գրավում Հիտլերյան Գերմանիայի ամուսնաընտանեկան իրավունքը: Հենվելով բարձր ռասայական տեսության վրա, Հիտլերը փորձ արեց օրենսդրորեն «պաշտպան» կանգնել գերմանացիներին և «մաքուր պահել գերմանական արյունը»: Այս նպատակով 1935թ. հրապարակվեց ակտ, որով մահապատիժ էր սպառնում այն ոչ արիական ռասային (հատկապես հրեաներին), որը կհամարձակվեր ամուսնանալ «գերմանական ռասայի» հետ: Համանման պատիժ էր նախատեսված նաև «արիացիների» և «ոչ արիացիների» միջև արտասամուսնական հարաբե-

րուրյունների դեպքում: Աստեղ ժառանգության Իրավունքից օգտվում ին միայն «արիական» ռասային պատկանող անձինք:

XXդ. 70-90-ական թթ. օրենսդրությունն արմատապես փոխեց և դեռ վերափոխեց ընտանեկան իրավունքի կարևորագույն ինստիտուտները: Գեյ պարզորոշ երևում է Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի և մի քանի երկրների օրենքներում: Ընտանեկան հարաբերություններում (նկարոյալ ամուսինների միջև գույքային հարաբերությունները) հիմնականում հաստատվեց ամուսինների իրավական հավասարությունը: Բարեբախտից արտամուսնական երեխաների իրավական վիճակը: Իրավահավասարության ճանաչումը հնարավորություն տվեց մի շարք երկրներում (օրինակ, Գերմանիայում, Իտալիայում, Շվեյցարիայում) հրաժարվել «ընտանիքի գլուխ» իրավաբանական հասկացությունից: Ենթադրվում է, որ ամուսինները համատեղ իրականացնում են ընտանիքի ղեկավարումը. համատեղ էլ կառավարում գույքը: Ազգային օրենսդրությունների մեծամասնությունը ճանաչում է ամուսնացած կնոջ իրավունքը: Առավել հստակ կանոնակարգվեցին ամուսինների գույքային հարաբերությունները: Ամենատարածվածը հասարակեցին ընտանեկան իրավական ռեժիմի երկու հիմնական ձևերը՝ պայմանագրայինը և օրինականը: Առաջինի գոյացումը կապված է ամուսնական պայմանագրի հետ, որը կնքվում է ամուսնությունը գրանցելուց առաջ: Այդ պայմանագրով սահմանվում է ամուսիններից յուրաքանչյուրին մինչև ամուսնությունը պատկանող և ապագայում համատեղ ձեռք բերված ունեցվածքի իրավական ռեժիմը, ունեցվածքի բնագավառում ամուսինների հնարավոր ապագա հաշվարկները, ինչպես նաև համանման այլ հարցեր: Ամուսնական պայմանագրերը սովորաբար կնքվում են շատ հարուստ մարդկանց միջավայրում: Ամուսնացողների մեծ մասն իր ունեցվածքային շահը վստահում է օրենքի կարգադրություններից, այսինքն՝ օրինական ռեժիմին: Առավել տարածում ստացան ռեժիմի հետևյալ տեսակները. ա) բաժանված գույք (Անգլիա, ԱՄՆ-ի մահանգների մեծամասնությունը, Գերմանիա), բ) ընդհանուր գույք (Ֆրանսիա, Շվեյցարիայի որոշ կանտոններ, ԱՄՆ-ի 8 մահանգներ). ամուսնության ընթացքում ամբողջ ձեռք բերածը համատեղ պատկանում է ամուսիններին, սակայն յուրաքանչյուրի անձնական սեփականությունն է համարվում մինչամուսնական գույքը և ամուսնության ժամանակ որպես նվեր կամ ժառանգություն ստացածը, ինչպես նաև մինչամուսնական սեփականությունից և սեփական աշխատավարձից ստացած շահույթը, գ) առանձնացված ընդհանուր գույք. այս դեպքում գործում է բաժանված գույքի ռեժիմը, բայց ամուսնալուծության ժամանակ, ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը միացվում է և հավասար բաժանվում ամուսինների միջև, ընդ որում համատեղ բերված գույքից հանվում է այն ամենը, ինչը նախատեսվում է ընդհանուր ունեցվածքի ռեժիմով:

ԳԼՈՒԽ 37

1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՅՈՒՄԸ

Աշխատանքային իրավունքը որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ ձևավորվեց միայն XXդ.: Նրա համեմատաբար ուշ ձևավորումը շատ բանով բացատրվում է սեփականատերերի վերաբերմունքով, որոնք չէին ցանկանում աշխատանքային պրոցեսը կազմակերպել օրենսդրության շրջանակներում: Վերջինիս բացակայությունը նրանց հնարավորություն էր տալիս աշխատանքային հարաբերությունները կարգավորել իրենց հայեցողությամբ: Սակայն ժամանակի ընթացքում հաստունացած աշխատավոր լայն զանգվածի կոլեկտիվ պայքարը հարկադրեց նրանց գնալ լուրջ զիջումների:

Հեղափոխական ցնցումների մոտալուտ վտանգը, իսկ պատմությունը ցույց տվեց ակնառու օրինակներ և բազմաթիվ այլ պատճառներ, ուժեղացրին կառավարող շրջանների փոխզիջման գնալու ձգտումը: Այդպիսի պայմաններում առաջացած աշխատանքային իրավունքը զգայուն գտնվեց հատկապես սոցիալ-քաղաքական իրադրության ցանկացած փոփոխությունների նկատմամբ: Դրանով ոչ պակաս չափով որոշվում են աշխատանքային օրենսդրության որոշ առանձնահատկությունները տնտեսապես զարգացած շատ երկրներում.

1) Նրա առանձին ինստիտուտներն ձևավորվում էին աստիճանաբար և տարբեր ժամանակներում;

2) Այն կայուն չէ. նրա ինստիտուտների բովանդակությունը հաճախ փոխվում է աշխատավորների դեմոկրատական իրավունքների ինչպես ընդլայնման, այնպես էլ նվազեցման առումով;

3) Նրա դեմոկրատական դրույթների կենսագործումը շատ բանով կախված է արհմիութենական կամ աշխատավորական այլ զանգվածային շարժման ուժից:

Աշխատանքային օրենսդրությամբ ամրագրված դրույթները հիմնականում կարգավորում էին աշխատանքային ժամանակի, արհմիությունները ճանաչելու, կոլեկտիվ պայմանագրեր կնքելու կարգի և կողմերի իրավունք-

նև ռի ու պարտավորությունների, աշխատավարձի, աշխատանքի պաշտպանության, գործադուլի իրավունքի և աշխատանքային վեճերի ու դրանց լուծման կարգի հետ կապված հարցերը: Այդ հարցերի լուծումը տարբեր երկրներում ուներ իր առանձնահատկությունը: Բայց և այնպես նրան հստակ է ընդհանուր շատ բուն:

1918-20թթ. տնտեսապես զարգացած շատ երկրներում ընդունվեցին օրենքներ, որոնք սահմանում էին 8-ժամյա աշխատանքային օր: 1918թ. նոյեմբերի 23-ին Գերմանիայում հրապարակվեց ակտ, ըստ որի ցերեկային հերթափոխի աշխատանքը չպետք է գերազանցեր 8 ժամից¹: Հետագայում, չնայած ժամանակավոր նահանջներին, աշխատավորությանը հստակվեց ձեռք բերել 40-46 ժամյա աշխատանքային շաբաթ: Չնայած դրան, շատ երկրներում աշխատանքային շաբաթը, փաստորեն ավելի երկար էր տևում: Այսպես, օրինակ, 60-ական թվականներին Անգլիայում այն տևում էր մինչև 47,4 ժամ, Ֆրանսիայում՝ 45,8, ԳՖՀ-ում՝ 45,5, Իտալիայում՝ 48 և այլն: Հիտլերյան Գերմանիայում աշխատանքային օրը հասավ 14-16 ժամի: Ֆրանսիայում 1936թ. հունիսի 27-ի օրենքով ստորգետնյա աշխատանքները (հատկապես հանքահորերում) չպետք է գերազանցեին շաբաթական 38,4 ժամից²:

Շատ երկրներում օրինականացվեցին արհմիությունները: Եվ որպես դրա կարևորագույն հետևանք, նրանք ձեռք բերեցին կոլեկտիվ պայմանագրեր կնքելու իրավունք: Գերմանիայում կոլեկտիվ պայմանագրերի մասին օրենքն ընդունվեց 1918թ., իսկ Ֆրանսիայում՝ 1919թ.: Այդ բնագավառում կարևոր նվաճում եղավ ամերիկյան բանվորների համար վերևում հիշատակված 1935թ. Վագների օրենքը, որը սահմանում էր «փակ արտադրամասի» սկզբունքը: Այն ոչ միայն ճանաչեց արհմիություններին, այլ նրանց իրավունք վերապահեց բանվորների անունից բանակցել ձեռնարկատերերի հետ, կնքել կոլեկտիվ պայմանագրեր, անցկացնել գործադուլներ: Ի հայտ եկան կոլեկտիվ պայմանագրերի տարբեր տեսակներ, որոնք հաճախ հաստատվում էին կառավարության կողմից և դրանով ձեռք բերում նորմատիվ ակտի ուժ:

Կոլեկտիվ պայմանագիրը կարգավորում է աշխատանքային հարաբերությունների այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են աշխատավարձի չափերը, ինֆլյացիայի հետ կապված հավելավճարի չափը, խրախուսանքնե-

¹Распоряжение о регулировании времени работы промышленных рабочих 23 ноября 1918г., տն'ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 439:

²Закон, устанавливающий 40-часовую рабочую неделю, в промышленных и торговых предприятиях и определяющий продолжительность труда в подземных рудниках, 27 июня 1936г., տն'ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 445:

րը, աշխատանքի պաշտպանության պայմանները, մասնագիտական վերապատրաստման և աշխատանքի կարգապահության ընդհանուր սկզբունքները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները և այլն: Կոլեկտիվ պայմանագրերի բովանդակությունը նրա գործողության ժամկետում կարող է փոփոխվել, եթե այդ են պահանջում ձեռնարկությունում գոյացող արտադրատնտեսական կամ սոցիալական հանգամանքները¹:

Տնտեսապես զարգացած երկրների ժամանակակից օրենսդրությունը հաստատում է աշխատավորների գործադուլներ կազմակերպելու և անցկացնելու իրավունքը, որը, սակայն որոշ երկրներ ձգտում են այս կամ այն չափով չեզոքացնել տարբեր կարգի սահմանափակող նորմերի կիրառմամբ: Այդպես գործադուլները բաժանեցին օրինականի և ոչ օրինականի: Վերջինիս թվին են սովորաբար դասվում համերաշխության կամ քաղաքական շարժառիթներով գործադուլները: Հաճախ փորձ է արվում դժվարացնել գործադուլների անցկացումը՝ նախնական խիստ պայմաններ սահմանելով: Արդեն հիշատակված Տաֆտա-Խարտլիի ամերիկյան օրենքը նախատեսում է գործադուլների անցկացման համար 60 օրվա նախագոյական ժամանակամիջոց, իսկ պետությանն իրավունք է վերապահվում 80 օրով կասեցնել այն (այսպես կոչված «սառեցման շրջան»)՝: Դատական պրակտիկան խորացնում է այդ միտումը, ավելին՝ փորձում է հիմնավորել գործադուլների և լոկաուտների իրավական բնույթի նույնությունը:

Ներկայումս, համաշխարհային տնտեսության միասնականացման և մերձեցման պրեցեսների ուժեղացմանը զուգահեռ նկատվում է աշխատանքային օրենսդրության միասնականացման տեմդենց: Արևմտյան Եվրոպայում ընդհանուր շուկա ստեղծելու կապակցությամբ այդ գործընթացը դարձավ առավել արդյունավետ:

Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ավարտից հետո տնտեսապես զարգացած երկրների մեծ մասում աշխատավորները հասան սոցիալական ապահովության վերաբերյալ օրենքների ընդունման, որոնք նախատեսում էին կենսաթոշակների և նպաստների տրամադրում հիվանդության, աշխատունակության լրիվ կամ մասնակի կորուստի, ընտանիքի կերակրողին կորցնելու և մի շարք այլ դեպքերում³:

Վերջին տասնամյակներում որոշ զարգացած երկրներում ընդունեցին մի շարք օրենքներ, որոնք կոչված էին որոշ չափով բարելավելու սոցիալապես անապահով ընտանիքների իրավիճակը՝ բժշկական սպասարկման,

¹Закон Вагнера 5 июля 1935г., տն՝ Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 449-451:

²Закон Тафта-Хартли 1947г., տն՝ Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 451-456:

³Закон о социальном обеспечении, 14 августа, 1935г. (США), տն՝ Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 447-448:

կրթության և բնակարանային շինարարության բնագավառներում:

Ի ործող օրենսդրությամբ սոցիալական ապահովության ֆոնդը ստեղծվում է շատ աղքատներից որոնց մեծ առավել կտրևորը հանդիսանում է.ն. սոցիալական ապահովագրությունը, պետական օգնությունը և «ունիվերսալ համակարգը»: Դրանով էլ հաճախ համապատասխանում են սոցիալական ապահովության որոշ տեսակներ: Երկրների մեծ մասում սոցիալական ապահովագրությունը գոյանում է վարձու աշխատողների ապահովագրական վճարումների (սովորաբար աշխատավարձի 1,5%-ի չափով) և ձեռնարկատերերի վճարումներից (1-1,5%-ի չափով՝ վճարված աշխատավարձի ընդհանուր գումարից): Հետագայում վճարումների չափը ավելանում է 0,5-0,75%-ով: Այս առումով չափազանց բնորոշ է 1935թ. ամերիկյան օրենքը «Սոցիալական ապահովության մասին»: Այն կենսաթոշակներ և նպաստներ ստանալու իրավունք է վերապահում որոշակի աշխատանքային ստաժի ու տարիքի առկայության դեպքում: Կենսաթոշակների դեպքում նախատեսվում է 60-70 տարեկան հասակը՝ տղամարդկանց համար, իսկ 55-65-ը՝ կանանց համար: Օրենքը նախատեսում է նպաստներ տրամադրել նաև գործազրկության և հաշմանդամության դեպքերում:

Պետական օգնությունը ձևավորվում է բյուջեի միջոցներից: Այն տրվում է միայն նրանց, ովքեր պաշտոնապես ճանաչվել են որպես գոյության միջոցներ չունեցող: Սովորաբար այն հանդիսանում է սոցիալական ապահովագրության լրացումը:

«Ունիվերսալ» համակարգը նախատեսում է կենսաթոշակային ֆոնդի ձևավորում հատուկ հարկի հաշվին, որը գանձվում է բոլոր չափահաս քաղաքացիներից: Այս դեպքում կենսաթոշակների չափերը բոլորի համար նույնն են, իսկ կենսաթոշակային տարիքը համեմատաբար բարձր է:

ԳԼՈՒԽ 38

1. ԶՐԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Քրեական իրավունքն իր զարգացման պատմության մեջ աչքի է ընկնում պահպանողական և դեմոկրատական միտումների պայքարի արտացոլմամբ: Տարբեր երկրներում քրեական իրավունքը և դատավարությունն առանձնանում են իրենց յուրահատկություններով: Չնայած դրան, իրավունքի զարգացմանը զուգահեռ, այնուամենայնիվ, ազգային օրենսդրությունում նկատվեց քրեական իրավունքի որոշ ընդհանրություն: Առավել կտրուկ փոփոխություններ տեղի ունեցան Գերմանիայի քրեական իրավունքում: Վայմարյան հանրապետությունը պահպանեց 1871թ. քրեական օրենսգրքի ներգործությունը: Այն մարմնավորում էր դասական քրեական իրավունքի դպրոցի հիմնական գաղափարները հանցագործության ծանրության և պատժի ծանրության միջև համապատասխանության, մահապատժի կիրառման բնագավառի կրճատման և այլնի մասին: Միաժամանակ, 1871թ. քրեական օրենսգրքը խմբագրվեց հանրապետական ոգով. վերացվեցին պրոսական ֆեոդալիզմի մնացորդները: Հանրապետությունը քրեական իրավունքում հռչակեց լիբերալ-դեմոկրատական սկզբունքներ, որոնք, սակայն, ոչ միշտ էին պահպանվում առանձին նորմատիվ ակտերում: Նացիստական կայսրությունը (1933-45թթ) սահմանեց բաց ահաբեկչական ճնշում, վերացնելով լիբերալ-դեմոկրատական օրինականության ողջ համակարգը:

1933թ. փետրվարի 4-ի՝ «Գերմանական ժողովրդի պաշտպանության» հրամանագիրը փաստորեն առոչինչ է դարձնում մամուլի և ժողովների ազատությունը: Նույն թվականի փետրվարի 28-ի՝ «Ժողովրդի և պետության պաշտպանության մասին» հրամանագիրը, ըստ էության, վերացնում է Ռայխստագի պատգամավորների պառլամենտական անձեռնմխելիությունը: «Մահապատժի դատապարտելու և այն ի կատար ածելու կարգի մասին» (1933թ. մարտ), «Գուլլի բռնագրավման մասին» (1938թ. հուլիս), «Պետության և կուսակցության դեմ դավադիր ոտնձգությունների մասին» (1934թ. դեկտեմբեր), «Գերմանական արյան և գերմանական պատվի պաշտպանության մասին» (1935թ. սեպտեմբեր) և նման այլ արտակարգ օ-

քննադրական ակտերով վերջնականապես ջախջախվեցին դեմոկրատական ինստիտուտները: Նուցիստական օրենսդրությունն օրինակ ծառայեց ֆաշիստական և կիսաֆաշիստական մյուս տիետությունների օրենսդրության համար: Արտակարգ օրենքները նախատեսում էին ավելի խիստ պատժատեսակներ. մահապատիժ, ցմահ բանտարկություն և այլն: Լայն տարածում ստացան արտադատարանային հալածանքները:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Պոտսդամյան կոնֆերանսի հիման վրա, ֆաշիստական ամբողջ օրենսդրությունը վերացվեց: Վերականգնվեց 1871թ. քրեական օրենսգրքի գործողությունը՝ մինչև 1933թ.-ի խմբագրական ուղղումներով: 1949թ. սահմանադրության ընդունումից հետո նկատվեց քրեական իրավունքի դեմոկրատացման միտում: Սահմանադրությամբ հստակ լուծվեց ամբողջ աշխարհում վիճարանության առարկա հանդիսացող մահապատժի հարցը, այն վերացվեց: Ի հայտ եկան դեմոկրատական սկզբունքներից շատերը. «Շչ ոք հակաօրինական նույն արարքի համար չի կարող ենթարկվել կրկնակի պատժի», «ալարքը ենթակա է պատժի, եթե վերջինս նախատեսված է մինչև արարքի կատարման պահը գործող օրենքով»¹: Սակայն քրեական իրավունքի դեմոկրատացումն անցնում էր անհարթ, հաճախակի դանդաղելով և նույնիսկ՝ ընդհատմամբ: 1969-ից մինչև 1975թ. անցկացվեց քրեական օրենսդրության նոր բարեփոխում: Արդյունքում՝ քրեական իրավունքը բաժանվեց ընդհանուր և հատուկ մասերի:

Հատուկ մասում ֆիքսվեցին այն արարքները, որոնք համարվեցին հակաօրինական: Սահմանվեցին պատժի տեսակները և չափերը՝ կատարված հակաօրինական արարքների համար: Որոշ արարքներ չհամարվեցին հակաօրինական (օրինակ, այսպես կոչված, կրոնական ոճրագործությունները և այլն), սահմանափակվեց տնտեսական հանցագործությունների ոլորտը, որոնք դիտվեցին որպես վարչական կամ քաղաքացիա-իրավական իրավախախտումներ: Առավել խիստ պատժատեսակները զրեթե 80%-ով փոխարինվեցին տուգանքներով: Գերմանիայի 1871թ. քրեական օրենսգրքով, որը նոր խմբագրության ենթարկվեց 1975թ.-ին և մինչև 1986թ. ներառեց մի շարք փոփոխություններ, ժամկետային ազատագրկման առավելագույն չափը սահմանվեց 15 տարի ժամանակով: Անբազրվեց նաև ցմահ ազատագրկման վերաբերյալ դրույթը²:

Պահպանողական և դեմոկրատական միտումներն իրենց արտացոլումը գտան նաև ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և մի շարք այլ երկրների քրեական իրավունքի զարգացման մեջ: Չնայած, այդ երկրներում պահ-

¹Уголовный кодекс от 15 мая 1871г., §1, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 467:

²Նույնը, §38:

պանդղական, հետադիմական օրենսդրությունն իր չափերով ու ձևերով չի կարելի հավասարեցնել ֆաշիստական պետությունների օրենսդրությանը, այնուամենայնիվ, որոշ ժամանակահատվածում արտակարգ օրենսդրությունը և արտադատարանական հալածանքները վերը նշված երկրներում նույնպես լայն տարածում էին ստացել: ԱՄՆ-ում ընդունված Սմիթի (1940թ.), Մակկարեն-Վուդի (1950թ.) օրենքները, ինչպես նաև մյուս նորմատիվ ակտերը, մասնավորապես որոշ նախագահների գործադիր հրամանները այնքան ակնհայտ էին խախտում քաղաքացիների սահմանադրական իրավունքները, որ վերջին հաշվով այն հարկադրված էր ընդունել նաև ԱՄՆ-ի Գերագույն դատարանը¹: Քաղաքական հալածանքներն ու ժեղացնելու և նույնիսկ այն՝ օրենսդրությամբ քրեական արարք չհամարվող հակաօրինական արարքների վրա տարածելը դատարաններին իրավաստեղծ գործունեությամբ զբաղվելու մեծ հնարավորություն է տալիս:

Օբյեկտիվորեն, դրան նպաստում են քրեական օրենսդրության որոշ նորմերի ոչ պարզ, այսպես կոչված «կաուչուկային» ձևակերպումները, իսկ երբեմն նաև՝ բացերը, որոնք լրացնում են դատարանները կոնկրետ գործերը քննելու ժամանակ: Ամբողջությամբ պահպանվում է միասնական քրեական քաղաքականությունը, քանի որ ԱՄՆ-ի ստորադաս դատարանները դատավճիռ կայացնելիս պարտավոր են հետևել այն դատավճռին, որը կայացրել է վերադաս դատարանը՝ համանման կատեգորիայի գործերով: Ընդ որում նահանգների դատարանները որպես կանոն հետևում են իրենց նահանգի վերադաս դատարանների ցուցումներին, իսկ դաշնային դատարանները՝ դաշնության վերադաս դատարաններին: Դրա հետ մեկտեղ, Գերագույն դատարանները (ԱՄՆ-ի և նահանգների) կաշկանդված չեն իրենց իսկ նախկինում կայացրած դատավճիռներով և որոշումներով: Այդպիսի համակարգն իրեն դրսևորում է բավականին ճկուն, որը թույլ է տալիս, կոնկրետ քաղաքական և սոցիալ-հոգեբանական իրադրությունից ելնելով, կայացնել ոչ միայն խիստ, այլ նաև բավականաչափ լիբերալ և մարդասիրական դատավճիռներ:

60-ական թվականների վերջերից ԱՄՆ-ի քրեական օրենսդրության բնագավառում նշմարվեց որոշ դեմոկրատացում: 1967թ. ընդունվեց Նյու-Յորք նահանգի նոր քրեական օրենսգիրքը, որն իրավական տեսակետից առավել կատարելագործված էր ամերիկյան օրենքներից: Այն հստակ ամրագրեց քրեական պատասխանատվության սկզբունքները, որոնք օրինակ հանդիսացան մի շարք այլ նահանգների քրեական օրենսդրությունների համար²: Դա նպաստեց ԱՄՆ-ի դաշնային օրենսդրության արդիականաց-

¹ Исполнительный приказ 10450, 27 апреля 1953г., տե՛ս Хрестоматия по новейшей истории, т. 3, М., 1961, էջ 245:

² Уголовный кодекс Штата Нью-Йорк (вступил в законную силу 1.IX.1967г.), տե՛ս Уголовное право буржуазных стран, М., 1990, էջ 135:

մանը: Ներկայումս ԱՄՆ-ի քրեական իրավունքը բաղկացած է զուգահեռաբար գործող ֆեդերալ քրեական օրենսդրությունից (ամենից առաջ ԱՄՆ-ի 1909թ. քրեական օրենսգրքից, որի հիմնական մասը վերամշակվեց 1948թ. և ներառվեց ԱՄՆ-ի օրենքների ժողովածուի մեջ), և առանձին նահանգների քրեական օրենսգրքերից: Ֆեդերացիայի և նահանգների քրեական օրենքների սահմանագծումը, վերջին հաշվով, որոշվում է ԱՄՆ-ի սահմանադրությամբ: Օրենսդրությունների մրցակցությանը հաճախ նպաստում է դատական նախադեպը:

Վերջինս առավել մեծ չափով յուրահատուկ է Անգլիայի օրենսդրությանը: Անգլիական քրեական իրավունքի զգալի մասը բաղկացած է դատական նախադեպերից: Վերադաս դատարանները, բացառությամբ լորդերի պալատի, կաշկանդված են նախորդ դատավճիռներով և որոշումներով: Նախադեպը կարող է վերացվել կամ փոփոխվել պառլամենտական ակտով:

Չնայած նախադեպերի հիման վրա ձևավորված Անգլիայի «Ընդհանուր իրավունքը» աչքի է ընկնում ծայրահեղ բարդությամբ և հակասականությամբ, այնուամենայնիվ, այն հեշտացնում է դատավորների գործը. բազմաթիվ նախադեպերից ընտրել միայն այն, ինչն առավել դրականորեն է պատասխանում տվյալ պահի հարցերին: Այդպիսի համակարգի առկայությունը կասեցնում է քրեական իրավունքի համակարգումը: Անգլիան մինչև օրս չունի միասնական քրեական օրենսգիրք, թեպետ XIXդ. երկրորդ կեսից սկսեցին հրապարակվել, այսպես կոչված, համախմբող քրեական օրենքներ: XXդ. ավելացան քրեական իրավունքին մվիրված պառլամենտական ակտերի թիվը (1967թ., 1971թ., 1981թ. ընդունվեցին օրենքներ), որոնք կարգավորում են այդ բնագավառը:

Վերջին տասնամյակներում շատ այլ երկրների քրեական օրենսդրության մեջ փոքր-ինչ ուժեղացան դեմոկրատական միտումները: Դա վերաբերում է մաև իրավունքի մայրցամաքային ճյուղի երկրներին, հատկապես Ֆրանսիային, որի քրեական իրավունքի հիմնական աղբյուրները հանդիսանում են 1958թ. սահմանադրությունը և 1810թ. քրեական օրենսգիրքը, հետագայում, 1994թ., ընդունվեց նոր քրեական օրենսգիրք: Սահմանադրությունը հաստատում է «1789թ. Մարտի և քաղաքացու իրավունքների հռչակագրի» հիմնական դրույթները քրեա-իրավական սկզբունքների վերա-բերյալ:

1810թ. քրեական օրենսգիրքը XIX-XXդդ. ընթացքում բազմիցս ենթարկվել է փոփոխությունների ու լրացումների, որոնք կրում էին մերթ դեմոկրատական, մերթ՝ պահպանողական բնույթ: 1981թ. հոկտեմբերին ընդունվեց մահապատիժը վերացնելու մասին օրենքը: 1983թ. հունիսին ընդունված օրենքը նախատեսում է հնարավորության դեպքում ազատագրումը փոխարինել «հասարակական օգտակար աշխատանքների» կատա-

բումով: Շատ հանցագործությունների համար նախատեսված խիստ պատժառեւականները փոխարինվեցին տուգանքով: Այս ամենը, զգալիորեն չեզոքացնում է հալածանքների արտադատարանական ձևերի փաստացի պահպանումը: 1994թ. քրեական օրենսգիրքը մարդկության դեմ ուղղված ամենաժււմը հանցագործությունը համարեց ցեղասպանությունը¹:

Քրեական իրավունքի զարգացմանը յուրահատուկ հակասականությունը բնորոշ է նաև ժամանակակից քրեական դատավարությանը: Ֆաշիստական և կիսաֆաշիստական պետություններում քրեական դատավարության լիբերալ-դեմոկրատական սկզբունքները, որոնք հռչակվել էին XVII-XVIIIդդ. հեղափոխությունների ընթացքում, վերսցվեցին, սահմանվեց ոստիկանական անսահման իշխանության ռեժիմ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և ֆաշիզմի պարտությունից հետո տնտեսապես զարգացած բոլոր երկրներում նկատվեց քրեական դատավարության դեմոկրատացման միտում: Սակայն այդ գործընթացն անընդհատ վերընթաց կյանք չէր ապրում: Այն հաճախ ընդհատվում էր և նույնիսկ անկում ապրում: Ընդ որում, իրավունքի տարբեր համակարգում այն հանդես էր գալիս տարբեր ձևերով: Անգլո-սաքսոնական երկրներում, առաջին հերթին Անգլիայում և ԱՄՆ-ում. հետագա զարգացում ստացավ քրեական դատավարության մրցակցության սկզբունքը, ըստ որի պահպանվում է կողմերի մրցակցությունն ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության պրոցեսում: Գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ: ԱՄՆ-ում առանձին նահանգների իրավասությանը ենթակա գործերի քննության դեպքում նախաքննությունը վարում է ստորադաս աստյանի դատարանը, որը քննում է կողմերի ներկայացրած ապացույցների որակը և որոշում է մեղադրանքի համար սահմանված հիմքերի բավականաչափ լինելու հարցը: Դատաքննությունն իրականացնում է երդվյալների դատարանը: Ապացույցների հավաքումը ձևականորեն ընկած է տուժողի վրա, բայց այդպիսի իրավունքից փաստորեն կարող են օգտվել նաև որակյալ փաստաբանների օգնությանը դիմող բավականաչափ միջոցներ ունեցող անձինք: Մնացած դեպքերում այդ ֆունկցիան կատարում է ոստիկանությունը: Դատարանում ոստիկանական աստիճանավորները հանդես են գալիս փաստորեն որպես մեղադրողներ և վկաներ: Այդպիսի պայմաններում ոստիկանության դերը քրեական դատավարությունում ձեռք է բերել այնպիսի չափեր, որ դեմոկրատական հասարակայնության մոտ առաջացրեց լուրջ դժգոհություն: Այդ պրոբլեմը վե

¹ Уголовный кодекс Франции 1994г., ст. 211, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 481:

բացնելու նպատակով ձեռնարկվել են տարբեր միջոցառումներ, սակայն, պետք է նշել, որ այն արմատապես դեռ չի լուծվել:

Մայրցամաքային Եվրոպայի երկրներում նախաքննությունը վարում են քննչական դատարանները: Այն գլխավորում է դատախազությունը: Դատաքննությունը թույլատրում է կողմերի մրցակցություն՝ դատավարական դեմոկրատական սկզբունքների հիման վրա¹: Դատական նիստի նախագահն օժտված է լայն լիազորությամբ, որը նրան փաստորեն հնարավորություն է տալիս շատ դեպքերում դատավարությունը տանել ցանկալի ուղղությամբ: Միաժամանակ, երդվյալների դատարանի առկայությունը հանդիսանում է արդարադատություն իրականացնելու պրոցեսում դեմոկրատական սկզբունքների պահպանման կարևոր երաշխիք: Երդվյալ դատարանները կազմված են դատավորներից և ժյուրիից: Վերջինիս անդամ կարող են լինել Ֆրանսիայի 30 տարին լրացած քաղաքացիները, որոնք գիտեն գրել-կարդալ և օգտվում են քաղաքական, քաղաքացիական ու ընտանեկան իրավունքներից²: Վերջին տասնամյակներում ընդունվեցին բազմաթիվ կարևոր ակտեր, որոնք նպաստեցին քրեական դատավարության հետագա դեմոկրատացմանը և առաջին հերթին նախաքննության լիբերալիզացմանը:

¹ Уголовно-процессуальный кодекс Франции 1958г., հոդ. 79, տե՛ս Хрестоматия по Всеобщей истории государства и права, т. 2, М., 1996, էջ 495:

² Նույնը, հոդ. 254-255:

ԲՈՎԱՆ՝ ԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու հոսք	3
Ներածություն	
1. Պետության և իրավունքի լինելու պատմության առարկան, մեթոդը և պարբերացումը.....	5
2. Տոհմատիրական կարգերի քայքայումը և պետության առաջացումը.....	8
Առաջին մաս	
Հին Արևելքի և Անտիկ աշխարհի երկրների պետության և իրավունքի պատմություն.....	13
Հին արևելյան և հունա-հռոմեական քաղաքակրթության պետության և իրավունքի սկզբնավորման ու զարգացման առանձնահատուկ գծերը Ընդհանուր բնութագիրը.....	13

Բաժին 1

Հին Արևելքի պետության և իրավունքի պատմություն	17
Գլուխ 1. Հին Եգիպտոսի պետությունը և իրավունքը	
1. Հասարակական և պետական կարգը.....	17
2. Իրավունքի հիմնական գծերը.....	21
Գլուխ 2. Հին Բաբելոնի պետությունը և իրավունքը	
1. Հասարակական և պետական կարգը.....	23
2. Իրավունքի հիմնական գծերը.....	26
Գլուխ 3. Հին Հնդկաստանի պետությունը և իրավունքը	
1. Հնդկաստանի հասարակական և պետական կարգը.....	31
2. Իրավունքի հիմնական գծերը.....	34
Գլուխ 4. Հին Չինաստանի պետությունը և իրավունքը	
1. Պետության հիմնական գծերը.....	39
2. Իրավունքի հիմնական գծերը.....	44

Բաժին 2

Անտիկ աշխարհի երկրների պետության և իրավունքի պատմություն.....	47
Գլուխ 5. Հին Հունաստանի պետությունը և իրավունքը.....	47
1. Աթենական պետության առաջացումը.....	48
2. Աթենական պետությունը V-IV դդ.....	51

3. Իրավունքը և նրա բնորոշ գծերն Աթենքում.....	54
4. Պետության և իրավունքի առաջացումը Սպարտայում.....	57
Գլուխ 6. Հին Հռոմի պետությունը և իրավունքը.....	61
1. Ստրկատիրական պետության կազմավորումը Հռոմում (մ.թ.ա. 754-510 թթ.).....	62
2. Հռոմեական Հանրապետությունը.....	65
3. Հռոմեական Հանրապետության ճգնաժամը և անցումը միապետության.....	68
4. Հռոմը կայսրության շրջանում (մ.թ.ա. 27-մ.թ. 476 թթ.).....	70
5. Հռոմեական իրավունքի բնորոշ գծերը.....	72

Երկրորդ մաս

Միջին դարերի պետության և իրավունքի պատմություն

Բաժին 3

Եվրոպական երկրների պետությունը և իրավունքը Ընհանուր բնութագիրը.....	79
--	----

Գլուխ 7.

Ֆրանկների պետությունը և իրավունքը

1. Ֆրանկների պետության առաջացումը.....	92
2. Ֆրանկների պետությունը VI-IX դարերում.....	93
3. Իրավունքի հիմնական գծերը.....	101

Գլուխ 8.

Ֆրանսիայի պետությունը և իրավունքը

1. Ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջան.....	108
2. Դասաներկայացուցչական միապետություն.....	112
3. Բացարձակ միապետության ժամանակաշրջան.....	118
4. Իրավունքի հիմնական գծերը.....	124

Գլուխ 9.

Գերմանիայի պետությունը և իրավունքը

1. Վաղ ֆեոդալական պետությունը (IX-XII դդ.).....	133
2. Գերմանիան ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանում (XIII-XIX դդ.).....	135
3. Իրավունքի հիմնական գծերը.....	139

Գլուխ 10.

Անգլիայի պետությունը և իրավունքը

1. Վաղ ֆեոդալական պետությունն Անգլիայում (V-XI դդ.).....	146
2. Պետությունը ֆեոդալիզմի ծաղկման շրջանում (XI-XIII դդ.).....	147
3. Դասաներկայացուցչական միապետությունն Անգլիայում (XIII-XV դդ.).....	150
4. Բացարձակ միապետությունն Անգլիայում (XV-XVII դդ.).....	153

5. Իրավունքի հիմնական գծերը.....	154
Գլուխ 11.	
Բյուզանդիայի պետությունը և իրավունքը	
1. Արևելյան Հռոմեական կայսրության ծագումը և զարգացումը.....	160
2. Իրավունքի հիմնական գծերը.....	163

Բաժին 4

Ֆեոդալական պետությունը և իրավունքն Արևելքի երկրներում Ընդհանուր բնութագիրը.....	169
--	-----

Գլուխ 12.

Արաբական խալիֆաթը և մուսուլմանական իրավունքը	
1. Պետության հիմնական գծերը.....	170
2. Իրավունքի հիմնական գծերը.....	173

Գլուխ 13.

Ճապոնիայի պետությունը և իրավունքը	
1. Հասարակական կարգի բնորոշ գծերը.....	177
Պետական կարգը.....	179
3. Իրավունքի հիմնական գծերը.....	181

Գլուխ 14.

Չինաստանի պետությունը և իրավունքը	
1. Հասարակական կարգը.....	184
2. Պետական կարգը և իրավունքը.....	187

Գլուխ 15.

Հնդկաստանի պետությունը և իրավունքը	
1. Հասարակական կարգը.....	189
2. Պետական կարգը և իրավունքը.....	192

Երրորդ մաս

Նոր դարաշրջանի պետության և իրավունքի պատմություն

1. Ընդհանուր բնութագիրը.....	196
2. Բուրժուական իրավունքի հիմնական սկզբունքները	198

Բաժին 5.

Պետությունն ու իրավունքն Արևմտյան Եվրոպայի երկրներում Գլուխ 16.	
--	--

Անգլիայի պետությունն ու իրավունքը	
1.Սահմանադրական Միապետության առաջացումը	203
2.Սահմանադրական Միապետության և պառլամենտարիզմի զարգացումը XVIII-XIX դդ.	214
3.Ընտրական վերափոխումները	218
4.Գաղութների կառավարումը	230

5.Անգլիական իրավունքի զարգացումը233

Գլուխ 17.

Ֆրանսիայի պետությունն ու իրավունքը

1. XVIII դ. հեղափոխության ժամանակաշրջանի
Ֆրանսիայի պետությունը.....244

2. 1791թ.Սահմանադրությունը.....252

3.Բոնապարտի պետական հեղաշրջումը և 1799 թ.
Սահմանադրությունը267

4.Երկրորդ Հանրապետությունը և 1848 թ.
Սահմանադրությունը273

5.1871 թ. Փարիզյան Կոմունան և
1875 թ. Սահմանադրությունը276

6.Գաղութների կառավարումը284

7.Ֆրանսիայի իրավունքի բնորոշ գծերը286

Գլուխ 18.

Գերմանիայի պետությունը և իրավունքը

1.«Գերմանական ազգի Հոռմեական Մրբազան
Կայսրության» անկումը..... 299

2.Գերմանական Սահմանադրությունները300

3.Պրուսիայի 1850 թ. Սահմանադրությունը304

4.Գերմանական կայսրության կազմավորումը
և 1871 թ. Սահմանադրությունը306

5.Գերմանիայի իրավունքի զարգացումը311

Բաժին 6.

Պետությունը և իրավունքն Ամերիկայի երկրներում

Գլուխ 19. Ամերիկայի Միացյալ Նահանգների

պետությունը և իրավունքը

1.ԱՄՆ-ի կազմավորումը և Անկախության հռչակագիրը325

2.ԱՄՆ-ի 1787 թ. Սահմանադրությունը և իրավունքի մասին
կոնդակը (բիլլը).....331

3.Քաղաքացիական պատերազմը XIX դարում և
Սահմանադրության 13,14,15 ուղղումները341

4.Գաղութային քաղաքականությունը346

5.ԱՄՆ-ի իրավունքի բնորոշ գծերը348

Գլուխ 20.

Լատինական Ամերիկայի պետությունն ու իրավունքը

1.Անկախության համար պատերազմը 358

2.Լատինական Ամերիկայի երկրների առաջին
Սահմանադրությունները..... 362

3.Լատինաամերիկյան պետությունների զարգացումը

Handwritten notes: a checkmark and the name 'Անտոնյան' written vertically.

XIX դարում	364
4.1910-1917 թթ. Մեքսիկական հեղափոխությունը և 1917 թ. Սահմանադրությունը	369

Բաժին 7

Պետությունն ու իրավունքն Արևելքի երկրներում	373
Գլուխ 21.	
Ճապոնիայի պետությունը և իրավունքը	373
1.Մեյյոզի հեղափոխությունը և 1889 թ. Սահմանադրությունը	373
2.Իրավունքի հիմնական գծերը	382
Գլուխ 22.	
Չինաստանի պետությունը և իրավունքը	386
1.XIX դ. քաղաքական համակարգի ճգնաժամը ..	386
2.Սինհայի հեղափոխությունը և 1912 թ. ժամանակավոր Սահմանադրությունը	389

Չորրորդ մաս

**Նորագույն դարաշրջանի պետության և
իրավունքի պատմություն**

Ընդհանուր բնութագիրը.....	393
Բաժին 8.	
Պետությունն Արևմտյան Եվրոպայի երկրներում.....	396
Գլուխ 23.	
Անգլիայի պետության պատմություն.....	396
1. Քաղաքական համակարգը և ընտրական վերափոխումները.....	396
2. Պառլամենտի վերափոխումները և գործադիր իշխանության ուժեղացումը	399
Գլուխ 24.	
Ֆրանսիայի պետության պատմություն.....	406
1. Պետական կարգը և քաղաքական ռեժիմն առաջին համաշխարհային պատերազմից հետո.....	406
2. Չորրորդ Հանրապետությունը և 1946թ. Սահմանադրությունը.....	410
3. Հինգերորդ Հանրապետությունը և նրա զարգացումը XX դարի 2-րդ կեսին.....	416
Գլուխ 25.	
Գերմանիայի պետության պատմություն.....	422
1. Վայմարյան հանրապետության պետական կարգը և 1919թ. Սահմանադրությունը.....	422
2. Հիտլերյան Գերմանիա.....	427
3. Գերմանիայի պետական կարգի և քաղաքական համակարգի	

զարգացումը XX դարի 2-րդ կեսին.....	433
Գլուխ 26.	
Իտալիայի պետության պատմություն.....	438
1. Իտալիան երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում.....	438
2. Իտալիան երկրորդ աշխարհամարտից հետո և 1947թ. Սահմանադրությունը.....	444
Գլուխ 27.	
Իսպանիայի պետության պատմություն.....	450
1. Իսպանիան երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում.....	450
2. Ֆրանկոյական Իսպանիայի քաղաքական վարչակարգը և 1978թ. սահմանադրությունը.....	453
Բաժին 9.	
Պետությունն Ամերիկայի Միացյալ Նահանգներում Գլուխ 28.	
Ամերիկայի Միացյալ Նահանգներ.....	461
1. Պետաիրավական և քաղաքական համակարգի զարգացումն ու ընտրական իրավունքի դեմոկրատացումը.....	461
2. Ֆ. Ռուզվելտի «նոր կուրսը» և 50-70-ական թվականների օրենսդրությունը.....	465
3. Պետական իշխանության կենտրոնացումը Փոփոխություններ պետական ապարատում.....	468

Բաժին 10

Պետությունն Ասիայի և Աֆրիկայի երկրներում Գլուխ 29.	
Ճապոնիայի պետության պատմություն.....	473
1. Ճապոնիայի պետությունը երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում.....	473
2. Ճապոնիայի քաղաքական համակարգը և նրա զարգացումը երկրորդ աշխարհամարտից հետո: 1946թ.Սահմանադրությունը.....	476
Գլուխ 30.	
Չինաստանի պետության պատմություն.....	481
1. Չինաստանը երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում.....	481
2. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կազմավորումը և պետական կարգի զարգացումը 60-90-ական թվականներին.....	483

Գլուխ 31.

Հնդկաստանի պետության
պատմություն.....488

1. Հնդկաստանն առաջին համաշխարհային
պատերազմից հետո.....488

2. Հնդկաստանի անկախության հռչակումը
և 1950թ.Սահմանադրություն.....491

Գլուխ 32.

Եզրյալտոսի պետության պատմություն.....495

1. Անկախության հռչակումը և պետական կարգը495

Գլուխ 33.

Անկախ պետությունների
կազմավորումն Աֆրիկայում.....500

1.Աֆրիկայի պետություններն երկրորդ
աշխարհամարտից հետո.....500

Բաժին 11.

Նորագույն ժամանակաշրջանի իրավունքի պատմություն.....506

Գլուխ 34.

1.Փոփոխություններ իրավունքի աղբյուրներում
Իրավունքի սուբյեկտները.....506

Գլուխ 35.

1.Զաղաքացիական իրավունք.....511

Գլուխ 36.

1.Ամուսնաընտանեկան իրավունք.....517

Գլուխ 37.

Աշխատանքային և սոցիալական
օրենսդրության զարգացումը.....520

Գլուխ 38.

1.Քրեական իրավունք և դատավարություն.....524

Բովանդակություն530

ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ ՊԱՐԳԵՎԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Հնագույն ժամանակաշրջանից մինչև մեր օրերը)

Аршакян Аршавир Паргегович
ИСТОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА
ЗАРУБЕЖНЫХ СТРАН

(На армянском языке)
Издательство “НАИРИ”
Ереван 2003 г.

Հրատարակության պատասխանատու՝	Ս. Սանոյան
Տեխնիկական խմբագիր՝	Ս. Մկրտչյան
Սրբագրիչ՝	Լ. Փարենուզյան
Համակարգչային շարվածքը՝	Ս. Ռամազյան
Համակարգչային ձևավորումը՝	Գ. Միրզոյան
Հանձնված է շարվածքի	11.11.2002 թ.
Ստորագրված է տպագրության	8.01.2003 թ.
Չափսը՝	60x84 1/16
Թուղթը՝	Օֆսեթ
Տպագրությունը՝	օֆսեթ
Ծավալը՝	33,8 տպ. մամուլ
Պատվեր՝	1
Տպաքանակը՝	200

«ՆԱԻՐԻ» հրատարակչություն,